61



ԴԷՊԻ ԼՈՅՍ

ԵՒ

ԿԵԱՆՔ

ՌՅՂԶ = 1947

ՏՊԱՐԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՀԱՅՈՑ ԿԻԼԻԿԻՈՅ
ԱՆԹԻԼԻԱՍ ԼԻԲԱՆԱՆ

281.6(09) 386
Դ- 39 Դէպի լոյս
Կեանք

ՀՐԱՄԱՆԱՒ ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՆԻՒԹԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ

ԳԱՀԻՐԷԱԲՆԱԿ ԽՈՒՄԲ ՄԸ ՀԱՅ ՏԻԿԻՆՆԵՐՈՒ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս գիրքը իւր ամբողջութեան մէջ Քարոզգիրք չէ, եւ մշակուած չէ իբրեւ Քարոզգիրք: Այստեղ քարոզների հետ ամփոփուած են նաեւ մեր մտքերն ու դատողութիւնները, գաղափարներն ու հասկացողութիւնները, երբեմն եւ ապրումերը յօդուածների ձեւով, որ օգտակար են համարուել հեղինակի կողմից ի մի գումարել իբրեւ ամբողջութիւն եւ մատուցանել մեր նորահաս քահանաներին եւ վարդապետներին եւ որպէս օժանդակ եւ առաջնորդ իրենց քարոզչութեան մէջ:

Ընթերցողը ինքնին նկատել կարող է, որ կարգաւորեալ մտքերի յաջորդական զուգորդութեամբ գործ չէ, մի անգամից գրուած, այլ մեր կեանքի ընթացքում քարոզչական եւ հովուական պաշտօնների կամ եկեղեցական հրապարակախօսութեան եւ ատենախօսութեան հետ կապուած քարոզներ եւ գրութիւններ, տարբեր վայրերում եւ ժամանակներում եւ տարբեր առիթներով գրուած կամ խօսուած: Նրանք դասաւորուած չեն, բացի առաջին մասերից, նոյն իսկ եկեղեցական տօների հետեւողութեամբ, թէպէտ այդ դժուար չէ քարոզչի կողմից լրացնել եւ օգտագործել, հատուածների բովանդակութիւնն ի նկատի ունենալով: Բայց բոլորը զետեղել ենք ԴԷՊԻ ԼՈՅՍ ԵՒ ԿԵԱՆՔ, միընդհանուր վերնագրի տակ ընթերցողի միտքը եւ հոգու աչքերը կամենալով այդ նպատակին ուղղել: Մեր հայեացքն է, թէ ամենայն մի խօսք կամ գրութիւն, որ դաստիարակելու նպատակ ունի, պէտք է հիմնուած լինի ուղղամտութեան, ճշմարտութեան եւ ներքին համոզման կամ հաւատի վրայ, որ ուղին է «Դէպի Լոյս եւ Կեանք» մատնանշելու: Օգտակար կը լինի՞ այս գիրքը այդ տեսակէտով, մենք չէ, որ պիտի որոշենք, բայց այսպիսի բարի ցանկութեամբ եւ մտադրութեամբ է, որ ի մի ենք բերել այս ամենը, եւ տալիս ենք, յատկապէս, մեր նորահաս քահանայ եւ վարդապետ քարոզիչների ձեռքը որպէս օժանդակ միջոց, նրանց էլ մի քանի խրատական խօսք ուղղելով, մեր երկարատեւ փորձառութեան վրայ հիմնուած:

*
* *

Սկզբնական շրջաններում քարոզները միշտ պէտք է գրաւոր պատրաստել, սերտել գրածը եւ մինչեւ իսկ արտասանել նախապէս, որպէս թէ ժողովրդի առաջ: Տարիներ յետոյ կարելի է միայն ծրագիր կամ համառօտագրութիւն պատրաստելով գոհանալ, եւ երբ երկարամեայ փորձառութիւնից յետոյ, մտքերի պաշար եւ հմտութիւն ձեռք կը բերուի, բաւական կը լինի միայն խօսելիք նիւթի էութիւնը ի մտի ունենալ: Այդպիսի շրջանում, երբեմն, չգրուած, բայց ինքնաբուղխ քարոզը

կամ ատենախօսութիւնը կարող է սպասածից աւելի տպաւորիչ լինել եւ գեղեցիկ: Բայց ցանկալի չէ, որ քարոզիչը կամ ատենախօսն իրեն այդպիսի փորձութեան ենթարկէ յաճախ, այդ մասամբ ընդունակութեան խնդիր է, մտքերի թռիչքով եւ յուզականութեամբ օժտուած խառնուածքի գործ:

Հռետորութիւնը, որքան եւ արուեստ է, ուրեմն եւ մասամբ աստուածատուր շնորհք, բայց ոչ պակաս եւ վարժութեան գործ: Վարժութեամբ է, որ լեզուն կը դառնայ սահուն, ոճը գեղեցիկ, մտքերը կը կցուին դիւրութեամբ, առանց կապը կորցնելու կամ շփոթութեան ենթարկուելու: Նոյն իսկ եթէ կակազ ունի կամ այլ արտաքին պակասութիւններ, կը վերացուին յարատեւ եւ կարգաւորեալ աշխատութեամբ: Հին աշխարհի մեծ ճարտասան Դեմոսթենէսը կակազ էր սկզբում եւ վարժութեամբ յաղթեց այդ պակասութեան: Էջմիածնի գիտուն, ընդունակ, հմտութեամբ բարձր վարդապետներից մէկը սկըզբում կակազ էր, երբեմն, մինչեւ իսկ տպաւորութիւնը կորցնելու չափ, վարժութեամբ յաղթեց այդ թերութիւնը հետզհետէ:

Քարոզի լաւութիւնը կախուած է ոչ միայն տրամաբանական զարգացումից, զգացմունքով արտասանութիւնից, այլ եւ արտաքին պայմաններից, ինչպէս ունկնդիրների կազմն է, նիւթի մատչելիութիւնն է, երկար եւ կարճ լինելու հանգամանքն է, յուզականութեան մէջ չափի պահպանութիւնն է եւ նման ուրիշ խնդիրներ, որ ի նկատի պիտի ունենայ քարոզիչը: Լաւագոյն, մշակուած քարոզն իսկ կը կորցնէ իր տպաւորութիւնը, մինչեւ իսկ կը ձանձրացնէ ունկնդիրներին, եթէ նա չափից աւելի երկար է: Երբ մտքերը պարզ են, յստակ, աւելի դիւրին կը լինի լաւ ձեւակերպել, եւ նոյն իսկ համառօտութեան մէջ տպաւորիչ եւ հասկանալի դարձնել:

* * *

Քարոզչի յաջողութեան ամենակարեւոր պայմանը Ս. Գրքի լաւ ծանօթութիւնն է, այնտեղ է մեր հաւատոյ, մեր կրօնական-բարոյական գաղափարների անսպառ աղբիւրը, հոգեւոր սնունդի անհատնում շտեմարանը: Յատկապէս նորա որոշ մասերը՝ Ծննդոց գիրքը, Մարգարէութիւններն ու Սաղմոսները, Յոբի սքանչելի գիրքը, Նոր Կտակարանը: Տիրոջ քարոզներն ու առակները Իւր օրհնեալ անձի հետ, որ նկարուած է աւետարանական պատմութեան մէջ, լուսաւոր ճանապարհ կը հարթէ դէպի կրօնի բարձր ըմբռնումն եւ մարդկային հոգու բարձր գնահատութիւնը:

Ս. Գրքի ծանօթութիւնն ու ուսումնասիրութիւնը որքան եւ անհրաժեշտ է քարոզչի համար, բայց միայն Ս. Գրքով չենք կարող բաւականանալ, եթէ չենք կամենում մեր մտքերի մէջ միակողմանի մնալ եւ աւանդական շրջանից դուրս չը գալ: Քրիստոնէական գըր-

խաւար գաղափարներն անշուշտ միշտ առաջնորդող պիտի մնան քարոզչութեան ժամանակ, բայց այդ գաղափարները մատչելի պիտի դարձնել, լուսաբանել նոր պահանջների եւ հասկացողութիւնների լուսոյ մէջ: Հին գինին նոր տիկի մէջ պէտք է պահուի, որպէսզի տիկը չը պատռուի եւ կենդանարար հեղուկը ի զուր թափուի: Քարոզչի համար անհրաժեշտ է ազգային եւ ընդհանուր պատմութեան, ազգային եւ ընդհանուր գրականութեան, ազգային եւ ընդհանուր արուեստների պատմութեան ծանօթութիւն: Պատմութիւնը ոչ այլ ինչ է, բայց եթէ մարդկային հոգու եւ փորձառութեան վերլուծութիւն եւ հասկացողութիւն, իւր բազմազա՛ն եւ բազմակերպ իրողութիւններով, որ մեզ շատ օրինակներ եւ նիւթ տալ կարող է եւ ներկան հասկանալու եւ նորան ուղղութիւն տալու ցուցումներ: Մեծ բանաստեղծների եւ գրողների, արուեստագէտների գործերի ծանօթութիւնը մեր մտքերին նրբութիւն կըտայ, հոգեբանական վերլուծութիւններին թանձրացեալ եւ պայծառ օրինակներ, մարդկային հոգու ելեւէջների մէջ թափանցելու, ներքին աշխարհի մէջ յառաջ եկած կամ գալիք երեւոյթները հասկանալու հմտութիւն, որպէսզի դորանով իւր խօսքը դարձնէ բովանդակալից, ազդեցիկ, զօրաւոր:

Քարոզչի ձեռք բերած ծանօթութիւնների մէջ կարեւոր տեղ պիտի բռնէ եւ բնական գիտութիւնը եւ նորանից բղխած աշխարհայեացքը: Նախ պէտք է յայտնենք, որ բոլոր բնագէտները ու տիեզերաբանները չեն հանգում նիւթապաշտական կամ հակակրօնական բացասական եզրակացութեան, ինչպէս կարծում են շատերը: Շատ նշանաւոր բնագէտներ կամ տիեզերաբաններ խորանալով իրենց մասնագիտութեան մէջ, սքանչացել են կենդանական աշխարհի, եւ տիեզերքի հրաշալի կարգաւորութեամբ, խորհրդաւորութեամբ եւ գեղեցկութեամբ, աստուածապաշտ մնալով: Իսկ սքանչացումը մարդկային հոգին դէպի խորհրդաւորը, դէպի մեծ Անծանօթն ու Աստուած տանող զգացումն է, ինչպէս շատ բարեպաշտների համար. «Որպէս մեծ են գործք քո, Տէ՛ր» կամ «Երկինք եւ երկիր պատմեն զփառս Աստուծոյ» խօսքերը, Աստուծոյ մեծութեան առաջ սքանչացումներ են: Բնութիւնն էլ մի այլ տեսակի Ս. Գիրք է, եթէ մենք նորա վերայ բարեպաշտ աչքով նայենք: Մեզ համար պարզ պիտի լինի, թէ գիտութիւն եւ կրօն, կամ արուեստ եւ կրօն, միմեանց հակառակ չեն իրենց խորքում, այլ իրար լրացնող եւ իրար օժանդակող հոգեկան երեւոյթներ: Հեռու պէտք է մնալ նաեւ կրօնի միակողմանի հասկացողութիւնից, որ դէպի մոլեռանդութիւն կը տանի: Իսկ ամենայն տեսակ մոլեռանդութիւն կամ չափազանցութիւն ի՛նչ մարզում էլ լինի, հիւանդութիւն է կամ սխալներ գործելու առիթ:

Քարոզիչը խորը պիտի գիտակցէ, թէ ինչպիսի՛ ծանր եւ պա-

տասխանատու պարտաւորութիւն ունի դէպի իր ունկնդիրները, հարիւրաւոր եւ հազարաւոր հոգիներ սպասում են մի բան սովորել, շատերը նրանցից իրենց վշտերի մէջ մխիթարութեան եւ նեղութիւնների մէջ հանգուցիչ մի խօսք լսել, ճշմարտութիւն կամ լոյս ստանալ կեանքի հետ կապուած կամ կեանքը յուզող խնդիրների եւ երեւոյթների մասին: Քարոզչական ամբիոնը սուրբ է եւ դաստիարակչական դպրոց եւ միջոց մեծերի համար, հոգիներին ուղղութիւն տալու, սրբազան յոյզեր յառաջ բերելու ոչ միայն զգայուն եւ բարեպաշտ անձանց, այլ եւ փորձել նոյն իսկ անտարբերների մէջ: Համոզումով, զգացումով եւ տրամաբանօրէն մշակուած եւ արտասանուած խօսքը, բարոյական մեծ ոյժ է, որ երբեմն հոգիների խորքը կարող է թափանցել: Սաւղոսի Պաւղոս դառնալու հոգեփոխութեան կամ դարձի մէջ Ստեփանոս Նախավկայի «հոգւով-սրբով» արտասանուած ճառը իր հաւատոյ պաշտպանութեան համար, կարեւորագոյն նշանակութիւն է ունեցել նորա համար: Պատմութիւնից գիտենք, թէ Միլանի եպիսկոպոս Ամբրոսիոսի քարոզը ինչպիսի ազդեցութիւն է ունեցել հռոմէական եկեղեցու ամենամեծ հայրերից Օգոստինոսի վերայ, երբ նա աշխարհիկ կեանքով ապրող մի երիտասարդ էր դեռ եւս:

Այս բոլորի եզրակացութիւնն է, թէ քարոզիչը յատկանշական ուսանող պիտի մնայ, միշտ կարդայ, պաշար հաւաքէ, իր նկատողութեան տետրակի մէջ գեղեցիկ մտքեր, պատկերաւոր արտայայտութիւններ, գաղափարներ արձանագրէ, որպէս զի հետզհետէ իր սեպհականը դարձնէ այն եւ օգտագործէ հարկաւոր դէպքում:

*
* *

Մեր խօսքն ուղղուած էր մինչեւ այժմ քարոզիչներին, բայց կը ցանկայինք, որ այս գիրքը օգտակար լինէր ոչ միայն նրանց, այլ եւ Կիրակնօրեայ դպրոցների ուսուցիչներին: Ի հարկէ նա դասագիրք չէ, ուրեմն եւ ոչ անմիջական նիւթ աշակերտներին աւանդելու, բայց ոչ անօգուտ կրօնական-եկեղեցական խնդիրների լուսաբանութեան մէջ:

*
* *

Ի վերջոյ շնորհակալութեան հետ մեր հայրական օրհնութիւններն ենք յայտնում եգիպտական այն մի խումբ Տիկիններին, որոնք հաւաքաբար իրենց նիւթական օժանդակութիւնն են բերել այս գործի հրատարակութեան համար: Այդ Տիկիններն են Մերհանեան, Լ. Կոկանեան, Նէկիպ Փաշա Ղալի, Ս. Զագըր, Զ. Քէշիշեան, Ա. Զագրեան, Ի. Սանտալեան, Լ. Շալեան, Օ. Պըլըգտանեան, Լ. Քէսպէքեան, Ա. Ջհանէսեան, Մէսընեան, Լ. Օհանէսեան, Վ. Սէֆէրեան եւ Տիար Ոմն:

Յունիս 25, 1947, Անթիլիաս — Գ. Կ.

Վեհ. Կաթողիկոսի քարոզած պահուն լուսանկարիչներու կողմէ յանպատրաստից առնուած լուսանկարներէն մէկ քանին՝ Հրատարակութիւնս օգտակար համարեց զետեղել յարմար տեղեր, ընթերցողները Վեհի խօսքերուն հետ՝ Անոր արտաքին ապրումներուն ալ հաղորդ ընելու համար։

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆ՝ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա.

ԱՆՑԱՒՈՐԻ ՄԷՋ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆԸ

ԵՒ

ՄԵՔԵՆԱԿԱՆԻ ՄԷՋ ԿԵՆԴԱՆԻ ՀՈԳԻՆ

Ժամանակի թաւալող տարիները կեանքի եւ անցաւորութեան սովորական յայտարարն են, բայց ո՛չ միայն տարին, այլ վայրկեանն իսկ իր մէջ նոյն իմաստն ունի։ Այս օրուայ եղածը վաղը չկայ, ինչ այսօր չկայ, վաղը պիտի գայ, հետեւեալ օրն իսկ չքանալու համար։ Այսպէս է տեսանելի աշխարհի արտաքին երեւոյթը, ամէն ինչ երեւում է անցաւոր, անիմաստ՝ իբրեւ արտաքին երեւոյթ։

Գեղեցիկ է ծաղիկը, նուրբ, անուշահոտ, երփներանգ, բայց վաղը պիտի չորանայ եւ փոշիանայ։ Գեղեցիկ են դալարագեղ եւ ակնապարար դաշտերը, բայց վաղը պիտի մերկանան իրենց գեղեցկութիւնը. հաճելի են սաղարթախիտ ծառերը, բայց աշնանը նրանց տերեւները ամենաթեթեւ հողմից պիտի վայր թափուեն, փթելու եւ հող դառնալու։ Նոյնման է մարդը իբրեւ գեղեցկութիւն իր մարմնով, զօրաւոր եւ ազդող, նուրբ եւ նազելի սեռերի համեմատ, բայց վաղը պիտի անշնչանայ եւ ծածկուի մի բուռը հողի տակ, գուցէ հէնց ծաղիկ հասակում։ Այս օրուայ հզօր, հարուստ եւ ամէն բանի մէջ յառաջադէմ ազգերը, որ իրենց արդար կամ անարդար կամքն են թելադրում կամ հարուածում, մանաւանդ իրանցից թոյլերին եւ ձգտում են իրենց շահերի համեմատ ընթացք տալ կեանքին, չգիտենք վաղը գոյութիւն պիտի ունենա՞ն, թէ ոչ։ Ո՞ւր են հին Եգիպտացիք, Ասորեստանցիք, հին Յոյները կամ աշխարհի տէր Հռոմայեցիք։ Չկան։ Եւ այսպէս անցաւոր է ամենայն ինչ, անցաւոր է սովորական աչքով դիտուած կեանքը, նոյն իսկ յուսահատական ըստ երեւոյթին։

Բայց այս չէ միայն, որ կեանքը յուսահատական կարող է դարձնել։ Գիտութեան ակնոցներով դիտելով կեանքը եւ տիեզերքը, տեսնում ենք ենթարկուած մեքենական որոշ օրէնքների, որոնց ներգործութիւնը փոխել մեր ուժից վեր է։ Եւ քիչ չեն գիտնականներ կամ գիտութեան անունով խօսողներ, որոնք կեանքի եւ տիեզերքի հասկացողութեան միակ ուղին բնագիտական տեսութիւն..

ներից կամ նրանց յայտնաբերուած մեքենական օրէնքներից դուրս ոչինչ չեն տեսնում։ Նոքա ժխտում են կրօնքի և հոգեկան ուրիշ գիտութիւնների բերած հասկացողութիւններն ու թելադրութիւնները կեանքի և երեւոյթների մասին, մեքենական-մաթեմատիքական օրէնքներից դուրս ամէն ինչ, որ «հոգեկան» է կոչւում։

Բայց, բարեբաղդաբար, գրքի մի երեսն է այդ. պէտք է կարդալ և միւս երեսը։ Արտաքին երեւութականի իրողութեան հետ, գոյութիւն ունի մարդու հոգու մէջ և մի ուրիշ հակոտնեայ զգացում, անյագ ծարաւ դէպի գաղափարական աշխարհը, դէպի յաւիտենական անծանօթը, որ երեւան է գալիս զանազան ձեւակերպութեամբ և հանդերձանքով։ Կեանքի էութիւնը արտաքին իրականութիւնը չէ, այլ ներքինը. եթէ երեւութականը, տեսանելին անցաւորի յայտարարն է, ներքինը դրա հակառակ՝ յաւիտենականութեան։ Անշո՛ւշտ, բնութեան որոշ, յատկապէս, արտաքին երեւոյթները ենթարկւում են ֆիզիքական, քիմիական վերլուծութեան կամ մաթեմատիքական հաշուի, ինչպէս նիւթն է կամ աստղերի շարժումն ու ընթացքը. բայց կեանքը, մարդկային հոգին, գիտակցութիւնը իր բովանդակ ծաւալով նոյն օրէնքներին ենթարկել և հասկանալ, անկարելի է։ Որքան «բնական» է արտաքին երեւոյթը իւր օրէնքներով, նոյն չափ «բնական» է հոգեկանը, որ չի ենթարկւում կամ չի լուսաբանւում նոյն օրէնքներով, բայց որի գոյութիւնը ուրանալ չենք կարող։ Մեր գիտակցութիւնը, օրինակ, նիւթ չէ կամ շարժում, որ վերլուծութեան ենթարկուի ըստ ամենայնի կամ թուաբանական հաշուի։ Մեր հոգու մէջ երեւան եկած բարձրագոյն շարժումներն ու ապրումները, յղացումներն ու ստեղծագործութիւնները ծածկուած են անգիտութեան և խորհրդաւորութեան սրբազան քօղի տակ, որ դէպի յաւիտենական անծանօթն է տանում։

Ո՞ր գիտութիւնը կարող է բացատրել այն իմաստուն կարգաւորութիւնը և նպատակայարմարութիւնը, որ նկատելի է ո՛չ միայն տիեզերական երեւոյթների, այլեւ ամենահասարակ բոյսի կամ կենդանու կեանքի մէջ։ Որչա՜փ գիտնականներ, և նրանց թւում ոչ քիչ բնագէտներ կամ աստղագէտներ, զբաղուել են երկնային մարմինների և նրանց ընթացքի քննութեամբ, ծունկ են խոնարհել սքանչացման խորին զգացմունքով տիեզերքի այս իմաստուն կարգաւորութեան և խորհրդաւորութեան առաջ, որ կրօնի և հաւատոյ սահմանն է։

Գիտութեան, կ՚աւելցնենք, և արուեստի հետ, կրօնը կարող

է և պէտք է դաշնակից լինի մինչեւ մի որոշ տեղ․ գիտութեան և արուեստի բոլոր տուեալները, որոնք նպաստել կարող են մարդկային արտաքին և ներքին կեանքի ազնուացման և դաստիարակութեան, ընդունում ենք, որպէս համագործակցութիւն և Աստուծոյ օրհնութիւն։ Կեանքի արտաքին բարօրութեան և արտաքին յառաջդիմութեան մէջ էլ կրօնը չօշափելի մաս չունենալով, եթէ նրանք հակասութիւն կամ ժխտում չեն բարոյական և մարդասիրական մեր հայեացքներին, ողջունում ենք ի բոլոր սրտէ։

Բայց կայ մի սահման, որից այն կողմը գիտութիւնը չպէտք է անցնի, որ առարկայական ճշդութիւնն է, փաստերի եւ իրողութիւնների հաստատութիւնը, որովհետեւ այդ սահմանից այն կողմը գիտութիւն չէ, այլ հիպոթէզ, ենթադրական տեսութիւն։ Զուտ հոգեկան երեւոյթների և ապրումների իրողութիւնները չեն ենթարկւում նոյն չափանիշին, ինչ որ գիտութեանն է։ Այստեղ ուրիշ հանգամանքներ իրենց խօսքն ունին ասելու, այդ մարդկային հոգու տենչն է դէպի գաղափարականը և ձգտումը, արտաքին իրերի և նրանց կարգաւորութեան մէջ որոնել և գտնել նրանց պատճառն ու նպատակը, որ տանում է դէպի աստուածութեան գաղափարը։

Գիտութիւնը ո՛րչափ և լուսաւորէ մեր միտքը, ընդարձակէ մեր ծանօթութիւնները, բարձրացնէ մեր կարողութիւնը օգտագործելու բնութեան ուժերը, անկարող է բաւարարել և յագուրդ տալ մեր ներքին ծարաւին և պահանջներին, թափանցելու իրերի և երեւոյթների էութեան մէջ, գտնելու նրանց և մեր գոյութեան նպատակը։ Առ Աստուած հաւատն է միայն, որ լրացնում է այդ պակասը, ինչ որ գիտութիւնը տալ չէ կարող, որով մեր կեանքն իմաստ և բովանդակութիւն է ստանում, մեքենական օրէնքների մէջ Աստուծոյ հոգին երեւում, իսկ անցաւոր ժամանակի մէջ յաւիտենականութեան ճանապարհը, որով դէպի բարոյական կատարելութիւնն ենք ընթանում։

30 Դեկտ. 1938. ՊԱՅՔԱՐ

Բ.

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ, որ առաքեացն զիս, մինչ աւուր կայ, գայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել, ՅՈՎ.Հ. Թ. 4.

Մարդիկ սովորաբար ուրախ դէմքերով դիմում են միմեանց — Շնորհաւոր Նոր Տարի մաղթելով: Այդ ուրախութիւնը իւր արտաքին կողմերով յաճախ չափազանցութեան է հասնում՝ կեր ու խում, աղաղակ փողոցների վերայ, մինչև իսկ անկարգութիւններ, որ բարոյական աչքի և ականջի համար անախորժ լինել կարող է:

Բայց այսպէս չէ այն մարդկանց համար, որոնք կեանքի վերայ լրջութեամբ են նայում, որոնց ուսերի վերայ սրբազան և վեհ կոչում է ծանրանում, ծառայելու ժողովուրդին, ծառայելու յաւիտենական բարեաց գաղափարին: Նոր տարուան օրը զուարճութեան և ուրախութեան օր չէ, այլ մի սրբազան և նուիրական վայրկեան, երբ մեր հոգու բոլոր զօրութիւնները լարած պիտի բաժնուենք հին տարուց և նորի մէջ մտնենք. քրիստոնեայի համար Նոր Տարուայ օրը աղօթքի և հոգևոր հաշուետուութեան օր է, Աստուծոյ և խղճի առաջ: Տարեվերջին հաստատութիւնները փակում են իրենց տոմարները և հաշիւ տալիս աւելի բարձր հաստատութիւններին: Այսպէս պէտք է լինի անհատը. նա հաշիւ պէտք է տայ Աստուծոյ և իւր խղճի առաջ, թէ ի՞նչ է ձեռք բերել անցած տարուայ մէջ, որ Յիսուսին է, որ տեւական է և ոչ այնպէս անցաւոր, ինչպէս հին տարին էր: Նոր Տարուայ շնորհաւորութիւնը, յիշեցնում է մեզ, որ հինը անցաւ անդառնալի կերպով, ուստի և պարտաւոր ենք խորասուզուել այդ անցեալի մէջ, որոնել մեր կեանքի, մեր գործի դրական կողմերը, գտնել թերին՝ ապագայում ուղղելու համար: Մենք իրաւունք ունինք ուրախանալու միայն այն դէպքում, երբ մեր հոգու հաշուեմատեանները ուղիղ են, երբ անցաւոր ժամանակի մէջ այնպիսի բարիք ենք ձեռք բերել, որ մեզ համար և մեր ժողովուրդի կամ եկեղեցու համար տեւական նշանակութիւն ունի: Այս մտքով իրաւունք ունինք Նոր Տարուայ տօնախմբութեան վերայ աւելի բարձր, սրբազան տեսակէտով նայել, քան լոկ արտաքին զուարճութեան և ուրախութեան, որ տարաբաղդաբար ընդհանրացած է թէ՛ մեր և թէ ուրիշ հասարակութիւնների մէջ: Մենք երբեք մռայլ կեանքի քարոզող չենք,

բայց կեանքը չը պէտք է իր լրջութիւնը կորսնցնէ այնպիսի նուիրական վայրկեաններին, որ մեր ապագայի համար ծանրակշիռ նշանակութիւն ունին։

Արդ, ի՞նչ է տեւական, ի՞նչ է մնայուն, որ անցնող ժամանակի մէջ ձեռք բերել կարելի է։ Այս հարցի պատասխանը Փրկիչն է տալիս. — Ինձ պարտ է գործել զգործս այնորիկ, որ առաքեաց զիս, մինչ աւուր կայ, գայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել —։ Ժամանակը շահեցնելու միջոցը գործն է։ Անցնող ժամանակի մէջ դրականը աշխատանքով ձեռք բերուած հոգեւոր բարիքն է։ Նիւթական բարիք ձեռք բերելու համար մեծամեծ ջանքեր են հարկաւոր. որքա՛ն եւս առաւել հոգեւոր հարստութեան, տեւական բարիքի համար։ Ժամանակը անցնում է արագ, երկիրը կատարում է իր ընթացքը տիեզերքի Տիրոջ կարգադրութեան համաձայն. մեզ մնում է միայն օգտուել — Մինչ աւուր կայ, գայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել —։

Քրիստոնէութեան համար աշխատանքը նուիրական գաղափար է և ծուլութիւնը մահացու մեղքերից մէկը։ Քրիստոնեայ մարդու կեանքի սկզբունքներից մէկը պէտք է լինի աշխատանքի գաղափարը։ Գործն է կեանքի և շարժման նշանը։ Բայց ո՛չ ամենայն գործ, որ շարժում է, կեանք է։ Կան գործեր, որ ոչ թէ յաւիտենական բարիք, այլ չարիք են ծնում։ Փրկչի պահանջած գործերը հոգեւոր կեանքի՝ լուսոյ գաղափարի յաղթութեան գործերն են. որոնք միմեանց յաջորդելով մարդկային կեանքի մէջ՝ հոգեւոր նոր տարիներ և շրջաններ են յառաջ բերում, այսինքն Աստծուն հաճելի գործ, «զգործս այնորիկ, որ առաքեաց զիս»։ Մեր անցած տարուայ գործերի քննութեան չափը պէտք է լինի այն տեսակէտը, թէ ո՛րքան մենք մեր գործերով նպաստել ենք մեր անձի փրկութեան, թէ ո՛րքան նպաստել ենք հայ ժողովուրդի կրօնական-բարոյական, հոգեւոր-քաղաքակրթական կեանքի զարգացման։ Իւրաքանչիւր ոք պարտաւոր է աշխատել իր չափով, իր հոգու բոլոր կարողութեամբ, բայց միշտ այն գիտակցութեամբ, թէ նորա կատարած գործը մի կաթիլ է ովկիանոսի մէջ. — թէ ծառայք անպիտան եմք, զոր ինչ պարտն էաք առնել՝ արարաք —։ Այսպէս պէտք է մտածէ և գործէ Հայաստանեայց Եկեղեցու իւրաքանչիւր հարազատը՝ լինի քահանայ, վարդապետ, թէ աշխարհական անձն։

Աղմուկ հանել, թմբուկներ զարնել, առանց դրական բան կատարելու՝ չնչին մարդկանց յատկութիւն է։ Ամենայն ինչ հոգեւորականներից սպասել, սակայն ո՛չ մի ջանք չը խնայել աններելի միջոցներով նոցա գործունէութիւնը ջլատելու, հայոց ազգի ամենայն չարեաց, թշուառութեան պատճառ հոգեւորականներին համա-

րել և անխոհեմ գործերով նորա անկման խորխորատը փորել, ծանր բեռներ դնել հոգևորականութեան վերայ, առանց մատի չափ նորա հոգևոր վերակենդանութեան և զարգացման նպաստելու՝ նշանակում է կեանքը, պատմութիւնը իւր երևոյթներով չըմբռնել։ Ի հարկէ, մենք անտեղեակ չենք մեր թերութիւններին՝ շատ աւելի խորն ենք ըմբռնում, թէ որտեղն է չարեաց արմատը. բայց ո՞ւր է դիւթական այն գաւազանը, որով աշխարհը մի անգամից կերպարանափոխ կարելի է անել։ Մի ժողովուրդ, որ ամենայն տեսակ լուտանքներ, զրպարտութիւններ առանց յուզուելու կարդալ և մինչև իսկ խրախուսել կարող է. մի ժողովուրդ, որի մէջ մամուլի դրօշակի շուրջը խմբուած շատ անձնաւորութիւններ գիտակցաբար ստել, հակառակորդներին անվայել կերպով ցեխոտել կարող է՝ առանց խղճի փոքրիկ խայթ զգալու. մի ժողովուրդ, որ անտարբեր նայել կարող է, թէ ինչպէս նախնեաց թողած սրբազան աւանդութիւնները ի՛ւր իսկ տհաս ու անհաւատարիմ զաւակների ձեռքով քանդւում են՝ բնական է, որ իւր ամենամեծ հաստատութիւնների մէջ ևս մեծ թերութիւններ ևս երևան հանէ։

Մենք չենք ուրանում մեր թերութիւնները. գիտենք, որ մեր առաջնորդութիւններն ու յաջորդութիւնները թափուր են, որ մեր քահանայութիւնը ընդհանուր առմամբ տգէտ է, որ մեր վանքերն իրենց կոչման ծառայել չեն կարողանում, որ մենք կենդանի խօսքի քարոզիչներ չունինք, որ մեր հոգևոր երգեցողութիւնը բարեփոխութեան կարօտ է, որ մենք աղքատների խնամատարութիւն չունինք՝ աւետարանի և եկեղեցու պատմութեան ցոյց տուած պահանջների համեմատ, որ մենք քրիստոնէական որբանոցներ, հիւանդանոցներ, անկելանոցներ չունինք մեր նախնեաց նման։ Բայց և այն գիտենք, որ հոգևոր կեանքն էլ իւր աճման և զարգացման պայմաններն ունի, որ բարձրագոչ աղաղակներն ու ճռճըռացող բառերը ո՛չ մի ազգի տուն չեն շինել, այլ լուրջ, երկարատև և անձնուէր գործունէութիւն է պէտք։ — Ահա ժամանակը շահեցնելու միջոցը և Փրկչի ցոյց տուած ճանապարհը։ (*)

Թող գան ու անցնին տարիները՝ մենք լուռ ու մունջ կը բաժանուինք նրանցից. բայց երբ նկատենք ցանկալի կրօնական — հոգեւոր կեանքի արշալոյսի նշանները, այն ժամանակ միայն կ՚զգանք, որ ժամանակը ի զուր չենք կորցրել և ցնծութեան աղաղակներով կը գոչենք. «Շնորհաւո՛ր Նոր տարի»։

Գ. Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

(*) Նախընթաց պարբերութիւնները գրուած են ժամանակի անարդար յարձակումների ազդեցութեան տակ:

ԱՐԱՐԱՏ, 1899, Յունուար, էր. 5—7

Գ.

ՓՐԿՉԻ ԾՆՈՒՆԴԸ

Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ:
Ղուկ. Բ. 11.

Աւետիս մեծ Խորհրդոյ, Խորհուրդ ծածկեալ մեզ յայտնեցաւ:
Գ. Նարեկացի.

Ա.

Երկու տօն տարուայ մէջ քրիստոնեայ աշխարհի համար բացառիկ նշանակութիւն են ստացել, Ծննդեան և Յարութեան տօները։ Ըստ երեւութին նոքա բոլորովին տարբեր յիշողութիւններ են, բայց ո՛չ ըստ էութեան։ Թէ՛ առաջինը և թէ երկրորդը մեզ համար նշանակութիւն են ստացել Յիսուսի փրկչական գործունէութեամբ. մէկը կապուած է նորա ապագայի, միւսը անցեալի հետ։ Յարութեան տօնի մէջ աւելի գաղափարական շեշտ կայ և առաքելական քարոզութեան ժամանակ աւելի կարեւորութիւն է ստացել, բայց Ծնունդն էլ յետագայ դարերում դարձել է աւելի սիրելի և ժողովրդական։ Նա մի ուրախութեան և ընտանեկան տօն է արեւելեան և արեւմտեան քրիստոնեայ ազգերի համար հաւասարապէս և կապուած ժողովրդական ծէսերի և աւանդութիւնների հետ։ Նա ուրախութիւն է բերում ո՛չ միայն մանուկներին, այլ և ոգեւորութիւն և վերածնութեան յոյս ներշնչում հասակաւորներին։ Յուսոյ գաղափարը ապագայի ծոցում թագնուած պայծառ պատկերների արտացոլումն է մարդկային հոգու մէջ. այդ տեսակէտով Յիսուս մանկան ծնունդը մի արշալոյս էր, որ յայտարար պիտի հանդիսանար նոր արեգակի ծագման։ Ի զուր չէ այդ յիշողութիւնը այնքան սիրելի նիւթ է դարձել քրիստոնէական արուեստի համար. դասական ամենամեծ նկարիչները իրենց տաղանդը գործադրել են Ծննդեան տեսարանը իւր յաւիտենական գաղափարով թանձրացնելու. այդ պատկերների մէջ արտացոլում է խորհրդաւորութեան և սքանչացման հետ, նաեւ ուրախութեան և աւետեաց գաղափարը, նոքա եւս իրենց ստեղծած հովիւների և մոգերի նման

ծունկ են չոքել հոգւով նորածին մանկան առաջ և հրեշտակների հետ աւետել մարդկութեան. «Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ»։

Աւետարանական աւանդութիւնների համաձայն Յիսուսի ծնունդը աստուածային էր և գերբնական։ Այդ մի ճշմարտութիւն է ըստ էութեան։ Քննութեան ենթարկել Նորա մանրամասնութիւնները բանականութեան օրէնքներով, փոխանակ Նորա անձնաւորութեան կենսատու ճառագայթների առաջ բանալու մեր սրտի և հոգու լուսամուտները, նշանակում է արուեստի չքնաղ, հրաշակերտ ստեղծագործութիւնը կոպիտ և տգէտ գարբնի ձեռքը տալ, որ նա իւր մուրճով թերութիւններն ուղղէ։ Այսօր գիտնական վերլուծութեամբ չենք զբաղուած, այլ ծննդեան խորհրդութեան նշանակութիւնն ենք կամենում շեշտել մեր հոգեւոր կեանքի համար։ Յիսուս հաւատով և յուսով մեռած մարդկանց Փրկիչը չէ, այլ կենդանիների. իսկ այդպիսիների համար գերբնական նշանակութիւն ունեցողը Նորա ծննդեան մանրամասնութիւնները չեն։ Աստուածային է Նորա անձնաւորութիւնը, Նորա հաւա՛տը դէպի երկնաւոր Հայրը, Նորա սէ՛րը դէպի մերձաւորը, Նորա ամբողջ յայտնութիւնը։ Հանճարեղ մարդիկ պատմութեան մէջ շատ կան. բայց ո՞վ է Յիսուս Քրիստոսի նման։ Նոքա ամենքը մարդ են, նկատելի և շօշափելի իրենց ստուերներով և սահմանաւոր կատարելութիւններով. բայց այստեղ աստուածայինն իւր մաքրութեամբ մարմին է ստացել մարդկային կերպարանքով։ Աւետարանական խօսքի համաձայն բանը մարմին է դարձել։

Պատմութեան հերոսներից, խորիմաստ փիլիսոփաներից ու արուեստագէտներից իւրաքանչիւրը մի աստղ է, որ զարդարում է մարդկային հոգու զարգացման երկինքը, բայց ի՞նչ են նրանք Յիսուս Քրիստոսի անձնաւորութեան արեգակի առաջ։ Արարատեան անհուն դաշտի հորիզոնում բարձրանում է ամպածրար և երկնամերձ գագաթով Մասիսը. ի՞նչ են նորա առաջ հասարակ բլուրները։ Այսպէս է Յիսուսի անձնաւորութեան համեմատութիւնը պատմութեան բոլոր հերոսների նկատմամբ։ Գիտութիւնը աշխատել է լուսաբանել Նորա ծագման պատմութիւնը, ժամանակակից փիլիսոփայութեան և կրօնական հոսանքների առնչութեամբ, բայց նա մնացել է դարձեալ աստուածային, չքնաղ մի խորհուրդ, անհունութեան հորիզոնի վերայ ձգուած նուրբ և պայծառ շամանդաղի նման ակնապարար, առանց թանձրացեալ ըմբռնողութիւն դառնալու ըստ ամենայնի պատմական խորհրդութիւնների օղակների մէջ։ Եւ առհասարակ մի՞թէ ըմբռնելի է պատմութեան ամէն մի երեւոյթ, անձնաւորութիւն, ինչպէս խորհուրդ է մարդկային հոգին իւր շատ կողմե-

բով, ի՛ւս առաւել խորհուրդ են աստուածամերձ անձնաւորութիւնները։ Ո՛չ, Յիսուսի ծագումը սովորական չէ, որովհետեւ Աստուծոյ, անարատ սիրոյ, լուսոյ և ճշմարտութեան մասին մենք գաղափար ենք ստանում միայն Նորա անձնաւորութեամբ։ Պատմութեան ամենավսեմ խորհուրդն է այս ծնունդը, որի առաջ մի՛այն պէտք է լռի բանականութիւնն ու մարդկային տկար իմաստութիւնը և Նրա սրտից պէտք է մի՛այն որպէս կնդրուկի անուշ բուրմունք դէպի երկինք բարձրանայ անհուն երախտագիտութեան և գոհութեան զգացմունքը։

Բ.

Արդարեւ, այսօրուայ տօնը մի մեծ մարդու ծննդեան յիշատակ չէ, այլ աւելի։ Բեթղեհէմի մսուրքի լրողութիւնը մարդկային պատմութեան օրհնութեան աղբիւրը դարձաւ։ Հրեշտակի աւետիսը «Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ» միլիոնաւոր մարդկանց սրտի մէջ արձագանգ գտաւ դարերի ընթացքում և նրանց դասակից արաւ հրեշտակների հետ օրհնելու Աստուծոյ անունը։ «Փառք ի բարձունս Աստուծոյ»։ Իւրաքանչիւր պարգեւ երախտագիտութեան զգացմունք է յառաջ բերում ստացողի մէջ, իսկ այսօր մարդկութեան առաջ է դրուած Բարձրեալի ամենամեծ նուէրը մանուկ Յիսուսի ծննդեամբ։ Խաւարի ստուերների մէջ խարխափող մարդկութեան համար Բեթղեհէմի մսուրքից փրկութեան և լուսոյ մի նոր աստղ է ծագել. հանդէս է եկել Աստուծոյ հոգին, երկրաւոր նմանի կերպարանքով։ Բարձրագոյն բարին, գեղեցիկն ու ճշմարիտը երկնային եթերներից իջել է այսօր երկրի վերայ։ Աստուած մարմնացել է մարդու մէջ, որպէս զի մարդն էլ Աստուածութեան հասնի։ Այսպէս են ձեւակերպել եկեղեցու հայրերը Քրիստոսի ծննդեան բարոյական խորհուրդը և շատ գեղեցիկ կերպով։ Մարդկութեան Փրկիչն է ծնուել այսօր, Նորա հոգու առաջնորդը։ «Ծառն ի պտղոյ իւրմէ ճանաչի». քրիստոնէութեան Հիմնադիրն էլ իւր ներգործութեամբ դարերի ընթացքում։

Չի կարելի հին ազգերի կեանքի վերջալուսին և նոր ազգերի ծագման և զարգացման ամբողջ շրջանում հոգեւոր-բարոյական–քաղաքակրթական–մարդասիրական որ և է վսեմ շարժում ցոյց տալ, որ չկրէր Քրիստոսի հոգու ներգործութիւնը։ Կարելի է Նորան պատմութեան հնոցը՝ կիզիչ կէտը՝ համարել. Նորա մէջ են ամփոփուած հին քաղաքակրթութեան ամենից ազնիւ գծերը և այնտեղից էլ աւելի պայծառ կերպով բղխել են նոր ազգերի

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

կեանքի ճառագայթները։ Եւրոպական ներկայ նշանաւոր ազգերի քաղաքակրթութեան, գրի և գրականութեան ծագումը կապուած է քրիստոնէութեան հետ։ Պէտք է համեմատել քրիստոնեայ ազգերի քաղաքակրթութիւնը արեւելեան հին կրօնների ազդեցութեան հետ, որպէս զի միանգամից պարզ լինի մեր կրօնի և Նորա Հիմնադրի լուսաւոր առաւելութիւնները։ Արեւելեան կրօններին ենթարկուած ազգերը նիրհում են խորին թմրութեան մէջ և իսկապէս պատմութիւն չունին, որովհետեւ իրենց կրօնների ազդեցութեամբ զուրկ են մնացել զարգացման ունակութիւնից; այն ինչ քրիստոնէութիւնը իւր Հիմնադրի օրհնեալ բերանով մարդկութեան առաջ անսահման կատարելութեան նպատակն է դրել։ Մահմեդականութիւնը հրով ու սրով էր տարածում իւր ազդեցութիւնը, նման լաւայի, որ մեռցնում է իւր հոսանքի տակ ընկած ամէն բուսականութիւն և կենդանութիւն, այն ինչ քրիստոնէութիւնը երկնային ցօղ է դարձել իւր ազդեցութեան ենթարկուած բոլոր ազգերի մտաւոր անդաստանների համար. Նա իւրացրել է հին ազգերի քաղաքակրթութիւնը և աւանդել նոր ազգերին, նրանց համար գիր ու դպրութիւն, արուեստ է ստեղծել և կանգնեցրել նրանց գիտակցական շաւղի վերայ։

Քրիստոնէութեան շատ գաղափարները լիովին չեն իրագործուած և նրանք անիրագործելի են իբրեւ իդէալ բովանդակ կատարելութեամբ, բայց հէնց այդպիսի գերական է, որ կեանքի բարոյական զարգացման աղբիւրն է դարձել։ Մարդկութեան զարգացման լաւ ծանօթ անձանց համար կասկածի ոչ մի տեղիք չկայ, թէ դարերն ու ժամանակները անհետեւանք չեն անցել։ Գիտութեան, արուեստի, քաղաքակրթութեան յառաջադիմութիւնը, վայրենի և կոշտ բարքերի աստիճանաբար մեղմացումն ու փափկութիւնը, բարոյական հայեացքների խորութիւնն ու հրամայական արժէք ստանալը քրիստոնէութեան բարերար ազդեցութեան արդիւնքն է և դէպի կատարելութիւն տանող մի ունակութիւն։ Կինը քրիստոնեայ ազգերի մէջ բարոյապէս հաւասար է մարդուն, նորա լծակիցն է կեանքի մէջ և ընկերը, բայց ոչ միայն հաճոյքի առարկայ, հարեմի զարդ, զրկուած Աստուծոյ շնորհած արեւից ու լուսից, ինչպէս մահմեդականութեան և արեւելեան կրօններին ենթարկուած ազգերի մէջ։ Մարդկութեան անարգանք ստրկութիւնը մեղմացաւ և ի վերջոյ ոչնչացաւ նոյն իսկ շատ ոչ քրիստոնեայ ազգերի մէջ քրիստոնէութեան կարեկցութեան և մարդասիրութեան ազդեցութեան շնորհիւ։ Բարեգործական ամէն

տեսակ հաստատութիւնները՝ — հիւանդանոցներն ու անկելանոցները, որբանոցներն ու արհեստանոցները, աղքատանոցներն ու դպրոցները, նոյն իսկ մարմնապէս և հոգեպէս պակասաւորների համար — բոլորը ծագել են և ծաղկել քրիստոնէութեան կենսատու արեւի ճառագայթների տակ։ Քրիստոնէութիւնը ձեռք է մեկնել բարոյապէս ընկածին, օգնութեան է հասել նիւթապէս կարօտին և մխիթարել է սգաւորին, մաքառել է մարդկային ամէն տեսակ ախտերի՝ անբարոյականութեան, արբեցութեան, վաշխառութեան դէմ, խրախուսել է ազնիւ աշխատանքը, մաքուր կեանքը...։ Այնտեղից է ծագել, և Աւետարանի լուսոյ և ջերմութեան մէջ զարգացել մարդասիրութեան գաղափարը իր պէս պէս երեւոյթներով, որ արդի քաղաքակրթութեան զարդն է և մարդկութեան բարոյական յառաջդիմութեան լաւագոյն ապացոյցը։

Այսօր եւս քրիստոնէութիւնը աւետարանական լուսոյ և քաղաքակրթութեան բարի սերմերը տարածում է Ափրիկայի և Ասիայի կիսավայրենի կամ թմրութեան ենթարկուած ցեղերի և ազգերի մէջ. հազարաւոր միսիոնարներ գործում են այնտեղ Քրիստոսի աշակերտին վայել անձնուիրութեամբ և զրկանքներով...։ Բայց բաւական է. կարելի է համարել ծովի ափին կուտակուած աւազը, բայց ո՛չ չափել ու կշռել այն չօշափելի բարիքն ու օրհնութիւնը, որ բղխել է Բեթղեհէմի մսուրքի խորութիւնից։ Եւ դեռ երկար դարերի համար անսպառելի բարոյական դրամագլուխ կը լինի այն մարդկային հոգու զարգացման պատմութեան մէջ։

Գ.

Այսօրուայ հոգեւոր երգերն ու սրբազան ընթերցուածները մեզ դէպի մսուրք են հրաւիրում, ծունկ խոնարհելու այն երկնային մանկան առաջ, որ մեր Փրկիչը հանդիսացաւ։ «Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ»։ Մեզ առաջնորդող աստղը բանականութիւնը չէ, այլ պարզ հովիւների և իմաստուն մոգերի անկեղծ բարեպաշտութիւնը, սքանչացման և հիացմունքի զգացմունքը նախնականի, վսեմի, աստուածայինի առաջ։ Թող լռէ ամէն մի քննութիւն և յարութիւն առնէ խղճի մաքուր ձայնը։ Լսենք պատմութեան խորին խորհուրդների սօսաւիւնը մեր ականջին, որ հրեշտակի աւետման կրկնութիւնն է. «Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ»։

Բայց ծննդեան տօնը միայն մեր Փրկչի յայտնութեան յիշա-

տակը չէ, այլ և մի քարոզ վերածնութեան համար: Եթէ մեր յար-գանքն ու երախտագիտութիւնը արտաքին տօնակատարութեամբ և ձևերով պէտք է արտայայտուի, կը դատապարտուի նոյն իսկ Փրկչի խօսքերով: Նորա բողոքն ու քննադատութիւնն ուղղուած էր հէնց հրէութեան այդ թերութիւնների, յատկապէս արտաքին ծիսակա-տարութեանց ներկայացուցիչ ու պաշտպան փարիսեցիութեան դէմ: Մեր հոգևոր երգերն ու ընթերցուածները կը լինեն անհամա-պատասխան այն անձնաւորութեան յիշատակին, որ կեանք էր և սէր, և ոչ դօղանջող պղինձ: Ի զուր կը լինեն տօնի հետ կապուած արտաքին փառաւորութիւնները, եռաձայն և քառաձայն երգեցո-ղութիւնները, հարիւրաւոր մոմերի և ջահերի արձակած ճառա-գայթները, եթէ մեր հոգու խաւարը չի փարատուած Քրիստոսից բղխած սիրոյ նշոյլներով: Եկեղեցու արտաքին փառաւորութիւնը, նորա պայծառութիւնն ու գեղարուեստական զարդարանքը գնահա-տելի է դաստիարակչական որոշ տեսակէտով, բայց երբեք չպէտք է մոռանանք, որ նա մի շէնք է միայն, թող լինի կոփածոյ քարե-րից, նոյնիսկ մարմարիոնից կերտուած, եթէ սիրոյ հոգին չի սաւառ-նում նորա կամարների տակ:

Կրօնը արտաքին պաշտամունք չէ, այլ կեանքի զօ-րութիւն և նպատակ: Տէրը իւր աշակերտների զգացմունք-ների, նիստ ու կացի, գործունէութեան մէջն է թանձրանում և պատկեր ստանում: Նա չի եկել Դաւթի նիւթական աթոռի վերայ բազմելու հին կտակարանի բարեպաշտների իղձերի համաձայն, այլ իւր հաւատացեալների հոգու և սրտի մէջ: Նա չի եկել հրէից թագա-ւորութիւնը նորոգելու և հռովմայեցւոց իշխանութիւնը խորտակե-լու, այլ մեր հոգիները փրկելու չարի, սատանայի, մեղքի իշխա-նութիւնից: Ի՞նչ է մարմնաւոր ստրկութիւնը հոգևոր ստրկու-թեան առաջ: «Զի՞նչ օգուտ է մարդոյ, եթէ զաշխարհ ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ»: Նա եկել է մի աւելի բարձր, ազատ, վսեմ և աստուածային թագաւորութիւն ստեղծելու մարդ-կանց հոգիների մէջ. «արքայութիւնն ի ներքս ի ձեզ է», իւր սիրոյ ջերմութեամբ հալեցնելու մեր սրտի նախկանութեան սառնամանիք-ները, բաղխելու նորա փակուած դռները, որպէս զի բացուին մեզ շրջապատող թշուառութեան առաջ: Աւա՜ղ, մարդկային հոգու աչքերը շատ կարճատես են: Ի՜նչ բազմատեսակ թշուառութիւններ կան, որոնք վրիպում են մեր տեսութիւնից, եթէ Քրիստոսի սիրոյ և կարեկցութեան ճառագայթները չեն թափանցել մեր հոգին: Հարիւրաւոր, հազարաւոր մարդիկ իրենց վերջին շունչն են փչում

աղքատութեան, տգիտութեան և անբարոյական ախտերի ճիրան-ներում և մենք Կայէնի նման չքմեղ ենք ձեւանում Աստուծոյ և մեր քարացած խղճի առաջ։ Հարիւրաւոր, հազարաւոր երախաներ մերկ, բոկոտն, քաղցած իրենց հայեացքը մեզ են ուղղել Տաճկա-հայաստանում և այստեղ, որոնք կը կամենային ծննդեան տօներին նոյնպէս հագնուել, վայելել իրենց ծնողների փայփայանքն ու սէրը։ Մի ամբողջ ժողովուրդ տառապում է նիւթական և հոգեւոր աղքատութեան, ստրկութեան, խաւարի և մոլորութեան մէջ։ Դարերի արհաւիրքներից ճողոպրած ազգային եկեղեցին արիւնա-քամ ընկած է Երիքովի ճանապարհին և իր որդոց օգնութեանն է սպասում, որ Սամարացու նման սպեղանի դնեն վէրքերին...։ (*)

Տեսնո՞ւմ ենք այս բոլորը, լսո՞ւմ ենք նրանց հառաչանքի և հեծութեան ձայները։ Եթէ այո՛, Բեթղեհէմի աստղը ծագել է և մեզ համար, հրեշտակի աւետիքը հովիւների հետ և մեզ է ուղ-ղուած, թէ «ծնաւ ձեզ այսօր Փրկիչ»։

Գ. Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

(*) Ի նկատի է առնուած ժամանակի վիճակը։

ԱՐԱՐԱՏ. 1908 Յունուար

Դ.

ԾՆՆԴԵԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՐՈԶ

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԱՌԱՋՆՈՐԴ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ, ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ, ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ, ՀՈՎԻՒՆԵՐԻՆ, ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ԵՒ ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԵՒ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ, ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԵՒ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐԻՆ, ԴՊՐԱՑ ԴԱՍԵՐԻՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ, ՈՒՍՏԵՐՑ ՈՒ ԴՍՏԵՐՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԵՒ ՄԵՐ ԲՈԼՈՐ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐԻՆ, ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ, ԾԵՐՈՑ ԵՒ ՏՂԱՅՈՑ, ՇՆՈՐՀՔ, ՍԷՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԵՒ ՓՐԿՉԻՆ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ։

Տիրոջ հրաշափառ Ծննդեան և Յայտնութեան տօնի առթիւ կը կամենայինք լինել մեր հօտին պատկանող բոլոր եկեղեցիներում, Ձեզ հետ միասին փառաւորել Նորա սուրբ անունը, անձն ու գործը, Մկրտութիւնը, Ջրօրհնեաց սրբազան հանդիսի և արարողութեան կատարմամբ, բայց այդ անհնարին է մարմնաւորապէս։ Ուստի հարկաւոր համարեցինք հովուական այս թուղթն ուղարկել, որպէս մի սովորական քարոզի փոխարէն կարդացուի այն մեր եկեղեցիների բեմերից ի լուր ժողովրդի, որպէս իրենց հոգեւոր Հօր և Առաջնորդի կենդանի և պարզ խօսքը ուղղուած իւր հաւատացեալ հօտին և զաւակներին և որպէս նշան Նորա հոգւով ներկայութեան։

Ծննդեան տօնը ուրախութեան տօն է բոլոր քրիստոնեայ եկեղեցիների, նոյնպէս և Հայաստանեայց եկեղեցու համար, որ բարեպաշտական կեանքի առանցքն է կազմում, դառնալով և ժողովրդական տօն մեծի և փոքրի համար։ Զարդարւում են փողոցները, խանութներն ու հրապարակները, հասարակաց պարտէզները, մասնաւոր բնակարանների ընդունարաններն ու բակերը տօնածառերով, գոյնզգոյն լապտերներով։ Երախաները նուէրներ են ստանում ծնողներից, բարեկամները ողջոյնի խօսքեր և նուէրներ փոխանակում իրար հետ։ Եկեղեցիները յատուկ պայծառութիւն և շքեղութիւն են ստանում դրսից և ներսից, ճրագալոյցներով, ջահերի լուցմամբ և այլն։ Այս բոլորը ուրախութեան արտայայտութիւն է, կապուած Քրիստոսի Ծննդեան և Յայտնութեան հետ,

տարաբաղդաբար, աւելի կենցաղական, արտաքին բնաւորութեամբ, քան հոգեւոր, որի նշանակութիւնը կը կամենայինք բացատրել ձեզ այսօր ըստ կարելւոյն ամենքին հասկանալի լեզուով։

Սիրելի՛ք, ամենայն գործ ու երեւոյթ յայտարարն է գործողի, հետեւանքը, արդիւնքը պատճառի։ Ինչպէս ծառը ճանաչւում է իւր պտղից, այնպէս էլ անձը իւր գործից և նորա յառաջ բերած արդիւնքից։ Փշից խաղող չի քաղւի, ինչպէս և տատասկից թուզ։ Մօտաւորապէս երկու հազար տարի է, Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքի մօտ, մի հասարակ քարայրի մէջ, որ փարախ էր ծառայում անասունների համար ձմեռուայ օրերին, ծնուեց մի մանուկ, հայրը մի հիւսն, մայրը, ըստ երեւոյթին, հասարակ դասակարգի մի աղջիկ։ Ի՞նչպէս կարելի էր սպասել, որ այդ մանուկը մարդկութեան հոգեւոր իշխանը պիտի դառնայ, մարդկային հոգիների մեծ Առաջնորդն ու Փրկիչը, ազգերին խաւարից դէպի լոյս, անգիտութիւնից դէպի պայծառ, հոգեւոր գիտութիւն պիտի առաջնորդի։ Արդա՛րեւ, «Խորհուրդ մեծ և սքանչելի», ինչպէս երգել են մեր բարեպաշտ հայրերը։

Աշխարհը, պատմութիւնը տեսել է մեծ և հզօր աշխարհակալ արքաներ, յաղթող զօրապետներ, որոնց ձիերի սմբակների տակ փշրւացել են երկիրներ և սրերի առաջ ոչնչացել ազգեր։ Բայց նրանց իշխանութիւնն ու փառքը եղել է անցաւոր, յօդս ցնդել իրենց յարուցած փոշիների նման, քշուելով ժամանակի բերած հողմերից։ Իսկ Բեթղեհէմի այրի մէջ ծնած և մսուրքի մէջ ապաստան գտած աղքատ այս նորածինը, առանց զէնքի և զօրութեան, առանց աշխարհը սասանեցնող պատերազմների, բազմաթիւ ազգերի և միլիոնաւոր մարդկանց հոգիների առաջնորդը, հզօր տէրը հանդիսացել, աւելի հզօր, քան մեծ արքաները, որոնք իրենց թագազարդ գլուխը խոնարհել են և ծունկ չոքել նորա առաջ։ Իսկապէս «Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ»։

Անշո՛ւշտ, աշխարհը և պատմութիւնը տեսել է շատ մեծ մտածողներ, փիլիսոփաներ, բանաստեղծներ և գիտնականներ, բայց նրանցից ո՞րը կարող է համեմատուել Յիսուս Նազովրեցու հետ, որ փիլիսոփայական դպրոց չէր անցել, գիտնականների չէր աշակերտել, բայց որի գործը, ցանած սերմերը պտղաբեր հանդիսացան հանուր մարդկութեան հոգեւոր անդաստանների մէջ այնպիսի խորութեամբ և ընդարձակութեամբ, որի հետ ոչինչ կարող է չափուել։ Մարդկութիւնը մեծ բարերարներ է ունեցել, որոնք իրենց հանճարով երախտապարտ են կացուցել յետագայ սերունդ-

ներին։ Բայց Յիսուս Նազովրեցին է միայն, որ ոչ թէ յարգանքի, այլ պաշտաման առարկայ է դարձել իր անուան նուիրուած հազարաւոր, հարիւր հազարաւոր հոյակապ տաճարների մէջ՝ իբրեւ տիպ և օրինակ մարմնացեալ սիրոյ և եղբայրութեան։

Հազարաւոր տարիների ընթացքում գրուել են բանաստեղծական, փիլիսոփայական, գիտական հաստափոր գրքեր, որոնք սնունդ են մատակարարել յետագայ սերունդներին, ուսումնասիրութիւններ են կատարել նրանց շուրջը, մատենադարաններ կազմելու չափ. Շէկսպիրի, Գեօթէի և նման հանճարների գըրուածքների հետ կապուած ամբողջ գրականութիւն է ստեղծուել. Իսկ մեր Տէրը չի գրել և ոչ մի տող, բայց ապրել է իր աշակերտների շրջանում իբրեւ կենդանի գիրք և իր վարդապետութեամբ այնպիսի լոյս սփռել նրանց հոգիների մէջ, և այնպիսի դրոշմ դրել նրանց սրտերի վերայ, որ անջնջելի պիտի մնար։ Այդպիսի տպաւորութեան և յիշողութեան արդիւնքն է մեր փոքրիկ աւետարանը, առաքելական թղթերի հետ՝ Նոր Կտակարան կոչուած, որ միլիոնաւոր մարդկանց կեանքի աղբիւրը հանդիսացաւ հազարաւոր տարիների ընթացքում և ուսումնասիրութեան ու Նոր գրականութեան նիւթ այնպիսի չափերով, որ ոչ՛ մի գիրք չէ ունեցել։

Մարդկութեան մտաւոր զարգացման ամենակարեւոր գործիքը գիրն է, դպրութիւնը. ուսումնասիրեցէք Առաջաւոր Ասիայի և Եւրոպական ազգերի քաղաքակրթութեան, գրի և դպրութեան ծագումն ու զարգացումը, և կը տեսնէք, թէ ինչպէ՛ս քրիստոնէութեան հովանաւորութեամբ, եկեղեցու սպասաւորների ձեռքով, Հայն ու Վրացին, սլաւոնական ազգերը գիր են ստացել, և գրականութիւն, դասական սքանչելի լեզու, ինչպէս և Գերմանացու, Անգլիացու դպրութեան սկզբնաւորութիւնը կապուած է Ս. Գրքի թարգմանութեան կամ քրիստոնէական քարոզչութեան հետ։

Մարդկութիւնն ու քաղաքակրթութիւնը պարծենում է աստուածահաճոյ և բարեսիրական բազմատեսակ հաստատութիւններով, որբանոցներով, հիւանդանոցներով, ապնջանոցներով և անկելանոցներով . . .։ Ի՞նչն է եղել նրանց ծագման և զարգացման զարկ տուող շարժառիթը, պատճառն ու աղբիւրը, բայց եթէ Բեթղեհէմի մսուրքի մէջ ծնած մանուկը, որ իր փրկչական գործունէութեամբ, գթութեան և կարեկցութեան զգացմունքն ու գործը, աստուածանմանութեան ուղին վարդապետեց. «Եղերուք գթածք, որպէս և Երկնաւոր Հայրն ձեր գթած է»։

Ճանապարհորդեցէք ամբողջ քրիստոնէական աշխարհը,

մտէք մեծ մայրաքաղաքների թանգարանները, դիտեցէք բոլոր նշանաւոր վարպետների գործերը, դիտեցէք ճարտարապետական ամենամեծ կոթողները, արքայական շքեղ պալատները... եւ համեմատեցէք Բեթղեհէմի մսուրի մանկան անուան և կեանքի հետ կապուած նկարչական և ճարտարապետական հոյակապ ստեղծագործութիւնների հետ, և կը տեսնէք, որ այստեղ է իսկապէս բարձր սքանչացման արժանի արուեստը, ուր նիւթը հոգի է ստացել, կենդանի լեզու, մարդկային ներքին աշխարհի ամենանուրբ թելերի հետ խօսող։ Ո՞րտեղ է երաժշտութիւնն այնպէս հոգեթով երանգ ստացել, մարդկային հոգին վերացնելու չափ, բայց եթէ եկեղեցական և կրօնական հին և նոր երաժշտութեան մէջ, ինչպէս պատարագներն են, հոգեւոր շարականներն ու երգերը հին եկեղեցիների, բայց նաեւ Հենդելի Մեսիասի, Բախի Մատթէոսի Պասիոնի, Վագների Պարսիֆալի...։ «Ծառն ի պտղոյ իւրմէ ճանաչի»․ ահա պտուղները այն ծառի, որ քրիստոնէութիւն է կոչւում, Բեթղեհէմի մանկան բերած օրհնութիւնները։

Այսօր գիտութիւնը հրաշքներ է գործում, նրանց ծաղկման և ուռճացման օրօրանները դպրոցներն են, համալսարանները, գիտական բազմատեսակ կաճառները։ Ուսումնասիրեցէք եւրոպական բոլոր հին համալսարանների ծագման և զարգացման պատմութիւնները և կը տեսնէք, թէ նոքա երեւան են եկել քրիստոնէութեան բարերար ազդեցութեան և հովանաւորութեան տակ, մինչեւ աճել են, զարգացել, իրենց ոտքի վրայ կանգնել անկախօրէն։ Նոյնը կարող ենք ասել և հոգեկան այլ երեւոյթների մասին, գրականութեան և արուեստի։ Մենք ընդունում ենք գիտութեան մեծ արժէքը և ցանկացող ենք նրա բոլոր իրական յառաջադիմութեան, դրանց մէջ նաեւ, բնական գիտութիւնների ծաղկման։ Ճշմարիտ և բարձրագոյն մտքով հասկացուած կրօնը երկիւղ չունի գիտութիւնից և ո՛չ իսկ բնական գիտութիւններից, ինչպէս կարծում են ոմանք․ թո՛ղ ընդարձակուին և խորանան տիեզերքի և բնութեան հասկացողութեան շրջանները, տիեզերքի խորհրդաւորութեան երեւոյթը սորանով չի վերանայ, որի հետ կապուած է կրօնի ծագման, և տիեզերքի ընդհանուր հասկացողութիւնը։ Մեր չգիտցածը միշտ աւելի կը լինի, քան գիտցածը, որքան և ընդարձակուի մեր գիտական ծանօթութիւնը տիեզերքի մեծութեան և իմաստուն կարգաւորութեան մասին, որ տենչացող և դէպի բարձրագոյն հասկացողութիւնը ձգտող, արտաքին երեւոյթների մէջ ներքին էութիւնը որոնող հոգիների համար՝ սքանչացման աղբիւրն է, ստեղծուածից դէպի Ստեղծողը, արդիւնքից դէպի Պատճառը տանող, որ Աստուծոյ գաղափարն է։

Թո՛ղ բազմանան օգտակար գիւտերը՝ հեռագիրն ու հեռախօսը, ռադիօն, շոգենաւն ու օդապարիկը... և օգնեն նիւթական կեանքի պահանջների լրացման, միայն առանց բացասական նպատակների հասնելու միջոց դառնալու։ Բայց մի է բարձրագոյն Գիւտարարը, մի Տէր, մի Յիսուս Քրիստոս, որ ամենաթանկագին գիւտն է արել, մարդկային հոգու անսահման արժէքի գիւտը։ Սրտացաւ, աստուածային Հովուի և Առաջնորդի գիւտը՝ առողջ և կորուսեալ հոգիների համար։ Մարդկային անձը, ներքին աշխարհն է այն գանձը, անգին մարգարիտը, որի առաջ երկրորդական են դառնում ամէն տեսակ արժէքներ, լուսաւորուած և տեսանելի դարձած առ Աստուած և առ ընկերը մաքուր սիրով, որի կենդանի օրինակը հանդիսացաւ մեր Տէրը իր անձով և վարդապետութեամբ, և իր տիեզերական ներգործութեամբ պատմութեան մէջ — «Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ»։

Այսպէս, սի՛րելիք, մենք չկամեցանք աստուածաբանական վերլուծութիւնների մէջ մտնել մեր Տիրոջ մարդեղութեան խորհուրդը ձեզ բացատրելու համար, որ Աթանաս մեծի խօսքով, Աստուծոյ մարդացումն էր, մարդկանց աստուածութեան բարձրացնելու համար։ Այլ միշտ սովորական և պատմական հողի վերայ կանգնած, երեւոյթների համեմատական ճանապարհով, կամեցանք պարզել մեր Տէր Յիսուս Քրիստոսի անձնաւորութեան չնաշխարհիկ մեծութիւնը, իր փրկչական գործունէութեամբ և ներգործութեամբ քաղաքակիրթ աշխարհի պատմութեան մէջ։ Եւ եթէ կամենանք պարզագոյն կերպով մատնանշել Նորա մեծութեան աղբիւրը իր փրկչական գործունէութեամբ, պիտի աւելացնենք, թէ այդ Նորա կրօնն էր, հաւատը դէպի երկնաւոր Հայրը, մարդկանց եղբայրակցութեան գաղափարը, որպէս երկնաւոր Հօր որդիքը հաւասարապէս, որոնց վերայ ծագում է իր արդարութեան արեգակը և ուղարկում կենդանարար անձրեւն անխտիր։

Նորա տիեզերապարփակ սիրոյ մի ճառագայթն էլ բաժին է հասել և մեզ, հայ ժողովրդին, Հայաստանեայց Եկեղեցու աստուածաշնորհ պարգեւով։ Գնահատենք այդ մեծ պարգեւը, հասկանանք Նորա մեծ արժէքը, պահպանենք Նորա բարոյական ոյժն ու միութիւնը, որ Նոյեան փրկութեան տապանն է մեր ալէծուփ կեանքի ծովերի մէջ։

Օրհնեա՛լ լինի Քո Ծնունդը, օրհնեա՛լ Քո Յայտնութիւնը, օրհնեա՛լ և պտղաբեր Քո ցանած սերմերը՝ սիրոյ, եղբայրութեան, փոխադարձ կարեկցութեան և գնահատութեան, որ հիմքն է անհատների, ազգերի և մարդկութեան խաղաղութեան և հաճութեան, որ քարոզուեցաւ հրեշտակների բերանով Քո Ծննդեան առթիւ։

1 Յունվար 1940, Նիւ Եօրք. «ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ»

Ե.

ՔՐԻՍՏՈՍԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ

«Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ մինչեւ ի կատարած աշխարհի»:

Մատթ. ԻԸ. 20։

Քրիստոսի ներկայութիւնը իւր հաւատացեալների մէջ աւետարանական քարոզութեան էական գաղափարներից մէկն է։ «Ձի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ և ես ի մէջ նոցա»։ Բաժանման րոպէին իւր աշակերտներին վերջին պատուէրը տալով հեթանոսների մէջ քարոզելու, աւելացնում է «և ահա ես ընդ ձեզ եմ մինչեւ ի կատարած աշխարհի»։ Նման մտքեր և խօսքեր կրկնուած են ո՛չ միայն Համատեսների, այլ և Յովհաննու աւետարանի մէջ շատ յաճախ։ Քրիստոսի ներկայութիւնը Աստուծոյ ներկայութիւնն է, Ս. Հոգու կենդանի ներգործութիւնն է, որովհետեւ մենք անձնաւորեալ Աստծուն ուրիշ կերպ ըմբռնել չենք կարող, քան մեր մտքի և հոգու համար շօշափելի և մեր հոգու աչքերի առաջ տեսանելի Տ. Յիսուս Քրիստոսի անձնաւորութեամբ և վարդապետութեամբ։ Քրիստոնէական եկեղեցու ծագումն ու հաստատութիւնը պայմանաւորուած էր Ս. Հոգու գալստեամբ։ Հրեղէն լեզուների ընդունելութեամբ է, որ ստեղծւում է սիրոյ, տիեզերական լեզուի հասկացողութիւնը տարբեր ազգերի մէջ։

Եկեղեցի առանց Յիսուսի ներկայութեան չկայ. կայ քար, կիր, փայտ, կայ յատակ, պատ, լուսամուտներ, առաստաղ, այսինքն նիւթական շէնք, որ ինքնըստինքեան ոչինչ է հոգեւոր տեսակէտով, թող լինի այն շքեղ, փառաւոր, ոսկով և արծաթով զարդարուած, բարձրաբերձ կամարներով և գմբէթներով դէպի երկինք սլացած։ Որովհետեւ եկեղեցի բառի սկզբնական նշանակութիւնը շէնքը չէ, այլ ժողովը, բազմութիւնը կենդանի մարդկանց, յանուն Աստուծոյ կամ Քրիստոսի հաւաքուած։ «Եկեղեցի» հայերէն տառադարձութիւնն է յունարէն ἐκκλησία բառի, որ հաւատացեալների ժողով է նշանակում վերոյիշեալ մտքով, և յետագայում միայն անդրադարձել է այն շէնքին, ուր հաւատացեալներն են հաւաքւում։

Բայց Քրիստոս չկայ, կան ասողներ։ Չկայ, ո՛չ միայն այն մտքով, որ 2000 տարի է անցել Նորա մահուանից յետոյ, այլ և կան ժխտողներ Նորա պատմական գոյութեան։ Անշո՛ւշտ, պատմա-գիտական տեսակէտով խախուտ են այդպիսի պնդումները. մեզ համար հասկանալի չէ, ստութեան և կեղծիքի վերայ հիմնուած ներքին ճշմարտութիւնը, աշխարհը նուաճող բարոյական շարժումը, ձգտումը դէպի սիրոյ և եղբայրութեան գաղափարը, որ քրիստոնէութեան էութիւնն է։ «Ծառն ի պտղոյ իւրմէ ճանաչի». փշից խաղող չի քաղուիլ և ոչ տատասկից թուզ, այսպէս էլ ստութիւնից ճշմարտութեան պտուղ։ Որքա՛ն էլ ճարպիկ, մտքի ճկունութեան և մարզանքի վերայ հիմնուին ժխտողական այդ տեսութիւնները, նրանք անարժէք են, եթէ կայ հաւատը մեր մէջ դէպի Նորա լուսաւոր անձը, Նորա գործն ու վարդապետութիւնը, դէպի Նորա բարձրագոյն նպատակը՝ որ մարդն է և մարդկային հոգու անսահման արժէքը, կորուսեալ հոգիների փրկութիւնը Նորա ձեռքով և Նորա շնորհիւ։

Քանի՜, քանի՜ միլիոններ ապրել, գործել, ստեղծել, փրկուել և փրկել են Նորա անունով և Նորա միջնորդութեամբ հասարակաց Հօր՝ Աստուծոյ որդեգրութեան, տիեզերական սիրոյ և եղբայրութեան համար։ Քանի՜, քանի՜ միլիոններ նահատակուել են Նորա անունով, և քանի՜, քանի՜ միլիոնների համար կեանքի առաջնորդող սկզբունք է եղել. «Եւ չիք այլով իւիք փրկութիւն, զի և ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ, որով արժան իցէ կեալ» խօսքերը, որ մարմնաւորումն է, խտացումը նախկին հաւատացեալների բարձրագոյն հասկացողութեան, կեանքի էութեան և Նորա նպատակի համար։ Հաւատոյ աշխարհն է բարձրագոյն գաղափարականի և բարոյական գեղեցկութեան աշխարհը, որ հակադրութիւնն է եսի, շահախնդրութեան, բռնակալութեան և փառամոլութեան աշխարհի։

Առանց հաւատոյ և Նորա հետ միացած բարոյական գաղափարի ոչինչ կայ մնայուն, անհատական, ազգային և մարդկութեան կեանքի մէջ։ Հաւատն ու բարոյական հասկացողութիւնը, ապրումը ցօղն է կենդանարար անմահական կեանքի, ստեղծագործութեան և յարատեւութեան, իսկ բարոյական զօրութեան խորտակումը, անկումն ու յուսալքութիւնը, կարապետը մահուան։ Ապագան և արդարութեան կշիռը Աստուծոյ ձեռքն է, և Նա չէ իրագործւում առանց հաւատոյ և յուսոյ դէպի Նորա գթութիւնն ու ճշմարիտ դատաստանը։ Մի ազգ կարող է նուաճել միւսին, ողողել Նորա երկիրը իւր զօրքերով, բայց այդ դեռ բաւական չէ Նորան տիրապե-

տելու համար։ Քի՞չ են պատմութեան մէջ օրինակներ, որ տիրողները տկարացել են կամ փոշիացել նուաճուածների բարոյական և բարձր քաղաքակրթութեան զօրութեան առաջ։ Ինչպէս ճղակոտոր և կարկտահար ծառի արմատներից նոր ճիւղեր կարող են բուսնել, աւելի գեղեցիկ, զուարթ, պտուղներով ուռճացած, այդպէս էլ արտաքուստ, և ժամանակաւորապէս ընկած ժողովուրդը, եթէ նա բարոյական կենսունակութիւն ունի և հաւատ դէպի իր լուսաւոր ապագան, եթէ խմբուած է նա կենդանարար մի գաղափարի շուրջ։ Հարկաւոր համարեցինք շեշտել այս խօսքերը, որովհետև մենք էլ մի ազգ ենք ճղակոտոր և հողմացրիւ եղած անարդարութեան և մասամբ մեր հաւատոյ և բարոյական զգացման թուլութեան երեսից։ Զէնքի ուժով չէ, որ պիտի մարդկանց միջից վերանայ քաղաքական և նիւթական շահերի տիրապետութեան ձգտումն ու հասկացողութիւնը, որ չարիքների արմատն է, այլ հաւատոյ և սիրոյ, արդարութեան հոգու վերազարթնումի ու մեռելութիւնից յառութիւնը։ Նիւթի զօրութիւնը միջոց պիտի լինի միայն բարձրագոյն նպատակների հաստատութեան, հոգևոր և ճշմարիտ ազատութեան, որ Քրիստոսի և Աստուծոյ հոգու ներկայութեամբ է պայմանաւորուած. «Ուր հոգի Տեառն է, անդ ազատութիւն է»։

Այսօր մարդկային կեանքը, անձն ու ստեղծագործութիւնը, հոգևոր ժառանգութիւնն ու բարիքը, այլևս, կարծես, գին չունի։ Մարդիկ գազանացած խողխողում են իրար, ոչնչանում են քաղաքներ և աւաններ, նիւթական և մշակոյթային ահաւոր ստացուածք։ Ինչո՞ւ համար։ Ո՞վ կարող է ասել, թէ կորցրածը յետ պիտի բերուի. ո՞վ կարող է ասել, թէ միլիոնաւոր մարդկանց կորստից, չէն երկիրների և քաղաքների աւերումից յետոյ, աշխարհի երեսին արդարութեան, սիրոյ, փոխադարձ յարգանքի և գնահատութեան գաղափարը պիտի թագաւորէ։ Նախընթաց պատերազմը բերե՞ց այդ սպասելիքը, վերացրե՞ց անարդարութիւնը հաւասարապէս։ Ուր փոթորիկն է ու ամպրոպը, շարժն ու հուրը, այնտեղ Աստուծոյ ազատարար հոգին չէ երևում (Գ. Թագ. ԺԹ. 11—12), այլ մեղմ զեփիւռի մէջ միայն։ Եթէ Քրիստոսի հոգին թագաւորէր պատերազմը որոշողների և ղեկավարողների մէջ, ուրիշ ձև ու կերպարանք ստացած կը լինէր կռուող ազգերի հոգեբանութիւնը, քան վճիռն ու երդումը իրար ոչնչացնելու մինչև յետին մարդը։

Բայց այս տեսութիւնն ու լուսաբանութիւնը չի վերաբերում միայն օտար և մեծ ազգերին, այլ և մեր ժողովրդին ու եկեղեցուն։ Մեր գլխին եկած չարիքները աւելի թեթև կը լինէին և.

հետեւանքները աւելի մեծ, եթէ Քրիստոսի հոգին աւելի կենդանի և ներգործող լինէր մեր ժողովրդի և եկեղեցու մէջ։ Երբեք չենք կարող մոռանալ Տփխիսում՝ Օրմանեանցի և ուրիշների կաթողիկոսական թեկնածութեան առթիւ գումարուած ժողովրդական մի հաւաքոյթի մէջ, Նորա հակառակորդ կուսակցական հռետորներից մէկի խօսքը, թէ «մենք եկեղեցի ենք ուզում առանց Աստուծոյ»։ Այս խօսքը նոյնութեամբ չի ասւում այժմ, բայց, աւա՜ղ, հեռու չեն ոմանց կողմից նման մտքերով հասկացողութիւնը Եկեղեցու մասին։ Պատարագի ժամանակ միշտ երգում ենք. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, Որ էնն Աստուած աստ բազմեցաւ, խաղաղութեան ձայն հնչեցաւ, սուրբ ողջունիս հրաման տուաւ», իսկ տասնեակ տարիների ընթացքում տիրակալութեան հոգին ենք կամենում թագաւորեցնել համայնական և վարչական կեանքի մէջ։

Ա՜խ, ե՞րբ պէտք է հասկանանք պարզ ճշմարտութիւնը, թէ առանց Քրիստոսի եկեղեցի չկայ և առանց Նորա հոգու ներկայութեան սիրոյ և եղբայրութեան չինարար գործ։

ՀԱՅԱՍՏ. ԵԿԵՂԵՑԻ, Օգոս. 1940.

Զ.

ԿԵԱՆՔԻ ԱՂԸ

Երբ աղն անհամի, ինչ յաղիցի:
Մատթ. Ե. 13։

Ա.

Ընտրուած բնաբանը Տիրոջ պարզ խօսքերից մէկն է Լերան քարոզի մէջ, հասկանալի ամենքի համար։ Կերակուրը, պատրաստուած խոհարարական արուեստի բոլոր առաւելութիւններով, նիւթերն ընտիր և ազնիւ, բայց եթէ նորա մէջ աղ չկայ, անհամ կը լինի, անգուրեկան, և մինչև իսկ պատճառ հիւանդութեան, եթէ տեւէ այդ հանգամանքը։ Աղն է, որ համ է տալիս կերակրին, առողջարար և սննդարար դարձնում և պահում նորան ապականութիւնից։ Առօրեայ կեանքից առնուած այս օրինակով, Տէրը կամենում է բացատրել քրիստոնէութեան և քրիստոնեայ մարդու արժէքը երկրի մէջ, այսինքն պատմութեան մէջ։ Առանց քրիստոնէութեան և իրական քրիստոնեայ մարդու կեանքը կը դառնայ անհամ, անհաճոյ և անառողջ։ Այսպէս է քարոզել Տէրը, և այսպէս են հասկացել առաջին քրիստոնեաները իրենց կոչումը պատմութեան մէջ, որպէս խորին համոզում և հաւատ։

Ի՞նչ էր հեթանոսական աշխարհը քրիստոնէութեան ծագման և տարածման առաջին շրջաններում։ Կրօնի կատարեալ անկում և դորա հետ նաև բարոյական զգացման նուազում կամ իսպառ անհետացում։ Դորա հետեւանքն էր յունա-հռոմէական, ժամանակի ամենաքաղաքակիրթ համարուած ազգերի, զեղխութեան և ապականութեան տիրապետութիւնը մեծագոյն չափերով։ Յունաստանի մայրաքաղաք Աթէնքը, ուր Պերիկլեան ոսկեդարն էր ծագել մի ժամանակ, գրականութեան, արուեստի, ճարտարապետութեան, փիլիսոփայութեան, նաև ճշմարիտ հայրենասիրութեան և առաքինութեան ոսկեդարը յունական կեանքի, դարձել էր երկպառակութեան, ոճրագործութեան, եսականութեան, բարոյական և ազատասիրական զգացմունքից զուրկ ժողովրդի մայրաքաղաքը։ Հռոմէական կայսրութիւնը, որ պետական զօրութեան գագաթնա-

կէտն էր հասել, աշխարհի տէրը դարձել, կրօնի անկմամբ և անհաւատութեան զօրացումով դարձել էր նաեւ ղեկավարը զեղխութեան և բարոյական ապականութեան մրցութեան մէջ։ Անհաւատութեան հողի վերայ առաքինութեան շուշաններ չեն ծաղկում առ հասարակ։

Բ.

Քրիստոնէութիւնը բարոյապէս մեռնող մարդկութեան վերածնունդը եղաւ, կրօնական-բարոյական նոր կեանքով և հասկացողութեամբ։ Նա բերեց նոր կրօն, որ սիրոյ և եղբայրութեան, անձնուիրութեան և հանրութեան օգտին նուիրուած կրօնն էր։ Շահասիրութիւնն ու եսամոլութիւնը, անձնական-զգայական վայելքն ու զեղխութիւնը, որ տիրապետող էր ժամանակակից կեանքի մէջ, տեղի տուաւ զգաստութեան և մաքրութեան նոր կրօնի ազդեցութեամբ։ Ապականուել էր օդը խեղդամահ լինելու չափ, ապականուել էր յունա-հռոմէական կեանքն ու քաղաքակրթութիւնը, չունենալով այլ եւս ներշնչման կենդանի աղբիւր, որ կրօնն է և հաւատը դէպի Աստուած։ Առանց կրօնի և բարոյական գաղափարների չկայ և բարձր, կենսունակ և յառաջադէմ քաղաքակրթութիւն։ Ինչպէս աղը համ է տալիս կերակրին, պահում նորան ապականութիւնից, այնպէս էլ կրօնն ու հաւատը, բարոյական կենդանի զգացումը աղն է քաղաքակրթութեան և աղբիւրը բարձր ստեղծագործութեան և կեանքի վայելչութեան։

Լիճը կամ աւազանը, եթէ զրկւում է իւր մէջ աղբիւրների և վտակների ջրերն ընդունելու հնարաւորութիւնից, ճահճանում է, ապականւում կամ իսպառ չորանում։ Այսպէս է և մարդկային կեանքը, ազգերի պատմութեան տուած անհերքելի փաստերով։ Այդպէս էր ոչ միայն Յոյների և Հռոմայեցիների մէջ, այլ և Եգիպտացիների, որոնց բարձր ստեղծագործութիւնները, արուեստի և քաղաքակրթութեան մնացորդները, ճարտարապետական հրաշալիքները, նկարչութեան բարձր զարգացումը, անհասկանալի են առանց նրանց կրօնի։ Նոյնը կարող ենք ասել արեւելքի շատ ազգերի մասին, որ չենք յիշում տեղի սղութեան պատճառով։ Նոքա ամենքը կենդանի են, ստեղծագործող, միշտ քաղաքակրթութեան և յառաջդիմութեան գագաթը բարձրանալու ճանապարհին, երբ նրանք կենդանի կրօնն ունէին, հաւատը դէպի գաղափարականը։ Կրօնը միայն պաշտամունքը չէ, ծէսերն ու արարողութիւնները, այլ առաւել եւս հոգեւոր և ներքին ապրումը, որ տեղից և բղխում

է արտաքինը և կերպաւորւում բազմապիսի ձեւերով և բովանդա-
կութեամբ։

Եւ այս հասկանալի է պարզ մտածողութեամբ իսկ։ Արտա-
քին մեր ընթացքը, գործողութիւնները հետեւանքն են կամ մարմ-
նաւորումը մեր մտքի, մեր ներքին յղացման։ Փշից խաղող չի
քաղուիլ և տատասկից թուզ։ Եթէ հոգու մէջ յղացուած չէ կառուց-
ուելիք շէնքի նախագաղափարը, անկարելի կը լինի շէնք կանգ-
նել։ Բայց նոյն իսկ ներքին յղացումը բաւական չէ գործի կատա-
րելութեան համար, այլ շարժառիթն ու որակը։ Եթէ ակը պղտոր
է, ցեխ կամ ճահիճ, այնտեղից հոսող ջուրը չի կարող մաքուր
լինել և կենդանարար։ Կրօնը մեր ներքին աշխարհը մաքրող,
զտող բարոյական զօրութիւնն է, սիրոյ, զոհաբերութեան, գեղեց-
կի, բարւոյ և ճշմարտութեան աղբիւրը։

Գ.

Սխալ չհասկանանք, կեանքն էլ միայն կրօնականը չէ, նա
շատ աւելի բազմակողմանի է և տարբեր բովանդակութիւններ եւս
ունի։ Գիտութիւնն ու արուեստը իրենց բոլոր ճիւղերով մարդկա-
յին հոգու ներգործութեան տարբեր դաշտեր են, տարբեր մեթոդ-
ներ և ուղիներ ունին զարգացման, բայց նրանք տարբեր չպիտի
լինին իրենց բարձրագոյն էութեամբ և նպատակներով, որ կեանքի
արտաքին բարօրութեան հետ, ի վերջոյ աւելի հոգեկան գատիա-
րակութիւնն է, ազնուացումը։

Ներկայ քաղաքակրթութիւնն, անշո՛ւշտ, շատ բարձր է,
քան յունա-հռոմէականը. գիտութիւնը, փիլիսոփայութիւնը,
արուեստը, տեխնիկան յառաջդիմութեան հրաշալիքներ են կատա-
րել, անըրեւակայելի թռիչքներ դէպի կատարելութիւնը, բայց
դորա հետ նա էլ ազատ չէ անկման վտանգներից և սայթաքում-
ներից, որ դէպի խորխորատ կարող է տանել, եթէ հոգեւոր մի նոր
վերածնունդ, շարժում չսկսուի հոգիների մէջ։ Ինչպէս հնում,
հեթանոսութեան անկման օրերին, քրիստոնէութիւնը և քրիստո-
եաները աղը հանդիսացան ազգերի ապականութեան դէմ, և նոր
կեանք բերին նրանց, նոյն դերն ունին կատարելու և այժմ։ Պատ-
մութիւնից քաղած դասերը ուղեցոյց են և ճշմարտութիւն նաեւ
ներկայ մարդկութեան համար։ Քրիստոնէութեան բերած հոգեւոր
դրամագլուխը ոչ միայն չէ սպառուած, այլ շատ քիչ չափով է
գործադրուած։ Եւրոպայի և մարդկութեան վերածնունդը կախում
ունի ոչ միայն զէնքի յաղթութիւնից, այլ և կենդանի հաւատի

վերածնունդից։ Մեր աղօթքն է, որ այս պատերազմը «բարւոյ պատերզամի» փոխարկուի ըստ ամենայնի և առիթ դառնայ մարդկութեան զգաստութեան և իւր որդեգրած ուղիների վերաքննութեան։ Արդարութիւնն է և հաւատը այն ժայռը, որի վերայ շինուած տունը անսասան է փոթորիկներից և հեղեղներից։

«Եթէ աղն անհամի, ի՞ւ յաղիցի», ահա քրիստոնեայ աշխարհի մտածելու խնդիրը այս ահաւոր պատերազմի ընթացքում և նորա վերջանալուց յետոյ։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ. Յունիս, 1943.

Է.

ԳԵՂԵՑԿԻՑ ԳԵՂԵՑԿԱԳՈՅՆԸ

Այնպէս ընթացարուք, զի հասանիցէք:
Ա. Կորնթ. Թ. 24։

Գեղեցիկը կը սիրենք մենք և կը խօսենք նորա մասին. բայց ի՞նչ է գեղեցիկը։

Աղբիւրի նման վճիտ, ծովի նման խոր աչքե՞րը։ Արեգակի նման բոցավառ փա՞յլը նրանց։

Նրանց հայե՞ացքը, նուաճող, անձնուէր, սիրաղեղ, ինքնամփոփ, արտասուալից...։

«Աչքն ծով ի ծով, ծիծաղախիտ ծաւալանայր յառաւօտուն երկու փայլակնաձեւ արեգական նման», ինչպէս երգել է մեր Նարեկացին։

Շրթունքներին ծաղկած ժպի՞տը, որ երբեմն ամբողջ հոգու արտայայտութիւնն է, աւելի բովանդակալից, քան մի գիրք։

Ժպի՞տը սիրոյ, ժպի՞տը քաղցր հեգնութեան, ժպի՞տը չարտասանուած խօսքի, ժպի՞տը իմաստութեան և զուսպ կամքի, ինչպէս Լէոնարդոյ դը Վինչիի Ջիակոնդայի շրթունքներին։

Ժպի՞տը համեստ մանուշակի, կանաչ թփերի միջից հազիւ գլուխը բարձրացած, ամօթխած և նազելի դէմքով։

Գլխի, աչքի, ձեռքի, մարմնի շարժո՞ւմն է այն, արուեստագէտի, հռետորի կամ դերասանի կողմից, թէ հանդարտ, խաղաղ քունը մանկան, անուշաբոյր շնչառութիւնը նորա։

Ինչպէ՞ս գեղեցիկ է վարդի թերթին իջած անապական ցօղի կաթիլը, բայց պակա՞ս գեղեցիկ են անմեղ մանկան աչքերից թափած արտասուքի կաթիլները մարգարտանման, մօր հրճուալից աչքերով դիտուած։

Բարձունքներից դիտուած ահաւոր ձորերն ու կիրճե՞րն են գեղեցիկ, խորքում վազող, փրփրալից գետակներով, թէ երկինքը եղերող լեռները սպիտակափառ, ձիւնապատ գագաթներով, խօլական ժայռերով, կանաչապատ լանջերով և սաղարթախիտ անտառներով, դէպի անհունութիւնը տանող հեռանկարով։

Գեղեցիկ չէ՞ երկնքի հովիտ շոյող կապուտակութիւնը, արեւի մեղմիկ լուսաւորութեամբ։

Գեղեցիկ չէ՞ աշնան գիշերն աստղալից, խորհրդաւոր, անհունութեան սահմաններից եկած ճառագայթներով, ուղղուած սրտիդ խորքը, յայտարարը արարչութեան մեծ խորհրդի, և աղբիւրը բարձրագոյն սքանչացման։

Գեղեցիկ չէ՞ առաւօտեան արշալոյսը, արեգակի ծագումը մթութեան և խաւարի ծոցից, գիշերային գերեզմանից, ըստ Հերդերի քաոսից դէպի լոյս և կարգաւորութիւն։

Պակա՞ս գեղեցիկ է արեւի մուտքը, վերջալոյսի երփներանգ, նուրբ և կախարդական ծիրանին՝ փռուած լեռների գագաթներից մինչեւ նրանց կանաչազարդ կողերը. բայց և հոգուդ խորքը թափանցող ճառագայթներով, խաղաղութեան և սքանչացման մի նոր աշխարհ, երազի նման քաղցր աշխարհ ստեղծելով այնտեղ։

Գեղեցիկ չէ՞ արեգակի ծագման աւետաբեր արտոյտի ճռուողիւնը, գիշերուայ լռութեան մէջ սոխակի դայլայլիկը քաղցրիկ, մեղուների տզզոցը ցերեկուայ ժամին, անտառների սօսափիւնն ու երգը, զեփիւռի քնարի լարերի ձայնակցութեամբ, և տերեւների պարը լուսոյ և ստուերի փոփոխակի համբոյրներով, աղբիւրի կամ առուակի խոխոջն ու կարկաչը, գետերի վշշոցը խոր և անտառապատ ձորերում, կամ նրանց խաղաղ, հեզասահ ընթացքը լայնածաւալ հովիտներում, շրջանակուած կանաչազարդ այգիների, պարտէզների, արտերի շրջանակներով։

Ապա ջրվէժնե՞րը. մեծ գետերի գահավէժ անկումը երկիրը սասանեցնող ահաւորութեամբ, ինչպէս Իմատրան Ֆինլանդիայում, Նիակարան՝ Ամերիկայում, բայց և աւելի փոքր գետակներինը, մանրամաղ փոշիների ենթարկուած, քօղի նման տատանուող հովի տարուբերումներով, ծիածանի ակնապարար գոյներով արեւի ճառագայթների տակ, ինչպէս Իոսամիթիի ջրվէժները։

* * *

Անսահման և բազմատեսակ են բնութեան և արտաքին գեղեցկութիւնները, բայց ի՞նչ են նրանք խուլ և կոյր մարդու համար։ Ի՞նչ է բնութիւնը և արտաքին աշխարհը առհասարակ առանց ներքին տեսութեան, իմացական լուսաւորութեան։ Զոր մեքենականութիւն, անխօս և անիմաստ։ Բայց ամեն ինչ, ինչպէս և վերեւ թուած երեւոյթները դառնում են իրական գեղեցկութիւններ, խորհուրդ և սքանչելիք հոգու աչքերով դիտուած և բարձր երաժըշ-

տութիւն հոգու ականջով լսուած, իբրեւ մասը տիեզերական ամբողջութեան։ Դորանով է, որ երկինքը և երկիրը թւում է մեզ կենդանի, իբրեւ մի մեծ ամբողջութիւն, ներդաշնակ և իմաստուն կարգաւորութեամբ, որի մի մասն ենք և մենք, "իբրեւ անհատ, իբրեւ ազգ և մարդկութիւն, մեր հոգին էլ ոչ պակաս մեծութեամբ մի երկինք, մեր մտքով, մեր զգացմունքով, մեր երեւակայութեամբ, մեր յիշողութեամբ, մեր տենչերով և հոգեկան բազմատեսակ ապրումներով, որ նորա աստղերն են։

Այստեղ է աղբիւրը այս արտաքին և անցաւոր երեւոյթների և գեղեցկութիւնների մէջ յաւիտենականը գտնելու ուղին։ Յաւիտենական է գեղեցկութիւնը, յաւիտենական է բարին ու ճշմարիտը. բայց նոքա ծաղիկներն են մի արմատի և բոյսի, որ մարդկային հոգի է կոչւում։ Կեանքը թւում է անցաւոր, բայց յաւէտ կենդանի է, գեղեցիկ, հաւատով և սիրով ապրուած կեանքը։ Այս մտքի գեղարուեստական արտայայտութիւնն է թոռմած վարդի պատկերաւորութիւնը մեր տաղանդաւոր նկարիչ Փուշմանի գործերում, որ խորհրդաւորութեան և յաւիտենականի իմաստ է տալիս նորա ստեղծագործութեան։

* * *

Կեանքն ու պատմութիւնը, եթէ կամենաք, պայքարն է գեղեցկութեան համար, յաւիտենական բարիի և ճշմարտութեան համար։ Մարդկային հոգու այդպիսի պայքարի մարմնաւորումներն են հին յունաց բանաստեղծների՝ Եւրիպիդէսի, Սոփոկլի և Էսքիլէսի ստեղծագործութիւնները, Ֆիդիասի և Պրաքսիտէլէսի կերտած արձանները, յաւէտ գեղեցիկ և վսեմ մարմնաւորումը մարմարինի մէջ, աստուածների և աստուածուհիների բարձր տեսլապատկերներով, մարդկային մարմնի համաչափութեան գեղարուեստական կենդանի զգացմամբ։

Քրիստոնէութիւնը փոխում է կեանքի էութեան և նպատակի հասկացողութիւնը. մարդկային հոգին և նորա անձնուէր սէրը առ Աստուած և առ ընկերը, դառնում է չափ ու կշիռ երեւոյթների և գործողութիւնների. Ֆիդիասի և Պրաքսիտէլէսի կերտած արձանները, հնում գեղեցկութեան, համաչափութեան և գեղագիտական հասկացողութեան, փոխարինում են հոգեկան գեղեցկութիւնները և տենչերը դէպի աստուածայինը։ Կեանքը բարւոյ պատերազմ է. իսկ բարւոյ կատարելատիպը Աստուած է, որին պիտի նուիրուին հոգեւոր գեղեցկութիւններն ու մեծութիւնները։ Այդպիսի

հաշտեցողութեան արդիւնք է մեր Նարեկացին, որ իւր հոգու ոսկէ բուրվառի մէջ իւր զգացմունքների անուշահոտ կնդրուկն է ծխում, իբրեւ «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ», մեր Շնորհալին, որ իր հոգու դէմքը միշտ դէպի լոյսը, դէպի արեգակն է ուղղում արեւածաղկի նման. «Առաւօ՛տ լուսոյ, արեւ լոյս ծագեա՛»։

Այդպէս և քրիստոնէական ճարտարապետութեան մէջ, բոլորաձեւ և երկնանման կամարներով և գմբէթներով արեւելքում, բարձր և սրածայր աշտարակներով, ռոմանական և գոթական արուեստների մէջ, նոյն զգացմունքներն են երկնասլաց, նոյն հոգեկան ապրումները նուիրման։ Վերածնութեան շրջանի մեծ արուեստագէտները տարուած են փրկութեան և հոգեկան աշխարհի երկնային գեղեցկութեան գեղարուեստական քարոզութեամբ, առանց կորցնելու և արտաքին համաչափութեան, ձեւի և շարժման ներդաշնակութեան զգացումը։ Տանդէն իւր Աստուածային կատակերգութեամբ, Լէոնարդոյ տը Վինչին իւր Խորհրդաւոր Ընթրիքով, Միքէլ Անժելոն իւր սիքստինեան մատուռի որմնանկարչութեամբ, Մեդիչիների դամբարանի արձանագործութեամբ, Ռաֆայէլը իւր մադոնաների աստուածային և ոգիացած գեղեցկութեամբ, ապացոյցներն են այս մտքերի։

* * *

Բայց մարդկային հոգին միշտ գեղեցիկ չէ։ Նա կարող է և չարութեան, ոճիրքի և տգեղութեան աղբիւր լինել։ Լաւ հունձք ունենալու համար, պարարտ հող է հարկաւոր և առողջ սերմ։ Բարձրագոյն ստեղծագործութեան կամ գեղեցկութեան համար նորան համապատասխան մթնոլորտ, պայմաններ։ Պղտոր, ցեխոտ, ապականուած ակից վճիտ և կենդանարար ջուր չի բղխում և ոչ բարոյական տգեղութեան մէջ իսկական գեղեցկութիւն ծաղկում։ Ստեղծագործման, ներշնչման րոպէն սուրբ է մարդկային հոգու մէջ։ Արուեստագէտը քարից, մետաղից, ներկերով գեղեցկութեան պէսպիսութիւններ է կերտում, կեանք և հոգի դնում նիւթի և երեւոյթների մէջ, բայց հոգեւորի և կրօնականի խոր ապրումն է, Աստուծոյ թափանցումը հոգիների և սրտերի մէջ, որով անձնաւորութիւն է ստեղծւում՝ բարձրագոյն գեղեցկութիւնը, բնակարանը յաւիտենական տենչերի և գաղափարների։ Գեղեցիկ է արուեստի ստեղծագործութիւնը, բայց գեղեցկագոյն է կենդանի մարդը, նորա հոգին, նորա անձը: Մարդը ուղղամիտ և անյողդողդ, մարդը ձուլուած պրոնզէ արձանի նման, յստակ և մաքուր բիւրեղի նման,

հաստատ և երկնասլաց կոթողի նման, իր պարտքի գիտակցութեան և կատարման մէջ, աչքերը միշտ դէպի հեռուն, բարոյական կատարելութեան փարոսը և գեղեցկութեան նաւահանգիստը։ Մագլցել սիրոյ, զոհողութեան, եղբայրութեան բարձունքները, բարձրագոյն գեղեցկութեան ասպարէզն է և ուղին մարդկութեան համար։

«Այնպէս ընթացարուք, զի հասանիցէք»։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՊԱՑՔԱՐ, 28 Դեկ. 1939.
Նիւ Եորք

Ը.

ԿԵԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

«Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն եւ կեանք»:

Յովհ. ԺԴ. 6.

Բոյսերն ու կենդանիներն էլ ունին իրենց կեանքը, բայց ոչ իմացական կեանքը և նորա ճանապարհը։ Նոքա նախապէս ծրագիր չեն կազմում, որոշ ճանապարհ չեն ընտրում իրենց նպատակին հասնելու համար։ Նոքա առաջադրեալ նպատակ էլ չունին, որ նորան հասնելու համար ծրագիր և ճանապարհ ընտրեն։ Բնազդն է նրանց կեանքի և գոյութեան ղեկավարը։

Բայց կենդանիներն էլ բոլորովին զուրկ չեն իմացական, նոյն իսկ «հոգեւոր» կեանքից. Նոքա էլ ունին իրար պաշտպանելու, իրար սիրելու, նրանցից ոմանց մէջ մինչև իսկ կայ ուրիշի փոքրիկներին խնամելու բնազդը։ Հաւը սիրում է և պաշտպանում իւր ձագերին յափշտակիչ բազէի դէմ. բայց նաև բադի կամ հնդկահաւի անմայր փոքրիկներին, եթէ նրանց խառնել են իւրայիններին հետ։ Գտած կուտը ինքն ուտելու տեղ, կանչում է և ձագերին հրամցնում, թէև «ինքնավար» դարձնելուց յետոյ, իսպառ մոռանում է նրանց։ Հիացմամբ դիտել ենք վանդակի մէջ բանուած երկու, արու և էգ, թռչունների կեանքը. Նոքա փոխադարձ օգնութեամբ նախ իրենց բոյնը շինեցին, ապա երբ էգը նստած էր հաւկիթների վրայ և պէտք է իւր մարմնի տաքութեամբ պտղաբերէր նրանց, արուն էր հոգում նորա սնունդը, նոյն իսկ ջուրը, կտցով։ Երբ հաւկիթներից դուրս էին եկել թոյլ, մերկ և անպաշտպան ձագուկները, և մայրը պիտի պաշտպանէր նրանց դեռ եւս իւր թեւերի տակ, արուն էր հոգացողը ոչ միայն մօր, այլ և նորա միջոցով ձագուկների սնունդը, որպէս զի նա էլ թռչելով իւր բերանի մէջ, կերակրէր հերթով փոքրիկներին։ Կովը ոչ միայն սիրով կաթ է տալիս իւր հորթին, այլ և սիրում է նորան, լիզում, մաքրում մայրական գթով։ Զարմանալի է շների և կատուների խաղը իրենց ձագուկների հետ։ Կենդանիների «իմացականութեան» մէջ էլ տարբերութիւններ կան, ոչ միայն տեսակը տեսակի համեմատութեամբ, այլ և տեսակների հատերի մէջ։ Այդ տարբերութիւնը

նկատուում է և ուրիշ կողմից. շան և ձիու «իմացականութիւնն» ու «իմաստութիւնը» աւելի բարձր է, քան ընտանի միւս կենդանիներինը, նրանք ենթակայ են մինչեւ իսկ դաստիարակութեան։ Դաստիարակուած շունը ինքը չի յափշտակում կերակուրը, այլ խնդրում է, որ իրեն էլ բաժին տան։ Այսպիսով կենդանիների տեսակների մէջ էլ աստիճանաւորութիւն կայ. նրանց մէջ կայ վատը և կայ լաւը, լաւից էլ լաւը։

* * *

Բայց եթէ կայ տարբերութիւն կենդանիների մէջ, այդ տարբերութիւնը անհամեմատ մեծ է կենդանիների և մարդու մէջ։ Սա էլ, թէեւ կենդանի է, բայց բանաւոր և հոգեւոր կենդանի։ Մարդկանց մէջ եւս կայ նոյն տարբերութիւնն ու աստիճանաւորութիւնը։ Մարդկային կեանքի զարգացման ուղին նիւթականից դէպի վերացականն է գնում, կենդանականից դէպի իմացականն ու հոգեւորը։ Աւա՜ղ, կան մարդիկ, որոնք միայն բարձր կենդանիներ են, իրենց իմացականութիւնն ու բարձր հասկացողութիւնները գործադրում են առաւելապէս «կենդանական», «անձնական», «եսական», կամ «շահագիտական» նպատակների համար։ Դրանից դուրս ուրիշ աշխարհ չեն ուզում ճանաչել. ուտել, խմել, վայելուչ հագնուել և նիւթական վայելք ունենալ, նրանց կեանքի բովանդակութիւնն է կազմում։ Նրանց ընտրած ճանապարհը իսկական կեանքի ճանապարհը չէ։

Խորհրդածութեան նիւթ ընտրած մեր բնաբանը մի կարճ նախադասութիւն է միայն, բայց բովանդակութեամբ մարդկային բարձրագոյն կեանքի անթերի մի ծրագիր։ Առաջին բառն իսկ մեր մտքին որոշ հասկացողութիւն և ուղղութիւն է տալիս. որոշ տեղ գնալու համար ճանապարհ պիտի ընտրել, գտե՛լ ես ճանապարհը, պիտի առանց աջ ու ձախ թեքուելու առաջ գնաս, մինչեւ մտադրուած տեղը հասնիս։ Այդ տեղը ճշմարտութիւն է կոչւում, ներքին ճշմարտութիւն, հոգեւոր ապրած ճշմարտութիւն, որին գտնելու համար պիտի ընթանալ նորա համար սահմանուած ճանապարհով. պիտի աշխատել, ձգտել, որոնել, բաղխել, որպէս զի ի վերջոյ այն դռները բացուին, որ դէպի իսկական, գաղափարական և հոգեւոր կեանքն է տանում։ Ճշմարտութիւնը դժուարագիւտ բան է, ոչ ամենքին տեսանելի մի անգամից, ոչ ամենքին մատչելի և հասկանալի։ Պիղատոսները միշտ պատրաստ ունեին իրենց հեգնա-

կան հարցումը. «զի՞նչ է ճշմարտութիւն»։ Նա մարգարիտ է, որ միայն ծովի յատակում կարող ես որոնել և գտնել, ուրեմն և ծովի յատակը սուզուելու ունակութեան մէջ պիտի վարժուես, Նա թանկագին քար է, ադամանդ, որ հանքերի խորքում կարող ես գտնել, այն էլ հազուագիւտ, երկար որոնումից յետոյ։

Հեշտ է դատել, ցուցումներ տալ տեսականապէս. բայց դժուար տեսլականի, գաղափարականի իրականացումը։ Գաղափարականի հետ պիտի համընթաց լինի իրականը, գործնականը, եթէ կամենում ենք դիւրացնել նորա ըմբռնումը։ Մարդկային հոգու կարողութիւններից մէկն է նմանելու ունակութիւնը. օրինակը, գործնականը ամենամեծ չափով մատչելի է դարձնում այն։ Ծնողների, ուսուցիչների, մեծերի խօսքն ու խրատը փոքրների համար գործնական քիչ արժէք և արդիւնք ունի, եթէ նրանց ընթացքը հակառակ է և անհամապատասխան խօսուած խրատին։ Քրիստոնէական կրօնի առաւելութիւնն այն է, որ նա տեսութիւն չէ միայն կամ վարդապետութիւն, այլ նորա մարմնաւորումն ունինք Յիսուս Քրիստոսի անձնաւորութեան մէջ։ Մեր Տիրոջ համար ասուած է. «նախ առնէր և ապա ուսուցանէր». դորանով էր, որ նորա խօսքի ազդեցութիւնը մեծ էր և հզօր. «իշխանութեամբ ուսուցանէր և ոչ որպէս դպիրքն և փարիսեցիք»։ Նա ապրեց մարդկային կեանքով և ապրեց իւր աշակերտներին և հետեւողներին կենդանի օրինակ լինելու համար։

* * *

Այսպիսի մտքի մարմնաւորումն է և մեր բնաբանի խօսքը՝ «Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք»։ Յովհաննու Աւետարանը միւս համատես երեք աւետարանների համեմատութեամբ պատմական լինելուց աւելի, տպաւորութիւնն է քրիստոնէութեան բերած ազդեցութեան հաւատացեալների առաջին սերունդի վերայ՝ Հաւատացեալների հոգու մէջ նկարուած էր Քրիստոս, որ ճանապարհն է, ճշմարտութիւնը և կեանքը։ Նորան պիտի հետեւել՝ ակնարկուած թանկագին մարգարտին տիրանալու համար. Նորա
լուսաւոր անձնաւորութիւնն է փրկութեան փարոսը. Նորա
իմացական նուաճանգիստը։ Մի է ճանապարհը, հասնելու
թիւնը և մի է կեանքը, որ է Յիսուս Քրիստոս։ Նա է հաւատացող
և հոգեւոր կեանքի բարձունքներին ձգտող մարդու գերակայ գա-
ղափարը։

«Իսկ ո՞վ կարող է ապրել», կ՚անցնի շատերի մտքով։ «Բաղխեցէք և բացցի ձեզ, խնդրեցէք և տացի ձեզ», ահա նոյն Տիրոջ խօսքը մեզ իբրեւ խրախոյս։ Ո՛վ աւելի խորն էր զգում մարդկային հոգու թուլութիւնը, քան Նորա մեծագոյն առաքեալը Պօղոս. մեղքի գիտակցութիւնն ու զօրութիւնը շղթայում էր Նորա հոգու թափչքը։ Այն անձը, որ իւր կեանքը նուիրել էր հազարաւորների փրկութեան, տարել էր ամենայն վիշտ, հալածանք, նեղութիւն իւր կոչման, առաքելական պարտքի կատարման համար, զգում է իրեն թոյլ՝ բացասական հակումների, մեղքի կապանքների առաջ։ Բայց գիտէր նաեւ, թէ խորտակուել կարող են այդ կապանքները հաւատով և վստահութեամբ դէպի աստուածային շնորհն ու գթութիւնը (Հռոմ. Է. և Ը. Գլ.)։

Յիշենք անառակ որդու առակը։ Մենք հայր ունինք երկնքում, գթութեան, սիրոյ և ներողութեան Հայրը։ Լսենք Նորա Որդու խօսքը. «Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք»։ Հետեւենք Նորան և հաւատանք, թէ Նա մեր տկարութեան ժամանակ օգնութեան ձեռք կը մեկնէ մեզ, ինչպէս խեղդուող Պետրոսին։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅԱՍՏ. ԵԿ. 1941, Օգոստոս:

Թ.

ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ԵՒ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՅԻՇԱՏԱԿԸ

Ո՞վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի։

Հռովմ. Ը. 35։

Հայաստանեայց Եկեղեցին խորհրդաւոր և գեղեցիկ կարգադրութեամբ անցեալ և այս շաբթուայ մէջ կարգաւորել է երեք տօնակատարութիւններ, որոնք անջատ կատարուելով հանդերձ, ըստ էութեան ամենասերտ կապ ունին իրար հետ և լրացնում են իրար։ Անցեալ շաբաթ (Յունուարի 27-ին) կատարեցինք «Սրբոյն Իսահակայ Հայրապետին մերոյ», անցեալ Երեքշաբթի (Յունուարի 30-ին) «Սրբոց Ղեւոնդեանց Քահանայիցն» և այսօր Հինգշաբթի (Փետր. 1) «Սրբոց Վարդանանց Զօրավարացն մերոց՝ հազար երեսուն և վեց վկայիցն, որք նահատակեցան ի մեծի պատերազմին» տօները։ Հարկ չկայ երկարել, որ առանց Ս. Սահակի և իր ընկերակիցների գործունէութեան, առանց Ս. Ղեւոնդեանց գործակցութեան անկարելի կը լինէր Վարդանանց երեւոյթը, նահատակութիւնը, հերոսական այն դիմադրութիւնը, որ ցոյց տուին ժամանակի ամենամեծ տէրութեան դէմ, պաշտպանելով այն ընդհանուր, համազգային և յաւիտենական արժէքները, որոնց ստեղծագործողները, հոգեւոր և մարմնաւոր գլխաւորներն էին ամենքը։

Ազգերի կեանքի մէջ կան շրջաններ և երեւոյթներ, որոնք նշանակութիւն են ստանում դարերի համար, նրանք առանցքն են դառնում նոցա պատմութեան, լուսաւոր հնոցը, ուր համախմբուել են և տարածուել այն կենսաբեր ճառագայթները, որ նոցա կեանքի գոյութեան, նպատակների էութիւնն են կազմում։ Ինչպէս անհատը մի միութիւն է, ամբողջութիւն, եթէ բիւրեղացած անձնաւորութիւն է, իր կեանքի կարմիր թելն ունի, որի շուրջը խտացած են նորա ընթացքը, գործը, տենչերն ու յոյսերը, նոյնը կարելի է ասել և ազգի համար։ Ազգութիւնը նոյնպէս մի ամբողջութիւն է, մի միութիւն, որ իր առանձնայատկութիւններն ունի, իր ձգտումներն ու նպատակները, իր հոգեբանութիւնը։ Յիշում ենք

ԺԹ. դարի ամենամեծ փիլիսոփաներից մէկի՝ Լայպցիգի Համալսարանի Պրոֆ. Վունդի դասախօսութիւնները և մանաւանդ բազմահատոր աշխատութիւնը Ազգերի հոգեբանութեան մասին, որ կազմըւում է իւր պատմութեան ընթացքում։ Հայ ազգի հոգեբանութիւնն ու անհատականութիւնը անյիշատակ ժամանակների հետ կապուած իւր ծագումով, իւր լինելութեան պարզ և գիտակցական ուղին գծում է Գ. դարի վերջերից և Դ.-ի սկիզբից քրիստոնէութեան ազգովին ընդունելութեամբ և հայ գրի գիւտով։ Հայ ժողովրդի ամենամեծ պայքարն էր այդ, ոտքի կանգնելու իբրև ազգային անհատականութիւն իւր յատուկ դէմքով, իւր յատուկ հոգեկան կեանքով, իւր լեզուով, եկեղեցիով և մշակոյթով, որ մօտաւորապէս 200 տարի տևեց և վերջացաւ նորա բարոյական յաղթութեամբ։ Ի՞նչ է Վարդանանց և Նորանից անբաժան Վահանանց պատերազմը, բայց եթէ Հայը պիտի ապրի՞ իբրև ազգային միութիւն իւր առանձնայատուկ դէմքով, թէ պիտի ձուլուի, անհետանայ իրենից մեծ ազգերի մէջ, ինչպէս վտակը մեծ գետի մէջ։

Գ. դարի առաջին կիսում երևան է գալիս Սասանեան մեծ պետութիւնը Հայաստանի արևելքում, որպէս արդիւնք և գործիք մի մեծ ազգային և վերածնութեան շարժման, վերակենդանացնել պարսկական, զրադաշտական կրօնը և դորա հետ Աքեմենեան կայսրութեան հզօրութիւնը, որ ընդհատուած էր համարւում Պարթևական տիրապետութեամբ։ Արտաշիր Պապականի և նորա յաջորդների օրով թօթափւում է ոչ միայն Պարթևական լուծը, այլ և մի մեծ պայքար է սկսւում, յետ մղել հռոմէական և ապա բիւզանդական պետութիւնները, հարևան փոքր ազգերը քաղաքականապէս և կրօնով ձուլելով իրենց հետ, դառնալ մի մեծ միութիւն՝ զինւորական-պետական բոլոր առաւելութիւններով, Հնդկաստանի և միջին Ասիայի թուրանական սահմաններից մինչև Միջերկրականի ափերը, մինչև Կ. Պոլիս, յունական աշխարհը, ինչպէս Կիւրոսների, Քսերքսէսների և Դարեհների ժամանակն էր։

Բայց ահա իւր ճանապարհի առաջ ընկած էր մի մեծ խոչընդոտ, Հայ ազգը Կովկասեան քրիստոնեայ միւս դրացիների հետ։ Անկարելի էր թռչել նրանց գլխի վերայից դէպի արևմուտք, տարածուելու համար։ Ճշմարիտ է, Հայեր հեթանոսական շրջանում Պարսից հետ ոչ միայն բարի դրացիներ էին, այլ և յաճախ սերտ բարեկամական յարաբերութեան մէջ, Պարթևական կամ Արշակունեաց երկու տոհմակից հարստութիւնների տիրապետութեան

տակ, բայց հանգամանքներն իսպառ փոխուել են սկսում Պարթեւների անկմամբ և Սասանեան արքաների քաղաքականութեան և ձգտումների հետեւանքով, որի մասն էր նաեւ վերջացնել հայ Արշակունիների պետութիւնը Հայաստանում, Խոսրով Ա.-ի դաւաճանական սպանութեամբ։ Նորա որդին Տրդատ ստիպուած էր փախչել հռոմէական պետութեան Փոքր-Ասիական սահմանները և Հռոմէացիների օգնութեամբ պայքար մղել Սասանեանների դէմ։ Քրիստոնէութեան ընդունելութեամբ այդ թշնամութիւնն աւելի զօրանում և ստեղծւում է մօտաւորապէս 200 տարուայ մի պայքար, կեանքի և մահուան պայքար, քաղաքական և կրօնական շարժառիթներով։ Սասանեանների քաղաքական հզօրութիւնը մատնանշելու համար, բաւական է յիշել, որ հէնց Արտաշիր Պապականի որդու Շապուհ Ա.-ի ժամանակ 242 թուին նուաճուեցաւ ոչ միայն Անտիոքը, այլ և 260 թ. Վալերիան կայսրը իւր ամբողջ բանակով գերի ընկաւ Պարսից ձեռքը, զօրացնելով ազգային հպարտութեան զգացումը նրանց մէջ, որ նիւթ դարձաւ նաեւ քանդակագործութեան։ Շապուհ Բ. երկարակեացը (309—380) հռոմէական պետութեան ամենամեծ ախոյեանն էր, որ 359 թուին գրաւեց Ամիթը (ներկայ Տիգրանակերտը), իսկ Յուլիանոս ուրացողի սպանուելուց յետոյ, պարտութեան մատնեց նորա յաջորդ Յովիանին, ստիպելով ստորացուցիչ դաշինք կռել, արեւելեան Միջագէտքը, Մծբինը յանձնելով պարսիկներին։

Այս յաջողութիւններից յետոյ նորա ուշքը կեդրոնացած էր Հայաստանի վերայ։ Յայտնի է Արշակ Բ.-ի պայքարն ու անկումը, ապա Շապուհի յաջորդի ժամանակ Հայաստանի բաժանումը երկուսի, մեծագոյն մասը Պարսից գերիշխանութեան տակ, իսկ Վռամ Ե.-ի ժամանակ իսպառ անհետացումը հայ Արշակունեաց պետութեան, 428 թուին։ Քաղաքական այս ձգտումներին և գործողութիւններին համընթաց էր կրօնական հալածանքը և աշխատանքը, քրիստոնէութիւնը արմատախիլ անել և հաստատել զրադաշտական կրօնը։ Մեհրուժան Արծրունու և Վահան Մամիկոնեանի, Սամուէլի հօր, դաւաճանական ընթացքը յայտնի է և ժողովրդականացած Րաֆֆիի Սամուէլ վէպով։ Պարսից նպատակն էր քաղաքականապէս և կրօնապէս բեկանել հայ ժողովրդի հաստատութեան նեցուկները։

Բայց հայ ժողովուրդը, թէեւ թուով փոքր և քաղաքականապէս թոյլ իւր դրացու համեմատութեամբ, շնորհիւ Գրիգոր

Լուսաւորչի, Ներսէս Մեծի, Վռամշապուհ թագաւորի, Սահակ Պարթեւի, Ս. Մեսրոպի և նրանց աշխատակիցների հսկայական ջանքերի կրօնական և ազգային հոգեւոր վերածնութեան ասպարիզում, նոր եռանդ, նոր ուղղութիւն և հոգեւոր կեանքի բովանդակութիւն էր տացել: Կազմակերպուած հաստատութիւն էր դարձած Հայաստանեայց Եկեղեցին, Հայը իւր գիրն ու դպրութիւն ունէր, իւր ազգային լեզուն, իւր դպրոցները, այսինքն ազգային դէմքին առանձնայատուկ բոլոր կողմերը: Թօթափել էր ոչ միայն պարսից լեզուի և քաղաքակրթութեան, այլ և յոյն և ասորի լեզուների տիրապետութեան ծանր և դժուարին լուծը: Հայը իւր մայրենի լեզուով կարող էր ըմպել քրիստոնէութեան զովարար աղբիւրից և յագեցնել իւր հոգեւոր ծարաւը և ստեղծագործել իւր անհատականներշնչումներով: Այս վիճակին հասնելու համար ամբողջ մէկ և կէս դար նախապատրաստական աշխատանք էր թափուած. քրիստոնէութեան հաստատութեամբ մի մեծ հոսանք էր սկսուած հայ երիտասարդների դէպի ասորական և յունական դպրոցները, իւրացնելու հելլենական քաղաքակրթութիւնը: Բարսեղ Կեսարացին և Գրիգոր Աստուածաբան իրենց ճառերի մէջ յիշում են բազմաթիւ հայ ուսանողների ներկայութիւնը յունական բարձր դպրոցներում: Մեր մեծ հայրապետները՝ Գրիգոր Լուսաւորիչ, Ներսէս Մեծ, Սահակ Պարթեւ, յունական կրթութիւն էին ստացած, ինչպէս և իրենց թարգմանիչ աշակերտները՝ Յովհան Եկեղեցացի, Եզնիկ Կողբացի, Յովսէփ Պաղնացի, եւայլն: Հայ արուեստի նորագոյն ուսումնասիրութիւնն էլ ցոյց է տալիս, թէ Դ.—Զ. դարերում Հայաստանում միջագետական-հելլենական արուեստի մեծ հոսանք կար, որ իւր արդիւնքն է թողել այդ շրջանի ճարտարապետութեան և քանդակագործութեան մէջ: Արեւմտեան ազգերի քաղաքակրթութեան իւրացմամբ, կերտուած էր ազգային քաղաքակրթութեան, ազգային գիտակցական կեանքի մեծ շէնքը: Քաղաքականապէս թոյլ և նոյն իսկ նախարարական տներով երկպառակուած ժողովրդից, ստեղծուած էր ազգային և հոգեւոր զէնքերով օժտուած մի ժողովուրդ, որ Պարսից հզօր արքաների՝ Յազկերտների՝ սուրը պիտի բթանար ու անկարող լինէր փշրել նորա բարոյական երկաթեայ կամքը:

Չլինէին Ս. Սահակի և Մեսրոպի և նրանց երանաշնորհ աշակերտների մտածուած և դէպի ապագան ուղղուած ստեղծագործական գործունէութիւնը, անհասկանալի կը մնար Վարդանանց դիմադրութիւնը հոգեւոր ազատութեան հետ կապուած ամենամեծ արժէքների պաշտպանութեան անունով, որ քրիստոնէական կրօնն ու

Հայաստանեայց Եկեղեցին էր, հայ լեզուն ու դպրութիւնը, ազգային հոգեւոր կեանքի անկախութիւնը։ Բարոյ պատերազմն էր այդ, սկսուած հոգեւոր հայրերի կողմից և պաշտպանուած նաեւ զէնքի զօրութեամբ յետագայ սերունդների կողմից, որոնց ներկայացուցիչներն են Վարդանանք և Վահանանք։ Բաւական է յիշել, որ Վարդան Ս. Սահակի թոռն էր դստեր կողմից։

Վարդանանց պատերազմն ըստ երեւոյթին մեծ բան չէր, մի բուռն հայեր, մեծ մասով գիւղացի կամաւորներից կազմուած, պառակտուած նաեւ քաղաքական տարբեր հասկացողութեան հոսանքներով, ընդհարուեցան Աւարայրի դաշտում, և առաջին հարուածին իսկ թշնամու կողմից, մանաւանդ սպարապետի, Վարդան Մամիկոնեանի անկմամբ, ցրուեցան այլ և այլ կողմեր։ Բայց ճիւղերի կտրատումն ու մխաոը, վախճանը, չէր հայ ազգի կենդանութեան ծառի, որի արմատներն ու բունը առողջ էին ու կենդանի, նախընթաց սերունդների և հայրերի աշխատութեամբ։ Պայքարը շարունակուեցաւ մինչեւ դարի վերջին քառորդը՝ Վահան Մամիկոնեանի և իւրայինների ղեկավարութեամբ որ բարոյական յաղթութեամբ վերջացաւ։ Վարդանանց երեւոյթը հասկանալու համար պէտք է կարդալ Ղազար Փարպեցին, ալախօսիկ Եղիշէն, տեսնելու համար, թէ ի՛նչ հոգի, բարոյական ինչպիսի՜ հզօր կամք և ինքնապաշտպանութեան գիտակցական ույժ էր ծառացել պարսից դէմ։ Հայ հոգեւորականութիւնը, հայ զինուորական և իշխանական դասը, հայ կինը և գիւղացին շնչում են նոյն հոգեւոր ազատութեան գաղափարով. «Ո՞վ կարէ մեկնել զմեզ ի սիրոյն Քրիստոսի»։

Այսօր էլ նոյն պատերազմն ունինք, ոչ զէնքի, ոչ հալածանքի դէմ ծառանալու, այլ մի ուրիշ տեսակի ահաւոր թշնամու, որ անտարբերութեան հոգի է կոչւում դէպի համազգային ժառանգութիւնները, երկպառակութեան յամառ հոգի, որ սպառնում է երկրորդականը կարեւորից, սխալն ու ճշմարիտը իրարից զանազանելու կարողութեան։ Մեզ վիճակուած է մի ծանր դրութիւն, որ Սփիւռքի հայութեան մահ է սպառնում, ցրուած բազմաթիւ և բազմատեսակ ազգերի և պետութիւնների մէջ, և մոռանում ենք, որ մեզ հաւաքող և միացնող մի հաստատութիւն ունինք, որի պաշտպանութեան համար ծառացել էին Վարդանանք, և այդ Հայաստանեայց եկեղեցին էր իւր քրիստոնէական և ազգային բովանդակութեամբ։

ՀԱՑԱՍՏ. ԵԿԵՂ. 1 Փետր. 1940. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՄԵՐԻԿԱՅԷ ԱՆԹԻԼԻԱՍ ԺԱՄԱՆԱԾ ՕՐ,
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Ժ.

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՐՈԶԸ

Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ
է արքայութիւնն երկնից։
Մատթ. Դ. 17։

Ա.

Մարդկութեան հոգեւոր բոլոր նշանաւոր առաջնորդներն ու մարգարէները ապաշխարութեան քարոզով են սկսել իրենց գործը։ Ապաշխարութեան են ենթարկուել նախ իրենք անապատի և առանձնութեան մէջ, խորասուզուել են իրենց հոգու խորին խորանները, սրբութիւն սրբոցը, գտել են իրենց Աստծուն և Նորա պարգեւած ճշմարտութիւնը և ապա վերածնուած և մկրտուած հանդէս եկել պատմութեան մէջ՝ իրենց սրբազան առաքելութիւնը կատարելու։ Այսպէս էր և մեր կեանքի առաջնորդը՝ Յիսուս Քրիստոս։ Անապատի մէջ ըստ աւետարանական աւանդութեան քառասուն օր և գիշեր ծոմապահութեամբ, աղօթքով յաղթել էր չարին, ոչնչացրել Նորա զօրութիւնը և իջել Յորդանան, ներքին մկրտութեան հետ լուացուելու նաեւ սրբազան գետի ջրերի մէջ։ Այս ամենից յետոյ միայն Նա հանդէս է գալիս, սկսելու իւր փրկչական գործունէութիւնն ու աւետարանական քարոզութիւնը. և առաջին խօսքը, որ դուրս է գալիս Նորա սուրբ և օրհնութեամբ լի բերանից, ապաշխարութեան խօսքն էր։

Քրիստոնէական բոլոր հին և նոր եկեղեցիները Փրկչի կենդանի օրինակին և քարոզութեան հետեւելով՝ ապաշխարութեան գաղափարը հոգեւոր փրկութեան էական պայման են ընդունել և որոշ օրեր նշանակել այդ նպատակի համար։ Արեւելեան հին եկեղեցիների հետ՝ Հայոց եկեղեցին եւս քառասնորդական պահոց օրերը յատկացրել է ապաշխարութեան։ Եկեղեցին իւր սրտաշարժ հոգեւոր երգերով, ընթերցուածներով, արարողութիւններով հօտին ապաշխարութեան է հրաւիրում, ի հարկէ ոչ այն մտքով, որ տարւայ մնացած ժամանակը ազատ համարենք մեզ ամեն տեսակ մեղքեր և անիրաւութիւններ գործելու այն յուսով, թէ ապաշխարութեան օրերին կը յիշենք և թողութիւն կ'ստանանք։ Քրիստոնէի կեանքը մշտական ապաշխարութիւն պիտի լինի իսկապէս։ Ապաշ-

խաղութիւնը որպէս հոգեկան, ներքին գործողութիւն բղխում է զղջացողի սրտից, ուրեմն և որոշ ժամանակ չի կարելի նշանակել և պահանջել, որ ապաշխարես։ Ժամանակ կարելի է նշանակել արտաքին գործողութեան համար, բայց ոչ ներքին աշխարհի։ Բայց և այնպէս մի խորիմաստ կարգադրութիւն է մեր հայրերի կողմից, որ մեծի պահոց օրերը ապաշխարութեան են նուիրել։ Առօրեայ կեանքը իր բազմաբովանդակ պահանջքներն ու զբաղումներն ունի, և եթէ կեանքի ծանր հոգսերի բեռների տակ պարտազանց ենք գտնուել կամ հնարաւորութիւն չենք ունեցել մեր ներքին աշխարհով զբաղուելու, ապաշխարութեան յատուկ օրերը պէտք է յիշեցնեն մեզ մեր զանցառութիւնները։ Ապաշխարութիւնը հոգեւոր հաշուետուութիւնն է մեր խղճի և Աստուծոյ առաջ։ Հաշուապահութեան կանոններից մէկն է տարեվերջին մատեանները քննութեան և ստուգութեան ենթարկել. այդպիսի ստուգութեան պիտի ենթարկենք այս ապաշխարութեան օրերում ոչ միայն մեր արտաքին գործողութիւնները, այլև նրանց ներքին ծածուկ շարժառիթներն ու պատճառները։ Պէտք է շտկենք մեր բարոյական թերութիւններն ու սխալները, եթէ չենք կամենում պատասխանատուութեան ենթարկուել այն արդար դատաւորի առաջ, որ քննել կարող է մեր սրտի և հոգու խորին խորհուրդներն ու գաղտնիքները։

Բ.

Մարդկային բնութիւնն առհասարակ հակուած է դէպի աշխարհայինն ու մարմնաւորը, և այս հակումն է, որ մեր քայլերը դէպի մեղքն ու կորուստն է ուղղում։ Մենք շատ հեշտութեամբ ենթարկւում ենք ժամանակաւոր հաճոյքների և բաւականութիւնների հրապոյրներին, երբ մանաւանդ ներքին, ընդդիմադիր բարոյական զօրութիւնը անհաստատ է մեր մէջ։ Ինչպէս շլշմոլիկ հուրը փայլում է ճահիճների մէջ, այնպէս էլ մարմնական հրապոյրներն ու աշխարհային ցանկութիւնները գրաւում են մեզ դէպի բարոյական կորուստը, որի ճանապարհը լայն է և ազատ։ Մէկին հրապուրում է զգայական վայելքը, միւսին երկրաւոր բարիքն ու ստացուածքը, երրորդին փառքն ու պատիւը, և եթէ թոյլ ենք տալիս, որ այս զգացումները կատարելապէս տիրապետող դառնան մեր հոգեւոր աշխարհում, մեղքի շղթան արդէն պատրաստ է մեզ համար։ Նիւթական ամենայն հիւանդութիւն պէտք է խեղդել իր սաղմի մէջ. նոյն կանոնը պէտք է գործադրենք նաև բարոյական հիւանդութիւնների դէմ. անփութութեան առաջին քայլերն իրենց

հետեւանքներն ու պտուղներն են տալիս և վարակիչ հիւանդութեան սաղմերը բազմանալով, հոգեւոր մահ պատճառում։

Ապաշխարութիւնը հոգեւոր բժշկութեան առաջին պայմանն է։ Որովհետեւ ապաշխարել նշանակում է յետ դառնալ մարմնական հակումների թելադրած ճանապարհից և հոգեւոր, փրկարար մի նոր ճանապարհ ընտրել, որ դէպի Աստուած և Նորա սրբութեան խորանն է տանում։ Ապաշխարել նշանակում է սրբել մեր մեղաւոր միտքը, հոգին, նորոգուել ներքուստ։ Ապաշխարութեան նպատակն է կեանքի ճահիճներից հանել մարդկանց, և նոր արարած շինել։ Անընդհատ աշխատանք և տքնութիւն է հարկաւոր այդ ներքին փոփոխութիւնը կամ վերածնութիւնը յառաջ բերելու համար։ Ապաշխարութիւն և վերածնութիւն հոմանիշ գաղափարներ են աւետարանների մէջ, երկուսն էլ միակ պայմանը նոր կեանքի և Թագաւորութեան քաղաքացիներ դառնալու համար։ Պէտք է խորասուզուենք մեր ներքին աշխարհի մէջ, վերլուծութեան ենթարկենք նորա շարժումներն ու ելեւէջները և անողոք պատերազմ հրատարակենք մեր եսական, սիրոյ զգացմունքից զուրկ հակումների դէմ, որովհետեւ չարիքի բոլոր արմատը այդտեղ է, շատ խորը նստած մեր հոգու մէջ։ Զօրեղ է թշնամին և ներքին, ուստի և նորա դէմ պիտի զինենք և մեր բարոյական բոլոր ուժերը։ Արտաքին միջոցներն անզօր են նորան արմատախիլ անելու։ Հին ճգնաւորներն ու անապատականները փախչում էին աշխարհից նորա ապականութիւններից և մոլութիւններից ազատ լինելու համար, ծեծում էին իրենց մարմինը, քաղցած և ծարաւ էին թողում մարմինը ճնշելու և դորա հետ նորա մեղաւոր հակումները խեղդելու նպատակով, բայց ի զուր։ Պատերազմը ներքին է և միայն ներքին զէնքերով կարող ենք մաքառել հակառակորդի դէմ։ Այդ ներքին զէնքը ապաշխարութիւնն է, զղջման և դարձի զգացումը, ինքնաքննադատութեան և ներքին հաշուետուութեան մի անընդհատ մարզութիւն, որ հետզհետէ զօրացնում է իշխելու մեր վատ հակումների վերայ, զսպելու և սանձահարելու մեր բարոյական թերութիւնների հակամէտ բնութիւնը։

Գ.

Ներքին պայքարման ժամանակ յաճախ զգում ենք մեր կամքի թուլութիւնը, մենք կը ցանկայինք, որ անընդունակ լինէինք ստութեան, կեղծիքի, որ միայն բարին, վսեմն ու ազնիւը թագաւորէր մեր սրտում, մենք կը կամենայինք, որ եսականն ու շահասիրականը, ընչաքաղցութիւնը, զգայական և աշխարհային վայել-

քի սէրը բնաւ տեղ չունենար մեր սրտում, որ մենք ուրիշ կերպ ստեղծուած լինէինք, առանց մեղաւոր հակումների, բայց մեր հոգու յատկութիւնների աւելի լուրջ և ուշադիր քննութիւնը համոզում է ընդհակառակն, որ լաւագոյնն այդ է։ Դժուարութեամբ և աշխատանքով ձեռք բերուած բարիքն է գնահատելի, վտանգաւոր պատերազմից իր քաջութեամբ յաղթական դուրս եկած զինուորն է գովութեան արժանի։ Հրեշտակային մաքրութիւնն իսկ գին չունի, եթէ փորձութեան, տագնապների, տանջանքի բովից անցած չէ։ Նաւապետի հմտութիւնն ու ճարտարութիւնը փոթորկի ժամանակ է երեւում։

Մի նշանաւոր քարոզիչ հետեւեալ միտքն է արտայայտում այդ մասին. եթէ Աստուած երեւար ինձ և ասէր. «Կը կամենա՞ս փոխել քո մարդկային բնութիւնդ և հրեշտականման դարձնել, անմեղ», կ'ասէի. «Ո՛չ, Տէ՛ր, թո՛ղ ինձ իմ մարդկային յատկութիւններով, միայն չմեռնի մէջս սայթաքումներից և անկումներից գիտակցութեան գալու զգացումս և բարձրանալու ձգտումն ու տենչը»։

Ուրացող Պետրոսը չզրկուեցաւ իր առաքելական պատուից, երբ երեքս ուրացաւ իր Տիրոջ. աքաղաղի ձայնը սթափեցրեց նորան, և իրեն նայող Տիրոջ աչքերի մէջ տեսաւ թախծութեամբ լի յանդիմանութիւնը, բայց և ներողամտութեան և թողութեան նշանները, «Եւ ելաց դառնապէս», աւելացնում է աւետարանիչը՝ Գիտակցութեան գալու և զղջման արտասուքն էր, առաքեալի հոգեւոր մկրտութեան աւազանը։

Մարդս բոլորովին անզօր չէ մեղքի և վատ հակումների զօրութեան առաջ։ Մեր մէջ կայ նոյնպէս մի ա՛յլ հակադիր զօրութիւն՝ բարւոյ զգացում և խղճի ձայն։ Մենք զգում ենք, թէ ո՞րն է բարոյապէս գեղեցիկն ու ճշմարիտը, մեր խղճի ձայնը անկաշառ և անողոք կերպով ազդարարում է մեր սխալներն ու յանցանքները. պէտք է միայն նորան լսել և հնազանդել սովորենք։

Բարւոյ զգացումն ու խղճի ձայնը դատապարտութեան են ենթարկում և նողկանք ներշնչում դէպի մեր եսականութիւնը և նորա հետ կապուած բոլոր մեղաւոր գործողութիւնները, մենք զգում ենք մեր տկարութիւնը և ապաւէն ենք որոնում բարոյապէս աւելի բարձր հեղինակութիւնների մէջ։ Այս զգացումն էր, որ մեղաւոր կնոջը Յիսուսի ոտքերը ձգեց, որ կեղեքող Զակքէոսին բարեգործ դարձրեց, որ ուրիշ խօսքով նրանց ապաշխարող դարձրեց՝ Մենք եւս նորան պիտի դիմենք, մեր բարի նաւապետին, կեանքի ալեկոծութեան ժամանակ, ինչպէս ծովում խեղդուող Պետրոսը՝

ԱՐԱՐԱՏ. 1907, Մարտ.

Գ. Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԺԱ.

ՍՐՏԻ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ

Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւ,
զի նոքա զԱստուած տեսցեն:

Մատթ. Ե. 8։

Ա.

Սիրտը մարդկային մարմնի առաջին գործարանն է. ամենից առաջ սիրտն է ստեղծւում մօր արգանդում և ամենից երկար սիրտն ապրում մարդու բոլոր գործարաններից։ Մեռաւ սիրտը, մեռնում է մարդը, ամբողջ մարմինը։ Բայց Տիրոջ խօսքը այս մսի կտորի մասին չէ, այլ այն հոգեւոր գործարանի, որ բարոյական կեանքի համար նոյնչափ նշանակութիւն ունի, որչափ սիրտը մարմնաւոր կեանքի համար։ Սիրտ ասելով՝ Քրիստոս մեր ներքին աշխարհը, եսը, անձնաւորութիւնն է հասկանում իւր ամբողջութեամբ, մեր հոգեկան երեք կարողութիւնների՝ մտքի, զգացման և կամքի՝ յարաբերականը, որ գունաւորում և ձեւակերպութիւն է տալիս մեր անձնաւորութեան։

Սակայն սիրտ գաղափարը, ինչպէս հնում, այնպէս և այժմ, մի տեսակ հոմանիշ է զգացմունքի և ամենեւին պատահական չէ, որ մեր Տէրը այսքան կարեւոր նշանակութիւն է տալիս նորա սրբութեան՝ երանելիութեան և Աստուծոյ տեսութեան պայման համարելով նորա մաքրութիւնը։ Մեր հոգեկան կարողութիւններից ոչ մէկը այնքան մեծ դեր չէ կատարում կրօնական-բարոյական խնդիրներում, ինչպէս սիրտը կամ զգացմունքը։ Բանականութիւնը մեզ տալիս է սկզբունքներ, որոշում է լաւը վատից, բայց այսչափը դեռ բաւական չէ, որ մենք գործ ու կեանք դարձնենք նորա թելադրութիւնները։ Հրահանգուած կամքը նոյնպէս մի նեցուկ է մեզ համար, բայց նա զօրաւոր է և արդիւնաւոր, երբ բովանդակութիւն և մղում է ստանում մեր ներքին զգացմունքից ու ոգեւորութիւնից։ Զգացմունքն է, որ մարդուն դէպի անձնուիրութիւն ու բարոյական հերոսութիւն է մղում, և ոչ սառը բանականութիւնը։ Պատերազմի մէջ այն զինուորն է հերոս, որ իւր անձը նուիրում է հայրենիքի փրկութեան սիրոյ զգացմունքից դրդուած,

առանց լսելու մտքի և բանականութեան դատողութիւնները՝ Յարգանքի արժանի բոլոր սխրագործութիւնները պատմութեան և կեանքի մէջ անսպառ սիրոյ և զգացմունքի շարժառիթներով են բացատրւում։ Ի՞նչ տեսակ առաքինութիւններ էլ վերլուծելու լինենք, քաջութիւն, հայրենասիրութիւն, ծնողասիրութիւն, եղբայրսիրութիւն... բոլորի աղբիւրը նոյնն է՝ մաքուր սիրտը կամ զգացմունքը։

Բայց զգացմունքն է նոյնպէս մարդկանց դէպի անդունդ գլորողը, եթէ նորա աղբիւրը պղտոր է, եսական։ Շահասիրութիւն, Նախանձ, ատելութիւն, փառասիրութիւն և ամէն տեսակ զզուելի մոլութիւններ ծագում են նոյն աղբիւրից, ինչպէս և առաքինութիւնները։ Մարդկային հոգու յատկութիւնն է, որ չարն ու բարին, ազնիւն ու վատթարը, ստոր կրքերն ու կոպիտ եսականութիւնը նոյնպէս տեղ ունին մեր սրտում, ինչպէս անձնուիրութիւնն ու վսեմ ձգտումները։ Երբեմն մէկն է իշխում մեր հոգու մէջ, երբեմն միւսը։ Եւ ահա Յիսուս, իբրև ճշմարիտ և սրտցաւ բժիշկ, կամենում է չարիքը արմատից կտրել, մատնացոյց անելով բարոյական հիւանդութիւնների իսկական պատճառի վերայ։ Մեր ամբողջ նիստ ու կացով, խօսքով, ձգտումներով ու գործերով միայն ներքին շարժման արտայայտութիւնն ենք, նորա գործիքը։ Մաքո՞ւր են մեր ներքին շարժումներն ու զգացումները, անպայման մաքուր կը լինին և նոցա համապատասխան գործերը։ Մաքուր՞ է աղբիւրի ակը, մաքուր կը լինի և այստեղից բղխած ջուրը։

Բ.

Սովորաբար մարդիկ դատում են արտաքին երեւոյթներով, բայց արտաքին երեւոյթն ինքնըստինքեան բաւական չէ որոշելու գործի բարոյական որակը. որովհետեւ արտաքուստ ազնիւ և բարի երեւացող մի գործ կարող է բղխել ներքին եսական և կեղտոտ շարժառիթներից։ Բարեգործութիւնը յաճախ կարող է ի ցոյց մարդկան կատարուել աւելի մեծ շահերի, փառասիրութեան և ուրիշ շատ ծածկուած եսական նպատակների համար։ Ամենայն գործ պիտի գնահատուի բարոյապէս ներքին շարժառիթների տեսակէտով, ապա թէ ոչ փարիսեցիներն ու կեղծաւորները, ճարպիկ խաբեբաները մարդկութեան զարդերը պիտի կազմէին։ Յիսուս, որ եկել էր հոգեւոր մի նոր կեանք, փրկութեան մի նոր ճանապարհ քարոզելու հին ազգերի ծիսակատարութիւններով և արտաքին օրէնքներով խճողուած կրօնների փոխարէն, միշտ ներքին մաք-

րութիւնն է շեշտում։ Նորա աչքում հրէաներից անարգուած և մեղաւոր համարուած մաքսաւորի աղօթքն աւելի գնահատելի է, քան արտաքուստ արդար և օրինապահ փարիսեցունը, այրի կնոջ սրտից բղխած լուման աւելի թանգ, քան մեծատունների տուած առատ նուէրները։ Ոչ ծէ՛ս, ոչ լուացումնե՛ր, ոչ ծոմապահութիւննե՛ր, որոնք միանգամայն աւելորդ են, եթէ համապատասխան ներքին զգացումները պակասում են, այլ սրտի սրբութի՛ւն, անարատ զգացումնե՛ր ու կեանք դարձած բարեպաշտութի՛ւնն է Նորա աւետարանի բովանդակութիւնը։ Անշուշտ վատթարագոյն փարիսեցիութիւն է նոյնպէս հերքել ծէսերն ու խորհուրդները յանուն ներքին սրբութեան, եթէ գոյութիւն չունի մեր սրտում։

Նորա բերած կրօնը ներքին զգացումների համապատասխան մի կեանք էր, բարձրագոյն և սրբազան մի գեղարուեստ, որ թանձրանում է ոչ մարմարիոնի կտորի մէջ կամ կտաւի վերայ, այլ կենդանի, բանական, մտածող և զգացող արարածի մէջ, եթէ աստուածային կայծն ընկել է Նորա սիրտը։ Կեանքի բոլոր երեւոյթներից նրբագոյնը կրօնականն է, որ կեղծիք տանել չէ կարող, ինչպէս մաքուր, սպիտակ զգեստը սեւ բծեր, այդ պատճառով էլ կրօնի անունով եղած կեղծիքը ամենից զզուելին է։ Սրտի մաքրութիւնը ճշմարտութեան գերիշխանութիւնն է մեր խղճի և հոգու մէջ, որ ազնուացնում է մեր զգացումները և ջերմացնում մեր հոգին բարւոյ, գեղեցկի և ճշմարտութեան գաղափարների համար։ Հոգու այսպիսի վիճակն է, որ Յիսուս երանելի է համարում և Աստուծոյ տեսութեան պայման։

Գ.

Քրիստոնէական կրօնի մէջ Աստուած մի անտեսանելի և անըմբռնելի էակ է։ Հասկանալի է, որ այստեղ եւս խօսքը նիւթական տեսութեան մասին չէ։ Աստուծոյ գոյութիւնն զգալի է և տեսանելի միայն մաքուր հոգիների համար։ Ինչպէս ցօղի բիւրեղանման փոքրիկ կաթիլի մէջ անդրադառնում է արեգակի պատկերը, այնպէս էլ անարատ և մաքուր սրտի մէջ Աստուծոյ պատկերը, որ Նորան կեանք ու անանց երջանկութիւն է տալիս։ «Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն»։

Գ. Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԱՐԱՐԱՏ, Փետր. 1907.

ԺԲ.

ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Եղերուք կատարեալք, որպէս եւ երկնաւոր Հայրն ձեր կատարեալ է:

Մատթ. Ե. 48:

Ա.

Կատարելութեան ձգտումը աստուածային օրէնքներից գերագոյնն է եւ յատուկ մարդկային բնութեան։ Այն օրուանից՝ երբ մարդը ինքնագիտակցութեան է հասել, նկատելի է դորա հետ եւ նորա կատարելութեան ձգտումը։ Պատմութիւնը կարելի է սահմանել որպէս մարդկային կատարելութեան ձգտման նկարագրութիւն, եւ նորա իսկական հերոսներն են այն անձնաւորութիւնները՝ որ կարապետ եւ մարգարէ են հանդիսացել բարձրագոյն ձգտումների եւ նպատակների համար։ Մեր Տէրն էլ, որ պատմութեան մէջ այդպիսի անձնաւորութիւններից կատարելագոյնն է, անսահման կատարելութեան ուղին է գծում իւր հետեւողների համար՝ «եղերուք կատարեալք որպէս եւ Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» խօսքերով։ Փորձենք այս լուրջ խնդիրը խորհրդածութեան նիւթ դարձնել, որի ըմբռնումն ու գործադրութիւնը քրիստոնեայի կեանքի էութիւնն ու նպատակը պիտի կազմէ։

Կեանքի նպատա՛կ։ Շատ ազնիւ հոգիներ գլուխ են կոտրել՝ արիւն քրտինք մտել կեանքի նպատակը հասկանալու եւ ուրիշներին հասկացնելու համար։ Կեանքի ամենամեծ հանելուկն է այդ, որ դրուած է մեր առաջ եւ որին պիտի նուիրուին մեր ամենաթանգ րոպէները։ Ում համար պարզ է կատարելիք գործի ծրագիրն ու նպատակը, աւելի հեշտութեամբ էլ գլուխ կը բերէ յանձն առած պարտաւորութիւնը։ Եթէ ճարտարապետը գծագրել է մակարդակը՝ այլ եւս որմնադրի եւ քարտաշի համար դժուար չէ հոյակապ շինութիւններ կանգնել։ Գիտակցութիւն ունենալ, թէ ի՞նչ է կեանքի նպատակը, մարդկային կատարելութեան յաջողութեան կէսն է։ Տարաբաղդաբար շատ չեն այնպիսի մարդիկ, որոնք առաքեալի նման ասել կարող են, «Արդ ես այնպէս ընթանամ, ոչ որպէս յանդ-

բեւոյթս, այնպէս մրցեմ, որպէս ոչ թէ զհողմս ինչ կոծելով»։ Մարդկութեան դժբաղդութիւնն հէնց այն է, որ մեզնից շատերս հողմերի դէմ ենք կռւում, խարխափում ենք խաւարի մէջ, առանց գիտակցութիւն ունենալու մեր գոյութեան էութեան և նպատակի մասին։ Սակայն եթէ ապրում ենք, անհրաժեշտ է, որ մեզ համար պարզ լինի, ինչո՞ւ ենք ապրում, և ո՞ւր ընթանում։

Կեանքի նպատակը պարզելու համար, նախ պէտք է որոշ լինի, թէ ի՞նչ է կեանքը։ Ահա մի հարց, որի լուծման համար շատ տարբեր հասկացողութիւններ կան և այդ տարբեր հասկացողութիւնների հետ էլ կապուած են վերոյիշեալ հարցի տարբեր պատասխանները։ Սակայն այդ տարբերութիւնների մէջ ճշմարտագոյնն այն է, որ ամենից հինն է և պատմութեան ընթացքում հոգեւոր կեանքի մէջ հանդէս է եկել այլ և այլ ձեւակերպութիւններով, ըստ էութեան միշտ նոյն ձեւով. այսինքն կեանքն ըմբռնել որպէս հոգեւորի և մարմնաւորի պատերազմ։ Բնախօսական տեսակէտով որքան էլ ճշմարիտ լինին մարմնի և հոգու փոխադարձ ազդեցութիւնն ու նոցա սերտ առընչութիւնը, բայց և այնպէս անուրանալի են և նոցա տարբեր յատկութիւնները։ Մարդը միայն այն չէ, ինչ որ ուտում է, ինչպէս պնդում էին մի ժամանակ նիւթապաշտական ուղղութեան հետեւող գիտնականները, այսինքն միայն մարմին չէ, այլ և հոգի։ Մարդու մարմինը կարելի է վերլուծել քիմիական տարրերի, բայց նոյն տարրերի միութիւնից մտածող, զգացող և կամքի տէր անձնաւորութիւն չի ստեղծւում։ Ոչ մի բնագէտ չէ կարող պնդել, թէ գիտակցութիւնը նիւթ է և ճիշդ այն օրէնքներին է ենթարկւում, ինչպէս նիւթը։ Ուրիշ է հոգին և ուրիշ մարմինը. մենք յաճախ մեր ներքին աշխարհում զգում ենք այդ երկուսի մաքառումը։ Ուրիշ բան է կամենում մարմինը և ուրիշ՝ հոգին։ Մարմնի ցանկութիւնը յաճախ հոգու կորուստն է, կամ ինչպէս առաքեալն է գեղեցիկ կերպով ձեւակերպում, «խորհուրդ մարմնոյ մահ է և խորհուրդ հոգւոյ կեանք և խաղաղութիւն»։ Կրկնում ենք այս իրողութիւնն անժխտելի է մեր հոգեւոր աշխարհում և հէնց այս երկու աշխարհների մաքառումն էլ պատմութեան էութիւնն է կազմում։ Կեանքը պատերազմ է, աւելի պարզելու համար կ՚ասենք, կեանքը հոգեւորի և մարմնաւորի պատերազմն է։ Ձգտում յաղթելու չարը, ձգտում բարւոյ դրօշակակիրը դառնալու կատարելութեան ճանապարհն է, որ դէպի վերջնական նպատակը՝ յաւիտենականութիւնն է տանում։

Բ.

Այս իրողութիւնն ամենահին ժամանակներից յայտնի էր մարդկութեան, ուստի և նորա լաւագոյն անդամները՝ կրօնական հանճարներն ու փիլիսոփաները, երկնաթռիչ արուեստագէտներն ու բանաստեղծները, այլ և այլ միջոցներ են առաջարկել և գործադրել հոգու յաղթութիւնը ապահովելու համար։ Բաւական է հին ազգերից յիշել միայն յոյների և հռոմայեցիների փիլիսոփայութիւնը, որ աւելի սերտ առընչութիւն ունի մեր քաղաքակրթութեան հետ. քրիստոնեայ լինելով՝ երախտագիտութեամբ պէտք յիշենք Սոկրատէսի, Պղատոնի, ստոյիկեան և եպիկուրեան փիլիսոփայութիւնների հիմնադիրների անունը։ Նոքա էլ մի մի ազնիւ ճառագայթ են եղել քրիստոնէութեան հնոցը զօրացնելու համար։ Ամենայն մի ձգտում դէպի վսեմն ու կատարեալը, յարգելի պէտք լինի քրիստոնեայի համար, «ուր հոգի Տեառն է, անդ ազատութիւն է», եթէ մի անգամ ըմբռնել ենք մեր կրօնի էութիւնը, եթէ պատկերացրել ենք մեր հոգու առաջ նորա Հիմնադրի անարատ և լուսաւոր անձնաւորութիւնը, այլ ևս երկիւղ չունինք համեմատութեան դնելու մարդկութեան մեծ բարերարների և հանճարների անձնաւորութեան և վարդապետութեան հետ։ Ընդհակառակ՝ այդ համեմատութիւնը միայն մի բան կարող է պարզել, թէ մենք իրաւունք ունինք օրհնութեամբ յիշել մեր Տիրոջ անունը, որ բոլոր հանճարների, բոլոր բարերարների և մարգարէների մէջ բացառիկ և գերազանց է հանդիսանում։

Պղատոնը հոգեւորի յաղթութեան միջոցը նիւթի ոչնչացումն էր ընդունում, հոգին պէտք է ազատուի մարմնի կապանքներից և դորա միջոցը բանականութիւնն է, փիլիսոփայական միտքը։ Պէտք է նախ ազատուել այդ կապանքներից՝ մեր ձգտումների վերջնական նպատակի՝ բարութեան գաղափարին հասնելու համար։ Անկատարից դէպի կատարեալը բարձրանալու համար՝ պէտք է ոչնչացնել զգայականը և նմանել աստուածութեան, որ ազատ է չարութեան և վատութեան յատկութիւններից։ Հոգին պէտք է ամփոփուի ինքն իւր մէջ, մտածող ճանաչողութեան խաղաղութեան մէջ, ազատ անցաւորից և անկատարից և միանայ ճշմարիտ և յաւիտենական էութեան հետ։ Իսկ դորա միջոցը, ինչպէս յիշուեցաւ, բանականութիւնն է և փիլիսոփայութիւնը։ Բայց Պղատոնի բարոյական կատարելութեան գաղափարը որքան և վսեմ, նոյնքան և անիրա-

գործելի էր, այդ մի վերացական գաղափար է, որ միայն Նորա գլխում գոյութիւն ունէր։ Մարդկութեան անդամները եթէ նոյն իսկ Պղատոններից կազմուած լինէին, անկարելի կը լինէր այդպիսի զուտ վերացական գաղափարների համեմատ իրական կեանք ստեղծել. փիլիսոփան ինքն էլ, երեւի, չի մտածել, թանձրացնել կեանքի մէջ իւր բարոյական կատարելութեան գաղափարը։

Նորա աշակերտը եւ հին աշխարհի ամենամեծ փիլիսոփան՝ Արիստոտէլ, թէպէտ եւ բոլորովին տարբեր ճանապարհով, բայց դարձեալ մարդկութեան երջանկութիւնը բարոյական կատարելութեան մէջ է տեսնում։ Բայց այդ կատարելութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բնական աճողութեան կանոնաւոր զարգացումը, բնականի ոգիացումը։ Նա չի ընդունում հոգու եւ մարմնի այն երկուութիւնը, որ յատուկ էր իր ուսուցչին։ Մարդը երջանիկ կարող է լինել իրեն յատուկ՝ բնական գործունէութեամբ, իսկ մարդու էական յատկութիւնը բանականութիւնն է։ Նա կամքի վարժութեամբ կամ աւելի ճիշդն ասած ինքնիշխանութեան վարժութեամբ, պիտի կարողանայ հետեւել բանականութեան թելադրութեան՝ հակառակ ցանկութիւններին։ Որպէս միջոցներ առաջարկում է գեղարուեստն ու ճանաչողութիւնը կամ գիտութիւնը. առաջինը մաքրում է հոգին յոյզերից, իսկ երկրորդը առաջնորդում դէպի բարձրագոյն եւ մաքուր բանականութիւնը։ Այսպիսի տեսական բանականութեան թելադրութեամբ եղած գործունէութիւնն է, որ մեզ դէպի երջանկութիւն եւ կատարելութիւն է տանում, այսինքն դէպի բարոյական, գործնական կեանքը։ Բայց աւելի բարձրագոյն երջանկութիւնը հայեցողական է, ճանաչողութեամբ կամ գիտակցութեամբ մասնակից է դառնում մարդը մաքուր բանականութեան որ Աստուծոյ էութիւնն է եւ իսկական եւ յաւիտենական երջանկութիւնն ու կատարելութիւնը։

Ինչ որ ասացինք Պղատոնի համար, նոյնը կրկնել կարող ենք եւ Արիստոտէլի համար. ճանաչողութիւնը կամ վերացական գիտութիւնն անշուշտ հոգեւոր բարիք է, բայց ոչ միայն շատ քչերին մատչելի, այլ եւ կտրուած գործնական կեանքից։ Արիստոտէլի կատարելութեան նպատակը նոյն իսկ աւելի տեսական բնաւորութիւն ունէր. հանճարեղ փիլիսոփայի մտքի սաւառնումն էր այդ բանականութեան վերացական եթերներում, որ երբ գործնական վարդապետութիւն դարձաւ ստոյիկեանների փիլիսոփայութեան մէջ, ցոյց տուեց իւր պակասաւոր կողմերը։

Գ.

Այս երկու հանճարներին հետեւող փիլիսոփայական դպրոցներից յիշելի են ստոյիկեաններն ու եպիկուրեանները։ Երկուսն էլ որոշ չափով իրենց հետքերն են թողել մարդկային հոգու զարգացման պատմութեան մէջ, երկուսն էլ մասամբ դեռ եւս նշանակութիւն ունեն կրթուած հասարակութեան որոշ խաւերում։

Առաջինն իսկապէս գործնական կեանքի փիլիսոփայութիւն էր, որով պէտք է ընթանար իրենց հասկացողութեան համեմատ բարոյական կեանքը։ Նա այնպիսի տեսական բնաւորութիւն չունէր, ինչպէս Պղատոնի և Արիստոտէլի փիլիսոփայութիւնն էր։ Գիտութիւնը նոցա համար միայն միջոց էր առաքինի գործողութեան համար։ Միակ բարիքը առաքինութիւնն էր և չարիքը մոլութիւն. ըստ այսմ էլ բաժանւում էին մարդիկ և շրջապատող իրերը՝ գոնէ այս վարդապետութեան սկզբնական ժամանակներում։ Հաճոյքն ու ստացուածքը արգելք էին համարւում առաքինութեան, ինչպէս և յոյզերը, երկիւղն ու ցանկութիւնը, կիրքն ու զգացմունքը, եթէ սոքա իշխեն բանականութեան վրայ։ Նոքա թէև բարոյագիտութեան համակարգութիւն չունէին, բայց իրենց բարոյական կատարելութեան գաղափարը պատկերացնում էին իմաստունի գերակայի մէջ։ Իսկ այդ իդէալը կամ գերական կապուած էր իրենց տիեզերաբանական հայեացքների հետ։ Ստոյիկեանները հին աշխարհի հանրաստուածականներն էին. աստուածութիւնը բնութեան մէջ էին որոնում և ոչ նրանից դուրս։ Տիեզերքը Աստուծոյ մարմինն է և Աստուած տիեզերքի հոգին։ Այստեղից էր ծագում և նրանց ամբողջ բարոյագիտութիւնը. մարդու ձգտումների և կատարելութեան ճանապարհն էր ապրել բնութեան ընդհանուր օրէնքների համեմատ, ներդաշնակութիւն կազմել բնութեան հետ, և այս ձգտումը մարմնացած էին համարում իմաստունի գերակայի մէջ։ Իմաստունն ազատ է արտաքին աշխարհից, և երջանկութիւնն ինքն իր մէջ է գտնում՝ ինքնաբաւականութեան հպարտ գիտակցութեամբ։ Նա աշխարհի հետ գործ չունի և այնտեղից ստացած տպաւորութիւններն ու յոյզերը չեն խանգարում նորա ներքին խաղաղութիւնը. Նա օրէնքից և սովորութիւններից բարձր է, կարող է ինքնասպան լինել, ստախօս, գործել վատթարն ու գարշելին առաքինութեան զգացումով։ Մի խօսքով իմաստունին պատկերացնում էին իբրեւ մի աստուած, «որ հպարտանալ կարող էր իւր կեանքով, ինչպէս Զեւսը»։

Բայց այդպիսի մէկը ոչ միայն չկար երկրիս վրայ, ոչ միայն վերացական ենթակայական ստեղծագործութեան արդիւնք էր, այլ եթէ իրօք գոյութիւն ունենար, մեր համակրանքը վայելել չէր կարող. Նորա հպարտութիւնն ու ինքնաբաւականութիւնը կ՚ստիպէր մեզ հեռու փախչել նրանից: Ստոյիկեանների ստեղծած բարձրագոյն կատարելութեան տիպը երեւակայական էր. և իրենք հէնց ստոյիկեանները, որքան և յարգելի լինեն շատ կողմերով, հակասութեան մէջ ընկան իրենց գաղափարների վերաբերութեամբ: Յայտնի է, թէ նոյն լաւագոյն ներկայացուցիչներից մէկը, Սենեկան՝ ինչպէս ընչասէր էր և համակերպւում էր իւր սանի՝ Ներոն կայսեր՝ զզուելի և անբարոյական քմահաճոյքներին: Իսկ նրանց հպարտութիւնը, ինքնաստուածացումը, եթէ կարելի է այսպէս ասել, և արհամարհանքը դէպի ոչ փիլիսոփան, ոչ առաքինին, դէպի ամբոխը, այնպիսի խաւար ստուերներ են, որ բարոյական կատարելութեան հետ հաշտեցնել չի կարելի: Իրենց արտաքինով իսկ՝ փիլիսոփայական վերարկուով, մտքերի մէջ խորասուզուած դէմքով, պէտք է փողոցում տարբերուէին այդ աստուածները, խեղճ, տգէտ, ուրիշ և ոչ առաքինի ամբոխից: Կատարեալ մարդը ստոյիկեանն էր, իսկ միւսները յիմարներ և մեղաւորներ:

Եպիկուրեան փիլիսոփայութեան նպատակը նոյնպէս գործնական էր՝ մարդկանց դէպի երջանկութիւն առաջնորդել: Բարձրագոյն բարիքը, որին պէտք է ձգտէ մարդս երջանկութիւնն է, իսկ այդ երջանկութեան հասնելու լաւագոյն միջոցը՝ հաճոյքը, զուարճութիւնը: Սակայն այդ հաճոյքը րոպէականը չէ, այլ տեւականը, որին պիտի ձգտէ մարդս իւր բանականութեան ընտրութեամբ: Հաճոյքներից ընտրելի են աւելի հոգեւորները, որոնք տեւական և խաղաղ բաւականութիւն են պատճառում, այն ինչ մարմնականները կրքոտ են, փոթորկալից և րոպէական: Հաճոյքը երջանկութեան էական տարր ընդունելով հանդերձ, չափաւորութիւն և սակաւապետութիւն է քարոզում Եպիկուրը. շռայլութիւնն ու ցեղխութիւնը բարձրագոյն բարիք չեն: Պէտք է վայելել կեանքը, ամենայն բարիք, որ հաճոյք ու զուարճութիւն է պատճառում, բայց առանց վնասի, զրկանների և հոգու խաղաղութիւնը կորցնելու: Այսպիսով հաճոյքը, զուարճութիւնն ու առաքինութիւնը միութիւն էին կազմում այս վարդապետութեան մէջ և նոքա բարձրագոյն, հոգեւոր զուարճութիւնը որոնում էին կեանքի էստետիկ նրբութեան, հոգելից և նրբամիտ բարեկամական շրջանների մէջ: Բարեկամութիւնը, կարեկցութիւնն ու մարդասիրական գաղափարը այս վար-

ղապետութեան համակրելի կողմն էր։

Սակայն հաճոյքը կատարելութեան էական տարր ընդունելով, բարոյականութիւնն ինքնըստինքեան տեղի էր տալիս անհատական երջանկութեան առաջ։ Քաղաքակիրթ մարդու նրբաճաշակ և գեղասիրական վայելքը բարոյական կեանքի նպատակ էր ընդունուած։ Վայելքի միջոցները որքան և նրբացած լինէին քաղաքակրթութեան յառաջդիմութեամբ և բարիքներով, ըստ էութեան ոչ այլ ինչ էր այդ ձգտումն ու կեանքը, եթէ ոչ բարոյական պարտքի զգացումից զուրկ եսականութիւն։ Եւ, ինքնաբաւականութեան պաշտամունքն էր այդ նուրբ ձեւերի տակ։ Եպիկուրեան վարդապետութիւնը մենք նկարագրեցինք իր մաքուր գաղափարականութեան մէջ, բայց հէնց այդ վիճակում ոչ միայն եսական է այն, այլ և անիրագործելի, եթէ ընդունենք իսկ, որ մարդիկ ընդունակ են հաճոյքների մէջ, որից դուրս չեն և մարմնականները, չափաւորութիւն պահել։ Տուէք այն հասարակութիւնը, որ ճաշակի, վայելչութեան, սիրալիրութեան հաւասար նրբազգածութիւնն ունենար և նոյն փոխադարձ յարաբերութիւնից միայն հաճոյք բղխէր։ Գործնական կեանքի մէջ այդ վարդապետութիւնը ցոյց տուեց իր սնանկութիւնը. եպիկուրեան անելով՝ հասկացւում է զգայական զուարճութեան հետամուտ, ուտող, խմող, աշխարհը վայելող մի անձնաւորութիւն, որ անշուշտ առաքինութեան տիպար լինելուց շատ հեռու է։ Եւ այդ շատ հասկանալի է, միանգամ, որ զուարճութիւնն ու հաճոյքը երջանկութեան և կատարելութեան տարր էր ընդունուած, անկման և սայթաքման բոլոր պայմանները պատրաստ էին։

Մենք փոքր ինչ աւելի կանգ առանք այս խնդրի վերայ, որովհետեւ զուրկ չէ այժմէութիւնից. եւրոպական հասարակութիւնների մէջ, նրանց հետեւողութեամբ և մեր մէջ, հազուագիւտ չեն այնպիսի անձնաւորութիւններ, որոնց ամբողջ ձգտումն է վայելուչ հագնուել, նիստ ու կաց ունենալ, վայելել կեանքի և քաղաքակրթութեան հոգեւոր և մարմնաւոր բարիքները. ըստ երեւոյթին մինչեւ իսկ ոչ ոքի վնաս չեն տալիս, ազնիւ են, բայց և այնպէս եպիկուրեան նրբութիւններից աւելի չեն բարձրանում։ Կենդանաբար հոգին չէ նրանց ղեկավարող զօրութիւնը, այլ նրբացած եսամոլութիւնը, որ միշտ էլ չարեաց արմատ կը մնայ, բայց ոչ երբէք բարձրագոյն առաքինութեան։

Դ.

Կատարելութեան ճանապարհ է քարոզում և մեր Տէրը.

«Եղերուք կատարեալք, որպէս և երկնաւոր Հայրն ձեր կատարեալ է»։ Այս խօսքերից արդէն նկատւում է, թէ Տիրոջ քարոզած կատարելութեան ճանապարհը տարբեր է մինչեւ այժմ նկարագրածներից։ Բնական չէ այս ճանապարհը, որովհետեւ կատարելութեան նախատիպը գերբնական է։ Այնտեղ բանականութիւնն էր իր թելադրութիւններով գործողը, այստեղ, ինչպէս կը տեսնենք հաւատը, մարդկային հոգու սրբազան զգացմունքներից մէկը։

Բայց ի՞նչ է նշանակում բնական և ի՞նչ գերբնական։ Պէտք է երկու խօսքով գոնէ լուսաբանենք այս հասկացողութիւնները մեր մտքերի ընթացքը պարզելու համար։ Տիեզերքի մէջ բնականի և գերբնականի բաժանում չկայ իսկապէս. մեր մարդկային միտքն ու լեզուն է այդ բաժանումը դրել։ Այն, ինչ որ բնական ենք համարում, նոյն չափ գերբնական է, ինչպէս և գերբնականը բնական։ Երկուսն էլ հաւասարապէս երեւոյթներ են բնութեան մէջ, մէկը միայն ենթարկւում է մանրամասն քննութեան և այդ քննութիւններից որոշ օրէնքներ ենք հանում, իսկ միւսը նման քննութեան և օրէնքի չի ենթարկւում։ Արտաքին բնութեան երեւոյթները ենթարկւում են մեքենայական օրէնքների, իսկ հոգեւոր, կրօնական-բարոյական կեանքի երեւոյթները այդպիսի մեքենայականութեան չեն ենթարկւում։ Գերբնականի գաղափարը մենք այս մտքով ենք հասկանում և ոչ բնական, մեքենայական օրէնքների մէջ արտաքին ոյժի միջամտութիւն. այս տեսակէտով երկուսն էլ բնութեան երեւոյթներ են և նոցա գոյութիւնը հաւասարապէս ուրանալ չենք կարող։ Եւ զարմանալին այն է, որ ինչ վսեմ է, սուրբ, աստուածային, այն եւս գերբնական է։ Գերբնական է և այն ճանապարհն ու նպատակը, որ մեզ բարձրագոյն, բարոյական կատարելութեան է տանում, իսկ այդ կատարելութեան նախատիպը Աստուած է։

Նորա գոյութիւնն ի հարկէ բնական օրէնքներով և չօշափելի փաստերով ապացուցանել չենք կարող, և այն Աստուածը, որի գոյութիւնը սառը մտքի, բանականութեան տեսութիւններով պիտի հաստատենք, կենդանի աստուած չէ։ Մեզ պէտք է սրտի և հոգու ղեկավար և տնօրէն հանդիսացող Աստուած, որ ապրէր մեր սրտում և կեանք ու նպատակ տար մեր բարոյական գոյութեան։ Այդպիսի Աստուծոյ գոյութիւնը մեր ներքին աշխարհում պիտի որոնենք, իսկ նորանից դուրս պատմութեան, հոգեւոր և բարոյական կեանքի առաջնորդների և մարգարէների մէջ, որոնք աւելի զօրեղ և պայծառ կերպով զգացել են նորա զօրութիւնը և հաղոր-

դէլ իրենց շրջապատին։ Եւ այս զգացմունքն է իսկապէս նոցա մեծութեան, բարոյական կատարելութեան միակ գաղտնիքը։ Մեր Տիրոջ գերազանցութեան և աննման բարձրութեան խորհուրդն եւս այն է, որ ոչ ոք կրօնի հիմնադիրներից, մարդկութեան մեծ բարերարներից Աստուծոյ մերձաւորութիւնն այնպէս խիստ չէ զգացել և իւր կեանքի ընթացքն այնպէս Նորանից կախուած, ինչպէս Նա։ Որդիական մաքուր, անձնուէր սիրոյ և Հօր կամքի առաջ հպատակութեան զգացմունքն է, որ Նորան դէպի խաչ է առաջնորդել և սիրոյ ու կարեկցութեան կապերով միացրել մարդկանց հետ։ Այս ներքին փորձառութեան արդիւնքն է ամփոփուած «Եղերուք կատարեալք, որպէս երկնաւոր Հայրն ձեր կատարեալ է» խօսքերի մէջ։

Ե.

Քրիստոնէութիւնն, ուրեմն, կատարելութեան բոլորովին մի տարբեր ճանապարհ է քարոզում. այստեղ գլխաւոր գործօնը մարդկային միտքն ու կամքը չէ, այլ առ Աստուած հաւատը, վստահութիւնը, որ սրբում է մեր սիրտն ու հոգին եսական տարրերից և դէպի անձնուիրութիւն մղում։ Այդ հաւատն է քրիստոնէական ամենաբարձր բարոյականութեան և սիրոյ աղբիւրը։ Մտքի և բանականութեան վերայ հիմնուած բարոյականութիւնն ու կատարելատիպը եսական է, և մենք տեսանք, որ հեթանոսական փիլիսոփայութեան բարոյականութիւնը որքան և նուրբ, եսական էր։ Մարդկային միտքն ու կամքը որոշ չափով միայն կարող են մեզ օգնել, նոքա յուսալի չեն դժուարութեան ժամանակ։ Սառը դատողութեամբ ձեռք բերած սկզբունքները հեշտութեամբ չքանում են եսական աւելի զօրեղ և հաճելի ցանկութիւնների հանդէպ. որովհետեւ այդպիսի բարոյականութեան մէջ գերակշռող տարրը միշտ օգտի տեսակէտն է: Բայց հաւատից բղխած բարոյականութիւնը ներքին մղման և ոգեւորութեան արդիւնք է և ուրեմն ազատ եսական տարրերից. հաւատ, ոչ դէպի հրաշալիքը, ոչ դէպի բնութեան օրէնքներից դուրս երեւոյթները, սնոտիապաշտութիւնը, այլ դէպի բարին, ազնիւը, մաքուրը, վսեմը և նոցա վերջնական յաղթութիւնը։ Այդպիսի հաւատը ներքնական մի զգացում է, հոգու մի վիճակ, որ թէեւ բնագիտական օրէնքների և քիմիական վերլուծութիւնների չի ենթարկւում, բայց բնական է վերոյիշեալ բացատրութեան համեմատ։ Այդ զգացումը յատուկ է մարդկային հոգուն նուազ կամ աւելի չափերով, ուստի և այստեղից բղխած բարոյականութիւնը իւր աստիճաններով մատչելի յետին մշակից սկսած

մինչեւ գիտութեան և գեղարուեստի բարձր ներկայացուցիչներին։

Մի ուրիշ հանգամանք եւս պէտք է շեշտենք քրիստոնէական կատարելութեան գերազանցութիւնը պարզելու համար։ Մինչեւ փիլիսոփայութեան մէջ կատարելութեան գաղափարն ու նախատիպը տեսական էր, այստեղ թանձրացած է և ընդհանուրին ըմբռնելի դարձած Յիսուս Քրիստոսի անձնաւորութեամբ։ Աստուծոյ կատարելութեան նմանել ինքնըստինքեան վերացական մի միտք է. մեզանից իւրաքանչիւրը պատկերացնում է այն իւր կրթութեան, հոգեկան կարողութիւնների և յատկութիւնների համեմատ, բայց Քրիստոսի կեանքն ու օրինակը պարզում է մեզ, թէ ինչ է նշանակում և ինչպէս պէտք է երկնաւոր կատարելութեան ձգտել։ Նորա շաւղով ընթանալ, նշանակում է բարոյական կատարելութեան ուղիղ պողոտան ընտրել, դէպի անսահման կատարելութեան վերջնական նպատակը։ Ոմանք քրիստոնէութիւնը համեմատելով միւս կրօնների և փիլիսոփայութիւնների հետ մի առանձին նորութիւն չեն գտել նորա մէջ։ Սխալ է ի հարկէ այդ հայեացքը. որովհետեւ կրօնի, սիրոյ և բարոյականութեան ըմբռնողութիւնը քրիստոնէութեան մէջ բոլորովին տարբեր է, քան բառերով նման հնչող կրօնների և փիլիսոփայութիւնների մէջ, բայց էական նորութիւնը և քրիստոնէութեան բերած անգնահատելի գանձը Քրիստոսի անձնաւորութիւնն է։ Այս նորութիւնը ոչ մի տեղ գտնել չենք կարող, ինչքան էլ տակն ու վրայ անենք պատմութիւնը։ Ի զուր չէ քրիստոնէութիւնը նորա անձնաւորութեան մէջ աստուածային կատարելութիւնը մարմնացած տեսել։ Մեղքը, մեր կեանքի ծովի ամենից փոթորկալից վտանգաւոր ալիքը, ոչնչացած է նորա սրբութեան և մաքրութեան առաջ։ Բայց չենք կարող ասել թէ Նա ազատ էր տագնապներից. փորձութեան պատմութիւնը, աւելի գեղեցիկ Գեթսեմանի պարտէզի տեսարանը, ակներեւ, ապացոյց է, որ Նա ներքին, հզօր մաքառումների ենթակայ է եղել. և յաղթող է հանդիսացել առ Հայրն ունեցած հաւատով, հնազանդութեամբ։ Այդ անապական աղբիւրից է բղխում և նորա սէրը դէպի ընկերը, դէպի իւր շրջապատողները։ Բոլոր թշուառները, աղքատները, անարգուածներն ու մեղաւորները չեն վրիպում Նորա ուշադրութիւնից։ Նա որոնում է նոյն իսկ կորուսեալին գտնելու համար, այն ինչ Ստոյիկեան իմաստունի համար արհամարհելի կը լինէր այդ, իսկ նրբաճաշակ Եպիկուրեանի վայելչութեան զգացմունքին հակառակ։ Բայց մարդկային հոգին թանկ է Քրիստոսի համար հաւասարապէս, լինի այն իշխանի, ռամկի, թէ ստրկի մէջ.

որովհետեւ բոլոր մարդիկ նոյն Հօր որդիքն են և իւր եղբայրները։ Սիրոյ, գթութեան օրէնքի վերայ հիմնուած նոր թագաւորութեան մէջ հաւասար քաղաքացիներ են ամենքը։ Եւ Նորա կարեկից ձայնը իւր մօտ է կանչում բոլոր տառապեալներին, վաստակածներին, բեռան տակ ճնշուածներին, ոչ միայն մխիթարութիւն և սփոփանք տալու, այլ և դէպի երկնաւոր Հօր կատարելութիւնն առաջնորդելու։

«Եղերուք կատարեալք, որպէս և երկնաւոր Հայրն Ձեր կատարեալ է»։

Գ. Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԱՐԱՐԱՏ, 1907, Յունուար:

ԺԳ.

ՕՐՀՆԵՑԷ՛Ք ԶԱՍՏՈՒԱԾ ՀԱՐՑՆ ՄԵՐՈՑ

Ա.

Ինչո՞ւ ենք այստեղ, այս երիտասարդների խմբի մէջ, որոնք իրենց հանդիսի երկրորդ տարեդարձն են տօնում։ Ընտանեկան կեանքի մէջ ուրախութիւն է որդու, դստեր ծնունդը, ապա նրանց բախտաւորութիւնը և թոռնիկների լոյս աշխարհ գալը։ Այնուհետեւ տատիկն ու պապիկը գտնում են թոռնիկի կամ թոռնիկների ամենամտերիմ բարեկամները, խնամքի և գուրգուրանքի աղբիւրը, նրանց զբօսանքների, զբաղման, մանկական դաստիարակութեան առաջնորդն ու ընկերը։

Ի՞նչն է այս երեւոյթի հոգեբանական հիմունքը։ Սերունդի շարունակութեան մէջ իրենց անմահութեան գաղափարը տեսնել, որ միայն մարմնականը չէ, այլ առաւել եւս հոգեկանը։ Եթէ ժողովըրդի վերայ նայելու լինինք ինչպէս մի ամբողջութեան, ազգային միութեան վերայ, այստեղ էլ նոյն օրէնքն ու հասկացողութիւնն է իշխում, ինչ որ անհատական կեանքի մէջ։ Ազգը կամենում է իր նոր սերնդի մէջ տեսնել իր յարատեւութեան և անմահութեան երաշխիքը։

Ահա մենք էլ իբրեւ մի հոգեւոր հայր և մէկը հին սերունդի ներկայացուցիչներից, որի կեանքի արեւը դէպի արեւմուտք է թեքուել և մի օր հորիզոնի յետեւը պիտի անցնի, եկել ենք ուրախանալու, մեր որդւոց և թոռնիկների ազգութեան անմահութեան բերած բաժինը տեսնելու և ողջունելու։

Այսօր մեր մամուլի և հասարակական բնոյթ կրող հաւաքոյթների և բանախօսութիւնների մէջ շատ է յորջորջւում «ազգապահպանութիւն» խօսքը։ Եկեղեցին, բարեգործականը, մամուլը, կուսակցական կազմակերպութիւններն ու հայրենակցականները մտահոգուած են իւրաքանչիւրը իր որդեգրած գծով և իր հասկացողութեան համեմատ ազգապահպանութեան խնդրով։ Ազգապահպանութիւնը սերունդների յաջորդականութեան գաղափարն է, ոչ մարմնականը միայն, այլ մարմնականն էլ որպէս հոգեւոր անմահութիւն ձեռք բերելու մի միջոց և գործիք։

Բ.

Հոսանուտ է արտաքինը և միայն ու յաւիտենական հոգեկան ստեղծագործութիւնը։ Եւ այդ հոգեկան ստեղծագործութիւնն ու արժէքն է կեանքի բարիքը, որի գումարն ու էութիւնը անմահութիւն է կոչւում։ Առաքեալի խօսքը. «սերմանի մարմին շնչաւոր և յառնէ մարմին հոգեւոր», կարող ենք յարմարեցնել անհատական-կրօնական անմահութեան մտքի հետ նաեւ ազգային յաւիտենական կեանքի և անմահութեան գաղափարին։

Քի՞չ ազգեր կան, որոնք մեռած և անյայտացած են մարմնով, բայց ապրում են և պիտի ապրեն հոգւով։ Ո՞ւր են հին Եգիպտացիք, Ասորեստանցիք, հին Յոյներն ու Հռոմայեցիք։ Նրանք չկան մարմնով իբրև ազգ, բայց նրանց տաղանդի, հանճարի ստեղծագործութիւնները յարութիւն են առել գերեզմաններից, գիտնականների պեղումներով, հնագիտական գիւտերով, անհասկանալի համարուած նշանների և գրերի ընթերցանութեամբ, և խօսում են այժմ տուեալ ազգերի անցեալ կեանքի, տենչերի և յոյզերի մասին։ Աւերակը, քանդակը, արձանը, որմանկարը, պապիրուսը կամ մագաղաթը գրուած, այլեւս քարի կտոր չէ, ներկ կամ անշունչ նիւթ, այլ խօսուն, հրաշալի և յուզիչ լեզւով, յաճախ երգ և նուագ, սրտի ամենանուրբ լարերի վերայ, ի հարկէ հասկացողների համար։ Այժմ մենք Եգիպտացիների, Ասորեստանցիների մասին աւելի գիտենք, քան շատ կիսակիրթ կամ երկրորդական ազգերի մասին, որոնց հոգիները չեն ճախրել վսեմի, գեղեցկի և ճշմարտի, ուրիշ խօսքով յաւիտենականի և անմահութեան հորիզոնների վերայ։ Այսօր Էժիպտոլոջին, Ասիրոլոջին, Հետիտոլոջին դարձել է համալսարաններում դասախօսութիւնների, և մեծ գիտնականների ուսումնասիրութեան առարկայ, մարմնով անհետացած, բայց հոգւով, իրենց ստեղծագործութիւնների շնորհիւ գերեզմաններից յարութիւն առած ազգերի մասին։

Այդ անմահութեան աղբիւրը մարդկային հոգին է, անհատական և ազգային հոգին, ուր յղացւում, օրօրւում և կեանք են ստանում կրօնը, արուեստը, գիտութիւնը, յաւիտենական արժէքները, այնտեղ տիրող գաղափարականի համեմատ։ Գաղափարն է աղբիւրն ու սկիզբը ամենայն ստեղծագործութեան. եթէ հոգու մէջ յղացուած չէ պատկերը, ձեւակերպուած ճարտարապետական կոթողի գծերը ընդհանուր կերպով, եթէ չկայ բարձրագոյն տենչերի և տեսլեան, յոյզերի ել և էջերն ու ապրումները հոգու խորքում, յափշտակութիւնը դէպի մի վերացական և լուսաւոր աշխարհ,

ի զուր են ջանքերը թանձրացնել գեղեցկութեան փորձերի, բանաստեղծութեան և արուեստի որ և է ճիւղի մէջ։ Գաղափարն է յարատեւ կեանքի և յառաջադէմ շարժման աղբիւրը. եթէ չկայ հեռանկարը կեանքի առաջ, եթէ լուսոյ աստղ չունի կարաւանը արշալոյսին հասնելու, յաւիտենական հոգեւոր աղջամուղջն է նորա բաժինն ու գերեզմանը։ Գաղափարի հետ, անշո՛ւշտ, միանում են զգացմունքն ու երեւակայութիւնը և յղացուած միտքը խմորւում է, ձեւ ու կերպարանք ստանում ներքին մղումով ըստ տուեալ ունակութեան և տաղանդի։ Յղացման րոպէն սուրբ է, նուիրական և օրհնեալ։ Այդպիսի րոպէներումն է, որ ոչ միայն գաղափարն է ծնւում, այլ և կմախք, միս, արիւն և շունչ է ստանում այն։ Ամենքը բանաստեղծ չեն, արուեստագէտ, հոգեւոր կեանքի առաջնորդ կամ ղեկավար, սակայն ամենքը իրենց մասնակցութիւնն ու բաժինը ունեն այն հողն ու տրամադրութիւնը ստեղծելու, ուր աճում է կեանքը և պտղաւորւում, նման ծառի, որ անպտուղ կը մնայ, զուրկ կենդանի ծառ լինելու յատկանիշներից, եթէ արմատներ չունենայ հողի մէջ տարածուած, բուն, ճիւղեր, կանաչ տերեւներ, որ ժողովրդի ամբողջութիւնն է, եկեղեցին, մամուլը աշխատաւորները, հասարակական գործիչները...։

Գ.

Մեր ազգը մեռած չէ, բարեբախտաբար, բայց փոքրացած, ճղակոտոր եղած անագորոյն բախտի հարուածների տակ. մնացածն էլ իր 2/3 մասով հայրենիքից դուրս, հարեւան Վրաստանից ու Ադրբէյճանից սկսած, մինչեւ Ռուսաստանի խորքերը, և մի կարեւոր մասով էլ արտասահմանի բազմաթիւ ազգերի և պետութիւնների մէջ հողմացրիւ եղած։ Հայի բեկորներ կը գտնենք ամենուրեք, Մանչուրիայի սահմաններից, Հնդկաստանի և Պարսկաստանի վերայով, մինչեւ հիւսիսային և հարաւային Ամերիկայի արեւմտեան ափերը, ձուլման և անհետացման մեծ վտանգին ենթարկուած։ Մեր կեանքի եւ պատմութեան մի նոր շրջան է սկսւում, մեզ համար անծանօթ պայմանների մէջ: Գաղթական հատուածներ Հայաստանը շատ է տուել ամենահին ժամանակներից, բայց հայրենիքից ոչ շատ հեռու, բոլորովին քանդուած կամուրջներով, ինչպէս այժմ, տարածութեան տեսակէտով։

Բիւզանդական պետութեան արեւելեան, և միջին նահանգներում այնքան բազմաթիւ էին Հայ գաղթական հատուածները՝ այն էլ իշխանական տների և եկեղեցական նուիրապետութեան անմիջական ղեկավարութեան տակ, որ ոչ միայն դժուար չ՛եղաւ

իրենց գոյութիւնը պահել, այլեւ հնարաւոր՝ հետզհետէ միանալու, մի նոր հայրենիք և պետութիւն ստեղծելու՝ Կիլիկիայի բարձունքների վերայ։ Այնուհետեւ Հայերը մահմեդական իշխանութիւնների տակ ձուլման մեծ վտանգից ազատ էին համեմատաբար՝ իրենց տարբեր կրօնով և տարբեր քաղաքակրթութեամբ, թէպէտ զրկուած ազատ օդի և հոգեւորապէս աճման շատ ազդակներից։ Այդպիսի պայմաններումն էր, որ եկեղեցին իւր հոգեւոր դրամագլուխը ծախսեց և պահեց Հայ շունչն ու հոգին մինչեւ մեր օրերը։ Փա՛ռք այդ եկեղեցուն, պատի՛ւ այն կազմակերպութեան, որ մահմեդական տարբեր կրօնի և քաղաքակրթութեան համատարած ծովի մէջ, կարողացաւ պահել իւր ժողովրդի հոգին, դորա հետ, եւ մարմինը, ազգային դէմքը։ Որպիսի՜ երախտագիտական զգացմունքով պիտի կապուինք նորա հետ։

Դ.

Տարբեր է այժմ մեր ներկայ վիճակը։ Մեր ձեռքն է միայն մեր պատմական հայրենիքի մի փոքր մասը, աւելի քան մի միլիոն Հայ բնակչութեամբ, հայրենի աւերակներով, աւանդութիւններով և յիշատակներով, որ մեր կեանքի գոյութեան խարիսխը պիտի մնայ այսուհետեւ եւս։ Բայց մեր ժողովրդի մեծագոյն մասը հայրենազուրկ է և ցրուած։ Վտանգը միայն այդ չէ սակայն։ Մտահոգութեան առարկայ է յատկապէս, որ գաղթական Հայութիւնը մեծագոյն մասով ցրուած է այժմ քրիստոնեայ, իրենից աւելի քաղաքակիրթ եւ հզօր ազգերի մէջ, որոնց թւումն է և Խ. մեծ Ռուսաստանը։ Չկայ այլ եւս կրօնի և քաղաքակրթութեան այն մեծ տարբերութիւնը, որ մեզ պահել կարողանայ ձուլման ահաւոր գործողութիւնից մեզնից հարիւրապատիկ աւելի զօրեղ զանգուածների մէջ։ Լեզուի կորուստը, խառն ամուսնութիւնները, անտարբերութիւնը, դէպի մայրենի, դարաւոր եկեղեցին և անցեալը, միացեալ թշնամիներն են հետզհետէ ուծացման և կորստեան ճանապարհների վերայ։

Հայրենազուրկ և գաղափարազուրկ կեանքով ապրել չենք կարող. ազգային տեսակէտով ապաբախտ այս նոր պայմանների մէջ պէտք է զօրանայ և ուռճանայ հայրենիքի և հոգեւոր միութեան գաղափարը աւելի լայն և աւելի խոր, լուսաւոր հասկացողութեամբ։ Թանգ է մեր պատմական հայրենիքը, բայց հայրենիքի գաղափարը միայն հողն ու ջուրը չէ, լեռն ու դաշտը։ Հայրենիքի գաղափարը հոգեւոր է, աւելի լայն, քան նիւթական հայրե-

նիքի հասկացողութիւնն է. այդ ժողովրդի ոգին է, հանճարը, տենչերը, պատմութիւնը, ստեղծագործութիւնը, արուեստն ու գրականութիւնը, լեզուն, կրօնքն ու եկեղեցին։ Հայրենիքն էլ այդ իմաստով է, որ արժէք և յաւիտենականութեան երաշխիք ունի, մեր կենդանութեան ծառի արմատն ու բունն հայրենի հողում, աւելի ճիշդ այնտեղ հաստատուած ժողովրդի մէջ։ Հայ ազգը այդպիսի հասկացողութեամբ ոչ միայն երեք միլիոնից բաղկացած ժողովուրդ չէ միայն, այլ մեր ամբողջութեան կարեւորագոյն մասն են մեր նախահարց միլիոնաւոր հոգիները դարէ ի դար, որոնց հետ մենք հոգեւոր, սերտ հաղորդակցութեան մէջ ենք։ Նրանց աշխատութեամբ և նահատակութեամբ ստեղծուած է հոգեւոր հայրենիքի աւելի ընդարձակ գաղափարը, որով և սփիւռքի Հայութիւնը ապրել կարող է առանց նիւթական հայրենիքի մէջ լինելու բախտին, մի պայմանով միայն, որ մեր կապերը լինին կենդանի և ապրենք այն հոգեւոր շնչով, որով պատմական հայրենիքի վերայ ապրող ժողովուրդն է շնչել և շարունակում է շնչել,

Մի տաս տարի առաջ ազգային այսպիսի զգացմունքով և անցեալի սրբազան յուշերով ապրող սերունդը մտահոգուած էր, թէ մեր երկրում հաստատուած նոր իրաւակարգը չպիտի՞ ոչնչացնէ կրօնի հետ և ազգային զգացմունքը, գիտակցութիւնը։ Սխալներից ազատ չեն յեղափոխական մեծ շարժումները։ Բայց նոքա յաւիտենական բացասական և պղտոր դիրք չեն պահում անցեալի նկատմամբ։ Այսօր մեր հայրենիքում նկատւում են նշաններ և գրական շօշափելի ապացոյցներ, որ Հայ անցեալի գնահատութեան մի նոր շրջան է սկսւում, մի նոր կեանքի կերտման, պատուաստելով հնի շատ տարրերի հետ։ Դորա հետ յարութիւն է առնում և հայրենասիրական բնական զգացմունքը նոր թափով, որ ազգային ստեղծագործական կեանքի մեծ հիմունքներից մէկն է։ Խորհ. Հայաստանի արուեստի և գրականութեան, յատկապէս բանաստեղծական գրականութեան մէջ, Յովհաննէս Շիրազի և նմանների երեւան գալը, ժողովրդական գիւցազներգութեան հազարամեակի կատարումն և նորա շուրջն ստեղծուած գրականութիւնն ու արուեստը, և ուրիշ շատ երեւոյթներ, որ այստեղ մի առ մի թուել չենք կարող, գալիք ապագայի լուսաւոր նշաններ են։

Ե.

Այսօրուայ հանդէսը այս լուսոյ տակ ուխտի մի հանդէս է, ուխտի ոչ միայն պահելու մեր լեզուն, մեր հոգեւոր դէմքը, այլ

և զարգացնելու այն՝ նոր պայմանների համաձայն, կառչելով մեր ազգի յաւիտենական պահպանութեան և յարատեւութեան գաղափարին:

Մենք հին սերունդի ներկայացուցիչներս աշխատել ենք մերօրեան այդ անմահութեան գաղափարի անունով. այժմ եկել ենք մեր նոր սերնդի աշխատանքն օրհնելու: Պէտք է մաղթենք և աշխատենք, որ նման շարժում սկսուի եկեղեցական կեանքի, անցեալի ուսումնասիրութեան, մամուլի և հասարակական գործունէութեան այլ և այլ շրջաններում, որոնց գումարը կը լինի մեր հոգեւոր կեանքի և ստեղծագործութեան վերածնութիւնը:

Պատմութիւնը կեանքի լինելութեան և զարգացման ըմբռնողութիւնն է, կապակցեալ օղակներով, լուսոյ թելերով երեւոյթների կենդանի միութիւնը: Այս գիտակցութեամբ է, որ պիտի կերտուի հոգեւոր հայրենիքի, մեր յարատեւ գոյութեան գաղափարը ցրուած հայութեան մէջ, արեւածաղկի նման աչքներս ուղղուած դէպի լուսոյ և ջերմութեան աղբիւրը, որ մեր ստացած ժառանգութիւններն են, մեր եկեղեցին է, մեր գիրն ու գրականութիւնը, մեր պատմական հայրենիքը, այնտեղ ապրող ժողովրդով, մեր նիւթական և բարոյական սրբազան հողի պահապան հրեշտակը:

Այս հեռաւոր ափերի վերայ եւս նոր սերունդը ոչ միայն պիտի սովորի սիրել իր նոր հայրենիքը, ուր վիճակուել է բարի հիւրընկալութիւն գտնել, այլ և հին սերնդի նման ջերմ սիրով և հաւատով պաշտել և օրհնել «զԱստուած հարցն մերոց», եթէ ապրել ենք կամենում իբրեւ Հայ մեր ազգային, հոգեւոր դէմքի պահպանութեամբ: (*)

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅԱՍՏ. ԵԿԵՂ. Յունուար, 1941:

(*) (Խօսուած «Նոր Գիր»ի տարեդարձի հանդէսին, բայց ուղղուած մեր բոլոր գաղութների մեծաւորական նոր սերունդին):

ԺԴ.

ՊԱՐՏՔԻ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆԸ
ԵՒ
ՆՈՐԱ ԿԱՏԱՐՈՒՄԸ

«Ծառայք անպիտանք եմք, զոր ինչ պարտն էր առնել, արարաք»:

Ղուկ. ԺԷ. 10։

Ա.

Գերմանացի նշանաւոր փիլիսոփայ Կանտը, տիեզերքի մէջ երկու բարձրագոյն գեղեցկութիւն էր տեսնում. աստեղազարդ երկինքը և մարդկային հոգու մէջ պարտքի զգացումն ու գիտակցութիւնը։

Իրաւունք ունէր մեծ մտածողը։ Ի՞նչ աւելի գեղեցիկ բան, հմայիչ, խորհրդաւոր, քան աստղազարդ երկինքը իւր բազմաթիւ փայլուն աստղերով, ցրուած պայծառ և կապոյտ երկնակամարի վերայ։ Այդ գեղեցկութիւնը շատ աւելի խորանում, շատ աւելի հրաշալի է դառնում, եթէ գիտութեան բերած նորանոր փաստերով և իրողութիւններով աւելի ընդարձակւում է մեր ծանօթութիւնը աստղերի թուի, խմբակցութիւնների, շարժումների, փոխյարաբերութիւնների և անսահման հեռաւորութեան մասին։

Սովորական աչքի համար մի քանի հազարից աւելի չեն երեւացող աստղերը, բայց գիտական հետազօտութիւնների հետեւանքով, գիտենք, որ նրանց թիւը միլիոնաւոր է, աւելի ճիշդ անհամար, և մեզանից միլիոն միլիոն մղոններով հեռու և անսահման տարածութեան վերայ, իրենց յաւիտենական և կանոնաւոր ընթացքն են կատարում։ Սովորական մեր հասկացողութեամբ երկնքում միայն մի արեգակ կայ՝ երկնային որոշ մարմինների խմբակցութեամբ, որոնցից մէկն է մեր երկիրը, լուսինը և մի քանի այլ մոլորակներ, բայց որչա՜փ արեգակնային միութիւններ և համաստեղութիւններ կան, որոնց մասին մենք հասկացողու-

թիւն և գաղափար չունինք, այլ մասնագէտներին միայն մասամբ ծանօթ և կռահելի։ Արդա՛րեւ, գեղեցիկ է, անսահման մեծ, խորհրդաւոր աստեղազարդ երկինքը, և չօչափելի յայտարարը բարեպաշտի համար Աստուծոյ մեծութեան. «Երկինք և երկիր պատմեն զփառս Աստուծոյ»։

Բայց հոգեւոր և բանական մարդկանց համար կայ մի երկրորդ երկինք, որ մարդկային հոգին է իւր իմացականութեամբ, իւր զգացմունքով, իւր երեւակայութեամբ, իւր յիշողութեամբ, կամքով։ Սոքա էլ պակաս խորհրդաւոր չեն, պակաս հրաշալի և գեղեցիկ, մեր ներքին աշխարհի երկնակամարի աստղերը։ Արտաքին տիեզերքը տեսնում, վայելում ենք նորա գեղեցկութիւնը և սքանչանում մեր ներքին աշխարհի իմացականութեամբ, ուրեմն և կարեւորագոյնը մեր հասողութեան նկատմամբ։ Այդ ներքին տիեզերքի երկնակամարի ամենափայլուն աստղերից մէկը պարտքի գիտակցութիւնն է եւ նորա կատարումը: Որովհետեւ մեր կենդանութեան ծաղիկն ու պտուղն է այն, ընթացքը, բովանդակութիւնը և նպատակը մեր գոյութեան, մեր հոգեւոր գոյութեան։

Բ.

Բայց մեծ փիլիսոփայից շատ դարեր առաջ Պաղեստինում հանդէս էր եկել Յիսուս Նազովրեցին, որ փիլիսոփայական դպրոց չէր անցել և ոչ էլ Էմմանուէլ Կանտի նման հանդէս եկել իբրեւ մեծ մտածող, տրամաբան, քննադատ մարդկային բանականութեան։ Բայց բիւրեղացած էր նա, զտուած աստուածային սիրոյ և ճշմարտութեան բովի մէջ, իւր պարզ քարոզութեամբ ու կենդանի օրինակով պատկերը տուել հոգու բարձրագոյն գեղեցկութեան, իւր աշակերտների և հետեւողների սրտի տախտակի վերայ իրական կեանքի ուղին, բովանդակութիւնն ու նպատակը դրոշմելով. «Ծառայք անպիտան եմք, զոր ինչ պարտն էր առնել, արարաք»։

Այս պարզ նախադասութեան մէջ էր ամփոփուած մարդկային հոգու գեղեցկութեան էութիւնը. պարտքի կատարման լուսաւոր ճշմարտութիւնը։ Սէր, գթութիւն, ճշմարիտ իմացականութիւն, հաւատոյ ջահով պայծառացած, իրար լրացնող մտքերն են այն ներքին իրականութեան, որ պարտքի կատարումն է կոչւում։ Դրանք իրար հետ շաղկապուած, իրարից բղխած և իրար ամբողջացնող յատկանիշներն են լուսաւոր հոգիների, որ ծարաւ ունին դէպի կենդանութեան աղբիւրը յստակ, եղջերուների նման։ Պարտ-

քի գիտակցութեամբ և կատարմամբ է մեր կեանքը դառնում բովանդակալից, մեր անձը եղբայրասէր, մեր աշխատանքը մաքուր, մեր գոյութիւնը յաւերժական նպատակների միջոց և գործիք, գնուած և նեղ հաշիւների, եսականութեան չնչահեղձ աշխարհից դէպի երկնային կեանքի ոլորտները բարձրացնելով:

Խնդիրը տեսութիւնը չէ, փիլիսոփայական և մանուածապատ բացատրութիւնները բանականութեան հիմունքներով, այն էլ շատ քիչերին մատչելի, այլ ապրումը ներքին, հաւատով ապրումը պարտքի գիտակցութեան, որ գործ և իրականութիւն է դարձնում այն: Պարտքի գիտակցութեամբ և կատարմամբ մենք Աստուծոյ գործակիցներն ենք դառնում, Նորա անսահման սիրոյ և նախախնամութեան պաշտօնեաները: Պարտքի կատարումը գործնական քրիստոնէութիւնն է, իւրացումը աւետարանական քարոզութեան:

Գ.

Հասկանալի է, որ Նորա կատարումը զանազան անձանց մէջ զանազան ձեւ ու կերպարանք, ուղղութիւն է ստանում՝ համեմատ իւրաքանչիւր անհատի կոչման, պաշտօնի, գործի, պատրաստութեան և ունակութեան: Աղքատ և գրչի տէր մարդուց չպէտք է սպասել, որ հարիւրաւոր կամ հազարաւոր դոլլարների զոհաբերութիւն անէ, և ոչ էլ հասարակ արհեստաւորից պիտի սպասենք, որ նա գրքեր գրէ, թերթ հրատարակէ, մտքերի լուսաւորութեան առաջնորդ դառնայ: Բայց եթէ ամէն մէկը իւր դիրքի եւ իւր նիւթական և բարոյական կարողութեան համապատասխան իւր պարտքը կատարէ, նպաստած կը լինի մարդկութեան, ազգի, եկեղեցու և ընտանեկան աշխարհի կատարելութեան կառուցման մեծ գործին: Հին փիլիսոփայի խօսքի համեմատ «մարդը հասարական կենդանի է», իսկ հասարակական կեանքի հիմքն ու զարգացումը կախուած է պարտքի գիտակցութիւնից և կատարումից: Յաճախ գանգատի խօսքեր ենք լսում, թէ մեր հարուստները, ունեւորները իրենց պարտքը չեն կատարում դէպի եկեղեցին, դէպի դպրոցը, ազգային կարիքները. զլացողների դէմ գանգատը, մինչեւ իսկ պարսաւը, տեղին է երբեմն: Բայց մոռանում ենք, որ մենք էլ պարտք ունինք կատարելու, որքան և փոքր լինի այն. դրանց կատարումն ու զանցառութիւնը նոյնչափ գնահատելի է կամ պարսաւելի, ինչպէս մեծերի նկատմամբ: Ջրերի մեծ հոսանքները կաթիլներից են բաղկացած, աղբիւրներից, վտակներից. եթէ սովո-

րենք և կատարենք մեր կաթիլ պարտքերը, հանրութեան դաշտերը ոռոգող ջրերի պակասութիւն չենք զգայ։ Մեղադրում ենք ժողովուրդի անտարբերութիւնն ու անփութութիւնը իրենց պարտքի կատարման մէջ, բայց աւելի մեծ յանցանք են գործում առաջնորդները, հասարակական իրենց դիրքը, միտքն ու գրիչը գործադրելով կեղծիքի և մոլորութեան հաստատութեան համար, անձնական կամ նեղ կուսակցական և «թայֆայական» հաշիւներով։ Ուրիշների աչքի մէջ «շիւղ» չպիտի որոնենք, մեր սեպհական պակասութիւնները մոռանալով. լաւագոյն կանոնն է, նախ ինքն իրեն հաշիւ տալ, ուրիշներին անցնելուց առաջ։

Դ.

Գեղեցիկ է և իմաստալից աւետարանական խօսքը. «որ ի փոքուն հաւատարիմ է, ի վերայ բազմաց կացուցից»։ Կեանքը կազմուած է փոքր երեւոյթներից և իրողութիւններից. նրանց կատարումից է կախուած մեծ արժէքների յաջողութիւնը։ Մոզայիկ պատկերի բաղկացուցիչ մասերը գոյնզգոյն քարի կտորներ են, բայց նրանց դասաւորութիւնը տալիս է կենդանի տեսարան կամ նկար։ Որքա՜ն փոքր է մայրական աշխատանքը ըստ երեւոյթին. երեխային ժամանակին լուանալ, սնունդ տալ, քնացնել. խօսել, քայլել սովորեցնել, նորա հետ խաղալ, զբաղեցնել... ամենօրեայ փոքր, չնչին գործողութիւններն են, բայց որոնց հետ է կապուած թանկագին էակի կեանքի պահպանութիւնը, առողջութիւնը, մարմնական և հոգեկան աճեցողութիւնը։ Զարմանում ենք գիտնականների ընդարձակ ծանօթութեան և հմտութեան վերայ, բայց այդ գիտութիւնն ու իմաստութիւնը միանգամից չէ հաստատուած նորա գլխի մէջ, այլ երկարատեւ և կարգաւորեալ աշխատանքի, մտքերի և ծանօթութիւնների հետզհետէ իւրացման արդիւնքն է՝ տասնեակ տարիների ընթացքում։ Տունը միանգամից չի շինւում, այլ նախ տեղն է հարթւում, հիմքը փորւում, ապա հետզհետէ պատերն են բարձրանում, տանիքը ծածկւում, դրսից և ներսից յարդարւում՝ բնակարան դառնելու համար։ Այսպէս է և պարտքի կատարումը, ընտանեկան, համայնական, եկեղեցական-ազգային և համամարդկային շրջաններում։

Ե.

Սովորենք ճշդապահ լինել մեր պարտքի կատարման մէջ, սկսած երեխայութեան, պատանեկութեան օրերից, սովորութիւն և

կանոն դարձնելով այն մեր ամբողջ կեանքի ընթացքում։ Դաստիարակչական մեծ և ճշմարիտ ուղղութիւնն է այդ, որին պիտի ենթարկուին ամէն հասակի, կարգի և կոչման տէր մարդիկ, եթէ կամենում ենք անսայթաք լինի, գոնէ պակաս անսայթաք լինի մեր անհատական և հասարակական կեանքը։ Գիտակցական հասկացողութեան նպաստում է նաև մեքենական սովորութիւնը․ մենք առանց դժուարութեան զարթնում ենք որոշ ժամին, երբ սովորութիւն ենք դարձրել այդ ժամին զարթնելը։ Սովորենք լինել ճշգապահ մեր խօսքի, մեր գործի, մեր ընթացքի մէջ, դորանով կը դիւրանայ և մեր պարտքի կատարումը, որ կեանքի յաջողութեան և բարոյական կատարելութեան ուղին է։

Աստուած օգնէ մեզ պարտքի գիտակցութեան և կատարման նուիրական գործի մէջ, որպէս զի մի օր Նորան հաշիւ տալիս, ասել կարողանանք․ «Ծառայք անպիտան եմք, զոր ինչ պարտն էր առնել, արարաք»։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅԱՍՏ. ԵԿԵՂ.ԵՑԻ Մարտ, 1940.

ԺԵ.

"ՄԻ՛ ԵՐԿՆՉԻՐ, ԲԱՅՑ ՄԻԱՅՆ ՀԱՒԱՏԱ՛"

(ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ)

Ա.

Այս խօսքերն ուղղեց Տէրը ժողովրդապետ Յայրոսին (Մատթ. Ե. 36), որ եկել էր խնդրելու Նորան, իւր տունը գնալու և մահամերձ դստերը բժշկելու։ Միջանկեալ դէպքեր ուշացրել էին երթը և ահա մարդիկ են գալիս տնից, յայտնելու, թէ աղջիկը մեռաւ, այլեւս պէտք չկայ Վարդապետին նեղութիւն տալու։ Յիսուս ուղղում է Նորան վերոյիշեալ խօսքերը և գնում է բժշկելու։

Հաւատոյ զօրութեան այս միտքը կրկնուած է աւետարանների մէջ այլ և այլ առիթներով. տեռատես կնոջ (Մատթ. Թ. 22), երկու կոյրերի (Մատթ. Թ. 29), քանանացի կնոջ դստեր (Մատթ. ԺԵ. 28) բժշկութեան առիթներով։ Հաւատոյ զօրութիւնը մեծ է, լեռներն իսկ շարժելու չափ (Մատթ. ԺԷ. 19), հաւատով կատարուած աղօթքը լսելի է ըստ ամենայնի (Մատթ. ԻԱ. 22), երկմտութիւնը, թերահաւատութիւնը բացասական, ինչպէս Պետրոսի ընկղմիլը ծովի մէջ (Մատթ. ԺԴ. 31)։

Մենք մեր հաւատացեալներին, մտաւորականներին և նոյն իսկ «անհաւատներին» կ'առաջարկէինք կարդալ այդ հատուածները, կարդալ ոչ արտաքին բառերի հասկացողութեամբ, այլ մտքի, էութեան։ Մարդկային հոգին բարդ է, բազմակողմանի Նորա ըմբռնումների, ապրումների ձեւերն ու կերպերը. Նոցանից իւրաքանչիւրը իւր արտայայտութեան լեզուն և առանձնայատկութիւններն ունի։ Այլ է բանաստեղծութեան լեզուն և այլ փիլիսոփայութեան, այլ է նկարչութեան միջոցներն ու արտայայտութեան ձեւերը և այլ ճարտարապետութեան, երաժշտութեան։ Օրինակով խօսենք։ Բանաստեղծը կնոջ աչքերը նմանեցնում է ծովի խորութեան, երկնքի մաքրութեան, կապոյտին, որ իրապէս սխալ է եւ անհամապատասխան իրականութեան: Մեր հայրերը հայ տաճարների գմբէթները անուանել են «երկնանման խորան», գոթական ճարտարապետութեան աշտարակները արուեստագէտի աչքում հոգիների

թռիչքն է, սլացումը դէպի երկնայինը, վերացականն ու բնազանցականը, որ իրապէս ոչ միայն ճիշդ չէ, այլ և անհեթեթ է։ Ով երաժշտութիւնից հասկացողութիւն չունի, նորա մէջ ոչ լուսնի ծագումը կը տեսնի, ոչ ծովի ալիքների ծփանքը խաղաղ։ Նուրբ, չինական անօթին, որ դողում է, կարծես, երբ ձեռք ես տալիս, և հնչում զանգակի նման, եթէ կամենանք դարբնի մուրճով ցանկացած ձեւը տալ, կը փշրուի, կը փոշիանայ։ Այսպէս էլ կրօնական ապրումները, որ բարձրագոյնն է ու նշանակալիցը, նուրբը հոգեկան ապրումների մէջ, իւր արտայայտութեան ուրոյն լեզուն ու եղանակն ունի, հրաշապատում, պատկերաւոր, ըստ երեւոյթին ոչ իրական, բայց ըստ էութեան ամենամեծ ճշմարտութիւններ։ Ո՛հ, մի՛ մօտենաք նորան դարբնի կոշտութեամբ, այդ ազնիւ և նուրբ անօթին, որ հաւատ է կոչւում։

Բ.

Առանց հաւատոյ չկայ բժշկութիւն, բարոյական բժշկութիւն, ոչ հիւանդ անհատի, ոչ հիւանդ ազգի և ոչ հիւանդ մարդկութեան համար։ Այս ահաւոր, տենդերակործան պատերազմը մարդկութեան հիւանդութեան հետեւանք կարելի է համարել, Աստուծոյ պաշտաման փոխարէն, նիւթի պաշտաման անցած։ Առանց հաւատի կեանքը դատարկութիւն է, յուսահատութիւն և մահ։ Նա ծակ կարաս է, առանց կարող լինելու բովանդակութիւն պահել։ Ինչո՞ւ եմ ապրում. այս հարցին միայն հաւատոյ լեզուով կարելի է պատասխանել, հաւատոյ տարբեր, բայց ըստ էութեան, միակ լեզուով։ Ապրելու համար պէտք է հաւատանք կեանքի էութեան և նորա նպատակին։ Նա մեր ձգտումն է, մեր տենչը, դէպի բարձրագոյնը, մեր համոզումն է, թէ ի զուր չենք ապրում, թէ չպիտի կէս ճանապարհին մնանք, այլ պիտի հասնենք լուսոյ փարոսին, նոյն իսկ մեր ալեկոծ կեանքի փոթորիկներից յետոյ։ Հաւատը անհատին, ուղղութեան և մարդկութեան դէպի յաւիտենականութիւն է տանում։ Ով չի հաւատում յաւիտենականութեան, նա մեռած է արդէն. մեռած է ոչ միայն մարմնով, այլ այն հոգեւոր և երանաւէտ կեանքի համար, որ բարոյական կատարելութեան ձգտում է կոչւում, անսահման տարածութեան հորիզոնների վերայ, երկնքի և երկրի մերձեցումը, սիրոյ համբոյրը փոխադարձաբար։

Մեր հին ձեռագիրների մէջ անյայտ մի հեղինակի բանաստեղծութիւն ունենք, նոյն իսկ ժողովրդական բանահիւսութեան անցած, գուցէ և ժողովրդականից գրաւորին։ Մենք հրատարակել

ենք այն մօտաւորապէս 45 տարի առաջ Էջմիածնի «Արարատ» ամսագրի մէջ, առանց կրկին անդրադառնալու առիթն ունենալու, ուստի և մանրամասնութիւնները թողել են յիշողութիւնից և միայն ընդհանուր բովանդակութիւնը մնացել: Երկնքի և երկրի վէճն է այն:

Երկինքը պարծենում է մի առ մի թուելով իր առաւելութիւններն ու գեղեցկութիւնները. այնտեղ են արեգակը, լուսինը, անհամար աստղերը, առաքեալների և սուրբերի դասերը, հրեշտակները: Այնտեղ է և վերջոյ Աստուծոյ աթոռը: Երկիրն էլ պատշաճ պատասխաններով իր գեղեցկութիւններն է յիշում. իր ծոցից են բուսնում երփներանգ և անուշահոտ ծաղիկները, դալարագեղ և ակնապարար մարգագետինները, պտղատու ծառերն ու խորհրդաւոր անտառները, իւրն են լեռներն ու ձորերը, զովարար աղբիւրներն ու կարկաչուն վտակները, գետակներն ու գետերը, որոնք իրենց շուրջը կենդանութիւն են սփռում, ծովերն ու ովկիանոսները...: Առաքեալներն ու սուրբերն էլ երկրի ծնունդ են և միայն իրենց գործով և սրբութեամբ երկինք բարձրացել և հրեշտակներին խառնուել: Աստուծոյ աթոռը, ճշմարիտ է, երկնքումն է, բայց պատուանդանը երկրի վերայ հաստատուած. վերջապէս, եթէ Աստուած երկնքումն է, Նորա Որդին երկիր իջաւ, մարդկանց մէջ ապրեց, որպէս զի նրանց երկնքի ճանապարհը ցոյց տայ:

Վէճը վերջանում է հաշտութեամբ, փոխադարձաբար իրար առաւելութիւններն ու գեղեցկութիւնները ընդունելով: Երկինքը խոնարհում է դէպի երկիրը, և երկիրը բարձրանում դէպի երկինք իր լեռների սպիտակափառ գագաթներով, գրկում են իրար և սիրոյ համբոյրը տալիս (հորիզոնի գծերով):

Ահա պատկերաւոր կերպով կեանքի էութիւնն ու իմաստը, կատարելութեան, հոգու և հոգեւորի անմահութեան ուղին, անհատների, ազգերի և մարդկութեան համար, երկիրը դեպի երկինք բարձրացնել եւ իրար կապել: Հաւատով լցուած անձնաւորութիւններն են, որ աստուածամերձ են դառնում, ներշնչւում իրենց այդպիսի կոչման և առաքելութեան մէջ: Դրանք մեծ կրօնների հիմնադիրներն են, մարգարէներն ու առաքեալները: Տիեզերապարփակ բանաստեղծներն ու արուեստագէտները, մեծ քարոզիչները, որ ոտքերը գետնի վերայ, բայց հաւատով և սիրով լցուած, սաւառնել են երկնային ոլորտներում, իրենց յետեւից տանելով բազմութիւնները: Դրանք մեծ գիտնականներն են, որոնք անսահման աշխատութեամբ թափանցել են անցեալ դարերի

խորքը, այնտեղից. մարդկութեան փորձառութիւնից լոյս և ջեր-մութիւն բերելու նոր սերունդների համար։ Այդպէս են մեծ փիլի-սոփաներն ու բնագէտները, որոնք խորասուզուելով տիեզերական առեղծուածների և բնութեան երեւոյթների վերլուծութեան մէջ, մերձեցել են անսահման ափերին և ժամանակի թաւալման խոր-հուրդներին, սքանչացել նրանց գեղեցկութեան և իմաստուն կարգաւորութեամբ, և վերանալով, ծունկ չոքել Աստուծոյ փառ-քի և մեծութեան առաջ, երկրորդ Ս. Գիրք տալով, որ բնու-թեան մեծ գիրքն է, համամարդկային նշանակութեամբ։ Ահա հաւատոյ այլ և այլ երեւոյթները մարդկանց հոգիների մէջ, հաւա-տոյ անարիւն մեծ պատերազմը պատմութեան մէջ։

Գ.

Այսօր Թարգմանչաց, Հայ լեզուի, գրականութեան, արուես-տի և մշակոյթի մեծ վաստակաւորների յիշատակն ենք կատարում, որոնք նման դեր են կատարել Հայ ժողովրդի նկատմամբ, մեր մեծ երախտաւորների և լուսաւորիչների յիշատակը։ Անցել են հազարաւոր տարիներ, բայց նրանք չեն մեռնում, կենդանի են և կենդանի պիտի մնան, որովհետեւ ապրել են հաւատով, գործել անմահութեան և անմահացնելու գաղափարով։

Ինչո՞ւ էր Ս. Մեսրոպը երկրէ երկիր ընկել, ինչո՞ւ էր այս և այն դռները ծեծում, որպէս զի իր և իր ազգի համար անմա-հութեան դուռը բացուի։ Ինչո՞ւ էր Ս. Սահակը տանջւում, տքնում, գիշերուայ լոյսը ցերեկի հետ խառնում, Ս. Գիրքը թարգ-մանելով, որովհետեւ հաւատում էր անմահութեան գաղափարին իր և իր ազգի համար։ Ինչո՞ւ բարեսէր Վռամշապուհը իր գանձի դռները բացած օգնութեան էր հասնում Հայ գրի գիւտի յաջողութեան, դպրոցների բացման, որովհետեւ հաւատում էր անմահական գանձի գոյութեան և լուսոյ թագաւորութեան մշտըն-ջենաւորութեան, աւելի զօրաւոր՝ ազգի պահպանութեան և ապա-գայի համար, քան արդէն ճեղքուած իր թագաւորութիւնը։ Թարգմանչաց հոյլը դեգերում է օտար երկիրները լուսաւորութեան կեդրոնները, որպէս զի հայրենի երկրում էլ լուսոյ ջահեր և ջեր-մութեան հնոցներ վառել կարողանան, որոնք անմար են և մշտըն-ջենական, անմար պահելով նոյնը ժողովուրդի և՛ հոգու մէջ։

Այս նոյն հաւատով են գործել, աշխատել, աղօթել Նարե-կացիներն ու Շնորհալիները, Որոտնեցիներն ու Տաթեւացիները, և նոյն գաղափարի համար բազմաթիւ գործողները, որոնց դէմքերը

են, [illegible]ուած են Հայ պատմութեան երկնակամարի վերայ, լուսաւոր աստղերի նման։

Բայց անմահ են ոչ միայն մեծ հոգիները, այլ և իւրաքանչիւր հոգի, որ հաւատում է իւր կոչմանը՝ համեստ շրջանակի մէջ անգամ։ Կենդանարար աղբիւրներն ու կարկաչուն վտակները, գետակներն ու գետերը, որոնք հոսում են իրենց հովիտներով, և առատութիւն ու կենդանութիւն պարգեւում իրենց ափերին, կաթիլներից են բաղկացած։ Ապա, ուրեմն, ամենքն իրենց տեղն ունեն, ըստ չափու և ըստ կարողութեան։ Ժողովուրդն է կենդանի ծառի արմատն ու բունը, որ ծաղիկներ և պտուղ է տալիս։

Դ.

Հաւատա՛, Հայ ժողովուրդ, հաւատա՛ քո անցեալին, քո պատմութեան, քո հայրերի Աստծուն, նրանց անմահ և կենդանի հոգուն, և դու չե՛ս մենակ։ Տե՛ս, կոյրերը բժշկւում են հաւատով, անդամալոյծները քայլում, մեռելներն իսկ յարութիւն առնում։ Հաւատա՛, թէ պիտի ապրես, և այդ հաւատով գործի՛ր, աշխատի՛ր, տքնի՛ր, յուսա՛... և դու չե՛ս մենակ՛։ Լեզուի, կրօնի, գրականութեան, արուեստի, մշակոյթի պահպանութիւնն ու պաշտամունքը գիտակցական, կենդանութեան աղբիւրն է, և հիւանդութեան, մահ պատճառող հիւանդութեան, դեղն ու դարմանը։

«Մի՛ երկնչիր, բայց միայն հաւատա՛»։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅԱՍՏ. ԵԿԵՂ. Հոկտ., 1942.

ջեր–

ԺԶ.

ՅԻՍՈՒՍԻ ԼՈՒՍԱՒՈՐ ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Եւ չիք այլով իւիք փրկութիւն, զի եւ ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ, որով արժան իցէ կեալ մեզ:

Գործք Առաք. Դ. 12.

Ներկայ ժամանակը լի է հակասութիւններով Նորա մասին եղած կարծիքների նկատմամբ։ Ոչ միայն Նորա արժէքը ստորացնողներ կան, որպէս քիչ նորութիւն բերող, ինչպէս հրեաներն են, այլ և պատմական գոյութիւնը ժխտող, ինչպէս հին և նոր հակակրօնականները և անաստուածեանները։

Ճշմարիտ է, որ մենք պատմական տեղեկութիւններ, ժամանակակից աղբիւրներ Նորա կեանքի և գործունէութեան մասին չունինք, ներկայ հասկացողութեամբ. ժամանակով Նորան մօտ օտար պատմիչների՝ հրեայ Յովսէփոսի և լատին Սուետոնի և Տակիտոսի՝ երկերի մէջ եղած համառօտ տեղեկութիւնները՝ ներմուծումն են ընդունուած գիտնականներից ոմանց կողմից, թէպէտ դեռ եւս վիճելի են վերջին երկուսի մասին պնդումները. բայց մենք պէտք չունինք օտար աղբիւրների դիմել, Նորա պատմական գոյութիւնը հաստատելու համար։ Գործի և անձի, երեւոյթի և պատճառի տրամաբանական հետեւողութիւնը բաւական է մեզ, անհիմն համարելու ամենայն մի ժխտում Նորա գոյութեան մասին։ Չկար քրիստոնէութիւն և յանկարծ երեւան է գալիս պատմութեան մէջ, կայ պտուղը, պէտք է լինի եւ ծառը, անհերքելի ապացոյցը Նորա պատմական գոյութեան։

Ճշմարիտ է նաեւ, որ մեր աւետարանները պատմական աղբիւրներ չեն ներկայ հասկացողութեամբ. նոքա գրուած են վարդապետելու և դէպի Յիսուսի գործն ու անձը հաւատ ներշնչելու նպատակով։ Եղել են գիտնականներ, որոնք ժխտել են նրանց պատմական արժէքը։ Սակայն ոչ մի գրական երկ չէ ենթարկուել այնպիսի մանրազննին քննութեան, այն էլ մի քանի սերունդի գիտնականների կողմից, ինչպէս աւետարանները, և արդիւնքը եղել է

այն, որ հաստատուած է, թէ Նոքա ներկայ հասկացողութեամբ պատմական չլինելով հանդերձ, զուրկ չեն պատմական արժէքից իրենց էութեամբ, թողում ասել, որ Պօղոսի վկայութիւններն ունինք, հնագոյնները ոչ ուշ, քան մօտաւորապէս քսան տարի Յիսուսի խաչելութիւնից յետոյ։

Բ.

Բայց աւետարանների մէջ էլ Նորա երեսնամեայ կեանքի շրջանին մասին, գրեթէ տեղեկութիւն չունինք, այլ փրկչական գործունէութեան կարճ ժամանակի մասին, մի հանգամանք, որ առիթ է տուել հնագոյն ժամանակներում բազմատեսակ «Մանկութեան աւետարաններ» ստեղծել առասպելական բովանդակութեամբ, իսկ նորագոյն ժամանակներում էլ ոչ պակաս առասպելական ենթադրութիւններ, Նորա կրթութիւնը Եգիպտոսի կամ վարդապետութիւնը արեւելեան կրօնների հետ կապելով։ Սակայն այդ կարճատեւ փրկչական գործունէութիւնը, ընդամենը երեք տարի և երեք ամիս, որ արտացոլում է աւետարանների մէջ, այնքան հարուստ է, բովանդակալից, որ լիովին բաւական է թափանցելու Նորա լուսաւոր անձնաւորութեան և վարդապետութեան մէջ և ջրելու սնամէջ ամեն տեսակ ենթադրութիւններ։

Նորա վարդապետութիւնն ու կրօնական հայեացքները նման չեն ոչ պղատոնական փիլիսոփայութեան, որ այդ ժամանակ իշխող էր Աղեքսանդրիայում, մանաւանդ Նոր պղատոնականութիւնը, ուրեմն և Եգիպտոսի հետ կապելու ոչ մի հիմք. ոչ բուդդայականութեան, որի նմանութիւնները պատահական են և արտաքին. և ոչ բուն հրէութեան ժամանակակից դպրոցներին կամ քաղաքական կուսակցութիւնների հասկացողութիւններին։

Խնդրի պարզաբանութեան համար բաւական է ամենաթեթեւ համեմատութիւն կատարել Յիսուսի և Պօղոսի անձերի և վարդապետելու եղանակների մէջ։ Պօղոսը փարիսեցի էր և ժամանակի նշանաւոր Գամաղիէլի աշակերտ, հետեւող Նոր պղատոնականութեան այլաբանական մեկնութեան, գիտէ յունարէն և գրում է նոյն լեզուով, իսկ Յիսուսի մէջ դրանց հետքը չենք տեսնում։ Նորա վարդապետութիւնը գրքերից ուսած փիլիսոփայութիւն չէ, այլ կենդանի անձից բղխած կենդանարար աղբիւր։ Իսրայէլի կրօնի լաւագոյն կողմերն իսկ, Տասնաբանեայ պատգամները, Լերան քարոզի մէջ, համեմատութեան եզրեր են միայն, իւր բարձրագոյն մտքերը հասկանալի դարձնելու, չժխտելով նրանց արժէքը։ Բուդ-

դայականութեան սիրոյ գաղափարի նմանութիւնն էլ արտաքին է, տարբեր իրենց մերձեցումներով. մի տեղ յոռետեսական, կեանքի ժխտման հետ կապուած, իսկ միւսը անվերապահ անձնուիրութեան, վստահութեան և հաւատոյ առ Աստուած։

Գ.

Ինչպէ՞ս պէտք է հասկանալ ապա Յիսուսի անձնաւորութիւնը և վարդապետութեան առեղծուածը։ Եթէ քիմիկոսի աչքով և մեթոդով կը մօտենանք խնդրին և նորա լուծման, ի զուր կը լինի մեր աշխատանքը։ Պատմական մեծ անձնաւորութիւններն ու նրանց գործը չեն ենթարկւում բաղկացուցիչ մասերի վերլուծութեան, ինչպէս նիւթը, օդն ու ջուրը։ Որքա՛ն և խորանանք գիտութեան բերած միջոցներով և քննութեան եղանակներով իրերի և երեւոյթների էութեան մէջ և աշխատենք գտնել նրանց ծագման գաղտնիքները, կը պարզուի աւելի, որ մեր գիտութիւնը սահմանաւոր է և մեր չգիտցածն աւելի մեծ։ Այս առաւել ճշմարիտ է հոգեկան մեծ հանճարների ներքին կեանքի և ստեղծագործութեան համար։ Ձայնի և լսողական բնախօսական, արտաքին օրէնքներով հասկանալի չէ մեզ համար երբեք, թէ ինչպէ՞ս է ստեղծուել Բեթհովենի հոգու մէջ Նորա իններորդ սիմֆոնիան։ Այդ խորհուրդ է, գաղտնիք, երկնային շնորհք, որ չի ենթարկւում մեր զգայարանքների և բանականութեան վերլուծական կարողութեան իւր ամբողջութեամբ։

Այսպէս «խորհուրդ» է և «սքանչելիք» բարձրագոյն մտքով և Յիսուսի անձնաւորութիւնը պատմութեան մէջ, որքան և պատմական հողի վերայ կանգնած, թափանցել աշխատենք Նորա անձի, վարդապետութեան և կեանքի մէջ։ Այդ խորհուրդն ու սքանչելիքը Նորա կրօնն է, յարաբերութիւնը Իւր Հօր Աստուծոյ հետ, հոգեկան ամենաբարձր ապրում՝ բոլոր տեսակի հանճարների, արուեստագէտների ապրումների համեմատութեամբ, ուստի և Նորա բերածը ամենամեծ բարիքը մարդկութեան համար։

Քրիստոնէական կրօնը ամենամեծ բարիքը համարելով պատմութեան մէջ, բայց նա ամեն ինչ չէ, սխալ չհասկանանք։ Նա իւր որոշ շրջանն ունի, գործունէութեան և նպատակի որոշ սահմաններով։ Կեանքի, գիտութեան, տեխնիկայի, տիեզերքի հետ կապուած բոլոր հարցերի պատասխանը քրիստոնէական կրօնի կամ աւետարանների մէջ որոնել և այնտեղից լուծումն սպասել, կը լինի սխալ, միակողմանի, մինչեւ իսկ ծիծաղելի։ Նա քաղաքական, տնտեսական, բնագիտական և նման խնդիրներով չէ զբաղուած։

Նորա գործունէութեան նպատակը աւելի բարձր է, մարդը իւր ներքին աշխարհով, հոգեկան շարժումների, ձգտումների և յառաջդիմութեան մէջ, կեանքին և պատմութեան բովանդակութիւն և իմաստ բերող։ Նա աղբիւրն է, որոնելու և գտնելու յաւիտենականը անցաւոր ժամանակի մէջ։

Այսպէս էր Յիսուսի բերած կրօնը իւր կեանքի օրինակով և վարդապետութեամբ։ Նա ապրում էր իւր Աստուծոյ հետ, և իւր Աստուծոյ համար, հնազանդ Նորա կամքին և ամեն ինչ ենթակայ այս գաղափարին։ Եւ այդ Աստուածը Նորա երկնաւոր Հայրն է, որի սիրոյ, գթութեան և ողորմութեան խնամքի տակ ապրում են բոլոր արարածները, նոյն իսկ դաշտերի ծաղիկներն ու երկնքի թռչունները։ Բայց ամենից թանգը մարդն է, մարդկային հոգին, այն թանկագին մարգարիտը, որի համեմատութեամբ երկրորդական է ամենայն ինչ։ Հօր անսահման սիրոյ և գթութեան առարկան է այն, որ լուսաբանում է բազմաթիւ առակներով և յատկապէս Անառակ որդու պատմութեամբ։ Իրաւական կարգաւորութեան փոխարէն, անձնուիրութեան, սիրոյ և եղբայրութեան օրէնքն է քարոզում և մարմնաւորում Իւր օրինակով։ Սիրոյ գաղափարը, առ Աստուած, հաւատոյ և անվերապահ վստահութեան հետ, երկինքը և երկիրը իրար կապող զօրութիւնն է մարդկային հոգու մէջ, կրօնն ու բարոյականութիւնը սերտ զօդելով, որ բարձրագոյն արտայայտութիւնն է պատմութեան մէջ։

Դ.

Ինչպէս կապոյտ և ջինջ երկինքը զարդարուած է բազմաթիւ և պայծառ աստղերով, մարդկութեան հոգու զարգացման պատմութիւնն էլ զարդարուած է մեծ մտածողների, հանճարների, արուեստագէտների, մարգարէների դէմքերով, իւրաքանչիւրը իր տաղանդով, իրեն յատուկ կողմերով գեղեցիկ և հմայիչ։ Նրանց մէջ էլ աստիճանաւորութիւն կայ, մեծ ու փոքր, առաքեալի խօսքի համաձայն, «Աստղ քան զաստղ առաւել է փառօք»։ Սակայն կայ բացարձակ մեծը, անհամեմատելին, «յերեւիլ արեգական, կորնչին աստեղք», որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անձնաւորութիւնն է, Նորա բերած փրկութեան աւետիքը, ճանապարհը ճշմարտութեան։

Մենք յարգում ենք յիշատակը, երախտագէտ ենք ազգի և մարդկութեան մեծ բարերարների հանդէպ, բայց պաշտում ենք, պաշտում ենք հոգւով միայն Յիսուս Քրիստոսին, որի մէջ Բանի և

Աստուծոյ մարմնաւորումն ենք տեսնում, հոգիների իսկական Առաջնորդը։ Նա էր, որ բաց արաւ մեր աչքերը տեսնելու մարդկային հոգու անսահման արժէքը, թափանցելու մեր խորքը, *որ կոչուած է Աստուծոյ արքայութեան վայր լինելու, տաճար և բնակարան երկնաւոր Հօր, առանց ազգի, սեռի և գոյնի խտրութեան։*

Ինչպէ՛ս մեծ ես դու, ի՛մ Տէր, ինչպէ՛ս հարուստ հոգւով, որ աղքատ էիր, և տեղ չունէիր Քո սուրբ գլուխը հանգչեցնելու, բայց մարդկութեան անգնահատելի գանձ պարգևեցիր հազարաւոր տարիների համար։

Օրհնեա՛լ լինի քո Ծնունդը և Քո անունը յաւիտեանս յաւիտենից։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Նիւ Եորք, ԿՈՉՆԱԿ, 1939 Յունուար 7

ԺԷ.

ԿԵԱՆՔԻ ԲԱՆԱԼԻՆ

Հաւատ սիրով աջողեալ
Գաղ. Ե. 6.

Ա.

Մարդկային կեանքը հոսանուտ է և անցաւոր։ Մեր աչքի առաջ ծնւում է երեխան, կատարելութեան հասակը թեւակոխում և ապա անհետ խորասուզւում մահուան ծովի անյատակ խորութեան մէջ։ Այս է կեանքի արտաքին տպաւորութիւնը։ Եւ այսպէս է ոչ միայն անհատի, այլ և ազգերի համար։ Ո՞ւր են հին աշխարհի թագակիրներն ու աշխարհակալները, որոնց ձիու սմբակների տակ կանաչ արտերն ու մարգագետինները փշալից անապատ էին դառնում։ Ո՞ւր է գեղեցիկ Յունաստանը՝ արուեստի և քանաստեղծութեան չքնաղ հայրենիքը, ուր աշխարհի տէր Հռոմը իւր տիեզերական կայսրներով և զօրապետներով, աննման ճոխութեամբ և հարստութեամբ։ Անցել են։ Անցել են Աթէնքի գեղեցիկ կոյսերը, որոնք Աթենասի և Աստղիկի գաղափարն են տուել յոյն արուեստին, անցել են Հռոմի պերճ և ազնուաշուք պատրիկները՝ կեանքի վայելքները ճաշակող եպիկուրեան հանճարով և ճոխութեամբ։ Մենք կարող ենք աւելի հեռուները սաւառնել. Նոր պեղումների և ուսումնասիրութիւնների շնորհիւ ընդարձակուել է մեր հայեացքը դէպի պատմութեան խորին անցեալը. անհունութեան և անորոշութեան սահմաններից տեսանելի են դարձել արդէն հին Եգիպտացիների, Ասորեստանցիների, Հետիտների, Բաբելացիների և Պարսիկների կեանքն իրենց արուեստի, քաղաքակրթութեան և գիտութեան բարձր զարգացմամբ, աշխարհակալական ձգտումներով, և նուաճումներով։ Անցել են սրանք, Եգիպտոսի փարաւոններն ու Ասորեստանի հզօր արքաները իրենց շքեղ և զարմանալի պալատներով ու տաճարներով։ Ի՞նչ է մարդկային կեանքը յաւիտենականութեան մէջ. քամուց պոկուած աշնանային մի տերեւ կամ արեւի ճառագայթների առաջ չքացող մի կաթիլ ցօղ։ Անցա-

ւոր է փառքը, հարստութիւնը, արտաքին զօրութիւնը, վայելքը և ամենայն ինչ ահաւոր ժամանակի տեւողութեան մէջ։

Եւ այս անցաւորութեան և դաժան մահուան գաղափարը կը լինէր յաղթական, տիեզերքի վերայ իշխող. մարդկութիւնը իւր կեանքին վերջ կը դնէր յուսահատութեամբ, եթէ նորա սրտի խորքում հաստատուած չը լինէր մի ուրիշ հակոտնեայ զգացում, անյագ ծարաւ դէպի վսեմը, դէպի գաղափարական աշխարհը, յաւիտենական անծանօթը, որից կենդանութեան աղբիւրն է բղխում՝ — հաւատ առ Աստուած, բարին, ճշմարիտը և գեղեցիկը։ Այս հաւատն ու զգացումն է, որի շուրջն է պտըտում տիեզերական և անհատական պատմութիւնը իւր լաւագոյն տենչերով և իղձերով, հոգեւոր ազնիւ պտուղներով։ Հանենք այդ երակը և ահա կեանքն ու պատմութիւնը կը դառնան աննպատակ և անհասկանալի, ճիւաղական մի զօրութիւն, որ կոչուած է միայն իւր ծնունդներին անողոք կերպով տանջելու և ոչնչացնելու։

Բ.

Մարդկային հոգուն յատուկ է թափանցել կեանքի խորհուրդների մէջ։ Իսկ կեանքը բանականութեան համար անապատի աւազների մէջ թաղուած մի լուռ սֆինքս է։ Պէտք է գտնել այդ գաղտնիքը։ Մեր միտքը թռիչքներ է գործում ըմբռնելու գոյութեան սկիզբն ու նպատակը, տիեզերքը, իւր արտաքուստ անողոք, ոչինչ չխոստացող, մեքենական օրէնքներով, որի մի մասնիկն ենք կազմում և մենք։ Դժուար է որոնման այդ ուղին, բայց յատուկ բոլոր մտածող, զգացող էակներին։ Ի՞նչ է կեանքը։ Ինչո՞ւ ենք ծնուել։ Աւելի բանաւոր չէ՞ ինքնասպանութիւնը։ Ի՞նչ է բարին և չարը, մեղքն ու արդարութիւնը, ճշմարտութիւնը։ Ինչո՞ւ պէտք է խեղդենք մեր մէջ եսական և անձնական վայելքի, շահասիրութեան շարժառիթները. աւելի բնական չէ՞, որ հզօրը իւր գազանական բնազդներով ոչնչացնէ իրենից թոյլերին, ինչո՞ւ մեր ազնիւ եսը, խիղճը բողոքում է դորա դէմ։ Ահա մտքեր ու հարցեր, որ զարթնում են մտածող մարդու հոգու խորքերից և իրենց պատասխանն են կամենում լսել։

Կենդանարար այն լոյսն ու ջերմութիւնը, որ փարատում է մեր հոգու վերայ նստած մէգն ու մառախուղը, այն բանալին, որ լուծում է կեանքի առեղծուածը, նպատակ և բովանդակութիւն տալիս նորան, հաւատն է։ Առանց հաւատի գիտութիւնն անկարող

է մեր հոգու ձգտումներին և տենչերին բաւականութիւն տալ, լուծել կեանքի նպատակը։ Նա միայն առարկայական քննութեան հետ գործ ունի, նա ընդարձակում է մեր ծանօթութիւնները, միջոցներ տալիս, բնութեան շատ երեւոյթների վերայ իշխելու կամ մեր օգտին գործադրելու։ Նա լուսաբանում է մեր կենդանական կեանքը, պարզում որոշ չափով նորա կապը հոգեկան կարողութիւնների և երեւոյթների հետ, առանց մազի չափ անգամ պակասեցնելու կեանքի խորհրդաւորութեան գաղտնիքը, մահուան և անցաւորութեան անողոք գաղափարի յուսահատական իրողութիւնը։ Ի՞նչ է կեանքը, քամուց պոկուած մի տերեւ, արեւի ճառագայթներից չքացող մի կաթիլ ցօղ։

Մեր մէջ սովորական դարձած դատողութեամբ հաւատը յատուկ է միայն հասարակ ժողովրդին, «կրթուած» և գիտութեան հոտն առած շրջանների համար ամօթ է նոյնիսկ հաւատացեալ լինել։ Բայց այդ մի մոլորութիւն է, որ բղխում է ծանծաղ մտածելուց եւ տգիտութիւնից։ Ընդհակառակը հաւատը բարոյական այն կենդանարար զօրութիւնն է, որ հաւասարապէս անհրաժեշտ է թէ՛ ռամկին և թէ քաղաքակրթութեան վերին աստիճանի վերայ կանգնած մարդուն։ Տարբեր են նրանց հաւատոյ բովանդակութիւնն ու որակը իրենց հասկացողութեան և կրթութեան աստիճանների համեմատ, բայց երկուսի համար էլ նա է միակ մղիչ, մաքրիչ և սփոփիչ զօրութիւնը։ Երկուսն էլ այնտեղից են իրենց գոյութեան և կեանքի բովանդակութիւնն ու նպատակը ստանում, երկուսն էլ առանց այդ բարոյական զօրութեան հաւասարապէս գազաններ են, մէկը վայրենի և կոշտ, միւսը նուրբ և խորամանկ։

Մարդկային հոգու զարգացման պատմութիւնը պարզում է, թէ նորա բոլոր սխրագործութիւնները հաւատի արդիւնք են։ Հաւատոյ հերոսները միայն կարող էին ասել. «մահ ո՞ւր է յաղթութիւն քո»։ Որովհետեւ նոքա տիեզերքի և կեանքի վերայ չեն նայում իբրեւ մի պատահականութեան վերայ, այլ Աստուծոյ էութեան և կենդանութեան մի յայտարարի վերայ։ Աստծուց է գալիս կեանքը, անմահութեան և կատարելութեան աղբիւրից, որի մի կաթիլն ենք կազմում և մենք, մեր գոյութեամբ կապուած նորա հզօր և անսահման կամքի հետ, և ուրեմն որոշ դեր ունինք կատարելու այն հոյակապ շինութեան կառուցման մէջ, որ բարոյական կատարելութիւն է կոչւում և Աստուծոյ թագաւորութիւն։ Այս հաւատից են բղխել անհատի, ազգութեան և մարդկութեան բոլոր մեծ գաղափարներն ու գերականները, բարոյական և մարդա-

սիրական պէս պէս երեւոյթներն ու գործերը։ Մարդկային հոգու ամբողջ զարգացումը, քաղաքակրթութիւնը, դաստիարակչական և յառաջդիմական ձգտումները հաւատի թելադրութիւն են միայն։ Ի՞նչ է ճշմարիտ հայրենասիրութիւնը, եթէ ոչ հաւատք դէպի հանրութեան բաղդաւոր ապագան։ Ի՞նչ է անձնուէր աշխատանքը. հաւատով և յուսով սերմանել, թէ պիտի հնձենք։ Այս հաւատից է բղխում մեր կոչումն ու ծառայութիւնը դէպի դրացին, եղբայրը, մեր ժողովուրդն ու օտարը։ «Հաւատք սիրով աջողեալք» ուղեցոյցն է կրօնական մարդու գործնական կեանքի մէջ, և նորա յաջողութեան պայմանը։

Անհատներ կարող են լինել, որոնց մէջ կրօնական հաւատի փոխարէն որ և է աշխարհայեացք է բռնում, բայց այդ ժամանակաւոր և մասնաւոր բնաւորութիւն ունի։ Կրօնական մաքուր հաւատն է, որ մղում է մարդուն դէպի անձնուիրութիւն և բարոյական կատարելութիւն, զսպելով եսականը, շահասիրականը։ Կրօնական հաւատը մի և նոյն ժամանակ սէր է դէպի մերձաւորը, դէպի կարօտեալը։ Իսկ այս բոլորի վերջնական ելակէտը Աստուած է, մեր հոգու ղեկավարն ու տնօրէնը, տիեզերքի կենդանի հոգին։ Նորա գոյութիւնը գիտնական ապացոյցների չի ենթարկւում, բայց ոչ մի լուրջ գիտնական էլ չի փորձում ջրել այն զօրութիւնը, որով մարդկային կեանքն ու պատմութիւնը միտք ու բովանդակութիւն է ստանում և մեղմանում բնութեան ճակատագրական և անողոք մեքենայականութիւնը։ Նիւթապաշտական հայեացքը, որ այնքան իշխող է մակերեւութային և խակ մտքերի վերայ, միակողմանի և անբաւարար նկատուած արդէն իսկական գիտութեան և փիլիսոփայութեան ներկայացուցիչների կողմից։ Նա բաւականութիւն չի տալիս մարդկային հոգու գաղափարական և ազնուագոյն պահանջներին. տանջուող և որոնող հոգիներն այնտեղ խաղաղութիւն և հանգիստ չեն գտնում։

Գ.

Մեծ է գիտութեան զօրութիւնը, մարդկային մտքի յառաջադիմութիւնը, քաղաքակրթութիւնը։ Բայց ի՞նչ կարող են անել նրանք տառապող հոգիների համար առանց Աստուծոյ գաղափարի։ Գիտութիւնն ու քաղաքակրթութիւնը նոյն իսկ չարիք են առանց հաւատոյ և բարոյականութեան մաքրիչ զօրութեան. որովհետեւ նրանց ընթացակից են և այնպիսի երեւոյթներ, որոնք կեանքի և գոյութեան ամենամեծ թշնամիներն են։ Քաղաքակրթութիւնը

բարիք է, բայց մի և նոյն ժամանակ տաղանք իւր բացասական կողմերով, որ քաղցկեղի նման վարակել կարող է մարդկային հոգին ու կեանքը, եթէ հաւատոյ և սիրոյ շաղախը սպեղանի չլինի նորա ապականութեան դէմ։ Ցաւի և հեծութեան այս զարմանալի հովիտը բոլորովին ուրիշ գունաւորութիւն է ստանում, երբ Աստուծոյ կենդանի շունչն են տեսնում նորա մէջ հաւատոյ և սիրոյ ակնոցներով։ Տիեզերքը, որի մի մասն ենք և մենք, այլեւս մեռած մեքենականութիւն է և աննպատակ։ Զինջ երկինքը իւր բիւրաւոր և անհունութեան մէջ տարածուած աստղերով, շքեղ գարունը իւր անուշաբոյր ծաղիկներով, սառնորակ աղբիւրներն ու վճիտ առուակները իրենց քաղցր խոխոջներով կենդանութիւն են ստանում և մեր սրտի հետ խօսում։ Ամէն ինչ Աստուծոյ ներկայութեան յայտարարն է, ինչպէս և մեր սիրտն ու հոգին իւր լաւագոյն իղձերով և տենչերով։ Արդեօ՞ք խաբուսիկ է այն։ Ո՞րն է իրականը, ո՞վ կարող է ասել։ Մի բան միայն հաստատ գիտենք, որ կեանքի արտաքին տպաւորութիւնը անցաւորութիւնն է և մահը, և մենք ճնշուած ենք մեքենական անողոք օրէնքների տակ, սակայն մեր հոգու մէջ Աստծուց ճառագայթած հաւատն ու սէրը այդ անցաւորութիւնը յաւիտենականութեան է փոխարկում, մահուան տագնապը երջանկութեան և սքանչացման։ Մեր գլխին այլ եւս ճակատագրական դամոկլեան սուրը չի կախուած, այլ երկնաւոր Հօր գթութեան և սիրոյ հովանին։ Կեանքի փոթորիկների և ալէկոծութեան մէջ մեր նաւահանգիստն ունինք, տառապանքների համար մխիթարութեան մի աղբիւր։

Մեզ շրջապատող մթութեան և խաւարի մէջ Փրկչի անձնաւորութիւնն էլ նոյն ճշմարտութիւնն է քարոզում, հաւատոյ և սիրոյ լապտերը ձեռքին։ Դէպի վեր, դէպի մեր աւագ եղբայրը և մեր Աստուծոյ որդին։ Վտանգաւոր է ճանապարհը, անդունդների և ծերպերի վերայով, բայց դէպի վեր, որովհետև մեր Տէրն էլ այդ ճանապարհով է անցել, իսկ այդ ճանապարհը կեանքի և փրկութեան ճանապարհն է մահուան զօրութեան ճիրաններից։ Նորա կեանքի բանալին եւս հաւատն ու սէրն էր դէպի Աստուած, որ օրհնութիւն դարձաւ մարդկութեան համար։ Ի՞նչ կեանք կարող է փոխարինել Նորան։ Ա՜խ, եթէ մեր սրտերի մէջ եւս գէթ մի նշոյլ կաթէր այն հաւատոյ և սիրոյ ճառագայթներից, որ մեր Տիրոջ ուղին լուսաւորեց։

ԱՐԱՐԱՏ, 1908, Մայիս—Յունիս

ԺԸ.

ՎՇՏԻ ԵՒ ՏԱՌԱՊԱՆՔԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ ԱՆՀԱՏՆԵՐԻ ԵՒ ԱԶԳԵՐԻ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ

Ա.

Կեանքը միայն ուրախութիւն չէ, վայելք, յաջողութիւն, այլ և վիշտ, տառապանք, ձախորդութիւն և դժուարութիւն։ Մեր կեանքի ճանապարհին միշտ վարդեր չեն փռուած, այլ և փշեր, մացառներ, քարեր, որ յաճախ արիւնոտում են ոտքերն ու ձեռքերը։ Կեանքի մակերես ըմբռնումն է, համարել այն միայն վայելք, բաղդաւորութիւն ու յաջողութիւն։

Կեանքը իբրեւ երեւոյթ բարդ է, բազմակողմանի իր դրական և բացասական կամ բացասական համարուած կողմերով։ Մեզ շնորհուած խելքով, փորձառութեամբ, ի հարկէ, որոշ չափով կարող ենք կարգաւորել այն, որոշ չափով խուսափել բացասական և դժուարութիւնների հետ կապուած վիճակներից, բայց որոշ չափը փոքրագոյն մասն է մեր կեանքի, իսկ մեծագոյնը պատահմունքի, շրջապատի, անակնկալ երեւոյթների և պայմանների հետ է կապուած։ Գիտենք անցեալը, տեսնում ենք ներկան, իսկ ապագան թաղուած է անյայտութեան խաւարի մէջ։

Որքան և մեզ համար պարզ են ընդհանուր առմամբ կեանքի դրական և բացասական կողմերը, բայց յաճախ սխալւում ենք նաեւ այդ կողմից։ Արդեօք ո՞վ է բաղդաւորը, հարուստը, որ հնարաւորութիւն ունի կեանքի արտաքին դիւրութիւնները վայելելու, հնարաւորութիւն և միջոց ունի իր քմահաճոյքներն իսկ կամ անարդար ցանկութիւնները կատարելու և իրագործելու, թէ արտաքուստ մի աղքատ, որ հազիւ իր օրական պարէնն է հայթայթում։ Չգիտենք։ Շատ անգամ մեզ բաղդաւոր, հարուստ երեւացածը թշուառականի մէկն է, որի հոգու մէջ, ո՞վ գիտէ, ինչպիսի գիշակերներ են նստած և յօշոտում են նորա ներքին էութիւնը։ Ի՞նչ են հարստութիւնն ու գանձը, եթէ մեր մարմինը քայքայուել է յարատեւ ախտերով, սպառուել մեր ապրելու կարողութիւնը, գալարուելով դժոխային ցաւերի մէջ, երբեմն, նոյն իսկ հետեւանք մեր գանձի և հարստութեան։ Որ հնարաւորութիւն է տուել սանձ-

արձակ դառնալու, կեանքի այլ և այլ ոլորտներում։ Համեմատեցէք այդպիսի մէկը մի աղքատի հետ, հոգւով և մարմնով առողջ, զուարթ, իւր վիճակից գոհ, անձի հետ։ Ո՞րն է նրանցից բաղդաւորը։ Ապա, ուրեմն, մեր սովորական հասկացողութիւնները կեանքի դրական և բացասական կողմերի մասին յաճախ անստոյգ են, անորոշ, արտաքին երեւոյթներից դատելով։

Կեանքի մաս են հաւասարապէս նորա դրական և բացասական համարուած երեւոյթները. նոքա բարիք են և չարիք համեմատ մեր վերաբերմունքին և օգտագործման։ Ի հարկէ, վշտի, տառապանքի, սովի, հիւանդութեան եւն. ենթարկուիլ, ծանր և դժուար կացութիւն է, շատ անգամ կործանման պատճառ, բայց ոչ միշտ։ Յաճախ նա պատճառն է, առիթը բարձրագոյն ապրումների, առիթը վերածնութեան և մի նոր կեանքի, աւելի բարձր կեանքի սկզբնաւորութեան, անհատների, ինչպէս և ազգերի կեանքի մէջ։ Այս տեսակէտով էլ կամենում ենք վերլուծութեան ենթարկել անհատական և ազգային կեանքի նման երեւոյթները, որպէս զի սովորենք և հասկանանք նրանց վերայ նայել ոչ միայն բացասական, այլ եւ դրական կողմից։ Տառապանքներն ու աղէտները շատ անգամ կեանքի իսկական դպրոցներ են, դաստիարակութեան, հասուն և դրական փորձառութեան և տոկունութեան հասնելու միջոցներ։ Մենք բազմաթիւ փաստեր և օրինակներ կարող ենք բերել այդ ճշմարտութիւնը հաստատելու և մեր ընթերցողներին պարզելու համար, թէ անհատների և ազգերի կեանքից։

Բ.

Հիւանդութիւնը կեանքի բացասական երեւոյթներից մէկն է. անհատը տանջւում է հիւանդութիւնից, ֆիզիքապէս թուլանում, յաճախ էլ մահ է պատճառում նորան։ Բայց ամեն հիւանդութիւն չէ «ի մահ». նա էլ ունի իւր դրական կողմերը. նա միայն չարիք չէ։ Մարդկային բնութեան յատուկ է երկու տարբեր կացութիւն. առողջ մարդկանցից շատերը ընդունակ չեն կամ չեն կարող հասկանալ հիւանդի վիճակը. ո՛վ քաղցած չէ եղել կեանքի մէջ, չի կարող զգալ, թէ ինչպիսի՛ քաղցր զգացում է յագեցման րոպէն և տանջանք նորա պարբերական կամ յարատեւ գոյութիւնը։ Ո՛վ աղքատ չէ եղել, կարիքի մէջ, նա չի կարող լիովին ըմբռնել աղքատի կամ աղքատ դասակարգի վիճակը։ Ո՛վ գաղափար չունի մարդկային թշուառութեան մասին, նիւթական թէ բարոյական, դժուար թէ նորա հոգու մէջ շարժուի խորը կարեկցութեան, օգնութեան և

եղբօրը սիրելու բարձր զգացումը. «Թշուառին թշուառն է կարեկից», ասել է բանաստեղծը։ Մեր կամ ուրիշների փորձառութիւնն ու կեանքը նպաստում է մեզ աւելի իրական հասկացողութիւն և գաղափար կազմելու երեւոյթների մասին։ Հիւանդութիւնը յաճախ ոչ միայն չարիք չէ, այլ հոգու զօրացման, բարձր ապրումների պատճառ։

Ծնողները նկատած կը լինեն, որ երբեմն ստահակ, կոպիտ և վատ հակումներ ցոյց տուող երեխաներ, հիւանդութեան դէպքում նկատելի փոփոխութիւն և քնքշութիւն են ցոյց տալիս. համբուրում են մօրը, շոյում հարազատներին, խոստանալով այլ եւս չարութիւն չանել, խելօք և հնազանդ լինել, չնեղացնել մերձաւորներին։

Բայց ոչ միայն երեխաները, այլ հասուն մարդիկ՝ չարատանջ հիւանդութիւնների ժամանակ՝ այդպիսի փոփոխութիւն են կրում. նրանց զգացմունքներն աւելի նրբանում են, մաքրւում, և յաճախ նաեւ վերստին ծննդեան առիթ գտնում։ Պօղոս առաքեալը, մէկը պատմութեան մեծ մարդկանցից և Քրիստոսի աշակերտներից, հզօր իր կամքով և գաղափարների խորութեամբ, անյողդողդ իր սկզբունքների և ձգտումների մէջ, գրում է իր մասին. «զի զօրութիւն իմ ի տկարութեան կատարի»։ Ռուս մեծ գրողը Գոգոլ, իր կեանքի վերջին օրերի նամակների մէջ, խոստովանում է իր այդպիսի զգացումը։ Աւելի մանրամասնութիւններ է տալիս հանճարեղ մեծ վիպասանն ու փիլիսոփան Լեւ Տոլստոյը իր հոգեկան այդպիսի ապրումների մասին։ Նա մահուանից տարիներ առաջ մահամերձ հիւանդացաւ, բայց առողջանալուց յետոյ՝ յատուկ գրքոյկով նկարագրեց իր հոգեկան վիճակն ու ապրումները, թէ մարմնական ուժերի թուլանալով, զօրանում էր հոգին և մարմնի զօրանալու հետ նուազում այդ զգացումը։ Այդ հիւանդութեան ժամանակ էր, որ նորա հոգին զտուած, կատարելապէս իր Աստուծոյ հետ էր և կրօնական բարձր ապրումներից մէկն ունեցաւ։

Վշտի սուր զգացումներից մէկն է հարազատի կորուստը. ծանր է թանկագին անձի մահը, սակայն այս խորին վշտի մէջ իսկ կայ մի վսեմութիւն։ Գալարւում է մեր սիրտը նորա համար, կը կամենայինք մեր կեանքը նորան տալ, եթէ բանար աչքերը։ Առանձնութեան մէջ վերանում է մեր հոգին դէպի երկնային եթերները, որոնելու նորա երանաւէտ կայանը. խորասուզւում ենք թանկագին յիշողութիւնների մէջ, հոգեպէս ապրում նորա ներկա-

յութիւնը, որքան կարօտով լցուած դէպի նորա անձը։ Խորին վիշտը մաքրում է մարդկային հոգին, կտրում կապերը այս անցաւոր աշխարհից. Նուրբ և որքան լրջութեան և տխրութեան շղարշ է նստում որդեկորոյս մօր դէմքին, ակնածութեան ու յարգանքի զգացումով լցնում մեր սիրտը դէպի նա։ Մենք մի մայր գիտենք, որ տասնեակ տարիներով մոռանալ կարող չէր իւր կորուստը, բեկուած, բայց յարգանքի և գնահատութեան արժանի կեանք։ Որպիսի՜ հոգեկան մեծութիւն է՝ ապրել սեպհական վշտի հետ, առանց հաղորդակից անելու նոյն իսկ ուրիշին, առանձնական իւր սրտի խորանների մէջ ապրել իւր վշտի հետ, իւր նուիրական վշտի հետ...։

Գ.

Վիշտը ներքին փորձառութիւն է բերում մեզ, բաց անում մեր աչքերը, տեսնելու և համակրելու ուրիշի ցաւով, նաև մաքրում մեր ներքին աշխարհը հոգեւոր քուրայի մէջ։ Յովբի արդարութիւնը կորստի, անարգանքի և տառապանքի մէջ փորձուեցաւ և գնահատուեցաւ Աստուծոյ կողմից։ Նա կորցրեց իւր զաւակները, հարստութիւնը, տանջուեցաւ հիւանդութեամբ, բայց հաւատարիմ և հաստատ մնաց իւր առ Աստուած յուսոյ և հաւատոյ մէջ, և վարձատրուեցաւ կրկնակի բաղդաւորութեամբ։ Կարդացէք Յովբի գիրքը և դուք կը տեսնէք այնտեղ մարդկային բաղդի մեծ ողբերգութիւնը, մեզ համար անհասկանալի երեւցած առեղծուածը, և հոգու խորքում ապրուած վիշտը, որով զտուել, բիւրեղացել է մարդկային հոգին ադամանդի մաքրութեամբ։ Ըստ Կարլայլի Յովբի գիրքը տիեզերական գրականութեան ամենամեծ յիշատակարաններից մէկն է, բանաստեղծական, սքանչելի պատկերաւորութեամբ, համամարդկային և յաւիտենական, որքան թախիծի և տխրութեան, բայց և խաղաղութեան նուրբ շղարշով սքօղուած, ուստի և տպաւորիչ։

Կարիքն ու վիշտը ստիպում են մեզ աղօթել և առ Աստուած դառնալ, ուրեմն և փրկուել հոգւով։ Անառակ որդու պատմութիւնը մի գեղեցիկ բացատրութիւն է այդ մտքի համար։ Մարդկային կեանքի ստորացումն անգամ դառնում է երբեմն բարիք, զղջման և վերածնութեան առիթ, որ յաճախ մեծ բանաստեղծների գեղարուեստական ստեղծագործութեան նիւթ է դարձել, ինչպէս Վիկտոր Հիւգոյի Թշուառների մէջ Ժան Վալժանի և Լեւ Տոլստոյի Յարութիւն վէպի հերոս Նեխլիւդովի տիպերն են։

Դ.

Տառապանքից ոչ միայն անհատներն են բարձրանում, հոգեւորապէս վերածնւում, այլ և ազգերը և նրանց մեծ հերոսները։ Իսրայէլի տառապանքից և ստրկութիւնից ծնաւ Մովսէս մեծ մարգարէն և առաջնորդը հանդիսացաւ նորա ազատութեան։ Նոյն ժողովրդի երկու մեծ, հոգեւոր հերոսներն են՝ կայծակնաշուրթն Եսայի և ողբացող Երեմիան՝ իրենց հոգու խորքում տառապողներ իրենց ժողովրդի համար և մեծ հայրենասէրներ, տեսնելով նորա անկումն ու մոլորութիւնը, որ դէպի կորուստ պիտի տանէ և կործանում։ Միքէլ Անջելոն պատկերացրել է երկուսին էլ Սիքստինեան մատուռի որմանկարչութեան մէջ, մէկն իբրեւ բանաստեղծ և պայծառատես, միւսը ներշնչման րոպէին իբրեւ ողբացող, նրանք հոգու աչքերով տեսնում են և արիւնած սրտով յայտնում իրենց ժողովրդի գլխին գալիք չարիքը, իբրեւ հետեւանք նրանց բարոյական մոլորութեան։ Ցուցիչ է, մանաւանդ, ողբացող Երեմիան, խորասուզուած իր ներքին աշխարհի և հոգեկան տառապանքի մէջ։ Ի դէպ Միքէլ Անջելոն ինքը մեծ տառապող էր հայրենի քաղաքի Ֆլորենցիայի ազատութեան կորստեան համար, որ այնքան հզօր և խորապէս մարմնաւորել է Մեդիչիների դամբարանի գիշերուայ ֆիգուրի մէջ։ Այդպիսի տառապանքի և վշտի հետ էր կապուած միջնադարեան ամենամեծ բանաստեղծ, Դանտէի Աստուածային կատակերգութիւնը, «ամենամեծ պոէման տիեզերական գրականութեան մէջ» ըստ Կարլայլի։ Վշտահար Դանտէն գրկուած հայրենիքից, գոյքից, թափառական և անմխիթար, հոգւով փոխադրւում է մի ուրիշ աշխարհ, որ յաւիտենականութիւն է կոչւում, և նկարում է նորա հոգու առաջ տիեզերքի ահաւոր դատաստանի պատկերը, որ ազդել է նաեւ Միքէլ Անջելոյի վերջին դատաստանի վերայ։

Իսրայէլի պատմութիւնից պիտի յիշենք մի ուրիշ վերելք, հոգեւոր և քաղաքական վերածնութիւն, որպէս հետեւանք Բաբելոնեան գերութեան։ Նաբուգոդոնոսորը կործանել էր Երուսաղէմը, վերջացրել Յուդայի թագաւորութիւնը և ժողովրդի մեծագոյն մասը գերի տարել Բաբելոն. այնտեղ, սակայն, նորա կարեւոր մասը ոչ միայն չէր մոռացել հայրենի երկիրն ու սրբութիւնները, այլ լցուել խորագոյն սիրով և վերադարձի տենչով դէպի հայրենիքը, որ և կատարուեցաւ Կիւրոսի ժամանակ։ Այդ գերութեան մէջ է ստեղծուել սաղմոսների մի մասը, հայրենասիրական զգացման բարձր արտայայտութեամբ։ Այդպիսի սաղմոսներից մէկն է 136-րդը,

«Առ գետս Բաբելացւոց նստէաք և լայաք...» սկսուածքով, ուխտը Իսրայէլի հաւատարմութեան դէպի Երուսաղէմը, դէպի սրբազան տաճարը և հայրենիքը, որ օրինակելի կարող է լինել բոլոր ազգերի համար. «Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռացի զիս աջ իմ...»։

Հայոց պատմութիւնն էլ տալիս է շատ գեղեցիկ դրուագներ խաւարից դէպի լոյս, փորձութիւններից և տագնապներից դէպի յաղթականն ու ազատ հայրենիքի ծաղկումը։ Մեզ վիճակուել է ընդհանրապէս մուրճի և սալի մէջ պահել մեր գոյութիւնը, Հռոմի և Պարսկաստանի, Բիւզանդացիների և Սասանեանց, Արաբների, Սելջուկների, Թաթարների, Թիւրքմէնների, Պարսից և Օսմանցոց փոխէփոխ արշաւանքների և հարուածների տակ։ Ճղակոտոր ենք եղել յաճախ, բայց ոչ արմատախիլ, և որ կարեւորն է այդպիսի արտաքոյ կարգի դժուարութիւնների մէջ մնացել ենք յուսալից, ստեղծագործող, տոկուն. գեղարուեստական կենդանի զգացմունքով և շինարար ժողովուրդ։ Անցել ենք «ընդ հուր և ընդ ջուր», բայց մնացել ենք անկէզ և ազատուել անհեղ յորձանքներից։ Ամեն ժողովրդի չէ վիճակուած այդպիսի յատկութիւն, որ մեծ առաւելութիւն է նկարագրի։

Ապրինք հաւատով, աչքներս ուղղած դէպի լուսաւոր հորիզոնները։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ 7 Ապրիլ, 1942

ԺԹ.

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

Ա.

Ոչ եկեղեցու ծագումը և ոչ նորա իսկական նպատակը անմիջական կապ ունի գիտութեան հետ։ Քրիստոս փիլիսոփայ չէր և ոչ որևէ է գիտնական դպրոցի հիմնադիր։ Նա եկել էր մարդկութեան Փրկիչը լինելու զուտ կրօնական — բարոյական տեսակէտով։ Քրիստոնէութեան գոյութեան հիմնաքարը Յիսուսի գործն ու անձնաւորութիւնն է և հաւատացեալների դէպի Նա ունեցած հաւատը։ Եկեղեցու հաստատութեան մեծ շէնքը այս հաւատի վերայ է կանգնած իւր ծագման օրերից մինչև այժմ։

Քրիստոնէութիւնը կրօն էր, իսկ կրօնը ոչ գիտութիւն է և ոչ արուեստ, բայց բնական էր, որ հետզհետէ քրիստոնէական գիտութիւնն ու արուեստը ծագէր։ Քրիստոնէութիւնն հաստատուել և կեանք է ստացել պատմութեան մէջ. շփուել է յունա—հռովմէական քաղաքակրթութեան հետ, խորացրել կամ լուսաբանել է հին քաղաքակրթութեան այլ և այլ տարրերը, իւր համար նոր աշխարհայեցողութիւն կամ փիլիսոփայութիւն ստեղծել. այս զարգացման բնական հետևանքն էր քրիստոնէական գիտութեան ծագումը։ Քրիստոնէութեան մէջ միշտ էականը կրօնական հաւատն է եղել՝ միացած անարատ բարոյականութեան հետ, բայց գիտութիւնը ու արուեստն էլ միշտ յարգելի դաշնակիցներ համարուել նորա զարգացման լաւագոյն շրջաններում։

Քրիստոնէութիւն և գիտութիւն տարբեր են միմեանցից, բայց նոքա հակադրութիւններ չեն. Աւետարանի ազատ ոգին ամենևին դէմ չէ գիտութեան։ Ընդհակառակն Աւետարանի քարոզած բարոյական կատարելութեան համար նպաստաւոր միջոցներ են գիտութիւնն ու արուեստը, Իսկական գիտութիւնը հետամուտ է միմիայն ճշմարտութեան, իսկ ճշմարտութիւնը ազատութիւն (Յովհ. ը. 32) և զօրութիւն է տալիս մարդուն։ Ճշմարտութիւնն ըմբռնելու երկու ճանապարհ ունինք, կրօն և գիտութիւն, երկուսն էլ մարդկային սահմանաւոր հոգու համար միևնոյն Աստուծոյ տնօրէնութիւններն ու վերջնական նպատակները հասկանալու

միջոցներ։ Ոչ մի գիտութիւն, որ արդարութեամբ հետամուտ է ճշմարտութեան, վնասակար չէ լինել կարող կրօնի համար. Նոյն իսկ բնական գիտութիւններն, որ ըստ երեւոյթին կապ չունին հոգեկան գիտութիւնների հետ, Աստուծոյ իմաստութեան և ամենակարողութեան յայտարարներ են։ Բնական գիտութիւններից յառաջ եկած նիւթապաշտական աշխարհայեցողութիւնը, որ թշնամական դիրք էր բռնել դէպի քրիստոնէութիւնը, մի մոլորութիւն էր, որ վաղուց ջախջախուած է գիտութեան անաչառ դատաստանի առաջ։

Բ.

Արդա՛րեւ, եկեղեցու պատմութիւնը պարզում է մեր առաջ քրիստոնէական կրօնի, գիտութեան և արուեստի բարեկամական յարաբերութիւնը։ Հէնց առաքելական շրջանից նկատւում է այդ իրողութիւնը, Աստուածային շնորհաց ընդհանուր ազդեցութիւնն ընդունելով հանդերձ՝ առաքեալները տարբեր են միմեանցից բնաւորութեամբ և գիտութեան չափով։ Պօղոս առաքեալի մեծ գործունէութիւնն ու քրիստոնէութեան տարբեր հասկացողութիւնը նորա անհատականութիւնից զատ՝ կախումն ունէր և նորա կրթութիւնից։ Պօղոս իր ժամանակի հրէութեան ամենամեծ գիտնականի՝ Գամաղիէլի աշակերտն էր։ Այնուհետեւ պատմութեան ընթացքը գիտութեան և եկեղեցու սերտ դաշնակցութիւնն է հաստատում. փառաւոր է այն շրջանը, երբ քրիստոնէութեան հոգու, բարոյականութեան հետ շաղկապուած է գիտութիւնը։ Եկեղեցու համարեա բոլոր մեծ պաշտօնեաները իրենց անձի մէջ կրօնականի հետ միացրել են և գիտութեան տարրերը։ Ամեն անգամ, երբ եկեղեցու վարիչները մոռացել են երկու գործօնների սերտ կապակցութիւնը, այդ եղել է ի վնաս քրիստոնէութեան ընդհանուր շահերի։

Քաղաքակրթական յառաջադիմութեան հոգին քրիստոնէութեան էական յատկութիւններից մէկն է. Քրիստոնէութիւնն է բազմաթիւ ազգերի հոգեւոր քաղաքակրթութեան սկիզբը դրել. մենք կը խնդրէինք յիշել Հայոց, Ռուսաց, Սլաւոնական միւս ազգերի, Գերմանացիների և Անգլիացիների դպրութեան և քաղաքակրթութեան ծագումը։ Քրիստոնէութեան զարգացումը առաքելական շրջանից յետոյ, ընթացակից է յունա — հռոմէական փիլիսոփայութեան և քաղաքակրթութեան լուսաւորման։ Պղատոնի, Արիստոտէլի, Ստոյիկեանների, Նոր պղատոնականների փիլիսոփայութիւնը անհագին դեր է խաղացել քրիստոնէութեան դաւանաբանութեան և աշխարհայեցողութեան կազմութեան ընթացքում։

Հին ժամանակի լուսաւորեալ քրիստոնեաների համար յունա—հռոմէական փիլիսոփայութեան և գրականութեան ուսումնասիրութիւնը քրիստոնէական գիտութիւն ստեղծելու աղբիւրն էր։ Ջատագովների մեծագոյն մասը յունական կրթութիւն ստացած մարդիկ են. Յուստինոս վկան փիլիսոփայ էր, Տերտուղիանոս իրաւաբան, Օրիգինէս իւր ժամանակի ամենամեծ գիտնականը։ Եկեղեցու նշանաւորագոյն հայրերը՝ Ս. Աթանաս, Ս. Բարսեղ Կեսարացի, Գրիգոր աստուածաբան, Յովհան Ոսկեբերան, Կիւրեղ Աղէքսանդրացի, Օգոստինոս եկեղեցու զարդերն են և նորա գիտնական ներկայացուցիչները։ Չորրորդ և հինգերորդ դարերը քրիստոնէական եկեղեցու ոսկեդարն էր ամեն կողմից, այս շրջանումն էին ծաղկում և վերոյիշեալ մեծ հայրերը, Աղէքսանդրիայի, Անտիոքի, Եդեսիայի մեծ դպրոցները, Երուսաղէմի, Կեսարիայի մեծ մատենադարանները։ Հայոց եկեղեցու պատմութիւնն էլ նոյն իրողութիւնն է հաստատում. թարգմանիչների գործունէութեան հետ է կապուած Հայի ամենաքաղցր յիշողութիւնները։

Գ.

Գիտութեան զարգացման երեւոյթը եկեղեցու ծոցում մատնանիշ անելուց յետոյ՝ սահմանենք և նորա շրջանը։ Եկեղեցին կրօնական—հոգեւոր հաստատութիւն է, որ կոչուած է Աւետարանի սկզբունքներն իրականացնել կեանքի մէջ, գորանով արդէն սահման է գծւում այն գիտութիւնների համար, որոնք եկեղեցու նպատակի հետ աւելի կապ ունին։ Ամեն գիտութիւն օգտակար է, բայց ամեն գիտութիւն անհրաժեշտ չէ եկեղեցու համար։ Այսպէս կոչուած հոգեկան (Geistes Wissenschaft) գիտութիւններն են, որոնք ծագել են եկեղեցու ծոցում և նորա գոյութեան համար օգտակար ծառայութիւններ մատուցել։ Այդ գիտութիւնների մէջ առաջին տեղը աստուածաբանութիւնն է բռնում իւր ճիւղերով։ Աստուածաբանութիւնը ծագել է եկեղեցու զարգացման ընթացքում անհրաժեշտաբար։ Մենք արդէն ակնարկեցինք նորա ծագման պայմանները, այժմ մի քանի խօսքով որոշենք նորա էութիւնն ու նպատակը։ Աստուածաբանութիւնը վերացական «մետաֆիզիկայ» չէ, ինչպէս հռչակում են մեր «լուսաւորեալ»ները առանց ամենաթեթեւ գաղափար ունենալու նորա մասին։ Ամեն մարդ քաջութիւն չունի չիմացած և չհասկացած բաների մասին խօսել, այդ միայն արտօնութիւն է որոշ մարդկանց համար։ Աստուածաբանութիւնը իւր էութեամբ պատմական գիտութիւն է, որովհետեւ նորա ուսումնասիրութեան նիւթը պատմական տուեալներ են. այսինքն քրիստոնէական կրօնը

իւր էութեամբ, ծագմամբ, զարգացմամբ և ներկայ վիճակով։ Աստուածաբանական գիտութիւնը այնպիսի պատմական պրօցէսսների և իրողութիւնների լուսաբանութեամբ և նկարագրութեամբ է զբաղուած, որ եկեղեցու կեանքն է կազմում։ Այսպիսի գիտութեան մենք պատմական անունն ենք տալիս, թող մեր հակառակորդները մետաֆիզիկայ անուանեն։

Իսկ թէ պատմական գիտութիւնը ո՛րքան գործնական նշանակութիւնն ունի, պարզ պէտք է լինի իւրաքանչիւր բանիմաց ընթերցողի համար։ Պատմութեանն ենք պարտական, ինչ որ ունինք մենք։ Պատմութեան ծնունդն ենք մեր հոգեւոր բարիքներով, քաղաքակրթութեամբ։ Առանց պատմութեան չենք կարող ըմբռնել և մեր կրօնի էութիւնը, որ մարդկութեան ամենաբարձր հոգեւոր բարիքն է։ Պատմութիւնը մարդկային հոգու գիտակցութիւնն է ընդհանրապէս, իսկ կրօնը նորա ամենախորին խորհուրդը։ Ի՞նչ կը լինի մարդկութիւնը առանց այդ գիտակցութեան։ Քրիստոնէական կրօնի և եկեղեցու մասին մեր գիտակցութիւնը սրո՛ղ պատմական գիտութիւնը աստուածաբանութիւնն է։ Մենք սիրել և յարգել կարող ենք միայն այն անձը, որի մարմնական և հոգեկան յատկութիւններին ծանօթ ենք, այնպէս էլ քրիստոնէական կրօնն ու եկեղեցին ճշմարտապէս սիրել կարող ենք այն ժամանակ, երբ իրապէս ծանօթութիւն ունինք նորա էութեան և պատմութեան մասին։ Ի հարկէ ուրիշ բան է հասկանալ կրօնի ճշմարտութիւնը և ուրիշ բան կրել նորա զօրութիւնը սրտի մէջ. կրօնը որպէս լոյս կարող է փայլել մեր աչքում առանց կրակ դառնալու մեր սրտում, բայց անուրանալի է, որ կրօնական ճշմարտութիւնները կեանք դարձնելու գլխաւոր միջոցներից մէկը գիտութիւնն է։ Կրթութեամբ կարելի է մի ժողովուրդ կրօնական դարձնել, իսկ կրթութեան բովանդակութիւնը, նիւթը գիտութիւնն է տալիս։

Դ.

Վերջին տասնեակ տարիներում մի զարմանալի երեւոյթ է նկատւում մեր ժողովրդի մէջ. նախնի Հայոց նոր սերունդը, կարծես, երես է սկսել դարձնել այն եկեղեցուց, որի համար նորա հայրերը պատրաստ էին ամեն ինչ զոհել։ Այս տխուր երեւոյթը բազմաթիւ պատճառների հետեւանք է, բայց դոցանից մէկն էլ մեր կարծիքով այն է, որ ներկայ սերունդը շատ թոյլ հասկացողութիւն ունի մեր եկեղեցու պատմութեան ու կատարած քաղաքակրթական մեծ դերի մասին։ Եկեղեցուց հեռացողների, նորա վերայ անտարբերութեամբ նայողների մի ստուար մաս այնպիսի

մարդիկ են, որոնք գիտակցութիւն չունին եկեղեցու էութեան, նպատակի և կոչման մասին։ Շատ դժուար կը լինէր ընդհակառակն ցոյց տալ այնպիսի անձինք, որ կատարելապէս ծանօթ լինէին մեր եկեղեցու պատմութեան, ըմբռնած լինէին նորա ներկայ թշուառութեան պատճառները և քար ձգէին նորա վերայ։ Ո՛չ, գիտակցութիւնը ցաւ և կարեկցութիւն կը չարժէր և ո՛չ սառնութիւն կամ անտարբերութիւն։ Հասկանալի է, որ մեր խօսքը վերաբերում է այսպէս կոչուած կրթուած դասակարգին։ Բայց դէպի եկեղեցին նկատուած անտարբերութիւնը միայն այս դասով սահմանափակւում. կրթուած հասարակութեան մէջ երեւան եկած ճիշդ կամ սխալ գաղափարները զանազան միջոցներով տարածւում են և հասարակ ժողովրդի մէջ։ Գիւղերումն էլ շատ անգամ նոյն թեթեւամիտ դատողութիւններն ենք լսում, նոյն անպատկառ վերաբերմունքը նկատում դէպի հայ եկեղեցին և եկեղեցականութիւնը, ինչպէս յատուկ է մեր լրագրական հերոսներից շատերին։ «Ինչ ցանես, այն էլ կը հնձես»։

Սակայն այս ակնարկներով մեր արատները ջնջել չենք կամենում. մեր եկեղեցականութիւնը բարոյական, գրական զօրութիւն լինէր, նորա անդաստանի մէջ ցանուած որոմները ապառաժների վերայ կ'ընկնէին։ Մեր պարտազանցութիւնները, մեր անհաւատարմութիւնն ու խաւար հասկացողութիւնը դէպի եկեղեցու սպասաւորի կոչումը նոյնպէս կործանարար հետեւանքներ են ծնում, ինչպէս եկեղեցականութեան երդուեալ թշնամիների գործունէութիւնը։ «Լաւ էր եթէ ներէիք փոքր մի և իմում անզգամութեանս», եկեղեցու ներկայ վիճակը և մեր սէրը դէպի ընդհանրութեան Հոգեւոր Մայրը, ստիպում է փոքր ինչ «անզգամ» լինել։ Թող ներուի մեզ այս համարձակութիւնը։ Մի անգամ ընդ միշտ պէտք է պարզուի մեզ համար, որ ամեն մի անձն կամ հաստատութիւն վաղ թէ ուշ պէտք է ընկնի, կորցնէ իւր բարոյական հեղինակութիւնը, եթէ նա իւր կոչման բարձրութեան վերայ չէ կանգնած։ Թուլացել է մեր եկեղեցականութեան բարոյական հեղինակութիւնը, որովհետեւ իւր կոչման բարձրութեան վերայ չէ կանգնած։ Տասնեակ տարիներից ի վեր արծարծւում է քահանայական հարցը ու մենք դեռ մի քայլ առաջ չենք գնացել. այս խնդրում մեղաւոր է ոչ միայն ժողովուրդը, այլ եւ մեծ հոգեւորականներս: Իսկ ամեն մեղք իւր պատիժն է ստանում, եթէ զղջումն ու ապաշխարութիւնն ուշանում է.... Ինչպէս մարմինը սնունդ է պահանջում, այնպէս և հոգին։ Հայ ժողովրդի հոգեւոր սնունդ

մեր եկեղեցու սպասաւորութիւնն է, բայց որը տարաբաղդաբար զրկւում է հետզհետէ կաթից։ Մեր եկեղեցականութիւնը բարոյական հեղինակութիւն պահպանել չէ կարող, մինչեւ որ մտաւորապես եւ բարոյապես ժողովրդից բարձր չլինի։ Կոյրը կոյրին առաջնորդ լինել չէ կարող, իսկ արտաքին շինովի միջոցներով երբէք չենք կարող երկար ժամանակ դիրք պահպանել։

Ե.

Այս նկատողութիւններից ինքնին հետեւում է, որ մեր եկեղեցու վերակենդանութեան էական պայմաններից մէկն էլ գիտութիւնն է, յատկապէս աստուածաբանական գիտութիւնը։ Կրկնում ենք, որ եկեղեցու կեանքը անմիջապէս գիտութիւնից չէ ծագում, նորա աղբիւրը Յիսուսի անձն ու Աւետարանն է, բայց գիտութիւնը նկարագրելով և լուսաբանելով եկեղեցու կեանքը, քննադատութեան ենթարկելով նորա անցեալը, ցոյց է տալիս թիւրն ու սխալը, ճշմարիտն ու յաւիտենականը և նոր սկզբունքներ հանում ներկայի և ապագայի համար։ Եկեղեցու կեանքի և պատմութեան մէջ եւս որոմն ու ցորենը խառն են, գիտութիւնն է, որ մաքրում, զտում է պիտանին անպիտանից։ Աստուածաբանական գիտութիւնը եկեղեցու ինքնաքննադատութիւնն է, որից նորա ինքնագիտակցութիւնն է բղխում, իսկ ինքնագիտակցութիւնը հետեւողական յառաջդիմութեան ամենակարեւոր պայմանն է։

Յառաջադիմութիւն .... քարոզում է մեզ Աւետարանը, Պատմութիւնը և Աստուծոյ տեսանելի աշխարհը։ Բայց բարոյական յառաջադիմութեան ամենախոշոր հաստատութիւնը եկեղեցին է. Նա պէտք է ուրեմն ոչ միայն «տուն աղօթից», այլ և գիտութեան, իմաստութեան լինի, որպէս գիտակցական հաւատոյ, սիրոյ և յուսոյ հաստատութիւն։ Սակայն, մեր ասածներից չպէտք է եզրակացնել թէ Հայաստանեայց եկեղեցու փրկութիւնը միմիայն գիտութեան մէջն ենք տեսնում, առանց կրօնական վերածնութեան ի զուր կ'անցնեն մեր ջանքերը, ամենից առաջ պէտք է հոգով և սրտով քրիստոնեայ դառնանք. բայց ներքին վերածնութեան գլխաւոր օժանդակներից մէկը եկեղեցական գիտութիւնն է, որի վերայ հրաւիրում ենք մեր բանիմաց հասարակութեան ուշադրութիւնը։

Եկեղեցու գոյութիւնը պահպանելու, նորա բարոյական ազդեցութիւնը ժողովրդի մէջ զօրացնելու էական գործ կատարողները վարչական հաստատութիւններն են՝ առաջնորդութիւններն ու յաջորդութիւնները, քարոզչութիւնն ու քահանայութիւնը՝ բայց հէնց այդ պաշտօնէութիւնների յարգը բարձրացնելու համար է,

որ մենք անհրաժեշտ ենք համարում գիտութիւնը։ Եկեղեցականի հոգեւոր զէնքը գիտութիւնն է, ինչ է զինուորը պատերազմի դաշտում առանց զէնքի։ Ով պաշտպանում է ագիտութիւնը, նա սիրտ չունի ճշմարտութեան համար, որովհետեւ բարոյական գիտութիւնը հետամուտ է միմիայն ճշմարտութեան։ Բոլոր ճանապարհները դէպի Հռովմ են տանում, բայց երկու ճանապարհ կայ միայն ճշմարտութեան հասնելու համար. կրօնի և գիտութեան ցոյց տուած ճանապարհները։ Իսկ Տիրոջ խօսքի համաձայն մարդկութեան ամենամեծ բարիքը, ներքին, բարոյական ազատութիւնը ճշմարտութիւնից է բղխում. «եւ ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ»։

Ներկայ եկեղեցականներս շատ բանով երախտապարտ ենք մեր նախորդներին, նոքա մինչեւ իսկ ներկայ մտքով գիտութիւն չունենալով հանդերձ՝ իրենց հաւատարմութեամբ, աւանդապահութեամբ և նախանձախնդրութեամբ պահպանել են նախնեաց թողած ամենամեծ ժառանգութիւնը, բայց այսօր անհրաժեշտութիւն է դարձել, որ նախայիշեալ յատկութիւնների վերայ աւելանայ և գիտութեան ոգին։ Աւանդութիւնը երկար ժամանակ պահպանում է սրբազան ժառանգութիւնները, բայց առանց գիտակցութիւնը կենդանացնող միջոցների, նա աղօտանում է և կորցընում իւր զօրութիւնը։ Ոչ մի ժամանակ այնպիսի անհրաժեշտութիւն չէ զգացուած հինն ուսումնասիրելու, անցեալի ճշմարիտ սկզբունքները նոր շինութեան հիմք դարձնելու համար, ինչպէս այժմ։ «Ծառն արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն», Հայաստանեայց եկեղեցու գոյութեան արմատը նորա անցեալն է, որից նոր ոստեր պիտի աճին՝ պտղաբեր լինելու համար։ Բայց այս ամենը պարզուել և մարդկանց սրտում հաստատուել կարող է գիտութեան միջնորդութեամբ։ Նա՛ միայն կարող է փոշիների տակից նոր ճշմարտութիւններ հանել, նա՛ միայն կարող է բալասաններ գտնել վէրաւոր կողմերը բուժելու համար։ Առանց գիտութեան հոգեւոր կեանքի մէջ անշարժութիւն, կզգիացում յառաջ կգայ, որ դէպի մեռելութիւնն է տանում։ Շատ խոշոր դժուարութիւններ կան այս նպատակին իրագործելու համար, բայց հաւատացած ենք, որ մեր հոգեւոր վարչութեան և ժողովուրդի հետեւողական ձգտումն ու ջանքերը կը խորտակեն բոլոր դժուարութիւնները։ (*)

Գ. Վ. ՑՈՎՍԷՓԵԱՆ

ԱՐԱՐԱՏ, Օգոստոս եւ Սեպտեմբեր. 1900.

(*) Կրճատուած է այս յօդուածի Զ. հատուածը։

Ի.

ԴԱՐՁ ԴԷՊԻ ԼՈՒՍԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ

(ԱՆԱՌԱԿԻ ԿԻՒՐԱԿԻՆ)

Կորուսեալ էր եւ գտաւ
Ղուկ. ժե. 3

Ա.

Մեր եկեղեցու հայրերը գեղեցիկ կերպով կարգաւորել են ժամապաշտութեան գործը, երգերն ու շարականները, հին և Նոր կտակարանների ընթերցուածները, որպէս մի մի փոքրիկ ամբողջութիւն, կապելով դէպքերի, տօների կամ որոշ գաղափարների հետ։ Այս վերջին կարգաւորութիւնը, յատկապէս, աչքի է ընկնում Մեծի պահոց կիւրակիների ընթերցուածների դասաւորութեան մէջ. ընթերցուածների ոմանց անունով էլ կոչուած են կիւրակիները։ Այս օրուայ կիւրակին Անառակի կիւրակի է կոչւում այն պատուական առակի անունով, որ անառակ որդու դարձի պատմութեան է վերաբերում։ Ընթերցողների յիշողութեան մէջ վերակենդանացնելու և մեր խօսքի հասկացողութիւնը դիւրացնելու համար՝ տալիս ենք առակի համառօտ բովանդակութիւնը։

Մի մարդ երկու որդի ունէր։ Կրտսերը հօրից ստանալով իրեն հասանելիք ժառանգութեան բաժինը, գնաց օտար աշխարհ, եւ շուայտութեամբ վատնեց իւր ստացած ամբողջ հարստութիւնը։ Նորա չար բաղդից այդ երկրում սով սկսաւ և նա ստիպուեցաւ, հրէայի համար ամենից անարգ գործը, խոզարածութիւն յանձն առնել, իւր սնունդը հոգալու համար։ Բայց նոյն իսկ խոզերի առաջ թափած մնացորդներից էլ բաժին չէր հասնում նորան։ Իւր ամենածանր նեղութեան մէջ յիշեց հօր հացալից տունը, բազմաթիւ ծառաներով, և որոշեց գնալ հօր ոտներն ընկնել, որ անարժան լինելով որդի կոչուելու, ընդունէ որպէս մէկը իւր ծառաներից։ Անառակ որդին երբ մօտեցաւ և հայրը լսեց նորա գալուստը, ընդառաջ գնաց, գրկեց և համբուրեց, պատուիրեց նոր զգեստ հագցնել, պարարտ եզներից մէկը մորթել և ուրախութեան խնջոյք պատրաստել, «զի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ»։

Մեծ եղբայրը, երբ դաշտից տուն դարձաւ և իմացաւ պատճառը ուրախութեան, իւր դժգոհութիւնը յայտնեց հօրը: «Այսքան ժամանակ քեզ հետ եմ և հաւատարմութեամբ իմ որդիական պարտաւորութիւններս եմ կատարում, մի ուլ անգամ չտուիր, որ ընկերներիս հետ ուրախանամ, իսկ քո այս որդին, որ հարստութիւնդ անառակութեամբ վատնեց, պարարտ եզը մորթեցիր Նորա համար»: Բայց հայրը մեղմութեամբ պատասխանեց. «Որդեա՛կ, դու միշտ ինձ հետ ես, և ինչ որ իմս է, քոնն է, բայց քո այս եղբայրը մեռած էր և կեանք ստացաւ, կորած էր գտնուեցաւ»:

Բ.

Այս պարզ, բայց պատկերաւոր, սրտառուչ և գեղեցիկ առակի մէջ ամփոփուած է աւետարանական քարոզութեան ամենամեծ գաղափարներից մէկը, Երկնաւոր Հօր անսահման գթութիւնը դէպի մարդկային հոգին և Նորա բարձր գնահատութիւնը: Այս միեւնոյն գաղափարը մեր Տէրը այլ և այլ ձեւերով արտայայտել է իւր քարոզութիւնների մէջ. Երկնաւոր Հայրը գթութեան կատարելութիւնն է, որին պիտի հետեւեն մարդիկ, Նորա խնամքին են ենթարկուած բոլոր մարդիկ, որոնց գլխի մազերն անգամ համրուած են Նորա կողմից: Եթէ երկրաւոր հայրերը, որ չար են, պակասաւոր, իրենց հաց խնդրող որդուն քար չեն տալ և ոչ ձուկ խնդրողներին՝ օձ, որչա՛փ եւս առաւել Երկնաւոր և բարի Հայրը: Մարդկային հոգին, անձը թանգ է և արժէքաւոր Աստուծոյ համար:

Բայց այդ միեւնոյն գաղափարները աւելի շեշտուած և աւելի պայծառ կերպով արտայայտուած են այս օրուայ ընթերցուածի մէջ: Քրիստոսի մերձաւորութիւնը մաքսաւորներին և մեղաւորներին, որոնք գալիս էին Նրան լսելու, բամբասանքի նիւթ էր դարձել փարիսեցիների և դպիրների կամ սադուկեցիների համար, և խէթ աչքով էին նայում, որ Նա ուտում, խմում է, նստում, կանգնում նրանց հետ: Ուրիշ անգամ Նա ասել էր արդէն, թէ «ոչ եկի կոչել զարդարս, այլ՝ զմեղաւորս» (Մատթ Թ. 13), այժմ բացատրում է իւր միտքը աւելի պարզ, առակաւոր կերպով: Հովիւը հօտը թողնում և փնտռելու է գնում իւր կորսուած ոչխարը, և երբ գտնում է, ուրախանում է: Կինը, որ կորցրել է իւր տաս դրամներից մէկը, որոնում է տան ամեն անկիւնները և երբ գտնում է, ուրախանում է ինքը և ուրախակից անում իւր դրացիներին: Այսպէս ամեն մի կորած հոգու գիւտը, ամեն մի մեղաւորի դարձը ուրախութեան պատճառ է հրեշտակների և Աստուծոյ համար երկնքում:

Անառակ որդին երբ եկաւ, հայրը Նորան չյանդիմանեց, քննու-

թեան չէնթարկեց, թէ ինչպէ՛ս վատնեց իր հարստութիւնը, ինչպէ՛ս անառակ կեանք վարեց, այլ գրկաբաց ընդունեց նորան, համբուրեց, ուրախացաւ և խնջոյք սարքեց։ Բաւակա՛ն է, որ վերադարձել է մոլորուած որդին, բաւակա՛ն է, որ հասկացել է իր սխալը և դարձի եկել, մեռելութիւնից յարութիւն է առել, փրկուած է նորա թանկագին հոգին, «կորուսեալ էր և գտաւ»։ Մնացածները երկրորդական են։ Լայնախոհ, ներողամիտ և սիրող Երկնաւոր Հօր պատկերն է գծագրուած այստեղ դէպի մարդը, դէպի մարդկային թանկագին հոգին։ Մարդասիրութեան, անձի կամ հոգու գնահատութեան ամենաբարձր արտայայտութիւնը բոլոր կրօնների և մարդկութեան պատմութեան մէջ, և բոլորովին տարբեր, մեր սովորական մտածողութեան և հասկացողութեան չափանիշներից։

Մեր Տիրոջ կոչումը ՓՐԿԻՉ բառով է սահմանուած, Փրկիչ բարոյական մտքով։ Նա չէր եկել նիւթական կամ արտաքին, քաղաքական կամ տնտեսական հասկացողութեամբ փրկութիւն բերելու. Նորա կոչումը շատ աւելի բարձր էր, յաւիտենական։ Նա եկել էր աւելի թանգ բանի համար, հոգիների փրկութեան և նրանց արժէքի բարձրացման համար, «խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ և զարդարութիւնն նորա, և այդ ամենայն յաւելցի ձեզ» (Մատթ. Զ. 33)։ Արդարութեան գաղափարը աւետարանի մտքով ոչ միայն հակադրութիւն չէ քաղաքական ճշմարիտ ազատութեան և ժողովրդական կեանքի բարօրութեան, այլ և նրանց հիմքը պիտի լինի։ Մարդկային յարաբերութեան մի նոր չափանիշ էր բերել, սիրոյ և եղբայրութեան, հոգիների հաւասարութեան և գնահատութեան գաղափարը։ Մի է Աստուած, և Նա երկնաւոր հայրն է ամենքի։ Հոգիների մէջ ազգի և սեռի խտրութիւն չկայ, արտօնեալ և իրաւազուրկ չկայ։ Բոլորն էլ հաւասարապէս թանգ են Աստուծոյ համար և թանգ պիտի լինին իրար համար (Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո)։ Եւ որովհետեւ թանգ է ամենայն հոգի կամ անձն, ուստի և կորուսեալի գիւտը կամ դարձը, ուրախութիւն է Աստուծոյ համար։ Բայց ոչ միայն այդ, այլ և պէտք է կորուսեալի յետեւից գնալ, փնտռել և գտնել նորան։ Այս է պատճառը, որ քրիստոնէութեան առաջին դարերից՝ բարի հովիւը գըտած ոչխարը ուսին՝ նիւթ է դարձել արձանագործութեան։ Հոգիների ազատութեան կամ փրկութեան, նրանց բարձրացման համար է եկել Քրիստոս. Աստուած մեղաւորի մահը չի կամենում, այլ նորա դարձը և կեանքը։ Այսպէս են ըմբռնել և հասկացել եկեղե-

ցական մեծ հայրերը. ըստ Աթանասի Քրիստոս մարդացաւ, որպէս զի մարդը աստուածանայ։

Ասացինք, թէ տարբեր են այս մտքերն ու ըմբռնումները մեր սովորական հասկացողութիւններից։ Մենք ուրիշների մէջ, շատ յաճախ, միայն պակասաւոր կողմն է, որ տեսնում ենք, փոքր պակասութիւններն իսկ խոշորացոյց ապակիով դիտում, մինչդեռ պէտք էր նախ դրական կողմերը որոնել և ըստ այնմ դատել։ Սովորական, լաւ մարդիկն անգամ, որոնց տիպն է այստեղ աւագ որդին, հաւատարիմ իր օրինական արտաքին պարտականութիւնների կատարման մէջ, չի տեսնում կարեւորը, երբ հաշիւներով է մօտենում խնդրին։ Նրա համար էական չէ, որ եղբայրը տուն է դարձել, այլ որ հայրը ըստ արժանւոյն չէ գնահատել իր հաւատարմութիւնը, իր կարծիքով։ Իսկ «փարիսեցիներ ու սադուկեցիներ» միայն արտաքինն են տեսնում ու դատում, ուրիշի աչքի շիւղն են տեսնում, իրենց աչքերում գերան լինելով. «շնացող կնոջ» մէջ միայն քարկոծման արժանին, հպարտութեան և գերազանցութեան բարձունքից նայելով, առանց անդրադառնալու դէպի իրենց պակասութիւնները։ Բայց Տէրը թափանցում է նրա հոգու խորքը և այնտեղ տեսնում է առողջ, բայց թմրած յատկութիւններ, որ զարթնելով, աճել և ամբողջ հոգին կենդանացնել, կերպարանափոխ անել կարող են, բոլորովին հակառակ վճիռ է տալիս. «Եւ ոչ ես դատապարտեմ, ե՛րթ, յայսմհետէ մի՛ մեղանչեր (Յովհ. Ը. 10)։ Կեանքի մէջ, երբեմն, ներողամտութիւնը դէպի յանցագործը աւելի դրական արդիւնք է ցոյց տալիս, քան պատիժը, որին արժանի է, միայն մարգարիտը խոզի առաջ չպիտի ձգել։ Ներողամտութիւնն էլ ամեն մարդու յատուկ չէ, այդ մեծ և բարձր հոգիներին է յատուկ և նրանք զգում են, թէ ո՛րտեղ պէտք է գործադրել։

Գ.

Դիտել է՞ք լեռների բարձունքներից աւելի հեռաւոր տարածութիւնները։ Ձորերն ու դարաւանդները միայն ձեր շուրջն են, քանի հեռուն էք նայում, այնքան հաւասարւում են անհարթութիւնները և գեղեցիկ, ակնապարար դաշտավայրի փոխարկւում։ Մոռացէք եսական և անձնական անհաւասարութիւններն ու տեսակէտները։ Սովորեցէ՛ք բարձունքից դիտել մարդկային կեանքն ու գործերը, և եթէ մի քիչ էլ թափանցէք ուրիշի հոգու խորքը եւ համեմատութեան դնէք ձեր ներքին աշխարհի հետ արդարութեան զգացումով, այնտեղ մեծ գեղեցկութիւններ կը տեսնէք»։

Արդարեւ գեղեցիկ է մարդկային հոգին, ամենամեծ հրաշալի-

քը տիեզերքի մէջ, ինքն էլ մի տիեզերք։ Ի զուր չէ «ներքին աշխարհ» կոչուել, մի մեծ աշխարհ է նա, մեր մտքով և զգացմունքով, մեր յոյսերով և ձգտումներով, մեր երեւակայութեամբ և թախիծներով, մեր սիրով և կարեկցութեամբ, մեր առաքինութիւններով և բարի գործերով, մեր բարեպաշտութեամբ և խղճի ձայնով...։ Հասկանալի է, թէ ինչո՛ւ մեր Տէրը մարդկային հոգին կամ ներքին աշխարհը արքայութեան վայր է ճանաչել, «արքայութիւնն ի ներքս ի ձեզ է»։ Բայց նա՝ այդ հոգին՝ մի դժոխք կարող է դառնալ իր նախանձով, ատելութեամբ, չարութեամբ, եսականութեամբ, շահամոլութեամբ և այլ բացասական կրքերով։

Դալարագեղ բուրաստան դարձրէք այդ հոգին, զարդարուած սիրուն, ակնապարար, հոտաւէտ ծաղիկներով, նմանեցէ՛ք իմաստուն վաճառականին, Տիրոջ խօսքի համեմատ, որ վաճառում է ամեն ինչ և թանկագին մարգարիտը գնում։ Այդ թանկագին մարգարիտը ձեր ներքին աշխարհն է, ձեր հոգին։ Ամենայն ինչ անցաւոր է, երկրորդական։ Գործադրեցէ՛ք ձեր մեծ ու փոքր ունակութիւնները, ձեր գիտութիւնը, ձեր արուեստը, ձեր գրիչը, ձեր լեզուն, ձեր ստացուածքը, որպէսզի ձեր հոգին դառնայ անգին մարգարիտ, պայծառ, լուսաւոր և աստուածանման։ Ամենափոքր բարիքն էլ, մինչեւ ծարաւին մի բաժակ ջուր մատուցանելը, անտես չի մնալ Աստուծոյ աչքից։ Ըստ չափու և ըստ կարողութեան, բերէք ձեր աջակցութիւնը հանրութեան բարոյական շէնքի կառուցման մէջ, նախ ձեզնից սկսած և՝ ապա ընտանիքից մինչեւ եկեղեցու, ազգութեան և հայրենիքի ոլորտները։ Այս է Աստուծոյ արքայութեան տիրապետութեան ուղեգիծը երկրիս վերայ։

Մարդկային հոգու և անձի արժէքաւորումը հիմքն է այս բոլորի։ Անձնաւորութիւնը սուրբ է, մի՛ մօտեցէք նորան երկաթի ձեռնոցներ հագած. մեծ վիշտ է պատճառում մեզ, տեսնելով մեր ժողովրդի մէջ երկպառակութեան, իրար սեւացնելու, իրար հակառակելու հոգին մինչեւ բացարձակ թշնամութիւն։ Այդ ոչ քրիստոնէական է և ոչ ազգասիրական, այլ միակողմանի մոլորութիւն, և նոյն իսկ հիւանդութիւն և սխալ հասկացուած հայրենասիրութիւն։ Ամենայն մոլեռանդութիւն և չափազանցութիւն վտանգաւոր է, որից պէտք է խուսափել։

Գնահատել մարդկային հոգին, ուրիշի անձը, պատիւը, քրիստոնէական պարտաւորութիւն է և բարեկրթութեան պտուղ։ Դէպի լոյս և կեանք ընթացէք՝ Տիրոջ շաւիղով, աւետարանից եկած ճառագայթներով առաջնորդուած։

Շնորհք Տեառն եղիցի ընդ ձեզ, ամէն։

Գ. Կ.

ԻԱ.

ՄԱՐԴՈՒ ԿՈՉՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԻՍ ՎԵՐԱՅ

(ԸՍՏ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ)

Տո՛ւր զհամար տնտեսութեան քո.
Ղուկ. ԺԶ. 2։

Ա.

Մեծ պահքի երրորդ կիւրակին Տնտեսի կիւրակի է կոչւում աւետարանական այն ընթերցուածի անունով, որ կարդացւում է պատարագի ժամանակ այդ օրը։ Աւետարանական ընթերցուածն իսկապէս երկու մեծ հատուածից է բաղկացած, տարբեր բովանդակութեամբ, բայց ըստ էութեան իրար լրացնող և լուսաբանող։ Առաջին հատուածը Տնտեսի առակն է, որի անունով կոչւում է կիւրակին, և երկրորդը Մեծատան և աղքատ Ղազարոսի առակը։ Երկուսն էլ առանց բացատրութեան, անհասկանալի, մինչեւ իսկ, կարծես, հակառակ տրամաբանութեան։

Տնտեսի առակի բովանդակութիւնը հետեւեալն է։ Մի մեծատուն իւր կալուածների կառավարիչ կամ տնտես ունէր․ երկար ժամանակ անցնելուց յետոյ, կամենում է նորա ձեռքից առնել պաշտօնը, կանչում է և ասում, «տո՛ւր զհամար տնտեսութեան քո», այսինքն տո՛ւր հաշիւդ։

Տնտեսը կամ կալուածների կառավարիչը մտածում է․ ի՞նչ պիտի լինի իմ վիճակը, աշխատել չեմ կարող, մուրալ կ'ամաչեմ։ Ի վերջոյ իւր ապագան ապահովելու համար, հետեւեալ որոշումն է տալիս․ տիրոջ պարտապաններին մէկ մէկ կանչելով, զեղջում է նրանց պարտքերի մի մասը այն հաշւով, թէ պաշտօնից զրկուելուց յետոյ, իւր բարերարեալների կողմից կը հոգացուին իւր ապրուստի միջոցները։ Իսկապէս ըստ երեւոյթին մի տեսակ գողութիւն էր այդ միջոցը, բայց տէրը գովում է տնտեսի անիրաւութիւնը, «զի իմաստութեամբ արար»։ Բառացի հասկանալով, իրօք այդ բոլորովին դէմ է աւետարանական ընդհանուր քարոզութեան, որ ուղղամտութիւնն է, հաւատարմութիւնը, ճշմարտութիւնը։ Հաւանօրէն այս տեղ բնագրի խմբագրութեան մէջ մի չփոթութիւն

կայ, ինչպէս կարծում են մեկնաբաններից ոմանք, բայց առակին հետեւող նախադասութիւնները, «արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան, զի յորժամ պակասիցէ այն, ընկալցին զձեզ ի յարկսն յաւիտենականս», կամ «ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի», որոշ չափով պարզում են իմաստը:

Երկրորդ առակն էլ իւր հակադրութեան դժուարութիւններն ունի: Մի մեծատուն ապրում էր շքեղութեան և առատութեան մէջ, իսկ նորա դրանը ընկած Ղազարոս անուամբ մի աղքատ, կատարեալ անուշադրութեան մատնուած, նոյն իսկ չների առաջ թափուած փշրանքներից էլ զրկուած: Երկուսն էլ մեռնում են, մեծատունը գնում է դժոխք, իսկ Ղազարոսը արքայութիւն, կամ ըստ հրէական, ժողովրդական, հասկացողութեան, Աբրահամի գոգը: Ինչո՞ւ մեծատունը դժոխք պիտի գնար, էլի մի քիչ հասկանալի է, որովհետեւ անգութ էր և անողորմ դէպի իւր առաջ ընկած թշուառը: Բայց աղքատ Ղազարոսը իւր ո՞ր առաքինութեան համար էր Աբրահամի գոգը նստել, առաջին անգամից պարզ չէ. Նրա համար միայն, որ աղքատ է՞ր, խեղճ, օգնութեան կարօ՞տ: Այդ բարոյական առաքինութիւն չէր: Տիրոջ միտքն այն չէր, թէ բոլոր հարուստները կամ մեծատունները դժոխք պիտի գնան և աղքատները արքայութիւն, որքան և գիտնականներից ոմանք էբիոնիտական հասկացողութեան հետքեր կամենան որոնել այստեղ, այլ այս հակադրութեամբ սրել, աւելի չեշտել, մարդկային անգթութեան հետեւանքը, երկրաւոր հարստութիւնից յաւիտենական բարիք ձեռք բերելու անհասկացողութիւնը: Հակադրութիւն են միմեանց ոչ միայն հարուստն ու Ղազարոսը, այլ և տնտեսն ու մեծատունը, մէկը «իմաստութեամբ» օգտագործեց իւր պաշտօնը, իսկ միւսը անգթութեան զոհ դարձաւ, զուրկ բոլորովին այդ իմաստութիւնից, որովհետեւ իւր երկրաւոր, եսական կեանքի համար միայն մտածեց:

Առակների այսպիսի լուսաբանութիւնից յետոյ, պարզ է նրանց բարձր նշանակութիւնը: Մեր կեանքը, գիրքը, ստացուածքն ու հարստութիւնը ժամանակաւոր է այս աշխարհիս վերայ, մենք Աստուծոյ կողմից ժամանակաւոր տնտեսներ ենք, «իմաստութիւն» պիտի ունենանք օգտագործելու իբրեւ միջոց, անանց բարիքներ ձեռք բերելու: Մամոնան նոյնպէս միջոց է բարիք գործելու համար, երբ նա նպատակ դարձաւ, «անիրաւութեան մամոնայ» է: Երկու Աստուած ունենալ կարող չենք, «ոչ կարէք մամոնայի ծա-

ռայել և Աստուծոյ»։ Եթէ մամոնան նպատակ դարձաւ, պաշտամունքի առարկայ, այդ ուրացութիւն է Աստուծոյ։ Իսկ Աստուծոյ ուրացութիւն, Քրիստոսի մտքով, նշանակում է ամենայն սրբութեան, լաւի, վսեմի, հանրութեան ծառայութեան և օգտակարութեան ուրացութեան։

Բ.

Բայց մենք տնտեսներ ենք ոչ միայն նիւթական ստացուածքի համար։ Ինչպէս դրամը, նիւթական հարստութիւնը պիտի օգտագործենք բարոյական նպատակների համար, այնպէս և մեր հոգեկան ունակութիւնները։ Նրանց համար ևս մենք ժամանակաւոր տնտեսներ ենք, պիտի գայ ժամանակը, երբ և այդպիսի տնտեսութիւնների հաշիւը պէտք է պահանջուի։ Գիտութիւն ունի՞նք, արուեստագէ՞տ ենք, լեզու ունի՞նք, գրիչ ունի՞նք, գործնական կեանքի մէջ հմտութիւն և կարողութիւն ունի՞նք, չպէտք է նրանք անձնական, շահադիտական, գծուծ նպատակների միջոց դառնան, այլ հասարակաց օգտի։ Ահա ինչպիսի՛ վսեմ իմաստ ունին այս առակները։

Մենք սովորաբար յարձակւում ենք նիւթապէս հարուստների վերայ և մեղադրում նրանց, թէ հարկաւոր չափով օգնութեան չեն գալիս բարի գործերի կամ ձեռնարկութիւնների մէջ։ Կարող է այդ երբեմն տեղին լինել։ Բայց պէտք չէ միակողմանի նայել կեանքի երևոյթների վրայ և ուրիշների աչքի մէջ «շիւղ» որոնող դառնալ. փոքր հարստութիւն է գրի՞չը, գիտական հմտութի՞ւնը, գեղարուեստական աստուածատուր շնո՞րհքը, հոգևորական կոչո՞ւմը»...։ Ինչո՞ւ չմեղադրել անբարեխիղճ լրագրողը, որ իւր սրբազան գրիչը գործադրում է եսական նպատակների համար, ծախում է այն դրամով, տարապարտուց սևացնում կամ զրպարտում սորան նորան այս կամ այն նպատակներով։ Ինչո՞ւ նոյն չափով չմեղադրել անբարեխիղճ բժիշկին, որ իւր հմտութիւնն ու գիտութիւնը օգտագործում է միայն դրամական նպատակների համար, մոռացնելով իւր նուիրական կոչումը. կաշառակեր և անհաւատարիմ պետական պաշտօնեային, դատաւորին, երկաթուղի և խճուղի շինող ճարտարապէտին, եկեղեցու պաշտօնեային, ուսուցչին..., և այսպէս աշխարհի մէջ գիրք, գիտութիւն, շնորհք և հմտութիւն ունեցող մարդկանց, որոնք չեն բերում այն հաւատարիմ ծառայութիւնը, որ սպասելի էր նրանցից յօգուտ ընդհանրութեան։ Սրանք բոլորն էլ «տնտեսութեան» տեսակներ են և հրաւիրւում են ամեն-

քըն էլ այս աւետարանական ընթերցուածներով, «իմաստուն տընտես» լինել։

Ժամանակի խորհուրդը բարիք գործելու մէջն է, օգտակար լինելու, ծառայութեան մէջն է, «մի՛ ձանձրանայք զբարիս գործել», (Ա. Տիմոթ. Գ. 13), ապա թէ ոչ «գայ գիշեր՝ յորժամ ոչ ոք կարէ գործել» (Յովհ. Թ. 4)։ Բարիք գործել. ոչ միայն սովորական հասկացողութեամբ, աղքատին, նիւթապէս կարօտեալին ողորմութիւն տալով, այլ լայն մտքով, ինչպէս ակնարկեցինք վերեւ։

Գ.

Այսպէս աւելի պէտք է խորանալ այս առակների իմաստի մէջ, միայն հարուստներն ու մտաւորականները, արուեստագէտները, գրողները չեն տնտեսութեան պաշտօնում, այլ ամենայն ոք։ Խնդիրն այն է, որ իւրաքանչիւր ոք լաւագոյն կերպով կատարէ իւր պարտքը, «որում շատ տուաւ, շատ պահանջեսցի, որում սակաւ, սակաւ». բայց գնահատութեան արժանի է ամենայն ոք, որ լաւագոյն կերպով է օգտագործել իրեն շնորհուած գրամագլուխը։ Աստուած գիտէ լաւագոյնը գնահատել, օրինակ այրի կնոջ լուման, որ սրտից էր բղխած, թէեւ նիւթական արժէքով չնչին։ Կեանքը կազմուած է փոքր բաներից, բայց առանց այդ փոքր բաների լաւ կատարման, լաւագոյն մեծը չի ստեղծուիլ։ Ամենահասարակ համարուած երեւոյթներն իսկ, իրենց արժէքն ունին։ Ամենալաւ սերմն իսկ, ժայռի վերայ ընկած, անպտուղ կը մնայ, իսկ բարեբեր հողի մէջ՝ արդիւնաւոր։ Այդ բարեբեր հողը հաւաքականութիւնն է՝ իւր ամէն մի անդամով։

Կառապան է՞ք, կարող էք բարի, ազնիւ եւ արդար կառապան լինել։ Կօշկակար է՞ք, կարող էք երեսի քրտինքով վաստակած, մաքուր հաց ուտել եւ կերցնել ձեր զաւակներին, բայց եւ խաբեբայ արհեստաւոր հանդէպ յաճախորդների։

Ծնող է՞ք։ Ի՞նչ թանկագին բան է զաւակը, խելօք մանչիկը, սիրունիկ աղջիկը։ Արտաքուստ ինչքա՞ն փոքր բաներ են մայրական պարտաւորութիւնները՝ սնունդ տալ, լողացնել երեխային, մաքրել եւ լուանալ նորա փաթոյթները, հագանելիքը, քնեցնել, ժամանակին, եւ այլ բազմաթիւ այսպիսի մանր բաներ։ Բայց այս մանր բաներից է կախուած մսի այդ գունդից մտածող եւ զգացող, բանական եւ բարոյական էակ ստեղծել։

Ահա մարդկային կոչումը, ըստ քրիստոնէական հասկացողութեան, «իմաստուն տնտես» լինելու կոչումը աշխարհիս վերայ։

Գ. Կ.

ԻԲ.

ԱՂՕԹՔԻ ՍՐԲԱՐԱՐ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Այլ դու յորժամ կայցես յաղօթս, մուտ ի սենեակ քո եւ փակեա զդուրս քո, եւ կաց յաղօթս առ Հայր քո ի ծածուկ:

Մատթ. Զ. 6.

Ա.

Աղօթքը կրօնական կեանքի էական տարրն է։ Չկայ կրօն, աստուածպաշտութիւն առանց աղօթքի, միայն տարբեր են նրա մասին եղած հասկացողութիւնները։ Մինչդեռ հեթանոս ազգերի մէջ աղօթքի սովորական արտայայտութիւնը զոհն էր և կապուած առօրեայ կեանքի և նիստ ու կացի հետ. մինչդեռ հրէութեան մէջ աղօթքը մի արտաքին պարտաւորութիւն էր դարձել. քրիստոնէութիւնը բարձրացնում է նրա նշանակութիւնը և հոգու ամենից նուիրական և սրբազան գործողութիւններից մէկը հրատարակում։

Հրէաները զուրկ չէին աղօթքի բարձր հասկացողութիւնից, Հին կտակարանը ճշմարիտ և ջերմեռանդ աղօթողների քիչ օրինակներ չէ տալիս։ Մարգարէութիւնների և սաղմոսների մէջ կրօնական զգացմունքի և առ Աստուած անձնուիրութեան սքանչելի արտայայտութիւններ կան, բայց օրէնքի տիրապետութիւնը հետզհետէ խճողել էր կրօնական կեանքի բարձր ըմբռնողութիւնը և արտաքին ձեւ, արարողութիւն դարձրել զայն։ Զոհն ու պարտքի արտաքին կատարումը՝ Յիսուսի ժամանակի հրէութեան կրօնական կեանքի յատկանիշն էր, էական կողմը։ Հրէան պարտաւոր էր աղօթել օրուայ որոշ ժամերին, որտեղ էլ լինէր։ Բայց հոգին ժամացոյց չէ, որ երբ լարենք, հնչէ մեր ցանկութեան համեմատ։ Չէ կարելի ժխտել հասարակաց աղօթքի և աստուածպաշտութեան դաստիարակչական մեծ նշանակութիւնը, բայց եթէ կրօնը միայն արտաքին օրէնքի և մեքենայութեան կերպարանք է ստացած եւ կեանքն էլ նոյն դրոշմն է կրում. նշանակում է ողկոյզը քամել և կճեպը պահել։ Այսպէս էր հրէից մէջ Յիսուսի ժամանակ։ Փարիսեցիները կրօնի կենդանարար հոգին թողած, հետամուտ էին նա-

րն արտաքին, քարացած օրէնքներն ու աւանդութիւններն իրագործել, մժղուկները քամում և ուղտերն էին կլանում։ Աղօթքը, որ կրօնական և հոգևոր կեանքի միջուկն է, ամենասրբազան շարժումը ներքին աշխարհում, փարիսեցիների համար արտաքին, մեքենայական մի գործողութիւն էր, որ կատարում էին օրուայ որոշ ժամերին փողոցի անկիւններում, հրապարակներում, դաշտում... և բնականաբար ի ցոյց մարդկան, քանի որ համապատասխան չէր իրենց ներքին զգացման։

Բ.

Բայց մեր Տէրը ճիշդ դորա հակառակն է պատուիրում։ Քրիստոնեայի աղօթքը պէտք է կատարուի հոգու խորքում, ծածուկ, միայն Աստուծոյ առաջ։ «Մուտ ի սենեակ քո և փակեա՛ զդուրս քո», չպէտք է միայն բառացի հասկանանք, այլ և փոխաբերաբար։ Որովհետև կարող ենք սենեակի մէջ մտնել, հեռանալ մարդկանց աչքերից և փողոցի աղմուկից, բայց հոգւով արտաքին աշխարհի հետ կապուած լինել։ «Մուտ ի սենեակ քո», նշանակում է կտրուիր արտաքին աշխարհից, խորասուզուի՛ր քո հոգու խորին խորանները, քննութեան ենթարկի՛ր նորա բոլոր գաղտնի շարժումներն ու գործողութիւնները, և ապրիր միայն քո Աստուծոյ հետ։ Աղօթքը հոգևոր կեանքի ամենասրբազան վայրկեանն է, երբ մարդ առանց միջնորդի, դէմ առ դէմ կանգնած է իւր Աստուծոյ առաջ։ Աղօթողի համար Աստուած սպիտակափառ ամպերի վերայ չէ նստած երկնքում, տիեզերքի անհունութեան սահմաններում, այլ հէնց իւր սրտի մէջ։ Բայց եթէ երկնքում էլ լինէր, աղօթողի հոգին կը գտնէր Նորան, ճախրելով երկնային, անապական և կապոյտ եթերների մէջ։ Պէտք է միայն քաշել այն թանձր քօղը, որ յաճախ ծածկում է մեր հոգու աչքերը։ Աղօթքը հոգու տենչն է դէպի վսեմը, սուրբը, գեղեցիկը, դէպի Աստուած։

Աղօթքի ժամանակ չպէտք է նոյնպէս և հեթանոսների նման շատախօս լինել, սրտանց մի աղօթք երկու խօսքով, աւելի գին ունի քան ութ կանոն սաղմոս, որ քաղուած է առանց սրտի մասնակցութեան։ Նոյն իսկ կարող է աղօթքը չթանձրանալ խօսքերի մէջ, որովհետև մեր հոգու շարժումները հասկանալի են Աստուծոյ համար և առանց խօսքի ու բացատրութեան։ Աղօթք է և բարձրագոյն մտքով աղօթք, զղջման ու ապաշխարութեան զգացումից բղխած հառաչանքը կամ սրբազան խաղաղութեան մէջ անմռունչ զգացուած անձնուիրութիւնը, հպատակութիւնը Աստուծոյ կամքի առաջ։

Աղօթքի այս բարձր հասկացողութեան համեմատ քրիստոնէութեան մէջ բարձր են և նորա շարժառիթները։ Աղօթքը խնդրուած չէ երկրաւոր ստացուածքի և բարիքների համար, նորա նպատակը չէ Աստուծոյ կամքը և տնօրէնութիւնը փոփոխութեան ենթարկել մեր նիւթական կեանքի վերաբերութեամբ։ Այս մտքով տրուած աղօթքը դեռ եւս հեթանոսական դրոշմ է կրում իւր վերան. «Հայր մեր»-ի խնդրուածքներից միայն մէկն է մեր առօրեայ հացին վերաբերում. «Խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ և զարդարութիւն նորա և այդ ամենայն յաւելցի ձեզ», ասում է Տէրը։ Բայց այդ չէ նշանակում, թէ մեր ցաւերի և վշտերի համար Աստուծոյ գթութեան չպէտք է դիմենք։ Ընդհակառակ աղօթքի շարժառիթներից մէկը հէնց մեր կեանքի դժուարութիւններն ու կարիքներն են, լինի այն նիւթական թէ բարոյական։ Նիւթական կարիքներն առանց ազդեցութեան չեն մնում մեր ներքին աշխարհի վերաբերութեամբ։ Բայց աւելի խորն են հոգեկան վշտերն ու տագնապները։ Մարդկային կեանքն ազատ չէ մեծ և փոքր նեղութիւններից, փորձութիւններից. ամենքս մեր խաչն ունինք կրելու. մեր հոգին ներքին պատերազմի յաւիտենական մի ասպարէզ է և անվերջ ողբերգութիւնների շղթայ։ Ներքին տանջանքի և վշտակրութեան անսպառ մի աղբիւր է, մեղքի և անարդարութեան տիղմի միջից զարթնած խիղճը. նա կամենում է սրբուել, մաքրուել, խաղաղութիւն գտնել։ Եւ այս զգացումը մարդուն դէպի Աստուած է մղում։ Ինչպէս արտասուքը, մեր սրտի վերայ ծանրացած վշտի խոստովանութիւնը սրտակից բարեկամի առաջ, թեթեւացնում է մեզ, նոյնն աւելի մեծ չափով զգում ենք Աստուծոյ առաջ, որ մեր Հայրն է, մեր իսկական բարեկամը։ Այս որդիական զգացումը Աստուծոյ առաջ քրիստոնէական կրօնի ամենամեծ շնորհն է։ Այն տեղ բաց ենք անում մեր վիշտն ու տառապանքը, մեր վիրաւոր և փոթորկալից սիրտը, մխիթարութիւն, սփոփանք և խաղաղութիւն գտնելու համար։ Տագնապալից սրտից բղխած ջերմ աղօթքը երկնային մի ցօղ է պասքած հոգու վերայ։ Ջարդուած, կորացած վըշտի և նեղութեան ծանր բեռի տակ մօտենում ենք սիրոյ և գթութեան Աստծուն և հեռանում նորանից թեթեւութիւն և խաղաղութիւն գտած։ Իսկ հոգու խաղաղութիւնը ստեղծագործող կեանքի գրաւականն է, զօրութեան աղբիւրը մեր երկրաւոր կեանքի պատերազմի մէջ։

Աղօթքի միւս շարժառիթը, որ աւելի վսեմ է, սէրն է առ

Աստուած։ Հաւատացեալը իւր ամբողջ անձնաւորութիւնը, եսը ճնշում է Աստուծոյ կամքին հպատակելու համար. իսկ Աստուծոյ կամքը սիրոյ, արդարութեան, սրբութեան թագաւորութիւնն է մեր հոգու խորքում և երկրի վերայ։ Կրօնական անձի հոգու խորին խորհուրդներից մէկն է այս զգացումը, որ իսկապէս անկարելի է բացատրել։ Ինչպէս կողմնացոյցի սլաքը հակուած է միշտ դէպի հիւսիս, այդպէս էլ մարդկային եսը, բնութիւնը դէպի աշխարհայինը, փառքը, վայելքը, գայթակղութիւնը։ Ոչնչացնել այս ամենը և աստուածային սուրբ կամքի գերիշխանութիւնը հաստատել մեր հոգու մէջ, աղօթքի բարձրագոյն նպատակն է։ Այսպէս աղօթքը բանաւոր զոհ է Աստուծոյ սրբութեան սեղանի վերայ. աւելի սրբանուէր և անուշահոտ քան կնդրուկը։ Այսպիսի աղօթքը ամեն ժամանակի և ամեն մարդու գործ չէ, որովհետև բոլոր մարդիկ և ամեն ժամանակ ընդունակ չեն ամենաբարձր զոհաբերութեան։ Սրբազան մի վայրկեան է այս մարդկային կեանքի մէջ, երբ նա իւր ամենաթանկագին ստացուածքը՝ սիրտը զոհ է բերում Աստուծուն։ Հպատակուել ուրիշի կամքին, նշանակում է կորցնել ներքին անկախութիւնը, այն ինչ այստեղ մարդկային հոգին ոչ միայն չի կորցնում, այլ սրբուած, մաքրուած ներքուստ, աւելի ոյժ, կորով և ոգևորութիւն է ստանում՝ իւր ներքին աշխարհում Աստուծոյ կամք, ճշմարտութիւն զգացած գաղափարներն իրականացնելու։ Մի պարադոքս է այս մարդկային հոգու մէջ, ինչպէս պարադոքս են հոգևոր և բարոյական կեանքի շատ գաղափարները։

Գ.

Նիւթապաշտական ուղղութեան հետևող և կրօնական խնդիրների մասին հասկացողութիւն չունեցող մարդկանց կողմից յաճախ արհամարհանք է արտայայտւում աղօթք բառը լսելիս։ Ներկայ լուսաւորեալ դարու համար հնացած մի գաղափար է այդ. այժմ գործի, աշխատանքի ժամանակ է։ Աղօթքը միջնադարեան անապատականների և վանականների գործն է։

Սակայն ոչ մի գաղափար այնպէս սերտ կապուած չէ աշխատանքի գաղափարի հետ, ինչպէս աղօթքը։ Ճշմարիտ աղօթողի աշխատանքը սրբւում, ազնուանում է, ինչպէս նորա սիրտը։ Աշխատանքն ինքն ըստ ինքեան նպատակ չէ, այլ միջոց մի աւելի բարձր հոգևոր նպատակի համար. նպատակ դարձած աշխատանքը նոր տեսակի նիւթապաշտական հեթանոսութիւն է և ամեն տեսակ չարեաց աղբիւր։ Սոցիալական դժբաղդ դրութիւնների, կեղեքում-

ների մեծագոյն մասն այսպիսի հասկացողութիւններից են ծագում։ Աղօթք և անգործութիւն գաղափարները ոչ միայն հոմանիշ չեն, այլ կատարեալ հակադրութիւններ են։ Քրիստոնէութիւնը դատապարտում է ծուլութիւնն ու ստահակութիւնը նոյնպէս, ինչպէս մահացու միւս ծանր մեղքերը։ Ընդհակառակ ճշմարիտ կրօնական զգացմունքն է և նորա հետ աղօթքը, որ մեր երկրաւոր և անցաւոր կեանքին հոգևոր բովանդակութիւն է տալիս, կրկնապատկում կեանքի արժէքը, ոյժ և կարողութիւն ներշնչում Աստուծոյ հոգեւոր թագաւորութեան փութաջան քաղաքացիներ դառնալու։ Ջերմեռանդ աղօթքի ազդեցութեան տակ մարդկային հոգին ինչպէս ամպ լցւում է սիրոյ ցօղով, բանաւոր, ծարաւ տունկերի վերայ անձրևելու համար։ Աղօթքը սէր է, անձնուիրութիւն դէպի մեր երկնաւոր Հայրը և Նորա երկրաւոր որդիք, որ մեր եղբայրներն են։

«Ուսուցիչ ձեր Քրիստոս է»։

Նա մեր ուսուցիչն է և՛ աղօթքի համար։ Ի՞նչ էր Նորա ամբողջ կեանքը, Նորա գործը, եթէ ոչ Աստծուն նուիրուած մի աղօթք։ Աղօթքով սկսեց իւր գործը անապատի մէջ, աղօթքով չարունակեց և աղօթքով վերջացրեց Գեթսեմանի պարտիզում։ Նա, որ աշխատանքից ժամանակ չունէր հաց անգամ ուտելու, առանձնանում էր յաճախ աղօթելու համար, որպէս զի նոր ոյժ ստացած՝ դարձեալ գործէ։ Ի՞նչ կ'լինէր տիեզերական պատմութեան ընթացքը, եթէ չլինէր Գեթսեմանի պարտէզի աղօթքը. շատ գեղեցիկ և սրամիտ կերպով նկատել է մի աստուածաբան։ Աղօթքով յաղթեց մեր Տէրը իւր ներքին տագնապներին, որ այնպէս համառօտ, բայց սրտառուչ կերպով նկարագրել է Ղուկաս, և ապա հոգու խաղաղութիւն ստացած՝ խաչի ճանապարհն ընտրեց։

Գ. Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԻԳ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՆՈՒԱՆ

ՏԱՃԱՐԻ ՈՒԽՏԻ ՕՐԸ

«Ի վերայ աջոյն Ս. Լուսաւորչին հաստատեալ
կայ ամենայն ազգն հայոց»:

Առաքել Դաւրիժեցի

Ա.

Հայաստանեայց եկեղեցին երէկ տօնեց Գրիգոր Լուսաւորչի Խոր Վիրապ մտնելու յիշատակը, որ միեւնոյն ժամանակ մեր Տաճարի հաստատութեան տարեդարձն է և Ուխտի Օրը։ Լուսաւորչի գործը և նորա կատարած դերը մեր պատմութեան համար, պիտի լինի մեր այսօրուայ խորհրդածութեան նիւթը։

Առաքել Դաւրիժեցին վերեւ մէջ բերուած բնաբանի խօսքերի մէջ ամփոփել է ժամանակի հասկացողութիւնը Հայաստանեայց եկեղեցու և նորա նշանակութեան մասին. Լուսաւորչի Աջը Հայոց Հայրապետութեան նշանակն է, Հայոց Հայրապետութիւնը Հայաստանեայց եկեղեցու տեսանելի և շօշափելի կազմակերպութիւնն է, նուիրապետութիւնը, պաշտօնէութիւնը հաւատացեալ մանկանց հետ։ Ո՛վ ծանօթ է Հայաստանեայց եկեղեցու ծագման, զարգացման և կատարած դերին պատմութեան ընթացքում, նա լիովին կարող է ըմբռնել այդ խօսքերի իմաստը։ Լուսաւորչի հաստատած եկեղեցու միջոցով է, որ պահուած է հայ լեզուն, գիրը, գրականութիւնն ու արուեստը, մշակոյթն ու գիտութիւնը անցեալի մասին, որ ասել է նոյն ինքն հայ ժողովուրդը դարերի ընթացքում։ Լուսաւորչի ձեռքով է կերտուած այս եկեղեցին, որ եղել է փրկութեան տապանը մեր ժողովրդի, որ պահել է նորան դարերի բերած ջրհեղեղների ժամանակ, մաքառելով և մահաբեր անգիտութեան և խաւարի դէմ։ Այս փրկարար և լուսատու հաստատութեան կազմակերպողն է, ճարտարապետը մի մեծ անձնաւորութիւն, որին որակել է հայ ժողովուրդը «Լուսաւորիչ» բառով։ Նախկին լուսաւորիչներ ենք անուանում Թադէոս և Բարթուղիմէոս առաքեալներին, միայն Գրիգորին յատկացուած «Լուսաւորիչ» բնորոշման

անդրադարձմամբ։ Լուսաւորիչ տիտղոսը յատուկ է միայն Սուրբ Գրիգորին և այդ այն անթառամելի պսակն է, որ հիւսել է հայ ժողովուրդը նորա գլխի շուրջը։

Բ.

Ի՞նչ է արել նա։

Մեր ծանօթութիւնը քիչ է իր բազմարդիւն կեանքի գործունէութեան մասին, ինչպէս քիչ է մեր Տիրոջ և Փրկչի կեանքի և գործունէութեան մասին։ Հայ պատմիչներից մի քանիսը տեղեկութիւններ են հաղորդում, բայց շատ խճողուած աւանդութիւններով, սակայն «Ծառն ի պտղոյ իւրմէ ճանաչի», և Լուսաւորչի անձն ու գործը նորա հաստատած և կազմակերպած եկեղեցուց։ Ճշմարիտ է, մինչեւ Լուսաւորիչ Հայաստանում քարոզուած է քրիստոնէութիւնը ըստ աւանդութեան Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների ձեռքով, ունինք նաեւ հաստատուն տեղեկութիւն Լուսաւորչից առաջ հայ եպիսկոպոսութիւնների գոյութեան մասին Հայաստանում, բայց Հայաստանեայց եկեղեցու հաստատութեան և կազմակերպութեան գործը կատարուած է Լուսաւորչի ձեռքով։ Դիւրին չէր ամբողջ արքունիքը, նախարարական տները ժողովրդի հոծ բազմութեան հետ դարձի բերել, եկեղեցիներ և տաճարներ շինել, դպրոցներ հաստատել, եպիսկոպոսութիւններ և պաշտօնէութիւն, կառավարական ամբողջ կարգաւորութիւն ստեղծել մի ընդարձակ երկրի և ժողովրդի մէջ։ Երկար տարիների և անխոնջ աշխատանքի արդիւնք էր այդ, աստուածաշնորհ և հանճարեղ առաքելական գործ, որի պատմութիւնը մանրամասնութիւններով ծածկուած է մեր տեսութիւնից, գրաւոր և ժամանակակից աղբիւրների պակասութեան պատճառով։ Պատմութեան մանրամասնութիւնները չկան, բայց կայ գործը, Հայաստանեայց առաքելական կազմակերպեալ եկեղեցին իր նուիրապետութեամբ, պաշտօնէութեամբ և կարգաւորութեամբ։

Նորա անձի և մեծութեան բնորոշող մի գիծն է և կենդանի նահատակ և խոստովանող լինելու իրողութիւնը։ Լուսաւորչի չարչարանքների մեզ հասած աւանդութիւնը յայտարարն է նորա հաւատի և տոկունութեան, անպարտելի անձնուիրութեան և հաստատակամութեան դէպի իր գործը։ Այսպիսի յատկութիւններով է, որ նա երկար տարիների աշխատութեամբ հասել է իր վերջնական յաղթանակին։ Հին Յոյները կամ Հռոմայեցիները մրցութիւնների և պատերազմների մէջ յաղթական հերոսների գլուխները զարդա-

րում էին պսակներով. գեղեցիկ է, անշո՛ւշտ, ծաղիկներից և մըրտեններից կանաչ տերևներից հիւսած պսակը, բայց այդ գեղեցկութիւնը ժամանակաւոր է, իսկ հայ ժողովուրդը խոստովանողական և առաքելական պայքարի մէջ յաղթական Գրիգորին պսակել է յաւիտենական և անթառամելի պսակով, որ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ անունն է։

Քրիստոնէութիւնը հայ ժողովուրդի աչքում լոյս է, ուստի և նորա մատակարարը՝ «Լուսաւորիչ»։ Այդ լոյսը մարդկային չէ և ոչ նիւթական, այլ երկնային։ Լուսաւորչի կանթեղի, հրաշալի, ժողովրդական սքանչելի բանաստեղծութեամբ յօրինուած աւանդութիւնը, այդ հայեացքի և հաւատի յայտարարն է, Արագածի գագաթին կախուած է երկնքից այդ կանթեղը, որի մէջ լուցի փոխարէն Լուսաւորչի արցունքն է, միշտ բորբոքս Աստուծոյ առաջ, որ անմար մնայ՝ խաւար կեանքը լուսաւորող այդ կանթեղը։ Ո՞ր գիրքը կարող էր Գրիգոր Պարթևի գործը աւելի լաւ գնահատել, քան ժողովրդական այս աննման գնահատութիւնը։ Այդ համապատասխան է և մեր գրական աւանդական գնահատութեան. Էջմիածին է կոչւում այն տաճարը, որ մայրն է Հայաստանեայց բոլոր եկեղեցիների, և նա կառուցուած է՝ ըստ Լուսաւորչի անուան հետ կապուած տեսլեան՝ Տիրոջ ցուցմամբ, որ շրջապատուած երկնային զուարթուններով, իջել է երկնքից և ոսկի ուռամբ ցոյց տուել այն վայրը, որտեղ պիտի կառուցուէր լուսաւոր տաճարը։ Ահա հայ ժողովրդի և տեսիլքի բանաստեղծ հեղինակի հաւատն ու հայեացքը Հայաստանեայց եկեղեցու ծագման և գնահատութեան մասին։

Գ.

Ժողովրդական և գրական այս երկու հայեացքներն էլ ըստ էութեան նոյն են, այսինքն, թէ Հայաստանեայց եկեղեցին երկնային պարգևն է հայ ժողովրդին և թէ նա լոյս է, կամ լուսոյ գաղափարի մարմնաւորում։ Պատմական իրողութիւններն էլ հաստատութիւնն են այս հայեացքի ճշմարտութեան։ Այդ լուսոյ ջահակիրներն են Ս. Լուսաւորիչ, Ս. Ներսէս, Սահակ Պարթև, Մեսրոպ, իրենց թարգմանիչ աշակերտներով։ Ի՞նչ կը լինէր մեր վիճակը Պարսից հզօր պետութեան նուաճողական ծրագիրների դէմ Սասանեանների օրով, երբ նրանց յաջողուեցաւ նախ երկուսի բաժնել հայ Արշակունեաց թագաւորութիւնը և ապա իսպառ վերջացնել 428 թուին։ Ի՞նչ կը լինէր մեր վիճակը գրերի գիւտի, Աստուածաշնչի

հայերէն թարգմանութեան, հայ ինքնուրոյն և թարգմանական ծաղկեալ գրութեան, հինգերորդ դարի Վարդանների և Վահանների փոխարէն, եթէ չլինէր Հայաստանեայց կազմակերպուած եկեղեցին իր արժանաւոր առաջնորդներով և պաշտօնեաներով։ Կը լինէր «ժողովուրդ, որ գնայր ընդ խաւար», բայց առանց «մեծ լոյս» տեսնելու, և թափառելով «ի ստուերս մահու» իր ձուլման և կորստեան վերջակէտը կ՚ապրէր։

Մինչդեռ Եկեղեցու առաջնորդութեամբ ապրելով իր լեզուի և գրութեան ոսկեդարը, Զ.-Է. դարում նաև իր ճարտարապետութեան և շինարարութեան ոսկեդարը կերտեց, որ հայ հանճարի և ստեղծագործութեան փառքն է, գնահատուած ներկայ ժամանակի մեծ արուեստագէտների կողմից։ Գաղափար տալու համար՝ յիշենք այդ ժամանակի կաթողիկոսների անունները, որոնք իրար յետեւից ճարտարապետական կոթողներ են թողել, կարծես, կամենալով գերազանցել միմեանց։ Վեցերորդ դարի կէսերից սկսած՝ Մովսէս Եղիվարդեցուն է վերագրւում իր հայրենի գիւղի բազիլիկ մեծ տաճարը։ Նորա հակաթոռ Յոհան Կարնեցին շինել է Աւանի Հռիփսիմէի տիպի հինգ գմբեթանի տաճարը։ Աբրահամ Կաթողիկոսը շինել է Դուինի մայր եկեղեցին, որի աւերակները բացուած են այժմ պեղումներով։ Կոմիտաս, «Անձինք նուիրեալք» սքանչելի շարականի հեղինակը, կերտել է Հռիփսիմէի անման և գողտրիկ տաճարը Վաղարշապատում։ Եզր կաթողիկոսը, տարապարտուց Հայոց եկեղեցու դաւանութեան հակառակորդ և քաղկեդոնական համարուած, շինել է Գայիանէի տաճարը Վաղարշապատում և Բագրեւանդի հոյակապ Ս. Յովհաննէսը։ Ներսէս Գ. Շինողի գործն է, մեր ճարտարապետութեան գլուխ գործոցներից մէկը՝ Զուարթնոց տաճարը։ Նորա յաջորդը՝ Անաստաս՝ շինել է Ակոռիի եկեղեցին։ Այս մի եւ նոյն ընթացքն ունին շինարարութեան մէջ և նախարարական տները՝ Մամիկոնեանք և Կամսարականք և ուրիշներ։

Ահա ի՛նչ է Հայաստանեայց եկեղեցու, Լուսաւորչի ձեռքով հիմնած հաստատութեան արժէքը։ Քաղաքականապէս անկման դատապարտուած և գոյութեամբ վտանգի ենթարկուած ժողովուրդը, վերածնեց հոգով, կազդուրեց Նորա բարոյական ուժերը, ուրոյն ստեղծագործական կեանքով ապրելու, և իրեն վիճակուած պատմական ծանր պայմանների մէջ կարողանալու դիմանալ, հարաւից և արեւելքից եկած արաբական և սելջուկեան հեղեղներին։ Սասանեանց հզօր պետութիւնն ու զրադաշտականութիւնը ոչնչացան ընդունած հարուածների տակ, բայց հայ ժողովուրդը դիմացաւ,

Բագրատունեաց և Ռուբինեանց փառաւոր շրջաններն ապրեց, տալով Նարեկացիներ և Շնորհալիներ, և ամբողջ հոյլը միջնադարեան բանաստեղծների, արուեստագէտների և վարդապետների, ինչպէս և Աշոտներ, Գագիկներ, Լեւոններ և Հեթումներ քաղաքական կեանքում։

Հայաստանեայց եկեղեցու և նորա հովանու տակ ստեղծուած հոգեւոր դրամագլուխն էր, որ մեր գոյութիւնը պահպանեց Պարսից և Օսմանցոց կործանարար արշաւանքների ժամանակ և հասցրեց մեզ այս օրերին, Հայ ժողովրդի քաղաքական և մտաւոր վերածնութեան մի նոր շրջան ապրելու, սպասելով աւելի փառաւոր ծաղկման։

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԻԴ.

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵՒ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻ

Ա.

Մեր պատմական աւանդութիւնները հաստատում են, որ Հայաստանեայց Եկեղեցւոյ սկիզբը դրւում է Քրիստոսի անմիջական աշակերտների ձեռքով առաջին դարում։ Թէպէտ երեք դար շարունակ քրիստոնէութիւնը գոյութիւն ունէր Հայաստանում, թէպէտ երբեմն թափւում էր մարտիրոսների արիւնը քրիստոնէութեան անդաստանը ոռոգելու համար, բայց դեռ եւս հեթանոսութիւնը զօրեղ էր և իր զօրութեամբ ճնշում էր քրիստոնէութիւնը։

Ճշմարիտ է, այդ երեք դարերում քրիստոնէութիւնը Հայաստանում գոյութիւն ունէր, ասում ենք, բայց եկեղեցին որոշ կազմակերպութիւն չունէր և չէր էլ կարող ունենալ, քանի որ դեռ եւս մութ խորշերում և քարանձաւներում էր պաշտւում քրիստոնէից Աստուածը։

Հայաստանեայց Եկեղեցին իւր այդ անունն կրելու իրաւունք ստացաւ չորրորդ դարու սկզբում Ս. Լուսաւորչի գործունէութիւնից յետոյ։ Լուսաւորիչ մի նոր վարդապետութեան քարոզիչ, մի նոր հիմնարկութեան վերահաստատող լինելով՝ պէտք է և որոշ գաղափար ունենար այդ հիմնարկութեան վերայ և պարզ պէտք է լինէր նորա համար նոր հաստատութեան նպատակը. մեր այս շարադրութեամբ կամենում ենք պարզել այդ խնդիրը։ Անշուշտ Լուսաւորչի աչքում այդ հաստատութիւնը շատ բարձր և վսեմ նշանակութիւն պէտք է ունենար, քանի որ նորա քարոզած ճշմարտութիւնների համար այնքան տանջանքներ կրեց և միայն բազմաթիւ տարիներ անցնելուց յետոյ, նորա հաւատարմութիւնը զարմանալի յաղթութեամբ պսակուեցաւ։

Լուսաւորչի անձնաւորութեան և հայեացքների հետ լաւ ծանօթանալու համար ոչ միայն աչքի առաջ պէտք է ունենալ նորա անունով մնացած գրաւոր յիշատակարաններն, այլ և այն

բոլոր պատմական և աւանդական ցուցումներն, որ հասել են մեզ Նորա ժամանակակից կամ յետագայ Հայ և օտար պատմիչների միջնորդութեամբ։ Ինչ աղբիւրների էլ դիմելու լինենք, Լուսաւորիչ երեւում է մեզ մի բարձր արժանաւորութեան տէր անձնաւորութիւն, իրաւամբ արժանի կրելու «Հայաստանեայց Լուսաւորիչ» անունը։ Մեծ անձնաւորութիւնները միայն կարող են մեծ գործեր կատարել և մեծ գաղափարներ պարզել, և Լուսաւորիչ դոցանից մէկն է։ Ս. Գրիգորի անձնաւորութիւնը կարելի է որոշել աչքի առաջ ունենալով Գրիգոր մեծ Խոստովանողին, Գրիգոր առաքեալին և Գրիգոր Լուսաւորչին։ Երեք բառ, որոնք իրենց մէջ բովանդակում են մի մեծ մարդու կեանքն ու գործունէութիւնը և մի եկեղեցւոյ ազգութիւն. եկեղեցւոյ ազգութիւն ասացինք, որովհետեւ Լուսաւորչի անձնաւորութեան հետ կապուած են Հայաստանեայց եկեղեցւոյ կազմակերպութիւնն ու նպատակը։

Հայաստանեայց եկեղեցին իրաւամբ Նորան մեծ Խոստովանող անուանեց և միմիայն Նորան, որովհետեւ մեր Ս. Հայրերից ոչ մէկը Նորա բարձրութեան հասնել չկարողացաւ։ Նորա հաւատարմութիւնը դէպի իւր կրօնը, Նորա հաւատը դէպի քրիստոնէական ճշմարտութիւնները և վերջապէս հաստատամտութիւնն ու առաքելական գործունէութիւնը այնքան բարձր են, որ ամենքի համար անհասանելի օրինակ կարող է լինել։ Մեծ Նահատակը իւր ճշմարիտ համբերութեամբ, կենդանի մարտիրոսը իւր ճշմարիտ խոստովանութեամբ մենակ յաղթող հանդիսացաւ մեծ պատերազմի մէջ։ Երկու կուսակցութեան առաջնորդներ մրցում էին, մէկը գործ դնելով իւր բոլոր արքայական իշխանութիւնը, միւսը հաստատամտութիւնն ու համբերութիւնը, մէկը թիկունք ունենալով մի ամբողջ երկրի ժողովուրդ, մի տէրութիւն, միւսը մենակ, բայց ճշմարտութեան վերայ յենուած։ Եւ վերջինս յաղթող հանդիսացաւ. թագաւոր տիրոջ շրթունքները համբուրեցին արդար ծառայի ձեռքը։ Եթէ Հայաստանեայց եկեղեցին Նորան մեծ խոստովանող անուանեց, նշանակում է լաւ հասկացաւ Լուսաւորչի նշանակութիւնը. մեր եկեղեցին իրաւունք ունէր այդ անունը Նորան տալու, քանի որ՝ «Գրիգորիոս հայր հաւատոյ և վայելուչ պսակ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ» էր, «անուշահոտ վարդ» էր, որ և «անուշահոտ բուրմամբն ելից Հայաստանեայց աշխարհս», ինչպէս ասում է Երզնկացին։ Լուսաւորիչ օտարների աչքում եւս նոյնքան մեծ է, որքան և Հայոց. Ոսկեբերան եւս Նորա անուանում է «մեծ խոստովանող», «մարտիրոսաց պարծանք», «երկնային

կծրաց քաղաքակից», «մարմնաւոր հրեշտակ յերկրի» և այլն։

Ս. Գրիգոր իւր յաղթութեան պսակը պէտք է ստանար, իւր համբերութեան պտուղը պիտի քաղէր. քրիստոնեայ լինելու համար տասնեւհինգ տարի տանջուեցաւ, այժմ նոյն քրիստոնէութեան քարոզիչ, նոյն քրիստոնէութեան առաքեալ պիտի դառնար։ Առաքելոյն Թադէոսի պարթեւական գաւակն, կենդանի նշխարաց նորին օրհնութեան շառաւիղն, վիճակեալ աշխարհի նորա ընտրեալ հոգաբարձուն, պէտք է կատարէր այն ամենը, ինչ որ տնօրինել էր նորա մասին վերին տեսչութիւնը։ Հայաստանեայց եկեղեցւոյ առաքեալը պէտք է սկսէր իւր առաքելական գործունէութիւնը։ Հայաստանեայց եկեղեցին Նորան առաքեալ է համարում ոչ թէ միայն հիմնուելով այն աւանդութեան վերայ, որ քիչ առաջ ակնարկեցինք Երզնկացու խօսքերով, այլ և, մի կողմից աչքի առաջ ունենալով Նորա ճշմարիտ առաքելական գործունէութիւնն և միւս կողմից առաքելական կոչում ստանալը վերին տեսչութիւնից։ Չէ՞ որ Լուսաւորիչ եւս նոյնպիսի ընտրըեալ առաքեալ է, ինչպէս և Քրիստոսի միւս անմիջական առաքեալները։ Թէպէտ Լուսաւորիչ չտեսաւ Նորան այս երկրում, չլսեց Նորա քարոզութիւնները, Նորա խաչելութեան և յարութեան ականատես չեղաւ, բայց տեսաւ Նորան բոլոր աստուածային զօրութեամբ, տեսաւ Նորան շրջապատուած երկնային անթիւ զօրքերով, տեսաւ Նորան ոսկի ուռը ձեռքին՝ երկնքից երկիր իջնելիս։ Պօղոս առաքեալն էլ Քրիստոսի անմիջական աշակերտներից չէր, բայց մի՞թէ դրանով Նորա արժանաւորութիւնը պակասում է մեր աչքում. Հայաստանի Պօղոս առաքեալը մեր Լուսաւորիչն եղաւ, և նման է Նորան ոչ միայն ընտրութեամբ, այլ և քարոզած գաղափարներով։ Ընտրութեամբ նման է, որովհետեւ սա եւս, ինչպէս և Պօղոս «զօծումն քահանայապետութեան ոչ ի մարդկանէ, և ոչ ի ձեռն մարդոյ, այլ ի վերին տեսչութենէն և ի հոգւոյն յայտնութենէ կոչեցեալ ընկալաւ»։ Թէպէտ այս խօսքերը Ոսկեբերանին է, բայց հիմնուած պատմական ճշմարիտ փաստերի վերայ։ Չէ՞ որ Լուսաւորիչ անարժան էր համարում իրեն քահանայապետական բարձր կոչման և հրաժարւում էր. այն անձնաւորութիւնն, որ «քահանայից գաղափար» էր, «հովուապետաց նկարագիր», «հայրապետաց գեղեցկութիւն», «հաստատեալ սիւն եկեղեցւոյ», «ուսուցիչ ուղղափառութեան», «մոլորելոց առաջնորդ», «առաքելոց լրումն», հրաժարւում էր մինչեւ այն ժամանակ, երբ վերջապէս հրեշտակից լսեց աստուածային կամքը. «մի՛ իշխեսցես ինչ

պնդել յամառել վասն այն, զի ի Քրիստոսէ է այդ քեզ հրամայեալ»: Ոսկեբերան իւր Ներբողի մէջ խօսելով Լուսաւորչի առաքելական ընտրութեան մասին, Աստուծոյ խօսքերով ասում է Նորան. «առաքեալքն իմ երկոտասան ի վերայ ինքեանց բաժանեցին վիճակաւ զընդհանուր աշխարհս, իսկ դու միայն ընդ համասփիւռ վիճակաւ քարոզեցեր զաւետարանն իմ». ուրեմն Լուսաւորիչ Ոսկեբերանի նման մարդու աչքում առաքեալների չափ և մինչև անգամ աւելի նշանակութիւն ունի, ահա Լուսաւորչի մեծութեան մի մեծ ապացոյց:

Լուսաւորիչ այն անձնաւորութիւնն էր, որ իւր 15 ամեայ սոսկալի չարչարանքներով և վաթսուն ու վեց օրուայ առաքելական քարոզութեամբ հեթանոս Հայաստանի համար երկինք բաց արեց, բաց արեց ողորմութեան դռները, մի ճանապարհ ցոյց տուեց դէպի բարձրն ու վսեմը վերանալու: Հայաստանեայց Լուսաւորիչը իրաւամբ արժանացաւ այդ մեծ անուան. «Լուսաւորիչ» անունը Հայաստանեայց եկեղեցւոյ վերանորոգչի յատուկ անունն է. եթէ ասում ենք «նախկին Լուսաւորիչք» այդ միայն իսկական Լուսաւորչից զանազանելու համար է. Հայ ազգի Լուսաւորիչը Ս. Գրիգորն է: Ո՞վ այնպիսի նշանակութիւն, հեղինակութիւն ստացաւ, որքան Լուսաւորիչ, և ո՞վ այնպիսի վսեմ և անթառամելի պսակ ստացաւ Հայ ազգից, ինչպէս Լուսաւորիչ: Լուսաւորիչ Հայաստանեայց՝ ահա այն անապական և անթառամելի պսակը, որով հայ ազգը զարդարել է իւր Նախահայրապետի սրբազան ճակատը. «Լուսաւորիչ Հայաստանեայց» ահա մի յաւիտենական դրօշմ, որ Հայ ազգի սրտում անջնջելի պէտք է մնայ յաւիտեան: Լուսաւորիչ այնքան մեծ հեղինակութիւն է ստացել Հայ ժողովրդի աչքում, որ իրանց «Լուսաւորչայ ազգ» են անուանում, ի՞նչ է նորա այսպիսի մեծ հեղինակութեան պատճառը, ահա՛ մի հարց, որ պէտք է պարզէ մեր եկեղեցւոյ ամենահիմնական սկզբունքներից մէկը:

Բ.

Ինչպէս վերև յիշեցինք, Լուսաւորիչ մի նոր հաստատութեան հիմնադիր լինելով, պէտք է մի որոշ և վսեմ գաղափար ունենար այն հաստատութեան մասին, որի տուած ճշմարտութիւնների համար նա պատրաստ էր ամեն բանից զրկուել, ինչպէս և ցոյց տուեց: Լուսաւորիչ իւր դաւանած ճշմարտութիւնների համար տասն ու հինգ տարի տանջուելուց յետոյ, բոլորովին

զարմանալի կերպով երեւան է գալիս կենդանի նահատակը, վաթսուն ու վեց օր այժմ նա քարոզում է բազմաթիւ ժողովրդեան, որոնց սրտերը կակղել են նորա քարոզութիւնների շնորհիւ, ինչպէս մոմը կրակի առաջ։ Եթէ հեթանոսութիւնը իւր ներկայացուցիչ թագաւորի առաջնորդութեամբ պատերազմ էր վարում քրիստոնէութեան եւ նորա խոստովանողի դէմ, վերջինս յաղթեց, չի նայելով իւր նիւթական զօրութեան ոչնչութեանը։ Զարմանալի իրողութիւն, ինչպէս պէտք է բացատրել այդ հանգամանքը։ Փոխանակ պատմական հիմնաւոր կամ անհիմն ենթադրութիւնների մէջ ընկնելու, որ մեր նիւթից դուրս է, աւելի լաւ է Լուսաւորչի կարծիքն իմանանք, քանի որ դա Լուսաւորչի հայեացքների մի մասն է կազմում։ «Եւ իմ նայեցեալ տեսի բացեալ զհաստատութիւն երկնից... Եւ լոյս հասեալ վերուստ ի վայր մինչեւ յերկիր հասանէր», ասում է Լուսաւորիչ. ուրեմն նորա գաղափարով Հայաստանեայց եկեղեցին Հայ ազգի համար մի երկնային պարգեւ է, երկնային, որովհետեւ լոյսը երկնքից է իջնում, որովհետեւ այդ եկեղեցւոյ կաղապարը կազմում է Աստուածային զօրութեամբ, Աստուածորդւոյ երկիր իջնելով։ Քրիստոնէութիւնը երկնքից գալով՝ իւր հետ լոյս պիտի բերէր եւ «ընդ լուսոյն զօրք անչափք լուսեղէնք երկթեւեանք», քրիստոնէութեան շնորհիւ մեր երկիրը երկնային էակների բնակավայր պիտի դառնար։ Ինչ վսեմ, ո՜րքան բարձր եւ աստուածային գաղափար։ Քրիստոնէութիւնը իւր հետ լոյս բերելով՝ խաւարին թշնամի պիտի հանդիսանար եւ ուրեմն ամեն կերպ պէտք է աշխատէր ոչնչացնել նորան։ Եթէ Հայաստանեայց եկեղեցին ձգտում է իւր հօտին «յանդիմանութենէ ի փրկութիւն» առաջնորդել, եթէ նորա նպատակն է խաւարայինը ոչնչացնել եւ նորա տեղ լուսաւորը դնել, ապա ուրեմն հասկանալի է, որ նա իւր նպատակին հասնելու համար զանազան միջոցներ պէտք է գործ դնէր, նա պէտք է պատրաստէր իւր հօտը լոյսն ընդունելու համար։

Եւ Լուսաւորիչ իւր գործունէութեամբ մեզ ցոյց տուեց այդ միջոցներից ամենագերազանցին՝ դաստիարակութիւնը։ Լուսաւորչի քարոզած դաստիարակութիւնը զուտ քրիստոնէական է. «Պիտոյ է մեզ դաստիարակութիւն աւետարանին» բացատրում է «Յաճախապատումի» մէջ։ Ազգային տեսակէտից նայելով՝ քրիստոնէական դաստիարակութիւնն էլ շատ մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ փճացած կամ անբարոյականացած մի ազգ երբեք երկար գոյութիւն ունենալ չի կարող, այն ինչ քրիստոնէութիւնը իւր

քարոզած ճշմարիտ բարոյականութիւնը տարածելով ժողովրդի մէջ, երկնային յաւիտենականութեան հասցնելուց զատ, երկրային յառաջդիմութեանն էլ նպաստած կը լինէր: Ինչպէս վերև տեսցինք, Լուսաւորիչ աչքի առաջ ունէր քրիստոնէական դաստիարակութիւնը և նա իր գործունէութեամբ այդ բանը պարզեց. Լուսաւորիչ քրիստոնէական դաստիարակութեան միջնորդութեամբ պէտք է արմատախիլ անէր չարութեան սերմերը, Լուսաւորիչ քրիստոնէական դաստիարակութեան շնորհիւ պէտք է բաց անէր մեր աչքերը խաւարի անդունդներից խուսափելու համար, Լուսաւորիչ այդ դաստիարակութեամբ խաւարի որդանեակներին լուսաւորութեան առաջնորդներ պիտի դարձնէր, դպրոցներում պիտի պատրաստէր խաւարի դէմ մարտնչող հոգևոր զինուորներին: Բայց Լուսաւորչի քարոզած զուտ քրիստոնէական դաստիարակութիւնը շուտով ազգային դաստիարակութեան փոխուեցաւ, քրիստոնէական դաստիարակութիւնը ազգային դաստիարակութեան հիմք դարձաւ և այդ տեսակէտից նայելով՝ իրաւամբ Լուսաւորչին Հայոց ազգային դաստիարակութեան հիմնադիր պիտի համարենք:

Լուսաւորիչ առաջին անգամ Հայ եկեղեցւոյ հետ կապեց Հայ դպրոցի գաղափարը, Լուսաւորիչ՝ առաջին անգամ Եկեղեցւոյ յառաջդիմութեան մէջ տեսաւ և նորա հետի՝ Հայազգի յառաջդիմութիւնը: Լուսաւորչի գաղափարով Հայաստանեայց եկեղեցւոյ հիմնական սկզբունքներից մէկն է քրիստոնէական դաստիարակութիւն տալ իր հօտին. և որովհետև այդ քրիստոնէական դաստիարակութիւնը Լուսաւորչից, համարեա անմիջապէս յետոյ, միացաւ ազգային դաստիարակութեան հետ և նորա հիմքը կազմեց, ապա ուրեմն կարող ենք ասել, և ճշմարիտ այդպէս է, թէ Հայաստանեայց եկեղեցւոյ ամենահիմնական սկզբունքներից մէկն է ազգային դաստիարակութիւն տալ Հայ ազգին: Այո՛, Հայաստանեայց եկեղեցւոյ հովանաւորութեան տակ պիտի դաստիարակուէր Հայ սերունդը և դաստիարակութեան շնորհիւ լուսաւորութեան ճառագայթները Հայ ընտանիքի խորքերը պիտի թափանցէին. ահա ազգային եկեղեցւոյ անխախտելի սկզբունքներից մէկը:

Եւ յիրաւի մեր պատմութիւնը ցոյց է տալիս, թէ եկեղեցին հաւատարիմ է մնացել իր ուղղութեանը և մինչև այժմ էլ քրիստոնէականը ազգային դաստիարակութիւնից անբաժան է համարում: Ճշմարիտ է, պատմական թշուառ հանգամանքները արգելք են եղել մեր եկեղեցուն ազգային դաստիարակութիւնը ժողովրդի մէջ լաւ ընդհանրացնելու, բայց գաղափարը իր որոշութիւնը

միշտ պահպանել է, մեր հայրերը հաւատացել են, թէ Հայաստանեայց եկեղեցւոյ շնորհիւ սեւ այծերն լուսակիրն բրդով ոչխարների պիտի փոխուէին և թէ նորա հովանու տակ «ծնեալ գառինքն ամենայն լուսակիրն» պիտի լինէին։

Գ.

Եթէ մենք Հայաստանեայց եկեղեցին ազգային հիմնարկութիւն ենք համարում, եթէ մեր գոյութիւնը, մեր փրկութիւնը եկեղեցւոյ մէջ ենք տեսնում, դորա պատճառն այն է, որ մեր եկեղեցին էլ փոխադարձաբար իբրեւ կենդանի մարմին իւր յարատեւութիւնը հօտի յարատեւութեան մէջ է տեսնում։ Այսպէս ուրեմն Հայոց ազգ և Հայաստանեայց եկեղեցի, ազգային դաստիարակութիւն և եկեղեցւոյ դաստիարակութիւն դարերի ընթացքում մի անբաժանելի միութիւն են կազմել. այդ միութիւնը այնքան սերտ էր, որ ազգային շահերը միացան Հայաստանեայց եկեղեցւոյ շահերի հետ և ընդհակառակ, եկեղեցւոյ վտանգը Հայ ազգինն էր և ընդհակառակ։ Հայոց լեզուն Հայոց եկեղեցւոյ մէջ կենդանի մնաց, Հայոց կեանքը Հայոց եկեղեցւոյ մէջ զարգացաւ, Հայոց պատմութիւնը Հայոց եկեղեցւոյ պատմութիւն դարձաւ։ Հայոց եկեղեցի անունը մեր ատածների համար մի մեծ փաստ կարող է լինել։ Լուսաւորիչ քրիստոնէական ընդհանուր մի գաղափար յայտնեց. բայց Հայոց պատմական կեանքը այդ գաղափարը բոլորովին իւրացրեց, ազգայնացրեց։

Անշուշտ այդ իրողութիւնը ունի իւր պատմական հիմունքները, կրկնում ենք, այդ երեւոյթը ունի իւր որոշ պատճառները, որոնց շնորհիւ մեր եկեղեցին կարծես մի բացառիկ ճանապարհ է բռնել միւսների նկատմամբ։ Թէ ճշմարիտ Լուսաւորչի արտայայտած գաղափարը նորանից յետոյ բոլորովին ազգային կերպարանք ստացաւ, մեզ համար մեծ ապացոյց կարող է լինել նորա յաջորդների գործունէութիւնը։ Մեծն Ներսէս այդ գաղափարի մարմնացման սկիզբն է, իսկ Ս. Սահակ իսկական մարմնացումն։ Հինգերորդ դարու յեղափոխութեան սկիզբը Մեծն Ներսէս դրեց. նա նկատելով Հայ—ազգի քայքայումը, իւր մեծ բարենորոգումներով կամեցաւ մի նոր կազմակերպութիւն տալ Հայոց ազգին. եթէ Ս. Ներսէս Մեծի անուն ժառանգեց, ոչ թէ միայն մեծ եկեղեցական, այլ և ազգային մեծ գործիչ, մեծ հայրենասէր լինելուն համար։ Մեծն Ներսէսի օրով Հայոց կաթուղիկոսների կեսարիայում ձեռնադրութեանը վերջ տրուեցաւ, ապագայում

վէճերի առաջն առնելու համար։ Մեծն Ներսէս Հայոց անկախութեան մեծ պաշտպանն էր. ո՞վ աշխատեց նախարարների և թագաւորի մէջ համերաշխութիւն հաստատել, երկիրը ներքին երկպառակութիւնից ազատելու համար, ո՞վ մերժեալ ժառանգին նստեցրեց հօր գահի վերայ։ Իսկ նորա արժանաւոր որդին մի քայլ էլ հօրից առաջ անցաւ. Ոսկեդարը նոյն գաղափարի արտայայտութիւնն էր։ Երկու մեծ հանճարները՝ Ս. Սահակ—Մեսրոպ իրենց բոլոր աշակերտներով և հետեւողներով այդ գաղափարի ծնունդ էին։

Մի փոքր այստեղ կանգ առնենք, մեր ասածը աւելի պարզելու համար. թէ ճշմարիտ մեր եկեղեցին ազգային հաստատութիւն է եղել, նա հաւասարապէս և ազգայնութեան և քրիստոնէութեան պաշտպան է եղել, այդ ապացուցանում է մեր ամբողջ պատմութիւնը և մասնաւորապէս աւելի որոշ հինգերորդ դարու գործիչների կեանքը։ Ս. Սահակ—Մեսրոպ իրենց բոլոր կողմնակիցներով Հայ ազգի ճշմարիտ մշակներն էին, Ս. Սահակեանները իրենց գործունէութեամբ ճշմարիտ հայրենասէրներ և ազգային կեանքի յեղափոխիչներ հանդիսացան. նոքա տասնեակ տարիներ անձնատուր եղան լուսաւորութեան գործին։ Ս. Մեսրոպ իւր մեծ գիւտով, Ս. Սահակ իւր մեծ օժանդակութեամբ և գործունէութեամբ ամբողջ սերունդ պատրաստեցին, մի նոր կեանք տուին Հային, ոսկեդար ստեղծեցին, և ուրիշ կերպ անել չէին կարող, քանի որ նոքա Հայաստանեայց եկեղեցւոյ ճշմարիտ պաշտօնեաներ էին, իսկ Հայաստանեայց եկեղեցւոյ ճշմարիտ պաշտօնեայ լինել, նշանակում է և Հայ ազգութեան ճշմարիտ անդամ և մշակ լինել։ Անշուշտ մենք Ս. Սահակ—Մեսրոպին, Խորենացուն, Եղիշէին, Փարպեցուն և այլ դոցա նմաններին ազգային գործիչներ կը համարենք. ինչո՞ւ, որովհետեւ նոքա Հային լեզու տուին, պատմութիւն տուին, մի նոր կեանք, եռանդ, ոգեւորութիւն ներշնչեցին ժողովրդի մէջ։ Այլ եւս չենք յիշում Ս. Սահակի քաղաքական գործունէութիւնը, որ մեր ասածների համար մի անհերքելի փաստ կարող է լինել։ Եթէ նոյն իսկ ընդունենք, թէ Ս. Սահակեանների գործունէութեան նպատակը եկեղեցւոյ ապահովութիւնն էր, էլի շատ հեշտութեամբ կարող ենք ապացուցանել մեր եկեղեցւոյ և ազգի սոյն սերտ կապակցութիւնն, որի մասին խօսել ենք մենք. քանի որ եկեղեցւոյ ապահովութեամբ ազգի գոյութիւնն է ապահովանում, և եկեղեցւոյ բարձրութեամբ՝ ազգն է բարձրանում, եկեղեցւոյ և ազգի լեզուն նոյնն են դառնում, իսկ լեզուն ազգութեան ամենաորոշ յատկանիշներից է։ Եթէ պատմական փաստերի

վերայ հիմնուելով ցոյց տանք, թէ հինգերորդ դարու յեղափոխութիւնը պատմական անհրաժեշտութիւն էր Հայոց համար և այդ անհրաժեշտութիւնը կատարուեցաւ եկեղեցւոյ պաշտօնեաների ձեռքով, այն ժամանակ աւելի հաստատութեամբ կարող ենք մեր ասածը պաշտպանել։ Եթէ Հայ ազգի համար օրինակ անհրաժեշտութիւն էր գիր ունենալ, և անհրաժեշտութիւնը լցուցանում է եկեղեցին, ուրեմն պարզ է, թէ ո՞րքան սերտ կապակցութիւն ունին միմեանց հետ, որ մէկի կարիքը միւսինն է, որ մէկի պահանջը միւսն է կատարում։

Դ.

Միանգամ յիշեցինք, թէ Ս. Սահակեանների գործունէութիւնը Լուսաւորչի գաղափարների մարմնացումն է, դորան ապացոյց է բացի նոցա գործունէութիւնից և Ս. Սահակի տեսիլը, որի մէջ նորից արտայայտուած են Լուսաւորչի գաղափարները, միայն աւելի պարզ, աւելի ազգային կերպարանքով։ Ոչ միայն Ս. Սահակ իւր գործակիցներով, այլ և մեր բոլոր Հայ հայրապետները, հոգեւորականութիւնը, իրենց կեանքն ու գործունէութիւնը Հայ ազգին նուիրել, հաւատալով միանգամայն, որ կատարում են Հայաստանեայց եկեղեցւոյ պաշտօնէի իսկական կոչումը։ Եւ այդ ուղղութեան հայրը Ս. Լուսաւորիչն եղաւ։ Լուսաւորութեան գործը նա կապեց եկեղեցւոյ հետ, նա մեզ ճշմարիտ յառաջդիմութեան ճանապարհը ցոյց տուեց, եկեղեցւոյ յառաջդիմութեան հետ կապելով և նորա հօտի յառաջդիմութիւնը։ Նա մեզ մի վսեմ և աստուածային գաղափար յայտնեց, խրախուսեց պատերազմել չարութեան դէմ՝ յուսադրելով, թէ վերջ ի վերջոյ յաղթութիւնը մեր կողմը պիտի լինի, եթէ ճշմարտութեան ճանապարհը կը բռնենք։ Լուսաւորչի տուած ուղղութեանը մեր եկեղեցին հաւատարիմ է մնացել մինչեւ այժմ, այդ ուղղութիւնն է պատճառ, որ մեր եկեղեցին իւր շահերը ազգի շահերից երբեք չէ բաժանել, նորա ուրախութիւններն ու վշտերը, յաջողութիւններն ու դժբախտութիւնները իւրն է համարել։

Այդ ուղղութիւնն է պատճառ, որ Հայաստանեայց եկեղեցի գաղափարը այնպէս սերտ կապուած է Հայ ազգութիւն գաղափարի հետ, որ Հայաստանեայց եկեղեցւոյ կազմակերպութիւն, Հայաստանեայց եկեղեցւոյ պայծառութիւն—Հայ ազգի վերակենդանութիւն, Հայ ազգի փառք է նշանակում։ Մենք հաւատում ենք, որ երբեք չի գալ այն օրը, երբ մեր եկեղեցին իւր շահերը բաժանէ Հայ ազգի շահերից, երբ Հայ հոգեւորականութիւնը առանձնանայ և բոլորովին առանձին մարմին կազմէ, որովհետեւ Հայաստանեայց

եկեղեցին Հայոց եկեղեցի է, ազգային հաստատութիւն է։

Այդ ազգային նոր հաստատութեան կեդրոնը Հայու հայրենիքի կեդրոնը պիտի լինէր, նոր հաստատութեան սիրտը հայու հայրենիքի սիրտը պիտի լինէր, Արարատն էր Հայու ծագման, զարգացման ասպարէզը, Արարատում էր Հայը կեանք, կազմակերպութիւն ստացել, Արարատն էր եղել Հայու օրօրանն ու մայր հայրենիքը, այժմ երբ քրիստոնէութեան շնորհիւ մենք մի նոր ազգ պիտի դառնայինք, մի նոր կենդանութիւն պիտի ստանայինք, Արարատեան աշխարհի կեդրոնում՝ մի փոքրիկ տարածութիւն Հայի իսկական հայրենիքը պիտի դառնար, ցրուած Հայերը այնտեղից պէտք է ստանային կենդանութեան ամէն մի նոր զարկ, այնտեղից, որպէս Հայութեան սրտից. ամբողջ մարմինը սնունդ, արիւն պիտի ստանար։ Հայի հայրենեաց այդ փոքրիկ տարածութեան վերայ պիտի իջնէր Միածին Որդին ոսկի ուռը ձեռքին՝ աստուածային իր բոլոր զօրութեամբ հաստատելու մի շինութիւն, որի հիմքը անապականութիւնն է, նիւթը՝ հուր, լոյս և ամպ։

Այդ շինութեան կատարին պիտի հաստատուէր. «ԱԹՈՌ ԱՍՏՈՒԱԾԱԿԵՐՏ, սքանչելի, հրեղէն, զօրով փարեալ լոյսն համատարած»։ Այո՛, Հայաստանեայց հայրապետութեան հիմքը հայրենեաց հողի վերայ է դրուած, իսկ նորա հաստատողը Միածին Որդին է։ Այդ աթոռը իր հրով պիտի այրէր, ոչնչացնէր աղտեղութիւններն, իսկ լուսով խաւարը, աթոռի վերայ հաստատուած է լուսաւոր խաչը, այդ աթոռը խաչի՝ խաչեցեալի հովանաւորութեան տակ է, խաչի զօրութեամբ շինութեան տակից յորդառատ աղբիւր է բղխում մաքրելու մարդկանց կեղտերը, աղբիւր մկրտութեան, որի մէջ մկրտուողները լուսոյ արբանեակներ պիտի դառնային։ Եւ այս ամենը Լուսաւորիչ մեզ տուեց. նա մեզ ցոյց տուեց, թէ պէտք չէ վախենալ խաւարից և խաւարայիններից, պէտք չէ վախենալ պատերազմ դուրս գալու նոցա դէմ, որովհետև մենք կը յաղթենք անպատճառ, եթէ մեր զէնքը լոյսը կը լինի։ Չէ՞ որ խաւարը չքանում է միշտ լուսոյ ներկայութեամբ։ Լուսաւորիչ յայտնեց մեզ, թէ ոչինչ վնասել չէ կարող Հայաստանեայց եկեղեցւոյ հօտին, եթէ հաւատարիմ կը մնայ իր եկեղեցուն և նորա սուրբ ձգտումներին ճշմարիտ հետեւող կը լինի։ Լուսաւորիչ գուշակեց, ժամանակաւոր գայլերը կ'ոչնչանան, հրեղէն հեղեղը կ'այրէ նրանց, իսկ հաւատարիմ գառները թեւ առնելով՝ երկինք կը թռչեն, դէպի բարձրն ու վսեմը։ Բայց մենք ցանկալի բարձրութեան չհասանք, որովհետև պատմական թշուառ հանգամանքները արգելք եղան, այդ հանգամանքներին նայելով մենք վաղուց պէտք է անհետացած լինէինք

աշխարհի երեսից, այն ինչ մենք պահպանում ենք դեռ եւս մեր գոյութիւնը և յոյս ունինք, որ գալու է մի օր, երբ նորից հոգեպէս կենդանութիւն պիտի ստանանք։ Անշուշտ Պարսկական, Արաբական, Մոնղոլական հոսանքներից չպէտք է կարողանայինք ազատուել, եթէ մեր եկեղեցւոյ փրկարար ազդեցութեան տակ չլինէինք։ Հայը կորցնում է իր լեզուն, բայց հաւատարիմ մնալով իր եկեղեցուն, չի կորցնում իր ազգեցութիւնն և մենք յուսով ենք մնում, թէ՛ նա մի օր նորից ձեռք կը բերէ իր կորցրածը։ Հայոց եկեղեցին ամենասերտ կապերով միանալով հայ ազգութեան հետ, նորա գոյութեան հետ կապուեցաւ և Հայ ազգի գոյութիւնը, նորա յաւիտենականութեան հետ կապուեցաւ և Հայ ազգը։ Այդ է պատճառը, որ մենք այնպիսի կասկածանքով ենք նայում Հայոց եկեղեցւոյ ծոցից դուրս եկած Հայերի վերայ, մենք կասկածում ենք, որ դժբախտ հանգամանքներում, դուցէ, չկարողանան իրենց ազգային գոյութիւնը պահպանել և կորչեն։ Բայց Հայաստանեայց եկեղեցին մի մարմին լինելով, որոշ կազմակերպութիւն ունենալով, աւելի հաստատութեամբ կարող է կռուին դիմանալ, և մենք հաւատում ենք, որ նա անընկճելի պէտք է մնայ, ինչպէս իր մարգարէական աչքերով նախատեսել է Հայաստանեայց եկեղեցւոյ Լուսաւորիչը։

Ե.

Հայերիս մէջ միշտ եղել է կարծես փայլուն ապագայի գաղափարը, մենք մի առանձին քնքշութեամբ ենք նայել այդ ապագայի վերայ։ Այդ յոյսը Հայի մխիթարիչն ու սփոփիչն է եղել. եթէ նա անցեալը տխրութեան քօղով ծածկուած է տեսել, եթէ ներկան անտանելի է համարել, այդ բոլորը ոչնչացել են մեծ ապագայի յուսով։ Եւ այդ յոյսը ներշնչել են մեր մէջ Ս. Լուսաւորիչ, Ս. Սահակ և այլ դոցա նման հայրերը։ Եւ մենք հաւատում ենք, թէ ազգային եկեղեցին պիտի պահպանէ և ազգի գոյութիւնը, հաւատում ենք, թէ եկեղեցւոյ միջնորդութեամբ պիտի կատարուի Հայի մտաւոր վերածնութիւնը, Ս. սեղանից պիտի ծագեն Հայի կենդանացուցիչ ճառագայթները։ Մենք մոլեռանդութեամբ չենք գոչում, թէ՝ «Արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ չիք փրկութիւն», բայց արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ հայութեան փրկութիւնը մի փոքր կասկածելի է, վտանգաւոր է։ Ինչո՞ւ աւելի ապահով ճանապարհը չընտրենք, ինչո՞ւ վահան վերարկուի տակ չանենք այն ամենը, որ անկեալին բարձրացնում է, մեռածին վերակենդանութիւն է տալիս։

Այս համառօտ տեսութեամբ մենք աշխատեցինք Հայ ազգի և եկեղեցւոյ յարաբերութիւնը ցոյց տալ աւելի անցեալի նկատմամբ, բայց անշուշտ նոյն, գուցէ և աւելի մեծ դեր կարող է խաղալ ներկայումս և ապագայում, եթէ նոր Հայերս էլ նոյն աչքով կը նայենք եկեղեցւոյ վերայ, ինչպէս և մեր նախնիք. անկարող ենք այժմ ներկայի նկատմամբ ցոյց տալ այն բոլոր հանգամանքները և միջոցները, որ Հայաստանեայց եկեղեցին իւր պաշտօնեաների միջնորդութեամբ կամ նոցա առաջնորդութեամբ կարող է իրագործիչ հանդիսանալ մեր փայփայած յոյսերին, բայց մենք չենք թերահաւատում այդ բանի մէջ: Քրիստոնէական ճշմարիտ բարոյականութիւնը միացած ազգային դաստիարակութեան հետ, զօրաւոր գրիչը միացած քարոզչական—առաքելական սրբազան պաշտօնի հետ, կանոնաւոր կազմակերպութիւն միացած պարտքի և իրաւունքի ճշմարիտ հասկացողութեան հետ, ճշմարիտ հայրենասիրութիւն միացած անյողդողդ կամքի հետ, ահա յաւիտենականութեան ճանապարհը:

Մեր համառօտ տեսութիւնը լրացնելու համար չպէտք է մոռանանք և մի կէտ, որ մեր եկեղեցւոյ գլխաւոր յատկանիշներից մէկն է: Լուսաւորիչ եկեղեցւոյ գաղափարը բացատրելուց յետոյ, քրիստոնէական ճշմարիտ վարդապետութիւնը աւանդելուց յետոյ, զգուշացրեց իւր հօտին չշեղուելու ճշմարտութեան ճանապարհից, չխառնուել երբեք դաւանաբանական անօգուտ վէճերի մէջ, անօգուտ՝ «Զի մեծութիւնք անքննելիք են, անսկիզբն էութիւնն, իվեր քան զիմանալիս յանսահմանութեանն և յանբաւութեանն»: Ինչո՞ւ ի զուր ժամանակ կորցնել այնպիսի խնդիրների համար, քանի որ դրական ոչինչ չպէտք է ստանանք: «Այսպէս ընկալաք զհաւատոցն բան և դուք այսպէս հաւատացէք յամենասուրբ երրորդութիւնն», ասում է Լուսաւորիչ: Նա իւր հօտից պահանջում է քրիստոնէական կրօնի երեք սիւները՝ հաւատ, յոյս, սէր, մանաւանդ հաւատ, որովհետեւ «ճշմարիտ հաւատ լոյս է աչաց մտացն»...: «Ըստ աճման հաւատոց ի կատարումն առաքինութեան եկեսցուք», բացատրում է Լուսաւորիչ: Այն էակը, որ աննման, անհամեմատ, անպատում, անսահման, անհաս և անբաւ է, «հաւատով տեսանի և իմանի: Վասն այսորիկ լռեսցուք ի դատարկ և ի վայրապար քննութենէ և զհետ երթիցուք խրատուց գրոց սրբոց հնոց և նորոցն»: Լուսաւորչի գաղափարով այդպիսի քննութիւնները, վիճաբանութիւնները մոլորութեան կարող են հասցնել. «Եւ մի անկանիլ ի բազմախոյզ խնդիրս, որ վրիպեցուցանեն ի ստոյգ հաւատոյց»: Լուսաւորիչ իւր

քարոզած վարդապետութիւնը ճշմարտութիւն համարելով՝ պատուիրում է իւր հօտին չշեղուել իւր տուած ճշմարտութիւններից. «Եւ մի խոտորիք ի կարգաց իմաստութեան յաջ և յահեակ»։ Եթէ մենք պարծենում ենք, թէ մեր եկեղեցին ուղղափառ է, մոլորութիւնների մէջ չէ ընկել, եթէ մենք պարծենում ենք, թէ մեր եկեղեցին պահպանել է առաքելական դարու գոյնն ու կերպարանքը, բոլորը այդ ուղղութեան շնորհիւն է։ Մեր եկեղեցւոյ սուրբ հայրերը ճշմարիտ հետեւող հանդիսանալով իրենց նախահայրապետին, աշխատեցին որքան կարելի է խոյս տալ աւելորդ վէճերից և իրանց ույժն ու ժամանակը հօտի փրկութեանն ու երջանկութեանը նուիրեցին։ Հէնց Լուսաւորչից սկսած մեր բոլոր հայրապետները աշխատել են իրենց հօտի քրիստոնէական դաստիարակիչներ դառնալ, աշխատել են ժողովրդին հայր հանդիսանալ, պաշտպանել նորան տգիտութիւնից և արտաքին բռնութիւններից և միշտ խոյս են տուել դաւանաբանական աւելորդ վիճաբանութիւններից։ Մեր Հայ հայրապետները իրենց գործունէութեամբ նուիրուել են ազգին և իրենց ուղղութեամբ, կարծես, բոլորն էլ լռելեայն կրկնել են Լուսաւորչի խօսքերը՝ «Իսկ մեք փառաւորեսցուք» և այդպիսով պահպանել են մեր եկեղեցւոյ անարատութիւնը։

Ահա Լուսաւորչի մեծութեան, հեղինակութեան պատճառը Հայ ազգի աչքում. կարծում ենք այժմ բաւական պարզուած պէտք է լինի, թէ ո՞վ էր Լուսաւորիչ և ինչո՞ւ Լուսաւորիչ է կոչւում։ Հասկանալի է, որ Հայ ժողովուրդը իւր մեծ բարերարի, իւր Լուսաւորչի յիշատակը անջինջ պէտք է պահէր իւր սրտում, պիտի յաւերժացնէր նորա անունը։ Եւ յիրաւի մեր ժողովուրդը գեղեցիկ աւանդութիւններով զարդարեց նորա յիշատակը։ Լուսաւորիչ կանգնած է, ոսկէ աթոռի վերայ նստած՝ Քրիստոսի մօտ երկնքում. ժողովուրդը իւր երեւակայութեամբ Լուսաւորչի անունով մշտավառ կանթեղ է կախել, Հայաստանի կաթնաղբիւրները Լուսաւորչին է նուիրել, Լուսաւորչի աղբիւրների մէջ լողանալով՝ ազատւում է իւր ցաւերից։ Ոչ միայն Լուսաւորչի կեանքն ու գործունէութիւնը, այլ և նոյն իսկ մահը զարդարուած է գեղեցիկ աւանդութիւններով, հովիւները Լուսաւորչին գտնում են մեռած, «կանգուն ի վերայ ոտից իւրոց»։ Լուսաւորչի նման մարդը միշտ կենդանի, միշտ կանգուն պէտք է մնայ, քանի որ Հայ եկեղեցի, Հայ ազգ կայ։ (*)

Գ(ԱՐԵԳԻՆ) Ս(ԱՐԳՍԻԱՆ)

(*) Այս մեր առաջին գրաւոր աշխատութիւնն է, աւելի աւանդական, քան քննական տեսութեամբ։

Արարատ. 1890. Մարտ.

ԻԵ.

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ

Գ. ԱԼՍՏԵԱՆ ԵԻԻՐԾԵԻ

Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ կոտորէր զմարգարէս եւ քարկոծ առնէր զառաքեալսն առ նա։ Քանի՛ցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո, զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւովք, եւ ոչ կամեցարուք։ Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ։

Մատթ. ԻԳ. 57—58.

Եւ իբրեւ մերձեցաւ, տեսեալ զքաղաքն, ելաց ի վերայ նորա.

Ղուկ. ԺԹ. 41.

Ա.

Հայրենասիրութիւնը մի բնական զգացում է հաստատուած մեր սրտի խորքերում։ Ինչպէս բնական է սէրը դէպի ծնողները և դատապարտելի այն որդու վարմունքը, որ անարգանքով է վարւում նրանց հետ, նոյնչափ բնական է սէրը և դէպի հայրենիքը և դատապարտելի դէպի նորա շահերը ցոյց տուած ապերախտութիւնը։ Մենք ոչ միայն մեր ծնողների զաւակներն ենք, այլ և մեր հայրենիքի։ Մեր կեանքի առաջին վայրկեանից կապուած ենք հայրենիքի հետ, նորա օդն ենք շնչում, նորա ջուրը խմում, նորա բերքերով կերակրւում։ Բնական է նոյնպէս և մարդու սէրը դէպի իւր ընիկ ժողովուրդը։ Մեր երակների մէջ նոյն արիւնն է վազում. նոյն վարք ու բարքով, սովորութիւններով, նոյն անցեալով և ապագայի յոյսերով կապուած միմեանց հետ։ Ամենքիս բերանում նոյն լեզուն է յորջորջւում, և հարիւրաւոր ու հազարաւոր տարիների պատմութիւն, անցեալի յիշողութիւն, ուրախութիւն և վիշտ, յաջողութիւն և ձախորդութիւն ընդհանուր է ամենքիս համար։

Սկզբում այդ գաղափարը մի բնազդ էր, գուցէ, բայց մարդկային հոգու զարգացման հետ, դառնում է այն մի զօրեղ գիտակցութիւն։ Նիւթական շահերի պաշտպանութեան հետ միանում է և

հոգեւոր շահերի պաշտպանութեան գաղափարը. անձնական փառքի, պատուի, ապահովութեան և բարօրութեան հետ զարգանում է ազգի ու հայրենիքի փառքի, ապահովութեան և բարօրութեան գաղափարը: Եւ այս գիտակցութիւնից է բղխում հին ազգերի ամենաբարձր առաքինութիւնը՝ քաղաքացիութեան և հայրենասիրութեան զգացումը: Ազգութեան գաղափարը այն առանցքն էր, որի շուրջն էր պտտում հին ազգերի պատմութեան անիւը: Յունաց և Հռովմայեցւոց պատմութիւնը լի է, դեռ եւս առողջ և բարոյական շրջաններում, հայրենասիրական առաքինութիւնների նկարագրութիւններով:

Բայց այդ շրջաններում իսկ զօրեղ եսական մի դրոշմ է կրում այն, որ յատուկ է հին հեթանոսութեան: Քաղաքակիրթ արուեստի և գիտութեան պտուղներով ուռճացած յոյնի համար իսկ անծանօթ է մարդասիրութեան և մարդկային արժանապատուութեան ընդհանուր գաղափարը: Պատուոյ և յարգանքի արժանի է միայն յոյնը, իսկ միւս ազգերի ճակատին դրոշմուած է «բարբարոս» անունը, որ մի եւ նոյն ժամանակ արհամարհանքի և անարգանքի արտայայտութիւն էր: Հռովմայեցին կոչուած էր նուաճելու աշխարհը և միւս ազգերի ազատութեան աւերակների վերայ կանգնել իւր փառքի և նիւթական ճոխութեան նոր տաճարը: Նուաճուած ազգերի հարստութիւնն ու երիտասարդ ուժերը որպէս գերիներ փոխադրում էին Իտալիա պատրիկների հարստութիւնն ու զեղխութեան միջոցները գիւրացնելու. Հռովմայեցի զօրապետների յաղթական ընթացքը նուաճուած ազգերի շղթայակապ թագաւորների, արքայազունների, յափշտակուած գանձերի և արուեստի արտադրութիւնների ցուցադրութիւններով — ինչպէ՜ս բնորոշ է այս եսական, հպարտ զգացման և դէպի անզօրները տածած արհամարհանքի:

Այս զգացման և հայեացքի արդիւնքն էր Հռովմի այն աննկարագրելի անբարոյականութիւնը, քստմնելի զեղխութիւնը, ամօթի և սրտակառանքի կատարեալ բացակայութիւնը, որ նկարագրում են ժամանակի պատմիչները քրիստոնէութեան ծագման օրերին: Բայց նոյն իսկ Հրէայ ժողովուրդը, որ կրօնական և բարոյական գաղափարներով այնքան գերազանց էր դասական ազգերից՝ ազատ չէր ազգային ամբարտաւանութեան զգացումից: Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը միայն հրէութիւնն էր: Բոլոր հեթանոս ազգերը պիղծ են և ատելի: Միայն բարձր հոգիներն են՝ նշանաւոր մարգարէներն ու աստուածամերձ բարեպաշտները, որ երբեմն բողոքում են այս թիւր և սխալ հասկացողութեան դէմ:

Բ.

Քրիստոնէութիւնը, որ աշխարհ եկաւ բարոյական յեղափոխութիւն յառաջ բերելու կեանքի մէջ, բնականաբար առանց ազդեցութեան չմնաց և հայրենասիրութեան գաղափարի վերաբերութեամբ։ Նա մաքրեց հայրենասիրութիւնը եսական և բարբարոսական տարրերից և մի բարոյական զգացմունք դարձրեց այն։ Մինչդեռ հին աշխարհի քաղաքակիրթ ազգերի հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնը ամբողջապէս եսական և շահասիրական խարիսխների վերայ էր հաստատուած, քրիստոնէութիւնը այստեղ եւս կամենում է առաջնորդող սկզբունքը բարոյականը դարձնել։ Հին ազգերի մէջ առաքինութիւն էր ոչ միայն բարեկամին սիրել, այլ և թշնամուն վնասել, ոչնչացնել։ Թշնամու արիւն խմելը շատ ազգերի մէջ պատմական իրողութիւն էր։ Նոյն իսկ սաղմոսների մէջ թշնամական զգացման այնպիսի խիստ արտայայտութիւններ և անէծքներ կան դէպի հակառակորդները, որ քրիստոնեան և բարեկիրթ մարդը առանց սարսափի կարդալ չի կարող։ Որպիսի՜ խորին և անսահման ատելութիւն կարող էր զգալ հրէան դէպի իր թշնամին, և այդ ոչ միայն դէպի նորա անձը, այլ և դէպի նորա կինը, անմեղ որդիքը, նորա ամբողջ սերունդը (Սաղմ. ճԸ. 6—16)։ Բայց քրիստոնէութիւնը գթութեան, կարեկցութեան և սիրոյ կրօնն էր, հայրենասիրութեան «բնական» զգացումն էլ պիտի ցօղուէր այդ կենդանաբար զօրութեամբ և ուրիշ կերպարանք ստանար։

Նոր կտակարանի մէջ իսկապէս հայրենասիրութեան և ազգասիրութեան մասին խօսք չկայ։ Եթէ մենք պարտաւոր ենք սիրել ոչ միայն մեր բարեկամին, այլ և թշնամուն, եթէ մեր «ընկերն» է, ոչ միայն մեր ազգակիցը, այլ և ամենայն ոք, որ կարօտ է օգնութեան, կարեկցութեան, եթէ բոլոր մարդիկ եղբայրներ են, մի և նոյն երկնաւոր Հօր երկրաւոր որդիք, ապա ուրեմն ի՞նչ խօսք կարող է լինել սովորական մտքով, մանաւանդ հին աշխարհի հասկացողութեամբ, ազգասիրութեան և հայրենասիրութեան մասին։ Ո՛չ, քրիստոնէութիւնը խորտակել է հին աշխարհի կուռքը, եսական ամրոցները և անձնուիրութեան ու սիրոյ լուսեղէն կամարը կանգնել։ Այս է պատճառը, որ կեանքի և գրականութեան մէջ հազուադէպ չեն այնպիսի ձայներ, որոնք պնդում են, թէ քրիստոնէութիւնը հայրենասիրութեան և ազգասիրութեան հակադրութիւնն է։

Արդա՛րեւ, բոլորովին անհիմն չէ այս դատողութիւնը, թէեւ

սխալ է հանած եզրակացութիւնը։ Քրիստոնէութիւնը հայրենասիրութեան գաղափարը ոչնչացնել չէր կարող, նա ոչնչացնում է միայն հին աշխարհի միակողմանի և սխալ հասկացողութիւնը այդ մասին և նոր գնահատութիւն տալիս, սրբելով այն անբարոյական, եսական, շահասիրական կամ նոր լեզուով խօսելով, նեղ, շովինիստական տարրերից։ Ճշմարիտ հայրենասէր և ազգասէր լինելու գաղափարը ոչ միայն դէմ չէ քրիստոնէութեան, այլ վերջինս է, որ ազնուացնում է և բարձր առաքինութիւն դարձնում այն։ Նա կապում է բազմալեզու և բազմատեսակ ազգերը միմեանց հետ, առանց ոչնչացնելու նրանց ինքնուրոյնութիւնն ու առանձնայատկութիւնները։ Հայրենասիրութիւնը քրիստոնէական հասկացողութեամբ բարձր մարդասիրութիւն է։

Հայրենասիրութիւն է մաքառել սեպհական ժողովրդի տգիտութեան, անբարոյականութեան, աղքատութեան, ինչպէս և հիւանդութիւնների և այլ բազմատեսակ նիւթական և բարոյական կարիքների դէմ։ Հայրենասիրութիւն է փարատել նրա մտքի խաւարը, լուսաւորել մարդկային հոգու բարձր արտադրութիւններով և պաշտպանել նրա ժառանգութիւնները բարոյական բոլոր միջոցներով։

Անշո՛ւշտ, քրիստոնէական սիրոյ գաղափարը պարտաւորեցնում է մեզ կարեկից լինել դէպի օտարազգի թշուառը, բայց մեր սէրը կապուում է նախ բնականաբար մեր շրջապատի և ազգի հետ։ Քրիստոնէութիւնը ոչ մի պատճառ չունէր դատապարտելու այն թանկագին կապերը, որ մարդուն միացնում է իր ազգի և հայրենիքի հետ։ Նա յատուկ չէ ջնջում այս գաղափարը, որոշ սկզբունքներ չէ տալիս զարգացնելու այն, որովհետև նրա բերած յեղափոխութիւնը հոգեւոր էր, ներքին, բայց հէնց այդ պատճառով հայրենասիրութեան ու ազգասիրութեան գաղափարն էլ բարեփոխութեան պիտի ենթարկուէր՝ իբրև մէկը մարդկային հոգու լաւագոյն զգացմունքներից։

Դեռ եւս քրիստոնէութեան ծագման օրերին հրէամիտների մէջ զարթնել էր այն միտքը, թէ արդեօ՞ք նոր ուսումը հակազգային և հակահայրենասիրական չէր․ հեթանոսաց առաքեալը իր ազգի դաւաճանը չէ՞, որ ուրանում է նրա աւանդութիւններն ու օրէնքները, սրբութիւնը։ Բայց Հռովմայեցւոց Թղթից, երեւում է, թէ ինչպէ՛ս առաքեալը առաւելութիւն է տալիս իր ազգին, ցաւում է իր ժողովրդի բարոյական անկման վերայ, և կը կամենար մինչև իսկ «նզով լինել ի Քրիստոսէ վասն եղբարց և ազգականաց ըստ

մարմնոյ, որ են Իսրայէլացիք» (Հռոմ. Թ. 3.)։ Նորա խղճն է միայն, որ իր ժողովուրդը վերածնուէր այն հոգեւոր փրկութեան համար, որ բերել էր իր Տէրը։

Աւետարանների մէջ աւելի պարզ ցուցումներ կան այս խնդրի համար. Յիսուս գործում է իր ժողովրդի մէջ և եկել էր Իսրայէլի կորուսեալին գտնելու. իր աշակերտներին եւս նախ Իսրայէլի քաղաքներն է ուղարկում։

Ինչպիսի՜ թախիծ է պատում Տիրոջ սիրտը Ձիթենեաց սարի վերայից տաճարի և հինաւուրց սրբազան քաղաքի չքեղութիւնը դիտելիս։ Քաղաքի բարձր ապարանքներն ու աշտարակները, տաճարը իր գմբէթով և ոսկեզօծ գեղեցիկ զարդաններով փայլում էին ուրախ արեւի պայծառ ճառագայթների տակ, բայց մահուան գըրոշմ էին կրում արդէն իրենց ճակատին, քարը քարի վերայ չպէտք է մնար այդ հոյակապ շէնքերից... ուստի և լալիս է Տէրը իր հայրենիքի կործանման նախազգացման տպաւորութեան տակ։ Այն հայրենիքը և ժողովուրդը, որ Աստուծոյ ազդարար ձայնը չէր լըսում, որ մոլեգնութեամբ կոտորում էր իր մարգարէներին և առաքեալներին, խեղդում է իր որդոց մէջ արդարութեան և ճըշմարտութեան բողոքի ձայնը, խեղդում և սպանում է ինքն իրան։ Ժողովրդի մտքի և հոգու անբարոյականութիւնը նորա կործանման նախանշանն է։ Այս գաղափարն է փայլում Մատթ. ԻԳ. գլխի մէջ, ուր Տէրը քննադատում է իր ժամանակի առաջնորդների բարոյական արժանիքը և Նորա հետ կապում Երուսաղէմի կործանման գաղափարը։ Գողգոթայի ճանապարհին իսկ, երբ կանայք լալիս են Նորա վերայ, Նա պատասխանում է. «Դստե՛րք Երուսաղէմի, մի՛ լայք ի վերայ իմ, այլ լացէք ի վերայ անձանց և ի վերայ որդւոց ձերոց»։ Ճշմարիտ հայրենասէրի խորին գիտակցութիւնից և սրտից բղխած ողբն էր այս իր անգիտակից և բարոյական անկման խորխորատի վերայ կանգնած ժողովրդի համար։ Այս խօսքերն ու դէպքերը, որ կապուած են Յիսուսի անձնաւորութեան հետ, առաքելական և յետառաքելական շրջանի հայեացքն էր, և լաւագոյն ապացոյցը, թէ քրիստոնէութիւնը հայրենասիրութիւնը չի ոչնչացնում, այլ սրբում, մաքրում և կամենում է, որ նորա հիմքը բարոյական լինի։ Քրիստոնէութեան համար հայրենասիրութիւնը նախ բարոյական վերածնութեան գործ է։

Դ.

Բայց այսպէս չէին մտածում Յիսուսի ժամանակի փարիսեցիներն ու նախանձայոյզները. նոքա ուրիշ ճանապարհ էին ընտրել՝

առաջնորդուելով մարդկային սխալ հասկացուած ինքնավստահութեամբ և կոյր մոլեռանդութեամբ։ Հրէից մի բուռն ժողովրդի մէջ ստեղծուել էր արհեստական կերպով այնպիսի մի տրամադրութիւն, որից ամենայն հեշտութեամբ օգտուում էին ստութեան և կեղծիքի հերոսները։ Սուտ մարգարէներն ու քրիստոսները հանդէս են գալիս այստեղ և այնտեղ, արեան միայն նախճիրներ պատրաստելու անմեղ ժողովրդի համար։ Յիսուսի ապաշխարութեան և հոգեւոր թագաւորութեան քարոզները արձագանգ չգտան ժողովրդի մեծամասնութեան մէջ։ Առաքեալների հրեղէն լեզուները չկարողացան ջերմացնել սառոյց և քար դարձած ժողովրդի սիրտը։ Ճակատագրական մի օրհաս, սեւ և փոթորկալից ամպերով, կախուած էր այդ մի բուռն ժողովրդի գլխին, իսկ նորա կոյր առաջնորդները մոլեռանդութեան կրքով տարուած, աչք չունէին տեսնելու այն։

Վաթսունական թուականների վերջերից հրէական փոքրիկ ժողովրդի մէջ մի զարմանալի շարժում սկսուեցաւ, որի նպատակն էր հռովմէական հզօր արծուի թեւերը խորտակել։ Բայց այդ շարժումը մի սրտաճմլիկ և վերին աստիճանի խրատական ողբերգութեան փոխուեցաւ։ Մոլեռանդութիւնն ու կատաղութիւնը միշտ յայտարար չէ ներքին ոգեւորութեան և սրբազան ու վսեմ գաղափարի կենդանութեան։ Աստուծոյ կենդանարար հոգին փոթորիկների ամպրոպների մէջ չի երեւում, այլ խաղաղ զեփիւռների մէջ։ Նախանձայոյզների առաջնորդութեամբ գլուխ բարձրացրած ժողովուրդը ստիպեց հռովմայեցիներին դուրս գալ քաղաքից, բայց դորա փոխարէն այստեղ սարսափի և արհաւիրքի մի կառավարութիւն սկսուեց։ Վեսպասիան հռոմէական լեգէոնների գլուխն անցած՝ մի մեծ ջարդ էր տուել արդէն ապստամբներին, 40 հազարի չափ հրէաներ ընկել էին առաջին մեծ ճակատամարտի մէջ, իսկ նորանից յետոյ Տիտոս պաշարել էր քաղաքը։ Եւ մինչդեռ Երուսաղէմի պարիսպները հետզհետէ տապալուում էին թշնամիների առաջ, իսկ քաղաքի ներսում ժանտախտն ու սովը հազարաւորների կեանքն էր հնձում պատմութեան մէջ քիչ անգամ տեսնուած սաստկութեամբ, հարազատ մայրը իր զաւակի միսն էր ուտում..., հրէայ կուսակցութիւններն իրենց զօրապետներով կատաղի կռիւ էին մղում միմեանց դէմ և հայրենի քաղաքի փողոցները ներկում հարազատ ժողովրդի արիւնով։ Ի զուր չէր երգել նոյն ժողովրդի սաղմոսերգուն. «Եթէ ոչ Տէր շինէ զտուն, ի նանիր վաստակին շինողք նորա, եթէ ոչ Տէր պահէ զքաղաք, ընդունայն տքնին պահապանք նորա» (Սաղմ. ճԻԶ.)։ Հրէայ ժողովրդի ինքնասպանութիւնն էր այդ

իր անբարոյականութեան պատիժը։ Այն ժողովուրդը, որ Յիսուսի նման անձնաւորութիւնը իբրեւ մահապարտ խաչել կարող էր եւ հայրենիքի ակնյայտնի կործանման ժամանակ իրար խողխողել, արժանի չէր անկախ եւ ազատ հայրենիք ունենալու։ Քաղաքն ու տաճարը հրոյ ճարակ դարձան, բնակիչները տասնեակ հազարներով ընկան ահեղ թշնամու զօրութեան առաջ, իսկ մնացածները մետաղներն աքսորուեցան կամ գերի տարուեցան Հռովմ։ Այս պատերազմը մի միլիոն կեանք նստեց հրէաներին, որոնք երկրորդ ապստամբութիւնից յետոյ՝ Ադրիանոսի ժամանակ թողին իրենց աւերակ եւ անբաղդ հայրենիքը եւ ցրուեցան աշխարհի ամեն կողմերը ազգերի ատելութեան արժանացան։

Ինչ որ նկատեցինք հրէից պատմութեան մէջ, կարելի է ցոյց տալ եւ ուրիշ ազգերի կեանքում։ Ի՞նչ էր Յունաստանի պատմութիւնը մակեդոնական եւ հռովմէական իշխանութեան ժամանակ։ Երկպառակութեան զոհ դարձած՝ լաւագոյն քաղաքացիները ստիպուած էին թոյն խմել։ Զգայական վայելքները, պղծութիւնն ու անամօթ անբարոյականութիւնը սպանեցին արուեստի եւ քաղաքակրթութեան մայր Աթէնքի ստեղծագործող զօրութիւնը։ Պերիկլէսի յետագայ քաղաքացիների մէջ մեռել էր ոչ միայն սէրը դէպի ազատութիւնը, այլ եւ դէպի հզօրները ցոյց տուած շողոքորթութեամբ մինչեւ իսկ մարդկային արժանապատուութեան զգացմունքը։ Ի զուր էին աքայեան դաշնակցութեան ջանքերը երկպառակուած քաղաքների եւ ցեղերի մէջ միութիւն ստեղծելու, ազգային անկախութիւնն ու ազատութիւնը պահելու համար։ Նախանձը, յափշտակութեան եւ աւազակութեան զգացումը աւելի զօրաւոր էր միւս ցեղերի մէջ։ Աքայեան դաշնակցութիւնն էլ արիւնաքամ եղաւ անվերջ ներքին երկպառակութիւններից եւ պատերազմներից, մինչեւ հռովմէական արծիւը այստեղ էլ տարածեց իր թեւերը, որպէս թէ ի պաշտպանութիւն ընդդէմ Մակեդոնացիների։ Ազատութեան, արուեստի, քաղաքակրթութեան հայրենիքը երկպառակութեան, աւազակների եւ վայրենի բռնագգների արտայայտութեան վայր էր դարձել։ Կեանքի եւ գոյքի ապահովութիւնը իսպառ վերացած էր խուժանապետների շնորհիւ։ Չնայելով հռովմայեցիների դէպի Յոյները ցոյց տուած զիջողութեան ու մեղմութեան, չկարողացան նոքա պահել իրենց ազատութեան վերջին մնացորդները, որովհետեւ անբարոյական, կուսակցութեան եւ կրքի զգացմունքներով կուրացած ազգն այլ եւս անկարող էր վայելել այն։ Մատնութիւնը, նենգութիւնն ու երկպառակութիւնը վերջ

տուին նրանց անկախութեան վերջին մնացորդներին, և այնուհետեւ անվեհեր քաջութեան հայրենիք Սպարտայի որդիքը վարձկան զինուորներ դարձան, իսկ Աթենացիք՝ որպէս արուեստագէտներ, ուսուցիչներ, դերասաններ կամ պարողներ՝ զբաղեցնում էին հռովմայեցիներին՝ ենթարկուած նրանց արհամարհանքին։

Այսպէս է պատմութեան անողոք դատաստանը բարոյական օրէնքների հակառակ ընթացող ազգերի համար և վա՜յ այն ժողովրդին, որ չի կամենում տեսնել և ճանաչել այն։

Գ. Վ. ՑՈՎՍԷՓԵԱՆ

Արարատ. 1907, Յուլիս—Օգոստոս.

ԻԶ.

ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

«Յուշ լիցին քեզ աւուրք յաւիտենից. իմացարուք զամս ազգաց յազգս: Հարց զհարսն քո եւ պատմեսցեն քեզ, զծերս քո՛ եւ ասասցեն քեզ»:

Երկ. Օր. ԼԲ. 7.

Ա.

Զարգացման ենթակայ ամէն արարած իւր հայրենիքն ունի. բոյսը, կենդանին իւր բնիկ աշխարհն ունի, ուր աւելի ազատ աճել կարող է, քան մի ուրիշ երկրում։ Հասարակածի բոյսերը բեւեռային գօտում աճել չեն կարող, ինչպէս և սառուցեալ ովկիանոսի թռչուններն ու կենդանիները չնչասպառ կը լինեն Սահարայի ջերմ անապատներում։ Նախախնամութեան սահմանած մի օրէնք է այս, որին ենթարկւում է և մարդը։ Բայց մի մեծ տարբերութիւն կայ մարդու և միւս աճող արարածների մէջ. մարդու կեանքը կենդանականի և հոգեւորի մի գումար է, այսպէս էլ նորա հայրենիքի գաղափարը երկու երեսից բաղկացած և միմեանց հետ սերտ կապուած մի ամբողջութիւն։

Հայրենիքի գաղափարը յատուկ է նոյն իսկ ամենահասարակ, կիսակիրթ ժողովրդին. բայց նորա գաղափարը սահմանափակ է և թանձրացեալ. հայրենիք ասելով, նա հասկանում է իւր ընտանեկան օջախը, հայրենի գիւղը, հողն ու ջուրը, նախնեաց գերեզմաններն ու սրբութիւնները։

Սակայն քաղաքակրթութեան զարգացման աստիճանների համեմատ հետզհետէ ընդարձակւում և տարբեր բովանդակութիւն է ստանում ազգերի մէջ և հայրենիքի գաղափարը։ Ազգայնութեան տարրերն են ընդհանրապէս արեան, հայրենի երկրի, լեզուի, պատմութեան, սովորութիւնների և պետական կազմակերպութեան միութիւնները։ Բայց սոցանից արտաքին երեւոյթները չեն այնքան կարեւորը, որքան հոգեւոր կեանքի և քաղաքակրթութեան գիտակցական միութիւնը։ Այս տարրերից իւրաքանչիւրը իւր նշանակութիւնն ունի ժողովրդի բնական զարգացման համար, բայց այդ զարգացման ելակէտը հոգեւոր քաղաքակրթութիւնն է և նո-

բանից բղխած գիտակցութիւնը, որ կապում է սերտ կերպով միմեանց հետ ազգեցութեան անդամներին: Այդ գիտակցութիւնն է պարզում, թէ ազգութիւնը ի՛նչ հոգեւոր բարիք և ժառանգութիւն ունի, որ թանգ է ընդհանրութեան համար: Եւ այդ ժառանգութիւնն է նորա հոգեւոր հայրենիքը, որով նա ապրում է ոչ որպէս մի բոյս կամ կենդանի, այլ բանական և հոգեւոր արարած:

Քաղաքակրթական կեանքով ապրող ազգերի համար սովորական իմաստով հայրենիքից զատ՝ կայ մի ուրիշ, հոգեւոր, վերացական հայրենիք: Բայց հոգեւոր կեանքը, քաղաքակրթութիւնն էլ ունի իր հայրենիքը, ճիշդ այն նմանութեամբ, ինչպէս բոյսերի, կենդանիների և մարդկանց նիւթական հայրենիքն է: Ամեն հողի վերայ նոյն գաղափարը աճել չի կարող: Նոյն իսկ բարոյական և կրօնական ամենից ընդհանուր գաղափարները տարբեր բնաւորութիւն և ձեւակերպութիւն են ստանում զանազան երկրների բնակիչների մէջ: Քրիստոնէութիւնը տարբեր բացատրութիւն և կազմակերպութիւն է ստացել այլ և այլ ազգերի մէջ, թէեւ արմատով նոյն է ամեն տեղ: Դաւանաբանական և ծիսական կարգերի տարբերութիւնները եկեղեցիների մէջ, ընդհանրական եկեղեցու ազգային եկեղեցիների բաժանումը Աստուծոյ տնօրինութեան և պատմական, բնական պարագաների հետեւանք էին և ոչ այս կամ այն անձի կամայականութեան: Պատմական գիտութիւնները մեր առաջ պարզում են այլ և այլ ազգերի տարբեր քաղաքակրթութեան և կրօնների զարգացման ընթացքը: Ուրիշ է արեւելքի քաղաքակրթութիւնն ընդհանուր առմամբ և ուրիշ արեւմուտքինը. ուրիշ է քրիստոնեայ ազգերի ընդհանուր քաղաքակրթութիւնը և ուրիշ մահմեդական և հեթանոս ազգերինը: Նոյն իսկ այս ընդհանուր խմբերի քաղաքակրթութիւններն էլ իրենց ստորաբաժանումներով զանազանւում են միմեանցից: Ամեն ազգի հոգեւոր կեանք իր բնորոշ կողմերն ու յատկութիւններն ունի: Ինչպէս բոյսը իր յատուկ կլիմայական պայմաններում միայն կարող է զարգանալ և շարունակել իր տեսակը, այդպէս էլ իւրաքանչիւր ազգի հոգեւոր կեանքը իր բնորոշ յատկութիւնները պահել և զարգանալ կարող է իր բնիկ հողի վերայ:

Բ.

Արդ, ո՞րն է Հայ ժողովրդի հոգեւոր հայրենիքը:

Այս հարցի պատասխանը այն ժամանակ կարող ենք տալ, երբ աչքի առաջ ունենանք մեր ժողովրդի անցեալը: Որովհետեւ այն-

տեղ կարելի է որոշել միայն ժողովրդի հոգու բնորոշ գծերն ու յատկութիւնները, այնտեղ է պատկերանում ժողովրդի հոգեւոր կեանքի և ընդհանուր քաղաքակրթութեան մէջ ցոյց տուած զարգացումը։ Պատմութիւնը ազգերի կեանքի հայելին է, իսկ հայելու մէջ անդրադառնում է ճիշտ պատկերը։

Հայ ժողովրդի գիտակցական քաղաքակրթութիւնն սկսւում է քրիստոնէութեան հաստատութեամբ և նորա դրոշմն է կրում իւր զարգացման ամբողջ ընթացքում։ Հայոց մատենագրութեան առաջին յիշատակարանը Ս. Գրքի թարգմանութիւնն է, որի վերայ կրթուել են բազմաթիւ սերունդներ։ Ե. դարից առաջ ի՞նչ քաղաքակրթութիւն ենք ունեցել, յայտնի չէ մեզ. բայց եթէ որոշ չափով հեթանոսական քաղաքակրթութիւնն եւս ունեցած լինինք, ձուլուել է քրիստոնէականի հետ։ Հայոց հոգեւոր կեանքի պատմութիւնը գրեթէ նոյնանում է մեր եկեղեցու զարգացման պատմութեան հետ։ Հայ ժողովրդի մատենագիրներն ու վարժապետները մի եւ նոյն ժամանակ եկեղեցու սպասաւորներն են։ Գիտութիւնն ու արուեստը Հայ ժողովրդի մէջ ծագել և զարգացումն է ստացել եկեղեցու շրջանակի մէջ։ Հայոց ճարտարապետութեան մասին գաղափար ենք ստանում նախնեաց թողած վանքերի և եկեղեցիների մնացորդներով։ Հայոց քանդակագործութիւնը՝ օրնամենտներ, խաչքարեր, ելնդաւոր (relief) պատկերներ, նկարչութեան մնացորդներ նոյն վանքերում և նոցա պատերի վերայ պէտք է որոնել։ Մանրանկարչութեան արուեստը ծաղկել է հայ վանականների ձեռքով և պահուել է բազմաթիւ ձեռագիրների մէջ։ Հայ ժողովրդի մանր արուեստների՝ ձեռագործ, ոսկերչութիւն, փայտի քանդակագործութիւն եւլն, մասին գաղափար ենք ստանում հին եկեղեցիներում և վանքերում պահուած սրբազան անօթներով և զգեստներով։ Եկեղեցական երգեցողութիւնը սերունդէ սերունդ աւանդուել և պահպանել է մեր ժողովրդական եղանակները։ Մեր նախնեաց կրթարանները վանքերն են եղել իրենց վանականներով. այնտեղ ուսում և գրութիւն են ստացել ոչ միայն եկեղեցու պաշտօնեաները, այլ և արքայազուններ, իշխաններ և հասարակ ժողովրդի որդիք։ Վանքերն են պահել մեր նախնեաց քաղաքակրթական մնացորդները՝ հնութիւնների և ձեռագիրների ժողովածուներ, որոնց ուսումնասիրութեամբ հնարաւոր է գաղափար կազմել մեր անցեալ կեանքի և պատմութեան մասին։

Եթէ իրաւ է մեր ասածը, թէ հոգեւոր կեանքով ապրող ազգերը սովորական, երկրաւոր հայրենիքից զատ ունեին մի ուրիշ,

վերացական հայրենիք, նոցա անցեալ քաղաքակրթութիւնն ընդարձակ մտքով, ապա ուրեմն Հայ ժողովրդի հոգեւոր հայրենիքը Հայաստանեայց եկեղեցին է: Այս հայրենիքի վերայ միայն կարող ենք հոգեւորապէս աճել և զարգանալ, ինչպէս որոշ կլիմայի և տեղին յատուկ բոյսն ու կենդանին իր հայրենիքում։ Մեր անցեալն ուրանալ չենք կարող, եթէ տգիտութեան և միակողմանի հասկացողութեան թանձր մառախուղը չէ նստել մեր հոգու վերայ։ Յառաջդիմութիւնը շղթաների կապակցութիւն է. նոր օղակը պէտք է կապուի հնի հետ և այսպէս շարունակուի անընդհատ։ Ով միշտ նոր է սկսում, յաւիտեան սկզբնաւորութիւն կը մնայ։ Նոր և ժամանակի պահանջների համեմատ քաղաքակրթութիւն ստեղծելու համար՝ պէտք է մեր նախնեաց հոգիները մեզ գործակից լինեն, հայոց հայրապետների և վարդապետների հատընտիր շարքերը, հայրենիքի անձնուէր նահատակները պէտք է յարութիւն առնեն մեր հոգու մէջ և խրախոյս հանդիսանան վերածնութեան, մի պայծառ և վսեմ քաղաքակրթական կեանքի նորոգման։ Հայ կեանքի հետ կապուած գիտութիւնները՝ ազգային և եկեղեցական պատմութիւններն ու մատենագրութիւնները, հնախօսութիւնը հիմնուած են անցեալի ուսումնասիրութեան վերայ։ Հայոց նոր արուեստ ու քաղաքակրթութիւն ծագել և ազգային դրոշմ ու գոյն կարող է ստանալ միայն նախնեաց արուեստի և քաղաքակրթութեան ուսումնասիրութեամբ։ Այստեղից է ծագում ազգային այն բարձր գիտակցութիւնը, որ գոյութեան պահպանութեան և յառաջդիմութեան գրաւականն է։ Մենք ըստ ամենայնի հին կեանքով վերածնուել չենք կարող, բայց հնի մէջ կան բարիքներ, որ իրենց կենդանի ներգործութիւնը պիտի ունենան և յաջորդ սերունդների վերայ։ Իսկ այս բոլորի մէջ մեր եկեղեցին առաջին դեր է կատարել անցեալում և պէտք է կատարէ ապագայում, եթէ գիտակցաբար նորա ուժերը չջլատենք։

Գ.

Բայց նա մի ուրիշ կարեւոր գործ եւս ունի կատարելու։

Ինչպէս հնում, առաւել եւս այժմ եկեղեցին չի կարող ամբողջ հոգեւոր կեանքի ամփոփումը լինել, և եթէ մենք նորան հոգեւոր հայրենիք ենք անուանում ոչ այն մտքով, որ նորանից դուրս կեանք և քաղաքակրթութիւն չկայ։ Քաղաքակրթութիւնն ընդհանրապէս աւելի ընդարձակ գաղափար է, քան կրօնական և եկեղեցական քաղաքակրթութիւնը։ Նիւթական կեանքի հետ կապուած

և աշխարհիկ բնաւորութիւն կրող քաղաքակրթութիւնը նոյնպէս բարիք է։ Մինչեւ իսկ աշխարհիկ և նիւթական քաղաքակրթութիւնները նպաստում են որոշ չափով և հոգեւոր, բարձր քաղաքակրթութեան զարգացման։ Նիւթական բարեկեցութիւնը որպէս արդիւնք նիւթական քաղաքակրթութեան անհրաժեշտ պայման է և հոգեւոր կեանքի զարգացման համար։ Բայց նիւթական քաղաքակրթութիւնն ինքն ըստ ինքեան նպատակ լինել չի կարող, անցաւորն ու երկրաւորը պէտք է ստորադրուի և պատուանդան դառնայ բարոյական և յաւիտենական գաղափարների համար։ Քաղաքակրթութեան նպատակը պէտք է լինի ճշմարտութեան, բարութեան և գեղեցկութեան մի նոր աշխարհ ստեղծել բնութեան մէջ։ Այսպէս հասկացուած քաղաքակրթութիւնն Աստուծոյ օրհնութիւն է և ամենասերտ կերպով կապուած մարդկային հոգու կեդրոնական երակի՝ կրօնի հետ։ Որովհետեւ բարձրագոյն կրօնի նպատակը ոչ այլ ինչ է, բայց եթէ մարդկանցից բարոյական անձնաւորութիւններ ստեղծել։

Քրիստոնէական կրօնը յատկապէս այս խնդրում բացառիկ դիրք է բռնում. Նա կամենում է աղ լինել կեանքի և քաղաքակըրթութեան բոլոր երեւոյթները համեմելու համար։ Առանց կրօնի և բարոյական կատարելութեան ձգտման, ոչ միայն անտարբերութիւն է զարթնում դէպի ազնիւն ու վսեմը, դէպի առաքինին և մարդասիրականը, այլ և քաղաքակրթութիւնը, գիտութիւնն ու արուեստը չարիք է դառնում, եսական, մոլեգին և զազրելի նպատակների միջոց։ Կեանքը դառնում է մի դժոխք, որի համար գաղափար կարող են տալ հին ազգերի՝ յունաց, հռովմայեցւոց, հրէից՝ կրօնական անկման շրջանները։ Բայց, շատ հեռու չերթանք, կարդանք Էմիլ Զօլայի «Պտղաբերութիւն» վէպը և պարզ կը լինի մեզ համար, թէ ինչ չարիք է գիտութիւնը առանց բարոյական զգացման։

Եւ ահա այստեղ եկեղեցու առաջ պարզւում է գործունէութեան մի ընդարձակ և վսեմ ասպարէզ. Նա աշխատում է, որ աւետարանի լոյսը թափանցի կեանքի բոլոր երեւոյթների, ի թիւս որոց և աշխարհիկ ու նիւթական քաղաքակրթութեան մէջ, ազնիւ ու բարոյական նպատակներ է դնում նրանց առաջ։ Նա միշտ շեշտում է և աշխատում մարդկանց մէջ հաստատել այն ճշմարտութիւնը, թէ հոգին աւելի է, քան մարմինը, թէ եսականը պէտք է համակերպուի ընդհանուր շահերին, թէ աւելի բարձր բարիք կայ, քան սոսկ նիւթական բարեկեցութիւնը։ Նա աշխատում

է նաեւ ազնիւ քաղաքակրթութեան պտուղները մատչելի դարձնել ընդհանրութեան, որովհետեւ շատ քչերը հնարաւորութիւն ունին գիտական և գեղարուեստական կրթութեամբ բարոյական անձնաւորութեան աստիճանին հասնել։ Քրիստոնէական եկեղեցին կրօնական դաստիարակութիւն է մատակարարում իր հօտին, բարոյական սկզբունքները կեանքի հիմք է դարձնում, սրում է խիղճը ներքին ճշմարտութեան զգացումով, մարդկային հոգու աչքերը երկրային աղտեղութիւններից դէպի վսեմն ու երկնայինն է ուղղում, մխիթարում է սգաւոր և թախծալից սրտերը, յուսահատներին յոյս է ներշնչում, բարոյապէս անկեալներին ոտքի կանգնեցնում, մեղմում է աղքատների դառն վիճակը կարեկից օգնութեամբ։

Եկեղեցին իր այսպիսի հովուական—դաստիարակչական գործունէութեամբ բնականաբար ստեղծում է որոշ քաղաքակրթութիւն. Նա հիմնում է ծխական, միջնակարգ և բարձրագոյն դպրոցներ իր կրօնական—բարոյական գաղափարները մատաղ սերնդի մէջ ներշնչելու և պաշտօնեաներ պատրաստելու համար. Նա ստեղծում է եկեղեցական գրականութիւն, գիտութիւն և սրբազան արուեստ իր ճիւղերով, ճարտարապետութիւն, քանդակագործութիւն, կրօնական նկարչութիւն, երաժշտութիւն։ Եկեղեցին սիրոյ գործունէութիւն է զարգացնում իր հօտի մէջ. ունեւորների մէջ գթութեան և կարեկցութեան զգացմունք է զարթեցնում, չունեւորներին օգնութիւն և նպաստ հասցնում կարողութեան չափ։ Հիմնում է որբանոցներ, անկելանոցներ, հիւանդանոցներ և ուրիշ բազմատեսակ բարեգործական հաստատութիւններ։ Հոգում է իր հեռաւոր և աղքատ գաղութների նիւթական և բարոյական վիճակի մասին և սերտ կապում մայր եկեղեցու և հայրենիքի հետ։ Իր վարչական կազմակերպութեամբ ղեկավար է հանդիսանում ազգային—եկեղեցական կեանքի կանոնաւոր զարգացման, հոգեւոր եւ անձնուէր մի զինուորութիւն է պատրաստում ծառայելու մեր ժողովրդի կրօնական և. քաղաքակրթական կեանքի յառաջդիմութեան։ Վերջապէս նա պատուար է կանգնում օտար, հզօր հոսանքների դէմ ազգային ինքնուրոյնութիւնը պահպանելու համար։

Այս բոլոր գաղափարներն ու հաստատութիւնները յատուկ են եկեղեցական կեանքին, միայն տարաբաղդաբար այժմ մեր մէջ պատմական ձախորդ պայմանների պատճառով աւելի նուազ չափով, քան ցանկալի էր։ Մի՞թէ պէտք է նպաստենք կամ անտարբեր հանդիսատես լինենք, որ մեր հոգեւոր, սրբազան հայրենիքը իր քայքայման գործողութեան մէջ յարատեւէ. սիրոյ, և երախ-

տագիտութեան անձնուէր զգացումով իւղ չ'պիտի լցնենք նորա 1600 տարիներից ի վեր մշտավառ կանթեղի մէջ, որպէս զի աւելի պայծառ լոյս տայ և իւր հօտի ճշմարիտ, բարոյական վերածնութեան աղբիւրը դառնայ։

Գ. Վ. ՑՈՎՍԷՓԵԱՆ

Արարատ, 1907. Սեպտեմբեր.

ԻԷ.

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱՒԵՏԻՔԸ

Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս, չէ աստ, այլ յարեաւ: Ղուկ. ԻԴ. 5.

Ա.

"Ո՞վ թաւալեցուցէ մեզ զվէմ, ի դրանց գերեզմանին»—ո՞վ պէտք է գլորէ գերեզմանի առաջ ձգուած մեծ վէմը, ժայռը։ Այսպէս էին խօսում իրար հետ այն կանայք, որոնք եկել էին, իրենց հետ անուշահոտ խունկ ու իւղ վերցրած, վերջին յարգանքը մատուցանելու սքանչելի Վարդապետի երկրաւոր մնացորդներին, որ երէկ կենդանի էր, այսօր անշունչ դիակ միայն, և վաղը պիտի անհետանար նրանց տեսութիւնից, որպէս ապականութեան և ոչնչացման բաժին։ Ապա, ուրեմն, վերջին, նուիրական պարտաւորութիւնը պիտի կատարուէր բոլորանուէր սրտով, իսկ իրենք տկար և անզօր, ո՞վ պիտի օգնէր, թաւալէր գերեզմանի դրան մեծ քարը, որպէս զի այրի մէջ մտնել կարողանային...։ Բայց ահա բաց է դուռը, քարը գլորուած և մի ձայն հնչում է իրենց ականջին. «Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս, չէ աստ, այլ յարեաւ» — Ինչո՞ւ էք կենդանին մեռեալների մէջ որոնում, այստեղ չէ, յարեաւ։

Զարմանալի բան։ Չէ՞ որ երեք օր առաջ տեսել էին Նրան խաչն ուսին, Գողգոթայի ճանապարհին, վաստակաբեկ, ծնկաչոք խաչի ծանրութեան տակ. կսկիծը սրտներին, արտասուքն աչքներին, հեկեկանքը կոկորդներում խեղդուած, դիտել էին անիրաւութեան թափօրը, վերջին անգամ տեսել էին աննման Վարդապետի բարի աչքերն իրենց ուղղուած և լսել իրենց սիրտը տոչորող խօսքերը. «Դստե՛րք Երուսաղէմի, մի՛ լայք ի վերայ իմ, այլ լացէք ի վերայ որդւոց ձերոց»։ Տեսել էին հեռուից Նորա մահը խաչի վերայ, թաղումը այրի մէջ, հրէաների քրքիջով և ծանակով Գողգոթայից իջնելիս, աղաւաղուած Նազովրեցու ստեղծած մղձաւանջից։ Ցրուել են ե՛ւ աշակերտները, հովիւը զարկուած ոչխարների նման... Ինչպէ՛ս թէ կենդանի է Նա։

Միամի՛տ, պա՛րզ, բայց սո՛ւրբ կանայք։ Չգիտէին դեռ, թէ

այդ օրը պատմութեան մէջ Աստուծոյ կամքով հրաշք է կատարւում, փրկութեան նոր ուղիներ բացւում մարդկութեան առաջ, մահուամբ մահն սպանելու, անզօր դարձնելու։ Բացւում են նրանց աչքերը, նրանց հոգու աչքերը, տեսնելու և հասկանալու, թէ ճշմարտութիւնն սպանել կարելի չէ ստութեան և կեղծիքի ճանապարհով, պարզւում է Յիսուսի բերած և ներշնչած գաղափարը հաւատոյ փրկարար և մեծ զօրութեան մասին, որի առաջ շարժւում են լեռները, գլորւում քարերը, հարթւում առապարները, կենդանանում մեռած մարմինները։ Պէտք է գիտնալ մեռնել, «հանապազ մեռանել» Աստուծոյ անունով, եղբօրս համար, հայրենիքիս համար, յաւիտենական արժէքների ստացման և պահպանութեան համար։ Ահա բանալին, որով բացւում են, այլապէս փակ, դռները կեանքի։ Նախնի քրիստոնէութեան ոյժը սորա մէջն էր. հաւատում էին, որ Քրիստոս յարութիւն է առել, որ Նա կենդանի է իւր անունով հաւաքուածների մէջ, նրանց հոգիների և սրտերի մէջ. յարութեան գաղափարն ու հաւատը նրանց բարոյական մեծ զօրութիւնն էր, արտաքին տկարութեան, աղքատութեան, խեղճութեան մէջ, աշխարհը նուաճող զօրութիւն։ «Կենդանի եմ այսուհետև ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս» (Գաղ. Բ. 20)։

Բ.

Բայց հրեշտակի բերած աւետիքը և մեզ համար է. քսաներորդ դարու տեսական և գործնական գիտութեամբ, արուեստով ուռճացած մարդկութեան համար։ Մեծ է գիտութեան և արուեստի արժէքը, նիւթական կեանքի հրաշալի գիւտերի հետ, նրանք ընդլայնում են մեր ծանօթութիւնները, մեր աշխարհայեացքը, մեր ըմբռնողութիւնը կեանքի և տիեզերքի երևոյթների մասին. Նրբացնում են մեր ճաշակը ներքին յոյզերի և գեղեցկութիւնների մեծ վայելքի համար... բայց նրանք ամեն ինչ չեն, աւելցնենք և ոչ ամենքին մատչելի։ Դեռ եւս Պօղոս առաքեալը գիտութիւնը սահմանաւոր է համարել, անկատար, բայց անկատար է և այժմ, որքան և զարգացել է, յառաջդիմել, գրեթէ, երկու հազար տարուայ ընթացքում։

Այժմ էլ բնութիւնը լի է գաղտնիքներով, խորհուրդներով, կենդանութեան ամենափոքր գոյութիւններից մինչև մարդկային հոգին՝ կամքը, երևակայութեան թռիչքը, մտածողութիւնն ու գիտակցութիւնը։ Ոչ միայն տիեզերքը իւր անսահման մեծութեամբ մեզ հասկանալի չէ, այլ և նոյն իսկ իւր ամենափոքրիկ մասնիկով։ Գիտութիւնը զբաղւում է միայն արտաքին երևոյթներով, իրերով, գտնում է մեքենական օրէնքներ, որով շարժւում է

կեանքը, տիեզերքը, բայց նրանց խորքը թափանցել չի կարողանում, որքան և յառաջդիմէ, զարգանայ։ Նրանց պատճառն ու նպատակը գիտութեան համար մնում է գաղտնիք, խորհուրդ։ Այս խորհրդաւորութեան և անգիտութեան սահմանի վրայ հաւատոյ ջահն է, որ լուսաւորում է իրերի և երեւոյթների հասկացողութեան խորքը, յաւիտենական իմաստութիւն և նպատակ տեսնելով տիեզերքի և մեր անձնական գոյութեան մէջ։ Ամէն ինչ Աստուծուց է գալիս, նորանով ղեկավարւում, և դէպի նա ուղղւում մեր հոգիների իղձերն ու տենչերը, մեր կատարելութեան վերելքը։ Մեծ գիտնականներ և փիլիսոփաներ, բնագէտներ և բանաստեղծներ, իւրաքանչիւրը իւր ճանապարհով, յանգել են այս եզրակացութեան, երբ առարկայական քննութիւնից կամեցել են անցնել պատճառի և նպատակի մեծ հարցերի պատասխանին, չօշափելի իրականութիւնից դէպի հոգեկան բարձր ապրումի մթնոլորտը, տեսանելի կեանքից դէպի նորա ներքին էութիւնը։ Այստեղ է, որ մարդկային հոգու մէջ ամենամեծ հրաշքն է կատարւում. գիտութեան, արուեստի և կրօնի դաշնակցութիւնը, իւրաքանչիւրը իւր ճանապարհով, իւր միջոցներով, բայց նոյն բարձրագոյն նպատակի ծառայութեամբ, որ իսկական կեանքն է, վերածնուած և զտուած կեանքը, մեռելութիւնից յարութիւն առած և առ Աստուած ուղղուած կեանքը։

Գ.

Այս մտքերի գեղարուեստական լաւագոյն ամփոփումը տուել է մարդկութեան ամենամեծ բանաստեղծներից մէկը, Գէօթէն, իւր Ֆաուստի մէջ. Նա ուսումնասիրել է բոլոր գիտութիւնները, պատմութիւն, փիլիսոփայութիւն, բնական գիտութիւններ, նաև աստուածաբանութիւն, բայց կեանքի իմաստն ու նպատակը չէ հասկացել, հասել է յուսահատութեան դուռը և ահա առել է թոյնի բաժակը, իւր անիմաստ կեանքին վերջ տալու...։ Բայց հնչում է հարեւան եկեղեցու զանգը և յարութեան փառաբանութեան երգը, և նա յափշտակուած ցած է դնում բաժակը և մի նոր կեանք սկսում, սայթաքումներով և բարձրացումներով կեանքի ճանապարհը, աչքերն ուղղած միշտ դէպի երկնայինն ու վսեմը։

Ո՛հ, այդ անոյշ ղօղանջը իմացական զանգի, որ Աստուծոյ ձայնն է, հրաւէրը մեռելութիւնից դէպի վերածնութիւն, դէպի յարութեան կեանքը։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ, 1938։

ԻԸ.

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՏԿԻ ԱՌԹԻՒ

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԱՌԱՋՆՈՐԴ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ, ՄԵՐ ՎԻՃԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՔ, ՍԷՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԵՒ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ։

Անցեալ տարի մեր շրջաբերական թղթով Ծննդեան առթիւ խօսեցանք մեր ժողովրդի հետ, այսօր էլ շնորհաւորելով Տիրոջ Յարութեան մեծ տօնը, կը կամենայինք նորա մեծ նշանակութիւնը բացատրել Ձեզ։

Մահը մեր կեանքի ամենամեծ առեղծուածն է. ըստ երեւոյթին հակադրութիւնը մեր գոյութեան, մեր ջանքերի և ոքնութեան, մեր տենչերի և կատարելութեան ձգտումների։ Մինչեւ իսկ այս բոլորի վերջակէտն է այն, և այսպիսի լուսոյ տակ, նաեւ, աննպատակ կեանքի չքացումը։ Ինչո՞ւ ենք աշխարհ եկել, ինչո՞ւ ենք ապրում և ո՞ւր ենք գնում, մահը ոչ միայն մեզ չի պատասխանում, այլ և թանձր վարագոյր քաշում մեր հարցերի առաջ, թողնելով անթափանց խաւարի, քաոսի և անգիտութեան մէջ։

Եւ ահա այս անլուծելի թուացող առեղծուածի հակառակ, եկեղեցին աւետում է մեզ. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց, և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց»։

Կրօնի և քրիստոնէական հաւատի բերած բարիքն է այս. մեր անցաւոր կեանքի և վախճանից յետոյ՝ զարթնումի և վերակենդանութեան մեծ գաղափարի և յուսոյ։ Թւում է, բնութիւնն իսկ նոյն միտքն է արծարծում և ներշնչում. երէկ երկիրը ծածկուած էր սպիտակ սաւանով, ծառերը մերկացած իրենց գեղեցկութիւնից, դաշտերն իրենց թաւշեայ և ծաղկազարդ կանաչից, այսօր նրանք նոր կեանք են առնում, վերազարթնում թմրութիւնից և նիրհից։ Ձմեռուայ ձիւն ու բուքին, սառնամանիքին, այսօր պայծառ և լուսաւոր գարունն է հետեւել, և ամպերի ու մառախուղի տակ թաղնուած արեգակը, իր լուսաշող և կենսաբեր ճառագայթներն ուղղել մեզ։

Ճշմարիտ է, ոչ ոք չէ եկել անդրական աշխարհից, և ոչ լուր բերել մահուանից յետոյ մեզ վիճակուած կացութեան մասին, բայց հաւատոյ կեանքով ապրողները տեսել են և տեսնում են այդ հրաշալիքը։ Խնդիրն այս է, որ ամենայն ինչ չի ենթարկւում թանձրացեալ փորձառութեան և գիտական վերլուծութեան. Նոյն իսկ հոգեւոր կոչուած ամենավսեմ բաները թանձրացեալ չեն, շօշափելի և տեսանելի չեն, այլ զգալի և իմանալի միայն հոգեկան կարողութիւններով։ Ոչ ոք կարող է վերլուծել և հասկանալ մարդկային գիտակցութիւնը, հանճարը, ստեղծագործութիւնը, հոգեկան ապրումներն ու թռիչքները, «երազները», եթէ կարելի է այս բառով արտայայտել, իրենց մանրամասնութիւններով, բայց նոքա կան, նոքա իրողութիւն են մեր ներքին եւ իմացական աշխարհում: Ապա, ուրեմն, չասենք, ինչ որ չի ենթարկւում վերլուծութեան, գիտական հասկացողութեան, ինչ որ տեսանելի չէ մեզ և շօշափելի, անգոյ է կամ անընդունելի։ Մեր հինգ զգայարանքներից զատ ունինք անանուն, կասենք մենք, «հոգեկան զգայարանքներ», որոնք մեր առօրեայից էլ դուրս, մեր վսեմագոյն կեանքի աւելի նուրբ գործարաններն ու զգայարանքներն են։ Անշո՛ւշտ, նոքա կտրուած չեն մեր զգայական և թանձրացեալ կեանքից, նոքա կտրուած չեն մեր մարմնական զգայարանքներից, բայց ո՛րքան բարձր է այդ վերացական ապրումն ու կեանքը, ո՛րքան նուրբ և վսեմ, նոյնչափ աւելի պակաս «առարկայական» և վերլուծութեան ենթարկելի։

Այդպիսի կարեւորագոյն խնդիրներից մէկն է հոգու անմահութեան, յետ վախճանի յարութեան գաղափարն ու հաւատը։ Հազարաւոր տարիների մարդկային կեանքի պատմութիւնը մատնանշում է մեզ նորա գոյութիւնը ազգերի մէջ, արտաքուստ պէս պէս ձեւակերպութեամբ, բայց ըստ էութեան համանման հասկացողութեամբ, սկսած եգիպտական, հին հեթանոսական ուրիշ ազգերի աւելի թանձրացեալ ըմբռնումներից, մինչեւ քրիստոնէական վերացական հասկացողութիւնը, բարւոյ և չարի, արդարութեան և մեղքի և նրանց գնահատութիւնը իրենց հետեւանքներով։ Մարդը չի ոչնչանում իր երկրաւոր կեանքի հետ, այլ նա ապրում է հոգւով մի այլ վերացական աշխարհում, համեմատ իր վարած երկրաւոր կեանքի, բարի կամ չար յատկութեանց։ Եգիպտական, յունական և նոյն իսկ քրիստոնէական արուեստի և բանաստեղծութեան պատկերաւոր ձեւակերպութիւնները անդրական աշխարհի կամ վերջին դատաստանի մասին, աւելի ազդու միջոցներ են,

ըմբռնելի կացուցանելու համար բարւոյ և չարի, արդար և մեղաւոր կեանքի արժէքն ու հետեւանքները։ Այս հասկացողութիւնն, ի հարկէ, գիտական, առարկայական՝ շօշափելի մեթոդներով չէ, որ պիտի հաստատուի, այդ հաւատոյ խնդիր է, բայց առանց այդ հաւատոյ, գիտենք, որ մարդկային կեանքը ենթակայ է ապականութեան, անասնական բնազդների տիրապետութեան, բարձր և վսեմ նպատակներից և ձգտումներից զուրկ, շահամոլութեան և եսականութեան։ Ազգերի անկման շրջանները միշտ կրօնների և բարոյական հասկացողութիւնների կամ հաւատաւոր կեանքի անկման հետ են կապուած, որոնց ցայտուն ապացոյցներն են հին յունական և հռովմէական ազգերի անկումը։ Կարելի է ասել, թէ այդ գաղափարը առանցքն է կազմում մարդկային կեանքի, նորա բոլոր ձգտումների, մեծութեան և ներշնչման, բարոյական և հոգեւոր քաղաքակրթութեան կատարելութեան ճանապարհին։ Մեր երկրաւոր կեանքը մի միջոց է, դուռն է դէպի յաւիտենական արժէքների ստեղծագործութիւններն ու պահպանութիւնը, ինչպէս և դէպի անհատական և ազգային անմահութիւնը։

Յիսուսի յարութեան աւետիքը մեզ այսպիսի հաւատոյ իրողութեան հաստատութիւնն է։ Հրէաները սպանել կամեցան նորան, մինչեւ իսկ մահերից անարգագոյնն ընտրեցին իրենց ժամանակի հասկացողութեամբ, մտածելով, թէ դորանով ոչ միայն նիւթապէս, այլ և բարոյապէս վերջ կտան նորա գոյութեան և գործին։ Ի՞նչ անուն, հեղինակութիւն, ձգողականութիւն կարող է ունենալ աւազակների և ոճրագործների հետ և նրանց յատկացրած մահով իւր կեանքը վերջաւորած ատելի Նազովրեցին։ Յիսուսի խաչելութեան գիշերը ո՞վ գիտէ գոհունակութեան ինչպիսի զգացումով անկողին մտան քահանայապետներն ու առաջաւոր փարիսեցիները։ Ազատուեցան վերջապէս յանդուգն մոլորեցուցչից, որ համարձակւում էր ամենախիստ քննադատութեան ենթարկել իրենց ընթացքը, աւանդութիւնները, մինչեւ իսկ պակասաւոր հռչակելով իրենց օրէնքը, որ Եհովայից են ստացել ընտրեալ մարգարէի ձեռքով։ Փարատուեցաւ նորա մահուամբ վերջապէս այն մղձաւանջը, որ ստեղծուած էր նորա փառաւոր մուտքով դէպի Ս. Քաղաքը, նորա վերջին օրերի քարոզութիւններով և ժողովրդի մտքի շփոթեցուցիչ յուզումներով։ Ի՞նչ կը լինէր, եթէ ոգէտ ամբոխը նորան իսկական Մեսիա ընդունէր և յօդս ցնդէր իրենց ապագայ յոյսերն ու ծրագիրները, թօթափելու հռովմէական անարգ լուծը, Երուսաղէմը դարձնելով աշխարհի հրէական տիրա-

պետութեան կեդրոնը։

Խեղճերը չէին իմանում, թէ Յիսուսի մահուամբ կեանքի հասկացողութեան մի նոր սկիզբն էր դրւում, յաւիտենական կեանքի դռները բացւում Նորա բոլոր հետեւողների և մարդկութեան առաջ։ Եւ մինչդեռ փարիսեցիներն ու նախանձայոյզները կոյր մոլեռանդութեան գաղափարակէտին հասած, մոլեգնօրէն իրենց ժողովրդի և Երուսաղէմի կործանման պատճառ դարձան, անհաշիւ և չկշռուած ձեռնարկութիւններով, և մանաւանդ ամենատագնապալի րոպէին պառակտման և ներական պայքարի հետեւանքով, Յիսուսի յարութեան աւետիքը երաշխիք և առհաւատչեայ դարձաւ հոգեւոր մի նոր փրկութեան, հիմք քրիստոնէական կրօնի և եկեղեցւոյ հաստատութեան։ Մեռաւ Տէրը, բայց իր մահուամբ յաղթահարեց մահը, ոչնչացրեց Նորա կապանքները, բարձրացնելով մարդկային կեանքի արժէքն ու նպատակը։ Մարդն այլեւս անցաւոր չէ, մահուան գերին, խորտակուած են Նորա շղթաները։ «Ո՞ւր է մահ յաղթութիւն քո, ո՞ւր դժոխք խայթոց քո». ահա Նորա առաքեալի հոգեւոր ապրումը Քրիստոսի յարութեան հաւատոյ ազդեցութեան տակ։ Ինչպէս էլ բացատրելու լինինք Յիսուսի յարութիւնը, և զանազան մտացածին բացատրութիւն տուողներ չեն պակասել, իրողութիւն է, որ Նորա յարութեան հաւատն էր, որ կեանք տուաւ Նորա մեռած կեանքին և վարդապետութեան։ Տէրը կենդանի է, և ներգործում ու առաջնորդում է իր հետեւողներին, ահա քրիստոնէութեան յաղթութեան գաղտնիքը ընդդէմ աշխարհի հալածանքի, նիւթական զէնքի և զօրութեան։ Այսպէս պէտք է հասկանալ առաքեալների և քրիստոնեայ նահատակների աներկիւղ ընթացքը մահուան դէմ, աներեր և անյողդողդ, մահուան սպառնալիքի տակ կատարուած հալածանքի դէմ։ Մարդկային նիւթական կեանքը թանգ է, բայց Նորանից աւելի թանկագինն է անմահ հոգին, ներքին մարդը, անձը, որին ոչինչ սպանել կարող չէ, եթէ հաւատն ունի անմահութեան։ Այն կեանքը որ ուղղուած չէ դէպի հանապազօրեայ, գիտակցական կամ իմացեալ մահը, մեռած է արդէն ըստ էութեան, հոգեւորապէս անպտուղ իր համար, անպտուղ և շրջապատի համար։ Ո՛վ կենդանւոյն մեռնել չգիտէ, նա ապրել կարող չէ աւելի արժէքաւոր կեանքով։ Ինչպէս ցորենահատը մեռնում է և ապա արգասաւոր դառնում, մարդկային նիւթական կեանքի գոյութիւնն էլ միջոցն է և դուռը յաւիտենական և անանց կեանքի։

Բայց անհատների անմահութիւնը՝ Նրանց յաղթահարումը

մահուան զօրութեան դէմ, հասարակութեան և ազգի անմահութիւնն է։ Ինչպէս անհատի առաքինի կեանքը, ազատումը ընդդէմ անարդարութեան, բռնութեան, ներքին կեանքի իմացականութեան և ազատութեան համար, բարոյական կատարելութեան ճանապարհն է, նոյնն է և հասարակութեան ու ազգի համար։ Անբարոյական, ցոփ, անսկզբունք, ագահ, եսական, գձուձ, պարտականութիւնների մէջ անհաւատարիմ անհատը պատկերն է և նոյն որակի հասարակութեան և ժողովրդի համար։ Երկուսն էլ դատապարտուած են անխուսափելի և բարոյական մահուան՝ այսօր կամ վաղը։ Երկուսն էլ գերիներն են կապուած իրենց իսկ ձեռքով կռուած շղթաներով։ Յարութեան յոյսն ու աւետիքը միայն անհատին չէ ուղղած, այլ և ազգին, ազգերին և պետութիւններին։ Կայ անհատական մեղք, կայ և ազգային մեղք, երկուսն էլ կործանարար իրենց ծնողների համար։ Չես կարող բռնութիւն ցանել և ազատութիւն հնձել. չես կարող ատելութիւն, թշնամութիւն և պառակտում սերմանել և միութիւն, սէր և եղբայրակցութիւն սպասել։

Բնութեան աստուածային օրէնքներից մէկն է, սեպհական վէրքերի բուժումը իր իսկ ձեռքով կատարել։ Կենդանին լիզում է և մաքրում իր վէրքը և նպաստում իր բժշկութեան. բոյսը աշխատում է ծածկել ջլատուած մասը իր բունի կամ ճիւղերի վերայ, որպէս զի դէմ անի չորանալու կամ մեռնելու գործողութեան։ Մի՞թէ պէտք չէ հասկանանք այս պարզ ճշմարտութիւնը։ Վիրաւորուել է մեր ազգը, ջլատուել մեծ չափով նորա արմատները, բունը, ճիւղերը, անհող և անհայրենիք ենք դարձել մեր ազգի երկու երրորդ մասով, մի՞թէ փոխադարձ հարուածներով է, որ պիտի բժշկենք մեր վէրքերը։ Տարագիր Հայութիւնը ենթարկուած է ուծացման ամենամեծ վտանգին, ցրուած լինելով բազմատեսակ պետութիւնների և ազգերի մէջ։ Ուծացման և անտարբերութեան հոսանքը տանում է և պիտի տանէ առաւել մեծ չափով մեր ժողովրդից բեկորներ։ Թումբ պիտի կազմենք դորա առաջն առնելու, և այդ թումբը մեր մայրենի, հինաւուրց եկեղեցին է իր լեզուով, իր արարողութիւններով, իր կրօնական և ազգային կեանքի ներշնչմամբ, իր դպրոցների պահպանութեամբ և բարեկարգութեամբ։ Խմբուինք նորա շուրջը, պայծառացնենք նորա կեանքը, խորացնենք նորա բովանդակութիւնը, հաւատարիմ մեր հայրերի թողած հարուստ և արժէքաւոր ժառանգութեան։

Մասնաւորելով մեր խօսքը Ամերիկահայութեան մասին, գոհ

լինինք, որ մեզ վիճակուած է այսպիսի ազատ և կարգաւորեալ երկրի հիւրընկալութիւնը վայելել. լինինք գիտակից, պարտաճանաչ և լաւ քաղաքացիներ այս երկրի, մնալով և հաւատարիմ մեր կրօնական և ազգային նուիրական աւանդութիւններին։ Զատիկ է, Քրիստոսի յարութեան աւետիքն է հնչում. լսենք Նորա փրկարար ձայնը բոլոր բարոյապէս մեռեալներին ուղղուած. «Ղազարէ՛, ե՛կ արտաքս»։

«Շնորհք Տեառն եղիցի ընդ ձեզ, ամէն»։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Ամերիկայի Հայոց

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ, Ապրիլ 1941։

ԻԹ.

ՆԱՀԱՏԱԿԱՑ ՏՕՆ

«Այսպէս ասէ Տէր Տէր ոսկերացդ այդոցիկ: Ահաւասիկ ես ածեմ ի վերայ ձեր շունչ կենդանի: Եւ տաց ի ձեզ ջիղս եւ ածից ի վերայ ձեր մարմինս, եւ ձգեցից ի վերայ ձեր մորթ, եւ տաց զոգի իմ ի ձեզ եւ կեցջիք կենդանիք».

Եզկ. ԼԷ. 5—6։

Ա.

Եզեկիէլ մէկն էր Բաբելացւոց գերութեան ժամանակի մեծ մարգարէներից և աւետաւորը ժողովրդի ազատութեան։ Բաբելացւոց գերութիւնը 586 թուին Ք. ա. Իսրայէլի ժողովրդի քաղաքական անկման վերջաբանն էր։ Բաբելացիք նուաճել էին Երուսաղէմը, գերել Սեդեկիա թագաւորին, սպանել արքայորդիներին հօր առաջ, ինչպէս և իշխաններից շատերին, իրեն էլ կուրացրել, և շղթայակապ Բաբելոն տարել նորա հետ՝ կենդանի մնացածների կարեւորագոյն մասը։ Քանդել էին արքայական ապարանքները, Երուսաղէմի տաճարն ու պարիսպները։ կողոպտել տաճարի կահն ու հարստութիւնը։ Քաղաքում և երկրում մնացել էին միայն աղքատներ և ժողովրդի ստորին դասի հատուածներ, «սինլքորներ», ինչպէս ասուած է Երեմիայի մարգարէութեան մէջ (Երեմ ԺԲ.): Մնացածներն էլ երկպառակուած ներքին հակամարտութիւններով այս կամ այն զօրավարի առաջնորդութեամբ։ Մի մասն էլ առանց լսելու ժամանակի մեծ Երեմիա մարգարէի յորդորներին, Եգիպտոս էին անցած...։ Ամենամեծ թշուառութիւնը, որ գալ կարող էր, եկել էր Յուդայի ժողովրդի գլխին։

* * *

Բայց աքսորի և գերութեան մէջ սթափուել էր ժողովուրդը և հայրենաբաղձ զգացմունքը գլուխ բարձրացրել նորա հոգու մէջ։ Այս ժամանակից են հայրենաշունչ և հայրենատենչ որոշ Սաղմոսներ, նեղեալ, բայց հաւատարիմ սրտերից բղխած երգումներ և

ուխտեր դէպի Երուսաղէմը, դէպի հայրենի երկիրն ու նորա սըր-բութիւնները։ Այդպիսիների մէջ ամենից յայտնին ՃԼԶ. (136-րդ) Սաղմոսն է։ Բաբելոնի գետերի ափերին նստած, լալիս է Իսրայէլի ժողովուրդը, և տենչում դէպի Սիոնը, ուռենիների մէջ կախած իրենց «կտակարաններ»ը։ Տեղական բնակիչները, «գերեվարները» ստիպում էին նրանց օրհնութեան խօսքեր երգել, գուցէ և մասամբ հեգնութեամբ. «Իսկ զիա՞րդ օրհնեսցուք զօրհնութիւնս Տեառն յերկիր օտար։ Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռասցի զիս աջ իմ, կցեսցի լեզու իմ ի քիմս իմ, եթէ ո՛չ յիշեցից զքեզ, եթէ ո՛չ նախ նուաճեցից զքեզ, Ե՛րուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ»։

Դանիէլ և երից մանկանց պատմութիւնը յայտնի է մեր բոլոր հաւատացեալներին, տարին երկու անգամ Ծննդեան և Զատկի ճրագալոյցներին կարդացւում է այն, պատանիների բերանով Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում։ Որպիսի՜ սրտառուչ օրհներգութիւն և նուիրումն հայրերի Աստծուն, ուրիշ խօսքով սրբուած, մաքրուած և բիւրեղացած բարեպաշտութիւն և հայրենասիրութիւն։

Բ.

Այսպիսի հայրենաբաղձ հոգեբանութեան հետ է կապուած և Եզեկիէլի տեսիլը, որ բնաբան ընտրեցինք։ Նա յուսադրութեան, վերականգնումի և դէպի հայրենիք դարձի աւետաբերն է, քարոզիչը գերութիւնից դէպի ազատութիւն, ակամայ պանդխտութիւնից դարձ դէպի հայրենի տունը և վերաշինութիւն հայրենի քաղաքի և տաճարի։ Մարդկային հոգու ամենավսեմ ապրումներից և զգացումներից մէկն է այս, տենչ ստրկութիւնից դէպի ազատութիւն։

Մարգարէն տեսիլքի մէջ ներկայացնում է Իսրայէլի գերութեան պատկերը և Աստուծոյ գթութեան դատաստանը։ Նա դաշտի մէջ տեսնում է ցրուած և ցամաքած ոսկորներ. Իսրայէլի ժողովըրդի ոսկորներն են այդ։ Եւ ահա Տէրը տալիս է իր պատգամը.
— Ո՛վ ցամաքած ոսկորներ, ես ձեզ շունչ պիտի տամ, մարմին, մորթ բերեմ ձեզ վերայ. ձեզ պիտի իմ ոգին տամ և դուք պիտի կենդանանաք, դուք պէտք է մեռելութիւնից յարութիւն առնէք։

Եւ մենք գիտենք, որ այդ պատգամը կատարուեցաւ. Երուսաղէմը և տաճարը վերաշինուեցան, Իսրայէլը գերութիւնից ազատուեցաւ, գրական — ստեղծագործական և նոյն իսկ յետոյ քաղաքական նոր կեանք ունեցաւ։ Մարգարէական գրքերի, Սաղ-

մոնների, Սիրաքի և իմաստասիրական բնաւորութեամբ գրքերի մի կարեւոր մասը այդ ժամանակի արդիւնք են. աւելի յետոյ Մակաբայեցւոց քաջերի շրջանը, որ օրինակ և քաջալերութիւն հանդիսացաւ և մեր Վարդանանց համար։

Այստեղ մի դաս ունինք պատմութիւնից առնելու, թէ ազգերի գլխին եկած դժբաղդութիւնները միշտ դէպի մահ չեն տանում, երբեմն նեղութեան մէջ է, ինչպէս անհատական, այնպէս և հաւաքականութեան կամ ազգի կեանքի մէջ, որ հոգին վերածնւում է, վերանում դէպի երկնայինը և ծունկ չոքում արդարութեան աթոռի առաջ։ Եւ Աստուած ընդունում է սրտի այսպիսի զգացումը, որպէս անուշահոտ կնդրուկ, երբ խնկուած է այն սրտի բուրվառի մէջ։

Գ.

Նախընթաց պատերազմը առեղծեց նման դրութիւն մեզ համար, ինչ որ Բաբելացւոց արշաւանքը Իսրայէլի։ Թարուքանդ եղաւ մեր հայրենիքի մի կարեւոր մասը, մեր ժողովրդի մի երրորդը զոհ եղաւ սրի, բռնութեան, հալածանքի և սովի։ Մեր ժողովուրդն էլ տեղահան եղաւ, և գինուորների սուինների և ոստիկանների մտրակների հարուածների տակ, կողոպտուած՝ և աննկարագրելի բարբարոսութիւնների ենթարկուած, քշուեցաւ դէպի անապատները։ Սորա հետեւանքով տարափոխիկ հիւանդութիւնները ճարակեցին թշուառ, անօգնական ժողովրդի մէջ, և տարան հարիւր հազարաւոր անմեղ զոհեր։

Մեր ժողովրդի առաջաւորները, եպիսկոպոսներն ու վարդապետները, մտաւորականներն ու մասնագէտները խողխողուեցան անյայտ վայրերում, որոնց դիակները մնացին անթաղ, «ցամաքեցան» և փոշիացան անապատների և դաշտերի մէջ։ Աւերակների վերածուեցան մեր եկեղեցիներն ու վանքերը, ճարտարապետական կոթողները, բարեշէն քաղաքներն ու գիւղերը անխնայ, մշակոյթային գանձերը կողոպտուեցան կամ ոչնչացան։ Արմատախիլ եղան ժողովրդական բանահիւսութեան, երգերի և աւանդութիւնների, ժողովրդական արուեստի հիմունքները, որոնք աղբիւրներն են ամենայն ժողովրդի յառաջադիմութեան, և ազգային ստեղծագործութեան, լեզուի կենդանի պահպանութեան և հարստութեան։ Սովից, սրից, հիւանդութիւններից ազատուած մնացորդը՝ Հայաստանի, Փոքր Ասիոյ և Կիլիկիոյ հայութեան, ցրուեցաւ աշխարհի ամեն կողմերը։

Որը թուեմ, ինչպէ՞ս շօշափելի կացուցանեմ մեր անսահման կորուստները մի քանի տողերի մէջ, ՛պատմութեան այս ճակատագրական, անողոք և անգութ հարուածների տակ կատարուած ահաւոր ողբերգութիւնը....:

Դ.

Բայց ինչպէս ասացինք երբեմն նեղութիւններից և հալածանքներից յետոյ վերածնւում է ինչպէս անհատի, այնպէս և ազգի հոգին։ Ազգերի կեանքից բազմաթիւ օրինակներ կարող ենք բերել, նոյն իսկ Իսրայէլի պատմութիւնը ունի դորա համար ուրիշ ցայտուն ապացոյցներ։ Եգիպտական ստրկութիւնից ծնուեց Մովսէս մեծ և հայրենասէր մարգարէն, որ իւր ժողովրդին կրօնական կազմակերպութեան և Աւետեաց երկիրը տանելու առաջնորդը եղաւ։ Անտիոքոսների հալածանքից յառաջ եկաւ Մակաբայեցւոց շարժումը և քաղաքական ազատութեան ձգտումը։

Մեր ցիրուցան եղած ժողովուրդը, բարեբաղդաբար սիրալիր ասպնջականութիւն ունեցաւ այլ և այլ ազգերի մէջ։ Այստեղ յատուկ յիշատակութիւն ունենք կատարելու Լիբանանի և Սուրիոյ մասին, ուր պատսպարուած է մեր ժողովրդի մի կարեւոր հատուածը, քաղաքացիական և կրօնական բոլոր ազատութիւններով։ Այստեղ է հաստատուած ե՛ւ Կիլիկիոյ Հայրապետական Աթոռը, որ իւր ժողովրդի հետ սկսել է կենդանանալ և կազդուրուել նիւթապէս և կուլտուրապէս։ Այսպէս և ուրիշ երկիրների մէջ, Սփիւռքի աչքառու հայութիւնը և յառաջադիմութեան ընդունակ ժողովուրդը, որոշ տեղ է սկսել բանել իւր բնակած երկիրների մէջ։ Սկսել է յառաջադիմել հոգեւոր զարթնումի, արուեստների և գրականութեան մէջ. հայրենաբաղձ զգացմունքը բարձրացրել է իւր գլուխը, ինչպէս երբեմն Իսրայէլի ժողովուրդի մէջ։ Այդ զգացմունքն է, որ այսօր խմբել է մեզ այս սրբազան կամարների տակ, տխուր, բայց նուիրմամբ և գիտակցութեամբ, կատարելու բիւրաւոր նահատակների յիշատակը, որոնք ընկան աքսորի և գերութեան ճանապարհին, որոնց նշխարները անթաղ մնացին և փոշիացան անապատի աւազների մէջ։ Այդ զգացմունքն ու գիտակցութիւնը պէտք է վառ մնայ մեր սրտերի մէջ և արդիւնաւոր դառնայ մեր նիւթական և հոգեւոր հայրենիքի վերակենդանութեան և յառաջադիմութեան վերելքի համար։ Դորանով է, որ մենք իրապէս յարգած և գնահատած կը լինենք նրանց յիշատակը և պահած մեր գոյութեան դէմքը հայրենիքից դուրս՝ հեռաւոր ափերի վերայ։

Ե.

Բայց մենք մխիթարութեան ուրիշ հիմունքներ եւս ունենք. այդ մեր վերածնուող Հայաստանն է խորհրդային սահմանների մէջ։ Մեծ էր հարուածը անցեալ համաշխարհային պատերազմի հետեւանքով, անսահման մեծ՝ մեր կորուստները, բայց Աստուած բոլորովին չզրկեց։ Ունենք մեր փոքրիկ, բայց թանկագին Հանրապետութիւնը, իբրեւ մէկը Խ. Միութիւն կազմող հանրապետութիւններից։ Ընդամենը 25 տարուան կարճատեւ ժամանակը բաւական եղաւ, որ հին աւերակների տակից մի նոր երկիր և ժողովուրդ յարութիւն առնէ։ Գունաւոր ակնոցով չնայենք իրողութիւնների վերայ և միայն պակասութիւններ չորոնենք այնտեղ. ամենամեծ և հին պետութիւնների մէջ էլ կարելի է պակասաւոր բաներ գտնել, եթէ փնտռենք։ Լինենք խոհեմ, և իմաստուն իրականութեան հանդէպ, և կը տեսնենք, թէ ի՜նչ աստուածային պարգեւ է Խ. Հայաստանը մեզ համար, մեր ազգային, քաղաքական և քաղաքակրթական տեսակէտներով։

Մեր լեզուն պետական լեզուն է մեր սահմանների մէջ, դպրոցում, դատարանում, փողոցի և խանութների մէջ և ամենուրեք։ Օտար տարրերն իսկ, եզիդի, ասորի, յոյն, ռուս, Հայաստանի փոքրամասնութիւնների քաղաքացիներ, ունենալով իրենց քաղաքացիական ազատութիւնները և դպրոցները, սովորում են և հայերէն, իբրեւ պետական լեզու։ Հայագիտութիւնը, մեր պատմութեան, լեզուի, հնագիտութեան, արուեստի և գրականութեան ուսումնասիրութիւնը յառաջացել է զգալի չափով. ունենք այնպիսի գիտնականներ, ինչպէս Աճառեանն է, հանգուցեալ Աբեղեանը, Մանանդեանը, Մալխասեանը, Ղափանցեանը, Տէրտէրեանը և մի շարք նոր հայագէտներ, որոնց հրատարակած գործերը պատիւ կարող են բերել մեզնից աւելի թուով մեծ և պետական աւելի երկար կեանքով ապրած ազգերին։ Հայ արուեստի բոլոր ճիւղերի մէջ, նկարչութեան, ճարտարապետութեան, արձանագործութեան և երաժշտութեան մէջ այնպիսի ներկայացուցիչներ ունենք, որպիսիք Սարեանն ու Կոջոյեանը, հանգուցեալ Թամանեանն ու Թորամանեանը, Հալաբեանն ու Բունիաթեանը, Արայ Սարգսեանն ու Ուրարտուն, հանգուցեալ Սպենդիարեանը, Ստեփանեանն ու Խաչատրեանը երաժշտութեան մէջ. վերջինն արդէն սկսել է համաշխարհային հռչակ ստանալ Խ. Միութիւնից էլ դուրս։ Ապա բանաստեղծների և գրականութեան ներկայացուցիչների հոյլը, Աւետիք Իսահակեան, Դեմիրճեան, հանգուցեալ Զա-

րենց, Զ. Նայիրի, Յովհաննէս Շիրազ, Ստեփան Զօրեան... եւն։

Երեւանի մեր Թանգարանը իր բաժանմունքներով աւելի հարուստ է, քան մեր տեսածները Բալկանեան պետութիւնների մէջ։ Մեր համալսարանը՝ իր ճիւղերով եւ բազմաթիւ մասնագէտներով գիտութեան այլ եւ այլ ճիւղերի մէջ։ Ունենք մեր Գիտութեանց Ճեմարանը իր կարող ու հմուտ Նախագահով, որպիսին Յովսէփ Օրբէլին է, բազմաթիւ արհեստագէտներով. մեր դպրոցները, տարածուած յետին գիւղերումն իսկ, մեր զինուորականութիւնը իր զօրավարներով եւ հերոսներով, որոնք բարձրացնում են Հայ ժողովրդի անունը ո՛չ միայն Խ. Միութեան ազգերի, այլ եւ օտար մեծ պետութիւնների աչքում։ Սրանք ակնարկներ են միայն, ցոյց տալու, որ մեր ազգը վերածնութեան մի նոր շրջան է ապրում, մեծ հարուածներից յետոյ, եւ նոյն իսկ ահաւոր պատերազմը, որի մասնակցում է եւ մեր երկիրը, յետ չէ կասեցրել իր յառաջադիմական քայլերից նիւթական եւ մշակութային ստեղծագործութեան բոլոր մարզերում։ Մեր սրտերը պիտի բաբախեն ո՛չ միայն մեր գաղութային, այլ եւ հեռաւոր հայրենիքի յառաջադիմութեան հարցերով։ Այս է այսօրուան տօնի խորհուրդը եւ արժէքը մեզ համար։ Աչքներս դէպի հեռուն եւ լուսաւոր ապագան, յուսով, հաւատով եւ սիրով լցուած։

Շնորհք Տեառն եղիցի ընդ ձեզ, ամէն։

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԱՍԿ. 1945. Յունիս—Յուլիս.

Լ.

ՆՄԱՆԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ԸՆՏԱՆԵԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ)

Կենդանիներին և մարդկանց յատուկ է նմանելու կարողութիւնը։ Առաջինների մէջ այդ կարողութիւնը բնազդ է, ինչպէս և երեխաների մէջ, յատկապէս վաղ մանկութեան օրերին, բայց հետզհետէ հոգեկան զարգացման հետ դառնում է այն գիտակցական, չկորցնելով բնական այդ հակումն ու զգացումը և. հասուն շրջանում։

Հարկ չկայ երկար ճառել և օրինակներ բերել, թէ ինչպէս կենդանիներն ու թռչունները իրենց մատղաշ ձագերին, անձնական օրինակներով սովորեցնում են ուտել, կտցահարել, թռչել, մըժղուկներ որսալ։ Կենդանական այդ «մանկավարժութեան» հիմքն է ձագուկի նմանելու կարողութիւնը իր մօրը, սկզբում դժուարութեամբ, բայց հետզհետէ ընտելանալով և իւրացնելով նորա ցուցմունքը՝ անձնական օրինակով տուած։ Հաւը իր փոքրիկ ձագուկներին սովորեցնում է, թէ ինչպէս տանտիկնոջ պատրաստած փափուկ և փխրուն փոխինդը ալիւրի և հաւկիթի դեղնուցի հետ խառնած, ապա փոքրիկ հատիկները և հուսկ յետոյ գարեհատիկները պէտք է սովորեն քաղել կտցով և կուլ տալ, թէ ինչպէս իրենց առաջ դրած ջրամանից զովացնեն իրենց ծարաւը, և աւելի մեծանալով, բոյսերի հատիկներ, մժղուկներ որսնել և կերակրուել։ Բնականաբար հոգսի մեծագոյն մասը վիճակուած է մօրը. արուն աւելի օգնականի դեր է կատարում թռչունների նկատմամբ։

Նոյնը նկատում ենք նաեւ մանկան և ծնողների յարաբերութեան մէջ, մանաւանդ մանկան և մօր մէջ, նոյն իսկ ծնելուց առաջ, որին կրել է իր արգանդի մէջ, ցաւի և վտանգի ենթարկուել ծնելու ժամանակ, իսկ ծնուելուց յետոյ՝ երեխան բացառապէս մօր խնամքին է ենթարկուած, սննդեան և այլ խնդիրներում։ Այս է պատճառը, որ մայրը աւելի նշանակութիւն ունի մանկան

համար, առաջին տարիները։ Հօր ազդեցութիւնը մանկան վերայ աւելի յետոյ է սկսւում, և հետզհետէ հեղինակութիւն դառնում նորա համար։

Ինչպէս կենդանիների և թռչունների ձագերը նմանելու և սովորելու օրինակ ունին իրենց ծնողները, այնպէս և մանուկները։ Այդպիսի ունակութիւն բնական է, սկզբում բնազդական, որ երեխայի մէջ ծագում և զարգանում է նոյն իսկ առանց սովորեցնելու։ Երեխան՝ մանչը կամ աղջիկը, տեսնում ենք շատ մատղաշ հասակում իսկ, իր շարժ ու ձեւերով, ծիծաղելու, աչքով, ունքով խօսելու կերպերով, յաճախ նմանում է հօրը կամ մօրը, առանց նրանց կողմից սովորեցնելու որ և է փորձի։ Այդ հետեւանք է նորա նմանելու կարողութեան, որ կատարւում է երկու կերպ, ինքնաբերաբար, բնազդով, կամ մեծերի աշխատութեամբ, և սովորեցնելով։ Ուսանելու և ուսուցանելու հոգեբանական հիմքը այս ունակութեան, մանկան հոգու այս յատկութեան վերայ է հիմնուած։ Բայց մենք կը տեսնենք, թէ ոչ միայն մանկանց համար, այլ և կատարելահասակ մարդկանց համար նմանելու կարողութիւնը բարոյական կատարելութեան կարեւորագոյն միջոցներից մէկն է։

* * *

Առ հասարակ մանկան հոգու յատկութիւնները ճանաչելու եւ զարգացնելու երկու ճանապարհ ունինք։ Մասամբ ժառանգական են այդ յատկութիւնները, բայց աւելի մեծ չափով ստացական։ Ժառանգականութեան ամենացայտուն ապացոյցները տեսնում ենք մանկան արտաքին նմանութեան մէջ, դէմքի, աչքերի եւն., ծնողներից մէկին ու մէկի, նաեւ մերձաւոր ազգականների հօր և մօր կողմից։ Շատ անգամ մարմնական մի արտաքին նշան (խալ), որ ունի հայրը կամ մայրը, մեծ հայրերից կամ մայրերից որ և է մէկը, երեւում է և մանկան վերայ։ Բայց ոչ միայն արտաքին նմանութիւններն ու նշաններն են կրկնւում յետագայ սերնդի վերայ, այլ և հոգեկան կարողութիւնները։ Արուեստագէտի որդին, թոռը կամ թոռնորդին նոյնպէս, առաւել կամ նուազ չափով, արուեստագիտական հակումներ և ունակութիւններ է ցոյց տալիս։ Բանաստեղծի որդին կամ թոռը, յետագայ սերունդներից մէկը, անպատճառ բանաստեղծ չէ, ի հարկէ, բայց արուեստի որ և է ճիւղի մէջ նկատւում է այդ ժառանգութիւնը։ Այդ օրէնքը յոռի կամ լաւ կողմերով կարեւոր դեր է կատարում սերունդների նկարագրի հոգեկան ունակութիւնների նկատմամբ, ուստի և դաս-

տիարակը կամ ծնողը ամենամեծ ուշադրութիւն պիտի դարձնեն այս հանգամանքի վերայ։ Բոլոր երեխաների հետ միատեսակ վարուել կարելի չէ, այլ խառնուածքին և ընտանեկան պայմանների համեմատ։ Մէկին խիստ յանդիմանութիւնն անգամ չէ ազդում, իսկ միւսին աչքի կամ ձեռքի մի բացասական շարժում, ակնարկ, բաւական է։ Նոյն իսկ կան երեխաներ, որոնց այդ էլ պէտք չէ, նոքա իրենք իրենց հասկանում են իրենց սխալը։ Այսպիսի դէպքում լռութիւնը ամենից իմաստուն վարուելակերպն է։

Հոգու զարգացման երկրորդ ճանապարհը ստացականութեամբ իւրացման ճանապարհն է, որ աւելի մեծ դեր է կատարում մեր կեանքի մէջ։ Մենք մեր ժամանակի և մեր շրջանի զաւակն ենք, այսինքն իւրացնում ենք այն մտքերն ու գաղափարները, այն ապրելակերպը, որ յատուկ է մեր շրջապատին։ Մեր էութեան ամենամեծ մասը ստացական է, ձեւակերպուած շրջապատի ազդեցութեամբ և նմանութեամբ։ Ի հարկէ, մարդը լուսանկարչական մեքենայ չէ բոլորովին, նա ունի իւր միտքը, երեւակայութիւնը, ստեղծագործական ունակութիւնները և հոգու թռիչքները, բայց ինչ էլ լինի, օդի մէջ կախուած անհատ, հասարակութիւն կամ ազգ չկայ, այլ շատ մեծ չափով պայմանաւորուած շրջապատի, կրթութեան, անցեալի, ներկայի իրողութիւնների և նոյն իսկ ապագայի հետ կապուած և ծրագրուած ձգտումների հետ։ Կրթութիւն, դպրոց, ուսում ու գիտութիւն, կեանքի փորձառութիւն, բոլորը այս իւրացման և նմանութեան օրէնքի հետ է կապուած։ Մանկան կեանքի սկզբնական շրջանում, գիտակցութիւնն ու դատողութիւնը չէ նորան ուղղութիւն տուողը, այլ կենդանի օրինակը, որին հետեւում է նմանելով, առանց իրեն հաշիւ տալու։

*
* *

Մանուկները երբ աշխարհ են գալիս, միայն մսի գունդ չեն, այլ հոգեկան և իմացական զարգացման սաղմերի բոլոր տուեալներով օժտուած էակներ։ Այդ տուեալները, ինչպէս տեսանք ժառանգական են, բայց առաւելագոյն չափով ենթակայ ստացած տպաւորութեան և շրջապատի ազդեցութեան, որով կերտւում է հետզհետէ մանկան անձն ու նկարագիրը։ Վաղուան մարդկութեան, ազգի և հասարակութեան վիճակն ու բաղդը նրանց այսօրուայ կեանքով է պայմանաւորուած, մարմնական և հոգեկան տեսակէտներով։ Կամենո՞ւմ ենք մեր զաւակները երբեւ երիտասարդ և առ հասարակ կեանքի մէջ լինին առողջ, ուժեղ, յաջո-

ղակ, մարմնական և հոգեկան կատարելութիւններով, մեր աղջիկները փթթին վարդի պէս, կանացի քնքշութեան և գգաստութեան հետ մաքուր հրապոյրներով... այդ մասին պէտք է մտածեն ծնողները նրանց ծննդեան և կեանքի առաջին տարիներից։ Փշից խաղող չի քաղուիլ և ոչ տատասկից թուզ։ Ինչպէս ծառը, այնպէս և պտուղը որակի տեսակէտով։ Բայց թզենին ու խաղողի որթն էլ կուտան ազազուն և խեղճ պտուղներ, եթէ ժամանակին չմշակուին նրանք, տակը փորելով, աւելորդ ճիւղերն ու մասերը կտրելով, ամառուայ տօթ օրերին ոռոգելով։ Մանուկների հոգեկան և մարմնական առողջութիւնը, մտաւոր և բարոյական դաստիարակութեան յաջողութիւնը, մեծագոյն չափով կապուած է ծնողներից ժառանգութեան կամ ստացականութեան, նմանութեան տեսակէտներով։ Ախտաժէտ մարմնով, մտքով և հոգւով ընկած ծնողներից ի զուր է մարմնական և հոգեկան բարձր յատկութիւններով սերունդ սպասել։ Ծնողները պէտք է խնայեն իրենց երիտասարդութեան ուժերը, հեռու չափազանցութիւններից, շուայտութիւնից, արբեցութիւնից, եթէ կամենում են իրենց զաւակները ազատ լինեն այդպիսի պակասութիւններից։ Կամենո՞ւմ ենք մեր որդին լինի պարտաճանաչ, ազնիւ և համակրելի շրջապատի համար, մենք ինքներս պիտի լինինք այդպիսին. կամենո՞ւմ ենք մեր դուստրը լինի համեստ, օրինակելի ամուսին և մայր ապագայի համար, սիրոյ և անձնուիրութեան աղբիւր իւր շրջապատի համար, մենք ինքներս պիտի լինինք այդպիսին, որպէս զի բարին և ազնիւը սերմանուի մեր մանուկների հոգու մէջ, նմանողութեան և հետեւողութեան աստուածատուր կարողութեամբ հետեւել սովորեն մեր զաւակները իրենց ծնողներին փոքր հասակից։

Կեանքիս մէջ պատահել եմ մի ընտանիքի. հայրը Ֆրանսացի բժիշկ էր, մայրը Ռուս և բարձր ընտանիքի զաւակ, կրթուած. Նրանք մի զաւակ ունէին, աւա՜ղ, մարմնով և հոգեկան կարողութիւններով պակասաւոր։ Այդ դժբաղդ ծնողները իրենց կեանքի էութիւնը կեդրոնացրել էին իրենց հիւանդ և խելապակաս որդու վերայ. իրենց ամբողջ կեանքը, ուշադրութիւնը նորան նուիրել։ Ինչպէս բարեպաշտի մոմը վառւում է սրբերի պատկերի առաջ, նրանց ամբողջ հոգեկան աշխարհը մոմի նման վառւում էր, հալւում այդ հիւանդ որդու առաջ։ Արդե՞օք մեղաւոր էին զգում իրենց կամ իրենց պապերին, չգիտեմ, բայց այս երեւոյթը մի ցայտուն օրինակ էր ծնողական պարտականութեան խորը գիտակցութեան։

Ապա հոգեկան առողջութիւնն ու զարգացո՞ւմը։ Մեր ժողովուրդը մի գեղեցիկ խօսք ունի, որ հիմնուած է կեանքի երկարատեւ փորձառութեան վրայ։ «Կաթի հետ մտածը, մահուան հետ դուրս կուգայ»։ Ուրիշ խօսքով մանկան հոգեկան ստացումներն ու տպաւորութիւնները հիմքն են ապագայ մարդու կատարելութեան կամ պակասութեան։ Սովորաբար ծնողները, մեծագոյն մասով, գաղափար չունեն այս մասին և անգիտութիւնը մեծ սխալների մէջ է ձգում նրանց։ Մանկան դաստիարակութիւնն սկսւում է ծննդեան առաջին օրերից. այդ մասին արդէն ակնարկ արինք մօր և զաւակի յարաբերութեան մասին խօսելիս։ Անխօս, ըստ երեւոյթին բացարձակապէս անգիտակից մանկան վրայ սկսում է ազդել շրջապատը ծննդեան առաջին օրերից, յատկապէս կարևորագոյն դեր է կատարում մայրը։ Նա պէտք է գիտենայ, ինչպէ՛ս սնուցանել ֆիզիքապէս և հոգեպէս իր զաւակին, ուրեմն և նախապէս պէտք է պատրաստուի այդ ուղղութեամբ կարդալով կամ խրատներ լսելով աւելի փորձառուներից։ Մանկան հոգին կազմակերպուել է սկսւում կաթի հետ. պէտք է զգուշանայ ուտելիքների և ըմպելիքների մէջ, որ կաթի միջոցով ազդել է սկսում երեխայի վրայ։ Բայց նաեւ խօսքի, վարմունքի, ոչ ցանկալի արտայայտութիւնների մէջ. ինչպէս հայելու մէջ արտացոլւում է պատկերը, այդպէս էլ մանկան հոգու վրայ շրջապատից եկած տպաւորութիւնները, շարժումները, նիստ ու կացը, մինչեւ իսկ հոգեկան տրամադրութիւնները։ Մի՛ կարծէք, թէ մի քանի ամսական երեխայի աչքերը, որ դիտում են ձեզ, ականջները, որ լսում են, ոչինչ չեն հաղորդում նորա հոգուն։ Ծնողների ֆիզիքական և հոգեկան յատկութիւնների փոփոխութիւնները անդրադառնում են նորա վրայ։ Ապա մարմնական և հոգեկան զարգացման հետ այդ տպաւորութիւնները շատ աւելի զգալի են դառնում։ Ծնողների շարժ ու ձեւերի, ծիծաղի եւայլն ընդօրինակման մասին խօսք եղաւ վերեւ. չէ՞ք լսել նրանց բերանից կամ վարմունքներից տեսել այնպիսի բաներ, որ նորա հասկացողութիւնից վեր են։ Նա արտաքին նմանողութեան կամ լսածը իւրացնելու ունակութեան հետեւանքով, իւրացրել է այդ բաները, առանց հասկանալու վատութիւնը կամ լաւութիւնը։ Երբեմն հայհոյում է այնպիսի խօսքերով, որոնց իմաստը չէ հասկանում։ Ահա շրջապատի ազդեցութեան կամ մանկան նմանողութեամբ հետեւելու ապացոյցը։ Ապա ուրեմն, զգոյշ մանկան ներկայութեամբ որ և է արտառոց խօսքից, վարմունքից կամ գործից։ Ամուսինները պիտի լինեն աւելի զուսպ, իրենց խօս-

քի, գործի, վարմունքի մէջ իրենց զաւակների ներկայութեան։

* * *

Ի զուր չէ, որ ինչպէս ուրիշ կրօնների, բայց առաւելապէս քրիստոնէութեան մէջ մայրական կոչումը այնքան բարձր է գնահատուած, պաշտաման և ստեղծագործութեան ներշնչման առարկայ և աղբիւր հանդիսացել։ Ընտանեկան յարկը փոքրիկ եկեղեցի է, և ծնողները, յատկապէս մայրը, այդ եկեղեցու պաշտօնեան։ Ամուսինների սիրոյ, փոխադարձ անձնուիրութեան մթնոլորտի մէջ ծնուած և սնուած մանուկը անկարելի է, որ չազդուի բարոյապէս կազդուրիչ այդ օդի ազդեցութեամբ։ Նա ինքը, դառնում է այնուհետեւ երկու ամուսինների սիրոյ միացման ազդակը և ուրախութեան աղբիւրը։ Նորա անմեղ լացն ու արտասուքները, որ այնպէս առատ թափւում են աչքերից, ձեզ ուրախութիւն է պատճառում. ապա նորա ժպի՞տը, փափլիկ ձեռքերով խաղը մօր կրծքին, երբեմն տրորելով մօր քիթն ու մռութը, մազերի սանտրուածքը։ Ապա ինչպէս է վրայ պրծում մօր ստինքի վերայ, իրեն սահմանուած բաժինն ստանալու։ Ինչքա՜ն ուրախութիւն է պատճառում նորա գրկից գիրկ անցնելու գործողութիւնը։ Ապա նորա առաջին քայլե՞րը, լեզուի թոթովանքնե՞րը, նորա տրամաբանելու առաջին փորձե՞րը... ո՞ր մէկը յիշեմ։ Պապիկներն ու մամիկներն էլ բաժին ունին այդ ուրախութիւններից մեծ չափով։ Թոռնիկն արդէն 4–5 տարեկան է դարձել. հետաքրքրութեան և անմեղութեան խառնուրդից ինչպիսի՜ զաւեշտ է՛ դուրս գալիս երբեմն։ Պառկել էք ձեր անկողնում, և ահա ձեր զարթնած թոռնիկը ձեր մահճակալին է մագլցում. խաղ սկսում ձեր բեխերի և մօրուքի հետ, եթէ ունիք, հեծնում ձեր վերայ և իբրեւ ձի քշում...։ Դիտեցէք նորա ընդունակութիւնները, ո՞վ գիտէ, ի՞նչ ապագայ է սպասում նորան, բանաստե՞ղծ, արուեստագէ՞տ, հասարակական գործի՞չ...։

Բայց ոչ միայն այսքան, նորա ներկայութիւնը ծնողների նոյն իսկ բարոյացուցիչ ազդեցութիւն է ունենում։ Ծնողներն իրենց աւելի զսպուած են պահում իրենց խօսքերի, շարժումների, իրենց փոխադարձ յարաբերութեան մէջ. աւելին, մինչեւ իսկ գժտուած ծնողների հաշտութեան միջնորդ է դառնում զաւակը։ Ինձ պատմել են մի դէպք. ծնողները բաժանւում են իրարուց, թւում է, թէ այլ եւս միասին ապրել չեն կարող. նրանց միակ 5–6 տարեկան զաւակը, օրէնքի որոշմամբ մնում է հօր մօտ. մայրը դուրս է

գալիս տնից։ Երեխան զգում է մօր բացակայութիւնը, զգում է ծնողների գժտութիւնը, և անմխիթար տանջւում է. Նա մօրն է պահանջում, և սպառնում, որ առանց իւր մօրը այս տանը մնալ չի կարող, կը կորչի, մօրը փնտռելու կ'երթայ։ Երեխայի այս զիլքը, սրտաճմլիկ տեսարանները մօր բացակայութեան հետեւանքով այնքան խորն է ազդում հօր վերայ, որ նա պարտաւոր է զգում իրեն զիջող դիրք բռնել դէպի կինը, խնդրել, որ զաւակի սիրոյն իրար զիջեն և դարձեալ միասին ապրեն։

Ի՞նչ է հետեւում այս բոլորից, որ մանկան դաստիարակութեան իսկական դպրոցը ընտանիքն է, առաջին և կարեւորագոյն ուսուցիչները ծնողները, որոնց ուսուցումից աւելի նշանակալից է օրինակը, նմանողութեան իդէալ ներկայանալ իրենց երեխաների համար։

Նմանողութեան օրէնքին ենթարկւում են և մեծերը, հասակաւորները, հասարակութիւններն ու ազգերը, բայց այդ մասին ա՛յլ անգամ։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ. Յուլիս 1942։

ԼԱ.

ՔՐԻՍՏՈՆԷԻ ԳԵՐԱԿԱՅ ԳԱՂԱՓԱՐԸ

Չիք այլով իւիք փրկութիւն, զի եւ ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ՝ որով արժան իցէ կեալ մեզ:

Գործ. Դ. 12։

Իւրաքանչիւր անհատ, հասարակութիւն կամ ազգ իւր գերակայ գաղափարն ունի (*Idéal*)։ Գերակայ գաղափարն այն լուսաւոր նպատակն է, որին ձգտել է կամենում անհատը, հասարակութիւնը կամ ազգը։ Գերակայ գաղափարը կարող է երբեմն սխալ լինել, բայց և այնպէս լաւ է սխալ գերակայ ունենալ, քան առանց գերակայի լինել։ Առանց գերակայի կեանքը մեռելութիւն, անիմաստ դատարկութիւն կը լինէր։ Իրականութիւնն ու գերակայ գաղափարները իրարից շատ հեռու են ի հարկէ, բայց մարդկութեան սուրբ ձգտումն ու նպատակն է եղել այդ անդունդի վերայ մի հաստատուն կամուրջ ձգել։ Մեր կեանքն անխորհուրդ կը լինէր, մի անլոյս լապտեր կը դառնար առանց այդ ձգտման։

Գերակայ գաղափարները զանազան են. արուեստի մէջ, օրինակ, գեղեցկութիւնն է, գիտութեան մէջ՝ ճշմարտութիւնը, բայց ամենաբարձր գերական, որ մարդկային ձգտման էութիւնն է կազմում, դա բարոյական գերական է։ Որովհետև ինչ տեսակ գերակայ էլ վերցնելու լինենք առանց առընչութեան չէ բարոյական գերակայ գաղափարի հետ։ Գեղեցկութիւնը կամ ճշմարտութիւնը կեանքի միայն մի մասն են կազմում, այն ինչ բարոյական իդէալը նորա ամբողջութեան էութիւնը։ Եթէ գիտնականի իղձալը ճշմարտութիւնն է, նորա անձնաւորութեան ամբողջութիւնը գնահատելու համար, չենք մոռանում նորա բարոյական թերութիւններն ու արժանիքները։ Բարոյական գերական կեդրոնն է, միւսները օժանդակ դեր են կատարում բարոյականի կատարելութեան վերաբերութեամբ։

Մենք քրիստոնեաներս պարծենում ենք, որ քրիստոնէութիւնն է տուել աշխարհին փրկութիւն բերող գերական, և պատմութիւնը վկայում է, որ մենք իրաւունք ունինք։ Հեթանոս աշխարհի տը-

ւած գերականները անզօր էին ընդհանուր մարդկութեան մէջ կենդանութեան ոգի ներշնչելու։ Յունական քաղաքակրթութեան ամենափայլուն ժամանակն իսկ, երբ ազատութեան և ազնիւ կրթութեան գաղափարների միութիւնը յոյնի գերական էր, ազատ չէ մութ ստուերներից։ Հպարտ ինքնագիտակցութիւնը իշխում է տեղական ստրուկ ժողովրդի վերայ և շրջապատող ազգերի ճակատին «բարբարոս» անունն է դրոշմում։ Իսկ յունական փիլիսոփայութեան առաջ բերած գերականները մարդկային իրական կեանքի և սրտի հետ ոչ մի կապ չունեցող, աժգոյն, անկենդան պատկերներ են և ոչ պատմական անձնաւորութիւններ։ Յունական փիլիսոփայութեան գերականները կարելի է մարմարեայ գեղեցիկ արձանների նմանցնել, որոնք սակայն, իրենց բոլոր գեղեցկութեամբ հանդերձ՝ կեանք չունէին։ Ստոյիկեան բարոյականութեան, օրինակ, պակասում էր այն կենդանի ոյժը՝ կրօնը, որ սառն արձանին ոգի պիտի ներշնչէր։ Սոկրատի, Պղատոնի և Արիստոտելի փիլիսոփայութիւնների մէջ շատ ազնիւ գծեր կան, բայց այդ փիլիսոփայութիւնը միայն անհատ ընտրեալների սեպհականութիւն էր։ Հետեւանքն այն էր, որ հին մարդկութիւնը զրկուած էր կենսաբեր գերակայ գաղափարից։ Բայց և այնպէս ի զուր չէին հին քաղաքակրթութեան ջանքերը. լուսոյ շատ ազնիւ ճառագայթներ պիտի երեւան գային այն կենսատու արեգակի մէջ, որ մեռնող մարդկութեան վերակենդանութեան շունչ տուեց։ Կարելի է ասել ամբողջ հին աշխարհը երկունքի մէջ էր. և նորա ծնունդը քրիստոնէութիւնն է։ Բայց երկունքի այդ պտուղը փոքր ինչ ուրիշ բան էր, քան նորա մայրը։ Մինչեւ այդ ժամանակ մարդկութեան ձգտումն էր բարձրանալ, աստուածութեան հասնել, բայց մինչեւ «ի դժոխըս» էր իջել։ Պէտք է գար «լրումն ժամանակին», երբ աստուածայինը մարդանար և ստորացած մարդկութիւնը դէպի Աստուած բարձրացնէր։ Յանձին Յիսուս Քրիստոսի մարդանում է աստուածայինը։ Այս իրողութեան մէջ է կեդրոնացած այն զօրութիւնը, որ քրիստոնէութեան բարոյական յաղթութեան գրաւականն էր։ Խաւարի մէջ խարխափող մարդկութեան համար լուսոյ մի աստղ էր ծագել. կենդանի, իրական, բարոյական գերակայ, ամենքի համար տեսանելի, ամենքի համար շօշափելի։ Քրիստոնէութիւնը յունական փիլիսոփայութեան նման վերացական, կեանքի հետ առնչութիւն չունեցող տեսութիւններ չէր տալիս, կամ քաղաքական և ծիսական պայմաններով խճողուած աստուածպետութիւն, այլ մաքուր կրօնական կեանք։ Կրօնը կեանք է և ոչ տեսութիւն։

Այդ կեանքը Աստուծոյ արքայութեան գաղափարն է, Նորա զարգացումն ու կատարելութիւնը Աստուծոյ արքայութեան կատարելութիւնը։ Այդ արքայութեան մէջ Աստուծոյ կամքն է իշխում և այդ կամքի բովանդակութիւնն է սէրը։ Աստուծոյ արքայութիւնը անարատ, անբիծ սիրոյ թագաւորութիւնն է։

Հին աշխարհը մի աշխարհ էր առանց ճշմարիտ սիրոյ, ուստի և ապականուեցաւ, մեռաւ։ Քրիստոնէութիւնը ճշմարիտ սիրոյ կրօնն էր և թէ նա աշխարհին փրկութիւն բերեց, այդ սիրոյ կեանքն էր։ Քրիստոս ինքն աստուածային պատուիրանների կեդրոնն ու էութիւնը սիրոյ պատուիրանն է համարում։ Սէր առ Աստուած և սէր առ ընկերն Նոր վարդապետութեան հիմնաքարերն են։ Քրիստոսի վերջին խօսքը սիրոյ պատուիրանն է և Նորան աշակերտ լինելու նշանը սէրն է. «Յայսմ գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտ էք, եթէ սիրիցէք զմիմեանս» Յովհ. ԺԳ. 35։ Նոյն ոգին ենք տեսնում և առաքելական թղթերի մէջ։ Ճշմարիտ աստուածասիրութիւնն ու եղբայրասիրութիւնը կցորդուած, անբաժան գաղափարներ են։ Ուստի և Պօղոս առաքեալը քրիստոնէական կեանքի էութիւնը սիրոյ մէջ է տեսնում և բարոյական գերակայի պատկերը իւր սիրոյ ներբողի մէջ նկարագրում։ «Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց, և սէր ոչ ունիցիմ եղէ ես իբրև զպղինձ, որ հնչէ, կամ իբրև զծնծղայս, որ ղօղանջեն։ Եւ եթէ ունիցիմ, զմարգարէութիւն, և գիտիցեմ զխորհուրդս ամենայն և զամենայն գիտութիւն, և եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչև զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ։ Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատնիցեմ զմարմինս իմ յայրումն, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ օգտիմ։ Սէր երկայնամիտ է, քաղցրանայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճէ, ոչ հպարտանայ, ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւր, ոչ գրգռի, ոչ խորհի զչար, ոչ խնդայ ընդ անիրաւութիւն... ամենայնի տեւէ, ամենայնի հաւատայ, ամենեւին յուսայ, ամենայնի համբերէ» Ա. Կորնթ. ԺԳ. 1–7։

Որքան վսեմ և սրտառուչ պատկեր։ Քրիստոնէական սիրոյ օրհներգն էր սա։ Բայց Պօղոս առաքեալը իւր գլխից չէ հնարում այս պատկերը. երկնաւոր Վարդապետի աշակերտներին հալածող Սօղոսն այս տողերը գրել չէր կարող։ Քրիստոսի հոգին է այստեղ խօսողը։ Քրիստոսի անձնաւորութեամբ գերուած, Նորա սուրբ սիրով վառուած առաքեալի սրտից կարող էր բղխել այս «սիրոյ երգ երգոցը», Սա տեսութիւն չէ. անձնաւորեալ Սիրոյ պատկերն է, որ կենդանանում է Նորա հոգու առաջ. «Նմանողք ինձ եղերուք, որ-

պէս և ես Քրիստոսի» Ա. Կորնթ. ԺԱ. 1:

Այո՛, Քրիստոնէութեան արեգակը Յիսուսի անձնաւորութիւնն է, որից կեանքի ճառագայթներ էին հոսել առաքեալների սրտերի և այնտեղից ամբողջ մարդկութեան մէջ: Կրօնական անձնաւորութեան կատարելատիպն էր Նա, մի կատարելութիւն, որ մարդկային մտքի համար անըմբռնելի երկու ծայրահեղութեան ներդաշնակ միութիւն էր կազմում, անհասանելի բարձրութիւն և խոնարհութիւն, մեծութիւն և ծառայական պատրաստակամութիւն: Ազգերի պատմութիւնը քրքրենք, տակն ու վրայ անենք, չկայ սիրոյ այնպիսի կատարելատիպ, ինչպէս Կեանքի Առաջնորդն էր: Ի՞նչ էր Նորա ամբողջ կեանքի ընթացքը, եթէ ոչ անհուն սիրոյ մի շղթայ: Ի՞նչ կարիք, նեղութիւն կար և Նա չէր բժշկում, ո՞ր աղքատի համար Նա սիրտ չունէր, ո՞ր սգաւորին չէր մխիթարում: Ո՞ւր մեղքի, ապականութեան զոհեր կային և Նա իւր ձեռքը չէր մեկնում նրանց բարձրացնելու: Թշնամի կա՞ր, որին Նա չէր սիրում: Նա մաքուր էր և անարատ, քան լոյսը: «Աստուած սէր է» և Նա այդ սիրոյ մարմնացումն էր: Նա սէր էր իւր Վարդապետութեան մէջ, Նա սէր էր իւր գործունէութեան մէջ, Նա սէր էր իւր չարչարանքի մէջ, Նա սէր էր և խաչի վերայ:

Կենսատու սէրը քառաթեւ խաչի վերայից է հոսում դէպի մարդկանց սրտերը. այնտեղ դարձնենք մեր աչքը, այնտեղից սպասենք փրկութիւնը: Որովհետեւ «չիք այլով իւիք փրկութիւն. զի և ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ՝ որով արժան իցէ կեալ մեզ»:

ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՒԱԳ

ԱՐԱՐԱՏ. Մայիս, 1897:

ԼԲ.

ԿՐՕՆԻ ԿԵՆՍԱՏՈՒ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Բայց միայն Աստուծոյ հնազանդ լեր, անձն իմ, զի ի նմանէ է իմ փրկութիւն:

Սաղ. ԿԱ.

Կրօնը ազգերի գոյութեան խարիսխն է։ Նա է մեր երկրաւոր կեանքին բովանդակութիւն տուող զօրութիւնը։ Ուր կրօն չկայ, այնտեղ և ճշմարիտ կեանք չկայ։ Որովհետեւ նա է այն սրբազան աւազանը, որտեղից կեանքի աղբիւրներն են հոսում. Նա է ցոյց տալիս այն բարձրագոյն նպատակը, առանց որին մեր կեանքը կենդանականից ոչնչով չէր որոշուի։ Առանց նորան մեր կեանքը անվերջ մոլութիւնների մի շղթայ կը լինէր միայն։

Կրօնի հայրենիքը մեր հոգեւոր աշխարհի կեդրոնն է, մեր ներքին աշխարհի սրբութիւն սրբոցը։ Այնտեղ է սկզբնաւորւում և զարգանում այն յարաբերութիւնը, որ մենք ունինք դէպի Աստուած և դէպի մեր ընկերը։ Դա աստուածութեան բնակարանն է մարդու հոգու մէջ, որ նորա շունչը սրբում, մաքրում է կրօնական անձնաւորութեան ներքին աշխարհը և այնտեղից բղխող արտաքին գործողութիւնները։ Նա զարկ է տալիս, որ մեր երկրաւոր կեանքն էլ սրբազան և նուիրական գաղափարների իրականութիւն լինի։ Այսպիսով կրօնական անձնաւորութեան մէջ մարմնանում են և բարոյական կատարելութեան պահանջները։ Արդարեւ իրական կեանքն էլ ցոյց է տալիս, որ կրօնական անձնաւորութեան բարոյականութիւնը աւելի վստահելի է և հաստատուն։ Յատկապէս քրիստոնէութեան մէջ կրօնն ու բարոյականութիւնը ամենասերտ միութիւն են կազմում։ Մինչեւ իսկ կրօնի հակառակորդներից շատերն ընդունում են, որ ազգերն առանց կրօնի բարոյական լինել չեն կարող, թէեւ բացասում են մի և նոյնը անհատների համար։ Պատմութիւնը ցոյց է տալիս, որ բարոյական կեանքը ծաղկել է կրօնական հողի վերայ. կրօնի անկման հետ՝ սկսւում է և ազգերի բարոյական անկման շրջանը։ Իբրեւ փաստ բաւական է յիշել հռովմէական կայսրութեան և ֆրանսական յեղափոխութեան ժամանակները։ Սորանով մենք չենք ժխտում քրիստոնեայի մեղանչա-

կանութիւնը․ բայց ուրիշ է գայթակղութիւնը և ուրիշ գիտակցական յանցանքը, իսկ վատթարագոյնն է, երբ գիտակցական կատարուած մեղքը այլ ևս վնաս չէ համարւում։ Նոյն իսկ եկեղեցու պատմութեան մէջ մեծ ստուերներ կան, ինչպէս սիմոնականութիւնը կամ հաւատաքննութեան հետ կապուած չարիքները, բայց դորա համար քրիստոնէական կրօնը մեղադրելն առնուազն մեծ սխալ է։ Կատարեալ կրօնական անձնաւորութեան համար բարոյական պատուէրներն ու օրէնքները այլ ևս կարևոր չեն․ Նորա կեանքն ամբողջապէս բարոյականութիւն է։ Երբ աստուածային և մարդկային կամքերի մէջ ներդաշնակութիւն է տիրում, այնտեղ այլ ևս օրէնքը ոյժ չունի, որովհետև կրօնական մարդու ներսից արդէն ինքնըստինքեան բղխում են ամենակատարեալ բարոյական օրէնքների պահանջները։ Կրօնական անձնաւորութեան հնազանդութիւնն առ Աստուած անձնուիրութեան է առաջնորդում նորան և ընկերոջ համար։ Այս ճշմարտութեան համար մենք կենդանի օրինակ ունինք մեր Փրկչի անձնաւորութիւնը։ Նորա խաչելութեան ճանապարհը Գեթսեմանի պարտիզից է սկսւում։ Նորա կրօնականութիւնն ու բարոյականութիւնը, պարտքի զգացումն ու մարդասիրութիւնը՝ ներդաշնակ միութիւն էին կազմում․ Նորա ամբողջ կեանքը Աստուծոյ կամքի կատարումն էր, բայց մի և նոյն ժամանակ սէր դէպի մարդիկ։ Քրիստոս ինքն էլ բարոյականութեան և կրօնի մէջ խտրութիւն չէ դնում․ քրիստոնէութեան երկու մեծ պատուիրանները՝ սէր առ Աստուած և առ ընկերն՝ նորա անձի, գործունէութեան և վարդապետութեան մէջ անխզելի միութիւն են կազմում։

Բայց այսպէս է ոչ միայն անհատի, այլ և ամբողջ ազգութեան համար․ անհատի՝ փրկութեան ճանապարհը ազգերի փրկութեան ճանապարհն է։ Պատմութիւնը վկայում է, թէ մարդկութիւնն ինչ որ գեղեցիկ և ազնիւ բան է արտադրել՝ կրօնից է բղխել կամ նորա հետ է կապուած։ Մարդկային հոգու ամենահին յիշատակարանները կրօնական յիշատակարաններն են․ կրօնն է մարդկային քաղաքակրթութեան մայրը, նորանից ծագումն առել և զարգացել է քաղաքակրթութիւնը իւր բոլոր ճիւղերով։ Հնդկաստանում, Ասորեստանում և Եգիպտոսում քաղաքակրթութիւնն ամենասերտ առնչութեամբ կապուած էր կրօնի հետ։ Եգիպտացւոց քրմերը մի և նոյն ժամանակ նոցա գիտնականներն էին։ Բաբելացւոց կրօնի հետ էր կապուած աստղագիտութիւնը։ Քրմերն էին նոյնպէս և ազգերի մատենագիրներն ու պատմաբանները։ Արուեստի ամենահին և գե-

ղեցիկ յիշատակարանները բացառապէս կրօնական են։ Հելլենական աստուածների տաճարները ճարտարապետութեան ամենագեղեցիկ արդիւնքներն են եղել։ Արձանագործութիւնը նոյն ընթացքով է զարգացել. աստուածների ու աստուածուհիների արձաններն էին այդ արուեստի ամենագեղեցիկ արտադրութիւնները։ Հրէական մատենագրութիւնն ամբողջապէս կրօնական է։

Բայց ինչ որ ասացինք հեթանոսական քաղաքակրթութեան համար, նոյնը կարող ենք ասել և քրիստոնէութեան համար աւելի հաստատութեամբ։ Կ'անհետանար հին քաղաքակրթութիւնը, եթէ քրիստոնէութիւնը չիւրացնէր և յետագայ սերունդներին չյանձնէր նորան։ Քրիստոնէական առաքելութեան հետ սկսւում է և եւրոպական ազգերի քաղաքակրթութիւնը, քրիստոնէութեան մուտքի հետ սկսւում է շատ ազգերի գիրն ու գրականութիւնը։ Շատ հեռու կը տանէր մեզ, եթէ մենք մանրամասնութեան վերայ կանգ առնէինք, կարճ այսքանս կ'ասենք, որ արդի քաղաքակրթութիւնը զարգացել է ամբողջապէս քրիստոնէական հողի վերայ նոր տարբեր աւելացնելով՝ կամ հինը մշակելով և նոր ազգերին տալով։ Միջին դարու գիտութեան բոլոր մշակները բացառապէս եկեղեցականներ են։ Եկեղեցական ճարտարապետութիւնը յաւիտենական փառքի կոթող է այդ արուեստի պատմութեան համար։ Նկարչութեան ոսկեդարը ծաղկել է եկեղեցու մէջ. այնտեղ է զարգացել նաև երաժշտութիւնը իւր ճիւղերով։

Սորանով ի հարկէ մենք չենք ուզում ասել, որ արդի քաղաքակրթութիւնն ամբողջապէս քրիստոնէական է, և ոչ էլ ուզում ենք ասել, որ նա բացառապէս կրօնական պէտք է լինի. ժամանակի ընթացքում զարգանում է քաղաքակրթութիւնը և անկախ դիրք ստանում։ Դա բնական է և անհրաժեշտ. որովհետև որքան և նոքա արմատով միացած լինեն, տարբեր պահանջների են ծառայում. բայց որքան հարկաւոր է այդ անկախութիւնը, այնքան և անհրաժեշտ է այն ներդաշնակութիւնը, որով քաղաքակրթութեան համար մի վսեմ և յաւիտենական նպատակ է որոշւում։ Երբ խախտւում է քաղաքակրթութեան և կրօնի մէջ եղած ներդաշնակութիւնը, չորանում են կեանքի ամենահոտաւէտ ծաղիկները։ Կրօնին թշնամի քաղաքակրթութիւնը մարդկութեան կեանք տալ չէ կարող, այլ հետզհետէ հէնց նորա բարոյական անկման որորանը կը դառնայ։ Կրօնի անկումը ժողովրդի անկման ամենահաստատուն նշանն է։ Այս է ապացուցանում մեզ քաղաքակրթութեան երկու մեծ ներկայացուցիչ ազգերի, յունաց և

հռովմայեցւոց, պատմութիւնը։

Կրօնի հիմքը մարդու հնազանդութիւնն է Աստուծոյ կամքի առաջ և այդ հնազանդութիւնից միայն պէտք է փրկութիւն սպասել։

«Բայց միայն Աստուծոյ հնազանդ լեր, անձն իմ, զի ի նմանէ է ինձ փրկութիւն»։

ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՒԱԳ

ԱՐԱՐԱՏ. Յունիս. 1897։

ԼԳ.

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ա.

Առանց կրօնական կեանքի ի զուր է մեր եկեղեցու հոգեւոր վերածնութեան մասին մտածել. ժողովրդի բարոյական և հոգեւոր շարժման, գիտութեան և քաղաքակրթութեան առողջ զարգացման առաջին պայմանը կրօնական վերակենդանութիւնն է։ Այս միտքը շատ անգամ շօշափել ենք «Արարատի» էջերում. ներկայիս կամենում ենք առանձին խորհրդածութեան նիւթ դարձնել, թէ ի՞նչ է նշանակում կրօնական անձնաւորութիւն լինել, որով և յոյս ունինք, թէ մեր ընթերցողների համար կը պարզուի այն խնդիրը, թէ որքան իրաւունք ունինք այդ միտքը իբրեւ ճշմարտութիւն քարոզելու։

Մի քանի խօսքով պարզենք նախ, թէ ի՞նչ է կրօնը, որպէս զի աւելի դիւրութեամբ կարողանանք պատասխանել, թէ ի՞նչ է նշանակում կրօնական անձնաւորութիւն լինել։ Մարդու և Աստուծոյ յարաբերութիւնն է կրօնը. նա ծագում է այն հաւատից, թէ կայ մէկը, որ տիեզերքի և մեր ներքին աշխարհի Տէրն ու Կառավարիչն է։ Աստծուն որոնել ու գտնել, Աստուծով յուսալ, սիրել, ապրել և մեռնել կրօնի էութիւնը, նպատակն ու բովանդակութիւնն է կազմում։ Աստուծոյ և մարդկային հոգու յարաբերութիւնը կատարւում է աղօթքով, լինի անմռունչ թէ խօսքով, որ կրօնի մէջ ամենից էականն է։ Ով աղօթել չի կարող ճշմարտութեամբ, նա չէ կարող կրօնական լինել բառի ազնիւ իմաստով։ Որովհետև անբիծ, անարատ սրտով աղօթել՝ նշանակում է մեր ներքին հոգեկան աշխարհը իր բոլոր գաղտնիքներով Աստուծոյ առաջ դնել, նշանակում է ամենաթանկագին զոհաբերութիւնն անել, այսինքն Աստծուն նուէր բերել մեր սիրտը, մեր հոգին, ոչընչացնել մեր եսն ու էութիւնը Աստծու կամքը կատարելու, Աստուծոյ համար ապրելու նպատակով։ Այսպիսի զոհաբերութիւնը միմիայն խորին սիրուց կարող է բղխել, ուստի և հասկանալի պէտք է լինի, թէ ինչու Տէրը ամենից մեծ պատուէրը կրօնի մէջ դէպի

Աստուած ունեցած սէրն է համարում։

Այսպէս դատելով՝ ինքնին հասկանալի է, որ մեր հասկացողութեամբ աղօթքի րոպէները մարդու կեանքի մէջ ամենից նուիրական ժամերն են և ուրեմն հայհոյութիւն է այն կարծիքը, թէ աղօթելը ժամանակի կորուստ է։ Աղօթել և յոյսն Աստուծոյ վերայ դնել չէ նշանակում ծուլանալ, փախչել լուրջ և մինչեւ իսկ ծանր աշխատանքից, ընդհակառակ ճշմարիտ կրօնական անձը իւր ժամանակի վերայ նայում է որպէս Աստուծոյ պարգեւի վերայ, որ պէտք է յօգուտ ընկերի գործադրուի և որի համար մի օր հաշիւ պիտի պահանջուի իրենից։ Ծոյլը, աշխատանքից խուսափողը գործնականապէս նոյնպէս քրիստոնէութեան հակառակորդ է, ինչպէս անբարոյականը։ Քրիստոնէութեան մէջ ծուլութիւնը մահացու մեղքերից մէկն է, իսկ կոչումն ու աշխատանքը նուիրական, որ հաստատւում է առաքեալի խօսքով. «որ ոչ կամիցի գործել և կերիցէ մի» Բ. Թես. Գ. 10։ Աղօթքի րոպէները կրօնական անձի համար թարմութեան, վերստին զօրանալու և կեանքի հոգեւոր պատերազմն սկսելու րոպէներ են։

Բ.

Աղօթող և կրօնական անձի զօրութեան աղբիւրը նորա հաւատն է դէպի Աստուած, որի գոյութեան ապացոյցների մասին խօսք լինել չէ կարող այստեղ։ Մենք կամենում ենք կրօնի էութիւնն ու կրօնական լինելու երեւոյթը բացատրել, իսկ կրօնական մարդու համար ապացոյցներ, փիլիսոփայական—գիտնական տեսութիւններ կարեւոր չեն Աստուծոյ գոյութիւնը հաստատելու համար։ Նա զգում է արդէն, որ Աստուած իւր հոգու մէջ բնակութիւն է հաստատել, որ Բարձրեալի աջը առաջնորդում է նորան կեանքի բոլոր գործողութիւնների ժամանակ։ Նա կասկած չունի Աստուծոյ գոյութեան մասին, ուստի և անկարօտ է ապացոյցների դիմել ճշմարտութեան մէջ համոզուելու համար։ Կրօնի հիմքը մարդու դէպի Աստուած ունեցած կենդանի հաւատն է. բայց մի հաւատ, որ ցընորք, երեւակայութիւն չէ, այլ նոյնպէս իրական, նոյնպէս չօշափելի, ինչպէս տեսանելի իրերը։ Միայն հաւատի տեսողութեան և չօշափման պայմաններն ուրիշ են, քան իրական առարկաներինը։ Կրօնական անձնաւորութիւնների վսեմ պատկերները, կրօնի բերած բարիքը, նորա պահանջը կեանքի բարեփոխութեան համար իրական ապացոյցներ են, թէ որոշ տեսակէտով կրօնը նոյնպէս բնական է և իրական, որքան և տիեզերքի մէջ նկատուած ֆիզիքական

օրէնքը։ Կրօնական անձնաւորութեան կեանքի աղբիւրը Աստուած է, այնտեղից է նա զօրութիւն և յոյս ստանում կեանքի մէջ քաջութեամբ պատերազմելու. «Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց, Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողացայց» (Սաղմ. ԻԶ. 1), Աւելի կորովի նոյն իմաստն արտայայտում է Պօղոս. «Եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ» (Հռոմ. Ը. 32)։ Կրօնական անձնաւորութիւնն այսպէս իւր յոյսը Աստուծոյ վերայ դրած՝ քաջաբար ընթանում է կեանքի ամեն պայմանների մէջ։ Իսկ յոյսը զօրութիւն է, յաջողութեան, ապագայի յառաջադիմութեան խարիսխը։ Ով յոյս չունի իւր ապագայի համար, նա արդէն կորստեան անդունդի վերայ է կանգնած։ Քրիստոնեան անընդհատ առաջ է գնում, որովհետև իւր յոյսը դրած է անսպառ զօրութեան աղբիւրի, այսինքն Աստուծոյ վերայ։ Այսպիսի զօրութիւն ձեռք բերելու միակ միջոցը Աստուծու նուիրուելն է, սեպհական կեանքի ոչնչացումը Աստուծոյ համար։

Մարդկային սովորական դատողութեամբ շատ տարօրինակ է այս երևոյթը։ Թոյլ, կամքից զուրկ ենք համարում այն անձնաւորութեան, որ ենթարկւում է ուրիշի կամքին։ Բայց կրօնական անձը, որքան աւելի ենթարկուի Աստուծոյ կամքին, որքան աւելի ոչնչացնի իւր եսը Աստուծոյ համար ապրելու նպատակով, նոյնքան հզօր է, նոյնքան մեծ կամքի և բարոյական զօրութեան տէր։ Պօղոս առաքեալը կամքի զօրութեան մարմնացումն էր, անյողդողդ ամեն դժուարութեան մէջ, աներկիւղ մահուան դէմ, կրակոտ, գործունեայ, մի խօսքով հերոսական մի անձնաւորութիւն, որ երեսուն տարի իւր կեանքը աւետարանի քարոզութեան, իւր նման մարդկանց հոգևոր փրկութեանը նուիրեց։ Եւ այդպիսի մարդը «Կենդանի եմ այսուհետև ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս» (Գաղ. Բ. 20) խօսքերն էր ասում իւր մասին։

Գ.

Վերոյիշեալ նկատողութիւններից պէտք է պարզ լինի, որ կրօնական անձնաւորութիւն դառնալը դժուար, երկարատև կրթութեան, սկզբունքների հետևողական գործադրութեան հետ կապուած մի երևոյթ է։ Կրօնական անձը իւր կեանքի վերայ մեծ լրջութեամբ է նայում։ Աստուծոյ կողմից այս աշխարհում կարգուած մի տնտես է, որ իւր կոչման և պատրաստութեան համաձայն հետամուտ պիտի լինի շահեցնելու Աստուծուց ստացած քանքարը։ Ամեն մարդու գործ չէ կրօնական լինել, Աստուծոյ հոգևոր զինուոր, այս դայթակղութիւններով լի աշխարհում, բայց ամեն մար-

դու բարձրագոյն ձգտումը պիտի լինի կրօնական լինել, եթէ կեանքին վսեմ բովանդակութիւն տալ է կամենում։ Շատ քիչ են ճշմարիտ կրօնական անձնաւորութիւնները, ընտրեալներ միայն արժանի են այդ անուան, բայց այնքան մեծ է կրօնի ոյժը, որ եթէ մի քանի առաքեալներ ունի նա և փոքր ինչ հաստատուած է ժողովրդի սրտում՝ հրաշքներ է կատարում։ Մենք կը խնդրէինք լուրջ ուշադրութիւն դարձնել պատմական այն երեւոյթի վերայ, թէ ի՞նչն է պատճառ, որ կրօնի հիմնադիրներին պաշտում, իսկ ամենատաղանդաւոր արուեստագէտներին, բանաստեղծներին, գիտնականներին յարգում ենք միայն։ Որովհետեւ կրօնը աւելի մեծ զօրութիւն է, քան արուեստը, գիտութիւնը, բանաստեղծութիւնը։ Կրօնը նորոգում է մեր ներքինը, սրբում է մեր հոգին, իսկ բանաստեղծութիւնն ու գիտութիւնը միայն նպաստում։ Ամենամեծ բանաստեղծներն իսկ իրենց մարդասիրական գաղափարներով միայն կրօնի պահանջների լաւագոյն արձագանգներն են։

Յիրաւի, ի՞նչ է պահանջում մեզանից քրիստոնէութիւնը, եթէ ոչ մտքի և սրտի սրբութիւն, բարոյական կեանք, կարեկցութիւն դէպի թշուառը, սէր դէպի մեզ նման մարդը։ Քրիստոնէական կրօնը պահանջում է մեզանից, որ մենք անառակ չլինենք, որ մենք կեղեքող և վաշխառու չլինինք, որ մենք գող և աւազակ չլինենք, այլ արդար վաստակով ապրողներ, որ մենք ազնիւ և սիրոյ գաղափարներով առաջնորդուինք մեր բոլոր գործողութիւնների ժամանակ։ Քրիստոնէութիւնը պահանջում է, որ եթէ վաճառական ենք, հինգ կոպէկի համար մեր հոգին չծախենք, եթէ արհեստաւոր, մեզ յանձնած գործը բարեխղճութեամբ կատարենք, եթէ լրագրում գրող, մեր գրիչը չվաճառենք, ուրիշներին զրպարտելու, ժողովրդին ստութիւններով մոլորեցնելու և մեր եսական շահերի համար չգործադրենք, այլ արդարութեան, բարոյական կրթութեան համար։ Քրիստոնէութիւնը պահանջում է, որ յարգենք ուրիշի անձնաւորութիւնը, ուրիշի հետ այնպէս վարուինք, ինչպէս կը կամենայինք ուրիշները մեզ հետ վարուէին։ «Ծառն ի պտղոյ իւրմէ ճանաչի»․ քրիստոնէութեան այս պահանջներից և նորան հետեւող անձանց կենդանի օրինակներից էլ պէտք է եզրակացնենք, որ կրօնը շատ ազնիւ և կարեւոր բան է մարդկութեան բարոյական յառաջադիմութեան համար։ Ուրեմն չարաչար սխալւում են այն մարդիկ, որոնք կրօնը անպէտք՝ հնացած են համարում։

Դ.

Ազգերի պատմութեան մէջ կարեւորն ու յաւիտենականը նոցա հոգեւոր, քաղաքակրթական կեանքն է, իսկ այն քաղաքակրթութիւնը, որ կրօնական—բարոյական հիմունքների վերայ չէ ընթանում, հիւանդոտ և վնասակար։ Անբարոյական սկզբունքներով ընթացող քաղաքակրթութիւնը ոչ միայն օգտակար լինել չէ կարող, այլ և իբրեւ որդ կրծում է ժողովրդի գոյութեան արմատը։ Անբարոյական սկզբունքներով առաջնորդուող քաղաքակրթութեան հետեւանքը մահն է։ Պատմութիւնը ցոյց է տալիս, թէ ազգերի կեանքի համար ոչ մի բան այնպէս վտանգաւոր չէ, ինչպէս անհաւատութիւնն ու անբարոյականութիւնը: Սովն ու սուրը, հալածանքը միայն ժամանակաւոր վտանգներ են, այն ինչ բարոյական անկումը ժողովրդի մահուան նախանշանն է։ Անհաւատութիւն և անբարոյականութիւն մենք իրաւամբ կապում ենք միմեանց հետ, որովհետեւ ամենասերտ կերպով շաղկապուած են նոքա միմեանց հետ։ Բարոյական սկզբունքները առանց կրօնի գուցէ անհատների համար կեանքի և գործողութեան առաջնորդ լինին, բայց ամբողջ ժողովուրդը առանց կենդանի կրօնի, անկարելի է առաջնորդել բարոյական սկզբունքներով։ Յունաց և Հռովմայեցւոց պատմութիւնը կրօնի անկման շրջաններում երբեմն բարոյական անձնաւորութիւնների պատկերներ է տալիս, որոնք իրենց փիլիսոփայական սկզբունքների համեմատ էլ կեանք էին վարում, բայց ժողովրդի մեծամասնութիւնը անարգելք դէպի անբարոյականութեան անդունդն էր գլորւում։ Կրօնն է բարոյականութեան աղբիւրը՝ գոնէ քրիստոնէութեան մէջ՝ ուրեմն քրիստոնեայ, ուրիշ խօսքով կրօնական պիտի դառնանք՝ մեր անհատական, ընտանեկան և ամբողջ ժողովրդական կեանքը բարոյական և ազնիւ դարձնելու համար։ Ապա թէ ոչ, ի՞նչ արժէք ունի եկեղեցու այն սպասաւորը, որ իւր կարողութեան չափ հետամուտ չէ առաքելական պաշտօն կատարելու, ի՞նչ արժէք ունի պետական այն պաշտօնեան, որ արդարութեան կշիռքը ձեռքին բռնած չունի, ի՞նչ արժէք ունի այն արուեստը, որ միայն զգայական, աղտեղի խորհուրդներ ծնեցնելու միջոց է, ի՞նչ արժէք ունի այն լրագրութիւնը, որ ժողովրդի բարոյական կրթութեան գործին ծառայելու տեղ, անարգ միջոցներով մոլորեցնում է իւր ընթերցողներին, սովորեցնում է նրանց ստել, անուանարկել կուսակցական նպատակներին հասնելու կամ անձնական հաշիւներ մաքրելու համար։ Ի՞նչ արժէք ու-

նի այն աշխատանքը, որը նիւթապէս կամ բարոյապէս մեր և մեզ շրջապատողների օգնութեան և կրթութեան միջոց չպիտի լինի, այլ գեղխութեան, անառակութեան և ուրիշների կեղեքման միջոց։ Կամենո՞ւմ ենք մեր կեանքին վսեմ բովանդակութիւն տալ, պէտք է ձգտենք վերածնուել կրօնապէս, որպէս զի մեր գործն ու շարժումն էլ, որպէս հոգու պտուղ, բարեփոխուէին դէպի ազնիւն ու բարին։

Ե.

Սակայն ո՞րն է կրօնապէս վերածնուելու և բարոյական դառնալու գաղտնիքը։ Նախկին պրակների մէջ արդէն ակնարկեցինք մենք մի քանի անգամ։ Աստուծոյ կատարեալ հնազանդութեան ճանապարհն է այդ, ինչպէս գործնականապէս ցոյց է տալիս մեր կրօնական կատարելատիպ Յիսուս Քրիստոսի պատկերը։ Կարելի՞ է լոյսը նկարագրել, նկարել գրչով կամ վրձինով։ Բայց Նորա անձնաւորութիւնը աւելի անարատ էր, քան լոյսը։ Նորա կեանքը աշխատանքի և անհուն զոհաբերութեան մի շղթայ է, սուրբ և անաբատ սիրոյ մարմնացում, որի կատարեալ պատկերը Նորա վերջին օրերի պատմութիւնն է մեզ տալիս։ Ի՞նչով բացատրել այս իրողութիւնը, որ մի և նոյն ժամանակ մի սքանչելի խորհուրդ էր մարդկային պատմութեան մէջ, մի իմաստուն և անհասանելի կանխագիտութեան գործ պատմութեան Ղեկավարի կողմից որ Աստուած է։ Այս խորհուրդն ըմբռնելու ցուցումներ է տալիս մեզ Տիրոջ կեանքի վերջին օրերի նկարագրութիւնը՝ Գեթսեմանի պարտէզի տեսարանը, որ մի և նոյն ժամանակ ամենամեծ զոհաբերութեան, խաչի պատմութեան նախաբանն է։ Մեր Փրկիչը, կրօնական անձնաւորութեան կատարելատիպը այստեղ կենդանի կերպով կանգնած է մեր առաջ և բարոյական կատարելութեան, զոհաբերութեան ճանապարհ է ցոյց տալիս։ «Հայր, եթէ կամիս, անցո՛ զբաժակս զայս յինէն, բայց ոչ իմ կամք, այլ քոյդ լիցի»։ Հակիրճ, բայց սրտառուչ աղօթք, որ Աստուծոյ կամքի հպատակութեան մի սրբազան ուխտ էր։ Յիսուսի կեանքի, գործունէութեան ամբողջ էութիւնը կարելի է այդ աղօթքի մէջ ամփոփել։ Նա եկել էր իւր Հօր կամքը կատարելու և գործով հաստատելու, թէ կատարելութեան իսկական, արքայական պողոտան Աստուծոյ հնազանդութեան ճանապարհն է։

Թիւրիմացութեան տեղիք չտալու համար, հարկ ենք համարում մեր յօդուածը կնքելուց առաջ մի երկու խօսք էլ աւելացնել։ Սրբութեան այն պահանջը, որ կրօնը դնում է մեր առաջ,

որ Քրիստոս կենդանի կերպով իր անձի օրինակով քարոզում է մեզ, մարդկային տկար հոգու համար բարձր է և մինչև իսկ անհասանելի: Մարդկային բնութիւնը թոյլ է և մեղանչական, իսկ Քրիստոսի պատկերը սրբութեան և անհուն սիրոյ մարմնացումն էր: Մենք երբեք Նորան հասնել չենք կարող. սրբապղծութիւն է մինչև իսկ մի րոպէ մտածել այդ մասին: Բայց չպէտք է մոռանանք, որ նոյն Փրկչի ձայնը, «եկայք առ իս», կոչում է մեզ՝ վաստակեալներիս և ծանրաբեռնեալներիս: Լուրջ է և ծանր քրիստոնեայի կեանքը, պատերազմների մի շղթայ ներքին և արտաքին աշխարհի դէմ, բայց մեծ է նոյնպէս Նորա յոյսը, թէ երկնային զօրութեամբ մեղքի կապանքները վերջ ի վերջոյ կը փշրուին Նորա առաջ: Կրօնական մարդու հոգեբանութիւնը հասկանալու համար առաջարկում ենք մեր ընթերցողներին ուշադրութեամբ կարդալ Հռովմ. Է. 13 Հ.-ից մինչև գլխի վերջը: Ճշմարիտ կրօնական մարդը Պօղոսի նման զգում է մեղքի մեծ զօրութիւնը, զգում է մարդկային կամքի թուլութիւնը մեղքի առաջ, բայց զգում է նոյնպէս, որ Բարձրեալի աջը միայն Նորան փրկել կարող է հզօր մեղքի որոգայթներից:

«Այր մի տառապեալ եմ ես, ո՞վ կարէ ապրեցուցանել զիս ի մարմնոյ աստի մահու, այլ շնորհքն Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ» խօսքերը կրօնական անձի հոգու վիճակն է պարզում:

Գ. Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԼԴ.

ԱՌՕՐԵԱՅ ՀԱՑԻ ԽՆԴԻՐԸ

«Հաց մեր հանապազորդ
տուր մեզ այսօր»

Տէրունական աղօթքը, «Հայր մեր»ը իւր էական իմաստով, գրեթէ, բովանդակում է աւետարանական ամբողջ քարոզութիւնը։ Խնդրուածքի կամ աղօթքի ձեւով պարզուած է մարդու և Աստուծոյ յարաբերութեան խնդիրը, որ կրօնի էութիւնն է, այնտեղից բղխած ընկերական պարտքի հետ։ Չորրորդ հայցուածքն է և միակը, որ կապ ունի մեր նիւթական կեանքի առօրեայ հացի հետ. առաջին երեքը և յետագաները զուտ կրօնական են, հոգեւոր, մեր ներքին աշխարհի հետ կապուած, որ խնդրում ենք Աստուծոյ սրբութեան, կամքի և թագաւորութեան աշխարհը լինի այն, հայրական սիրոյ և որդիական հնազանդութեան իրացումը մեր մէջ։

Կեանքի երկու կարեւորագոյն խնդիրներ դրուած են այստեղ իրար հանդէպ։ Առանց հացի ապրել կարող չենք, նա մեր երկրաւոր կեանքի կարեւորագոյն միջոցն է։ Հացի խնդիրը արտաքուստ ամենից շօշափելի, ամենից հասկանալի միտքն է. քաղաքակրթութիւն, գիտութիւն և արուեստ, գաղափար աւելի պակաս հասկանալի են; թւում է, աւելի պակաս անհրաժեշտ, քան հացի խնդիրը։ Այդ ասել կարող ենք ոչ միայն հասարակ, անուսում մարդու համար, այլ և բարձր գիտութեամբ, տեխնիկայով օժտուած մտքի և արուեստի ոլորտներում շնչող մարդկանց համար։

Բայց քիչ է ասել, թէ հացի խնդիրը ամենից հասկանալին է. շատերի համար և շատերի հասկացողութեամբ նա կեանքի առանցքն է, անհատի, կազմակերպութիւնների, պետութեան էութեան, գործունէութեան առանցքը։ Պէտք է զինուել գիտութեան, տեխնիկայի, մեքենական արտադրութեան բոլոր տուեալներով, որպէս զի հողից կրկնակի, եռակի աւելի արդիւնք ստացուի, աւելի քիչ աշխատանք և ժամանակ կորցնելով։ Պէտք է արհեստաւորի ձեռքից առնել գործը և յանձնել մեքենային, որպէս զի արտադրութիւնը լինի մէկի փոխարէն հազար, և այսպէս արդիւնաբերութեան

բոլոր ճիւղերի մէջ մարդկային ուժի փոխարէն պիտի գործադրուի ելեկտրական ոյժը, մարդկային ձեռքի կամ անասունների փոխարէն բարձրագոյն կատարելութեան հասած մեքենան։ Որովհետեւ նիւթն է շարժիչ ոյժը, ուստի և մեր ուշադրութեան կենդրոնը արտադրութեան և նորա հետ կապուած ձեռնարկութիւնների մէջ պիտի լինի։ Ոչ միայն հաց պիտի ունենանք, այլ և հարստութիւն, որի հետ է կապուած, ասում են, և քաղաքակրթութիւն, գիտութեան և արուեստի, յառաջդիմութեան ընթացքը։

Բայց միայն արտադրութիւնն էլ բաւական չէ, պէտք է շուկայ, վաճառելու հնարաւորութիւն, որպէս զի ոսկին զումարուի երկրի մէջ, աւելի և աւելի ընդարձակուելին հարստութիւն բերող ձեռնարկութիւնները։ Պէտք է ունենալ գաղութներ, նրանց հում նիւթերը, հանքային և այլ բազմատեսակ հարստութիւնները օգտագործել կարողանալու, սեպհական ազգի և պետութեան ճոխութեան, նիւթականի բարգաւաճման համար։ Եթէ օտար ազգերն ու երկիրները հեշտութեամբ չեն ենթարկուիլ մեր կամքին, մեր ձգտումներին, զէնքի զօրութեամբ նրանց կատարել կըտանք մեր ցանկութիւնը։ Այստեղից են ծագում ազգերի ընդհարումները, մրցութիւններն ու պատերազմները, արիւնահեղութիւնները։ Կեանքը կռիւ է, ո՞յժ ունիս, զէ՞նք ունիս, նիւթական հարստութիւն ունի՞ս, պէտք է գործադրել աւելին ստանալու...։

*
* *

Անպայման մինչեւ որոշ սահման ճշմարիտ է այս մտածողութիւնը. ուր չկայ մի կտոր հաց, ուր աղքատութեան երեսից մարմինը մերկ է, մարդիկ կեղտոտ, խոնաւ և մութ նկուղներում փակուած, վատառողջ պայմաններում իրար վերայ թափուած... անմտութիւն է այնտեղ բարձր քաղաքակրթութեան, հոգեւոր կեանքի, արուեստի, գիտութեան ուռճացման մասին ճառել։ Հաւաքեցէք մարդկանց գարշահոտ, ցուրտ, օդազուրկ նկուղների մէջ և նուագեցէք նրանց Բեթհովէնի իններորդ սիմֆոնիան, ցուցադրեցէք նրանց դասական հանճարեղ նկարիչների մեծագոյն գործերը, տուէք Շեկսպիրի Համլէտը, Գէօթէի Ֆաուստը, նշանաւորագոյն բանաստեղծների ժողովածուները, նոյն իսկ ամենալաւ թղթի վերայ տպուած, ոսկեզօծ կազմերով, և առաջարկեցէք նրանց զբաղուել մարդկային հոգին յուզող խորը խնդիրներով... զոհ եղէք, եթէ ոսկեկազմ գրքերը ձեր ճակատին չխփեն։ Քաղաքակրթութիւնը, հոգեւոր կեանքի և ստեղծագործութեան թռիչքը,

անպայման կապուած է որոշ չափով նիւթական պայմանների հետ։ Ով մի կտոր հաց չունի, քաղցած է, մերկութիւնից ցրտահար, հոգեւոր բարձր ստեղծագործութիւնների և վայելումների մասին չի մտածում, և ոչ էլ կը հասկանայ նրանց արժէքը փորը քաղցած ժամանակ։

* * *

Բայց ճշմարիտ է նաեւ, որ մարդկութեան երջանկութիւնը միայն հացից, հարստութիւնից կախուած չէ։ Քի՞չ են հարուստ և դժբաղդ մարդիկ։ Կան և հարստութեան թշուառ զոհեր։ Որչա՜փ բացասական երեւոյթներ կան կեանքի մէջ հարուստ լինելու հետեւանքով։ Հարստութիւնը հնարաւորութիւն է ստեղծում յաճախ մարդկանց սայթաքման՝ մինչեւ ոճրագործութիւն։ Եւ այդ ոչ միայն անհատական կեանքի մէջ, այլ և մեծ միութիւնների, կազմակերպութիւնների, նոյն իսկ պետութիւնների մէջ։ Պատմութիւնը մեզ անհամար փաստեր է տալիս, որ տոհմեր և պետութիւններ ընկնելով ագահութեան, ընչաքաղցութեան մէջ, որ տանում է դէպի հարստահարութիւն, անխղճութիւն, և դրանց հետեւանքով բարոյական կործանում։ Սոդոմ—Գոմորները, Նինուէներն ու Բաբելոնները միշտ դէպի կորուստ են գնում, երբ յղփացած, տարւում են միայն նիւթական կեանքի, արտաքին վայելքի, գեղխութեան և շուայտութեան հոսանքներով։ Հին Հռոմը աշխարհի հարստութեան կեդրոնն էր, բայց և գեղխութեան, անբարոյականութեան, մտքի և կեանքի այլասերման կեդրոնը, հաստատուած ազգերի ստրկացման և շահագործման իրականութեան վերայ։ Հռովմայեցի պատրիկը, ազնուականն ու քաղաքացին այլ եւս աշխատանքը ստրկին վայել գործ էր համարում, և ինքն ստեղծուած նրանց ձեռքով վաստակած հարստութիւնը վայելելու։ Ապա, ուրեմն, հարստութիւնն ինքնըստինքեան բաւական չէ մարդը, մարդկութիւնը երջանիկ և բաղդաւոր դարձնելու։ Որակն ու նպատակն է, որ պահպանում է ծայրայեղութիւնների մէջ չափն ու կշիռը, կեանքի դիւրութիւնների հետ բարոյական զգացումը։

Յիսուսի աւետարանական քարոզութեան մէջ քաղաքա—տնտեսագիտական խնդիրներ չկան արծարծուած, որովհետեւ նա չէր եկել նոր ուղիներ քարոզելու գիտութեան, արդիւնաբերութեան, տեխնիկայի կամ մեքենագիտութեան մասին։ Նորա ժամանակ այդպիսի խնդիրներ էլ չկային և պէտք չկար։ Բայց եթէ այժմ գար, իւր յայտնութիւնից 2000 տարի յետոյ, Նորա Աւետարանը ըստ էութեան շատ տարբեր չէր լինի մեր հին աւետարանից՝ բարոյական

և հոգեւոր բովանդակութեամբ։ Որովհետեւ Նորա փրկչական կոչումը, դորա հետ և կրօնի էութիւնը, տնտեսա — քաղաքական հարցերի լուծումը չէր, այլ մարդկային հոգու փրկութիւնը, վերածնութիւնը, կեանքի և բարոյական կատարելութեան ուղին և նպատակը։ «Զի՞նչ օգուտ է մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցէ»։ Ի՞նչ օգուտ է մարդուն, եթէ աշխարհի տէրը լինի և իր անձը կորցնէ։ Նա եկել էր մարդկանց ուսուցանելու, ցոյց տալու կարեւորագոյն գանձի՝ անգին մարգարտի արժէքը և զայն գտնելու ճանապարհը։ Մարդկային անձնաւորութիւնն է այդ թանկագին գանձը, հոգին, մեր ներքին իմացական աշխարհը, մեր էութիւնը։ Առանց դորան ի՞նչ է մեր «մարմնական» կեանքը, մեր հարստութիւնն ու ինչքը։ Դատարկ կարաս, կամ աւելի ճիշդ ծակ կարաս։ Մեր մարմինը անօթ է, բայց պէտք է լինի նա ազնիւ և անուշահոտ հեղուկով լի։ Հացի խնդիրը սուրբ է, աղօթքի մաս կազմող մաքրութեամբ, բայց ոչ ուրիշների արեան գնով։ «Զամենայն զոր ինչ միանգամ կամիցիս, թէ արասցեն ձեզ մարդիկ և դուք արարէք նոցա»։ Ինչ որ կամենում էք, որ մարդիկ ձեզ անեն, արէք և դուք նրանց. ահա անհատի, հասարակութիւնների և ազգերի յարաբերութեան ոսկի կանոնը։ Ապրի՛ր, թո՛ղ ուրիշներն էլ ապրին։ Չե՞ս կամենում, որ սոված մնաս, դու, կինդ, զաւակներդ, մի՛ ստեղծիր ուրիշի համար այդպիսի վիճակ։ Չե՞ս կամենում կեղտի մէջ կորչել աղքատութեան երեսից, ցնցոտիներով տեսնել կնոջդ, երեխաներիդ, մի՛ աշխատիր այդպիսի դրութիւն ստեղծել ուրիշների համար։ Ո՛հ, ինչպէս կորստաբեր է լինում երբեմն հաց ձեռք բերելու սխալ ճանապարհը. հազարաւոր կեանքերի կորուստ, նիւթական, մշակութային, բարձր ստեղծագործութիւնների և արժէքների ոչնչացում, ինչպէս հացի անունով մղուած կեղեքումներն են կամ պատերազմները։ Յիշում ենք Բոդլերի մի փոքրիկ պատմուածքը։ Երկու երեխաներ նստած էին իրար կողքի. Նոցանից մէկը կարկանդակի մի կտոր ունէր ձեռքին, միւսը կամենում է յափշտակել նորա ձեռքից, և ահա կարկանդակը անցնում է ձեռքից ձեռք, բայց շարունակ փշրուելով և գետին թափելով։ Երբ կռիւը վերջացաւ, փոշիացած և գետին էր թափած կարկանդակը, որի համար սկսուած էր կռիւը։

* * *

Ամենօրեայ հացի խնդրանքը սուրբ է կրօնական իմաստով, ինչպէս Աստուծոյ անուան սրբութեան, Աստուծոյ արքայութեան

և կամքի հաստատութեան համար ենք աղօթում մեր մէջ, մեզ համար, նոյնպէս և մեր անհրաժեշտ կարիքների համար, որ հանապազօրեայ հաց է կոչուած այստեղ: Բայց նա կեանքի բովանդակութիւն և նպատակ չէ ինքնըստինքեան, այլ միջոց աւելի բարձրագոյն նպատակի, բարձրագոյն բարիքի հասնելու: «Զենք ապրում ուտելու համար»: Հացը պէտք է, անհրաժեշտ է, բայց «ոչ միայն հացիւ կեցցէ մարդ»: Տնտեսի առակն էլ աւետարանի մէջ (Ղուկ. ԺԶ.) ցոյց է տալիս, որ նիւթական հարստութիւնը միջոց է միայն աւելի բարձր բարիքի հասնելու համար: Այսպէս էլ պէտք է լինի ոչ միայն անհատների, այլ և հաստատութիւնների և պետութիւնների համար: Ամենքս ժամանակաւոր տնտեսներ ենք մեր երկրաւոր կեանքի ընթացքում, հարստութեամբ, գրչով, խօսքով, և ամենատեսակ ունակութիւններով և գործերով, անցաւորից, նիւթականից յաւիտենականի ու հոգեւորի համար աշխատելու, լինի այն անհատական, թէ ազգային և համամարդկային արժէքների տեսակէտով: «Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան». մամոնան անհրաժեշտ անիրաւութիւն է, որից բարեկամութիւն և բարիք պիտի ստեղծուի:

Խնդրի՛ր քո հացը, և հաւատով ու սրբութեամբ մշակի՛ր նորան ձեռք բերելու ուղիները: Թերահաւա՛տ, չգիտես, թէ երկնաւոր Հայր ունիս դու երկնքում, իւր որդուն նա ձկան տեղ օ՞ձ, հացի տեղ քա՞ր կըտայ միթէ:

Ապա, ուրեմն, «խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ և այդ ամենայն յաւելցի ձեզ»:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐ·ՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ, 1939. Նոյեմբ.

ԼԵ.

ԴԷՊԻ ԼՈՅՍ ԵՒ ԿԵԱՆՔ

«Տէ՛ր, զի բացցին աչք մեր»
Մատթ. Ի. 33.

Ա.

Հաւատացեա՛լ ժողովուրդ,

Մեր Տէրը Երիքովից Երուսաղէմ էր գնում, իւր վերջին քարոզութիւններն ու փրկչական տնօրինութիւնները կատարելու, ճանապարհին երկու կոյրեր էին նստած, անցորդներից ողորմութիւն խնդրելու: Լսելով, թէ Նոր մարգարէն, Նազովրեցի Յիսուսը, իւր աշակերտների և ժողովրդի բազմութեան հետ անցնում է Երուսաղէմ գնալու, բարձր ձայնով աղաղակեցին. «Ողորմեա՛ց մեզ, Յիսո՛ւս, որդի Դաւթի»: Ժողովուրդը սաստում էր նրանց, որ լռեն, մտածելով, թէ անյարմար էր, այդպիսի երթի ժամանակ Յիսուս կանգ առնէր և նրանց ողորմութիւն տար: Բայց նրանք առաւել եւս աղաղակում և կրկնում էին իրենց խնդիրքը: Յիսուսի ուշադրութիւնից չվրիպեցին նրանց աղաղակներն ու, գուցէ, և շարժումները: Յիսուս կանգ առաւ, կանչեց իւր մօտ և հարցրեց. «Ի՞նչ էք կամենում»: Նոքա պատասխանեցին. «Տէ՛ր, զի բացցին աչք մեր», Տէ՛ր, թո՛ղ բացուին մեր աչքերը:

Հասկանալի է կոյրերի փութկոտութիւնը, անպատճառ լսելի լինել կամ արժանանալ Տիրոջ ուշադրութեան: Խեղճ մարդիկը ի ծնէ կոյր էին, զրկուած լոյսից և նորա հետ կապուած գեղեցկութիւններից և վայելքից: Լսել էին, որ Յիսուս բժշկութիւններ և հրաշքներ է կատարում, իրենց էլ կարող էր բժշկել և իրենց անբաղդութեան վերջակէտ դնել: Նոքա չէին սխալուել. Յիսուս կարեկցութեամբ մօտեցաւ նրանց և բժշկեց. Նոքա սկսան տեսնել, և գնացին Նորա յետեւից:

Սիրելի՛ք, գեղեցիկ է ստեղծել Աստուած երկինքն ու երկիրը, համայն տիեզերքն ու բնութիւնը: Դաշտերի դալարագեղ կանաչութիւնը երփներանգ ծաղիկներով զարդարուած, սառնորակ և վճիտ աղբիւրները իրենց ջրերից կազմուած կարկաչուն վտակնե-

քով, լեռնային գետակներն իրենց աշխոյժ և երբեմն յախուռն յարձակմամբ՝ ընթացքն արգիլող ժայռերի դէմ, հովիտների և դաշտերի միջով հեզասահ գետերը, իրենց շուրջը կեանք ու կենդանութիւն տարածող այգիներով, պարտէզներով և մշակուած դաշտերով, հովից ծփացող և ալեծածան, կանաչապեղ կամ ոսկեճաճանչ արտերը, բարձրաբերձ լեռներն ու ձորերը սաղարթախիտ անտառներով ծածկուած, հոյլը բազմերանգ թռչունների, հարըստութիւնը կենդանական աշխարհի... ո՞ր մէկը յիշեմ։ Պակա՞ս գեղեցիկ է խորհրդաւոր երկինքը իր ջինջ և մաքուր կապուտակութեամբ, բիւրաւոր աստղերով, հեզասահ լուսնի ընթացքով։ Գեղեցիկ է աշխարհը, բայց ի՞նչ են նորա բոլոր գեղեցկութիւնները կոյր մարդու համար։

B.

Մեծ զրկանք է, անշո՛ւշտ, կոյր լինել, զրկուած նիւթական լոյսից, բայց որչա՜փ եւս առաւել զրկանք է հոգեւոր կուրութիւնը, զրկանքը լոյսից։ Գեղեցիկ է արտաքին աշխարհը, բայց ոչ պակաս գեղեցիկ մեր ներքին աշխարհը, որ պէտք է լուսաւորուի իմացական արեգակից եկած ճառագայթներով իր գեղեցկութիւնները երեւան բերելու համար։ Այսօր կամենում ենք խօսել այդ «իմանալի» լոյսի մասին, որ փարատում է հոգու վրայ իջած մէգն ու խաւարը, երեւան հանում նորա աննման գեղեցկութիւնները։

Մարդկային հոգու բոլոր պէսպիսութիւնները իբրեւ արդիւնք նորա մտքի, զգացմունքի, կամքի, երեւակայութեան, մի խօսքով շինարարական և ստեղծագործական կեանքի գումարը, արդիւնքը կարելի է երեք բառի մէջ ամփոփել՝ Գիտութիւն, Արուեստ և Կրօն։ Սրանք իմացական լոյսի տարբեր երեւոյթներն ու ձեւակերպութիւններն են։ Մեր նպատակը չէ գիտութեան և արուեստի բերած մեծ մեծ բարիքների մասին ճառել, նրանց յիշատակութիւնն այստեղ միայն մտքերի փոխանցման և պարզաբանութեան մի կամուրջ է մեր խոկական ասելիքի շրջանն անցնելու։

Անշո՛ւշտ, գիտութիւնը մեծ ոյժ է։ Նա ընդարձակում է մարդկային ծանօթութիւնները, ընդլայնում է և խորացնում նորա գիտութիւնը, լուսաբանում է բնութեան երեւոյթները, թափանցում նորա գաղտնիքների մէջ և տիրապետելով նորա գաղտնիքներին, օգտագործում նորա ամենատեսակ ուժերը մարդկային կեանքի դիւրութիւնների և բարօրութեան համար։ Շոգեկառքը, շոգենաւը, օդանաւը, ելեկտրականութիւնը, հեռագիրը, հեռախօսը գի-

տութեան ստեղծագործութիւններն են։ Փառք, պատիւ, գիտութեան վաստակաւորներին, նրանք մարդկութեան բարերարներն են և արժանի մեր խորին երախտագիտութեան։

Նոյնը կարող ենք ասել արուեստների և արուեստագէտների համար. ճարտարապետութեան, արձանագործութեան, նկարչութեան և երաժշտութեան մասին։ Արուեստագէտ ճարտարապետը կարողանում է նիւթին կեանք ու շունչ տալ. քարը, կիրը, փայտը և այլ նիւթեր գործադրում է հրաշալի տաճար կանգնելու, որ իւր համաչափութեամբ, գծերի և ձեւերի ներդաշնակութեամբ և ազնուութեամբ. դէպի վեր սլացող սիւներով, կամարներով, դէպի երկինք ուղղուած գմբեթով, հիացմունքի և յափշտակութեան տրամադրութիւն ստեղծում, հոգիդ էլ վերացնելով դէպի աստուածային բարձունքները։

Նկարիչը, արձանագործը, երաժիշտը, ամեն մէկը իւր կերպն ունի, իրեն տրամադրելի նիւթը, գործիքը, որպէս մարդկային հոգին բարձրացնող միջոց դարձնելու, եթէ երկնքից նրանց տաղանդ և հանճար է շնորհուած։ Միքէլ—Անջելոն մարմարիոնի կտորից կարողացել է ստեղծել Մեդիչիների դամբարանի գիշերը կնոջ փիգուրով, Միքստինեան մատուռի որմանկարչութեան մէջ ողբացող Երեմիան. Ռաֆայէլը կնոջ արտաքին գեղեցկութիւնը ոգիացրել է և դարձրել սուրբ, աստուածային գեղեցկութիւն։ Երաժիշտները բնութեան երեւոյթները, ծփանքը ջրի, զեփիւռը հովի, մարդկային հոգու ելեւէջները, վիշտն ու տառապանքը, ուրախութիւնը կարողացել են մարմնաւորել երգի կամ գործիքաւոր երաժշտութեան մեծ ստեղծագործութիւնների մէջ։ Չենք խօսում բանաստեղծութեան մասին, որ ամենից տարածուածն է, հասկանալին համեմատաբար, բայց և թովիչը մարդկային հոգու։ Այո՛, արուեստն էլ իւր հրաշալիքներն ունի, հիացման արժանի։

Գ.

Բայց ոչ գիտութիւնը և ոչ նոյն իսկ արուեստը բաւարարել կարող են և լցնել մի բաց մարդկային հոգու մէջ, որ նորա տենչն է, ծարաւը դէպի կեանքի յաւիտենական խորհուրդը, դէպի յաւիտենական Անծանօթը, Անտեսանելին, ելակէտը կեանքի։ Մտածող, զգացող որոնող հոգին հարց է տալիս. «Ինչո՞ւ եմ ապրում, ո՞ւր եմ գնում ես, ի՞նչ է իմ կեանքի էութիւնն ու նպատակը»։ Հարցեր, որոնք յուզում, փոթորկում են հոգին, բայց, որոնց պատասխանը ոչ գիտութիւնը ունի և ոչ արուեստը։ Որովհետեւ գո-

յութեան իմաստն ու նպատակը միայն գիտութեամբ և արուեստով չեն լուսաբանւում, կայ ներքին արժէքների և իրողութիւնների մի ամբողջ աշխարհ, որ դուրս է նրանց շրջագծից, թէև շօշափւում են իրար շատ գծերով։ Գիտութեան պիտի կցուի կրօնական—բարոյական աշխարհների և ապրումների իրականութիւնը, որ առարկայական չէ և ոչ շօշափելի, բայց նոքա գոյութիւն ունին մեր ներքին աշխարհում, ամենակարեւոր չափով որակեալ կեանքի ձևակերպութեան և յաւիտենական յարատեւութեան ձգտումի բաւարարութիւն ստանալու համար։

Մենք զգում ենք մեր ներքին աշխարհում մի հակոտնեայ զգացում, ձգտում։ Մի կողմից կամենում ենք ապրել, վայելել կեանքը, եսական և անձնական, շահագիտական հակումներին բաւարարութիւն տալ, մեր հաճոյքներին և ցանկութիւններին անարգել ընթացք, բայց դորա դէմ գլուխ է բարձրացնում եսականից աւելի բարձր, աւելի վսեմ մի զգացում, մեր պայմանական անձից դուրս Անպայմանի կենդանի գոյութիւնը մեր հոգու մէջ, որին ենթարկուելու, հնազանդելու զգացումն ու ապրումը ոչ միայն չի ստորացնում մեր եսը, այլ սրբում է, բարձրացնում, ազնուացնում նորան։ Մենք զգում ենք մեր ներսը մի արդար դատաւոր, որ ամենայն անաչառութեամբ իւր խօսքն է ասում մեր արարքների և ընթացքի մասին. թէ ի՞նչ է բարին և թէ ի՞նչ չարը, ո՞րն է եսականը, անձնականը, ո՞րը նուիրումը, զոհողութիւնը, գութը, եղբայրսիրութիւնը, այսինքն բարոյական խնդիրները իրենց խորքում։

Անշո՛ւշտ, միտքը ևս իր որոշ թելադրութիւնները կարող է անել այս խնդրում, այսպէս կոչուած փիլիսոփայական բարոյագիտութեամբ, արուեստն էլ կարող է որոշ տրամադրութիւն ստեղծել, բայց նրանք մեր սիրտը Աստուծոյ բնակարան դարձնել չեն կարող։ Այդ կրօնի սահմանն է, հաւատոյ շրջանն է, հոգեկան այն վիճակը, որ ըստ առաքեալի սահմանել կարող ենք, «հաւատք սիրով յաջողեալք», որ մարդկային կեանքը դարձնում է բարոյապէս գեղեցիկ, լուսաւոր, երջանիկ, օգտակար և հաճելի իւր և իւր մերձաւորի, շրջապատի համար։ Այս զգացումը ենթակայական է իւր ծագմամբ և ապրումներով, բայց դառնում է առարկայական, տեսանելի և շօշափելի իւր արդիւնքներով, որ կրօնական կեանքն է պատմութեան մէջ, իւր քաղաքակրթական—գեղարուեստական և բարոյական—դաստիարակչական ընթացքով։

Կրօնի հետաքրքրութեան առարկան մարդկային հոգին է, կեն-

դանի անձը, նորա ներքին էութիւնը, աւելի թանգ, քան արտաքին ամբողջ աշխարհը. «Զի՞նչ օգուտ է մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ», Մատթ. ԺԶ. 26։ Բարձրացնել այդ հոգին, ազնուացնել, մաքրել բիւրեղի նման, կրօնի և նորա եկեղեցու ձգտումն է և բարձրագոյն նպատակը։ Յոյս ներշնչել յուսահատին, խաղաղութիւն՝ հոգով տառապողին, մխիթարութիւն սգաւորին։ Բայց կայ դեռ աւելի բարձրագոյնը և հրաշալին։ Այդ կորուսեալ հոգու փրկութեան գաղափարն է։ Անառակ որդին իսկ մերժուած չէ ներման և գթութեան շնորհքից, եթէ նա զղջացել է և թողել իւր սխալը։ Կորուսեալ հոգու փրկութեան համար երկնքի հրեշտակներն իսկ ուրախութիւն են զգում։ Ներողամտութեան և սիրոյ որպիսի՛ խորը ըմբռնում։

Ո՞ր գիտութիւնը կարող է քրիստոնէութեան հալածող Սօղոսին Պօղոս առաքեալ դարձնել, Հռոմի շուայտ կեանքով ապրող Օգոստինոսին՝ եկեղեցու ամենամեծ հայրերից մէկը, Վիկտոր Հիւգոյի Թշուառների հերոս, չարագործ Ժան Վալժանին՝ մեծ մարդասէր և բարեգործ։ Կարդացե՞լ էք Լեւ Տոլստոյի Վասկրէսենիէ— Յարութիւն վէպը, որի հերոս կոմս Նեխլիւդովը անմեղ Կատիւշային հրապուրելուց և նորա կորստեան պատճառը դառնալուց յետոյ, հետեւում է տաժանակիր աշխատանքի դատապարտուած զոհին մինչեւ Սիբիր, նորա կեանքը փրկելու և իւր խիղճը մաքրելու համար։ Կարդացե՞լ էք Լեհացի ամենամեծ գրող Սենկեւիչի Quo vadis Domine — Յո՞ Երթաս, Տէ՛ր, սքանչելի վէպը, քրիստոնէութեան արշալոյսին հեթանոս Հռոմի զեղխութեան և ապականութեան և քրիստոնեաների մաքուր և սիրով լի կեանքի հակադրութեան գեղարուեստական նկարագրութիւնը։

Ահա մի քանի խօսքով կրօնի ներգործութեան շրջանն ու արժէքը մարդկութեան համար։ Հոգին թանգ է, պէտք է փարատել նորա վերայ իջած մէգն ու խաւարը «իմանալի լուսով», որ երկնքից է գալիս. «Զի ամենայն տուրք և բարիք ի վերուստ են իջեալք առ ի քէն, որ ես Հայր լուսոյ»։ Մենք հաւատում ենք, թէ այդ լոյսն ուղարկուած է երկնքից յանձին Յիսուս Քրիստոսի։ Այդպէս էլ ձեւակերպուած է քրիստոնէական նկարչութեան և արձանագործութեան մէջ։ Կանգնած է Նա կամ աթոռի վերայ նստած, բաց աւետարանը ձեռքին, որի վերայ գրուած է «ԵՍ ԵՄ ԼՈՅՍ ԱՇԽԱՐՀԻ»։

Թո՛ղ բացուին մեր աչքերը, տեսնենք այդ լոյսը և գնանք Նորա յետեւից, ինչպէս Երիքովի կոյրերն իրենց աչքերը բացուելուց յետոյ գնացին։

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԱՍԿ. 1946. Մայիս.

ԼԶ.

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

«Թագաւո՛ր երկնաւոր, միշտ անշարժ
պահեա՛ զաթոռ Հայկազնեայց»:

Ա.

Հայ եկեղեցին քրիստոնէական եկեղեցիների մէջ իր ուրոյն տեղն ունի անցեալով, կազմակերպչական և դաւանաբանական առանձնայատկութիւններով։ Հայաստանեայց Եկեղեցի կամ Հայոց Եկեղեցի անունն իսկ արտայայտած է նորա էութիւնը։ Կայ Կաթոլիկ Եկեղեցի, կայ Օրթոդոքս Եկեղեցի, կան Բողոքական կամ Աւետարանական եկեղեցիներ, բայց նրանք ազգային եկեղեցիներ չեն այնպիսի հասկացողութեամբ և տարողութեամբ, որպիսին Հայաստանեայց Եկեղեցին է։ Սա ազգային եկեղեցի է գերազանցապէս, իր հօտի ամբողջութեամբ Հայերից կազմուած, իր լեզուով, գրականութեամբ, արուեստով, ժամերգութեամբ և հոգեւոր կեանքով, բնականաբար նաեւ անցեալով և պատմութեամբ, շաղկապուած հայ ժողովրդի հետ։

Կաթոլիկ Եկեղեցին մերի համեմատութեամբ շատ մեծ է, ընդարձակ, իր ներգործութեան և ծաւալման սահմաններով, մեզնից մեծ և հզօր ազգերի մէջ, Իտալացիների, Սպանացիների, Ֆրանսացիների, Իռլանդացիների, Լեհերի մէջ, մասամբ նաեւ Գերմանացիների և ամերիկեան ազգերի մէջ։ Փոքր չափով նաև միարարական քարոզչութեան հետեւանքով, հատուածներ ունի արեւելեան եկեղեցիներից պոկուած. այդպիսիների մէջ յիշատակելի է, յատկապէս, հայ կաթոլիկութիւնը իր մասնաւոր կազմակերպութեամբ, ենթարկուած պապական բարձր իշխանութեան։ Կաթոլիկ եկեղեցու պաշտօնական լեզուն լատիներէնն է, վերեւ յիշած բոլոր ազգերի համար, միայն արեւելեան հին քրիստոնեաներից կազմուած հատուածների համար (Ունիատներ) թոյլատրուած է իրենց նախկին եկեղեցու լեզուով եւս պաշտամունք կատարել, ինչպէս հայ կաթոլիկներն են։

Օրթոդոքս եկեղեցու մաս են բացի Յոյներից, որոնց անունով

և երբեմն կոչւում է եկեղեցու ամբողջութիւնը, Ռուսաց մեծ ազգը, Ռումինացիք, Բուլղարները, Սերբերը, որոնք հէնց սկզբից կարողացել են իրենց մայրենի լեզուն դարձնել և եկեղեցական պաշտաման լեզու։ Որթոտոքս եկեղեցին էլ հաւատացեալների թւով և ներգործութեան ընդարձակութեամբ անսահման մեծ է Հայաստանեայց Եկեղեցուց։

Աւետարանական կամ Բողոքական գլխաւոր և համեմատաբար աւելի հին եկեղեցիների հետ, ինչպէս Լուտերական, Երիցական և Անգլիքան եկեղեցիներն են, կան և բազմաթիւ յարանուանութիւններ՝ Մկրտչականներ, Մեթոդիստներ, Ադվենտիստներ ևն., որոնք տասնեակ միլիոններով հետևողներ ունին։ Սրանց մէջ յատուկ տեղ է բռնում Անգլիքան Եպիսկոպոսական Եկեղեցին, որ կաթոլիկութեան և բողոքականութեան միջին տեղն ունի և պահել է որոշ աւանդութիւններ հին եկեղեցուց, նաև համեմատաբար ազգային է, գոնէ, բուն Անգլիայում։ Բայց որոնցից և ոչ մէկը ազգային բնաւորութիւն չունի բառի իրական հասկացողութեամբ, և նրանք հետամուտ չեն իրենց հաւատացեալների ազգային առանձնայատկութիւնները. պահպանելու մտահոգութեամբ, նրանք չեն ամփոփւում նաև ազգային սահմանների մէջ, ինչպէս վիճակուել է այդ Հայաստանեայց Եկեղեցուն, որովհետև եկեղեցու կողքին ունին հզօր և կազմակերպուած պետութիւններ։

Բ.

Այս եկեղեցիների, յատկապէս հին եկեղեցիների, Կաթոլիկ և Որթոդոքս, ծագման և կազմակերպութեան պայմաններն էլ տարբեր են եղել, ուստի և տարբեր ձև ու կերպարանք ստացել։ Այդ եկեղեցիները ծագել են և կազմակերպուել Հռոմէական պետութեան մէջ, Հռոմէական պետական բաժանումների և նրանց յարաբերութեան իրողութիւնից մեծագոյն չափով ազդուելով։ Եպիսկոպոսութիւններ, արքեպիսկոպոսութիւններ կամ մետրոպոլտութիւններ, պատրիարքութիւններ, կազմակերպուել են, յատկապէս, Դիոկղետիանոս Կայսեր պետական բաժանումների և նահանգների օրինակով և նոյն իսկ տարածականութեամբ նոյնացել երբեմն նահանգական կազմակերպութիւններին։ Կեսարիայի, Անտիոքի, Երուսաղէմի, Աղեքսանդրիայի արքեպիսկոպոսութիւններն ու պատրիարքութիւնները, յետագայում նաև Կ. Պոլսի, որպէս արեւելեան կայսրութեան մայրաքաղաքը, մանաւանդ արեւմտեանի անկումից յետոյ, արդիւնք են իրենց կեդրոններով և

ստորաբաժանումներով քաղաքական կազմակերպութեան։

Պապական իշխանութիւնը իւր միջնադարեան հզօրութեամբ ծագել և զարգանալ կարող էր միայն Հռոմում, որ պետութեան իսկական մայրաքաղաքն էր, բայց նաև լատինական քաղաքակրթութեան ենթարկուած ազգերի մայրաքաղաքը, անվիճելի հեղինակութիւն դարձած հետզհետէ կայսրութեան անկումից յետոյ յառաջ եկած շփոթութեան մէջ։ Կայսրութեան դիրքն ու հեղինակութիւնը պատմական բերմունքների ընթացքով և պապերի հետեւողական ձգտումներով և ջանքերով անցնում է Հռովմէական Պապական Աթոռին։

Գ.

Հայաստանը ազգովին քրիստոնէութիւն ընդունելու օրերին առանձին պետութիւն էր։ Ճշմարիտ է, դաշնակից հռոմէական պետութեան, բայց ուրոյն կազմակերպութեամբ, լեզուով, օրէնքներով կամ աւանդութիւններով։ Նա կազմուած էր բազմաթիւ նախարարութիւններից (սատրապներ), որոնք թագաւորի գերիշխանութեան տակ մի միութիւն էին կազմում. Նոյն բնաւորութեամբ կամ հետեւողութեամբ կազմակերպւում է և Հայաստանեայց Եկեղեցին։ Մեր եկեղեցական ժողովների մէջ եպիսկոպոսութիւնները յիշւում են նախարարութիւնների անունով. եպիսկոպոս տանն Սիւնեաց, եպիսկոպոս տանն Արծրունեաց, եպիսկոպոս տանն Մամիկոնեանց և այլն։ Ինչպէս թագաւորութեան գլուխը արքան է, Հայոց հայրապետութեան գլուխն էլ կաթողիկոսն է, եպիսկոպոսներին իրար բերող իշխանաւորը, միութեան կապը։

*
* *

Յայտնի է, որ մեր նախարարական տները իրենց իշխանական բարձերն ունէին և աստիճանաւորութիւնները և ըստ այնմ իրենց զօրքերի քանակը պետական բանակի մէջ։ Մամիկոնեանց տունն, օրինակ, հինգերորդ բարձն ունէր, ինչպէս և միւս նախարարութիւններն էլ իրենց յատուկ պատուոյ տեղը արքայական խնջոյքների և հանդէսների մէջ։ Այս աստիճանաւորութիւնն ու կարգաւորութիւնը նուիրականացած էր Սասանեանների ժամանակ՝ նաև Արշակունեաց անկումից յետոյ։

Մատենագրական նախնական տեղեկութիւններ կան մեր հին մատենագիրների մէջ, բայց լիակատար տեղեկութիւն այն մասին հաղորդած պիտի լինի Ղեւոնդ Երէց պատմագիրը Ը. դարում, տարաբաղդաբար այդ մասով կորած։ Բայց նրանից օգտուել է Սա-

մուէլ Կամրջաձորեցին ԺԲ. դարում, նոյնպէս կորած։ Իսկ սորանից՝ Մխիթար Այրիվանեցի ԺԳ. դարի երկրորդ կիսում և սորանից էլ Օրբէլեան պատմիչ նոյն դարի վերջերին։ Մխիթար Այրիվանեցին իւր Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութեան մէջ յիշատակում է և հայ եպիսկոպոսութիւնների դասաւորութեան կարգը, Հայրապետի կամ Կաթողիկոսի աջ և ձախ կողմին տասն և ութական աթոռները (*)։

Ահա մեզ պատմական ցուցումներ, հասկանալու Հայաստանեայց Եկեղեցու վարչական ձեւակերպութեան կամ Նուիրապետութեան ծագումն ու կազմութիւնը, բոլորովին ուրոյն, ազգային և քաղաքական կեանքի տուեալների հիման վերայ, և տարբեր հռոմէական պետութեան մէջ յառաջ եկած զարգացման ընթացքից։ Ի հարկէ իշխանական տների անկումից և կարգերի խանգարումից յետոյ, խանգարւում են և նուիրապետական դասաւորութիւններն ու կարգերը։ Հայրապետական աթոռի աստանդական վիճակով և Կիլիկիայում հաստատուելուց յետոյ, նոր կարգեր են հաստատւում, Մեծն Հայաստանի արքեպիսկոպոսների և հայրապետական աթոռի փոխ յարաբերութիւններով, որ բղխում էր դարձեալ մեր պատմական կեանքի տուեալներից և պարագաներից։

Դ.

Հայաստանեայց Եկեղեցին որոշ առանձնայատկութիւններ ունի նաեւ դաւանաբանական և ծիսական տեսակէտներով, որպէս հետեւանք նորա պատմական կեանքի։ Մինչեւ 451 թուի Քաղկեդոնի ժողովը քրիստոնէական եկեղեցիների մէջ դաւանաբանական խորութիւն չկար։ Արեւելքի մէջ երկու մեծ դպրոցներ կային. դոցանից մէկը Աղեքսանդրիայի դպրոցն էր, որ Գ. դարի սկզբից մեծ հեղինակութիւն էր սկսել վայելել, առաջնորդ ունենալով Կղեմէս Աղեքսանդրացու և մանաւանդ Որոգինէսի նման մեծ գիտնականը, որ հեղինակութիւն էր ոչ միայն քրիստոնեաների, այլ և հեթանոսների աչքում։ Բաւական է յիշել, որ նորան լսելու էին գալիս և հեթանոս փիլիսոփաներ, նոյն իսկ կայսերական տան անդամներ, ինչպէս Իուլիա Մամէա կայսրուհին էր։ Դ. դարի սկզբից մինչեւ Ե. դարի վերջերը Աղեքսանդրիայի դպրոցն ու եպիսկոպոսները կատարելապէս իշխող են և ուղղութիւն տուող քրիստոնէական մտայնութեան և դաւանական խնդիրների վերլուծութեան։ Նիկիոյ ժողովի մէջ յաղթանակեց Աթանաս Մեծ, դեռ եւս սարկաւագ լի-

(*) Մեր «Մխիթար Այրիվանեցի»։ Երուսաղէմ։

նելով, նոյն դպրոցի ներկայացուցիչը և յետագայում Աղեքսանդրիայի մեծ եպիսկոպոսը. Եփեսոսի ժողովի մէջ Կիւրեղ Աղեքսանդրացին, որոնց գրուածները թարգմանուեցան հայերէն և որդեգրուեցան նրանց դաւանաբանական բանաձեւերը հայերի կողմից։

Երկրորդ դպրոցը Անտիոքինն էր, նորա հետ կապուած նաեւ Մծբինի և Եդեսիայի դպրոցները, ասորա-հելլենիստական տարրերի ազգաբնակչութեան մէջ։ Այս դպրոցները նոյնպէս տուել են նշանաւոր անձնաւորութիւններ, որոնց մէջ յիշատակելի է Յոհան Ոսկեբերան, որ յետոյ Կ. Պոլսի պատրիարք եղաւ, Եփրեմ Ասորի և այլն. սրանց գրուածքները նոյնպէս թարգմանուեցան հայերէն և որդեգրուեցան որպէս աղբիւր ուղղափառ քրիստոնէութեան։ Բայց Անտիոքի դպրոցի աշակերտ էր և՛ Նեստոր, որ շեշտում էր Քրիստոսի մէջ մարդկային և աստուածային բնաւորութիւնների տարբերութիւնը և Մարիամին անուանում ոչ «աստուածածին»։ Եփեսոսի ժողովի մէջ 431 թուին դատապարտուեցաւ Նեստոր և յաղթանակեց Կիւրեղ Աղեքսանդրացին իւր «մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» բանաձեւով, որ և Հայաստանեայց եկեղեցու Քրիստոսի մարդեղութեան դաւանաբանական հասկացողութեան հիմնաքարը դարձաւ։ Կիւրեղ Աղեքսանդրացու Պարապմանց և Գանձուց գիրքը մեր հայերի դաւանաբանական ուղղութեան և ինքնապաշտպանութեան ամրոց էր այնուհետեւ դարերի ընթացքում, ընդդէմ Բիւզանդական և Հռոմէական եկեղեցիների յարձակման։

Եփեսոսի ժողովի յաղթանակը Աղեքսանդրիայի դպրոցի յաղթանակն էր. ամբողջ արեւելեան քրիստոնէութիւնը բացարձակ մեծամասնութեամբ հետեւող էր Եփեսոսի դաւանութեան, երբ բիւզանդական կայսերական և պապական իշխանութիւնների փոխադարձ հասկացողութեամբ և դաշնակցութեամբ գումարուեցաւ Քաղկեդոնի ժողովը 451 թուին, ընդունելով Լեւոնի, արեւելեան հասկացողութեան հակառակ, դաւանական գրութիւնը, որ ընդունում էր երկու բնութիւնների՝ մարդկային և աստուածային, առանձնայատկութիւնները իրենց տարբեր ներգործութիւններով, մեր հայրերի կողմից նեստորականութեան նմանեցրած յաճախ։ Կայսերական քաղաքականութեան նշանաբանը դարձաւ այնուհետեւ Լատիններից իւրացրած քաղկեդոնական դաւանութիւնը, հալածանքի ենթարկելով այն եկեղեցիները, որոնք հաստատ և հաւատարիմ մնացին նախնի աւանդութեան, յատկապէս կամենալով խորտակել Աղեքսանդրիայի զօրութիւնն ու հեղինակութիւնը, որի

առաջ սկսել էր նսեմանալ կայսերականը։ Պապականութեան համար նոյնպէս քաղաքական կարեւոր հանգամանք էր Աղեքսանդրիայի անկումը իր բարձրութիւնից, որ մեծ խոչնդոտ էր իր սեպհական հեղինակութեան և ձգտումներին։

Ե.

Մենք խուսափում ենք դաւանաբանական — փիլիսոփայական նրբութիւնների և տարբերութիւնների մէջ մտնել, անհասկանալի չդառնալու համար մեր ընթերցողներից շատերին. բայց եթէ յիշատակում ենք այս խնդիրները, պատճառն այն է, որ մեր եկեղեցու բռնած տարբեր դիրքը նորա ուրոյն և անկախ կեանքի յատկանիշներից մէկը դարձաւ։ Հայաստանեայց Եկեղեցին հաւատարիմ է միմիայն նախնական, երեք տիեզերական ժողովներին, մերժելով Քաղկեդոնի և յետագայ ժողովների որոշումները։ Ընդունէինք քաղկեդոնականութիւնը, Հայաստանեայց Եկեղեցին ոչ միայն իր անկախութիւնը կը կորցնէր, այլ և հայութեան մի ստուար մասը ձուլուած և միացած բիւզանդականութեան, ինչպէս այդ կատարուեցաւ յունական բաժնի քաղկեդոնական հայութեան նըկատմամբ։

Հայաստանեայց Եկեղեցու առանձնայատկութիւնների մէջ պէտք է յիշել և այն սովորութիւնները, որ յատուկ էին արեւելեան քրիստոնէութեան մինչեւ Ե. դարը, որպիսին է Ծնունդը և Մկրտութիւնը միասին կատարելու սովորութիւնը. մինչդեռ Որթոդոքս Եկեղեցին հետեւել է հռոմէական աւանդութեան՝ Ծնունդը Դեկտ. 25-ին առանձին կատարելով, և Մկրտութիւնը Յունուար 6-ին մեզ հետ։ Բողոքական և Աւետարանական եկեղեցիներն էլ հետեւում են Հռոմի աւանդութեան, որ ծնել են կաթոլիկ Եկեղեցու ծոցում։

Այս բոլորի վերայ աւելանում է մեր լեզուի, գրականութեան, արուեստի և մշակոյթի նոյնութիւնը եկեղեցու հետ, որին յատուկ յօդուած կը նուիրենք։

Ահա ինչո՞ւ Հայաստանեայց Եկեղեցին թանգ է մեզ համար։ Նա մերն է, մեր ազգային եկեղեցին և մեր ազգային ամենամեծ ստեղծագործութիւնը, ամենամեծ ժառանգութիւնը մեր նախնեաց թողած։ Նորա պահպանութիւնը, կարգաւորութիւնը, յառաջադիմութիւնն, Սփիւռքի Հայութեան պահպանութեան երաշխիքն է։

«Թագաւո՛ր երկնաւոր, միշտ անշարժ պահեա՛ զաթոռ Հայկազնեայց»։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ. Դեկտ. 1939.

ԼԷ.

ԵԿԵՂԵՑՒՈՅ ԿՈՉՈՒՄԸ

(Պատմական լուսոյ մէջ)

Բոլոր կրօնների պսակը քրիստոնէութիւնն է։ Որովհետեւ կրօններից ոչ մէկը բարոյական կատարելութեան այնպիսի գաղափար չէ տուել, ինչպէս քրիստոնէութիւնը։ Այդ կատարելութեան թանձրացեալ պատկերը Յիսուսի անձնաւորութիւնն է, իսկ մշտական կենդանարար աղբիւրը Նորա աւետարանը։ Մարդկութեան առաջ դրուած հոգեւոր այս անգնահատելի գանձը իւր իսկութեամբ և մաքրութեամբ ըմբռնելու համար՝ թողնենք քրիստոսաբանական վէճերն ու դաւանաբանական ձեւակերպութիւնները, որ ոչ մասնագէտների համար ըստ ամենայնի հասկանալի չէ, և մեր հոգու մէջ պատկերացնենք միայն աւետարանի Յիսուսը և Նորա յարաբերութիւնն առ Աստուած։ Եւ ահա մեր առաջ կանգնած կը տեսնենք մարդկանցից սուրբն ու մաքուրը, որ երբ և իցէ ապրել է այս մեղաւոր երկրագնդի վերայ։ Ի՞նչ է Նորա մեծութեան, գերբնականութեան խորհուրդը բնականութեան մէջ, եթէ կարելի է այսպէս արտայայտել։ Միմիայն Նորա կրօնական զգացմունքը, որով Նորա շունչն ու հոգին, կամքն ու գործը, Նորա ամբողջ էութիւնը ստորադրուած էր Աստուծոյ կամքին՝ այսինքն բացարձակ արդարութեան, սիրոյ և ճշմարտութեան չափին։ Կրօնն ու բարոյականութիւնը, մարդասիրութիւնն ու կարեկցութիւնը անքակտելի միութիւն են կազմում Նորա անձնաւորութեան և քարոզած աւետարանի մէջ. սէր առ Աստուած և առ ընկերը՝ ահա քրիստոնէական կրօնի էութիւնը։

Քրիստոնէութեան մարմնացումն ու ներկայացուցիչը պատմութեան մէջ եկեղեցին է։ Քրիստոս ինքը կազմակերպուած եկեղեցի չէ հիմնել, բայց բնական էր Նորա այդպիսի զարգացումը։ Եկեղեցին իւր նուիրապետական և համայնական կազմակերպութեամբ, իւր կրթական և բարեգործական հաստատութիւններով, քարոզով և աստուածպաշտութեամբ... միայն մի բարձրագոյն նպատակի արդիւնք է,— սրբագան մի մարդկութիւն դաստիարակել

արժանի Յիսուսի անուան, արժանի Նրա եղբայրակցութեան և Աստուծոյ որդեգրութեան։ Նա աւետարանական ճշմարտութիւնների մատակարարն է հոտի համար, և ձգտում այդ սկզբունքները կեանքի հիմնաքար դարձնել։ Ինչպէս քրիստոնէութեան Հիմնադրի առաջին խօսքը ապաշխարութեան կամ ներքին վերածնութեան քարոզն էր, հոգեւոր փրկութեան և յաւիտենական կեանքի աւետիսը, այդպէս եղել է և գաղափարական եկեղեցւոյ համար և պիտի լինի, եթէ իւր նպատակից չէ շեղւում։ Նա կամենում է ճշմարտութեան անշէջ լապտեր դարձնել մարդկային հոգին, որպէս զի արժանի լինի վայելելու ամենաբարձր բարիքը՝ ազատութիւնը, «Ուր Հոգի Տեառն է, անդ ազատութիւն է», իսկ Տիրոջ հոգին ճշմարտութեան հոգին է։

Ինչպէս Քրիստոսի անձնաւորութեան մէջ կրօնն ու բարոյականութիւնը, մարդասիրութիւնն ու կարեկցութիւնը անքակտելի միութիւն են կազմում, այդպէս և քրիստոնէական կրօնի մէջ։ Եւ այս իրողութիւնը բղխում է մարդկային հոգւոյ խորին գիտակցութիւնից. կրօնից կտրուած բարոյականութիւնը մի տեսութիւն է միայն մեր մտքի համար, կեանքի ծառից կտրուած մի ճիւղ, որ ի վերջոյ չորանալու է դատապարտուած։ Ոչ նիւթապաշտութիւնը, ոչ նրանից աւելի նուրբ նատուրալիզմը, ոչ մոնիզմը, ոչ օգտաւէտութեան վարդապետութիւնը կամ բանականութեան վերայ հիմնուած էթիկան կարող են բարոյական սկզբունքները մեր հոգեւոր կեանքի անմիջական, կենդանի տարր դարձնել. նոքա գործ չունին մեր հոգւոյ զգացմունքների հետ, որոնք բարոյական շարժման հիմքն են կազմում։ Բարոյականութիւնը պէտք է լինի ինքնաբուղխ, ինչպէս վճիտ աղբիւրը։ Պէտք է մարդկային հոգու մէջ այն վիճակն ստեղծել, որ բարոյական գործն ու միտքը ինքնաբերաբար երեւան գան։ Այդ վիճակն է կրօնական արտայայտութեամբ հաւատ առ Աստուած, սէր դէպի ընկերը և յոյս բարւոյ, գեղեցկի և ճշմարտի թագաւորութեան. որոնք մեծ կամ փոքր չափով գոյութիւն ունին մեր սրտի խորքում։

Մարդկային հոգւոյ արժանաւորութիւնն ու բարոյական մաքրութիւնը եկեղեցւոյ գոյութեան նպատակ է. բարոյական մաքրութիւն ոչ սովորական հասկացողութեամբ, այլ ամբողջ ներքին մարդու, մտքի, զգացման, կամքի։ Եթէ վերարտադրենք մեր յիշողութեան մէջ հեթանոսական զգայական, եսական և անբարոյական կեանքը քրիստոնէութեան ծագման օրերին և այդ աղտեղութեան ծովի մէջ հաւատացեալների առաքինութեան, սիրոյ և եղբայրու-

թեան մշտադալար կղզին, այն ժամանակ պարզ կը լինի, թէ ի՛նչ է քրիստոնէութիւնը, եկեղեցին և նորա կոչումը։ Նա կեանքի աղն է, որ կամենում է քաղաքակրթութիւնն ազատել ապականութիւնից, կամենում է մեղմել և ոչնչացնել մարդկային եսականութիւնը, որ անհատական և հասարակական բնաւորութիւն կրող չարութեան, անիրաւութեան աղբիւրն է։ Այդ հեթանոսութիւնը կայ և այժմ քրիստոնեայ ազգերի և պետութիւնների մէջ և պէտք է լինի ապագայում, քանի որ մարդկային հոգու մէջ բարին ու չարը, լաւ և վատ հակումները հաւասարապէս տեղ ունին։ Եւ ահա այստեղից բղխում է եկեղեցւոյ կրօնական—բարոյական դաստիարակութեան սրբազան կոչումը, ոչ միայն թուլացնել կամ ոչընչացնել մեր վատ հակումները, որոնք մեղքի կամ չարութեան արմատն են, այլ և զօրացնել կրօնական այն զգացմունքը, որ մարդուն դէպի Աստուծոյ որդեգրութեան է մղում, բարոյական եւ մարդասիրական կեանքի մկրտութեան աւազանը։ Մարդկային հոգին թանգ է ըստ աւետարանական քարոզութեան և եկեղեցին իբրև իմաստուն վաճառական ծախսում է իւր բոլոր ինչքը այդ թանկագին մարգարիտը ձեռք բերելու համար։ Նա գործադրում է դաստիարակչական բոլոր միջոցները՝ կենդանի խօսքն ու աւետարանական քարոզը, հովուական և սիրոյ գործունէութիւնը, աստուածպաշտութիւնը, համայնական կազմակերպութիւնը, գիրն ու գրականութիւնը, արուեստն ու գիտութիւնը, դպրոցն ու բարեգործական հաստատութիւնը, որպէս զի իբրև բարի և անձնուէր մշակ ոչ միայն լրիւ պահէ իւր Տիրոջ հօտը, այլ և որոնէ և գտնէ նաև կորուսեալ ոչխարին։

Այս մտքով է՛ նա մաքառել և պիտի մաքառէ անհատական և սոցիալական անբարոյականութեան դէմ, վաշխառութեան, արբեցութեան, անառակութեան, բռնութեան և աղքատութեան դէմ։ Քրիստոնէութիւնը տնտեսական վարդապետութիւն չէ և ոչ քաղաքական սիստեմ, այդ նորա կորուստը կը լինէր, եթէ կապուած լինէր յեղյեղուկ ժամանակի երևոյթների հետ, բայց հաւատացեալին անհատապէս և ամբողջութեանն իբրև եկեղեցի մղել է այնտեղ, ուր տնտեսական վիճակը նիւթական և բարոյական թըշուառութիւն է ստեղծել մերձաւորի համար։ Եկեղեցւոյ համար նիւթական հարստութիւնն ու բարեկեցութիւնը վերջնական նպատակ չէ, նորա համար աւելի բարձր բարիք կայ քան հացը, հոգեւոր-քաղաքակրթական բարիքը, «ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ և բանիւն Աստուծոյ», բայց նա աչքից փախցնել չէր կարող,

որ աղքատութիւնը, իրաւազուրկ վիճակը փորձութիւններ է դնում մարդու առաջ, որ յաճախ դէպի կորուստ է տանում: Այսպիսով մենք մօտենում ենք եկեղեցու երկրորդ մեծ կոչման, որ պատմութեան մէջ սիրոյ գործունէութիւն անունն է ստացել, սերտ կապուած առաջնի հետ և կարելի է ասել նորա հետեւանքը:

Բ.

Մենք տեսանք, որ Քրիստոսի անձնաւորութեան, ինչպէս և քրիստոնէութեան մէջ, սէրը դէպի մերձաւորը անբաժան էր բուն կրօնականից: Կրօնի էութիւնը սէրն էր առ Աստուած և առ ընկերը: Զլինէր այդ նախադասութիւնը, աւետարանի մէջ բազմաթիւ ասացուածքներ, մտքեր և առակներ կարող ենք գտնել նոյն գաղափարը հաստատող: Քրիստոնեան պէտք է անսահման գթութեան կատարելութեան դիմէ. «Եղերուք գթածք, որպէս և երկնաւոր Հայրն ձեր գթած է», պէտք է անկարեկից չանցնէ օգնութեան կարօտի մօտով, քաղցածին պիտի կերակրէ, մերկին հագցնէ, բանտարկեալին մխիթարէ... և այդ բոլորը կրօնական սրբազան պարտաւորութեան զգացմունքով; որպէս թէ Տիրոջն անէր: Քրիստոնէական կրօնի շունչն ու հոգին գթութեան և եղբայրութեան այս սէրն է՝ առ Աստուած ունեցած որդիական վստահութեան և անձնուիրութեան հետ: Եւ եկեղեցին սիրոյ այս առաքելութիւնը կատարեց պատմութեան մէջ չտեսնուած և չլսուած անօրինակ եռանդով՝ հէնց իւր ծագման առաջին օրերից, յետագայ սերունդների համար նմանողութեան գեղեցիկ օրինակ տալով: Նա հանդէս է գալիս որպէս հաւասարների, եղբայրների մի միութիւն, շաղկապուած գաղափարի և սիրոյ կապակցութեամբ: Եթէ եկեղեցին կրօնական և բարոյական ճշմարտութիւնների քարոզութեամբ իւր հաւատացեալների հայեացքը դէպի երկնայինն ու վսեմն էր ուղղում, գթութեան եւ սիրոյ գաղափարով նա կապում էր շրջապատի եւ աշխարհի հետ: Քրիստոնէական կրօնի սոցիալական կողմն էր այս, որ այնքան բարերար արդիւնք ունեցաւ պատմութեան ընթացքում:

Եկեղեցու համար գործունէութեան հնոցը, ուր անհատը դարբնւում էր ապրել ընդհանուրի համար, ինչպէս և ամէնքը մէկի համար համայնական կազմակերպութիւնն էր: Կրօնական ոչ մի սիստեմ, սոցիալական կամ պետական ոչ մի կազմակերպութիւն այնպիսի համայնականութիւն չի արտադրել, որպիսին եկեղեցին իւր գոյութեան առաջին դարերում: Այստեղ սէրը արտայայտւում

էր իւր իսկական մաքրութեամբ ոչ միայն իբրեւ անձից անձի ներգործութիւն, այլ և համայնական ձեւով։ Համայնական կեանքի կեդրոնն է կազմում աստուածպաշտութիւնն ու կենդանի քարոզը, որով հաւատացեալների ժողովը «դաստիարակութեան և ազնուութեան վարժոց» էր դառնում նորա անդամների համար։ Սիրոյ ճաշը իւր շուրջն էր խմբում բոլոր հաւատացեալներին անխտիր։ Աղքատներն ու աշխատանքի անընդունակները, որբերն ու այրիները համայնքի հովանաւորութիւնն էին վայելում եպիսկոպոսների և նորա սարկաւագների ձեռքով։ Ամբողջ համայնքը մի ընտանիք է կազմում, որի հոգեւոր հայրը եպիսկոպոսն էր բառի իսկական նշանակութեամբ, իսկ միւսներն էլ քոյրեր և եղբայրներ։ Աղքատների և կարօտեալների խնամատարութեան գործը իւր ընտիր կազմակերպութեամբ և բարոյական տեսակէտներով յառաջ է եկել քրիստոնէական եկեղեցւոյ մէջ։ Այստեղ միայն առաջին անգամ կարեկցութեան և գթութեան գործը դառնում է համայնական կեանքի մասը։ Յատուկ պաշտօնեաներ նուիրուած են գթութեան գործին, նրանք ոչ միայն նիւթական օգնութիւն են հասցնում, այլ և բարոյական դաստիարակութիւն ներշնչում։ Նոքա այցելում են հիւանդներին, բանտարկեալներին, գթութեան արժանի այրիներին։ Եպիսկոպոսի յատուկ հսկողութեան տակ խնամւում են որբերը, կրթւում և մի մի արհեստ են սովորում՝ ժամանակին իրենց հացը վաստակելու համար. աղջիկ որբերը չափահաս դառնալուց յետոյ, եպիսկոպոսի հոգացողութեամբ ամուսնանում են քրիստոնեայ երիտասարդների հետ։ Հեռաւոր համայնքներն իսկ օգնում են իրար. Կարթագինէի Կիպրիանոս Եպիսկոպոսը 100,000 սեստերցիուս է ուղարկում Նումիդիայի եպիսկոպոսներին գերեալներին փրկելու համար։ Հռոմի Դիոնեսիոս եպիսկոպոսը մխիթարութեան թուղթ և դրամ է ուղարկում նոյն նպատակով Կեսարիայի եկեղեցուն։

Համայնական գթութեան այս զարմանալի շրջանին հետեւում է քրիստոնէական բարեգործական եւ կրթական հաստատութիւնների ծաղկման շրջանը Գ. դարից սկսած։ Քրիստոնէութեան պետական կրօն դառնալուց յետոյ, երբ տասնեակ հազարներով աճում էին եպիսկոպոսների հօտի թիւը, անկարելի էր այլ եւս անհատական այնպիսի խնամք տանել, ինչպէս հնարաւոր էր փոքրիկ համայնքների մէջ։ Հաստատութիւնների երեւան գալուն շատ նպաստում են և վանքերի սկզբնաւորութիւնն այդ դարում, ուր կեդրոնանում են հաստատութիւնները։ Փոխանակ անհատապէս խնամելու ընդարձակ եպիսկոպոսութեան մէջ ցրուած աղքատներին, կարօտ-

եալներին, հիւանդներին, որ անկարելի էր, հանդէս են գալիս հաստատութիւններ, այնտեղ են խմբում նրանց աւելի հեշտ կերպով օգնելու համար։ Դորանով ի հարկէ անհատական և համայնական խնամատարութիւնը չի վերջանում, բայց քրիստոնէական գթութեան գործը կեդրոնանում է հաստատութիւնների մէջ։ Ստեղծւում է որոշ պաշտօնէութիւն եպիսկոպոսի անմիջական հսկողութեան տակ՝ հաստատութիւնները կառավարելու համար։ Հիւանդանոցների համար յատուկ հիւանդապահներ են պատրաստում։ Աղքատների խնամատարութեան գործը դարձել եպիսկոպոսների և նրա սարկաւագների ձեռքին էր։ Հազարաւոր և տասնեակ հազարաւոր տառապեալներ, այրիներ, որբեր, հիւանդներ, անդամալոյծներ, խեղանդամ և աշխատանքի անընդունակ մարդիկ վայելում են եկեղեցու շնորհքը։ Դ. և Ե. դարերը հռովմէական պետութեան քայքայման շրջանն էր, անընդհատ պատերազմները, բարբարոսների արշաւանքները ժողովրդին վերին ծայր աղքատութեան էին հասցրել։ Գերիների թիւը հազարներով էր աճում։ Այսպիսի պայմանների մէջ եկեղեցին իւր եպիսկոպոսներով, իւր պաշտօնէութեամբ և հաստատութիւններով գորովագութ և խնամածու մայր է հանդիսանում աղքատութիւնն ու նորա հետեւանքները մեղմելու, գերիներին փրկելու և սգաւոր ու վշտաբեկ սրտերն ամոքելու։

Քրիստոնէական հաստատութիւնների պսակը ասպնջանոցն էր. պանդուխտները, աղքատները, հիւանդները, որբերն ու այրիները և ամէն տեսակի տառապեալներ այնտեղ ոչ միայն օթեւան, այլ և սէր ու խնամք էին վայելում։ Ասպնջանոցից են ծագում հետզհետէ և միւս հաստատութիւնները՝ հիւրանոցները, հիւանդանոցները, այրիանոցները, որբանոցները, ծերունիների և ծննդկանների ապաստանարանները։ Որոշ վանքերում խնամք էին վայելում և հոգեւոր կրթութիւն ստանում կոյրերը, որոնք հոգեւոր երգեր և սաղմոսներ էին սովորում և երգում հաւատացեալների և ուխտաւորների առաջ։ Հոգեկան հիւանդներն եւս ունէին իրենց ապաստանարանները։ Նոյն իսկ ընկած կանանց համար հաստատութիւններ կային, ուր նոքա ապաշխարում էին և քրիստոնէական սէրը նրանց փրկութեան համար եւս հոգում էր։ Հասարակութիւնից քշուած բորոտներն իրենց ուրկանոցներն ունէին։

Եկեղեցին այսպիսով իւր նիւթական և բարոյական ամբողջ կարողութիւնը նուիրել էր սիրոյ գործունէութեան. կտակներից, մասնաւոր նուիրաբերութիւններից, կալուածների եկամուտներից

ստացուած արդիւնքը գործադրւում էր այս և սորա նման նպատակների համար։ Եկեղեցին իւր պաշտօնէութեամբ բաց ճակատով հօտին ասել կարող էր. «Եւ զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»։ Եկեղեցւոյ ականաւոր հայրերը յատկապէս օրինակ էին հանդիսանում սիրոյ գործունէութեան և նուիրաբերութեան մէջ։ Բարսեղ Կեսարացին իւր ամբողջ կարողութիւնը աղքատներին նուիրեց և հաստատեց Կեսարիային մօտ իւր նշանաւոր ասպնջանոցը. Եփրեմ Ասորին մի հիւանդանոց հիմնեց Եդեսիայում 300 մահճակալներով, Հայաստանում Ներսէս մեծ բարեգործական և կրթական հաստատութիւնների ցանցով պատեց մեր երկիրը։ Ոսկեբերան երկու ասպնջանոց հիմնեց Պոլսում և 7700 աղքատ էր խնամում։ Հռոմի և ուրիշ եպիսկոպոսների խաղացած դերը բարբարոսների արշաւանքների ժամանակ յօգուտ ժողովրդի, նրանց ցոյց տուած օգնութիւնը գերեալներին, յայտնի է ամենքին։ Եկեղեցին իւր եպիսկոպոսներով պաշտպան է հանդիսացել թոյլերին բռնաւորների և կայսրների դէմ, ահագին բարերար ազդեցութիւն է ունեցել պետական օրէնսդրութեան վերայ, խաղաղութեան միջնորդ է հանդիսացել արիւնհեղութեան առաջն առնելու։

Գ.

Եկեղեցւոյ երրորդ կոչումը կրթական եւ քաղաքակրթական գործունէութիւնն է: Այս կոչումն էլ սերտ կապուած է նախկին կոչումների հետ։ Քրիստոնէական ճշմարտութիւնները հօտի մէջ հաստատելու համար ի սկզբանէ անտի գործադրւում են քաղաքակըրթական երկու կարեւոր գործոնները՝ գիրն ու կենդանի խօսքը։ Առաքեալները աւետարանը բերանացի քարոզելուց յետոյ՝ հեռաւոր քաղաքներից թղթեր էին գրում համայնքների մէջ սպրդած տարաձայնութիւնները փարատելու կամ թիւրիմացութիւնները պարզելու համար։ Աւետարաններ են գրւում Յիսուսի գործի և վարդապետութեան նկարագրութեամբ։ Յետ առաքելական շրջանի և եկեղեցական հայրերը, ջատագովները ահագին մատենագրութիւն են ստեղծում եկեղեցական և աւետարանական կեանքի հետ կապուած խնդիրների վերաբերութեամբ։ Եկեղեցւոյ հօտի համար ամենամեծ դպրոցը, ինչպէս տեսանք համայնքն էր. բայց առաքելական շրջանից արդէն յատուկ պաշտօնեաներ կային, որոնք համայնքին ուսուցանում էին քրիստոնէական կրօնը և վարդապետներ են կոչւում։ Իսկ երկրորդ դարու վերջերին հանդէս են գալիս նորավարժից կրթարանները կամ դպրոցները։

Քաղաքակրթական միջոցների գործադրութիւնն ու զարգացումը եկեղեցւոյ մէջ իրերի ընթացքի հետ կապուած բնական երեւոյթ էր: Քրիստոնէութիւնն ինքը գրի և բարձր քաղաքակըրթական կրօնս էր և կոչում էր ստացել թագաւորելու ժամանակի քաղաքակիրթ ազգերի սրտի մէջ: Ուրեմն պիտի կարողանար պարզել իւր ճշմարտութիւնները նաեւ փիլիսոփայական կրթութիւն ստացած հասարակութեան պատշաճ լեզուով: Այստեղից են յառաջ գալիս եկեղեցական—գիտնական նշանաւոր դպրոցները Աղեքսանդրիայում, Անտիոքում, Եդեսիայում և այլ կեդրոններում: Եկեղեցւոյ գիտնական ներկայացուցիչները իւրացնում են յունական գիտութիւնն ու փիլիսոփայութեան մեթոդները քրիստոնէական աստուածաբանութիւն և աշխարհայեացք ստեղծելու համար: Նոյն իսկ հեթանոս երիտասարդներ ու փիլիսոփաներ լսում էին Օրիգինէսի դասախօսութիւններն Աղեքսանդրիայում: Երկրորդ դարի վերջերից սկսած գիտութիւնը դաշնակից էր Քրիստոնէութեան յանձին եկեղեցական նշանաւոր հայրերի: Գիտութեան պահանջի հետ յառաջ է գալիս և եկեղեցական մատենադարանը: Առաջին քրիստոնէական մատենադարանը ըստ Եւսեբիոսի եկեղեցական պատմութեան Երուսաղէմինն էր՝ Աղեքսանդր եպիսկոպոսի ձեռքով հիմնուած Գ. դարու առաջին քառորդում: Երկրորդ և աւելի նշանաւորը Կեսարիայինն էր, որից օգտուելով Եւսեբիոսը գրեց իւր եկեղեցւոյ նշանաւոր պատմութիւնը: Բոլոր յայտնի եպիսկոպոսութիւններն էլ հետեւում են այս օրինակին: Հռոմի դիւանի սկզբնաւորութիւնը չորրորդ դարն է համարւում:

Եկեղեցին իւրացնելով յունական փիլիսոփայութիւնն ու գիտութիւնը, միւս կողմից ինքը բարբարոս ազգերի համար նոր քաղաքակրթութիւն, գիր ու գրականութիւն է ստեղծում: Սլաւոնական ազգերի, գերմանացիների, անգլիացիների գրականութեան սկզբնաւորութիւնը կապուած է քրիստոնէութեան քարոզութեան հետ: Սլաւոնական ազգերի, ինչպէս և Հայոց, Վրաց գրերի գիւտը կատարուել է եկեղեցւոյ պաշտօնեաների ձեռքով: Գերմանական գըրականութեան ամենահին յիշատակարանը Ս. Գրքի թարգմանութիւնն է. նոյնն է և Հայոց համար: Եկեղեցին է, որ պատմութեան ասպարէզի վերայ նոր դուրս եկած ազգերի մէջ քրիստոնէութեան տարածման հետ՝ հաստատում է յունական քաղաքակրթութեան և արուեստի մնացորդները, թարգմանում է Պղատոնի, Արիստոտելի և Նոր պղատոնական այլ և այլ փիլիսոփաների երկերը և աւանդում յետագայ սերունդներին: Այս քաղաքակրթական գործունէու-

թեան մէջ շատ մեծ դեր են կատարում վանքերը, դառնալով ժամանակի գիտութեան, արուեստի և կրթութեան օրրաններ։ Եկեղեցու դաստիարակչական և քաղաքակրթական ներգործութեան շնորհիւ հետզհետէ մեղմանում են բարբարոս ազգերի բարքերը և եւրոպական ներկայ քաղաքակրթութեան հիմքը դրւում։ Եկեղեցին իր վանքերով, յատկապէս արևմուտքում, առաջնորդ է եղել նաև աշխատասիրութեան, նիւթական կուլտուրայի և երկրագործութեան։

Քրիստոնէական եկեղեցու բարերար ազդեցութիւնը ոչ պակաս երևում է արուեստի զարգացման մէջ: Ընդհանրապէս կրօնը հոգևոր կեանքի, քաղաքակրթութեան և արուեստի կենսատու երակն է։ Հին քաղաքակիրթ ազգերի՝ Բաբելացիների և Եգիպտացիների, յատկապէս Յունաց արուեստի պատմութիւնը շատ անհերքելի և պարզ ապացոյցներ է տալիս այս մասին։ Յունական արուեստի՝ ճարտարապետութեան և արձանագործութեան ամենահրաշալի արտադրութիւնները կրօնական են՝ տաճարներ, աստուածների և աստուածուհիների արձաններ։ Նոյնպիսի սերտ կապ նկատւում է բանաստեղծութեան, բեմական արուեստի և կրօնի մէջ։ Բայց շատ հեռու չերթանք. մարդկութեան ամենամեծ հանճարներից մէկը՝ Գեօթէն հաստատում է, թէ «մարդիկ միայն այնքան ժամանակ ստեղծագործող են բանաստեղծութեան և արուեստի մէջ, որքան նրանք կրօնական են, հակառակ դէպքում նմանող են կամ հնի կրկնող»։

Կրօններից ազնուագոյնն ու բարձրագոյնը բացառութիւն չպէտք է կազմէր. և յիրաւի, արուեստի, ինչպէս և քաղաքակրթութեան պատմութեան մէջ քրիստոնէական տարրը ամենախոշոր տեղն է բռնում։ Եւրոպական ներկայ քաղաքակրթութեան մասին կարելի է որպէս քրիստոնէական քաղաքակրթութեան մասին խօսել։ Եւ այդ հասկանալի է. ներքին և հոգևոր կեանքում քրիստոնէական կրօնի կատարած էական դերը պէտք է արտափայլէր և թանձրանար արուեստի և քաղաքակրթութեան մէջ։ Սկզբում քրիստոնէական արուեստը, ինչպէս ցոյց են տալիս կատակոմբաների յիշատակարանները կրում են հեթանոսական արուեստի հետքեր, նոյնը կարելի է ասել ճարտարապետութեան և մանրանկարչական արուեստի մասին։ Բայց քրիստոնէութեան յաղթութեամբ նրա արուեստն էլ իր բոլոր ճիւղերով ինքնուրոյն բնաւորութիւն է ստանում։ Արուեստի թագուհին, ճարտարապետութիւնը հրաշալիքներ է ստեղծել. այլ և այլ ոճերով, Յուստինիանոսի Այա-Սոֆ-

խան և Վենետիկի Ս. Մարկոսը, Կեօլնի գոմը, և Վիեննայի Ս. Ստեփանոսը, Փարիզի Նոտր Դամը, Հռոմի Պօղոս-Պետրոսը, Պետերբուրգի Իսակիեվսկի սաբորը: Զուարթնոցը, Երերոյքի տաճարը Հայոց մէջ և Անիի մայր եկեղեցին և այլ քրիստոնեայ ազգերի բազմաթիւ տաճարներ, որոնց անունների յիշատակութիւնը միայն երեսներ կարող էր բռնել, — յաւիտենական կոթողներ են քրիստոնէական եկեղեցւոյ բարձր ստեղծագործութեան: Նոյնը կարող ենք ասել նկարչութեան, երաժշտութեան և բանաստեղծութեան մասին: Յիշելով հին պատկերագրութիւնը, մոզայիկները Ռավեննայում և ուրիշ տեղերում, ինչպէս մանրանկարչական արուեստի արդիւնքները՝ վերածնութեան շրջանի դասական նկարչութիւնը և արձանագործութիւնը ըստ մեծի մասին կրօնական բովանդակութիւն ունին և օրինակելի կը մնան շատ երկար դարերի համար: Յիշենք միայն մի քանի վարպետներ՝ ինչպէս Ֆրա Անժելիկօ, Լէօնարդօ դը Վինչի, Միխել Անժելօ, Ռաֆայէլ, Ռուբէնս, Դիւրեր... որոնց անունը անջնջելի կերպով կապուած են քրիստոնէական արուեստի պատմութեան հետ: Մարդկային ներքին աշխարհի արտայայտութիւնը հոգւոյ հայելու՝ աչքերի մէջ, մադոնաների բարոյական գեղեցկութիւնն ու մաքրութիւնը քրիստոնէութեան կենդանի ներգործութեան արդիւնքն էր արուեստի վերայ: Ներկայ երաժշտութիւնն էլ իր ծագումով եկեղեցական է, նշանաւոր վարպետներից յիշենք Հենդելին իր «Մեսիասով», Բախին իր «Մատթէոս Պասիոնով», և «մոտետներով», Մոցարտին իր «րէքուիեմով», նոյն իսկ Վագներին իր «Պարսիֆալով»: Իսկ բանաստեղծներից, չյիշելով բուն քրիստոնէականները, ամենամեծ հանճարները իրենց սրտի խորքում կրօնական են, ոչ դաւանաբանական — եկեղեցական նշանակութեամբ, այլ ըստ էութեան. որովհետև բոլոր բարձր ստեղծագործութիւններն իսկապէս մեծ կամ փոքր չափով կրօնական են: Յիշենք միայն Դանտէն իր Աստուածային կատակերգութեամբ, Լեսսինգը իր Նաթան իմաստունով, Շիլլերը իր բովանդակ բարոյական իդէալներով, Գեօթէն իր «Ֆաուստով» և ընդհանրապէս տիեզերքի և հոգւոյ կապակցութեան մասին ունեցած հայեացքներով:

Դ.

Այս թռուցիկ ակնարկների մէջ արտայայտուած փաստերով տեսանք, որ եկեղեցին մարդկային զարգացման ամենախոշոր գործոններից մէկն է, եթէ չասենք ամենամեծը: Ընդհանուր եկեղեց-

ւոյ հետ նոյն գաղափարները ժառանգութիւն է ստացել և Հայոց եկեղեցին։ Մտքերի կրկնութիւն կը լինէր, եթէ վերարտադրէինք և մեր եկեղեցւոյ կատարած դերը՝ յառաջադիմութեան համար էական նշանակութիւն ունեցող այն երեք խնդիրներում՝ կրօնական—բարոյական դաստիարակութեան, սիրոյ կամ սոցիալական գործունէութեան եւ կրթական—քաղաքակրթական զարգացման մէջ։ Հայոց եկեղեցին պատմական բերմունքով աւելի կենդանի դեր է կատարել և անձնուիրութիւն ցոյց տուել դէպի իր հօտը։ Սորա վերայ պիտի աւելացնենք և նորա ազգային բնաւորութիւնն ու նշանակութիւնը իբրեւ ընդհանուր հայութեան գլխաւոր կապ և հոգեւոր գիտակցութեան մայր։ Գործել Հայոց ազգային դարաւոր եկեղեցւոյ այս պատմական առաքելութեան դէմ, նշանակում է սեպհական ձեռքերով քանդել իր տունը։ Եկեղեցւոյ այս սրբազան և նուիրական կոչումը պարզեցինք պատմական լուսով, թէեւ թռուցիկ այսպիսի յօդուածի մէջ, որովհետեւ ինչը կարող է աւելի ազդու և անաչառ խօսել, քան կրքերից ազատ պատմական փաստըն ու իրողութիւնը։ Ոչ մի բան չի կարող այնպիսի ուսուցիչ հանդիսանալ, ինչպէս պատմութիւնը, որ մարդկային կեանքի փորձառութիւնն է։ Իսկ ընդհանուր և մասնաւորապէս Հայոց եկեղեցւոյ ամբողջ պատմութիւնը աղաղակում է, թէ բարոյական և քաղաքակրթական մի վսեմ առաքելութիւն ունի կատարելու մեր եկեղեցին և այսուհետեւ։ Ամենայն յառաջադիմութիւն անցեալի հետ կապուած մի օղակ է, այս ճշմարտութիւնը երբեք չպէտք է մոռանանք։

Հայոց վերածնութեան խարիսխը քրիստոնէական աւետարանական վերակենդանութիւնն է, մեր դարաւոր և սրբազան ժառանգութեան բարեփոխութիւնն ու բարեկարգութիւնը, որովհետեւ առանց բարոյական վերածնութեան ամենայն մի շարժում հաստատուած է աւազի վերայ։ Որքան կեղտ, անմաքրութիւն կար մեր նոր շարժումների մէջ, որ բարոյական զգացմունքի պակասութեան արդիւնք էր։ Մինչեւ չսովորենք ապրել մեր հայրերի լուսագոյն զգացումներով, չսքանչանանք մեր նախնեաց ազնիւ ստեղծագործութիւններով, չհասկանանք կանգուն և աւերակ յիշատակարանների անմռունչ, բայց կենդանի լեզուն, բարոյապէս քաղաքակիրթ մի նոր ազգ դառնալ անկարող ենք։ Բարոյական կենդանութեան արմատը մարդկային հոգին է, իսկ այս նախադրեալը տանում է մեզ դէպի բարենորոգուած ազգային եկեղեցւոյ գաղափարը։

Ծածկել չենք կարող, մեր եկեղեցին կարօտ է բարեկարգու-

թեան և բարեկարգութեան, Նորա պաշտօնէութիւնը ընդհանուր առմամբ տգէտ է և անհամապատասխան իւր բարձր կոչման, հոտը խարխափում է բարոյական խաւարի և տգիտութեան մէջ կամ հակակրօնական ուղղութեամբ ընթանում, բայց այդ պակասութիւնները պէտք է խորին անձնուիրութեան զգացմունք յառաջ բերեն մեր մէջ՝ բուժելու Նրա վէրքերը և ոչ թշնամական զգացմունք։ Մեր ձգտումը պիտի լինի Նոր շունչ և ոգի տալ այս թանկագին ժառանգութեան, ընտիր պաշտօնէութիւն պատրաստել, հոտի մէջ սէր և գիտակցութիւն զարթեցնել դէպի իւր հոգևոր կեանքի և քաղաքակրթութեան մայրը, որպէս զի սա էլ վերանորոգուած և զօրացած՝ աւելի արդիւնաւոր լինի այն սրբազան կոչմամբ, որ ստացել է իւր երկարատև պատմական կեանքով և աւետարանի Ներքին ազդեցութեամբ։

Այսպիսի իղձերով և ցանկութիւններով բարի գալուստ ենք մաղթում Հայ ժողովրդի հոգևոր և աշխարհիկ Ներկայացուցիչներին և ցանկանում, որ Մ. Տաճարի սրբազան կամարների տակ մոռանան ամենայն մի անձնական և կուսակցական հաշիւ և առաջնորդուին մի միայն այս տառապեալ և բազմաչարչար եկեղեցւոյ Իսկական շահերով, ընտրելով Նորա համար արժանաւոր Պետ և Հովիւ, որ առաջնորդէ մեզ դէպի լոյս և ցանկալի վերածնութիւն (*)։

Գ. Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԱՐԱՐԱՏ. 1908. Հոկտ.

(*) Գրուած է Տ. Մատթէոս Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան ժամանակ:

ԼԸ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Որ ոչ կամիցի գործել եւ կերիցէ մի՛.
Բ. Թես. Գ. 10.

Ա.

Աւետարաններում աշխատութեան գաղափարը շատ յաճախ յիշեցուած է Տիրոջ քարոզների և առակների մէջ։ Բայց որովհետեւ այս գաղափարին վերաբերեալ առակներն ու խօսքերը ուղղակի կերպով մեր խնդրին չեն վերաբերում, այլ կարօտ են բացատրութիւնների, այդ պատճառով ներկայ խորհրդածութեան հետ չենք կապում։ Տիրոջ կենդանի օրինակը բաւական ենք համարում այդ մասին որոշ գաղափար ստանալու համար։ Աւետարաններից յաճախ տեղեկութիւն ենք ստանում Տիրոջ եռանդուն գործունէութեան մասին. յիշենք միայն Մարկոսի երկու վկայութիւնը։ Մարկ. Գ. 20—22-ից տեղեկանում ենք, որ Տէրը իւր գործունէութեան մէջ մինչեւ իսկ հաց ուտելու ժամանակ չէր գտնում. իւրայինները (ազգականները) Նորա եռանդը, դէպի իւր գործը ցոյց տուած անձնուիրութիւնը տեսնելով՝ կարծում էին «թէ մոլեգնեալ իցէ»։ Մարկ. Զ. 31—32 պատմուած է, թէ Տէրը իւր աշակերտներով առանձնանում է անապատը, «զի էին բազումք, որ երթային և գային, և հաց անգամ չժամանէին ուտել»։ Այսպէս էր Յիսուս իւր փրկչական գործունէութեան մէջ։

Բայց աւելի պարզ աշխատանքի գաղափարը շեշտուած է Պօղոսի թղթերի մէջ, թէպէտ և միշտ պատահական կերպով, որ և է խնդիր պարզելիս։ Ընդհանրապէս պէտք է ի նկատի ունենանք, որ առաքելական բոլոր թղթերը պատահական պատճառներով գրուած նամակներ են. առաքեալներից ոչ ոք մտադիր չէ եղել համակարգութեամբ իւր վարդապետութիւնը գրի առնել. այդպէս էլ աշխատանքի գաղափարի մասին լրիւ գրութիւններ չունինք, այլ հատ ու կտոր ցրուած այս կամ այն թղթի մէջ։ Համեմատաբար ամենից ընդարձակ աշխատանքի մասին առաքեալը խօսում է Բ. Թես. Գ.

6—15։ Այս հատուածի մէջ է և այն խօսքը, որ մեր ներկայ խորհրդածութեան համար բնաբան ենք ընտրել։ «Որ ոչն կամիցի գործել, և կերիցէ մի՛», շատ երեւութին մի խիստ, անողոք, խօսք որ աւելի պատշաճ է քարասիրտներին, քան գթութեան և սիրոյ կրօնի առաքեալին։ Սակայն այս խօսքի և ընդհանրապէս ամբողջ հատուածի իմաստը կը պարզուի այն ժամանակ, երբ մի քանի խօսքով կշռենք այն հանգամանքները, որոնք առիթ են տուել առաքեալին այդ թուղթը գրելու։

Յայտնի է առաքելական թղթերից, թէ նախկին քրիստոնեաները Տիրոջ երկրորդ գալուստը շատ մօտ էին համարում. շատերը յոյս ունէին մինչեւ իսկ անձամբ տեսնել Նորան։ Թեսաղոնիկէում յատկապէս չափազանցութեան էր հասել այս գաղափարը, և ոմանք մոլորութեան մէջ էին ընկել քարոզելով՝ «թէ եկեալ հասեալ իցէ օր Տեառն»։ Մինչեւ իսկ Պօղոսի անունով մի կեղծ թուղթ էր երեւան հանուած, որ նոյն միտքն էր հաստատում։ Այս գաղափարի ազդեցութեան տակ համայնքի մի քանի անդամներից կազմուել էր ստահակների մի խումբ, որ գործ չէր կատարում և դատարկաշըրջիկ կեանք էր վարում։ Առաքեալը լաւ հասկանալով, որ դատարկաշրջիկ կեանքը մայր է ամենայն չարութեան և անբարոյականութեան, մանաւանդ Թեսաղոնիկէի նման վաճառաշահ, և ծովափնեայ մի մեծ քաղաքում, առաջին թղթով փորձել էր վտանգի առաջն առնել. բայց ոչ միայն ի զուր էր անցել առաքեալի ջանքը, այլ և մոլորութիւնն ու ստահակութիւնը աւելի եւս աճել էր. այդ պատճառով նա ստիպուած էր գրել իւր երկրորդ թուղթը աւելի խիստ և պարզ յայտնելով իւր միտքերը։ Առաքեալի հոգու վիճակը պէտք է ի նկատի ունենանք նորա խօսքերը լաւ հասկանալու համար։

Բ.

Արդ, ի՞նչ միտքեր կարող ենք հանել վերեւ յիշուած հատուածից և ընդհանրապէս Պօղոսի աշխատութեան մասին գրած խօսքերից։

Առաջին՝ որ աշխատանքը առաքեալի քարոզութեան նիւթ է եղել նոյն իսկ Թեսաղոնիկեցիների մոլորութեան մէջ ընկնելուց առաջ, երբ քրիստոնէութիւնը նոր հաստատւում էր նոցա մէջ։ Նոյն միտքը արտայայտուած ենք տեսնում նաեւ Թեսաղոնիկեցիներին ուղղած առաջին թղթում Դ. 11 «Աղաչեմ... հանգարտել և գործել զիւրաքանչիւր, և գործել ձեռօք ձերովք, որպես եւ պատ-

ուիրեցաք ձեզ»: Առանձին ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ առաքեալը Տիրոջ անունով է պատուիրում խորշել ստահակութիւնից. դորանով կամենում է ասել, որ աշխատանքի գաղափարը Աւետարանի քարոզութեան մի մասն է, և ինքն իւր կողմից չէ աւելացնում:

Երկրորդ՝ որ առաքեալն ինքն անձամբ աշխատութեան օրինակ է եղել նորահաստատ հաւատացեալների համար: Յիրաւի Ն. կտակարանի մէջ բազմաթիւ վկայութիւններ ունինք, որ առաքեալը վրանագործութեամբ վաստակում էր իւր հացը (Գործք. ԺԸ. 3., Ի. 34—35., Ա. Կորնթ. Դ. 12., Ա. Թես. Բ. 9.) համայնքների վերայ չծանրանալու համար, թէև իբրև առաքեալ իրաւունք ունէր համայնքի հաշուով կերակրուելու, ինչպէս միւս առաքեալները (Ա. Կոր. Թ. 5—6):

Երրորդ՝ որ քրիստոնեան պարտաւոր է իւր և իւրայինների հացը վաստակել, ով խուսափում է աշխատանքից և իւրայինների մասին հոգալուց, այնպիսին նոյն է, թէ ուրանում է իւր հաւատը և մինչև իսկ վատթար է քան անհաւատը (Ա. Տիմ. Ե. 8.):

Չորրորդ՝ քրիստոնեան չպէտք է ձանձրանայ իւր աշխատանքից բաժին հանել բարեգործութեան համար: Այս միտքը աւելի պարզ արտայայտուած է Եփես. Դ. 28. «Որ գողանայրն, մի՛ եւս գողասցի, այլ մանաւանդ վաստակեսցէ գործել ձեռօք իւրովք զբարիս, զի բաւական իցէ տալ ում պիտոյ իցէ»: Այստեղ արդէն աշխատանքի բարձրագոյն նպատակն է չեշտուած. աշխատանքը պէտք է մեր ընտանեաց կարիքները լրացնելուց զատ՝ միջոց լինի բարիք գործելու: Այս վերջին գաղափարը յիշեցնում է մեզ Տիրոջ նշանաւոր առակներից մէկը՝ անիրաւ տնտեսի առակը՝ որ իւր մի քանի դժուարութիւնների համար շատ մեկնաբանների տարակուսանքների մէջ է ձգել, բայց որի միտքը ճշմարիտ աւետարանական է և արևի լոյսի պէս պայծառ: Տիրոջ քարոզութեան համեմատ մարդիկ Աստուծոյ տնտեսներ են այս աշխարհում իրենց կոչմամբ, իրենց հարստութեամբ: Երկրաւոր կեանքն ու բարիքը անցաւոր է, պէտք է խորագէտ լինենք անցաւորից յաւիտենական բարիք և կեանք ստեղծելու:

Վերոյիշեալ կէտերից պարզ երևում է, որ քրիստոնէութիւնը աշխատութեան վերայ երկու տեսակէտով է նայում՝ առաջին որպէս արդար հաց վաստակելու միջոց. երկրորդ որպէս բարոյական կրթութեան եւ բարոյական կատարելութեան միջոց:

Կ.

«Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո» Ծննդ. Բ. 15 սովորեցնում էր դեռ եւս հին կտակարանը: Դորանով արդէն աշխատանքը մարդու համար որպէս աստուածային պատուէր էր նշանակուած: Ըստ երեւութին այդ պատուէրը պատիժ էր մարդկութեան համար, բայց ըստ երեւոյթին միայն. որովհետեւ աշխատութեան պարտաւորական պատուէրը մարդկութեան ամենամեծ բարիքն էր, որ Աստուած նշանակել էր նորա համար: Աշխատութիւնը գոյութեան արմատն է, ապրել կարող է այն անհատը, այն հասարակութիւնը և ժողովուրդը, որ յարատեւ և հետեւողաբար աշխատել գիտէ: Քրիստոնէութեան համար առանց խտրութեան ամենայն արդար աշխատանք սուրբ է. բարոյական տեսակէտով հաւասարապէս նուիրական է կօշկակարի, երկրագործի, ուսուցչի և գիտնականի կոչումը, եթէ ամեն մէկը իւր կոչման մէջ արդարութեան սկզբունքներով է առաջնորդւում. «Իւրաքանչիւր յոր կոչումն կոչեցաւ, եղբարք, ի նմին կացցէ առաջի Աստուծոյ»: Առաքեալի այս խօսքերը ցոյց են տալիս, որ քրիստոնէութիւնը ինչպէս ազգութեան և անհատի վերայ, այսպէս էլ աշխատութեան զանազան տեսակների վերայ, հաւասար աչքով է նայում, միայն բոլորի համար էլ պէտք է կարող լինինք Աստուծոյ դատաստանի առաջ պարզերես հաշիւ տալ: Քրիստոնէութիւնը մեր անձնական հակումների առաջ արգելք չէ դնում մեր ցանկացած կոչումն ընտրել. եթէ մէկը կամենայ կօշկակար լինել և ոչ երկրագործ, միւսը կամենայ ուսուցիչ լինել և ոչ դերձակ, այդ մի և նոյն է, բայց որեւէ աշխատանք, կոչում ընտրելուց յետոյ՝ սրբութեամբ պէտք է ընթանանք ընտրած կոչման մէջ: Աշխատանքն անարգել՝ նշանակում է բարոյապէս տհաս լինել: Աշխատանքը ոչ միայն մեզ հաց է տալիս, այլ և առողջութիւն, հոգու զուարթութիւն: Աշխատանքը մի մեծ զօրութիւն է... բայց ինքնըստինքեան յաւիտենական բարիք չէ և նոյն իսկ ամենայն աշխատանք համակրելի և բարոյական չէ: Պարզենք մեր միտքը:

Մենք տեսանք, որ քրիստոնէութեան մէջ աշխատութիւնը առաքելական քարոզութեան մի մասն էր կազմում, և պարտաւորեցուցիչ յանուն Յիսուսի Քրիստոսի... բայց ամեն աշխատանքի համար նոյնն ասել չենք կարող: Աշխատանքը սրբազան բնաւորութիւն է ստանում, երբ բարոյական շարժառիթներով է կատարւում և յաւիտենական բարիք ձեռք բերելու միջոց դառնում: «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ», ասել է Տէրը և դորանով աշխատութեան ճըշ-

մարդու արժէքը գնահատել։ Աշխատանքը կեանքի բարձրագոյն աղբիւրը չէ և ինքնըստինքեան մարդկութեան նպատակ լինել չէ կարող։ Աւելին կ'ասենք. քաղաքակրթութիւն, գիտութիւն, արուեստ աշխատանքի պտուղներ են, բայց նոյն իսկ այդ քաղցր պտուղները անօգուտ են և մարդկային հոգու համար վերջնական նպատակ լինելուց շատ հեռու, եթէ դէպի բարձրագոյն, յաւիտենականութեան գաղափարը չեն ուղղուած։ Ընթերցողներին յիշեցնում ենք Ֆաուստի հոգու վիճակը, մեր միտքը կարճ և կտրուկ կերպով հասկանալի անելու համար։ Աշխատանքով կարելի է ամենամեծ գիտնականը դառնալ և ամենահարուստ մարդը, բայց մի և նոյն ժամանակ ամենից դժբաղդը մնալով։ Առանց բարոյական սկզբունքների աշխատանքը ոչ միայն կեանքի բարձրագոյն բարիք չէ, այլ և վնասակար է։ Անբարոյականութիւնը մի միայն սեռական թերութիւնը չէ, այլ և այն «աշխատանքը», որ կործանում է ընտանեկան, հասարակային, հոգեւոր բարոյական կեանքը։

Դրական մի զօրութիւն կայ միայն, որ աշխատանքը նուիրագործում է, կեանքին բովանդակութիւն տալիս, այդ սէրն է— Սէր դէպի Աստուած, որ և նոյն է դէպի ընկերը։ Այն աշխատանքը, որ սիրոյ շարժառիթներով չէ ընթանում, քրիստոնեայի համար բարիք, նուիրական լինել չէ կարող։ Որովհետեւ սիրոյ շարժառիթներից զուրկ աշխատանքը դէպի ագահութիւն և արծաթսիրութիւն է տանում, որ ամենայն չարեաց արմատն է (Ա. Տիմ. Զ. 10)։ Սիրոյ շարժառիթներից զուրկ աշխատութեան վերջնական նպատակը նիւթն է միայն, այն ինչ մարդու հոգեւոր կոչումն է իշխել նիւթի և մարմնաւորի վերայ։ Այն անձնաւորութիւնը որ աշխատանքի վերջնական նպատակը միայն արծաթն է համարում, վաստակելու ժամանակ էլ միջոցների մէջ խտրութիւն չի դնում։ Արծաթսիրութեան հնագոյն պտուղը վաշխն է, որի դէմ մաքառելու համար եկեղեցական հայրերը մեծ ջանք պիտի գործ դնէին։ Եկեղեցու նշանաւորագոյն հայրերը՝ Եփրեմ Ասորի, Գրիգոր աստուածաբան, Ոսկեբերան և Յոհան Մանդակունի ճառեր ունէին վաշխառութեան դէմ, դարերով քրիստոնէական եկեղեցու մէջ քարոզի նիւթ է եղել վաշխի չարաչար գործածութիւնը։ Ընդարձակ իմաստով վաշխառութիւնը միայն մեծ տոկոսներով ուրիշին պարտք տալը չէ. վաշխառու կարելի է լինել կեանքի ամեն պայմաններում, երբ եսականը, նիւթականը բարձր համարենք արդարութեան տեսակէտից։ Շահելն արգելուած չէ, մեր պարտաւորութիւնն է խորագէտ լինել, հոգալով ծերութեան, մեր որդոց դաստիարակութեան և

ապագայի մասին, բայց չմոռանալով երբէք արդարութեան կշիռը: Աշխատանքը պէտք է բարիք լինի աշխատողի եւ շրջապատող հասարակութեան համար: Մենք առանձնապէս չնշտեցինք արծաթսիրութեան մի երեւոյթը, վաշխառութիւնը՝ որովհետեւ այժմ էլ մեր ժողովրդական կեանքի, յատկապէս գիւղական կեանքի չարիքներից մէկն է: Ցաւօք սրտի պէտք է արձանագրենք, որ նոյն իսկ մեր քահանաներից շատերը մասնակից են այդ մեղքին. վաշխառութեան մէջ մեծ դեր է խաղում յատկապէս ցորենը: Սակայն չհեռանանք բուն խնդրից, թէ և այս հարցն էլ կարեւոր է և արժանի առանձին խորհրդածութեան:

Դ.

Այսպէս ուրեմն աշխատանքը ինքնըստինքեան բարիք չէ, նա կարող է մինչեւ իսկ մեծամեծ չարեաց, կեղեքման և թշուառութեան պատճառ լինել, եթէ սիրոյ և բարոյականութեան հիմունքների վերայ չէ հաստատուած: Աշխատանքը նուիրական է, երբ Աւետարանի (տնտեսի առակը) և առաքելական թղթերի բարոյական տեսակէտներով է կատարւում: Այդպիսի աշխատանքը մարդկութեան համար Աստուծոյ օրհնութիւն է և բարոյական կրթութեան միջոց: Աշխատանքով մինչեւ իսկ սահմանափակւում է մարդու ամենամեծ թշնամու՝ մեղքի զօրութիւնը. պարապ և դատարկաշրջիկ մարդը աւելի հակուած է ամեն տեսակ անբարոյական և մեղաւոր փորձանքների մէջ ընկնելու, քան ջանասէր և աշխատութեան վարժ անձը: Մարմինը ճնշելու և հոգեւորը զօրացնելու արդար և արդասալից միջոցը աշխատանքն է:

Այս խօսքը վերաբերում է ոչ միայն եկեղեցու սպասաւորներին, այլ և բոլոր քրիստոնեայ, աշխարհիկ մարդկանց: Կար ժամանակ, որ այդ նպատակին հասնելու միակ միջոցը ճգնողական խիստ կեանքն էր համարւում. մարդիկ կեանքի մէջ իրենց որոնած սրբութիւնը չգտնելով, հեռանում էին անապատը, այնտեղ իրենց հոգու խաղաղութիւնը պահպանելու: Բացատրութեան կարօտ չենք համարում, որ ներկայի համար այդ հայեացքը միակողմանի է: Ճգնողական (ոչ անապատական) գաղափարի մէջ այն ճշմարտութիւնը կայ, որ դրանով կրթում ենք մեր կամքը, առանց որին անընդունակ կը լինենք բարոյական սկզբունքների աշակերտ լինելու: Շոպենհաուէր մեծ փիլիսոփան քրիստոնէութեան արժէքը այդ տեսակէտով էր միայն գնահատում: Բայց չափազանց ճգնողականութիւնը նոյնպէս մոլորութիւն է, ինչպէս ամեն մի չափազան-

ցութիւն ընդհանրապէս։ Մենք պէտք է հասարակութեան մէջ և հասարակութեան համար ապրենք, որպէս զի ամենամեծ պատուէրը՝ սիրոյ պատուէրն իրագործել կարողանանք։ Կամքի կրթութեան, հոգեւորը զօրացնելու և մարմնաւորը ճնշելու լաւագոյն և արդար ճանապարհն աշխատութիւնն է։

Բարոյական և սիրոյ չափանիշներով կատարուած աշխատանքը Աստուծոյ օրհնութեան ամենամեծ աղբիւրն է։ Այնտեղից են բղխում քաղաքակրթութիւն, գիտութիւն, արուեստ, գործնական արհեստներ, ճանապարհների հաղորդակցութիւն, վաճառականութիւն, բարեգործական և ուսումնական հաստատութիւնները։ Մի խօսքով մարդկային յառաջադիմութեան, բարոյական կատարելութեան խթանն ու միջոցը աշխատանքն է, բայց քրիստոնէական մտքով աշխատանքը։ Մեր ընտանիքի հացը վաստակելու լինենք, թէ միլիոնների հետ խաղանք, միշտ նոյն սկզբունքն է, որ աշխատանքը բարոյական բարիք է դարձնում։ Եթէ մեր վաճառաշահ քաղաքների գործարանական և բանուորական կեանքը աչքի առաջ ունենայինք, գուցէ աւելի թանձրացեալ և կենդանի կերպով կարողանայինք քրիստոնէական աշխատանքի գաղափարը պարզել, բայց մեր նպատակն է միայն քրիստոնէական սկզբունքը շօշափել առանց կեանքի մանրամասնութիւնների մէջ մտնելու։

Ե.

Շատերի համար, գուցէ, զարմանալի լինի, որ բարոյական աշխատանքը մենք քրիստոնէութեան անուան հետ ենք կապում։ Մի՞թէ քրիստոնէութիւնից առաջ աշխատանք չկար։

Աշխատանքը հին է այնքան, որքան հին է մարդկութիւնը. բայց դրականապէս կարող ենք ասել, որ աշխատանքը սրբուել, և բարոյական գաղափար է դարձել մի միայն քրիստոնէութեան մէջ։ Այս խօսքի ճշմարտութիւնը հասկանալի կը լինի այն անձնաւորութիւնների համար, որոնց յայտնի է Յունաստանի և Հռովմի անկման պատմութիւնը և այն ժամանակուայ այս երկու քաղաքակիրթ հեթանոս ազգերի հայեացքը աշխատանքի մասին։ Տեղի սղութեան պատճառով մենք միայն մի քանի խօսքով կարող ենք նկարագրել այդ. ով կամենում է փոքր ինչ աւելի ընդարձակ գաղափար ստանալ այս մասին, յանձնարարում ենք կարդալ Մոմզենի Հռովմի պատմութիւնը։ Աթէնքում և Հռովմում ժողովուրդը նպաստ էր ստանում պետութիւնից. յատկապէս Հռովմի քաղաքացիք բաժին էին ստանում պատերազմական աւարներից, ցորեն էին ստանում

պետական շտեմարաններից, ձրի զուարճութիւն, խնճոյքներ, նոյն իսկ դրամական նուէրներ զօրապետների յաղթական վերադարձի կամ կայսերական հանդէսների ժամանակ: Այսպիսով ազատ քաղաքացիք հետզհետէ սովորեցին ձրիակերութեան և խուսափում էին աշխատանքից: Հռովմէական սենատորների կամ ազնուականների կլիենտները թափառում էին փողոցներում կամ հետեւում իրենց տիրոջ ատրիում գնալիս: Բայց ամենամեծ չարիքը այս տեսակէտից ստրկութեան գոյութիւնն էր. աշխատանքը վայել էր ստրկին և ոչ ազատ՝ մանաւանդ ազնուական և հարուստ քաղաքացուն: Պտղաւէտ Իտալիան, հիւսիսային Աֆրիկայի շատ մասերը քրիստոնէութեան ծագման ժամանակ ծածկուած էին գեղեցիկ և ընդարձակ պարտէզներով, երէներով լի անտառներով, զարդարուած արհեստական մեծ լճերով, ծաղկանոցներով, ապարանքներով... շատ քչերի զուարճութեան ծառայելու համար: Բնականաբար սենատորների ընդարձակ կալուածներում, ամարանոցի պարտէզներում աշխատում էին ստրուկները, այն էլ ոչ այնքան հողն արդիւնաւորելու, որքան իրենց տիրոջ շռայլութիւնների և զուարճութիւնների համար: Վաճառականութիւնը, արհեստները, նոյն իսկ երկրագործութեան մնացորդները ստրուկների ձեռքն էր: Աշխատանքն անվայել էր ազատ քաղաքացուն, ազնուատոհմ մարդկանց, որոնք պէտք է խնճոյքներով, փիլիսոփայութեամբ, քաղաքական պաշտօններով զբաղուէին: Ազատ արհեստաւոր քաղաքացին հարուստ ստրկատիրոջ հետ մաքառել չէր կարող, և այդպիսի արհեստաւորն էլ նոյնչափ միայն յարգ ունէր, որքան ստրուկը: Այսպիսի հասարակութեան մէջ աշխատանքը բարոյական գաղափար լինել չէր կարող: Դրամի, հարստութեան սէրը դրանով ի հարկէ ամենեւին չէր սահմանափակւում, ընդհակառակն ագահութիւնը, առանց միջոցների խտրութեան հարստանալու տենչը յատուկ է այն անձնաւորութեան և այն հասարակութեան, որ չի սիրում իւր երեսի քրտինքով հաց վաստակել: Արդարեւ ոչ մի տեղ վաշխառութիւնը այնպիսի չարիք չէ գործել, ինչպէս հին Հռովմում: Մայրաքաղաքի օրինակին էին հետեւում ըստ ամենայնի պետութեան բոլոր մեծ քաղաքները՝ Աղեքսանդրիա, Անտիոք եւն.: Ահա այսպիսի հասարակութեան մէջ՝ հնչում է քրիստոնէութեան բարոյական քարոզը աշխատանքի մասին: Ի՛նչպիսի նորութիւն և ի՛նչպիսի կենդանարար զօրութիւն էր այս քարոզը, ցոյց է տալիս մեզ պատմութիւնը:

Վ.

Քրիստոնէական եկեղեցու պատմութեան մէջ կարմիր թելի նման անցնում է աշխատանքի բարոյական այս քարոզը։ Առաքեալի խօսքերի համաձայն աշխատութիւն և բարեգործութիւն զուգընթաց են եկեղեցու պատմութեան մէջ։ Հռովմէական պետութեան մէջ ազատ, բարոյական աշխատանք չկար, ուստի և բարեգործութիւն չկար աւետարանի մտքով։ Մենք առիթ ենք ունեցել «Եկեղեցի և աղքատների խնամատարութիւն» վերնագրով յօդուածների մէջ նկարագրել հեթանոսական «բարեգործութեան» բարոյականութիւնից զուրկ կողմերը։ Քրիստոնէական բարեգործութիւնն ու աշխատութիւնը սկսուել է նոր կրօնի ծագման հետ, բայց լիր զարգացման բարձրագոյն աստիճանին հասել է վանականութեան մէջ, այնտեղ էլ հիմնուել ճշմարիտ աշխատասիրութեան դպրոցը, ուր աշխատել սովորեցին քրիստոնէութեան բարերար ազդեցութեան ենթարկուած ազգերը։ Իմ խօսքս ճգնաւորութեան, անապատականութեան մասին չէ, որ չափազանց ծայրայեղ բնաւորութիւն էր ստացել պատմական հանգամանքների պատճառով։ Վանականութեան կանոնների մէջ շատ կարեւոր տեղ է բռնում աշխատանքի գաղափարը. իսկ նախկին վանականութեան մէջ, ինչ որ կանոն էր, այն էլ իրագործւում էր կեանքի մէջ։ Բարսեղ Կեսարացու և նորան հետեւող անձանց հանճարը լաւ ըմբռնել էր բարոյական այն վտանգը, որ առանց գրական և կանոնաւոր աշխատանքի ծագել կարող էր միայնակեացներից կազմուած միաբանութեան մէջ։ Պարապութիւնը վանականին դէպի բարոյական անդունդ կարող է առաջնորդել, ուստի և այնպիսի կազմակերպութիւն էին տուել վանականութեան, որ դէպի կեանք և փրկութիւն տանէր։ Վանականը ոչ միայն իւր հացը պիտի վաստակէր, այլ և թշուառներին, կոյրերին, որբերին, աշխատելու անընդունակ եղբայրներին օգնելու միջոց ունենար։ Աշխատանքն սկսւում էր աղօթքով և սաղմոսերգութիւններով. իւրաքանչիւրն աշխատում էր ինչի ընդունակ էր կամ ինչպէս վանահայրն էր կարգադրում, նոքա զբաղւում էին արհեստներով, երկրագործութեամբ, պարտիզպանութեամբ, գրական վաստակներով, արուեստներով, քարոզութեամբ, հիւանդների և աղքատների խնամատարութեամբ, որբերի կրթութեամբ եւյլն։ Բարսեղ Կեսարացու կանոններն անցնում են և Հայաստան։ Հայոց վանքերում եւս ծաղկում է քաղաքակրթութիւնն ու բարեգործութիւնը, ինչպէս ուրիշ երկրներում։ Մռայլ գաղափարներից ազատ չէ ոչ ասորա—յունական և ոչ մեր

վանականութիւնը, բայց այնքան մեծ, այնքան գնահատելի է նորա արդիւնքը, որ մենք աստուածային օրհնութիւն ենք համարում այդ երեւոյթը պատմութեան մէջ։

Ինչ որ ասացինք արեւելեան ազգերի վանականութեան մասին, նոյնը աւելի մեծ չափով կարող ենք ասել արեւմտեանի համար։ Այստեղ վանականութիւնը աշխատասիրութեան ճշմարիտ դպրոց է դառնում արեւմտեան կիսակիրթ ազգերի համար։ Ճահիճներ չորացնելու, ճանապարհներ և կամուրջներ շինելու, բանւոր երկրագործութեան, արհեստների և արուեստների, գիտութեան առաջին ուսուցիչները Գալլերի և գերմանական ցեղերի համար վանականներն են եղել։

Թող հայ ժողովրդի բոլոր դասի սրտում անջինջ դրոշմուին առաքեալի խօսքերը.

«Որ ոչ կամիցի գործել և կերիցէ մի՛».

«Մի՛ ձանձրանայք զբարիս գործել»։

Գ. Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԱՐԱՐԱՏ. 1900 Ժ·Բ.

ԼԹ.

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿՈՉԸ

Եկայք շինեսցուք սուրբ զխորանն Լուսոյ:
Շարական.

Մեր բաղդի անիւը այսօր մի տարօրինակ շրջան է կատարում։ Մեզ թւում է, թէ մի կործանիչ ոյժ իր զօրութեան ազդեցութիւնն է տարածում մեր բովանդակ կեանքի ամեն մի շրջանի վերայ, և թէ մենք արիւնով ներկուած վերջալոյսի ականատես մի սերունդ ենք, որ արեւի վերջին ճառագայթների հետ՝ պէտք է մայր մտնեն և մեր յուսոյ վերջին նշոյլները։

Բայց ահա մեր ականջին հնչում է սրբազան երգչի խօսքերը. «Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա» և մեր միտքը սլանում է դէպի այն երջանիկ ժամանակը, որի համար երգուած են այս նուիրական տողերը։ Մեր հոգու առաջ կենդանանում է Հայի հոգեւոր վերածնութեան սկիզբը, Լուսաւորչի հսկայ անձնաւորութիւնը իր կենսաբեր գործունէութեամբ և հետեւանքներով։ Նա անձեռագործ մի արձան կանգնեց աւելի տեւական և աւելի խօսուն, քան պղինձն ու երկաթը. բայց և այդ անձեռագործ արձանի յայտարար հիմնեց այն անշուք շէնքը, որը սակայն Հայի վերածնութեան աւազանն է եղել դարէ ի դար։ Դարեր են եկել, դարեր անցել, բայց նա հաստատուն խարիսխ է մնացել մեր գոյութեան համար։ Նա իբրեւ կենդանի վկայ՝ ականատես է եղել իր որդւոց գլխին հասած անլուր աղէտներին և իբրեւ գթառատ մայր մխիթարութեան և սփոփանքի աղբիւրներ է հոսեցրել նոցա սրտի մէջ։ Շատ անգթութիւններ և աւերումներ է տեսել նա, բայց ամեն անգամ էլ վերակենդանութեան յոյս ներշնչել յուսահատ սրտերի մէջ։ Այսօր եւս, երբ մեր մտքի առողջ պտտող պատկերները հազարաւոր Հայերի յօշոտուած դիակներն են, երբ մերկ, սովալլուկ որբերն ու այրիները, կանայք և տղամարդիկ հեռու իրենց սրբազան երկրից՝ օտարի, աւելի լաւ ասած, մահուան դռներն են բաղխում, և երբ հայրենիքի և եկեղեցու փլատակների փոշին ամեն կողմից վեր է բարձրանում՝ սրբազան երգչի խօսքերը յիշեցում են

մեզ, որ դեռ եւս ամէն ինչ կորած չէ, թէ դեռ եւս կանգուն է Հայութեան «Լուսոյ Խորան», Մայր Աթոռ Ս. Էջմիածինը։

Քաղցր և նուիրական անուն։

Ե՞րբ է եղել Հայի օրը այնպէս սեւ, ինչպէս այժմ. ե՞րբ է եղել նորա ապագան աւելի մռայլ և յուսահատ, քան այժմ։ Բայց այսօր եւս Մայր տաճարի սրբազան կամարների տակ հնչում է Լուսաւորչի քարոզը. «Եկայք շինեսցուք սուրբ զԽորանն Լուսոյ»։ Ինչպէ՜ս խորհրդաւոր է հնչում այդ կոչը, երբ հոգեւոր և բարոյական աւերակները մէկ մէկու տեղի են տալիս։

Սրբազան երգիչը հիմնուելով Լուսաւորչի տեսիլքի վերայ՝ այս հաստատութիւնը «Լուսոյ Խորան» է անուանում։ Խորանով որոշուած է և նորա կոչումը։ Նա հիմնուած էր հոգեւոր դաստիարակութեան Մայր լինելու, նորանից պիտի բղխէին աւետարանի լուսոյ ճառագայթները Հայութեան սրտի խորքերը լուսաւորելու։ Անցեալից գիտենք մենք, որ նա հաւատարիմ է մնացել այդ կոչման։ Եկեղեցին հայութեան հոգեւոր քաղաքակրթութեան լուսաւորութեան փարոսն է եղել միշտ։ Հայի հոգեւոր և մտաւոր շարժման արգիւնքները համարեա առանց բացառութեան Լուսոյ Խորանի աղբիւրներից են բղխել։ Գիր, մատենագրութիւն, սրբազան արուեստ, հոգեւոր կեանք, այս բոլորը մեր եկեղեցու շնորհն է, որ մենք վայելելու բաղդ ունինք։ Նա մեր հոգեւոր վերածնութեան օրօրանն է եղել, երբ խաւարն ու մահը մեզ կլանել են սպառնացել։

Այսօր եւս, երբ Լուսաւորչի հոգին մեր եկեղեցու աւերակների վերայից վերաշինութեան հրաւէր է կարդում, մենք ուրիշ ճանապարհ չունինք ընտրելու, բայց եթէ կրօնական, հոգեւոր վերածնութեան ճանապարհը։ Ազգերի վերակենդանութեան ճշմարիտ ճանապարհը կրօնական վերակենդանութեան ճանապարհն է։ Փրկչի խօսքը՝ «եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյ» կարելի է և ազգերին ուղղել։ Կրօնն է ճշմարիտ կեանքի աղբիւրը, (*) ուրեմն և կրօնական վերածութիւնը մի նոր և ճշմարիտ կեանքի սկիզբ։ Մեր ներկայ կեանքը լի է վէրքերով։ Մեր կեանքը լի է հիւանդ երեւոյթներով, որոնք իրենց կողմից ամենածանր հետեւանքներ են յառաջ բերում։ Հոգեւոր են այդ վէրքերը, հոգեւոր զէնքերով էլ պէտք է դոքա ապաքինուին։

Մենք մի մեծ մարտ ունինք խաւարի կործանիչ ոյժի դէմ, ուստի և մեզ զէնք է պէտք, ոչ մետաղից, այլ Աստուծոյ հոգւով

(*) Տես Լր. եր. 179: «Կրօնի կենսատու զօրութիւնը»:

կուած։ Նա աւելի սուր է և կտրուկ, քան երկաթն ու պողպատը։ Ժամանակը ծանր է և լուրջ, իսկ մենք թեթեւ ենք և անհեռատես, ժամանակը հիմնաւորութիւն է պահանջում ի գործ, իսկ մենք օդային ամրոցներ ենք կառուցանում և բառեր արտասանում։ Մեր անկեղծ համոզմամբ ճշմարիտ վերակենդանութեան աղբիւրը կրօնական վերածնութեան մէջ պէտք է որոնել։ Մեր եկեղեցին պէտք է աւելի բարոյական ոյժ, կենսատու զօրութիւն ունենայ, եթէ մենք յուսալից մի նոր կեանք սկսել ենք կամենում։

Արդ, Մայր Աթոռն է այն կեդրոնը, որտեղից հայութեան համար հոգեւոր, կրօնական կեանքի մի նոր հոսանք պիտի սկսուի. «Ի Սիոնէ ելցէ օրէնք»։ Այստեղ է հաստատուած Լուսաւորչի՝ Հայաստանեայց վերածնութեան հօր՝ սուրբ գաւազանը, որ նորա հօտին միշտ ի փրկութիւն է հովուել։ Այստեղ եւս պէտք է նորա հոգին, որ Հայի վերածնութեան սկզբնաւորութեան առիթն է եղել, միշտ կենդանի և միշտ գործունեայ մնայ։ Նոյն հոգին և այսօր սըրբազան երգչի բերանով Մայր Աթոռի միաբանութեանն է ուղղում իւր հրաւէրը. «Եկայք շինեսցուք սուրբ զԽորանն Լուսոյ»։

ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՒԱԳ

ԱՐԱՐԱՏ. 1897. Յունիս.

Խ.

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՆԱՒԸ ԵՒ ՆԱՒԱՊԵՏԸ

«Նաւապե՛տ բարի. առ քեզ ապաւինիմ, տո՛ւր ինձ ձեռն, որպէս երբեմն Պետրոսին ի վերայ ալեացն»:

Շարական.

Ա.

Հաւատացեա՛լ ժողովուրդ,

Աւետարանի մէջ մի հրաշալի պատմութիւն կայ (Մատթ. ԺԴ. 22—23), հաւատացեալի աչքում խորապէս յուզիչ և իմաստալից, իսկ անհաւատի կամ մակերես մտածողի համար՝ մի անարժէք առասպել։

Յիսուս հինգ նկանակով և երկու ձկնով հինգ հազարին կերակրելուց յետոյ՝ պատուիրում է աշակերտներին նաւ նստել և միւս ափն անցնել, մինչեւ ինքը ժողովրդին կ'արձակէ։ Ապա բարձրանում է Նա լերան գլուխը, առանձնութեան մէջ աղօթելու։ Աշակերտները ափից բաւական հեռու, գիշերուայ չորս ժամին, մեր ներկայ հասկացողութեամբ մօտաւորապէս 10 ժամին, տեսնում են, որ մէկը ջրի վերայով դէպի իրենց է գալիս։ Զարհուրում են, «առ աչօք», դիւական մի բան համարելով, ուստի և աղաղակում են երկիւղից։ Յիսուս պատասխանում է. «Քաջալերացարո՛ւք, ե՛ս եմ, մի՛ երկնչիք»։ Պետրոսը լսելով ձայնը, խնդրում է, եթէ Դու ես, թո՛յլ տուր, ջրի վերայով դէպի Քեզ գալ։ Եւ մինչդեռ առաջ էր գնում, տեսնելով փոթորկի սաստկութիւնը, զարհուրում է և սկսում ընկղմուել, աղաղակելով, Տէ՛ր, փրկիր ինձ։ Յիսուս բռնում է Նորա ձեռքից, յանդիմանում Նորա երկմտութիւնն ու թերահաւատութիւնը։ Նաւի մէջ մտնելուց յետոյ՝ դադարում է փոթորիկը, և դուրս են գալիս Նաւահանգիստը՝ Գեննեսարէթ։

* * *

Ինչքա՜ն հրաշալի է և իմաստալից այս պատկերաւոր պատմութիւնը։ Կարելի է ասել, այստեղ մարմնաւորուած է մարդկային մեղաւոր կեանքը՝ ծովի և ալէկոծութեան պատկերով, որի

մէջ խորասուզուելուց միայն աստուածային ձեռքի օգնութեամբ կարելի է ազատիլ։ Կրօնական ապրումներն ու գաղափարներն էլ իրենց արտայայտութեան լեզուն ունին, կերպերն ու ձեւերը, ինչպէս հոգեկան կեանքի ա՛յլ երեւոյթները։ Ա՛յլ է ճարտարապետի և ա՛յլ նկարչի, ա՛յլ է արձանագործի և ա՛յլ երաժշտի նիւթն ու միջոցները, իւր ներքին յոյզերն ու ապրումները, մտքի թռիչքներն ու գաղափարները արտայայտելու և ձեւակերպելու։ Այսպէս էլ կրօնին յատուկ է հրաշալի պատկերներով և պատումներով ճշմարտութիւնները մատչելի դարձնել հոգիներին։

Բ.

Հին Կտակարանի մէջ Ջրհեղեղի պատմութիւնը մէկն է այդպիսի հրաշապատումներից, որով այն միտքն է արտայայտուած, թէ հոգւով և կեանքով ապականուած, մեղքի ծովի մէջ թաւալող մարդկութիւնը դատապարտուած է կորստեան։ Այս մի մեծ ճըշմարտութիւն է մարդկային կեանքի փորձառութեան և պատմութեան վերայ հաստատուած։ Ամենամեծ, հզօր ազգերն իսկ, կործանւում են, երբ բարոյական անկումն է սկսում տիրապետել նըրանց կեանքի մէջ, երբ գեղխութիւնն ու շուայտութիւնը, մտքի և հոգու անառակութիւնը, ագահութիւնն ու անարդարութիւնն է դառնում կեանքի նշանակն ու ղեկավարող սկզբունքը։ Հաստարմատ և հաստաբուն, դէպի երկինք բարձրացող կաղնին, ինքն իրան, դիւրութեամբ է տապալւում, երբ փթում են արմատները և որդերը բուն շինում այնտեղ։

Բայց նոյն Ջրհեղեղի պատմութիւնը ցոյց է տալիս, թէ համատարած ծովից ազատուելու համար փրկութեան տապանն էլ կայ։ Ս. Գրքի պատկերագրութեան մէջ Ջրհեղեղի պատմութիւնը նիւթ է դարձել նկարչութեան։ Այսպիսի մի վսեմ և գաղափարական նիւթ չէր կարող վրիպել նկարիչների ուշադրութիւնից։ Պատկերի կեդրոնն է մի նաւ, բազմատեսակ թռչունները ճախրում են երկընքում նաւի գլխին և հետզհետէ ներս են մտնում։ Իսկ կենդանիները զոյգ զոյգ կամրջակի վերայով սկսել են դէպի նաւը բարձրանալ։ Նոյի որդիքն ու հարսները բեռները շալակած կամ ուսներին՝ դէպի նաւն են գնում։ Ամենից վերջը Նոյն է իւր կնոջ հետ, ձեռքը դէպի փրկութեան տապանը մեկնած, որ նկարուած է եկեղեցու ձեւով, որովհետեւ այդպէս են հասկացել և մեկնել եկեղեցու հայրերը։ Հաւատացեալ մարդկութեան փրկութեան տապանը եկեղեցին է իւր վարդապետութեամբ, իւր խորհուրդներով և գործնական կեանքով։

Գ.

Նոյն իմաստն ունի վերեւ մէջ բերուած աւետարանական պատմութիւնը, բայց աւելի պարզ, հասկանալի, պատկերաւոր և անհատական անձի հետ կապուած։ «Աշխարհս էր ի ծով նման», երգել է ԺԳ. դարի բանաստեղծ Խաչատուր Կեչառեցին և ուրիշները, ծովի ալիքները կամենում են նրան ներս քաշել և կլանել։ «Աշխարհ» ասելով կեանքն է հասկանում, կեանքը իւր բացասական և մեղաւոր կողմերով, որ ծովի նման ներս է քաշում մարդուն։ Ճանապարհորդել է՞ք ծովով, տեսել է՞ք լեռնանման ալիքները ինչպէս հետեւում են մէկը միւսին, անդունդներ բանալով անջրպետի մէջ։ Ի՞նչ կը լինէր մարդու վիճակը այդպիսի ահեղ ալիքների մէջ, առանց ամրակուռ շոգենաւի, որ ընթանում է անվտանգ դէպի իւր նպատակը։ Բայց ոչ միայն այդպիսի փոթորկի ժամանակ, այլ նոյն իսկ խաղաղ և միայն զեփիւռից ծփացող, բայց անյատակ խորութեամբ ջրերի վերայ, նորան միայն մահն է սպասում, առանց փրկութեան նաւի։ Լողանալու մէջ ձեռք բերած վարժութիւնն ու ճարպկութիւնն էլ միայն կարճ ժամանակ կարող է մեզ օգտակար լինել։ Մենք պէտք ունենք օգնութեան, պէտք ունենք նաւի և նաւապետի, եթէ ծովի ալիքներից անվտանգ դէպի անքոյթ նաւահանգիստ հասնել ենք կամենում։ Անձնական ուժերով ծովի ալիքները կտրել չենք կարող։

Այսպէս է հաւատացեալի, ներքին փրկութեան տենչով ապրող անձի հոգեբանութիւնը, «մեղքի» գիտակցութիւնը իւր հոգու մէջ և անկարողութիւնը ինքն իւր ուժերով ազատուելու նորա շղթաներից։ Պօղոս Առաքեալի նման մարդը, զօրեղ իւր կամքով, հզօր իւր մտքով, անսպառ իւր եռանդով, խոր սիրով դէպի իւր գործը, առաքելութիւնը, երբ խորասուզւում է իւր ներքին աշխարհը, վերլուծութեան ենթարկում այնտեղ կատարուող հակասական, իրար մերժող ել և էջները, բարւոյ և չարի հակամարտութիւնը (Հռոմ. է. 13—25), զգում է իւր խեղճութիւնը և սրտի խորքից բացականչում է. «Այր մի տառապեալ եմ ես, ո՞վ կարէ ապրեցուցանել զիս ի մարմնոյ աստի մահու»։

Պէտք է իմանալ, որ այստեղ առաքեալը «մարմին» ասելով մեր արտաքին մարմինը չի հասկանում, այլ մեր հոգու բացասական յատկութիւնների գումարը, բարձրագոյն ձգտումների, «այոն այո, և ոչն ոչ»-ով ապրելու հակադրութիւնները։ Այսպիսի վերլուծութեան ենթարկելուց յետոյ իւր ներքին աշխարհը, այդ հզօր, հե-

բոսական բարձրութեան վերայ կանգնած մարդը, իրեն զգում է տկար և թոյլ, և որին միայն «շնորհքն Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի» կարող է յաղթական դարձնել, հոգեկան այս մարտի և ալեկոծութեան մէջ, և դէպի փրկութիւնն առաջնորդել։ Այս մի հակոտնեայ երևոյթ է սովորական հասկացողութեան, հակասութիւն այն մարդկանց համար, որոնք միայն մտքի թելադրութիւններով են երևոյթները դատում և հասկանում։ Նոքա ըմբռնել չեն կարող, թէ «խորհուրդ մարմնոյ մահ է, և խորհուրդ հոգւոյ կեանք և խաղաղութիւն» (Հռոմ. Ը. 6)։

Եթէ հետևենք մեր հայրերի կեանքին և պատմութեան, այնտեղ ևս կը գտնենք այդպիսի խորը, մեղքի գիտակցութեամբ ապրող անձեր, որոնք մեր ժողովրդի հոգևոր կեանքի բարձունքներն են կազմում։ «Մեղքի» գիտակցութեան ապրումն է, որ մարդուն դէպի սրբութեան և բարոյական կատարելութեան գագաթներն է տանում։ Այդպիսի գիտակցութեան և հոգեկան ապրումների արգիւնքներն են մեր Շնորհալին իւր «Հաւատով Խոստովանիմք»ով, Գրիգոր Նարեկացին իւր «Նարեկ»ով։ Այսպէս է և Ապաշխարութեան շարականների հեղինակը, որ Ս. Մեսրոպն է համարւում, սրտառուչ պարզութեամբ և խորը յուզումով իւր սրտի տագնապն է յայտնում և օգնութիւն խնդրում՝ ներշնչուած հէնց վերև մէջ բերուած աւետարանական պատմութեամբ.

«Ծով մեղաց իմոց զիս ալեկոծէ, որ ես Նաւապետ բարի, շնորհեա՛ ինձ նաւահանգիստ»։

«Նաւապե՛տ բարեգութ, առ քեզ ապաւինիմ, տո՛ւր ինձ ձեռն, որպէս երբեմն Պետրոսին ի վերայ ալեացն, որ ծփիմս ալեկոծեալ յանցանօք մեղաց»։

Նոյն նիւթը և նման ապրումը ստեղծագործութեան աղբիւր է դարձել և եւրոպական բարձր նկարչութեան համար։

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԱՍԿ 1946. Յունիս.

ԽԱ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ

ԴԵՐՆ ՈՒ ԱՐԺԷՔԸ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԷՋ

«Միշտ անշարժ պահեա
զԱթոռ Հայկազնեայց»:

Ա.

Առաջնորդուած նպատակի պարզաբանութեան լաւագոյն ուղին է իրական փաստերի վերլուծութիւնն ու համադրութիւնը: Ինչպէս ամէն երեւոյթ, մեծ կամ փոքր, հասկանալի է միայն իր լինելութեան, այսինքն ծագման, զարգացման, ներգործութեան ընթացքի լուսաբանութեան մէջ, այնպէս էլ պատմական մեծ երեւոյթներն ու կազմակերպութիւնները: Անհատի նման նրանք էլ ունեն իրենց կենսագրութիւնը, որ միայն ժամանակի և տարածութեան սահմանների, շրջապատող պայմանների և տուեալների լոյս տակ հասկանալի և ըմբռնելի կը դառնայ:

Հայաստանեայց Եկեղեցու դերն ու արժէքը բացատրելու կամ հասկանալի կացուցանելու համար, պէտք է նորա ծագման կամ լինելութեան ընթացքը, պարագաները վերլուծութեան ենթարկենք, որպէս զի նորա էութիւնն ու առանձնայատկութիւններն էլ հասկանալի դառնան: Քրիստոնէութեան հաստատութեան աւանդութիւնները Հայաստանում կապուած են առաքելական շրջանի հետ: Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալները առաջին քարոզիչներն են համարւում, և դորա հետ էլ Հայ նահատակների վկայաբանութիւններ կապուած: Բայց պատմական առաջին տեղեկութիւնն ունենք 251 թուականից Հայ եպիսկոպոսութեան գոյութեան մասին Հայաստանում, Հայոց Մեհրուժան եպիսկոպոսը թղթակցութեան մէջ է եղել Աղեքսանդրիոյ Դիոնեսիոս եպիսկոպոսի հետ և այդ թղթակցութիւնը կարդացել և հաղորդել է Եւսեբիոս կեսարացին իւր պատմութեան մէջ: Բայց հաւանօրէն եղել են և ուրիշ եպիսկոպոսներ. առանց քրիստոնէութեան նախնական քա-

բողութեան և տարածման, հասկանալի չէր լինի Լուսաւորչի յաջողութիւնը և քրիստոնէութիւնը ազգային և պետական կրօն դարձնելու հանգամանքը:

Քրիստոնէութիւնը որպէս հոգեւոր շարժման պատճառ, նոր և լուսաւոր վարդապետութիւն պէտք է իր հոգեւոր ներգործութիւնն ունենար: Դ. դարն ամբողջապէս Հայ ժողովրդի երկունքի դարն է: Տեղական դպրոցների բացման մասին Ասորի և Յոյն լեզուներով, իրենց նշանակութիւնը պիտի ունենային զուտ կրօնականի հետ և մտաւոր տեսակէտով: Մեր պատմիչները քիչ տեղեկութիւն են տալիս այդ մասին. մենք տեսնում ենք Լուսաւորչի որդւոց և թոռանց գործունէութիւնն ու պայքարը քրիստոնէութեան հաստատութեան համար այդ ուղղութեամբ, բայց դորան զուգընթաց է մի մեծ շարժում, որ նկատում ենք այլ ուղղութեամբ: Ոչ միայն դրսից քրիստոնէութեան քարոզիչներ են գալիս, ասորական և հելլենիստական կրթութեամբ, այլ Հայ երիտասարդներ են ուղարկւում ժամանակի լուսաւորութեան կեդրոնները, ուր ծաղկում էր ժամանակի գիտութիւնը: Այդ կեդրոններն էին Եդեսիան, Մծբինը, Անտիոքը արեւելքում, Աղեքսանդրիան, Աթէնքը և յետագայում Բիւզանդիոն արեւմուտքում: Մենք այդ մասին տեղեկութիւններ ունենք օտարազգի մատենագիրների մօտ. Բարսեղ Կեսարացի, Գրիգոր աստուածաբան և ուրիշները, տեղեկութիւններ են տալիս իրենց Հայ ուսանող ընկերների մասին, որ հոյլ են և ոչ հազուագիւտ երեւոյթ. Հայ ուսանողները շատ անգամ վէճի են բռնւում Յոյների հետ, և յետին իրենք չեն: Նրանցից մինչեւ իսկ ոմանք առաջաւոր դիրք են ստանում ժամանակի գիտութեան և հռետորութեան մէջ. հէնց Բարսեղ Կեսարացին և Գրիգոր աստուածաբան աշակերտն են Պրոյերեսիոս Հայ փիլիսոփայի և հռետորի, որ դասախօսում էր Աթէնքում և Հռոմում, ուր նորա արձանը կանգնեցրին, «Թագաւորին Հռետորաց Թագուհին Թագաւորաց Հռոմ»: Առանց այս նախընթաց նախապատրաստական շրջանին, հասկանալի չէ Ե. դարի մեծ և հոգեւոր վերածնութիւնը, տառերի գիւտը, Աստուածաշնչի թարգմանութիւնը, ազգային դրականութեան և պատմագրութեան ծագումը, Վարդանանց ու Վահանանց պատերազմը, Ղեւոնդեանց քահանայութիւնը, և այնպիսի սքանչելի, յղկուած դասական լեզու, ինչպէս մեր Ե.-Զ. դարերի հայերէնն է: Դորա հետ էր կապուած և Հայ եկեղեցական մեծ արուեստը, ճարտարապետութիւնը, որ քրիստոնէութեան հաստատութեան հետ նոր թափ եւ զարգացում է ստանում և բարձ-

րագոյն գագաթնակէտին հասնում Զ.-Է. դարերում։

Բ.

Հայ եկեղեցու լինելութեան էութիւնը և առանձնայատկութիւնները հասկանալու համար, անհրաժեշտ է ի նկատի ունենալ ժամանակի քաղաքական, ինչպէս և երկրի աշխարհագրական-պատմական հանգամանքները։ Երրորդ դարի երկրորդ քառորդին Պարսկաստանում քաղաքական կրօնական մի մեծ շարժում է սկսում, ազգային իշխանութիւնները Սասանեանների գլխաւորութեամբ գլուխ են բարձրացնում և դահընկէց անում Պարթեւական հարստութիւնը. նրանք փորձում են մինչև իսկ Հայաստանի Արշակունեաց հարստութիւնը ոչնչացնել. դորա հետ Պարսից մէջ յառաջ է գալիս վերածնութեան մի մեծ շարժում, նորոգել Աքեմենեան հարստութեան հզօրութիւնը և ծաւալումը Պարսկաստանի հետ Առաջաւոր Ասիայում և վերակենդանացնել Զրադաշտականութեան ներգործութիւնը, որ թուլացել էր հելլենականութեան ազդեցութեամբ։ Այս ձգտումից է յառաջ գալիս քաղաքական այն մրցակցութիւնը, որ նկատելի է Սասանեանց գոյութեան ամբողջ շրջանում, նախ ընդդէմ Հռոմի և ապա Բիւզանդականութեան։ Այս մրցակցութեան զոհն էր Հայաստանը։ Դ. դարում արդէն նկատելի էր Հայ պետութեան զօրութեան հետզհետէ նուազումը և մօտալուտ անկումը երկու մրցակիցների հարուածների տակ։ Պարսից քաղաքական և կրօնական վերածնութեան ընթացակից էր ժամանակով քրիստոնէութեան ընդունելութեան և եկեղեցու կազմակերպութեան ջանքերը Հայաստանում, ինչպէս և դորա հետ կապուած մշակոյթային մեծ շարժումը։ Հայ եկեղեցու և ազգի ղեկավարները գտնում են մի հաստատութիւն, որ պէտք է ամրոցը դառնար, անառիկ ամրոցը Հայութեան։ Հայութիւն և քրիստոնէութիւն, քրիստոնէութիւն և հայութիւն թափանցում են փոխադարձաբար իրար մէջ, որպէս մի ամբողջութիւն, միութիւն։ Եթէ Դ. և Ե. դարերը ինքնապաշտպանութեան շրջանն էր գլխաւորապէս Պարսից դէմ, Զ. դարը ինքնապաշտպանութեան դարն է ընդդէմ Բիւզանդականութեան։ Բաբգէն և Ներսէս Բ. կաթողիկոսների գլխաւորութեամբ գումարուած ժողովները Հայ դաւանաբանութեան հաստատութիւնն էր և եկեղեցու անկախութեան և ազգայնութեան պաշտպանութիւնը ընդդէմ քաղկեդոնականութեան։ Բիւզանդացիք նոյնպէս ձգտում էին Հայ եկեղեցին և ազգը բոլորովին իրենց ենթարկել, ինչպէս Պար-

սիկները։ Յետագայ պատմութիւնը ապացոյցը բերաւ, թէ Բիւզանդական բաժնի Հայոց քաղկեդոնականութիւնը ընդունելը կամուրջ հանդիսացաւ և նրանց ձուլման Բիւզանդականութեան կամ Յունաց մէջ։ Ո՞ւր են Հայ Հոռոմները կամ Ուխտանէսի յիշած Ծաթերը, որ քաղկեդոնականութիւն ընդունած Հայեր էին։ Մօրիկ կայսեր քաղաքականութիւնն էր ջլատել Հայաստանեայց եկեղեցու կաթողիկոսութիւնը, ստեղծելով հակաթոռութիւն ընդդէմ Մովսէս Եղիվարդեցի օրինաւոր կաթողիկոսի։ Նոյն քաղաքականութեան հետեւանքն էր Վրաց բաժանումը Հայերից։ Հերակլեան կայսերական տան երկու մեծ ներկայացուցիչները մի կամքի վարդապետութեան ընդունելութեամբ կամեցան միութիւն ստեղծել բոլոր եկեղեցիների մէջ, բայց ժամանակաւոր եղաւ այդ։

Պարսից բաժնի Հայաստանը տարբեր պայմանների տակ էր Զ. դարում և Է. դարի առաջին քառորդին, քան Բիւզանդականը։ Պարսիկները փորձեցին քրիստոնէութիւնը ջնջել Դ. և Ե. դարերում, բայց տեսան գործ դժուարութիւնները, ուստի և ստիպուած էին հանդուրժել, աշխատելով Հայերին հեռու պահել Բիւզանդական ազդեցութիւնից։ Այս հանգամանքը դարձաւ գիծ ազգային գոյութեան պահպանութեան, միեւնոյն ժամանակ հոգեւոր կեանքի և մշակոյթի անկախութեան։ Այս պայմանների տակ ստեղծուեցաւ, զարգացաւ և ամրացաւ Հայ ազգային եկեղեցին, որ ամուր պատուարը հանդիսացաւ նորա պահպանութեան՝ արաբական հզօր տիրապետութեան և հալածանքի ժամանակ։

Գ.

Մի այլ հանգամանք եւս ի նկատի պիտի ունենալ Հայաստանեայց եկեղեցու ինքնուրոյն, առանձնայատուկ կողմերը հասկանալու համար։ Հռոմէական պետութեան մէջ եկեղեցին կազմակերպւում է այլ ուղղութեամբ, քան Հայաստանում։ Դիոկղետիանոսի պետական կազմակերպութեան խնդիրը, շատ մեծ նշանակութիւն է ունեցել և եկեղեցու կազմակերպութեան մէջ։ Արեւելքում, ինչպէս Անտիոքը, Եգիպտոսում ինչպէս Աղեքսանդրիան, ապագայում Բիւզանդիոնը իբրեւ մայրաքաղաքը արեւելեան մասի, և Հռոմը, իբրեւ կեդրոնը Եւրոպական նահանգների, դառնում են կեդրոնը մեծ եպիսկոպոսութիւնների, կամ պատրիարքութիւնների համար։

Այլ էր Հայաստանի խնդիրը, թէեւ դաշնակից Հռոմէական պետութեան, ապա թէեւ կռուախնձոր Սասանեանների և հռոմէական

կայսրութեան մէջ, բայց առանձին պետութիւն էր իւր ուրոյն կազմակերպութեամբ, կառավարութեան և փոխ յարաբերութեան ուրոյն ձեւերով: Այստեղ եկեղեցու կազմակերպութիւնը ընթանում է համաձայն Հայաստանի պետական կազմակերպութեան: Ինչպէս թագաւորը գլուխն է պետութեան, որի բաղկացուցիչ մասերն են նախարարութիւնները, մի մի փոքրիկ պետութիւն պետութեան մէջ, այդպէս էլ կաթողիկոսը Լուսաւորչի տան ներկայացուցիչներով, գլուխն է եկեղեցու, իսկ եպիսկոպոսութիւնները համեմատ նախարարական տների: Ուստի և մեր եպիսկոպոսութիւնները համեմատ նախարարութիւնների կոչւում են եպիսկոպոս տանն Սիւնեաց, եպիսկոպոս տանն Մամիկոնեանց, տանն Արծրունեաց, Ամատունեաց եւն.: Ե. դարում կաթուղիկոսի յաջորդութիւնը կապուելով ընտրութեան հետ և ոչ ժառանգական, մի կարեւոր հանգամանք էր, որ կաթուղիկոսութիւնը դառնայ ընդհանրական, համայն ազգային, եկեղեցու միութեամբ էլ զարգանալով ազգային միութեան գաղափարը: Ընտրուած կաթուղիկոսը այլ եւս այս և այն նախարարական տան եպիսկոպոսը չէ, այլ գերագոյն գլուխը և միութեան նշանակը բոլոր եպիսկոպոսութիւնների կամ եկեղեցու: Քաղաքական միութեան պակասութեան հետեւանքով, առաւել եւս զօրանում է նորա համազգային բնոյթը: Նա միջնորդն է իրար հակամարտ նախարարական տների, կամ սրանց և արքայական տան մէջ յետագայում:

Ահա ինչ պայմանների մէջ ստեղծուել է Հայաստանեայց Ազգային Եկեղեցին, որ հետեւանք էր պատմական-աշխարհագրական և քաղաքական պայմանների: Այդ երեւոյթը կամայականութեան արդիւնք չէր, այլ պայմանների. և եթէ կրօնական բառով կամենանք ձեւակերպել, կ'ասենք Աստուծոյ կամքն էր այդ, եթէ հաւատում ենք, թէ նախախնամութիւնն է ազգերի կեանքի և պատմութեան ղեկավարը:

Միտքս ուրիշ օրինակներով կարող եմ բացատրել: Մահմեդականութիւնը ծագել է Արաբիայում և տարածուել Միջագետքում և Սիւրիայում իբրեւ արաբական ժողովրդի հոգեբանութեան արդիւնք: Բայց հէնց նորա ծագման առաջին դարում սկսում է գունաւորուել, տարբեր ձեւակերպութիւն ստանալ, տարբեր ըմբռնումներով, քան դասական մահմեդականութիւնն էր սիւննի, արաբական ըմբռնումը, ձուլող և միացնող: Պարսկաստանը Արաբների նուաճմամբ բոլորովին չկորցրեց իւր ազգային ուրոյն գծերը, ուստի և յառաջ եկաւ պարսկական շիաների հոսանքը

մի և նոյն մահմեդականութեան մէջ։

Քրիստոնէութիւնը մի է, մի Տէր Յիսուս Քրիստոս, մի աւետարան, բայց տեսէք, ունենք տարբեր եկեղեցիներ։ Օրթոդոքս եկեղեցին, Կաթոլիկ եկեղեցին, Բողոքական եկեղեցիներ։ Օրթոդոքս եկեղեցին կարող էր ձեւակերպուել Բիւզանդական ծիսական-արարողական ձեւ ու կերպարանք ստացած աւանդութիւններով։ Կաթոլիկ եկեղեցին կարող էր զարգանալ Հռովմէական կայսրութեան աւանդութիւններով, Իտալիայի բնութեան նման շքեղ, ակնապարար, կլիմայի համեմատ արտաքին գեղարուեստականութեամբ, և Բողոքականութիւնը հիւսիսային, սառը կլիմայական պայմաններում աւելի տրամաբանական — փիլիսոփայական գունաւորութեամբ։ Ահա մեզ նոր ցուցմունք Հայ ազգային—եկեղեցւոյ ծագման և լինելութեան հասկացողութիւնների համար։

Դ.

Այժմ տեսնենք՝ ի՞նչ դեր է կատարել Հայաստանեայց Եկեղեցին և ի՞նչ նշանակութիւն ունի ընդհանուր եկեղեցիների շարքում։ Այդ դերը երկուս է՝ մշակութային և քաղաքական, երկուսն էլ երկերկու երեսով կամ տեսակէտով, այսինքն ազգային և ընդհանուր։ Մենք տեսանք, թէ Հայաստանեայց Եկեղեցու լինելութեան կամ քրիստոնէութեան հաստատութեան հետ որպիսի հոգեւոր շարժում էր սկսուած։ Այդ շարժման հետեւանքն էր Հայ գրի գիւտը, Աստուածաշնչի թարգմանութիւնը, հայերէն աստուածապաշտութեան ծագումն ու զարգացումը, եկեղեցական մեծ հայրերի և մատենագիրների թարգմանութիւնը, հայկական երաժշտութիւնն ու արուեստը։ Իսկ այդ եկեղեցական հայրերի գրուածքները ժամանակի քրիստոնէական մտածողութեան և հոգեւոր կեանքի հասկացողութեան բարձունքն էր։ Թարգմանւում են նաեւ փիլիսոփայական, պատմական նշանակութիւն ունեցող գրքեր։ Իսկ այդ թարգմանութիւնները ոչ միայն ազգային, այլ և ընդհանուր քրիստոնէական գրականութեան արժէք են բերում։ Իրէնէոսի գրուածքները, Բ. դարու վերջերի հեղինակ, թարգմանուելով, պահուած են աշխատութիւններ, որոնց բնագիրը մինչեւ այժմ գտնուած չէ, ինչպէս «Ցոյցք Առաքելականքը», որի գիւտի պատիւը մեր վաղամեռ և գիտնական ընկերոջ և միաբանակցի, Կարապետ եպիսկոպոսին է պատկանում։ Օրոգինէսի և Հիպոլիտի գրուածներից մնացած են ճառեր և հատուածներ, որոնց բնագիրները նոյնպէս կորած են։ Եւսեբիոս Կեսարացու ոչ միայն եկեղեցական պատ-

մուլթեան հին թարգմանութիւնն ունենք, այլ և Նորա քրոնիկոնը ժամանակագրութիւնը, որ սկզբում գիտութեան մատչելի դարձաւ հայ թարգմանութեամբ: Կիւրեղ Աղեքսանդրացու, Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու թարգմանութիւնների մէջ եւս կան գրուածքներ, որոնց բնագիրները չկան, ինչպէս Եզեկիէլի մեկնութիւններն են: Տիմոթէոս Կուզի Հակաճառութիւնը պահուած է և գիտութեան մատչելի դարձաւ դարձեալ Կարապետ եպիսկոպոսի ձեռքով, որ միաբնակ և երկաբնակ դաւանութիւնների վիճաբանութեան համար մեծ նշանակութիւն ունի. որովհետեւ Քաղկեդոնականների կողմից մեծ մասով ոչնչացուած են հակառակորդների գրուածքները: Ե. դարում ստեղծուած էր դասական գրաբար հայերէնը, գեղեցկութեան, կանոնաւորութեան և բարձր մտքեր արտայայտելու առաւելութիւններով, ինչպէս մեր Եզնիկ Կողբացին, որի գըրուածքներից գաղափար ենք կազմում ժամանակակից մազդեզականութեան և Մարկիոնի աղանդի մասին, կրօնների և քրիստոնէական աղանդների պատմութեան համար յոյժ կարեւոր: Ապա մեր պատմական գրականութիւնը հարուստ Ե.–ԺԷ. դարը, առանց որոնց գիտութիւնը պակասաւոր կը լինի Սասանեանների, Արաբների, Բիւզանդացւոց, Սելջուկների, Մոնղոլ-Թաթարական ցեղերի, միջնադարեան Պարսից և Օսմանցւոց պատմութեան նկատմամբ:

Քրիստոնէական բանաստեղծութեան և աստուածպաշտութեան գրականութեան գոհարներ ունենք մեր շարականների կամ Նարեկացու, Շնորհալու գրուածքների մէջ, որ պատիւ կարող են բերել շատ աւելի մեծ ազգերին, քան մենք ենք: Մայրագոմեցին և Օձնեցին տալիս են մեզ պատկերամարտութեան և Պաւղիկեան աղանդների մասին տեղեկութիւններ: Հայ ճարտարապետական արուեստը քրիստոնէական արուեստի ծագման և զարգացման պատմութեան համար սկսել է կարեւորագոյն նշանակութիւն ստանալ, և քրիստոնէական Բիւզանդական, Ռոմանական, Գոթական ճարտարապետութիւնների կողքին շատ պատուաւոր տեղ բռնել, և մեծ նպաստ բերել ընդհանուր քրիստոնէական արուեստի հասկացողութեան համար: Երախտապէտ ենք Strzygowski-ին, որ Հայ արուեստի և յատկապէս ճարտարապետութեան մեծ արժէքը կարողացաւ պարզել եւրոպական-քաղաքակիրթ ազգերի աչքում:

Հայ ձեռագրական արուեստը, մօտ 20,000 հատոր ձեռագիրներով, հրաշալի և հարուստ մանրանկարչութեամբ, ճարտարապետութեան հետ, ոչ միայն ազգային մեծ արժէք է, այլ և Առաջաւոր Ասիայի քաղաքակիրթ ազգերի, նաեւ որոշ չափով եւրոպական

ազգերի, նման արուեստների փոխ-ազդեցութեան և հասկացողութեան մի կարեւոր նպաստ։

Մեր եկեղեցական երաժշտութիւնը, միջնադարեան բանաստեղծութիւնը սկսել է յատուկ ուշադրութեան արժանանալ Եւրոպացի գիտնականների և բանաստեղծների կողմից, ինչպէս Ռուս մեծ բանաստեղծ Բրիւսովի ուսումնասիրութիւնն է Պօէզիա Արմենիի վերնագրով, կամ Ա. Չօպանեանի ֆրանսերէն թարգմանութիւններով։

Ե.

Բայց Հայ Եկեղեցու ամենամեծ արժանիքը, որ պէտք է բարձրագոյն գնահատութեան արժանանայ, այդ մեր ինքնապաշտպանութեան, դորա հետ էլ կապուած ընդհանուր քրիստոնէութեան պաշտպանութեան խնդիրն է: Քրիստոնէութեան հաստատութեան առաջին օրերից Հայ քրիստոնէութեան վիճակուել է պատերազմել իր պաշտպանութեան համար։ Դեռ եւս նոր հաստատուած և քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակուած, Հայերը պիտի պաշտպանէին քրիստոնէութիւնը Հռոմէական կեսար Մաքսիմինուս Դայա-ի հալածանքների դէմ. առաջին ազգը որ քրիստոնէութիւնը պետական կրօն դարձրեց և առաջին ազգը, որ պատերազմեց նորա պաշտպանութեան համար։ Հայ պատմագիրներից չէ, որ իմանում ենք այս տեղեկութիւնը. Պարսից Շապուհ Բ.ի հալածանքը Դ. դարում, Յազկերտ Բ.ի հալածանքը Ե. դարում, Վարդանանց և Վահանանց պատերազմով։

Ապա Հայ քրիստոնէութեան դերը արաբական ոչնչացնող, կործանող հալածանքների դէմ։ Արաբները պատմութեան մէջ հանդէս են գալիս հրով և սրով իրենց կրօնը տարածելու։ Ոչնչացնում են մեծ Պարսկաստանի մազդեզանց կրօնը և մահմեդականութիւնը հաստատում։ Բայց ոչ պակաս յաջող էր քրիստոնէութեան տուած հարուածների մէջ։ Ո՞ւր է պարսկական քրիստոնէութիւնը, Արաբիայի քրիստոնէութիւնը, որի եպիսկոպոսները մինչեւ մահմեդականութեան երեւալը մասնակցում էին եկեղեցական ժողովներին։ Օրինակ Փառանի եպիսկոպոսութիւնը։ Ո՞ւր է հիւսիսային Աֆրիկէի, Կարքեդոնի եպիսկոպոսութիւնը, որ Գ. դարում տուել է այնպիսի հոյակապ անձնաւորութիւններ և մատենագիրներ, ինչպէս Կիպրիանոս և Տերտուլիան մեծ մատենագիրը։ Ինչպիսի՛ խեղճութեան հասել ասորական և կոպտական եկեղեցիները, որոնք Դ.—Ե. դարում քրիստոնէական եկեղեցու փառքն էին կազմում, յատկապէս Ա-

ղեքսանդրիայի եկեղեցին, որ առաջնորդող դեր էր կատարում քը-րիստոնէութեան մէջ։ Բոլորովին անհետացել են կամ ամենախեղճ վիճակի հասել։ Հայ-քրիստոնէութիւնը դիմացել է արաբական հուրին և սուրին դարերի ընթացքում, անթիւ, անհամար զոհեր տալով, և որ կարևորն է, իր ինքնապաշտպանութեամբ պաշտպանել եւ իրենից արեւմուտք եղած բիւզանդական քրիստոնէութիւնը։ Երբեք և աւելի դարեր Հայութիւնն է եղել այն թումբը, որ բռնել է արաբական ամեն ինչ կլանող հոսանքի առաջ։ Բայց ոչ միայն Հայաստանում, այլ և Բիւզանդական պետութեան մէջ Հայ տարրը ահագին դեր է կատարել պետութեան, որով և քրիստոնէութեան պաշտպանութեան գործում։ Հայկական բանակը (Արմենիական թեմա) արաբական սահմաններին մօտ բանակն էր, զօրա և միւս բանակների զօրապետները յաճախ Հայ իշխաններ էին Ը. դարում, որոնք իրենց բանակի մէջ Հայկական գնդեր եւս ունէին, ինչպէս Մանուէլ Մամիկոնեան, իր ժամանակի մեծագոյն զօրավարը, և ուրիշները. չենք յիշում քաղաքական և լուսաւորութեան ասպարիզում Հայոց կատարած դերը։ Ապա Սելջուկնե՞րը, Մոնղոլ Թաթարնե՞րը, Թէմուրլէնգնե՞րը, Սեւ և Սպիտակ Խոյերի, Պարսից և Օսմանցւոց երկար դարերի հալածանքնե՞րը, անթիւ, անհամար նահատակութիւննե՞րը իրենց քրիստոնէական հաւատի մէջ։ Եթէ մենք գրելու լինենք այդ դարերի պատմութիւնը, անվերջ շղթաներ տանջալից մարտիրոսութիւնների, գերեվարութեանց, յատկապէս Սելջուկների, Թաթարների և Թուրքմենական ցեղերի կողմից, մի ահաւոր էջ կը կազմէ մարդկային կեանքի պատմութեան, որ, գուցէ, ոչ մի ազգի չէ վիճակուել ունենալ։ Մեր ձեռագիրների մէջ յիշատակարանները տալիս են դարէ ի դար այդ ողբերգութեան կենդանի պատկերը, ժամանակակից և ականատես գրիչների կողմից գրուած։ Ահա այսպիսի գնով մենք եկեղեցի ենք պահել, պաշտպանելով և ընդհանուր քրիստոնէութիւնը։

Կաթոլիկ և Բողոքական եկեղեցիները մեծ են և հարուստ, միլիոններ են ծախսում միսիոնարութեան համար, աւա՜ղ, նաև «եկամուտներ» (պրոզելիտ) գտնելու համար, իսկ Հայաստանեայց Եկեղեցին պահպանել է քրիստոնէութիւնը իր զաւակների արիւնով և նահատակութեամբ, աւելի թանգ վճարելով հոգիների փըրկութեան համար։

Ով Հայոց Եկեղեցու աղքատութեան և խեղճութեան մասին է խօսում, առանց այս պայմաններն ի նկատի ունենալու, ամենամեծ անարդարութիւնն է կատարում պատմութեան, հաւա-

տում եմ, նախ Աստուծոյ արդար դատաստանի առաջ։

Մենք ուրախ ենք և հպարտ, որ ազգային եկեղեցի ունենք։ Հայ ժողովրդի ամենամեծ ստեղծագործութիւնը, դարերի պատմական և քաղաքական պայմանների մէջ ձեւ ու կերպարանք ստացած, սնած, գործած և նահատակուած, իր ժողովրդի հոգեւոր դէմքն ու աւետարանից ստացած ժառանգութիւնը պահպանելու համար։

Թո՛ղ, միշտ վառ մնայ այդ գիտակցութիւնն ու զգացումը նորա մէջ. միշտ իր ժողովրդի հետ, վշտակից նոյն վշտերին, ուրախակից ուրախութիւններին։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ, Հոկտ. 1943.

ԽԲ.

ԴԷՊԻ ՎԵՐ ԵՒ ԿԱՏԱՐԵԱԼԸ (*)

Եղերու՛ք կատարեալք, որպէս եւ երկնաւոր
Հայրն ձեր կատարեալ է:

Մատթ. Ե. 18.

Ա.

Հաւատացեա՛լ ժողովուրդ,

Լսեցիք այսօրուայ պատարագին կարդացուած աւետարանական հատուածը, Լերան քարոզի հրաշալի պատգամները։ Լերան քարոզ է կոչւում Մատթէոսի Ե., Զ. և Է. գլուխները, որ Յիսուսի քարոզների և պատգամների կամ պատուիրանների մի ժողովածու է, բայց այդ անունն է կրում, որովհետեւ ըստ աւետարանական աւանդութեան խօսած է Նա մի լերան վերայ, շուրջն ունենալով իր աշակերտներին և ունկնդիր ժողովրդեան։ Լերան քարոզը մի անգամից չի խօսուած, նոյն իսկ մի ամբողջութիւն չէ կազմում ըստ բովանդակութեան. Նա մի քանի հատուածներ ունի, որոնցից իւրաքանչիւրը իր համար որոշ ամբողջութիւն է։ Լերան քարոզը գրի չի առնուած նաեւ Յիսուսի խօսելու ժամանակ, այլ յետոյ, երբ առաքելական շրջանում գրի են առնուել աւետարանական քարոզութեան որոշ մասեր և օգտագործուել են քրիստոնէական նորակազմ համայնքների մէջ իբրեւ ուղեցոյց նոր վարդապետութեան՝ աւետարանների գրութիւնից առաջ։

Լերան քարոզը աւետարանական քարոզութեան ամենագեղեցիկ մասերից մէկն է ոչ միայն իր ամբողջութեամբ կամ հատուածներով, այլ նորա իւրաքանչիւր մի խօսքը թանկագին գանձ է մարդկութեան համար։ Իբրեւ բնաբան մեր այսօրուայ խորհրդածութեան ընտրեցինք մի պատգամը միայն. «Կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»։

Կատարելութեան ձգտումը մարդկային հոգու ամենավսեմ և ազնիւ յատկութիւններից մէկն է, յառաջդիմութեան հիմնաքարը, թէ՛ անհատների և թէ ազգութիւնների համար։ Այն անհատը, որ ձգտում չունի հետզհետէ կատարելագործուելու, նա դատա-

(*) Խօսուած Ն. Նախիջեւանի Ս. Լուսաւորիչ եկեղեցում:

պարտուած է անշարժութեան կամ մահուան։ Կեանքը շարժում է իւր արտաքին բոլո՛ր երեւոյթներով, բայց նա շարժում է, ձըգտում է դէպի յառաջդիմութիւնն ու կատարելութիւնը և իւր ներքի՛ն էութեամբ։ Յառաջդիմութեան և կատարելութեան գաղափարը առանցքն է անհատական կեանքի և ազգերի պատմութեան։ Այդ պատճառով էլ ազգերի հոգեւոր կեանքի ղեկավարները միշտ աշխատել են կատարելութեան գաղափարներ տալ, որին պիտի ձգտէին անհատներն ու հասարակութեան անդամները։ Այսպէ՛ս, կրօնի հիմնադիրները, մեծ մտածողները իրենց հետեւողների եւ կեանքի առաջ դրել են բարձրագոյն գաղափարներ և նպատակներ, մասամբ դիւրացնելով և ցուցումներ տալով այդ մտքով։

Բ.

Կեանքի նպատակ, ամենամեծ առեղծուածն է, որ դրուած է մեր առաջ։ Իմանալ կատարուելիք գործի նպատակը, իմանալ նորան հասնելու ուղեգիծը, յաջողութեան կէսն է։ Ամենքը ընդունակ չեն գիտակցելու այդ բանը։ Ամենքը Պօղոս առաքեալ չեն, որ ասել կարողանան «ես այնպէս ընթանամ, ոչ որպէս յանհերեւոյթս. այնպէս մրցիմ, որպէս ո՛չ թէ զհողմս ինչ կոծելով», այսինքն, անորոշութեան և խաւարի մէջ չեմ խարխափում, գիտեմ իմ գնալիք ուղին և գիտեմ, թէ ո՛ւր եմ գնում։ Բայց նա էլ այդ խօսքն ասել կարող էր, որովհետեւ գիտէր, թէ ո՞ւմ հետեւողութեամբ և շաւղով պիտի ընթանար։ «Նմանող ինձ եղերուք, որպէս և ես Քրիստոսի»։ Եթէ ճարտարապետը գծել է շէնքի յատակագիծն ու նախագիծը, որմնադրի համար դժուար չէ կանգնել շէնքը։ Արդ, մեր կեանքի ճարտարապետը քրիստոնեաներիս համար Յիսուս Քրիստոսն է, որ գծել է հաւատացեալի կատարելութեան ուղին իւր անձի օրինակով և վարդապետութեամբ, որ դէպի երկնաւոր Հայրն է տանում։

Հին աշխարհին էլ անծանօթ չեն եղել կատարելութեան ձըգտումներն ու ճանապարհները։ Ո՛չ միայն կրօնների հիմնադիրները, այլ և մեծ մտածողները աշխատել են պարզել այդ խնդիրը։ Եւ մենք պիտի աւելցնենք, որ ի զուր չէ անցել նրանց աշխատանքը։ Մենք ընդունում ենք պատմութեան բարեշրջման (էվոլիւսիոնի) գաղափարը, բայց ոչ թէ մենք, այլ մեր առաքեալն իսկ. «իբրեւ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր», ասում է նա Գաղատացիներին գրած թղթի մէջ։ Հեթանոսական աշխարհը իւր մեծ մտածողներով, ինչպէս հրէութիւնը իւր անցեա-

լով և մարգարէութեամբ, մի տեսակ պատրաստական շրջան էր քրիստոնէութեան ծագման համար։

Գ.

Հոգու անմահութեան գաղափարը, թէեւ նիւթական հասկացողութեամբ, եգիպտական հեթանոսութեան և նորա հետ սերտ կապուած կրօնական արուեստի և քաղաքակրթութեան առանցքն է։ Յունական փիլիսոփայութեան մեծ ներկայացուցիչները, Սոկրատէս, սորա աշակերտ Պղատոնը և վերջինի աշակերտ Արիստոտէլը, իւրաքանչիւրը իւր ձեւով, բարոյական և կրօնական գաղափարների հասկացողութեան մի տեսակ նախաստիճաններ են յետագայի, աւելի նուրբ քրիստոնէութեան, ըմբռնման։ Սոկրատէսի «Ճանի՛ր զքեզ» խօսքը, ո՛րքան մօտ է իւր էութեամբ Տիրոջ «Արքայութիւնն ի ներքս ի ձեզ է» արտայայտութեան։ Պղատոնն ու Արիստոտէլ, բոլորովին իրարից տարբեր, բայց երկուսն էլ իրենց երանութեան կամ երջանկութեան գաղափարներն ունեն։ Պղատոնը իւր երջանկութիւնը աստուածների օրինակի մէջ էր տեսնում, Արիստոտէլը՝ գիտութեան, մէկի համար իսկական «էն» կամ «գոն» գաղափարն էր, միւսի համար տիեզերքի ըմբռնումը՝ իբրեւ որոշ օրէնքների վերայ հաստատուած երեւոյթ։

Մեզ համար հետաքրքրական է Պղատոնի էթիկան, ուր մարդու կեանքի նպատակը որոշւում է, խորտակել չարի զօրութիւնը, խուսափելով մոլութիւններից և նմանել աստուածութեան առաքինութեամբ։ Մահուան վերայ նայում է նա, որպէս «կատարեալ ազատութեան մի կամուրջի» վերայ։ Նորա փիլիսոփայութեան՝ մէջ նկատելի են երկրաւորի անցաւորութեան և հոգու փրկութեան պահանջի գաղափարը։ Ահա պատճառը, որ եկեղեցու հին ջատագովները (Apologet) և նշանաւոր հայրերը, այնքան կարեւոր նշանակութիւն են տուել Պղատոնի փիլիսոփայութեան։

Արիստոտէլի փիլիսոփայութիւնը, այլ տեսակէտով, մեզ համար արժէք է ստանում. նախ. նորա տրամաբանութեան կամ մտածողութեան օրէնքների մասին գրած աշխատանքը, և ապա նորա տեսական փիլիսոփայութիւնը իրերի էութեան և գերբնականութեան մասին, որքան մարդկային միտքը կարող է քննել։ Նա Ֆիզիքական մարմիններից դուրս ընդունում է մի անշարժ և աննիւթ էութիւն, որ բոլոր գոյութիւնների հիմքն է, այսինքն Աստուծոյ գոյութիւնը՝ «ամէն ինչ շարժող, բայց ինքն անշարժ», ոչ անձնաւորեալ, ինչպէս քրիստոնէականը։ Որքան և կրօնական չէ

նորա այդ փիլիսոփայութիւնը, բայց յետագայ դարերում քրիստոնէական աստուածաբանական գիտութեան աղբիւրներից մէկն է դարձել նորա փիլիսոփայութիւնը, Աստուծոյ գոյութիւնը հաստատելու համար։ Բայց թէ՛ Պղատոնը և թէ Արիստոտէլը. երկուսն էլ տեսական, մտքի հետ կապուած, մանաւանդ վերջինը, ուստի և անմատչելի ժողովրդին և անբաւարար նորա բարոյական դաստիարակութեան ծառայելու։

Մենք չենք խօսում յունական փիլիսոփայական դպրոցների մասին, որոնցից յատկապէս ստոյիկեանները քրիստոնէութեան շատ մօտ գծեր ունին։ Նրանց գերական կամ իդէալը իմաստունն է կամ փիլիսոփան, որ վեր է ամբոխից և արհամարհանքով է նայում ժողովրդի կամ հասարակ մահկանացուների վրայ. բոլորովին տարբեր քրիստոնէութեան եղբայրութեան, և գթութեան գաղափարներից։

Այդ է պատճառը, որ երբ յոյն-հռոմէական աշխարհում կրօնական անկման շրջանն սկսեցաւ, փիլիսոփաներն ու նրանց դըպրոցները անկարող եղան պահելու ժողովրդին, անբարոյ, գեղխ, անգութ, չուայտ և եսական մտայնութեան մէջ ընկնելուց, որպիսին քրիստոնէութեան ծագման օրերին «քաղաքակիրթ» մարդկութիւնն էր, յատկապէս նորա «առաջաւոր» դասը։

Դ.

Հրէական կրօնը իւր միաստուածութեան գաղափարով եւ Տասնաբանեայ պատգամներով ամենից մօտն էր քրիստոնէութեան և անմիջապէս կապուած նորա հետ։ Բայց քրիստոնէական կրօնը. ո՛չ միայն լրումն էր հրէութեան, այլ և նորութիւն՝ աստուածութեան, սիրոյ կամ ընկերային գաղափարների ըմբռնման։ Տասնաբանեայ պատգամների մէջ Աստուած երեւան է գալիս իբրեւ նախանձոտ, վրէժխնդիր պատուիրանազանցներին մինչեւ «յերիս և ի չորս ազգս»։ Նա Հրէաների Աստուածն է, և միայն մեծ մարգարէների մէջ, երբեմն տիեզերական մտքով հասկացուած։ Իսկ ընկերային յարաբերութեան և սիրոյ պատգամները Քրիստոսի բերած սրբագրութեամբ (Մատթ. Ե. 21--44) յեղաշրջումն է բոլորովին հրէական հասկացողութեան։

Աւետարանի Աստուածը երկնաւոր Հայրն է, որ «զարեգակն իւր ծագէ ի վերայ չարեաց և բարեաց, և ածէ անձրեւ ի վերայ արդարոց և մեղաւորաց»։ Մարդիկ նորա որդիքն են, ուրեմն և եղբայրներ միմեանց, և պէտք է նմանեն իրենց Երկնաւոր Հօրը՝

«Ա՛րդ, եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»։ Զգտո՛ւմը այսպիսի կատարելութեան տիեզերական է, պարփակելով ազգայինն ու անհատականը, որովհետեւ Նորա չափանիշն ու հիմքը սէրն է, եղբայրութիւնն է, լայնախոհութիւնն է և հանդուրժողութիւնը փոխադարձ։ «Զամենայն զոր միանգամ կամիցիք, թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք արարէք նոցա», որ գործնական և հասկանալի ցուցումն է եղբայրութեան և կատարելութեան հասկացողութեան։

Այսպիսով, Տիրոջ քարոզած կատարելութիւնը տարբեր է բանականութեան կամ փիլիսոփայական մտքով առաջարկուած կատարելութեան իդէալներից, տարբեր են միանգամայն և Նորա քարոզած կատարելութեան ուղիները, և վախճանական նպատակը։ Այնտեղ բանականութիւնն էր աղբիւրը, որտեղից ցուցում և լոյս էր սպասւում կատարելութեան ուղիների համար, այստեղ հաւատը, կատարեալ վստահութիւնը և սէրը առ Աստուած, որից եւ բղխում էր սէրը դէպի ընկերը, դէպի նման մարդը։ Այնտեղ փիլիսոփան էր կատարեալը, որ քչերին էր վիճակուած լինել, ուրեմն և բանականութեամբ ձեռք բերուած փիլիսոփայութեան մէջ պիտի որոնել կատարելութիւնը. սառը, հպարտ, եսական, բարձրից նայելով ողէտ և արհամարհելի ամբոխի վերայ, ինչպէս ստոյիկեաններն էին, իսկ այստեղ համակ սէր, գութ, անձնուիրութիւն դէպի մարդը և դէպի ժողովուրդը (Սիրեսցես զընկեր քո, իբրեւ զանձն քո. Մատթ. ԻԲ. 39։ Սամարացու առակը. Ղուկ. Ժ. 33—37։ Գթամ ի ժողովուրդդ. Մատթ. ԺԵ. 32)։ Սովորական հասկացողութեամբ մէկը «բնական», բանականութեան թելադրութեամբ գծուած ուղին, միւսը «գերբնական» հաւատով և սիրով լցուած։

Կը կամենայինք երկու խօսքով բացատրել մեր միտքը չակերտի մէջ առնուած այդ երկու բառերի մասին։ Տիեզերքի մէջ բնականի և գերբնականի բաժանում չկայ. այդպիսի բաժանում մարդկային միտքն է կատարում, երկուսն էլ հաւասարապէս երեւոյթներ են, միայն, մէկը ենթակայ վերլուծութեան և մեքենական օրէնքների, իսկ միւսը ոչ։ Նիւթական առարկաները կարող ենք քիմիական վերլուծութեան ենթարկել, իրենց բաղկացուցիչ մասերի — ինչպէս օդը, ջուրը եւլն.։ Արտաքին երեւոյթներ, անձրեւ, կարկուտ, նոյն իսկ երկնային մարմինների շարժումները, ենթակայ են մեքենական օրէնքների և հասկացողութեան։ Բայց նոյն տեսակ վերլուծութեան և մեքենականութեան ենթարկել չենք կարող մարդկային գիտակցութիւնը, երեւակայութիւնը, հանճարն

ու ստեղծագործութիւնը, իր ամենատեսակ մարդերի մէջ, ուրիշ խօսքով հոգեկան, ներքին կեանքը իր բովանդակ ծաւալով։ Բայց նրանք կան, իրողութիւններ են, և իսկական, արժէքաւոր իրողութիւններ, և նոյնպէս «բնական», ինչպէս արտաքին իրերն ու երեւոյթները, միայն տարբեր չափանիշների ենթակայ, մեր բանականութեան վերլուծութեան սահմաններից դուրս։ Այստեղ առաքեալի հետ ասել կարող ենք. «Փոքր ի շատէ գիտեմք», այսինքն մեր գիտութիւնը չափաւոր է, սահմանափակ։ Հոգեկան աշխարհի մէջ կան մինչեւ իսկ ապրումներ և ըմբռնումներ, որոնք մեր հինգ զգայարանքներով հասկանալի չեն, ներհայեցողական, հոգետեսական մի կարողութիւն, եւրոպական բառով intuitive կոչուած։ Ապա, ուրեմն, վաղվաղկոտ չպէտք է լինել ժխտողական դիրք բռնելու, ինչ որ վերլուծութեան, բնական կամ մեքենական օրէնքի չի ենթարկւում։

Ե.

Վերլուծութեան և «բանականութեան» օրէնքներին չենթարկուող ամենամեծ երեւոյթներից մէկն էլ հաւատոյ խնդիրն է, կրօնական ապրումը հոգեկան ներքին աշխարհում, հաւատը Աստուծոյ գոյութեան և «երկնաւոր հայր» լինելու իրողութեան։ Աստուծոյ գոյութիւնը, ի հարկէ, ապացուցանել չենք կարող բանականութեան և բնական օրէնքների փաստարկութեամբ, բայց այդպիսի հաւատը իրողութիւն է մարդկային հոգու զարգացման պատմութեան մէջ, ուր հաւատն է եղել աշխարհը շարժող ամենամեծ զօրութիւններից մէկը։ Մտածեցէ՛ք, թէ ինչպիսի մեծ դեր են կատարել կրօնների հիմնադիրները, աստուածամերձ անձնաւորութիւններն ու մարգարէները իրենց ժողովրդի կեանքի մէջ։

Այն ինչ որ միայն բանականութեամբ և մեքենական օրէնքներով առաջնորդուող և աշխարհահայեացք ունեցող մարդկանց համար անընդունելի է և շատերի համար զառանցանք, հաւատաւորի համար կեանք է, զօրութիւն և փրկութիւն։

Մեր Տէրը արտաքոյ կարգի նշանակութիւն է տալիս մարդկային հոգու այդ կարողութեան, որի համար բազմաթիւ ցուցումներ կան աւետարանի մէջ։ Կատարելութեան պատգամի հետ կապուած հատուածների մէջ «հաւատ» բառը չի յիշուած, բայց ամբողջը հիմնուած է առ Աստուած վստահութեան և հաւատոյ վերայ։ Ինքն էլ ոչ միայն վարդապետական պատգամ է տալիս, այլ իր անձի օրինակով, վստահութեամբ, հաւատով և կատարեալ

նուիրմամբ երկնաւոր Հօրը, հասկանալի դարձնում այն։ Նորա գործը, կեանքը ընթանում է Հօր Աստուծոյ կամքով և օրինակ է մեր կատարելութեան ձգտման։ Առաքեալն էլ շեշտում է այդ հանգամանքը. «Նմանողք ինձ եղերուք, որպէս և ես Քրիստոսի»։

Ապա, ուրեմն, Տիրոջ հետեւելով, Նորա շաւղով ընթանալով, կատարելութեան ուղին և նախատիպը գտած կը լինենք։ Դէպի վեր, դէպի կատարեալը։ Աստուած օգնէ մեզ մեր տկարութեան մէջ։

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԱՍԿ. Փետրուար, 1946.

ԽԳ.

ԱԶԳԱՀԱՒԱՔԻ ՄԵԾ ԳՈՐԾԸ

Ա.

Հայ ժողովրդի տարեգրութեան մէջ արտաքոյ կարգի երեւոյթ էր 1946 թուի ներգաղթը դէպի Հայաստան։ Վեցերորդ դարից սկսած հայ ժողովուրդը շարունակ հոսուածներ է տուել դէպի հայրենիքից դուրս եղած մերձաւոր և հեռաւոր երկրները՝ բռնի և կամաւոր պատճառներով։ Բիւզանդական կայսրները հայ նախարարները իրենց զօրքերով փոխադրել են Թրակիա և աւելի հեռու, յաճախ արեւմտեան սահմանների պաշտպանութեան կամ նուաճումներ կատարելու համար, իսկ Պարսիկները արեւելքում հայ զօրքերով դիմադրել են իրենց թշնամիներին կամ արշաւանքներ կազմել նրանց դէմ։

Արաբական շրջանում շատ նախարարներ ապստամբելով տիրող բռնութեան դէմ, հալածուած Արաբներից, ստիպուած են եղել ապաստան գտնել բիւզանդական պետութեան սահմանամերձ գաւառներում։ Բիւզանդացիք էլ կարողացել են լաւագոյն կերպով օգտագործել այդ հանգամանքը յօգուտ իրենց։ Ութերորդ և իններորդ դարերում հայ ազնուականութեան և ժողովրդի կարեւոր հոսուածներ ունենք Կ. Պոլսում, որոնք նշանաւոր դեր են կատարում մայրաքաղաքում և պետութեան մէջ զինուորական և քաղաքակրթական տեսակէտներով, յատկապէս Մամիկոնեան տոհմի ներկայացուցիչները։ Բիւզանդական պետութեան պաշտպանութեան մէջ ընդդէմ արաբների յառաջընթաց և կարգաւորեալ արշաւանքների՝ հայկական տարրը իր հայ զօրապետներով շատ կարեւոր մաս ունէր. ոչ միայն պետութեան հինգ բանակներից մէկը հայկական էր, ա՛յլ և միւս բանակներից ոմանց մէջ էլ կային ստուար թուով հայեր, բանակներից ոմանց ղեկավարութիւնն էլ հայ զօրապետների յանձնուած էր։

Սելջուկեանների արշաւանքների և Բագրատունեաց անկման հետեւանքներով հայերը աւելի մեծ թուերով անցել են Փոքրասիական կեդրոնները, Սեննեքերիմ Արծրունին Սեբաստիա և իշխանական ուրիշ տներ դէպի Կիլիկիայի բարձունքները։ Կիլիկիա-

յում և սահմանամերձ գաւառներում հայ իշխանութիւնների երեւան գալը ԺԱ. դարից սկսած ապացոյցն է, թէ ինչպիսի՛ հոծ բազմութիւն կար այդ շրջաններում, որ կարողանային հետզհետէ ինքնուրոյն հայ իշխանութիւններ կազմել։

Թաթար-թուրքմէնական շրջանում գերիների մեծ բազմութիւններ էին ուղարկւում դէպի միջին-ասիական երկիրները, որ հետզհետէ խառնւում էին իշխող տարրի հետ կամ անասունների նման վաճառւում քաղաքների շուկաներում։ Գրիգոր Խլաթեցին նկարագրում է գերիների տեղափոխութիւնը դէպի արեւելք և գորա հետ կապուած աղէտները ռամիկ և ազնուական դասի համար հաւասարապէս։ Ժամանակակից ձեռագրական յիշատակարանները լիքն են հայ ժողովրդի գլխին եկած դժբաղդութիւնների նկարագրութեամբ։ Մեզ բաժին ընկած այս մեծ ողբերգութիւնների պատմութիւնը դեռ լիովին չէ համադրուած մեր մէջ։

Բ.

Հազար իննը հարիւր քառասուն եւ վեց թուականը *բոլորովին անմոռանալի և նոր երեւոյթ բերեց մեր պատմութեան համար. պետական կեանքով հազիւ ապրել սկսած մեր ժողովուրդը այնքան կազդուրուած է զգում իրեն հարուածներից, որ հրաւէր է կարդում իր զաւակներին իր ծոցը դառնալու, դարերի պարտադրուած հողմացրիւ հոսանքին հակառակ,* դարձ դէպի մայր երկիր։

Մեր աչքի առաջ կատարուեցաւ Լիբանանի և Սիւրիոյ հայութեան պատասխանը այդ մայրական կոչին, բարձր ոգեւորութեամբ, մինչև իսկ ժողովրդական խաւերի կողմից երբեմն չափազանցութեան հասցրած, ի վնաս գործի կատարեալ կանոնաւորութեան։ Նոյնը և ուրիշ գաղութներում։ Ժողովրդի մէջ պոռթկած հայրենասիրական զգացմունքը, երբեմն, հեղեղի նման դուրս է գալիս իր հունից և դժուար է լինում բուն սահմանների մէջ պահել. հոգեբանօրէն պէտք է հասկնալ, առանց ամենադոյզն չափով նուազեցնելու կատարուած իրողութեան մեծ տարողութիւնը։ Անաչառ աչքի համար Հայաստանի կառավարութեան այս ձեռնարկութիւնը հերոսական մի գործ է հանդէպ Հայրենիքի. ինչպիսի՛ ահաւոր աշխատանքի և զոհողութեան հետ է կապուած մօտաւորապէս 50 հազար հոգի փոխադրել, բնակարան, ապրուստի միջոց և համապատասխան գործ հայթայթել նրանց համար մի փոքրիկ երկրի մէջ։ Եւ այս դեռ առաջին տարուան ծրագիրն է, պիտի շարունակուի եւս մի երկու տարի, մինչեւ լրանայ նախատեսուած

ծրագրի կատարումը՝ պարագաների ներած սահմանների մէջ։ Պատերազմի չափ ուժերի լարումն է պահանջում այսպիսի գործի կատարումը եւ նորա յաջող վերջաւորութիւնը պակաս չէ, քան պատերազմի մէջ տարած ամենամեծ յաղթութիւնը։ Գոհունակութեան եւ սիրոյ ամենախորին զգացմունքով է, որ դիտում ենք այս երեւոյթը։ Ուրախ ենք, մանաւանդ, որ Սուրիոյ եւ Լիբանանի մեր հօտին վիճակուեցաւ բաղդը, 20,000ի չափ հայորդիներ ուղարկել դէպի մայր երկիր, հայթայթելով առաջին երկու կարաւանների ճանապարհածախսը, որ հանգանակուեց Կաթողիկոսարանի ղեկավարութեամբ։

Գ.

Այս տարուայ համար դադարել է ներգաղթի խնդիրը, բայց այս դադարը հանգստութիւն չէ ո՛չ Խ. Հայաստանի կառավարութեան եւ ո՛չ Սփիւռքի հայութեան համար, այլ նախապատրաստութիւն երկրորդ տարուայ ծրագիրը աւելի կանոնաւոր եւ շրջահայեաց կատարելու։ Կառավարութիւնը կը կատարէ իր անելիքը, բայց մենք էլ մեր բաժինն ունենք։ Բարեգործականը իր վերան է առել մի միլիոն դոլլարի հայթայթումը իբրեւ Սփիւռքի հայութեան եղբայրական «լումայ» կատարուելիք ճանապարհածախսի հաշուին. այդ օժանդակութիւնը «լումայ» անուանեցինք, համեմատելով այն տասնեակ միլիոնների ծախսերի հետ, որ կատարուել է եւ պիտի կատարուի մինչեւ գործի վախճանը։ Բոլորուինք Բարեգործականի շուրջը այս խնդրում եւ աշխատենք առաւելութեամբ իրականացնել ծրագրուած նպատակը։

Արդէն Բարեգործականը այս տարուայ ընթացքում մեծ գործ է կատարած, աւելի քան կէս միլիոն դոլլար տրամադրել է կառավարութեան, չսպասելով հանգանակութեան ելքին։ Ահա ինչ է յայտնում նա իր Հոկտեմբեր 14ի զեկոյցի մէջ. «Հ. Բ. Ը. Միութեան Կեդրոնական Վարչութիւնը, որ առանց հանգանակութեան արդիւնքին սպասելու, սկիզբը արդէն 215,000 տոլարի առաջին վարկ մը տրամադրած էր շոգենաւերու վարձքը եւ առ հասարակ չքաւոր ներգաղթողներու ճանապարհածախսը ապահովելու համար, երկու անգամէն 300,000 տոլար եւս փոխարինեց Մոսկուայի Պետական Դրամատունը, Հայաստանի Կառավարութեան ընթացիկ հաշուոյն, շոգենաւային կարգադրութիւնները արագացնելու համար»։

Մենք չենք բերում այդ զեկոյցի մէջ յիշուած միւս գործերը։ Բարեգործականը դարձել է մեր կեանքի մեծ եւ կարեւորագոյն հաստատութիւններից մէկը։ Օգնենք ամենայն բարեմտութեամբ, որ իր առաքելութիւնը կատարել կարողանայ նաեւ հանդէպ Ազգահաւաքման գործին։

ՀԱՍԿ. 1946, Նոյեմբեր.　　　　ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԽԴ.

ՄԵՐ ԽՂՁԵՐԸ ՀԱՅ ԳՐԻ ՈՒ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՍԻՆ

Մենք մեծ բանաստեղծ չենք, գրական-գիտական մեծ հեղինակութիւն, որ մեր «Պատգամը» տանք հայ գիրն ու արուեստը այս երկրին մէջ ամէն գնով ապրեցնել կամեցողներին։ Բայց սիրում ենք մեր գիրն ու գրականութիւնը, մեր արուեստն ու մշակոյթը, և որպէս այդպիսին մեր համեստ կարողութեան սահմանների մէջ աշխատել ենք և պիտի աշխատենք, քանի շունչ կայ մեր բերանում։ Ուստի և կը կամենայինք մեր սրտի խղձերն ու ցանկութիւնները յայտնել հայ գրի և դպրութեան մասին։

Առիթ ենք ունեցել ուրիշ անգամ եւս արտայայտուելու այդ մասին, «Օրհնեցէք զԱստուած հարցն մերոց» վերնագրով յօդուածի մէջ։ Այնտեղ արծարծելով ազգապահպանութեան հարցը մեր գաղութների մէջ, փորձել էինք համառօտակի պարզել, թէ գիրն ու գրականութիւնը, ի՛նչ նշանակութիւն ունին ազգի կեանքն ու գոյութիւնը յաւերժացնելու համար պատմութեան մէջ։ Ամենայն ազգ կենդանի է, յառաջադէմ, որքան կենդանի է նորա գիտակցութիւնը իր հոգեւոր-բարոյական, գեղարուեստական-մշակութային ժառանգութիւնների մասին։ Մարդկային հոգին է իրական կեանք և յաւիտենական բարիքներ բերելու մէջ այդ աղբիւրը ինչպէս անհատի, նոյնպէս և հանրութեան համար։ Մենք ոչ միայն մեր ծնողների և ապրած ժամանակի զաւակն ենք, այլ և անցեալի և մեր նախնեաց։ Հոգեկան գիտութիւնները, ինչպէս պատմութիւնն է իր բոլոր ճիւղերով և բնական գիտութիւնները իր ճանապարհով, պարզում են ժառանգականութեան տիեզերական օրէնքը մարմնաւորի և հոգեկանի նկատմամբ. կեանքը երեւոյթների կապակցեալ մի շղթայ է, որ դէպի յաւիտենականութիւնն է ուղղուած, խզումը այդպիսի օղակաւորման, մահ և կորուստ։ Անցեալի գիտակցութիւն և գնահատութիւն ներկայ և գալիք սերունդի կողմից, ազգի անմահութեան երաշխիքն է։ Այսպիսի գիտակցութիւնն է այն հողն ու ջուրը, լոյսն ու ջերմութիւնը, որով աճիլ, զարգանալ և պտղաբեր դառնալ կարող է ազգի կենդանութեան ծառը։

Այս գիտակցութեան պահպանութեան և խորացման մէջ մեծ է մեր պարտականութիւնը իբրեւ ազգի առաջնորդներ, մտաւորականներ, գրողներ, արուեստագէտներ, ուսուցիչներ ենք.: Ի հարկէ, ազգի ամբողջութիւնն էլ իր բաժինն ունի, բայց «որում շատ տուաւ, շատ պահանջեսցի»: Մեր կոչումը մեծ է և նուիրական, ուստի և իբրեւ օրհնութիւն պիտի լինի մեր խօսքը, մեր կեանքի բոլոր մարզերում:

Բայց յատուկ շեշտել կը կամենայինք գրի և դպրութեան մարդկանց մասին, և խօսքն այստեղ նրանց է ուղղուած: Թատրոնը, բեմական խօսքը, երգն ու խաղը, երաժշտութիւնը տպաւորիչ է, հզօր, բայց ներկաների համար միայն, նոյն իսկ նկարչութիւնն ու ճարտարապետութիւնը, որ արուեստների մէջ կարեւոր տեղ են բռնում և հոգեւոր կեանքի բարձունքները մատնանշում, սահմանափակ են ըստ իրենց ազդեցութեան և շատ քչերին մատչելի կամ հասկանալի, նոյնը երաժշտութեան հետ: Մինչդեռ գրով ու գրքով խօսքը աւելի մնայուն է և հանրութեան մատչելի: Աշխարհի երեսին պետական և եկեղեցական կազմակերպուած մեքենայի հետ, կեանքի մեծ շարժիչը գիրն է իր ընդարձակ հասկացողութեամբ, գիրն ու մամուլը: Գրով ու գրքով յայտնուած միտքն ու գաղափարը ոչ միայն աւելի յարատեւ է, այլ և ծաւալուած ըստ ժամանակի և տարածութեան:

Ի՞նչ կը լինէր մարդկութեան վիճակը առանց գրի և գրականութեան, դարերի ապրումներն ու իրողութիւնները, ծանօթութիւններն ու գիտութիւնները յօդս կը ցնդէին առանց ապագայ սերունդների սեպհականութիւն դառնալու: Մեր գրիչներից մէկը իր գրած ձեռագրի (Manuscript) արժէքը բացատրելու համար իր յիշատակարանի մէջ այն միտքն է արտայայտում, թէ ամենայն հարստութիւն, դրամ, ստացուածք, անցաւոր է և գիրն է միայն մնայուն և օգտակար, ի՛նչ ձեռք էլ ընկնելու լինի նա: Ուրեմն գրի և գրքի համար կատարուած աշխատանքը, կորցրած ժամանակն ու նիւթական զոհողութիւնը ամենագնահատելին է և յաւիտենականը, և բարիք ընդհանրութեան համար: Ըստ այսմ էլ մամուլի աշխատանքը և այն մարդկանց գործն առհասարակ, «որոնք հայ գիրն ու արուեստը կ՚ապրեցնեն այս երկրին մէջ ամեն գնով», արժանի է բարձր գնահատութեան: Ուստի և մեր հայրական յորդորն է, աշխատեցէք յարատեւ կամքով և նուիրմամբ՝ հայ գրի կենդանի պահպանութեան և բարձրացման համար: Թո՛ղ սուրբ մնան ձեր և ձեր աշխատակիցների գրիչները: Ձեր մելանը մաքո՛ւր և ձեր

թուղթը միայն ճշմարտութիւն ընդունող։ Ահա մեր խղճն ու յորդորը որ ուղղել կը կամենայինք հայ գրի և մամուլի բոլոր աշխատաւորներին։

Որչափ գնահատելի է գրչի գրական աշխատաւորների գործը, նոյնչափ պարսաւելի, երբ ի չարն է գործադրւում և ընդդէմ ճշմարտութեան այդ սուրբ գործիքը՝ անձնական կրքերի գոհացում տալու, կամ նոյնիսկ կուսակցական սխալ հասկացուած շահերի պաշտպանութեան անունով։ Նա միայն բարւոյ, գեղեցկի և ճշմարտութեան գործիք է և ոչ չարութեան և բարոյական տգեղութեան։

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ (*)

(*) Այս յօդուածը ուղղուած էր Ամերիկայում հրատարակուող «ՆՈՐ ԳԻՐ»ի խմբագիր Բենիամին Նուրիկեանին, որ խնդրել էր մեր պատգամը տալ «հայ գիրն ու արուեստը այս երկրին մէջ աւելի գնով ապրեցնել կամեցողներին»: Փոքրիկ փոփոխութիւններ կատարելով, հարկաւոր համարեցինք նոյն խօսքն ուղղել եւ մեր բեմերի հայ մամուլին եւ գրի բոլոր աշխատաւորներին:

ՆՈՐ ԳԻՐ, 1944, Թիւ 1.
ՀԱՍԿ, Յունվ.—Փետր. 1947.

ԽԵ.

ՄԵՐ ԽՕՍՔԸ ՕԾՄԱՆ ԱՌԹԻՒ

«Տէր հովուեսցէ զիս, եւ ինձ ինչ ո՛չ պակասեսցի:»

Սաղմ. ԻԲ. 2.

Դաւիթ մարգարէի անունով է հասած մեզ այս խօսքը, իր նեղութեան, հալածանքի, կեանքի ամենադժուարին պայմանների մէջ առ Աստուած ուղղուած: Սաղմոսերգուի այս խօսքն է, որ այսօր, մեր նոր կոչման և պաշտօնի նուիրագործման այս սրբազան րոպէին, կենդանանում է մեր հոգու մէջ: Նեղութեան մէջ չենք և ոչ հալածանքի մարգարէի նման, արտաքին դժուարութիւնների կամ աղքատութեան և այլ ծանրութեան տակ ճնշուած. վայելում ենք մեր ժողովրդի սէրն ու յարգանքը մեր արժանաւորութիւններից աւելի չափով. վայելում ենք Սուրիոյ և Լիբանանի ազնիւ և լայնախոհ հանրապետութեանց մէջ քաղաքացիական և կրօնական ամենայն ազատութիւն. շնորհիւ դաշնակից ազգերի Խ. Միութեան, Ամերիկայի, Անգլիայի և Ֆրանսայի քաջարի բանակների յաջողութեան, մեր հին և նոր հայրենիքները, այսինքն Հայաստանն ու Սուրիան և Լիբանանը, ազատ են պատերազմական արհաւիրքների և աւերումների անմիջական ասպարէզ լինելուց, բայց և այնպէս հոգուս մէջ բարձրանում է հոգսի և պարտականութեան ծանր զգացումը:

Պիտի կարողանա՞նք օգտակար լինել մեր եկեղեցուն, մեր ժողովրդին, որ յոյսերով լի յառել էր իր աչքերը մեր գալստեան: Պիտի կարողանա՞նք արժանաւոր յաջորդը լինել մեր եկեղեցու երանաշնորհ հայրապետներին, որոնք հոգիների փրկութեան ղեկավար, քրիստոնէական սիրոյ իրականացման, աստուածահաճոյ հաստատութիւնների հիմնադիրներ, հոգևոր և ազգային կեանքի վերածնութեան, հոգևոր տաճարների կառուցման ճարտարապետներ հանդիսացան, հոգիների առ Աստուած սլացման և նորա սեղանի վերայ անուշահոտ կնդրուկի նման բուրուելու վարդապետներ եւ ուսուցիչներ:

Սուրբ Գրիգորների, Ներսէսների, Սահակ Պարթևների, Մես-

րոպների, Նարեկացիների և Շնորհալիների հոգիները երկնքից պիտի դիտեն մեր ամեն քայլը, խօսքն ու գործը, ծառայութիւնը Եկեղեցուն և հօտին. պիտի կարողանա՞նք նրանց գծած շաւղով ընթանալու: Այո՛, սիրելիք, ինչ հոգս է պատում Մեր սիրտը այս ողբագին վայրկեանին: Աւստի և մարգարէի նման Մեր աչքերը դէպի երկինք ենք բարձրացնում. «Տէր հովուեսցէ զիս և ինձ ինչ ո՛չ պակասեսցի»: Մեր աղօթքն է, խնդրում ենք հաւատացեալ ժողովրդին էլ աղօթակից լինել Մեզ, որ Տէրը օգնական լինի Մեզ, Նրա խնամքի տակ Մեր ընթացքն ու գործը:

Իսկ «Եթէ Աստուած մեր կողմը լինի» առաքեալի խօսքի համեմատ, որ ոգեպրեցին նաև մեր հայրերը ամենամեծ նեղութեան և փորձութեան օրերին, երբ պէտք է իրենց հաւատն ու խղճի ազատութիւնը, հայրենիքն ու գոյութիւնը պաշտպանէին Սասանեան անեղ պետութեան դէմ, Վարդանանց պատերազմին գնալուց առաջ, ի՞նչ զմայլութիւն կարող է կասեցնել «ի սիրոյն Քրիստոսի», այսինքն մեր պարտականութիւնների կատարման ճանապարհին: Քրիստոսի սէրը, սիրելիք, սէրն է դէպի հաւատացեալ ժողովուրդը, դէպի Եկեղեցին, դէպի հայրենիքը, դէպի նախնեաց թողած ժառանգութիւնները, դէպի հայ հոգու և հանճարի յարատեւ կենդանութեան և ստեղծագործութեան պաշտամունքը, վառ պահելու այն սրբազան հուրը, որից լոյս և ջերմութիւն է տարածւում հոգիների մէջ: Աղօթենք, որ Աստուած Մեզ հետ լինի, և ձեզ հետ, որ մեր բոլոր ուժերը միացնէ բովանդակալից դարձնելու մեր պաշտօնը և հայրապետական շրջանը Իւր բարի հովուապետութեան տակ, և երբ մի օր կամենայ իւր մօտ կանչել և մեր անտեսութեան հաշիւը պահանջել, ասել կարողանանք. «Զոր ինչ պարտ էր առնել, արարաք» (Ղուկ. ժէ. 10):

«Շնորհք Տեառն եղիցի ընդ ձեզ», ամէն:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԱՍԿ. 1945, Մարտ-Մայիս.

ԽԶ.

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԵՒ ՆՈՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ա.

Կատարուեց ինչ որ հայութեան իղձն էր տարիներից ի վեր, և կատարուեց լաւագոյն կերպով։ Հայ ազգային-եկեղեցական ժողովն էր այդ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի փառաւոր և միաձայն ընտրութեամբ։

Բացառիկ երեւոյթ էր մեր պատմութեան մէջ տեսնել համայն հայութեան ներկայացուցչութիւնը հոգեւոր և աշխարհիկ դասերի Մայր-Աթոռի կամարների տակ, սկսած Բուէնոս-Այրեսից, Հիւսիսային Ամերիկայից, Եւրոպայի բոլոր գաղութներից, Եգիպտոսից, Պաղեստինից, Լիբանանից, Սիւրիայից, Պարսկա-Հնդկաստանից, նստած կողք կողքի Խ. Հայաստանի և Միութեան հեռաւոր թեմերի պատգամաւորների հետ։ Տասնեակ հազար մղոններով իրարից հեռու ընկած տարածութիւնները, ծովերն ու ովկիանոսները, ներկայ ժամանակի հետ կապուած ճանապարհորդական դժուարութիւնները մեծածախս, չէին կարողացել արգելք լինել ներքին մղման և բուռն ցանկութեան, համախմբուել հինաւուրց տաճարի սրբազան կամարների տակ և կատարել իրենց պարտականութիւնը դէպի եկեղեցին։ Այս ակնյայտնի, ամենքի համար տեսանելի և հասկանալի արտաքին ապացոյցն էր, թէ հայ ժողովրդի համար ո՛րքան մօտ է Հայաստանեայց Եկեղեցին իր Մայր-Աթոռով և Ամենայն Հայոց Հայրապետութեամբ, որ իբրեւ մագնիսական ոյժ իրար էր բերել այդպիսի հոծ թուով ներկայացուցչութիւն աշխարհի ամեն անկիւններից, ուր հայութիւն կայ խմբուած։

Բայց պատգամաւորներին մայրենի երկիրն էր բերել ոչ միայն եկեղեցասիրութեան զգացմունքը, այլ և հայրենասիրութեան։ Հայ հաւատացեալ ժողովրդի պատմական առանձնայատկութիւնն է այդ, եկեղեցասիրութիւնն ու հայրենասիրութիւնը սերտ կապուած երեւան բերել կեանքի կարեւորագոյն դէպքերի ժամանակ, Ս. Սահակ-Մեսրոպների և Վարդանանց ու Ղեւոնդեանց օրերից ըսկսած։

Բ.

Ուշադրութեան արժանի և բացառիկ երեւոյթ էր ժողովականների մէջ երեւան եկած ներդաշնակ և փոխադարձ հասկացողութեան գալու տրամադրութեան հոգին։ Մենք չենք տեսել այդպիսի մի մեծ ժողով, համակուած սիրոյ և համերաշխութեան այնպիսի հոգով, ինչպէս այստեղ։ Հարաւային Ամերիկայից մինչեւ Ռուսաստանի խորքերի պատգամաւորները, տարբեր երկիրների և պետութիւնների, տարբեր լեզուներով, սովորութիւններով և օրէնքներով ղեկավարուող ազգերի միջից եկած, շատ և շատ խնդիրների մէջ էլ, բնականաբար, տարբեր հայեացքներով և ըմբռնումներով... զգում էին այստեղ մի, մի մեծ, իրար հետ կապուած ամբողջութեան մասերի ներկայացուցիչներ և անդամներ։ Այդ միութեան ներքին, մղիչ ոյժը ե՛ւ եկեղեցասիրական էր ե՛ւ հայրենասիրական։

Հայաստանեայց Եկեղեցին պատմական այլ պայմանների մէջ է ծագել, կազմակերպուել և ընթացք ստացել, քան նորանից շատ և շատ հզօր և մեծ եկեղեցիները։ Բայց ոչ մէկը չի կապուած այնպէս իր ժողովրդի կեանքի և պատմութեան հետ, ինչպէս Հայաստանեայց Եկեղեցին. կրկնում ենք, որպէս հետեւանք իր պատմական ուրոյն պայմանների։ Նա հայոց ազգային եկեղեցին է, հայ հոգու ամենամեծ ստեղծագործութիւնը, ամուր շաղախով միացած՝ ինքնապաշտպանութեան, լեզուի, գրականութեան, արուեստի և մշակոյթի բազմաթիւ մարզերի մէջ։ Դարերի խորքից եկած սրբազան աւանդն է այդ մեզ հասած։ Այդ աւանդի բնազդն էր և գիտակցութիւնը, որ կապում էր մեզ ամենքիս իբրեւ ամբողջութիւն։ Ահա՛ մեր ժողովի էական և բնորոշ գծերից մէկը։

Միութեան այս կապը և գիտակցութիւնը երեւան եկաւ եւ շեշտուեցաւ և մի այլ կողմից, թէ մի է, անբաժանելի Հայաստանեայց Եկեղեցին, որքան և վարչական տեսակէտով տարբերութիւններ լինէին իր մասերի մէջ։ Երուսաղէմի պատրիարքութիւնը իր ներքին կառավարութեան մէջ այլ ձեւ ու կերպարանք ունի, Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը այլ էր իր սահմանադրական կազմակերպութեամբ, իսկ աւելի առաջ իր աթոռակալների դիրքով Օսմանեան պետութեան մէջ, Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ այլ, իր անկախ և եկեղեցական պետի աւանդութիւններով, բայց ընդհանուր միութեան գաղափարը միշտ պահպանուած, որ այս անգամ առանձնապէս շեշտուեցաւ։ Ներկայ էին նախ և առաջ Երուսաղէմի պատրիարքն անձամբ ու Կ. Պոլսոյ պատրիարքական տեղապահը,

իրենց պատգամաւորներով, և ոչ թէ ներկայացուցիչներով, ինչպէս սովորական էր։ Իսկ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ոչ միայն առաջին անգամն էր մասնակցում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան, այլ և Կաթողիկոսն անձամբ ներկայ էր ժողովին իր եպիսկոպոսներով և աշխարհիկ պատգամաւորներով։ Ընտրողական նիստը և օծման արարողութիւնները կատարուեցան նորա նախագահութեամբ, նիստերի ժամանակ զոյգ կաթողիկոսներն իրար կողքի, համակամ և միասիրտ՝ իբրեւ հոգեւոր հարազատներ. ժողովի գնալիս և գալիս միշտ ընթացակից իրար Պատրիարքի հետ, իսկ օծման գնալու և վեհարան յետ գալու թափօրների ժամանակ մինչեւ իսկ նոյն ամպհովանու տակ, նորընտիր Հայրապետի ցանկութեան համեմատ, աջ և ձախ ժողովրդին օրհնելով, որ սրտառուչ տեսարանի՝ տպաւորութեան տակ, յափշտակութեան էր հասած իր ոգեւորութեան մէջ։ Այս միութեան և եղբայրակցութեան հանգամանքը չեշտուեցաւ նաեւ նորահաստատ սահմանադրութեան մէջ, որի մի յօդուածն է. «Հայաստանեայց Եկեղեցու միասնականութիւնը գլխաւորուած է Ամենայն Հայոց Կաթողիկոսով, պատշաճ յարաբերութիւն պահելով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետ»։ Որոշուեցաւ նոյնպէս Հայոց․ բոլոր եկեղեցիների մէջ անխտիր պատարագի ժամանակ յիշել Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուան հետ Կիլիկիոյ Կաթողիկոսի, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքների անունները։ Յայտնի է մեր ժողովրդին, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը չէր յիշատակւում Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերում, և Ամենայն Հայոց Հայրապետութեան ենթակայ թեմերում Կիլիկիոյ Կաթողիկոսի անունը։ Սորանով էլ ժողովը կամեցաւ չեշտուած լինի Հայաստանեայց Եկեղեցւոյ միութիւնը։

Կարեւորագոյն երեւոյթ էր նաեւ Մայր-Աթոռի նիւթական ապահովութեան հոգացողութեան խնդիրը։ Յայտնի է, որ Հայաստանում հաստատուած նոր իրաւակարգով բոլոր եկեղեցիները, ինչպէս և անհատները իրաւունք չունին հասութաբեր կալուածներ ունենալու կամ շահաբեր գրամագլուխներ։ Նոր իրաւակարգով հաւատացեալներն իրենք պիտի հոգան եկեղեցիների նիւթական կարիքները։ Բնականաբար, նոյն օրէնքներին և կցութեան է ենթարկուած և Մայր-Աթոռը, որ մինչեւ այժմ կառավարուել է մոմավաճառութեան և կամաւոր նուէրների հասոյթներով։ Բայց այժմ, երբ Խ. Իշխանութեան բարեհաճ վերաբերմունքով, իրաւունք է տրւում վերաբանալու հոգեւոր ճեմարանը, ունենալու տպարան, եկեղեցական պաշտաման և կեանքի հետ կապուած գրքեր և

և հրատարակութիւններ կատարելու, երբ վերակազմւում է Նոր միաբանութիւն և յարութիւն է առնում եկեղեցական մի նոր կեանք, նոր իրաւակարգի սահմանների մէջ, ընդարձակւում է եւ կարեւորագոյն խնդիր դառնում նիւթական ապահովութեան հարցը: Ժողովը երեւան հանեց նախ, թէ բաւական գումարներ են նշանակուած թեմերի կողմից իբրեւ միանուագ նուէրներ կամ «դարբասներ» ժողովի հետ կապուած ծախսերը հոգալու և մասամբ նիւթական կացութեան օգնելու: Ճեմարանի բացման առթիւ թեմերի և անհատ պատգամաւորների կողմից խոստումներ եղան հոգալու 40 սաների թոշակը, իւրաքանչիւրի համար տարեկան 500 դոլլար: Կիլիկիոյ Կաթողիկոսը յայտնեց, որ եգիպտաբնակ Պրն. Կ. Սարըեանը իրեն յանձնել է 50 եգիպտական ոսկի փոխանցելու Մայր—Աթոռին իբրեւ տարեկան թոշակ իւր անունով մի սանի, որ պէտք է մշտական դառնայ, ինչպէս և դպրեվանքում ունի մի սան: Մայր-Աթոռի համար իբրեւ մշտական հասոյթ որոշուեցաւ էջմիածնական թեմերի եկեղեցիների ընդհանուր եկամուտներից 5o/o յատկացնել Մայր-Աթոռի պահպանութեան, չհաշուած կամաւոր նուէրները: Այս պարտաւորութեան չի ենթարկւում Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իբրեւ նոր հաստատուած Անթիլիասում և տարբեր պայմանների ենթակայ, ինքն էլ կարօտ օգնութեան: Տաճարի Նորոգութեան հոգացողութիւնը յանձնուեցաւ զոյգ Կաթողիկոսներին, իրենց գիտցած միջոցներով ձեռք բերելու հարկաւոր գումարը, յայտնի դառնալով ժողովին, թէ նախկին նուիրակի ձեռքով հաւաքուած պատրաստ գումարն է 37 հազար դոլլար: Սակայն ժողովը չվերջացած, արտասահմանից հեռագրական լուր ստացուեցաւ, թէ մի մեծահարուստ ազգային կամենում է իմանալ, թէ ո՞րքան ծախս կը պահանջէ տաճարի նորոգութիւնը և վանքի պահպանութիւնը: Այսպիսով համազգային այդ մեծ խնդիրն էլ պիտի հոգացուի և ապահովուի հազարաւոր տարիների պատմական եւ սրբազան յուշարձանի կեանքը:

Գ.

Արդէն յիշեցինք, թէ այս ժողովը եկեղեցական խնդիրներից դուրս եւս ունեցաւ իւր մեծ նշանակութիւնը: Աշխարհի ամեն կողմերից եկած պատգամաւորները իրենց աչքերով տեսան հայրենի երկրի պետական, տնտեսական, մտաւոր և գեղարուեստական կեանքի մեծ յառաջդիմութիւնը կարճ ժամանակի մէջ: Տեսան Երեւանում սկսուած սքանչելի շինարարութիւնը եւրոպական մըտ-

քով, լայն և ծառազարդ պողոտաներով, ընդարձակ հրապարակներով, պարտէզներով և ծաղկանոցներով։ Օպերայի և կառավարական տան շէնքերով պարծենալ կարող ենք մեզնից թուով շատ աւելի մեծ և պետականութեամբ հին ազգերի առաջ, գեղեցիկ, հոյակապ, հայ ճարտարապետական ոճով ու զարդարանքով, անմահ Թամանեանի գործերը։ Տեսան գեղարուեստական, պատմական, ազգագրական, հայ գրողների, երկրաբանական թանգարանները, հնութեանց պահպանութեան կոմիտէն, պետական կեդրոնական գրադարանը (տպած գրքերի) իր երկու միլիոնի չափ գրքերով, մատենադարանը (ձեռագրատունը) տաս հազար ձեռագիրներով և երեք հազարի չափ ֆրագմենտներով, հայ ժողովրդի ամենամեծ գանձը, կարգաւորուած և մշակուած ցուցակներով, որ մեծ օգնութիւն է գիտութեամբ զբաղուողների համար, պահպանութիւնն էլ խնամքով և աշխատող պաշտօնեաներով։ Ծրագրուած է մեծ և փառաւոր շէնքեր շինել թանգարանի և մատենադարանի համար և... կարո՞ղ էք մտածել, զարդարուած Ս. Սահակի և Մեսրոպի, Նարեկացու և այլոց արձաններով, որոնց նախագծերը ցոյց դրուած տեսանք մատենադարանի պատերին։ Բաւան, քան հինգ տարի առաջ Խ. Յեղափոխութեան սկզբնական շրջաններում շատ հայրենասէրներ մտահոգութեան մէջ էին, թէ ի՞նչ պիտի լինի մեր վիճակը ազգային տեսակէտով, մեր անցեալը իր ստեղծագործութիւններով և ճոխագոյն հնութիւններով։ Այսօր ազգային զգացումն ու գնահատութիւնը անցեալի, իր կարեւոր դերն է կատարում մեր նոր ստեղծագործութեան մէջ, ենթակայ բարձր խնամքի և գուրգուրանքի։ Եկեղեցին էլ սկսում է յարութիւն առնել նոր պայմանների սահմանների մէջ։ Ամեն այն յեղափոխութիւն իր սկզբնական շրջանում բուռն է և յարձակողական, հասկանալի է այդ։ Բայց շարունակենք մեր բացատրութիւնը։

Ունինք գիտութեան և արուեստի բարձր հաստատութիւնները, Գիտութեանց ճեմարանը իր բաժանմունքներով, համալսարանը իր ֆակուլտէներով, կլինիկաներով, հիւանդանոցներով, մի ամբողջ համալսարանական թաղամաս։ Ունինք մեր երաժշտական և նկարչական և այլ մասնագիտական դպրոցները, պետական թատրոնը...։ Եւ այս բոլորը տեսան մեր պատգամաւորները, շփուեցին, ունեցան պետական գործիչների, մտաւորականների, բանաստեղծների, վիպասանների, երաժշտագէտների, երգիչների և դերասանների մեծ խմբերի հետ, տեսան, թէ մի նոր ստեղծագործական կեանք է սկսուած մեր ժողովրդի մէջ, ընդունակ բարձր թռիչք-

ների և յառաջդիմութեան։ Լսեցին և ականատես եղան հայ լեզուով երգուած օպերաների, ազգային կամ օտար ստեղծագործութիւնների. տեսան բեմական արուեստի լաւագոյն դերասաններով ներկայացումներ։ Ոմանք ներկայ եղան և երաժշտական դպրոցների աշակերտների քննական նուագահանդէսին, հիացմունքով ունկնդրեցին մեծերի և փոքրերի անհատական և խմբական նուագներին և երգերին, շատերի մէջ նկատելով ակնյայտնի տաղանդի ապացոյցներ։ Չէ՛, Երեւանը փոխարկուել է և փոխարկւում է գեղարուեստական և երաժշտական քաղաքի, համեմատ մեր ժողովրդի գեղարուեստական կենդանի զգացման և ունակութեան, որ ժառանգել ենք մեր հայրերից։ Ինչքա՜ն փոփոխութիւններ մեզ համար, որ տաս տարի էր, ինչ հեռացել էինք հայրենիքից։

Պատգամաւորներից շատերը այցելեցին և նորաշէն աւանները Երեւանի շուրջը. Արաբկիրը քաղաքաման, Սեբաստիան, Մալաթիան, Նուբարաշէնը, Բիւթանիան... Նախկին անապատների մէջ, այժմ կանաչազարդ և ծաղկեալ աւաններ, դպրոցական, մշակոյթային և արդիւնաբերական այլ և այլ հաստատութիւններով և շէնքերով։ Այդ և ուրիշ անապատ վայրերի պտղաբեր դաշտերի և այգիների վերածումը հետեւանք էր ջրանցքների բացման և ոռոգման գործի կանոնաւորման, որ Խ. Հայաստանի կառավարութեան կարեւորագոյն աշխատանքներից մէկն է։ Երեւանի և Վաղարշապատի մէջ եղած տարածութեան բաւական ընդարձակ մասը ճանապարհի երկու կողմից անապատ էր, որ այժմ պտղաբեր այգիներ են և պարտէզներ։ Այցելեցին նաեւ հին, պատմական եւ նուիրական վայրեր, հինաւուրց Օշականը, Ս. Մեսրոպի գերեզմանով, Աշտարակը, Հանավանքը իւր աւերակների մնացորդներով, երբեմնի լուսաւորութեան կեդրոններից մէկը, Սեւանը համանուն գեղեցիկ ծովակով, Տրդատայ թախտը, յունա-հռովմէական ոճի ամրոցով և մեհենական տաճարով, Ազատ գետի անդնդախոր և հիասքանչ ձորակներով, բաղալտի ահաւոր ժայռերը կախուած ձորի վերայ, Գեղարդայ վանքը իւր վիմափոր տաճարներով, Մխիթար Այրիվանեցու քարայրը, ուր, կարծում ենք, նա գրել է իւր վիթխարի ճառընտիրը և միւս աշխատութիւնները առանձնութեան մէջ, Գեղարդաձորը՝ բնութեան ամենագեղեցիկ տեսարաններն առաջին։

Այս համառօտ նկարագրութեամբ պարզ պիտի լինի մեր ժողովի պատմական արժէքը և հասկանալի այն մեծ ոգեւորութիւնը, որով պատգամաւորները վերադարձից յետոյ, սկսել են դասախօ-

սութիւններով և յօդուածաշարքերով հաղորդակից անել ժողովըր-դին իրենց տպաւորութիւնները, աւելի սերտ կապելով հայրենիքի հետ։ Լինենք հաւատարիմ քաղաքացիներ այն բոլոր երկիրների, ուր սիրալիր ասպնջականութիւն ենք գտել, չմոռնալով մեր պատ-մական հայրենիքը, դէպի ուր ուղղուած պիտի լինին մեր հոգու աչքերը։

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԱՍԿ, 1945 Օգոստոս—Հոկտեմբեր.

ԽԷ.

“ՄԱՐԴ Է, ՈՐ ԳՈՐԾԷ ՋԵՐԿԻՐ„

Ա.

Սփիւռքի Հայութեան գլխաւոր հոգսն է Հայ գիտակցական կեանքի պահպանութիւնը, առանց որին վտանգուած է եւ նորա նիւթական կեանքը իբրեւ ազգ։ Հայութեան երկու երրորդն ապրում է այժմ՝ Հայաստանից դուրս. դորա մէջն է և սովետական երկիրների, մանաւանդ Ռուսաստանի խորքերը ցրուած Հայութիւնը։ Բայց մեր խօսքը նրանց մասին չէ, այլ խորհրդային երկիրներից դուրս Հայութեան, որ ցրուած է տարբեր քաղաքակրթութեան, լեզուների և կրօնների պատկանող ազգերի մէջ։ Հեշտ չէ այսպիսի պայմանների մէջ պահել և զօրացնել բոլորին ի մի բերող և միացնող մի զօրութիւն, որ ազգային գիտակցութեան գաղափարն է. այդ կողմից դժուարագոյն պայմանների մէջ է մեր ներկայ Հայութիւնը։

Ազգային գիտակցութեան և ընդհանուր հայրենիքի գաղափարը մի անգամից չի ծագում եւ զարգանում, այլ հետզհետէ, ժամանակի ընթացքում։ Հանրային կազմակերպութիւնների հիմքը ընտանիքն է, ընտանիքների միութիւնից է ծագում տոհմը կամ ցեղը, որ իւր ցեղապետի իշխանութեան տակ միանում է, պաշտպանելու իւր կեանքը, սեպհականութիւնը, հողը։ Ինքնապաշտպանութեան բնազդը շատ կարեւոր դեր է կատարում այս միութեան ծագման և զարգացման մէջ։ Միեւնոյն ծագումն ունեցող տոհմերի կամ ցեղերի բազմացման և հողի կամ բնակավայրի ընդարձակման հետ, յառաջ է գալիս ազգութեան, ընդհանուր հայրենիքի և պետութեան գաղափարները։ Մարմնական և նիւթական պաշտպանութեան հետ զօրանում է հոգեկան միատեսակ ժառանգութիւնների ու նրանց պաշտպանութեան հարցը, ինչպէս լեզուն է, բանահիւսութիւնը ժողովրդական, կրօնն ու նորա կազմակերպութիւնները, գրականութիւնը, արուեստն ու մշակոյթը։ Ահա այն տարրերն ու օղակները, որոնց միութեամբ և կապակցութեամբ յառաջ է գալիս և զարգանում ազգային ամբողջութեան և միութեան գաղափարը։

Սփիւռքի Հայութեան ազգային գիտակցութեան, դորա հետ էլ նորա պահպանութեան խնդիրը պայմանաւորուած է վերեւ յիշած ժառանգութիւնների պահպանութեան հետ։ Բնականաբար, սփիւռքում, հայրենի հողի ժառանգութեան և պետական կազմակերպութեան խնդիր չունենք, բայց հոգեւոր կապն ու սէրը նրանց հետ, կարեւորագոյն ազդակ է և միջոց վառ պահելու մեր զգացումը դէպի ազգի ամբողջութիւնը։ Նիւթական հայրենիքից զատ կայ հոգեւոր, իմացական հայրենիքի գաղափարը, որ ամենազօրաւոր միջոցն է, կապը ազգային միութեան պահպանութեան, որը սակայն ենթակայ է թուլացման, հայրենիքից դուրս և օտար ժողովուրդների մէջ ապրող հատուածների համար։

Բ.

Ինչպէս բարդ են ազգայնութեան բաղկացուցիչ տարրերը, նոյնպէս էլ բարդ են և բազմակողմանի նորա պահպանութեան միջոցները։ Մենք ունենք այլ և այլ տեսակ կազմակերպութիւններ, ամենից առաջ Բարեգործականի մեծ Միութիւնը, ունենք կուսակցական և հայրենակցական միութիւններ, մամուլ, որոնք մեծ օժանդակ են ազգապահպանութեան նուիրական մտքին, մանաւանդ, եթէ զգաստ լինին և չափաւոր իրենց պայքարների ժամանակ, բայց այդ միջոցների մէջ երկուսը կարեւորագոյններն են՝ դպրոցն ու եկեղեցին: Երկուսն էլ իրարու օժանդակող և իրար լրացնող հաստատութիւններ, «կենդանարար հոգու» պահպանութեան, զօրացման և մշակման աղբիւրները։ Սովորական խօսք է, թէ դպրոցը եկեղեցու գաւիթն է, որի միջով անցնում ենք դէպի եկեղեցին։ Դպրոցի մէջ մեր մատաղ սերունդը իւրացնում է մայրենի լեզուի և պատմութեան տարրական գիտելիքները և դորանով հեշտանում եկեղեցու կատարելիք դաստիարակչական մեծ գործը։ Եկեղեցին ինքն էլ մի բարձր դպրոց է հասակաւորների համար, բայց և ոչ պակաս մատաղ սերնդի բարոյական դաստիարակութեան։ Այնտեղ հաւաքւում են նոյն ազգի որդիները, նոյն լեզուով աղօթելու իրենց հայրերի Աստծուն, նոյն լեզուով հոգեւոր երգեր, և արարողութիւններ լսելու և տեսնելու, քարոզներ լսելու, հաղորդակից լինելու համայնական կեանքին։ Նա մեր միութեան, իրար հետ հոգեւորապէս կապելու հաստատութիւնն է, տեղականից զատ ընդհանրական իմաստով։ Մատակարարն է նա աւետարանական վարդապետութեանց ու ճշմարտութիւնների, մեր հայրերի հոգւով ապրած բարեպաշտութեան և նորանից բղխած բա-

ըեգործութեան, շինարարութեան, արուեստի և ստեղծագործութեան։

Մեր պատմութեան ընթացքը այդ մտքի յայտարարն է, մարմնաւորումը։ Չլինէր Լուսաւորչի և նորա որդիների և թոռների աշխատանքը, չէինք ունենալ Ե. դարի վերածնութիւնը, կազմակերպուած և հաստատուն հիմքերի վերայ դրուած ազգային եկեղեցին։ Չունենայինք Ս. Սահակի և Մեսրոպի նման գիտակից, սրտցաւ, իրենց ժողովրդի պահպանութեան և փրկութեան հոգւով տարուած անձինք, չէինք ունենալ հայ գիր, Ս. Գիրք, թարգմանական և ինքնուրոյն ոսկեղէն լեզուով գրուած դպրութիւն։ Չունենայինք նոր սերունդ պատրաստող ուսուցիչներ կամ վարդապետներ, չէինք ունենալ Թարգմանչաց հոյլը՝ Կորիւն սքանչելի, Ղազար Փարպեցի, Եզնիկ և Եղիշէ, դասական, հոգելից մատենագիրներ, Յովսէփ և Ղեւոնդ Երէցներ, Վարդան և Վահան Մամիկոնեաններ։

Նոյնն ասել կարող ենք մեր պատմութեան ամբողջ ընթացքի համար։ Յիշեցէք երկար շարքը մեր հայրապետների, մատենագիրների, որոնք կուրծք տուին Պարսիկ, Արաբ, Բիւզանդացի, Սելջուկ և այլ հրոսակների հալածանքներին, և պահպանեցին Լուսաւորչի և նորա սերունդի, ինչպէս և յետագայ մեր սուրբ հայրերի վառած և պահած հայ լուսոյ հոգեւոր կանթեղը՝ սպառնացող փոթորիկների և ամպրոպների դէմ։ Յիշեցէք մեր վարդապետարանների և դպրոցների դերը մեզ վիճակուած դժուարին պայմանների մէջ՝ հոգեւոր և ստեղծագործական ազգային դէմքի պահպանութեան մէջ։

Գ.

«Մարդ է, որ գործէ զերկիր», կարճ և բովանդակալից խօսք է, կեանքի և փորձառութեան վերայ հաստատուած, որ մենք ամեն օր ստուգել կարող ենք։ Ամենալաւ երկիրն ու հողը կարող է դառնալ խոպան և անպէտք, եթէ նա չմշակուի, խնամքի և հոգածութեան առարկայ չլինի, և ընդհակառակ քարքարոտ տարածութիւններ և առապարներ կը փոխարկուին պտղաբեր դաշտերի, եթէ մաքրուին քարերից և աւելորդ բոյսերից, հերկուին, պարարտացուին և ոռոգուին կանոնաւորապէս։ Ծահիճներից իսկ կարելի է ընտիր հանդեր պատրաստել, ինչպէս այժմ փորձ է լինում մեր հայրենիքում։ Նոյնն է հոգեւոր և մտաւոր անդաստանների համար։ Կ'աղօտանայ մեր գիտակցութիւնը, կը ցամաքի մեր սէրը

դէպի հայրենիքը նիւթական և հոգեւոր, դէպի ներկան և անցեալը, կը խաւարի մեր ազգային մտքի և հոգու լոյսը, եթէ հայրենի կանթեղին մէջ գիտութեան իւղը չլեցնենք, յարատեւ և կարգաւորեալ աշխատութեամբ։ Ի՞նչ արժէք կ'ունենան անցեալի թանկագին ժառանգութիւնները, մայրենի լեզու, գրականութիւն, բովանդակալից պատմութիւն, եթէ մենք նրանցից օգտուելու միջոցը չունենանք, եթէ նրանք «անծանօթ աշխարհ» դառնան մեզ համար։ Ի՞նչ սպասել կարող ենք մեր դարաւոր «լուսոյ խորան», ազգային և առաքելական եկեղեցուց, եթէ առաջնորդներ, հովիւներ, քարոզիչներ չունենանք, ուսուցիչներ և վարժուհիներ մեր դպրոցների համար։ Այստեղ եւս արդարանում է ճշմարիտ խօսքը՝ «մարդ է, որ գործէ զերկիր»։

Սփիւռքի, ինչպէս և Ամերիկայի Հայութեան հին սերունդը բերել է իր հետ որոշ չափով, լաւ կամ վատ պատրաստուած քահանաներ, ուսուցիչներ, գրողներ, փորձառութիւն ունեցող հասարակական գործիչներ. բերել է իր հետ ստուար թիւ հայերէն գրել, կարդալ գիտցողների։ Բայց ի՞նչ պիտի լինի մեր վիճակը մի քսան, քսան և հինգ տարի յետոյ, երբ պակասում է դրանց թիւը և չունենք աղբիւր, աճող պահանջին լրումն տալու։ Քննադատում ենք մեր քահանաներին, վաղը նրանց նմանները, նոյն իսկ աւելի պակասաւորներն էլ, չպիտի ունենանք. քննադատում ենք մեր ուսուցիչներն ու վարժուհիները, վաղը այդպիսիներն էլ չպիտի ունենանք, քննադատում ենք մեր դպրոցները, վաղը նրանք պիտի փակուին ինքնըստինքեան՝ դասատուներ չունենալու պատճառով։ Պէտք է ցամաքի մեր գրականութիւնը, դադարին մեր թերթերը, որովհետեւ ոչ միայն հայերէն գրողներ պիտի պակասին, այլ և հայերէն ընթերցողներ, որ զգալի է հէնց այժմ նոր սերնդի մէջ։ Պարտաւոր ենք մտածել այս մասին, փոխանակ անմտութեան հասած երկպառակութեամբ կամ անփութութեամբ կորստեան ծովի մէջ խեղդուելու, անտարբեր դէպի ապագան, մեր ժողովրդի գոյութեան աւագ խնդիրը։

Դ.

Ուրեմն, ի՞նչ պիտի անենք։

Հեշտ չէ այս հարցին մի անգամից պատասխանել։ Մենք արդէն ակնարկեցինք, թէ ինչպէս բարդ են ազգութեան գաղափարի բաղկացուցիչ տարրերը, այնպէս էլ բարդ են նրանց պահպանութեան և զարգացման ուղիներն ու միջոցները։ Բայց նրանց մէջ

կայ կարեւորներից կարեւորագոյնը, որ դպրոցն ու եկեղեցին է։ Առանց դպրոցի և առանց կենդանի, կայտառ և շունչ տուող եկեղեցու, ոչ միայն երկրորդական կը դառնան մեր միւս հաստատութիւններն ու կազմակերպութիւնները, այլ և նրանք էլ կը մեռնին և կը չորանան, ինչպէս անսնունդ մնացած կենդանիներն ու բոյսերը։ Մեզ պէտք են ազգային գիտակցութեան բովից անցած գործիչներ, կենդանի մարդիկ եկեղեցական և դպրոցական ասպարէզում, որպէս զի կարելի լինի պահպանել այն ժառանգութիւնները, որ սնունդ են բերում ազգային յարատեւ գոյութեան։ Լեզուի եւ եկեղեցու, ազգային գիտակցութեան զօրացման խնդիրը հրատապ է, ստիպողական, ապա թէ ոչ ուշ կը լինի յետագայում։ Այդ խնդիրը պէտք է մեր մտահոգութեան կեդրոնը կազմէ այժմեանից, կարգաւորեալ և նախամտածուած ծրագրով դիմել նպատակին։

Մասնաւորելով մեր խօսքը մեր վիճակի մասին, պիտի շեշտենք, որ անհրաժեշտ է ստեղծել մի «օջախ», մի դպրոց, որտեղից լոյս և ջերմութիւն սփռուի մեր հատուածների մէջ։ Մենք պէտք է ունենանք հայագիտական-աստուածաբանական մի ճեմարան (կոլէճ), որտեղ պատանիներ կատարելապէս ծանօթանան մեր դասական և նոր լեզուին, իւրացնեն ազգային և եկեղեցական պատմութեան և գրականութեան գանձերը, անհրաժեշտ ընդհանուր գիտելիքների հետ։ Այդպիսի մի դպրոցից միայն լցնել կարող ենք անհետացող քահանաների, ուսուցիչների և գրողների շարքերը։

Նոր պայմանների մէջ ենք ապրում, նոր պայմանների եւ պահանջների համեմատ էլ պէտք է կազմակերպուին մեր գաղութները եկեղեցական և հոգեւոր կեանքի շրջաններում, եթէ չենք կամենում խեղդամահ լինել։ Հեռու մեզանից յուսահատութեան տրամադրութիւններն ու խօսքերը, որ իրապէս ոչ թէ լուրջ մտածողութեան արդիւնք են, այլ անփութութեան, ծուլութեան եւ զոհողութիւնից խուսափելու հետեւանքներ։ Անշո՛ւշտ, հեշտ չէ ստեղծուած դժուարագոյն պայմանների մէջ եկեղեցի և ազգ պահել սփիւռքը և նրանց գոյութիւնն ապահովել, բայց ջերմեռանդ և հաւատով, կարգաւորեալ և տոկուն աշխատութեան առաջ սառցակոյտներն էլ կը հալուին։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅԱՍՏ. ԵԿԵՂԵՑԻ 1941 Մայիս.

Նիւ-Եորք

ԽԸ.

ՄՇԱԿՆԵՐ ԵՆ ՊԷՏՔ ՄԵԶ

«Հունձք բազում են եւ մշակք սակաւ».

Մատթ. Թ. 37.

Ա.

Տիրոջ խօսքերից մէկն է այս, պարզ և հասկանալի, կապուած երկրագործական կեանքի հետ։ Գիւղացին հերկել է երկիրը․ մաքրել հողը, ցանել սերմը, ջրել, հսկել է, որ մատղաշ և կանաչ արտը անասունների կերակուր չդառնայ։ Ահա հասել է ժամանակը, հասկերը հատիկներով լցուել, ոսկի յոյսերի իրականացման վերջին բախտաւոր վայրկեանը մօտեցել, երբ աշխատանքի պտուղը քաղելու։ Բայց հնձուոր չկայ, կամ չկայ հարկաւոր չափով։ Հինգ տասն օր եւս, եթէ չհնձուի և չհաւաքուի այն, բարկ արեւի տակ պիտի չորանան ծղոտները և թեթեւ հովից անգամ կոտրուին և գետին թափին հատիկներով լցուած հասկերը, պիտի ոչընչանայ ամբողջ տարուայ աշխատանքը, չքանայ նորա ամբողջ ակնկալութիւնը։ Հնձուոր է պէտք, մշակ է պէտք, այս է րոպէի հրամայական պահանջը։

Երկրագործական կեանքից առնուած այս պարզ և հասկանալի պատկերով, Յիսուս կամեցել է աւետարանի և հոգեւոր կեանքի, մենք կ՚աւելցնենք ազգային եկեղեցական կեանքի պահանջները, կարիքը հասկացնել, փոխաբերական իմաստով։ Հողի եւ անդաստանի նման է և մարդկային հոգին, պիտի հերկել, սերմանել, մաքրել աւելորդ բոյսերից, որպէսզի չխեղդուի արտը վնասակար բոյսերից, և զարգանալով առաջանայ և պտղաբեր դառնայ։ Ամենափափուկ հողն անգամ, եթէ չմշակուի, հարկաւոր սերմը չձգուի այնտեղ և խնամուի, կը դառնայ խոպան, վայրենի բոյսերով ծածկուած անպէտք տարածութիւն։ Բայց աշխատութեան առաջ՝ նոյն իսկ քարքարոտ առապարները պտղաբեր դաշտերի կը փոխարկուին և ճահիճները օգտակար հանդերի։ Խնդիրն այն է, որ մենք ունենանք հարկաւոր մշակները հերկելու, սերմանելու աստիճանից սկսած մինչեւ հունձքը, կալսելը և ոսկի հատիկների շտեմարան փոխադրելը։ Եւ այս նոյնն է անհատի, թէ ժողովրդական հատուածի կամ ամբողջութեան համար։

Ինչպէս հողը բազմատեսակ բոյսեր աճեցնելու յատկութիւնն

ունի հացահատիկներից, բամբակից ու թանկագին բոյսերից սկսած մինչեւ խաղողի այգիները եւ պտղատու պարտէզները, այդպէս էլ մարդկային հոգին հարուստ է եւ ճոխ ունակութիւններով, եթէ մշակենք եւ օգտագործենք այն բարձրագոյն նպատակների համար։ Այնտեղ ստեղծւում, ուռճանում եւ բիւրեղանում է մայրենի լեզուն, ամենաթանկագին գանձը մի ժողովրդի համար, որով մարմին են առնում նորա յոյզերը, սրտի եւ մտքի ելեւէջները, խղձերն ու տենչերը, բանաստեղծութեան եւ գրականութեան այլ եւ այլ ճիւղերի մէջ։ Այնտեղ է զարթնում, աճում, բարձրանում ու խորանում մարդկային միտքը, գիտակցութիւնը, բարոյական կամքը, որով երկնաւոր ու աղցաւոր կենդանին, որ մարդ է կոչւում, գետնի եւ նիւթի հետ կապուած, սաւառնել կարող է աստղազարդ երկնքի ոլորտներում, աստուածամերձ դառնալով։ Այնտեղ է ծագում եւ զարգանում անշունչ քարին ու մետաղին, կտաւին կեանք տալու եւ խօսեցնելու կարողութիւնը, հզօր եւ յուզող լեզուով, որ արուեստ է կոչւում, իր բոլոր ճիւղերով։ Անսահման են մարդկային հոգու անդաստանները եւ բազմատեսակ, եթէ մշակւում են նրանք, մաքրւում բացասական եւ հեղձուցիչ որոմներից, որոնցից մէկն էլ անգիտութիւնն է, մտքի խաւարը։

Բ.

Բազմատեսակ են անհատական, հասարակութեան եւ ազգային հոգու մշակման միջոցներն ու հաստատութիւնները, որ այստեղ մի առ մի թուել չենք կարող, բայց մեր գաղութահայ կեանքի համար ամենակարեւորը կրկնում ենք՝ դպրոցն ու եկեղեցին է, եկեղեցին եւ դպրոցը: Նրանց բարգաւաճման եւ կենդանացման հետ, կը բաւարարուին մասամբ եւ միւս միջոցները, որ պայմաններն են որ եւ է հասարակութեան եւ ազգի յարատեւ պահպանութեան։ Բայց ցաւն այս է, որ մեր գաղութահայութիւնը, ներկայ դէպքում Ամերիկահայութիւնը, անհրաժեշտ մշակները չունի այս երկու կարեւորագոյն հաստատութիւնների համար, կամ, գոնէ, չունի հարկաւոր չափով։ Դպրոցը կը դառնայ խեղճ, ողորմելի, անկարող արդիւնք տալու սպասուած չափով, եթէ կարող ուսուցիչներ եւ վարժուհիներ չունենանք։ Եկեղեցու կեանքը կ'աղքատանայ, անկարող իր բարձր կոչման եւ նպատակին ծառայելու հոգեւոր փրկութեան եւ ազգային գաղափարի կենդանի պահպանութեան տեսակէտներով, եթէ հարկաւոր չափով պատրաստուած քահանաներ եւ պաշտօնեաներ չունենանք։ Մենք այս խնդիրը շօշափել ենք այլ առթիւ, բայց այստեղ էլ չենք քաշւում երկրորդել աւելի եւ աւելի, մինչեւ որ ընդհանրանայ այն եւ Հայ հաս-

բակութեան սեպհականութիւն դառնայ։ Եթէ մենք կամենում ենք, որ մեր լեզուն չմեռնի, որ մեր նոր սերունդը որոշ չափով հաղորդակից մնայ մեր ազգային և եկեղեցական անցեալ և ներկայ կեանքի հետ, պէտք է երկու հաստատութիւնների կամ հոգեւոր անդաստանների համար մշակներ պատրաստենք։

Տարաբաղդաբար, հասարակութեան նոյն իսկ մտաւորականների մէջ, չեն պակասում յոռետեսներ և կասկածողներ մեր գաղութահայութեան կեանքի յարատեւութեան մասին։ Մենք ոչ միայն օգտակար չենք համարում, այլ եւ բացարձակ վնասակար ենք համարում այդպիսի մտքերի արծարծումը, մանաւանդ լրագրութեան մէջ, որ շատերի համար միակ աղբիւրն է հասարակական կեանքով հետաքրքրուելու։ Չենք ասում, թէ աչքներս փակենք դժուարութիւնների առաջ, բայց չպէտք է նպաստենք ժողովրդի հաւատը կորցնելու իր ապագայի նկատմամբ։ Պնդողներ կան, թէ անկարելի է Ամերիկայում կամ Եւրոպայում նոր սերունդից մարդիկ պատրաստել, որ ազգային եւ եկեղեցական ծառայութեան նուիրուեն։ Շատերը անկարելի են համարում Հայ լեզուի պահպանութիւնը Ամերիկայում կամ Եւրոպայում։ Անկարելի են համարում Հայ նոր սերունդը հետաքրքրել ազգային կամ եկեղեցական կեանքով։ Պէտք է մեռնի գաղութահայութիւնը ազգային տեսակէտով, ուրեմն և իզուր է ձեռնարկութիւններ անել և աշխատել նորա յարատեւութեան անունով։ Այդ միեւնոյն է ասել մահկանացու են բոլոր անհատները, ի վերջոյ նոյն իսկ ազգերը, ուրեմն պէտք չէ շարունակել մեր գոյութիւնը. երբ հիւանդ ենք պէտք չէ բժշկի դիմել, միջոցներ գործադրել մեր առողջութիւնը վերականգնելու։

Այդ բոլորը համարում ենք չափազանցութիւն եւ կեանքի դժուարութիւնների դէմ մաքառելու եւ եռանդի պակասութիւն։ Մենք, հայերէն լաւ խօսել եւ գրել իմացող ծնողներ գիտենք, նոյն իսկ մտաւորականներ, որոնք անփոյթ են եղել իրենց երեխաներին մայրենի լեզուով գրել, կարդալ սովորեցնել եւ իրենց այդ անփութութիւնն ու ծուլութիւնը պարտկելու առարկութիւններ ունին, ուրիշներին էլ մոլորեցնելով։ Ի զուր չէ ասուած, թէ կեանքը պատերազմ է, ոչ այն պատերազմը, որ հզօրը կամենում է ոտքի տակ տրորել իրենից թոյլին։ Այլ առաքեալի խօսքի համեմատ, կեանքը պատերազմ է բարւոյ յաղթութեան համար։ Այն զօրքն ու զօրավարը, որ յոյս չունի, թէ պէտք է կարողանայ թշնամուն դիմադրել եւ փրկել հայրենիքը, ժողովուրդը, նա պար-

տուած է արդէն, լինի այն նիւթական թէ բարոյական տեսակէտով։ Կրկնում ենք, չպէտք է աչքներս փակենք դժուարութիւնների առաջ, բայց այդ դժուարութիւնները իրական, թէ ենթադրական, վերջակէտ չէ, այլ սկիզբ աշխատանքի, հետամտութեան, եթէ ոչ բոլորովին վերացնելու, գոնէ, մեղմացնելու խոչընդոտները որոշ չափով հասնելու նպատակին։ Ձեռքներս ծալած չպէտք է սպասենք մինչեւ անփութութեան և անտարբերութեան հոգին կատարելապէս իշխէ հասարակութեան մէջ, որ իսկական մահուան կարապետը կը լինի։

Գ.

Հեռո՛ւ մեզանից յուսահատութեան և մանաւանդ յուսահատութեան մտքերը մեր գաղութների պահպանութեան նկատմամբ։ Պահպանենք ըստ հնարաւորութեան մեր թանկագին ժառանգութիւնները, մեր լեզուն, մեր հոգեւոր կապը անցեալի հետ, պահպանենք և զօրացնենք մեր սէրը դէպի եկեղեցին, զուրգուրանքով նայենք մեր դպրոցների վերայ, պատրաստելով նրանց համար բանիմաց քահանաներ և ուսուցիչներ, որոնք մեր հոգեւոր անդաստանների մշակը կը հանդիսանան։

Հա՛յ ընտանիքներ, Հա՛յ ծնողներ, ներշնչեցէ՛ք ձեր պատանի զաւակներին, թէ սրբազան գործ է ժողովրդական և եկեղեցական ծառայութեան նուիրուել։ Հայ հասարակութի՛ւն, ստեղծեցէք այն մթնոլորտը, որ մաքուր է և կենդանարար մեր ազգային, եկեղեցական և մշակոյթային կեանքի զարգացման և արդիւնաւորման համար։ Չնմանինք անպտուղ ծառին, որ պէտք է կտրուի եւ այրելու նիւթ դառնայ։ Մի՛ ասէք, թէ հնարաւոր չէ այդ Ամերիկայում կամ Սփիւռքի այլ երկիրներում։ Ի՞նչպէս են ստրուկ ազգերն ազատւում եւ հայրենիք ստեղծում։ Ի՞նչպէս են նոր գաղափարները ու շարժումները արմատանում եւ հաստատւում լայն խաւերի մէջ։ Տուէ՛ք մեզ նիւթական միջոցներ, պատանի ուսանողներ, որպէս զի կարողանանք նրանց մէջ հայրենի շունչ փչել, ազգային գիտակցութիւն ստեղծել եւ հոգեւոր զինուորներ պատրաստել մայրենի եկեղեցու, դպրոցի եւ Հայ մշակոյթի պահպանութեան համար։ Մի՛ ասէք, դպրոցի բացումը տեսնենք, յետոյ օգնենք։ Ի՞նչպէս պիտի բանանք դպրոցը, երբ նախապատրաստուած չլինենք դրամով եւ ուսանողների հարկաւոր թուով։

«Արդ աղաչեցէք զՏէր հնձոցն, զի հանցէ մշակս ի հունձս իւր»։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅԱՍՏ. ԵԿԵՂԵՑԻ, 1942 Փետր.
Նիւ-Եորք

ԽԹ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԿԱՐԴԱՑՈՒԱԾ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԷՋ

I

Ա.

Մարդկային կեանքի յառաջադիմութիւնն ու զարգացումը հիմնուած է փորձառութեան վերայ։ Այդ փորձառութեան բաղկացուցիչ տարրերը ստացւում են անցեալի կեանքից, որի կապակցեալ և յարա՛ցեալ ուսումնասիրութիւնը պատմութիւն է կոչւում։ Ինչպէս դպրոցը լուսաւորում է մեր միտքը, ընդարձակում մեր ծանօթութիւնները մեզ շրջապատող բնութեան կամ կեանքի երևոյթների մասին, պատմութիւնը այդպիսի մի դպրոց է կեանքի ծագման և լինելութեան գաղտնիքների մէջ թափանցելու։ Ի զուր չէ ասուած, թէ պատմութիւնը լաւագոյն ուսուցիչն է մարդկութեան. այնտեղից է, որ մենք ոչ միայն լոյս ենք ստանում մեր ներկան հասկանալու և կարգաւորելու, այլ և թելադրութիւններ ապագայի հեռանկարների մասին։ Այսօրուայ մեզ զբաղեցնող հարցի պարզաբանութեան համար ևս մեր հայեացքը պէտք է ուղղենք դէպի անցեալը, քրիստոնէական եկեղեցու հին և նոր անցեալը, այնտեղից լոյս ստանալու մեր ներկայ համայնական կեանքը աւելի կենդանի և ներգործական դարձնելու համար։

Եկեղեցական կազմակերպութիւնների մէջ ամենից փոքրը համայնական (թեմական) հաստատութիւնն է, բայց փոքր չէ նորա նշանակութիւնը եկեղեցական ընդհանուր կեանքի համար։ Կարելի է ասել, համայնական լաւ կազմակերպութիւնը, կենդանի և գործօն կեանքը, հիմքն է ընդհանուր եկեղեցւոյ հաստատութեան և յարաճուն յաջողութեան և զարգացման։ Գետը կազմուած է աղբիւրներից, առուակներից, գետակներից, որոնց միութեամբ է յառաջ գալիս ջրի մեծ հոսանքը, որ ոռոգում և կեանք է տալիս իր ափերին և դաշտերին, որոնց միջով անցնում է։ Այսպէս և համայնք-

ների միութիւնից կազմուած են եպիսկոպոսութիւնները, մեծ ու փոքր վիճակները, և որոնց միութիւնից ընդհանուր Եկեղեցին կամ Հայրապետութիւնը։ Եթէ կամենում ենք Հայաստանեայց Եկեղեցին, ներկայ դէպքում մեր վիճակը, որ նորա մի կարեւոր մասն է, այդպիսի կենդանարար դեր կատարէ մեր հոգեւոր կեանքի և ազգապահպանութեան խնդրի մէջ, մեր ուշադրութեան և հոգացողութեան առարկան պիտի լինի նորա համայնքների կազմակերպութիւնը, նրանց կապակցութիւնը միմեանց եւ յատկապէս Առաջնորդարանի հետ:

Բ.

Քրիստոնէական եկեղեցու ծագման և զարգացման հիմնաքարը, կարելի է ասել, համայնական կազմակերպութիւնն էր, սկսած առաքելական շրջանից։ Համայնական կազմակերպութիւնը հասարակական կեանքի հետ կապուած մի երեւոյթ էր. քանի փոքր էր քրիստոնեաների թիւը, յատուկ կազմակերպութեան եւ կանոնների կարիք չկար։ Ինչպէս ընտանեկան կեանքի մէջ աւագ անդամի խօսքն ու կարգադրութիւնը օրէնք է տան միւս անդամների համար, այդպէս էլ առաքեալները իրենց փոքր համայնքների ղեկավարներն էին սկզբնական շրջանում։ Բայց երբ բազմանում է քրիստոնեաների թիւը, Երուսաղէմ և ուրիշ կեդրոններում, անհրաժեշտ է դառնում համայնական կազմակերպութիւնը։ Այդ մասին մենք ցուցումներ ունինք Առաքելական Թղթերի և Գործք Առաքելոցի մէջ (Բ. 42–47 և Դ. 32–37)։ Ա՛րդ, ի՞նչ պատկեր ունի քրիստոնէական առաջին համայնքը Երուսաղէմում, նկարագրուած մի քանի խօսքով.

«Ամենայն հաւատացեալքն էին միասին և ունէին զամենայն ինչ հասարակաց։ Եւ զստացուածս և զինչս վաճառէին և բաշխէին զայն ամենեցուն, ում զիարդ պիտոյ ինչ լինէր»։ Տաճարն էին գնում աղօթելու, «եւ առտնին բեկանէին զհացն, և առնուին կերակուր ուրախութեամբ և միամտութեամբ սրտի»։

«Եւ բազմութիւն հաւատացելոցն էր սիրտ և անձն մի, և ոչ ոք ի նոցանէ ասէր զընչից իւրոց, թէ իւր իցէ, այլ էր նոցա ամենայն ինչ հասարակաց...։ Եւ ոչ ոք կարօտիւր ի նոսա, զի որք միանգամ տեարք էին գիւղից կամ ապարանից՝ վաճառէին և բերէին զգինս վաճառելոցն։ Դնէին առ ոտս առաքելոցն և բաշխէին իւրաքանչիւր, որպէս ումեք պիտոյ լինէր»։ Եւ օրինակ է բերում Յովսէփ-Բառնաբասի դէպքը։

Ի հարկէ սա գաղափարական պատկերն է, առաջին սերունդի մէջ և առաջին թարմ ոգևորութեան ազդեցութեան տակ։ Բայց նոյն իսկ այդ շրջանում պակասութիւններից ազատ չեն համայնական կազմակերպութիւնները, ինչպէս Անանիայի և Սափիրայի պատմութիւնն է ցոյց տալիս, կամ ինչպէս Պօղոսի առ Կորնթացիս Ա. թղթից է նկատւում։ Սակայն ըստ էութեան այդ գաղափարական մի բարձր կազմակերպութիւն է, ընկերվարական-համայնական, կեանքի մի բարձր երևոյթ, ոչ օրէնքի և ստիպողականութեան հետևանքով, այլ կամաւոր սիրոյ և զոհաբերութեան։

Ի՞նչն է այս համառօտ նկարագրութեան մէջ ուշադրութեան արժանին։ Նախ կենդանի աստուածապաշտութիւնը և կենդանի խօսքի քարոզութիւնը, որ զուտ առաքելական պաշտօնն էր, աղբիւր բարձր ներշնչման և ոգևորութեան, յետագայում եպիսկոպոսների ղեկավարութեամբ, աւելի յետոյ երէցների և սարկաւագների մասնակցութեամբ։ Ապա այսպէս կոչուած Սիրոյ Ճաշերը, սկզբում միացած հաղորդութեան հետ, իբրև եղբայրական միութեան և սերտ կապակցութեան գլխաւոր միջոցներից մէկը։ Համաբակաց կամ Սիրոյ այս Ճաշերի կազմակերպութեան հետևանքն էր սարկաւագութեան պաշտօնը, որ սեղանի սպասարկութեան և համայնական տնտեսական կեանքի կարգաւորութեան պաշտօնն էր։ Ապագայում տեսնում ենք, թէ սարկաւագները առաջնակարգ դեր են կատարում, իբրև անմիջական հոգևոր զինուորները եպիսկոպոսի գործունէութեան և համայնական խնամատարութեան մէջ, աղքատների, հիւանդների, նիւթական և բարոյական ամեն տեսակ կարօտեալների օգնութեան մէջ։

Գ.

Համայնական այս կեանքն ու կազմակերպութիւնը իւր զօրութիւնը պահպանում է մինչև քրիստոնէութեան կատարեալ տիրապետութիւնը իբրև պետական կրօն, և մենք բազմաթիւ յիշատակութիւններ ունինք յետ-առաքելական և ջատագովական (Apologetische) շրջանների գրականութեան մէջ։ Բայց այս արտաքին կազմակերպութեան հետ եականը համայնքի մէջ իշխող հոգին էր, սիրոյ, եղբայրութեան և փոխադարձ օգնութեան հոգին, իբրև հոգևոր կեանքի և դաստիարակութեան մի դպրոց։ Մի բարձրագոյն նպատակ կամ գաղափար բոլորին կապում է միմեանց հետ, և ամենքի ձգտումն է, եպիսկոպոսի, երէցների, սարկաւագների, քոյրերի, որ նոյնպէս գոյութիւն ունէին համայնական պաշտօնէու-

թեան մէջ, և ամբողջ համայնքի հոգիների մէջ կենդանացնել Յիսուսի պատկերը և կեանքը իրականացնել աւետարանական վարդապետութեան և առաքելական քարոզչութեան համեմատ։ Մարդկային հոգին թանգ է ամենքի համար, և այստեղից է բղխում նրան փոխադարձ գնահատութիւնը, սէրն ու յարգանքը։ Ով իւր հոգին է գնահատում, չի կարող անգոսնել ուրիշի հոգին։ Մեր խօսքը, ի հարկէ, ինքնասէրների, հպարտութեան հոգւով տարուածների մասին չէ։

Գ. դարում Կարքեդոնի նշանաւոր երէցը և իւր ժամանակի նշանաւոր գրողներից և մտածողներից մէկը՝ Տերտուլեան, մի աննման ներբող է նուիրում համայնական կեանքին և նորա տարողութեան, քրիստոնէական կեանքը համեմատելով հեթանոսականի հետ։ Համայնական կեանքը նա «դաստիարակութեան և ազնուութեան վարժոց» է անուանում, հեթանոսների նման չեն հաւաքւում զուարճանալու մինչև բարոյական անկում, այլ ամեն անգամ մի նոր շինիչ բան տանելու այնտեղից։ «Ամեն ինչ հասարակաց է մեզանում, բացի կանանցից»։

Սիրոյ ճաշը իւր շուրջն է հաւաքում բոլոր հաւատացեալներին. աղքատներն ու աշխատանքի անընդունակները, որբերն ու այրիները վայելում են համայնքի հովանաւորութիւնը եպիսկոպոսի և սարկաւագների միջնորդութեամբ։ Համայնքը ներկայանում է ինչպէս մի ընտանիք, որի հայրը եպիսկոպոսն է, (այժմ քահանաներն ու հովիւները իրենց թեմերում), իսկ անդամները եղբայրներ և քոյրեր։ Գթութեան և կարեկցութեան, բարոյական ազդեցութեան գործը համայնական կեանքի տարերքն է։ Յատուկ պաշտօնեաներ, սարկաւագներ այցելում են հիւանդներին, բանտարկեալներին, մխիթարութեան կարօտներին, նիւթականի հետ և բարոյապէս ներգործելով։ Եւսեբիոս Կեսարացին պատմում է Հռոմի համայնքի մասին, թէ քաղաքը եօթը թաղի էր բաժանուած և եօթ սարկաւագներ խնամում, այցելում և մխիթարում էին ժողովրդին. 1500 հոգի վայելում էին այդ խնամքը Գ. դարի կէսերին։ Համայնքի որբերը եպիսկոպոսի հսկողութեան տակ կրթւում են, որ և է արհեստ սովորում, աղջիկ որբերը չափահաս դառնալուց յետոյ, ամուսնանում են քրիստոնեայ երիտասարդների հետ, եպիսկոպոսի հոգացողութեամբ։

Ոչ միայն համայնքի անդամների մէջ այդպիսի սերտ կապ կայ, այլ հեռաւոր երկիրների համայնքների հետ։ Կարթագինէի Կիպրիանոս եպիսկոպոսը 100,000 սէստերց է ուղարկում Նում-

իայի եպիսկոպոսներին՝ գերիների ազատութեան համար։ Հռոմի Դիոնեսիոս եպիսկոպոսը մխիթարութեան թուղթ է գրում և դրամ ուղարկում նոյն նպատակով Կեսարիայի եկեղեցուն։ «Ազատութիւն եղբարց մերոց գերելոց», մինչեւ այժմ էլ երգում է եկեղեցին։ Գերիների ազատութիւնը մարդասիրական ամենամեծ գործն էր, երբ անընդհատ պատերազմների հետեւանքով՝ հազարների էր հասնում նրանց թիւը։ Ազատել նրանց և իրենց ընտանիքների գիրկն ուղարկել, ազատել ստրկական կեանքից, գթութեան որպիսի՜ աննման գործ էր։ Երրորդ դարու կէսերին Աղեքսանդրիայում, որ այդ ժամանակուայ քաղաքակրթութեան կեդրոններից մէկն էր, ժանտախտը սարսափելի աւեր սկսեց գործել։ Հազարաւորներ մեռնում էին անգութ համաճարակի հետեւանքով, փողոցները լցւում անթաղ դիակներով, որոնց գարշահոտութիւնն ու վարակման վտանգը քաղաքացիներին, յատկապէս գիրք և հարստութիւն ունեցող հեթանոսներին, փախուստի պատճառ էր դարձել։ Քրիստոնեայ համայնքը որոշում է կամաւորապէս գթութեան և օգնութեան գործին դիմել, փողոցները մաքրել, դիակները թաղելով, հիւանդներին փրկել անգութ հիւանդութեան ճիրաններից։ Ի հարկէ, շատերը զոհ գնացին եղբայրական և սիրոյ օգնութեան այս գործին, բայց մեռան նոքա հանգիստ խղճով իրենց եղբայրական պարտքի կատարման մէջ։

Ընդհանուր քրիստոնէական եկեղեցւոյ և Հայաստանեայց մէջ անհատական և համայնական բարոյական հերոսութիւնների աննման դրուագներ ունինք, որ այստեղ բերել չենք կարող, տեղի սղութեան պատճառով։ Կենդանի հոգին, նուիրումը, աղբիւրն էր զոհաբերող կեանքի եղբօր և հասարակաց օգտին։

Դ.

Քրիստոնէութեան պետական կրօն դառնալուց յետոյ, կենդանի մնալով համայնական կեանքը իր վերեւ յիշած յատկութիւններով, զարգանում է բարեսիրական հաստատութիւնների երեւոյթը։ Եպիսկոպոսութիւնների մէջ այժմ հարիւր հազարներ են մնում, բնականաբար հնարաւոր չէր անհատական այցելութիւններով բոլորին օգնութեան հասնել, ուստի և վանականութեան հետ, վանքերում երեւան են գալիս ասպնջանոցները, հիւանդանոցները, որբանոցները, դպրոցներ եւն.։ Հոգեկան հիւանդներն իսկ, կոյրերը, անդամալոյծները իրենց ապաստարաններն ունին և ենթարկւում են մարզուած հիւանդապահների, սպասաւորների և

պաշտօնեաների խնամքին և հսկողութեան։

Եկեղեցին իր պաշտօնէութեամբ խնամածու մայրն էր համայնքի նեղութիւնները մեղմելու, մխիթարելու և դաստիարակելու տեսակէտով։ Մասնաւոր կտակներով և նուիրատուութիւններով եկած գումարները գործադրւում էին այսպիսի բարձր նպատակների համար։ Եպիսկոպոսներից շատերը իրենց ստացած ժառանգութիւնն իսկ գործադրւում էին բարեսիրական գործերի համար. Բարսեղ Կեսարացին Դ. դարում իր ամբողջ կարողութիւնը նուիրեց աղքատներին և հիմնեց Կեսարիայի մեծ ասպնջանոցը. Եփրեմ Ասորին Եդեսիայում մի հիւանդանոց հիմնեց 300 մահճակալներով, Ոսկեբերանը Կ. Պոլսում երկու ասպնջանոց հիմնեց և խնամում էր 7700 աղքատ։ Հռոմի եպիսկոպոսները հազարաւոր կեանքեր փըրկեցին Հոնաց արշաւանքների ժամանակ։ Ներսէս մեծ Հայոց Հայրապետը, որբանոցների, դպրոցների և բարեսիրական հաստատութիւնների ցանցով պատեց մեր երկիրը։ Ս. Սահակի անունով մնացած կանոնների մէջ «ագապ»-ներից և յետագայ ժողովներում եւս սահմանւում են որոշ եկամուտներ նման նպատակներով։

Բայց այդ բաւական չէր։ Ի սկզբանէ անտի քրիստոնէութիւնը կապուած էր գրի, գրականութեան և արուեստի հետ, այսինքն հոգեւոր կեանքի զարգացման, բարձրացման և խորացման միջոցների հետ։ Առաքեալները ոչ միայն քարոզում են բերանացի, այլ և ընդարձակ թղթակցութիւններով բացատրում իրենց վարդապետութիւնը, լուսաբանում և ուղղում համայնքների մէջ ծագած թիւրիմացութիւնները, ուղղութիւն տալիս նրանց կրօնական և համայնական կեանքին։ Գրւում են աւետարաններ, որոնց նպատակը պարզ վարդապետականի հետ, նաեւ Յիսուսի անձնաւորութիւնը նկարել հաւատացեալների հոգիների առաջ։ Համայնքների մէջ յատուկ պաշտօնեաներ կային քարոզութեան համար, որ կոչւում են վարդապետներ։

Երկրորդ դարի վերջերից յառաջ են գալիս նորավարժից դպրոցները, որոնք յետոյ գիտնական դպրոցների են փոխարկւում։ Յայտնի են Աղեքսանդրիայի, Անտիոքի, Եդեսիայի մեծ դպրոցները Գ. դարի վերջերից մինչեւ Ե. դարի վերջերը։ Պէտք էր իւրացնել ժամանակի գիտութիւնն ու քաղաքակրթութիւնը, եթէ քրիստոնէութիւնը կամենում էր մրցել հեթանոսութեան հետ։ Եթէ կամենում էր մատչելի դառնալ և կրթուած բարձր հասարակութեան, պէտք է կարողանար յունական փիլիսոփայութիւնը իւրացնել և նորա մեթոդներով աւանդել իւր ճշմարտութիւններն

(19)

ու աշխարհայեացքը։ Անհրաժեշտութիւն էր քրիստոնէութեան դաշնակցութիւնը գիտութեան և փիլիսոփայութեան հետ, ինչպէս տեսնում ենք այդ վերոյիշեալ դարերում։ Օրիգինէսին լսում են ոչ միայն քրիստոնեաները, այլ և հեթանոս փիլիսոփաներ, նոյն իսկ Իւլիա-Մամէա կայսրուհին։ Դ. և Ե. դարերի մեծ հայրերը եկեղեցական, մի և նոյն ժամանակ գիտութեան, հռետորութեան ներկայացուցիչներն են։ Կղէմէս Աղեքսանդրացի և Օրիգինէս, Աթանաս մեծ և Կիւրեղ՝ Աղեքսանդրիայի, Եդեսիայի դպրոցի ներկայացուցիչն է Եփրեմ Ասորի, Անտիոքինը Յոհան Ոսկեբերան եւ ուրիշները։ Ստեղծւում են մատենադարաններ՝ Երուսաղէմում, Կեսարիայում, որոնցից օգտւում է Եւսեբիոս Կեսարացին և քրիստոնէութեան առաջին պատմութիւնը գրում։

Բայց ոչ միայն գիտութիւնը, այլ և արուեստը օժանդակ էր եկեղեցւոյ բարձրացման։ Սկզբում քրիստոնէական արուեստը կապուած յունա-հռոմէականի հետ, բայց յետոյ, հետզհետէ ուրոյն կերպարանք ստացած։ Մեր Ե. դարի հայրերի գործունէութիւնը, մեր եկեղեցական հնագոյն ճարտարապետութիւնը Հայ եկեղեցու հաստատութեան և զարգացման երեք դարերում (Դ.—Է.), հայ կաթողիկոսների և իշխանների հովանաւորութեամբ, մեզ համար աւելի ցայտուն և մատչելի փաստերն են վերոյիշեալ մտքերի։

Ահա գաղտնիքը, թէ ինչո՞ւ եկեղեցու և եկեղեցականների ազդեցութիւնը այնքան մեծ էր այս դարերում։ Մենք չենք ուզում խորասուզուել միջին դարերի պատմութեան մէջ և այնտեղից եւս օրինակներ բերել։ Բայց կը կամենայինք նոր ժամանակների և եկեղեցիների համայնական և կազմակերպչական կեանքի մասին եւս մի քանի խօսք ասել, որպէս զի այնտեղից էլ կարելի լինի լոյս ստանալ մեր Սփիւռքի հայութեան և մասնաւորապէս Ամերիկահայութեան համայնական կեանքի կանոնաւորման համար։

Բայց այս մասին հետեւեալ յօդուածում։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅԱՍՏ. ԵԿԵՂԵՑԻ. 1940, Սեպտ.

Ծ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ

II

Ա.

Անցեալ յօդուածի մէջ (Յօդուած ԽԹ.) աշխատեցինք պարզել քրիստոնէական համայնքների կազմակերպութիւնը հին եկեղեցիների մէջ, յատկապէս արեւելքում։ Այժմ մի քանի խօսք նոր ժամանակի եւրոպական եկեղեցական համայնքների մասին։ Մեր այս տեսութիւնը հիմնուած է գրքերից աւելի գործնական կեանքի ուսումնասիրութեան վերայ, մեր ուսանողութեան ժամանակի մի ամբողջ ամառուայ արձակուրդը նուիրելով այդ գործին։ Կարող ենք ասել, թէ տեսականօրէն կամ գրքերից օգտուելով՝ տարիներ աշխատանքով չէինք կարող այնքան բան սովորել, որքան այդ երկուս ու կէս ամսուայ գործնական ուսումնասիրութեամբ։

Ժամանակը մեզ չի ներում կանգ առնել մանրամասնութիւնների վերայ, կարող ենք ասել, որ համայնական կազմակերպութիւնները մասամբ յիշեցնում են նախկին դարերինը, բայց առաւել ներկայ համայնական կեանքի և ժամանակի դժուարութիւնները լուծում են կամ աշխատում են լուծել Ներքին Առաքելութեան (*die Innere Mission*) մաս կազմող հաստատութիւններով։ Այս գործը շատ մեծ ծաւալ է ստացել եւրոպական երկիրներում, գրեթէ բոլոր ազգերի մէջ։ Ոչ միայն զուտ համայնական գործերը, համայնական աղքատների, նիւթապէս և բարոյապէս կարօտեալների խնդիրները, այլ և սոցիալական ամենատեսակ հարցերը ուշադրութեան առարկայ են։ Որքան և պետութիւնը ինքը մասամբ հոգում է բազմատեսակ բարեսիրական հաստատութիւնների համար, եկեղեցին էլ, մանաւանդ Կաթոլիկ Եկեղեցին, ունի իր հիւանդանոցները, որբանոցները, աղքատութեան մեղմացման գործը, բնակարանի հետ կապուած չարիքը մեծ քաղաքներում, անբարոյականութեան դէմ մաքառումը, հիւանդապահների և եղբայրական օգնութեան պաշտօնեաների կրթութիւնը։ Ներքին առաքելութեան մէջ են ամփոփուած, համայնական կեանքի շատ կարիքների լրացումը։ Համայնական հովուութեան և ներ-

քին առաքելութեան վարչութեան մէջ հաստատուած է ամենասերտ գործակցութիւն, յաճախ համայնքի հովիւը այնտեղից ստանում է այր և կին խնամատարներ, որոնք այցելում են հովուի թելադրութեամբ այս կամ այն ընտանիքին, այրիներին, նիւթական և բարոյական օգնութեան կարիք ունեցողներին: «Եղբայրների» հետ առիթ ենք ունեցել այդպիսի այցելութիւններ կատարել, վերստուգել հասած օգնութեան նպատակայարմար գործադրութիւնը, ընտանեկան շատ դժբախտութիւնների խափանումը՝ արբեցող ամուսնուն ի կարգ հրաւիրելով, աղքատ երեխաների ուսման, նիւթական եւ դրամական ծախսերը հոգալով: Ներքին առաքելութեան հաստատութեան կեդրոնը ոչ միայն խնամատարութեան, այլ և դաստիարակչական դպրոց է, յատկապէս երիտասարդական միութիւնների համար: Նոքա ունին իրենց մարզարանները, պարահանդէսները, երաժշտական կոնցերտները, մատենադարանները, ընդարձակ կամ փոքր չափերով, նայելով հաստատութեան մեծութեան: Գերմանիայի Վեստֆալիոյ նահանգի Բիլեֆելդ քաղաքի շրջակայքում մեր այնտեղ եղած ժամանակ, 1894-5 թ. թ. Պաստոր Ֆոն Բոդելշվինգի ընդհ. ղեկավարութեան տակ, 135 հաստատութիւն կար, մօտ 2 միլիոն մարքի տարեկան բիւջէով, և 7000-ի չափ ամենատեսակ խնամարկեալներով: Հէնց Ամերիկայում անցէք քաղաքից քաղաք և կը տեսնէք եկեղեցական հովանաւորութիւն ունեցող ամեն տեսակ հաստատութիւններ, մինչեւ իսկ դպրոցներ յատուկ՝ միջնակարգ և բարձր, կրօնական-եկեղեցական գունաւորութեամբ: Իսկ բուն համայնական կեանքի մէջ օրինակելի կարգապահութեան հագին, հնազանդ իրենց հովիւներին և սրանք իրենց եպիսկոպոսին, Կաթոլիկ Եկեղեցու մէջ հեղինակութիւնն ու կարգապահութիւնը. կարգաւորութիւնը (System) ամենամեծ դեր է կատարում իրենց յաջողութեան մէջ, որ մեղանում ամենաթոյլ կողմն է: Սորա հետ միացած է նաեւ հոգեւորականների գիտական պատրաստութիւնը բողոքական և կաթոլիկ եկեղեցիների մէջ հաւասարապէս:

Մեր երիտասարդ վարդապետներին և քահանաներին կ'առաջարկենք ծանօթանալ կաթոլիկ և բողոքական համայնական կամ ներքին առաքելութեան կազմակերպութիւնների հետ, մեր յետագայ համագումարի մէջ իրենց ուսումնասիրութեան արդիւնքը հաղորդելու և օգտուելու համար: Գուցէ, դորանով կարողանանք հոգեշահութեան և հովուական աստուածաբանութեան գործնական դասընթացք, ուսմունք ստեղծել մեր մէջ:

Ի.

Այս համառօտ տեսութեան նպատակն էր պարզել, թէ Սփիւռքում, ներկայ դէպքում, մեր ամերիկահայութեան նորաստեղծ համայնքների մէջ, անհրաժեշտ է հեղինակութեան ճանաչում, կարգապահութեան և կարգաւորութեան (System) հոգի եւ հասկացողութիւն՝ ղեկավարութեան աստիճանաւորութիւնների համեմատ, որ պէտք է լինի նախ մեր հովիւների կողմից և նրանց ջանքերով նաեւ հոգաբարձութիւնների և ժողովրդի կողմից։

Մենք ունինք որոշ տուեալներ մեր համայնական կեանքը զարգացնելու համար, մեր ձգտումն ու աշխատանքը պիտի լինի միայն այդ տուեալները աւելի կարգաւորել, կեանք ու բովանդակութիւն ներարկելով նրանց մէջ։ Մեր ժամապաշտութիւնը պէտք է լինի վսեմ, տպաւորիչ, քարոզը մշակուած և բովանդակալից, երգչական խմբերը կազմակերպուած և աւելի լաւ մարզուած։ Պատարագի և արեւագալի ժամերգութիւնից զատ, պէտք է կարողութիւն ունենանք օգտագործելու մեր նախնեաց թողած երաժշտական գանձերը, գեղեցիկ շարականներն ու մեղեդիները մեծ տօների ժամերգութեամբ։ Պէտք է սովորեցնենք ժողովուրդին պատկառանքի զգացմունքով և երկիւղածութեամբ պահել լռին և հետեւել ժամերգութեան։

Իբրեւ վերջին խօսք պիտի աւելացնենք, այժմ, ի հարկէ, հնարաւոր չէ մեզ առաքելական շրջանի բարեպաշտութիւնը լիովին վերականգնել. ամեն դար իր բարեպաշտական արտայայտութիւնն ունի, բայց կրօնական զգացմունքը, մարդկային հոգու լաւագոյն յատկութիւններից մէկը, իր բարերար հետեւանքը կ'ունենայ ամեն ժամանակի համար, եթէ կարող լինինք վառ պահել կամ կենդանացնել այն մեր ժողովրդի մէջ։ Դորա համար մեր խօսքն ու քարոզը, գործելակերպը, պէտք է աշխատենք նոր ժամանակի համեմատ նոր լեզուով խօսել, յաւիտենական արժէք ունեցող ճշմարտութիւններն էլ նոր հանդերձանքով մատուցանել, աւետարանական խօսքի համեմատ՝ հին գինին նոր տիկին մէջ։ Աշխատեցէք կարդալ, նախապատրաստուել միշտ՝ քարոզելուց առաջ։

Եկեղեցում խօսած քարոզներից զատ, պիտի կազմակերպենք ժողովրդական լսարաններ, որի առաջին փորձերը կատարեցինք Նիւ Եորքում։ Պէտք է կրօնական-բարոյական-եկեղեցական-ազգային նիւթերից զատ, նաեւ պատմական-գրական-բնագիտական-բժշկական եւն. ծանօթութիւններ տալ ժողովրդին։

Հիմնուած է արդէն «Հայաստանեայց Եկեղեցի»-ն, պէտք է զարկ տալ նորա տարածման. եկեղեցականները աւելի կենդանի մասնակցութիւն պիտի բերեն այս գործի մէջ, որպէսզի նա դառնայ իրօք եկեղեցական-ժողովրդական թերթ։ Տարաբախտաբար մեր հովիւները չնչին բացառութեամբ, գրեթէ, անտարբեր են նորա տարածման և բովանդակութեան ճոխացման մէջ։ Նոյնը կարող ենք ասել և Հոգաբարձութիւնների նկատմամբ։ Թերթը պիտի կարողանայ շարունակել իր գոյութիւնը բաժանորդագրութեամբ եկած գումարներով, մինչդեռ այժմ առանց եկեղեցիների օժանդակութեան դեռ եւս ապրել կարող չէ։ Դեռ պիտի կարողանանք կրօնական-եկեղեցական գրքեր և քարոզներ եւս հրատարակել։

Ձեզ յայտնի է մեր Առաջնորդարանի նիւթական վիճակը։ Պարտուց վերացման մասին քայլեր են պատրաստուած եկեղեցիների և համայնքների մեծութեան համեմատ. բայց հոգաբարձութիւններից և մեր հովիւներից հարկաւոր աջակցութիւնը չենք տեսնում։

Հիմնել ենք Առաջնորդարանին Օժանդակող Ընկերութիւնը, որ եթէ դարձնենք համաժողովրդական գործ, իրական օժանդակութիւն կը լինի նիւթապէս և բարոյապէս, որից և կախուած է մեր դպրոցական և այլ ձեռնարկութիւնների յաջողութիւնը։

Դպրոցը սովորական է դարձել եկեղեցու նախագաւիթ անուանել, և ճշմարիտ է այդպիսի անունը։ Բայց որքան խնամքի են կարօտ մեր դպրոցները, իսկական նախագաւիթը դառնալու համար։ Այնտեղ պիտի մեր մատաղ սերունդը սովորէ իր մայրենի լեզուն, որ ամենակարեւոր շաղկապն է նոր սերունդը հնի և աւելի հեռաւոր անցեալի հետ կապելու, ազգային գիտակցութիւնը բարձրացնելու։ Բայց հետզհետէ պակասում են ուսուցիչների, ուսուցչուհիների թիւը, թողում ասել, որ եղածներից մի մասն էլ անբաւարար է իր պատրաստութեամբ։ Մենք հնարաւորութիւնը չունինք կարեւոր ղեկավարութեան, որովհետեւ դրամական պատճառներով յատուկ պաշտօնեաներ չունինք այդ նպատակով։

Ունինք եկեղեցասէր և դպրոցասէր տիկինների միութիւններ, որոնց կարեւորագոյն նշանակութիւն պիտի տալ և աւելի մեր գործունէութեան վարժեցնել, որովհետեւ նրանք իրօք եկեղեցու պայծառութեան, դպրոցական կարիքների հոգացման մէջ մեծ ծառայութիւն են մատուցանում և պիտի առաւել եւս մատուցանեն։ Համայնական հանդէսների և ճաշկերոյթների ժամանակ նրանց կատարած դերը շատ գնահատելի է։

Գ.

Պիտի մտածենք զօրացնել Երիտասարդաց միութիւնները․ ասելով, թէ պէտք է եկեղեցասէր և ազգասէր լինիք, ձեր մայրենի լեզուն սովորէք, բաւական չէ: Նրանց միութիւնը պիտի դառնայ իրենց համար գրաւիչ, պիտի մի բան սպասեն իրենց միութիւնից, որ նորա շուրջը հաւաքուին: Լեզուի, գրականութեան, պատմութեան յատուկ դասընթացքներ, երգեցողութիւն, մարմնամարզութիւն, դաշտահանդէսներ խելացի հսկողութեան տակ, կարող են օգտակար լինել: Դաշտահանդէսներն արդէն ընդունուած են մերոնց մէջ և մեծերի համար․ բայց պէտք է ազնուացնել: Կարող է այնտեղ, բաց երկնքի տակ, կրօնական պաշտամունք կատարուել, բայց ոչ պատարագ: Երիտասարդների զուարճութեան խաղեր սարքել, երբեմն և մեծերի մասնակցութեամբ: Արբեցողութեան ոչ մի երեւոյթ պէտք է նկատուի այնտեղ, բայց կեղծ մաքրակրօնութիւն (Puritanism) նոյնպէս պէտք չէ: Մեծերը նոյնպէս պիտի ուրախանան, երգեն, զուարճանան, բայց երբէք չմոռնալով, որ փոքրեր կան իրենց շուրջը:

Երիտասարդներից յետոյ` աւելի փոքրահասակներին ազգի և եկեղեցու հետ կապելու հաստատութիւնը Կիրակնօրեայ դպրոցն է, որ պէտք է որդեգրենք և փայփայանքի առարկայ դարձնենք, ինչպէս ամերիկեան և եւրոպական եկեղեցիների կողմից ընդունուած է: Կրօնական գիտելիքների նկատմամբ եւրոպական և ամերիկեան ազգերի մէջ կարեւոր դեր են կատարում նրանք: Պիտի աշխատենք հարկաւոր ձեռնարկներն ու դասագրքերը ընձեռել հետզհետէ:

Անշո՛ւշտ, համայնական կեանքի և եկեղեցւոյ պայծառութեան մէջ առաջնակարգ նշանակութիւն ունին հոգաբարձութիւնները հովիւների գլխաւորութեամբ: Հոգաբարձութիւնները աւելի ունկնդիր պիտի լինին Առաջնորդարանին, որովհետեւ նրանք են ժողովրդի և Առաջնորդարանի իսկական միջնորդները․ Նրանց միջոցով է, որ համայնական կեանքի ղեկավարութիւնը Առաջնորդարանի կողմից պէտք է արդիւնաւոր դառնայ:

Սակայն բոլոր տեսութիւններից և կանոններից աւելի մենք մարդկանց կարիք ունինք․ պահանջի համեմատ նոր քահանաներ, նոր ուսուցիչներ, լեզուի, գրականութեան և մշակոյթի կենդանացման և պահպանման համար: Եթէ կամենում ենք ամերիկահայութիւնը պահպանել, պահպանելով լեզուն, եկեղեցին, անցեալի հետ կապերը, մեր աւանդութիւնները, գիտակցութիւնը ազգաշէ-

ԾԱ.

ՄՇԱԿՈՅԹԻ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Ա.

Հասկ-ի Յուլիս—Օգոստոս միացեալ համարի մէջ հրատարակուեցաւ Մեր Կոնդակը, որի մէջ պարզուած էր Հոկտեմբերը մշակոյթի պանծացման ամիս դարձնելու կարգադրութիւնը: Այստեղ կ'ուզենք մի քիչ աւելի հանգամանօրէն կանգ առնել խնդրի վերայ, քան այդ հնարաւոր էր Կոնդակի մէջ:

Մշակոյթի ծագումը կապուած է մարդկային հոգու իմացականութեան ծագման և զարգացման հետ, քաոսից և խաւարից հետզհետէ դէպի պայծառութիւն և լոյս, նեղ սահմաններից դէպի ընդարձակ հորիզոններ: Նորա առաջին իմացական ստեղծագործութիւններն են լեզուն և կրօնը և դրանց հետ կապուած բանահիւսութիւնն ու կրօնական պատկերացումները, առասպելներն ու հերոսապատումները:

Մարդիկ իրենց բնակելի ծառերի ճիւղերից շինած հիւղերի հետ, սկսել են շինել իրենց դամբարանները, կրօնական ամենահին գաղափարներից մէկի, հոգու անմահութեան հետ կապուած: Նիւթական կեանքի վերջաւորութեան հետ չի հաշտւում մարդը: Այստեղից է ծագում Նորա շինարարութիւնն ու ճարտարապետութիւնը, որ հասնում է մինչև բուրգերի ահաւոր ստեղծագործութիւնը, որ ոչ այլ ինչ են, բայց եթէ փարաւոնների դամբարաններ: Նախապատմական շրջանի արուեստի և մշակոյթի ուսումնասիրութիւնն էլ կապուած է հողաբլուրների և այլ տեսակի դամբարանների մէջ գտնուած իրերի և անօթների ուսումնասիրութեան հետ: Քարի, բրոնզի, և երկաթի գործածութեան դարերից մշակոյթը հետզհետէ զարգանում և բարձրանում է մինչև արուեստների ծաղկման և ընդարձակ քաղաքակրթութեան աստիճանները: Մարդկային արուեստի առաջին ստեղծագործութիւնները, որ գտնուել են այդ դամբարանների մէջ, օրինակ կանացի Ֆիգուրներ, ապագայի հրաշալի աստուածուհիների նախամայրերն են, որ կերտել է յետոյ յոյն արուեստը:

Գիտնականներից ոմանք սահմանի բաժանում են դնում մշակոյթի և քաղաքակրթութեան մէջ։ Կրօն, արուեստ, գրականութիւն, գիտութեան իրենց ճիւղերով մշակոյթի սահմանի մէջ են դնում (Kultur), իսկ գործնական կեանքի հարկաւորութեան բաւարարում, յարմարութիւնների ստեղծագործում, տեխնիկայի զարգացում իր ընդարձակութեամբ, քաղաքակրթութեան (Civilisation). մինչեւ իսկ ոմանք կարծում են երկրորդի զարգացումը առաջինի անկման նշանն է։ Բայց ուրիշների հետ ուղիղ չենք համարում այդ. կեանքը ամբողջութիւն է և այդ ամբողջութեան հետ է կապուած և զարգացման ընթացքը։ Ստեղծագործական նոյն ոյժն է ներգործում երկուսի մէջ եւս։ Միայն, տարաբաղդաբար, զարգացման այդ քայլերը ուղիղ գծով չեն ընթանում պատմութեան մէջ, այլ զիկ զակ: Բարացած պիտի համարել հոգեկան ունակութիւնները, երբ անկումից այլեւս բարձրանալ չի կարողանում։

Սակայն մեր տեսութիւնից չպէտք է վրիպէ այն հանգամանքը, որ պատմութեան համար էականը մշակոյթային մեծ ստեղծագործութիւնն է, որ միայնն է և գասախարակչականը մարդկային հոգու բարձրացման և կատարելութեան համար։ Զարգացման օրէնքն է այդ բնութեան և մարդկային հոգու մէջ, միշտ անկատարից դէպի կատարեալը, նիւթականից դէպի վերացականն ու հոգեւորը։ Քաղաքականն ու տնտեսականը ուղղուած են պաշտպանելու և զօրացնելու ժողովրդի մէջ մշակոյթային բարձր ստեղծագործութիւնը։ Նրանք ամենասերտ կերպով կապուած են իրար հետ, բայց քաղաքական այն զօրութիւնը, որ ժողովրդի ստեղծագործական ուժերը չի խրախուսում, պաշտպան և զօրավիգ հանդիսանում նրանց, վրիպում է իր բարձր կոչումից. տնտեսական ամենայն մի բարօրութիւն, կեանքի դիւրութիւն և յարմարութիւն, եթէ չեն նպաստում մտաւոր, գեղարուեստական, բարոյական, հոգեւոր կեանքի ուռճացման, նա վնասակար է դառնում և բարոյական անկման պատճառ։

Մեր միտքը աւելի լաւ պարզելու համար անցեալ դարի, անգլիացի մեծ մատենագիր և մտածող Կարլ Լէյլի խօսքը պիտի յիշենք։ Յայտնի է, թէ անգլիական ազգի համար ի՛նչ արժէք ունի Հնդկաստանը, նորա մեծութեան, հարստութեան և զօրութեան մեծ աղբիւրը։ Բայց, եթէ ստիպուած լինէինք ընտրութիւն անել Շէկսպիրի և Հնդկաստանի մէջ, կ՚ասէինք, յայտնում է նա. Հնդկաստանը, ո՛րքան և կարեւոր, ժամանակաւոր է մեզ համար, բայց

առանց Շէկսպիրի մենք ապրել կարող չենք։ Շէկսպիրը մերն է և մերն է յաւիտեան. Նա անմահ կը մնայ մեզ հետ, անգլիական այն թագաւորն է նա, որին ոչ մի պարլամենտ գահընկէց անել կարող չէ։

Բ.

Այս խօսքերի մէջ ամփոփուած է մեր պարզելիք միտքը։ Ամենաթանկագինը մի ազգի համար նորա ստեղծագործ հանճարն է իւր արդիւնքներով. լեզուն, կրօնը, արուեստը, գրականութիւնը, գիտութիւնը, քաղաքակրթութիւնը, որոնց գումարը ամփոփում ենք մշակոյթ բառի մէջ։ Զօրացնել այդ ստեղծագործող հոգին, կենդանի պահել նորա բարոյական ուժերը, պաշտպանել և զուրգուրանքով խնամել անցեալի ժառանգութիւնները, որպէսզի նորա հետ օղակուի և ներկան և նոյն իսկ գծագրուի ապագայի հեռանկարը, իմացական ազգի յատկանիշն է և կարգաւորեալ գործունէութիւնը։

Պատմութեան մէջ էականը այն չէ, թէ մի ազգ ո՛րչափ հզօր է եղել, նուաճումներ կատարել, շատ անգամ իրենից թոյլ ազգերին ոտքի տակ տրորել, այլ թէ ի՞նչ հոգեւոր ժառանգութիւն է թողել իւր ազգին և մարդկութեան։ Համեմատեցէք երկու աշխարհակալ դէմքեր պատմութեան մէջ, Քսերքսէս և Աղեքսանդր Մեծը — գրեթէ հաւասար չափով նրանցից մէկը մինչև Յունաստան գնաց և միւսը Յունաստանից մինչև Պարսկաստանի արեւելեան սահմանները։ Մէկի աշխարհակալութիւնը միայն աւեր և կործանում բերեց իւր անցած երկիրների համար, իսկ միւսինը հելլենիստական քաղաքակրթութեան տարածումը մինչև Հնդկաստանի սահմանները։ Պատմութիւնից յայտնի է, թէ Պտղոմեանց, Սելեւկեանց և Պերգամոնի տէրութիւնները, ինչպէս՝ նոր կեանք բերին քաղաքակրթութեան պատմութեան մէջ իրենց ստեղծած արուեստով, տաճարներով և մատենադարաններով։ Աղեքսանդրիայի մատենադարանը, որ հիմնուեցաւ Պտղոմէոս Սոտերի ժամանակ (280 Ք. ա.), գիտութեան հնոց դարձաւ իւր ժամանակի համար տիեզերական մտքով. այնտեղ գիտնականներն ամեն դիւրութիւն, բնակարան և նիւթական ապահովութիւն էին վայելում, գիտութեամբ և փիլիսոփայութեամբ զբաղուելու համար։ Պերգամոնի փոքրիկ թագաւորութիւնը մրցակիցն էր Պտղոմեանների, արուեստի, գիտութեան և իրենց մատենադարանի ճոխութեան մէջ։ Մագաղաթի ազնուացման արուեստը մարդկութիւնը նրանց

է պարտական, իսկ դորա հետեւանք էր գիտութեան, արուեստի եւ քաղաքակրթութեան աւելի արագ եւ դիւրին տարածումը, քան առաջ էր։ Անտոնիոս, երբ Պերգամոնի մատենադարանը Կղէոպատրային ընծայեց, 200,000 կտոր գիրք կամ փաթոյթ (Rolle) կար այնտեղ։

Ազգերի կեանքի մէջ ամենից նշանակալիցը, ուրեմն եւ մնայունը նրանց ստեղծագործութիւնն է, մշակոյթը։ Այդ կողմից յատկապէս խրատական է եւ ուսանելի հին ազգերի պատմութիւնը։ Նրանք մինչեւ իսկ կարող են մարմնով կամ նիւթական, արտաքին կեանքով մեռնիլ, բայց ապրիլ մշակոյթային կեանքով, եւ անմահ մնալ մարդկութեան յիշողութեան մէջ։ Այդպէս է, օրինակ, եգիպտական ազգը. նա չկայ այլեւս, բայց նորա կրօնի, ճարտարապետութեան, կերպարուեստի կամ նկարչութեան եւ այլ մշակոյթային ստեղծագործութիւնը միշտ անմահ պիտի մնայ պատմութեան մէջ։ Նոյնը կարող ենք ասել Ասորեստանցիների եւ Բաբելացիների մասին. գիտնականների կատարած պեղումների, աղիւսէ մատենադարանների գիւտով եւ բեւեռագիրների ընթերցանութեամբ, նրանց արուեստի մնացորդների ուսումնասիրութեամբ այդ մեռած ազգը, նորից յարութիւն առաւ եւ իւր առաջնակարգ տեղը բռնեց ազգերի պատմութեան մէջ։ Մարդկութիւնը ո՛րչափ երախտապարտ է այդ երկու ազգերին իրենց նշանագրերի եւ բեւեռագրերի գիւտով եւ ընդարձակ գրականութեամբ, պատմութեան, կրօնի եւ մշակոյթի մասին թողած յիշատակներով։

Վերցնենք դասական յոյնը, նա եւս չկայ. բայց նորա Իլիականը, նորա բեմական արուեստը իւր մեծ թատերագիրներով, նորա արձանագործութիւնը Ֆիդիասի եւ Պրաքսիտէլէսի գործերով, նորա ճարտարապետութիւնը աստուածներին նուիրուած, նկարչութիւնը, որ մնացել է միայն անօթների վերայ, բայց ինչքան բազմազան եւ հարուստ, նորա փիլիսոփայական միտքը յանձին Սոկրատէսի, Պղատոնի եւ Արիստոտէլի եւ յետագայ դպրոցների, ամենափայլուն տեղը պիտի պահէ մարդկութեան քաղաքակրթութեան պատմութեան մէջ։ Երկարելու պէտքը չկայ այս մասին. արեւի լոյսի պէս պայծառ է այս միտքը, ով փոքր ինչ ծանօթ է հին պատմութեան։ Ազգերը ապրում են առաւելապէս եւ յաւիտենականութեան էջերի մէջ տեղ բռնում իրենց ստեղծագործութեամբ եւ մշակոյթով։

Գ.

Մասնաւորելով խօսքը մեր ազգի մասին, պէտք է ասենք,

որ մեր դերը աւելի փոքր է եղել ձուլուած ազգերի, եգիպտացիների, ասորեստանցիների, յոյների, նաեւ մեր հարեւան պարսիկների համեմատութեամբ, բայց աննշան չէ մեր թուի և մեզ վիճակուած ապաբաղդ պայմանների մէջ։ Տարաբաղդաբար մեր հին պատմութիւնը դեռ բոլորովին լուսաբանուած չէ, սակայն Արտաշատեան հարստութեան երեք դէմքերը՝ Արտաշէս, Տիգրան մեծ և Արտաւազդ, թէպէտ սքօղուած յոյն և լատին մատենագիրների կողմնակալ նկարագրութեամբ, ապացոյց են, թէ հելլենիստական քաղաքակրթութեան տարածման և խորացման մէջ աննշան դեր չեն կատարել նրանք Հայաստանում և մերձաւոր արեւելքի մէջ։ Արտաւազդ արքայորդին բանաստեղծ էր, նորա և յոյն բանաստեղծների գրուածքները ներկայացնում էին հայ արքունիքում։

Առանց հետեւանքի չէ անցել և հռոմէական յարաբերութիւնը Հայոց հետ. Գառնիի տաճարից զատ, որ յունա-հռոմէական ոճով շինուած մեհեան է, գերեզմանական կոթողների ստուար թիւը (*) և բազիլիկ եկեղեցիների Ե—Զ դարերի ճարտարապետութիւնը շատ աւելի ընդարձակ, քան յայտնի է մինչեւ այժմ, որոշ ապացոյցներ ունին հելլենիստական յարաբերութեան։ Գերեզմանական այդ կոթողների նորանոր գիւտերն ու նրանց ուսումնասիրութիւնը մեզ պիտի պարզէ հայ հեթանոսութեան և քրիստոնէական հայեացքների օղակաւորումը Հայաստանում և մի նոր արուեստի ստեղծագործումը։

Վիեննայի համալսարանի համաշխարհային հռչակ ստացած ուսուցչապետ Ստրշիգովսկիի և մեր հանգուցեալ Թ. Թորամանեանի, Բալտրուշայտիսի, բիւզանդական արուեստի մասնագէտ Դիլի և այլոց աշխատանքները իրենց կարեւոր դերն են կատարել հայ ճարտարապետութեան և արուեստի համար պատուաւոր տեղ նուաճելու քրիստոնէական մեծ արուեստների շարքում։

Մինչեւ վերջին տասնեակ տարիները հայ արուեստի և ճարտարապետութեան մասին, գրեթէ, խօսք չկար գիտնական շրջաններում, բայց այժմ արդէն մերձ արեւելեան և բիւզանդական արուեստների, նաեւ արեւմտեան որոշ երեւոյթների մասին, կարող չեն խօսիլ առանց հայ արուեստի յիշատակութեան կամ համեմատութեան։ Հայ արուեստի ազդեցութեան հետքերը Փոքր Ասիայից, Բիւզանդիոնից, Բալքանեան երկիրներից և հարաւային Ռուսաստանից շատ աւելի հեռու են անցել։

(*) Տես մեր աշխատութիւնը. Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ Հայ Արուեստի եւ Մշակոյթի Պատմութեան։ Պրակ Գ. Նիւ Եորք. 1944։

Վերեւ յիշուած գիտնականներից ամենից աւելի երախտապարտ ենք Ստրչիգովսկիին, ոչ միայն իր, հայ ճարտարապետութեան նուիրուած, երկու մեծահատոր աշխատութեամբ, (*) այլ և ուրիշ գործերի մէջ կատարած շատ համեմատութիւններով հայ արուեստի նկատմամբ։ Գնահատութեամբ պիտի յիշենք նաեւ հանգուցեալ Թորամանեանին, որ իր չափագրութիւններով և լուսանկարչական հաւաքածուներով մեծ նպաստ բերաւ ոչ միայն Ստրչիգովսկուն, այլև ուրիշներին (**)։ Վերջերս հրատարակուեցաւ նաև նորա աշխատութիւնների մեծ ժողովածուն, բացի Տիկորին նուիրած առանձին հատորը։

Առաջաւոր Ասիայի ազգերի արուեստների հետ հիացմունքով պիտի յիշուի մեր գողտրիկ Հռիփսիմէն, հոյակապ Զուարթնոցը, Անիի մայր եկեղեցին, Աղթամարի Ս. Խաչը, Հաղբատն ու Սանահինը իրենց պէսպիսութիւններով և ճարտարապետական ձեւերի և քանդակագործութեան հարստութեամբ։ Երբէք չպէտք է մոռացուի, որ Այա-Սոֆիայի գմբէթը մեր Տրդատ ճարտարապետն է նորոգել, Անիի մայր եկեղեցիի մեծ արուեստագէտը։

Ոչ պակաս արժէքաւոր է մեր ձեռագրական մանրանկարչութիւնը։ Տարաբաղդաբար շատ հին ձեռագիրներ մեր ձեռքը չեն հասել. նրանք ոչնչացել են այլ և այլ պատճառներով։ Թուականով ամբողջական մեր ամենահին ձեռագիրը Լազարեան ճեմարանի 887 թուի աւետարանն է. բայց Ժ. դարից ունենք բաւական թուով աւետարաններ, նաեւ քիչ թուով այլ բովանդակութեամբ ձեռագիրներ։ Սակայն Ժ—ԺԱ. դարերի աւետարաններից շատերի մէջ պահուած են մանրանկարչութեան հին աւանդներ, մինչեւ Զ. դարի ճարտարապետական զարդարանքների աղերսով։

Հայ մանրանկարչութիւնը կարելի է երկու մեծ շրջանի բաժանել, արեւելեան Հայաստանի և Կիլիկեան։ Առաջինի մէջ պահուած են աւելի հին արուեստի հետ կապուած աւանդներ, թէ՛ պատկերագրութեան և թէ զարդարանքի մէջ. իսկ Կիլիկեանը պահելով հանդերձ արեւելեան աւանդներ, իւրացրել է որոշ կողմեր բիւզանդական և մուսուլմանական, ինչպէս և եւրոպական (խաչակրաց) արուեստներից, բայց վերամշակութեան ենթարկելով։ Հայ մանրանկարչութեան բարձրագոյն զարգացումը պիտի համարել ԺԲ. դարի երկրորդ կէսերից մինչեւ ԺԴ.-ի կէսերը։ Երկու շրջանից էլ

(*) *Die Batkunst der Armenier und Europa*. 1918.

(**) Մեր վերեւ յիշուած աշխատութեան լուսանկարների մի կարեւոր մասը ստացել ենք հանգուցեալ Թորամանեանից։

ունինք շատ կարեւոր, արքայական և կաթողիկոսական ձեռագիրներ թէ՛ Երեւանի պետական (Նախկին Էջմիածնի) և թէ Երուսաղէմի մատենադարաններում, նաեւ Վենետիկի Մխիթարեանների, քիչ չափով էլ եւրոպական և ամերիկեան մատենադարաններում։ Յիշել կարող ենք Գագիկ Կարսեցու, Կոստանդին Բարձրբերդցու, Հեթում Ա.ի (հատուկտորներով միայն), Լեւոն Գ.ի և Կեռան թագուհու, Հեթում Բ.ի և ուրիշ արեւելեան և կիլիկեան իշխանների և իշխանուհիների սեփականութիւն եղած ճոխ նկարազարդութեամբ ձեռագիրներ, երբեմն և ստացող թագաւորների և թագուհիների պատկերներով, որ ազգագրական պատմական մեծ արժէք ունին։

Արեւելեան Հայաստանում և Կիլիկիայում ծաղկել են գրչութեան և մանրանկարչութեան արուեստի շատ դպրոցներ, յիշւում են Կամսարականների դպրոցը երեսուն գրիչ միաբաններով, Ժ. դարում Տաթեւի դպրոցը, ԺԱ—ԺԳ. դարերը Հաղբատի դպրոցը, ԺԴ—ԺԴ.ի կէսերը Գլաձորի մեծ դպրոցը, և ուրիշ վանքերում դպրոցներ։ Իսկ Կիլիկիայում Դրազարկի արքայական, Հռոմկլայի հայրապետական և Սկեւռայի դպրոցը, Լամբրոնացիների հովանաւորութեան տակ, ուր գործել են «անհաս» գրիչներ և «աստուածապարգեւ արհեստիւ» նկարիչներ։

Հայ մանրանկարչական արուեստի ուսումնասիրութիւնն սկսուած է նախ եւրոպացիների կողմից, Ստրչիգովսկի, Մակլեր, բայց և հայերի, ինչպէս օր. Սիրարփի Տէր Ներսէսեանն է, կամ հանգուցեալ Սագըզեանը, իսկ առաջ են մատակարարել Զօբանեան և ուրիշ շատեր։ Յուսալ կարող ենք, թէ հայ մանրանկարչական արուեստի նիւթերի և ուսումնասիրութիւնների կարգաւորեալ աշխատութեամբ, հնարաւոր կը լինի նոյնչափ հետաքրքրութիւն զարթեցնել և գնահատելի դարձնել, որչափ հայ ճարտարապետութիւնը։ Մենք պարծենալ կարող ենք ամենաքաղաքակիրթ ազգերի կողքին մեր 20,000 տուփ կամ հատոր ձեռագիրներով, ուր պահուած են հայ մտքի և անցեալի ամբողջ արտադրութիւնը, մեր ազգային ամենամեծ հարստութիւնը։

Հայ ինքնուրոյն և թարգմանական մատենագրութիւնը նոյնչափ կարեւորագոյն արժէք է մերձաւոր արեւելքի ազգերի քաղաքակրթութեան պատմութեան ուսումնասիրութեան համար։ Նախ հայ պատմագրական գրականութիւնը, որ աղբիւր է նաեւ այն ազգերի պատմութեան, որոնց հետ շփուել է հայ ժողովուրդը, սասանեան պարսիկները, սուրիացիք, արաբները, բիւզանդացիք,

սելջուկները, խաչակիրները. առանց հայ պատմագրութեան օգտագործման միշտ պակաս կը մնայ այդ ազգերի գործերի և արշաւանքների պատմութիւնը։

Հայ տառերի գիւտի հետ Աստուածաշնչի թարգմանութիւնը մեր երանելի հայրերի՝ Ս. Սահակի և Մեսրոպի և նրանց աշակերտների հետ՝ Մերձաւոր Արևելքի ազգերի համար ևս նշանակալից պատմական երևոյթ էր։ Նրանց և յաջորդող սերունդների ձեռքով թարգմանուել են, գրեթէ, բոլոր նշանաւոր եկեղեցական հայրերի գործերը։ Աստուածաշնչի թարգմանութիւնը միայն մի գլուխ գործոց էր. դասական, յստակ գրաբարով, հայ լեզուի հարստութեան ամենամեծ գանձարանը, Եզնիկի սքանչելի Եղծ Աղանդոց-ի և քաղցրախօսիկ Եղիշէի հետ։ Ապա Իրենէոսից, Օրիգինէսից, Հիպոլիտից թարգմանութիւններ ունինք, ամբողջապէս կամ հատուածներով մեզ հասած, որոնց բնագիրներից ոմանք կորած և միայն հայ թարգմանութեամբ մնացած։ Չորսից հինգերորդ դարերի բոլոր նշանաւորագոյն հայրերի, գրեթէ, ամբողջական թարգմանութիւններն ունինք. Աթանասի, Եփրեմ Ասորու, Զգօնի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստուածաբանի և Գրիգոր Նիւսացու, Ոսկեբերանի, Եպիփան Սալամինացու, Կիւրեղ Աղեքսանդրացու, Տիմոթէոս Կուզի, որոնց գրուածքներից ոմանց բնագիրը նոյնպէս կորած է։ Հարկաւո՞ր է յիշել, թէ Բարսեղ Կեսարացին և Գրիգոր Աստուածաբանը, ուրիշ հայ ուսանողների հետ Պրոյերեսիոս հայ հռետորի և փիլիսոփայի աշակերտներն են, որ նշանաւոր հանդիսացաւ Աթէնքում և Հռոմում իբրև առաջնակարգ գիտնական և պերճախօս։ Այսպիսով հնարաւորութիւն է ստեղծուել լայն չափերով օգտուելու այդ հայրերի հանճարեղ հոգու ճոխ ժառանգութիւններից։

Յիշատակելի է վերջապէս մեր հոգևոր և աշխարհիկ բանաստեղծութիւնը, մեր շարականների հեղինակների հետ Գրիգոր Նարեկացին, Ներսէս Շնորհալին և ուրիշները։ Գրիգոր Նարեկացին, Ներսէս Շնորհալին առաջնակարգ կարող են համարուել միջնադարեան մեծ ազգերի նման հեղինակների հետ։ Գրիգոր Նարեկացին բացառիկ երևոյթներից մէկն է ազգերի նման գրականութեան մէջ, մեղքի ամենախոր գիտակցութեամբ, ներքին ամենասուրբ յուզումներով և հոգու բոլորանուէր ապրումներով, որ իբրև անուշահոտ կնդրուկ իր սրտի ոսկի բուրվառի մէջ ուղղում է առ «տեսողն գաղտնեաց»։ Ուստի և ոչ մի գիրք չէ ունեցել այն ներգործութիւնն ու նշանակութիւնը, որ ունեցել է Նարեկը

նախնեաց կրօնական զգացման վառ և կենդանի պահպանութեան և սերունդէ սերունդ փոխանցման և յարատեւութեան մէջ։ Իսկ Ներսէս Շնորհալին ոչ միայն հայ ժամապաշտութեան զարդն է, այլ և իր «Հաւատով խոստովանիմք»-ով յաւերժական մի լուսաւոր փարոս է կանգնել հաւատաւոր հոգու առաջ, իբրեւ ուղեցոյց անյիշաչար, լայնախոհ և բարեպաշտ քրիստոնեայի համար։ Այդպիսի գնահատութեամբ է, որ նա թարգմանուած է այլ և այլ լեզուներով։

Բայց մեր միջնադարեան բանաստեղծներն էլ զուրկ չեն անգին գոհարներից։ Ֆրիկի, Խաչատուր Կեչառեցու, Կոստանդին Երզնկացու, Թլկուրանցու, Նաղաշի, Գ. Աղթամարցու, մանաւանդ Զօրանեանցի կողմից Բուչակի անունով հրատարակած սիրոյ և խրատական ոտանաւորների ժողովածուի մէջ կան քառեակներ, որոնք մրցել կարող են արեւելեան և եւրոպական նման լաւագոյն ստեղծագործութիւնների հետ։ Մենք համոզուած չենք, թէ նրանք Բուչակինն են, շատ տողեր և քառեակներ երեւում են արդէն Բուչակից շատ առաջ ապրող գրողների ստեղծագործութիւնների մէջ։ Ժամանակով աւելի նոր, բայց բանաստեղծական արժէքով էլ արժէքաւոր է Սայաթ Նովան, աշուղական բանաստեղծութեան իշխանը, եթէ նրանց կարգին չհաշուենք Ֆրիկին։

Ռուս բանաստեղծներ, Բրիւսով, Մաքսիմ Գորկի, Վեսելովսկի և ուրիշներ շատ բարձր են գնահատել հայ հին և նոր բանաստեղծութիւնը, ուստի բազմաթիւ կտորներով թարգմանել և առանձին ժողովածուներով հրատարակել։

Մենք չենք խօսում ժողովրդական բանահիւսութեան, ժողովրդական և եկեղեցական երգերի և մեղեդիների ճոխութեան և խորապէս յուզական արժէքների մասին, որ եթէ, հաւաքուէին լիովին և ներդաշնակուէին, մի նոր, գեղարուեստական մեծ շէնք կ'ըստանանք երաժշտական արուեստի համար։

Հայ քաղաքակրթութեան և պատմական դերի լուսաբանութեան մէջ օտարների աչքում կարեւոր մաս ունին եւրոպական գիտնականներից, վերը յիշուածներից զատ, Հիւբշման, Մեյյէ, Գելցեր և ուրիշները, իսկ ռուս գիտնականներից Մառ իր աշակերտներով։ Գելցերի հետ հանգուցեալ Ադոնցին ենք պարտական Հայերի առաջնակարգ դերի լուսաբանութիւնը պետական, պատերազմական և քաղաքակրթական մարզերի մէջ, բիւզանդական կայսրութեան սահմաններում։

Այս թռուցիկ ակնարկների նպատակն էր մեր ընթերցողներին պարզել ոչ միայն մշակոյթի արժէքը, այլ և նորա ընդարձակ հորիզոնները մեր մէջ։ Ապարաղդ է եղել մեր վիճակը քաղաքական տեսակէտով, բայց ամաչելու պատճառ չունինք հոգևոր և մշակոյթային կեանքի մարզերում։

Գնահատենք մեր ստեղծագործական անցեալը, հաստատենք նորա արժէքի գիտակցութիւնը հայ ժողովրդի հոգու մէջ։

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԱՍԿ. 1946. Սեպտ.—Հոկտ.

ԾԲ.

ՊԱՏԱՍԽԱՆ

ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ Կ. Պ. ԱՏԱՆԱԼԵԱՆԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ՚Ն

Հաճութեամբ տեղ կու տանք հետագայ գրութեան, զոր, Ամենայն Հայոց Վեհ. եւ Սրբազնագոյն Հայրապետին յանձնարարութեամբ, Մայր-Աթոռոյ միաբան Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. ուղղած է Ամերիկայի բողոքական Հայոց Հովիւներէն Վեր. Կ. Պ. Ատանալեանի, ի պատասխան այս վերջինին կողմէ Ն. Ս. Օծութեան մատուցուած քանի մը հարցումներու, զորս ընթերցողներ կը գտնեն այս գրութեան առաջին մասին մէջ: — Ամիսներ առաջ նոյն այդ հարցարանը ղրկուած էր նաեւ խմբագրութեանս, որ, խորհելով թէ այդ հարցումներով շօշափուած բուն հարցին վերաբերմամբ իր կարծիքը ընդհանուր առմամբ քանիցս յայտնած էր **Սիոն**-ի մէջ, աւելորդ նկատեց առանձնակի գրութեամբ այսինքն նամակով եւս արտայայտուիլ: Ուրախ ենք որ Տ. Գարեգին Սրբազան հարցը նկատի կ'առնէ վերէն եւ ընդհանուր տեսակէտներէ դիտելով զայն, եւ ոչ թէ հարց-պատասխանի այն մանր-ուսումնային ձեւին տակ, որով ներկայացուցած է զայն Վեր. Ատանալեան, կտորակեալ մանրամասնութեան մը մէջ ցիրուցանելով խնդիր մը, որ իր թէ՛ ծագումին եւ թէ՛ զարգացումին մէջ միատարր եւ ընդհանուր բնոյթ մը ունի իսկապէս:

ԽՄԲ. «ՍԻՈՆ»-Ի

Մեծարգո՛յ եղբայր,

Ս. Հայրապետը՝ Տ. Խորէն Կաթողիկոս Ամենայն Հայոց, ըստացել է Ձեր առաջին և երկրորդ գրութիւնները, բայց ուշացել է պատասխանը ինչ ինչ նկատումներով և մանաւանդ երկարատև հիւանդութեան պատճառով. այժմ յանձնարարել է ինձ պատասխանել Ձեզ՝ իր տուած ընդհանուր ցուցումների համեմատ:

Ի նկատի ունենալով, որ Ձեր յարուցած խնդիրը հանրային նշանակութիւն ունի, մենք պատասխանում ենք Ձեզ հանրային եղանակով, այսինքն տպագրական խօսքի միջոցով, մանաւանդ որ Ձեր բացատրական խօսքերից էլ երևում է, որ Ձեր նպատակն է այսպիսի դիմումներով «լայնախոհ և անկողմնակալ ոգիով իբրև մի և նոյն ազգին ու մի ընդհանրական եկեղեցին զաւակները՝ ընդհանուր եղբակցութեան հասնելու»:

Ձեր հարցումներն են.

1. Հարիւր տարի առաջ Հայ Աւետարանական շարժումի եւ ետքը անջատ եկեղեցի ըլլալու պատճառները ի՞նչ էին:

2. Հայաստանեայց Աւետարանական եկեղեցիի կազմութիւնը ու ցարդ շարունակելը օգտակա՞ր եղած է թէ վնասակար, ինչո՞ւ:

3. Հայ Աւետարանական եկեղեցին իր գոյութեան նպատակը արդարացուցա՞ծ է, եւ ցարդ բարեփոխումներ ունեցա՞ծ է, թէ ի՞նչ:

4. Առաքելական Մայր եկեղեցին եւ Աւետարանականը հարիւր տարիէ ի վեր ո եւ է չափով իրարու մօտեցա՞ծ են:

Հասարակաց խնդիրներու շուրջ իրարու հետ կանոնաւոր եւ տեւական գործակցութիւն ինչո՞ւ չեն ունեցած:

5. Մայր եկեղեցիին հետ միանալ ե՞րբ եւ ի՞նչպէս կարելի կըրնայ ըլլալ:

Ներեցէք, որ Ձեր հարցումների թելադրած շաւղով չպիտի ընթանանք մեր պատասխանի մէջ, այլ էական սկզբունքների բացատրութեան, որ Ձեզ համար էլ կարեւորն է:

Ա.

Ամենայն Հայոց Կաթողիկոսը բնականաբար, ուրախ լինել չի կարող և ոչ խրախուսել, որ քրիստոնէական եկեղեցիներից որ և է մէկի կողմից պրոպագանդ մղուի Հայ եկեղեցու գաւակների մէջ՝ եկամուտներ ձեռք բերելու նպատակով: Այդպիսի մերձեցումն ու հասկացողութիւնը օգտակար չէ ոչ Հայոց եկեղեցու և ոչ ընդհանուր քրիստոնէական տեսակէտով. դորա հետեւանքն է եղել պառակտում, բուռն վէճեր, ատելութիւններ և նոյն իսկ փոխադարձ ջարդարարութիւններ մի և նոյն եղբայրների մէջ, ինչպէս և քրիստոնէական հեղինակութեան և հմայքի անկում մեզ շրջապատող ոչ-քրիստոնեայ ազգերի աչքում: Կաթոլիկ եկեղեցին դարերի ընթացքում կատարել է այդպիսի փորձեր և յաջողել է նորան մասնաւոր համայնքներ կազմել և բեկորներ պոկել հայ ժողովրդից, բայց դորա հետ էլ մեծամեծ խռովութիւնների և անախորժութիւնների պատճառ դարձել, փոխադարձ հալածանքների և ատելութիւնների նոյնազգի եղբայրների մէջ շատ երկար ժամանակներ. կրօնական պառակտման հետեւանքն է եղել փոխադարձ սառնութիւն, իրարամերժ վերաբերմունք ի վնաս մեր փոքրիկ ազգութեան սերտ միութեան: Բայց աւելին եւս, հին Նախիջեւանի շրջանի միարարութեան յարած համայնքները մասամբ լուծուեցան մահմեդականութեան մէջ. Լեհաստանի ծաղկեալ գաղութը կորցրեց իւր ազգային բնոյթը և, գրեթէ, ամբողջապէս լուծուեցաւ շրջապատի մէջ: Հայաստանում և այլուր եղած շատ կաթոլիկ համայնքներ իրենց «ֆրանկ» են անուանում և ոչ հայ, որքան և կրօնա-

կանի իմաստ ունենար այդ բառը։ Իմ խօսքս հասարակ ժողովրդի համար է և ոչ կրթուած կաթոլիկների, թէպէտ այդպիսիների մէջ էլ երբեմն նկատելի են սառն վերաբերմունք դէպի ազգային, ոչ կաթոլիկ, ամբողջութիւնը։

Ընդհանուր գծերով կարելի է նոյնն ասել և բողոքական քարոզչութեան հետեւանքի մասին, թէպէտ ոչ այնպիսի սուր գծերով. բողոքականութիւնը Հայոց մէջ ինքնաբերաբար յառաջ եկած շարժում չէ, այլ դրսից ներմուծուած. այստեղ եւս փոխադարձ ծաղր, արհամարհանք, խծբծանք չեն նպաստել քրիստոնէութեան կենդանութեան և խոր հասկացողութեան գաղափարին, թէև ազգային զգացման ջլատման աւելի թոյլ արտայայտութեամբ։

Իւրատեսակ միսիոնարութիւն էր ցարական կառավարութեան ժամանակ ռուսական եկեղեցու կատարած նոր փորձը, «կըրօնական շարժում» էր սկսւում մեր սակաւահող գիւղերի մէջ լաւ հողամասեր ստանալու կամ անձնական վէճեր ու թշնամութիւններ յաջող լուծելու նպատակով, պաշտպանութիւն գտնելով ներշնչուած պետական պաշտօնեաներից, երբ Հայ եկեղեցու սպասաւորները աքսորի սպառնալիքի տակ հնարաւորութիւն չունէին իրենց պարտաւորութիւնը կատարելու՝ մոլորուածներին դարձի բերելու նկատմամբ։ Հայ եկեղեցին, բնական է, որ միայն բացասաբար կարող է վերաբերուել այսպիսի քարոզչութեան և եկամուտներ ձեռք բերելու գործունէութեան դէմ, դարերի փորձառութեան վերայ հիմնուած։

Բ.

Ազգային և տարբեր եկեղեցիների ծագումն ու ձեւակերպութիւններն իրենց առանձնայատկութիւններով անհատական կամայականութեան հետեւանքներ չեն, այլ պատմական և տեղական որոշ պայմանների հետեւանք։ Աստուծոյ կամքն է եղել, որ նոյն քրիստոնէութիւնը տարբեր ազգերի և պայմանների մէջ, իւր էական բնոյթը պահելով, ուրոյն կերպարանք ստանայ։ Պատահական չէ, որ բողոքականութիւնը տարածուած է Եւրոպայի հիւսիսում, իսկ կաթոլիկութիւնը իշխող է մնացել հարաւում, որ պարսկական մահմեդականութիւնը զանազանւում սիւննի կոչուած մահմեդականութիւնից։ Ազգային կենցաղի, մշակոյթի, հոգեբանութեան և պատմական այլ պայմանների հետեւանք են դրանք, որ պէտք ի նկատի առնուին. Հայաստանեայց եկեղեցին այդպիսիների մէջ բնորոշ եկեղեցիներից մէկն է, որ ծագել է, զարգացել ժողո-

վրդական ուրոյն կենցաղի, պատմական յատուկ տուեալների, ազգային մշակոյթի մէջ եւ իր բարերար պտուղներն է տուել, ստեղծելով քրիստոնէական կեանք, արուեստ եւ գրականութիւն, յատուկ ժամապաշտութիւն եւ արարողութիւն, նուիրապետական-վարչական կազմակերպութիւն, համապատասխան իր ճաշակի եւ հասկացողութեան։ Նա իր մէջ պահել է աւանդութիւններ եւ ծէսեր, որ քրիստոնէական նախկին երեք դարերից են գալիս, ինչպէս Ծննդեան եւ Զատկի ճրագալոյցներն են, Մկրտութեան եւ Յայտնութեան միասին կատարումը Յունուարի 6-ին, բայց առաւելապէս ժողովրդական ընտրական ոգին իր բոլոր պաշտօնեաների համար, որ չէ մնացել հնագոյն եկեղեցականներից ոչ մէկի մէջ, եւ աշխարհիկ հաւատացեալների ներկայացուցիչների մասնակցութիւնը եկեղեցու կառավարութեան գործում։ Ամենադժուարին պայմանների, եւ հալածանքների մէջ, մահմեդականութեան ուժեղ հարուածների եւ ճնշման տակ, դարերի ընթացքում, պահել է նա իր գոյութիւնը, կարելի է ասել անցել է «ընդ հուր եւ ընդ ջուր» եւ հասել մեր օրերին։ Թո՛ղ խաղաղութեան եւ քաղաքակրթութեան լայն եւ հարթ պողոտաներով ընթացող քոյր եկեղեցիները քննադատի ակնոցներով չմօտենան այս բազմաչարչար եւ նահատակ եկեղեցուն. տանջանքի բովի մէջ է նա մեզ դաստիարակել, պահել եւ հաւատ ներշնչել, թէ նորա համար էլ խաղաղ զարգացման եւ բարգաւաճման մի օր պիտի ծագի։ Աւելի լաւ է լուրջ մտածեն մեր արեւմտեան քրիստոնեայ եղբայրները, թէ ո՞ւր են Սիրիայի, Պաղեստինի, Աղեքսանդրիայի եւ հիւսիսային Աֆրիկայի մեծ եկեղեցիները, որոնց չնչին մնացորդներն են հասել մեզ կամ իսպառ անհետացել, ինչպէս Կիպրիանոսների եւ Տերտուղիանների եկեղեցիներն են։

Գ.

Ի՞նչ է վերջապէս զուտ կրօնական տեսակէտով կաթոլիկ պրոպագանդային կամ բողոքական քարոզչութեան նպատակը։ Ասել, թէ կաթոլիկութիւնը մեր նորադարձների մէջ աւելի խորը հասկացողութիւն պիտի ներշնչէ քրիստոնէութեան նկատմամբ եւ պապի գերիշխանութեան ընդունելութեամբ է, որ հոգեւոր կատարեալ փրկութիւն պիտի բաշխուի, հիմնաւոր չէ. եւ ոչ էլ բողոքականութիւնը մի քանի ծիսակատարութիւնների վերացմամբ իրական մերձեցում բերէ դէպի աւետարանական գաղափարների ճիշդ ըմբռնումն ու կեանքը։ Եկեղեցու կոչումն ու նպատակն է ներքին, հոգեւոր վերածնութիւնը, «նոր արարած» դառնալու իրողութիւ-

նը, հոգու խորքում ճշմարտապէս ապրուած բարեպաշտութիւնը։ Արդ, արտաքուստ իրարից բաժանուած և տարբեր ձևակերպութիւն ստացած եկեղեցիների հաւատացեալների մէջ չեն պակասում այդպիսի երևոյթներ. նոցանից իւրաքանչիւրը նոյն նպատակին հասնելու առանձնայատուկ կողմերն ունի, քրիստոնէական աւետարանական նոյն հողի վերայ։ Այն եկեղեցին, որ զղջման, դարձի այնպիսի մաքուր և խոր արտայայտութիւններ ունի, ինչպէս մեր ապաշխարութեան հոգևոր երգերն ու շարականներն են, գթութեան այնպիսի ներկայացուցիչ, ինչպէս Ներսէս մեծն է, աղօթաւոր, ինչպէս Նարեկացին և քրիստոնէական լուսոյ, յուսոյ և սիրոյ երգիչ, ինչպէս Շնորհալին, այնպիսի տաճարներ է կանգնել, ինչպէս Զուարթնոցն է, Անիի Մայր եկեղեցին, իրաւունք ունի ուրիշ գնահատութիւն և մերձեցում սպասելու իւր քոյր եկեղեցիներից, նա զուրկ չի կարող լինել քրիստոնէական առաքինութեան, հաւատոյ նոր ոգի ներշնչելու կարողութիւնից իւր զաւակների մէջ. միայն փոքր ինչ լաւագոյն պայմաններ հոգևոր կեանքի ուռճացման համար և պաշտօնէութեան պատրաստութիւն, գիտութեան բարձունքների իւրացմամբ, որովհետև եկեղեցու պաշտօնեայի կամ քահանայի մտաւոր և հոգևոր կարողութիւնը, անձնուիրութիւնը, հոգիներից հոգի կենդանի կապ ստեղծելու ունակութիւնը ամենակարևոր հանգամանքներից մէկն է մտադրեալ նպատակին հասնելու, միայն թէ պաշտօնէութիւն պատրաստելու այդ շարժումն էլ երևան պիտի գայ եկեղեցու ամբողջութեան մէջ, հետզհետէ, ի ներքուստ, ինչպէս աղբիւրի ջուրը ակունքից։

Դ.

Քրիստոնէական օգնութիւնը, նիւթական և բարոյական աղքատութիւնն ու խեղճութիւնը մեղմելու, մխիթարելու գործը եղել է և պիտի մնայ միշտ աւետարանի բերած մարդասիրութեան ամենամեծ երևոյթներից մէկը. բայց այդ անապական, կենդանարար ջուրը չպէտք է պղտորուի հատուածներ շահելու նպատակով՝ կաթոլիկութեան կողմից պապի գերիշխանութեան և յարակից մտքերը հրամցնելով, իսկ բողոքականութեան «հոգիներ փրկելու» նորութիւնը, ինչպէս, տարաբաղդաբար, շատ անգամ է կատարուած այդ միսիոնարներից ոմանց կողմից։ Հին եկեղեցիները, երբ օգնում էին միմեանց, կամ գերիներ էին փրկում թշնամիների ձեռքից, ուրիշ նպատակ չունէին, քան եղբայրական և սիրոյ զգացման թելադրութիւնը. Կիպրիանոս օգնութեան էր հասնում Նում-

խայի եպիսկոպոսներին կամ Դիոնեսիոս Համայեցին Կեսարիայի եկեղեցուն, առանց գերիշխանութեան կամ եկամուտներ ունենալու նպատակների։ Խորապէս վիրաւորական է այդպիսի օգնութիւնը սպասողների կամ ստացողների համար, խորապէս վիրաւորական և հակաքրիստոնէական պիտի համարուի այդ և նուիրատուների համար. ուրիշին վիճակուած անբաղդութիւնը չպէտք է շահագործուի եղբայրական օգնութեան անունով, եթէ Տէրը դատաւոր լինէր այդ ձեւի օգնութեան և քարոզչութեան, որ կողմից էլ նա գալու լինի, հաւատում եմ, թէ դատապարտութեան կ'ենթարկէր իբրեւ ոչ համապատասխան իւր բերած եղբայրական սիրոյ և միութեան։ Միսիոնարութիւնը քրիստոնեայ ազգերի մէջ պէտք է արմատապէս բարեփոխուի եւ բոլոր եկեղեցիները պէտք է սովորեն փոխադարձ յարգանքով վերաբերուել միմեանց, բայց գնահատելով իրար կապող ընդհանուր կողմերը։

Ե.

Սակայն անարդար լինել չենք կարող. միսիոնարութեան և քարոզչութեան նոյն իսկ այսպիսի յոռի մերձեցումների հետ կապուած են եղել դրական հետեւանքներ եւս, կաթոլիկ միաբանների բերած միջնադարեան գիտութիւնն ու սխոլաստիկան նորութիւն էր Հայ եկեղեցու վարդապետների համար. Եսայի Նչեցի, Յոհան Որոտնեցի, Գրիգոր Տաթեւացի իրենց յառաջ բերած դպրոցական-գրական արդիւնքներով շատ բան են ուսել և իւրացրել իրենց հակառակորդներից. ստեղծուած է միաբանական թարգմանական և մասամբ ինքնուրոյն մի ամբողջ գրականութիւն. չեմ յիշում Մխիթարեանների ընդարձակ գործունէութիւնը, որ իւր ծագմամբ ուրիշ նպատակների և շարժառիթների հետ էր կապուած։

Այսպէս էլ բողոքական քարոզչութեան հետեւանքով ստեղծուել է դպրոցական հաստատութիւնների մի ամբողջ ցանց, և այդ ոչ միայն հատուածեալների մէջ, հազարաւոր երիտասարդներ կրթուելով Տաճկաստանի այլ և այլ հայաշատ կեդրոններում, ինչպէս և որբերի խնամատարութեան, բժշկական օգնութեան, աղքատութեան մեղմացման և առհասարակ ինքնուրոյն աշխատանքով ապրուստ ձեռք բերելու ձգտումը զօրացնելու մէջ։ Մենք շատ բարձր ենք գնահատում ամերիկեան ժողովրդի օգնութիւնը այս վերջին ահաւոր պատերազմի ժամանակ, որին մասնակից էին և շատ միսիոնարական կազմակերպութիւններ, թէեւ ընդհանուրը այլ հողի վերայ յառաջ եկած, հազարաւոր, տասնեակ հազարաւոր երախա-

ների, կանանց և հարուածեալների նիւթական և բարոյական կեանքն ապահելով, ինչպէս և Լեպսիուսի ձեռքով հաստատուած որբանոցները։ Անհետեւանք չէ մնացել և այս շփումներից յառաջ եկած կրօնական խնդիրների կենդանութիւնն ու հասկացողութիւնը։ Բայց, կրկնում ենք, դրական այս արդիւնքները պայմանաւորուած չեն Հայոց եկեղեցու մէջ անջատողական շարժում յառաջ բերելու ձախ մտքով, որ տարաբախտաբար որոշ դեր է կատարում և այժմ Սիրիայում մեր հայրենազուրկ և գաղթական հայրենակիցների մէջ կաթոլիկ հաստատութիւնների, նաև բողոքականների կողմից։ Մեծ եկեղեցիները աւելի մեծ և կարեւոր խնդիրներ ունին իրենց առաջ դրուած. իրենց ծոցում յառաջ եկած հակակրօնական շարժումների դէմ պաշտպանուել, որ հետզհետէ ընդարձակ ծաւալ է ստանում, կրօնի արդի հասկացողութեան և նորա սկըզբունքների իրացման նոր ուղիներ գտնել կեանքի մէջ, հին և ընտիր գինին նորագոյն տիկերի մէջ բովանդակելով։ Իսկ եկեղեցիների փոխադարձ յարաբերութիւնն ու օգնութիւնը անհրաժեշտութիւն է, բայց այդ պէտք է լինի միայն եղբայրական սիրոյ շարժառիթներով և ոչ այլ նպատակով։

Դ.

Մեր հայեացքը ընդհանուր գծերով պարզելով հանդերձ, անտես անել չենք կարող կատարուած իրողութիւնը. ունինք բաւական թուով կաթոլիկ և բողոքական համայնքներ իրենց անջատ և ուրոյն կազմակերպութիւններով։ Բողոքական համայնքների նկատմամբ ասել կարող ենք, որ նրանց յարաբերութիւններն այժմ աւելի մեղմացած են և անջատական զգացմունքը թուլացած. հայ կաթոլիկներն էլ մեր եղբայրներն են լեզուով, անցեալի ստեղծագործութիւններով և ազգային շատ աւանդութիւններով կապուած ամբողջութեան հետ, մանաւանդ Մխիթարեանների գրական-գիտական գործունէութեամբ. երկուսի վերայ էլ մենք նայում ենք իբրեւ մեր ծոցից հեռացած հարազատների վերայ, ուրախութեան անխառն զգացումով ողջունել կարող ենք մերձաւորութեան, գործակցութեան իւրաքանչիւր մի քայլ։ Եթէ մեզ վիճակուած է իրբեւ քրիստոնեայ ժողովուրդ ապրել և իբրեւ ուրոյն ամբողջութիւն մեր լուման ձգել ընդհանուր մարդկութեան յառաջադիմութեան գանձանակը, ապա այդ պիտի կատարուի Հայաստանեայց եկեղեցու պահպանութեամբ և նորա վերակենդանութեան պայմաններով, իսկ միւս հատուածների օժանդակութեամբ միայն՝ իր-

բեւ փոքրամասնութիւններ. այդ եկեղեցին է, որ պէտք է ոտքի կանգնեցնել իւր բարերար, բարոյական և քաղաքակրթական կենդանացուցիչ դերը շարունակելու համար։ Ահա մեր սրտաբաց պատասխանը Ձեր դիմումներին։

Ի վերջոյ թոյլ տուէք շնորհակալ լինել Ձեր յարգալիր շնորհաւորութիւնների և բարեմաղթութիւնների համար Ս. Հայրապետի ընտրութեան և յաթոռ բարձրանալու առթիւ, որ շատ է տարբեր Ս. Գրքի տառերն անգլիր արած մի Ամիրխանեանցի վերաբերմունքից, որ հանգուցեալ Գէորգ Դ.ին վճռի էր հրաւիրում բողոքական ըմբռնումների ճշմարտութիւնը ապացուցանելու համար։

Ուրախութեամբ ընդունեցաւ Նիւ Ինկլէնտի հայ աւետարանական եկեղեցիների որոշման լուրը՝ «Ս. Հաղորդութեան ատեն գործածել Առաքելական մայր եկեղեցիի սուրբ պատարագի արարողութիւնները»։ Ցանկալի էր աւելի մանրամասնութիւններ իմանալ այդ մասին։

Եղբայրական սիրով և ողջունիւ
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Էջմիածին, 1933.
ՍԻՈՆ. 1934

ԾԳ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄԸ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Ժողովրդային Լսարանի վեցերորդ դասախօսութիւնը տեղի ունեցաւ Մարտ 8-ին Մէմօրիըլ Հոլի մէջ։ Օրուան դասախօսն էր՝ Հոգշ. Տ. Տաճատ Վրդ. Ուրփալեան, որ խօսեցաւ «Հայաստանեայց Եկեղեցւոյ դերը գաղութներու պահպանութեան մէջ» նիւթին շուրջ։ Դասախօսութենէն ետք խօսք առաւ Ն. Ս. Օծութիւն Կիլիկիոյ Շնորհազարդ Հայրապետը, եւ այս առթիւ սրտի խորքէն «Պատգամ» մը ուղղեց իր հօտին իբրեւ լրացում երիտասարդ վարդապետի դասախօսութեան։

Ահա այդ հրաշունչ եւ բարձր պատգամն է, որ կ՚ուզեմ գրին յանձնել, որպէսզի աւելի բազմաթիւ հայեր իմանան զայն։

*
* *

«Սի՛րելիք, օրուան նիւթը շատ կարեւոր է։ Այժմէական նիւթ մըն է. վասնզի ուղղակի կապ ունի մեր առօրեայ կեանքի հետ։

Դուք բոլորդ լաւ պէտք է հասկնաք որ մեր անցեալի գոյութիւնը ուղղակի կախում ունէր Հայ եկեղեցւոյ գոյութենէն։

Երբ անոր հովանիէն հեռացած ենք, ընդմիշտ կորսուած ենք. ինչ որ պատմութիւնը ցոյց կուտայ մեզի։ Ով որ այս իրողութիւնը՝ չի հասկնար, այնպիսին Հայոց պատմութեան լիովին հասկացողութիւնը չունի։

Սխալ պէտք չէ հասկնալ. մենք նպատակ չունինք յուզելու կրօնական վէճեր, եւ կամ գրգռել այս կամ հատուածը, եւ կրկնելու անցեալի տխուր երեւոյթները։ Անոնք հաւասարապէս դատապարտելի են։

Կը յարգենք ու կը սիրենք մեր աւետարանական եւ կաթոլիկ հայ եղբայրները, բայց կը մնանք Հայաստանեայց Եկեղեցւոյ հարազատ զաւակներ։ Կրնանք անոնց հետ բարեսիրական, ազգային նպատակներու շուրջ գործակցութիւն ստեղծել։ Բայց այդ չի նշանակեր, որ մենք պէտք է մեր եկեղեցւոյ ըմբռնումներէն հրաժա-

րինք։ Քրիստոնէական ոգին շատ լայն, վեհ և բարձր ոգի է. ուրեմն կարելի է այդ ոգիով համագործակցութիւն ստեղծել համայնքներու միջև։ Բայց երբ մեր վստահութիւնը չարաչար կը գործածուի, և իրենց եկեղեցիի հաշւոյն միսիոնարութեան դիմեն և հետամուտ ըլլան մերիններէն «եկամուտներ» որսալ, մենք անոնց պէտք եղածը կ՚ազդարարենք։

Մեզի համար անընդունելի երեւոյթ է, որ եկեղեցի մը ուրիշ եկեղեցիի մէջ միսիոնարութիւն կատարէ, անիկա ուղղակի դէմ է քրիստոնէական ոգիին և ըմբռնումին. հետեւաբար, կը բողոքենք եկեղեցիի մը ա՛յլ եկեղեցւոյ մէջ միսիոնարութիւն կատարելու գաղափարին դէմ։ Դժբախտաբար այդ բանը կատարուած է անցեալի մէջ, պէտք է դադրի՛ հայ ժողովուրդի և Հայ եկեղեցիի մէջ օտար եկեղեցիներու միսիոնարական գործը։ Մեր հոգիի ամբողջ ուժգնութեամբ կը բողոքենք հայ ժողովուրդի և Հայոց եկեղեցւոյ զաւակներուն մէջ կատարուող օտար միսիոնարական գործունէութիւններու դէմ (ծափեր)։ Պէտք է վերջ գտնէ այդ երեւոյթը, միտքեր պղտորելը, եղբայրական վէճ և ատելութիւններ ստեղծելը...։

Օգնութիւնը պէտք է կատարուի եղբայրական սիրոյ համաձայն և ո՛չ «դարձի բերելու» բողոքական կամ կաթոլիկ միտքով։ Հին եկեղեցւոյ մէջ փոխադարձ օգնութիւնը այս հիմերու վրայ կատարուած է, որմէ բազմաթիւ փաստեր ունինք։

Եթէ լսեմ, որ իմ վարդապետներէս մէկը կամ միւսը գացեր է ուրիշ եկեղեցւոյ կամ համայնքի մէջ, կամ նիւթական օգնութիւնը ծառայեցուցած է և աշխատած է որսալու կամ մարդ դարձի բերելու նպատակով, ես խիստ կերպով կը յանդիմանեմ այնպիսին, պարսաւելով այսպիսի հակաքրիստոնէական ձեռնարկ։ Թո՛ւ լեցի, քաջալերել քոյր եկեղեցիներու և համայնքներու մէջ կատարել այդպիսի գործ. այդ կը նշանակէ ամենամեծ անհասկացողութիւն քրիստոնէական ոգիի հանդէպ։

Դժբախտաբար, այդպիսի դէպքեր շատ պատահած են անցեալի մէջ։ Ի հարկէ պակաս չեն նաեւ եղբայրական օգնութիւններ և իսկական բարերարութիւններ, որոնք մեծապէս կը գնահատենք։ Նախանցեալ պատերազմի ժամանակ, Ամերիկացիներու հասցուցած օգնութիւնը հազարաւոր կեանքեր փրկեց, ինչպէս նաեւ ուրիշներ բարեգործութիւններ կատարեցին, որոնց հանդէպ երախտապարտ ենք։

Կ՚ուզենք մեր միտքը աւելի պարզել, որ սխալ չհասկնաք,

և սխալ չհասկցուինք։ Անցեալէն մեզի հասած իրողութիւն է, որ ունինք կաթոլիկ և բողոքական եկեղեցիներուն պատկանող հայ համայնքներ. անցեալ վէճերուն հարկ չունինք դառնալու. և եթէ անոր դառնալու ըլլանք, մի միայն անոր կապուած պատմական լուսաբանութեան համար կ՚անդրադառնանք։

Անոնք մեր եղբայրներն են լեզուով, արեամբ, անցեալ պատմութեամբ և ապագայ տեսիլքներու իրականացման մեծագոյն յոյսերով։ Մենք կը յարգենք խղճի և գաղափարի ազատութիւնը. փոխադարձ յարգանքն է շիտակ ճամբան։ Կ՚ուզենք յարգել, բայց նաեւ յարգուիլ։

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին ո՛չ միայն քրիստոնէական է, իր բերած հոգեւոր փրկութեան գաղափարներով, իր լուսաւորչական գործունէութեամբ, իր թիւին համեմատութեամբ առաւելագոյն նահատակութիւններով, այլ և մեր ազգային եկեղեցին է, պահապան հրեշտակը մեր ազգային գոյութեան, ապաբախտ անցեալի հոլովման մէջ։

Եթէ այստեղ Այնթապցիներ և Կեսարացիներ կը գտնուին, անոնք կրնան հասկնալ, որ ի՛նչպիսի՛ մեծ դեր կատարած է Հայաստանեայց եկեղեցին իրենց կեանքին մէջ։ Այդ քաղաքներու մեր հայրենակիցները ո՛չ մէկ ձեւով կրցած են պահել հայ լեզուն, բայց կրնամ ըսել, որ անոնք մեզի չափ և ոչ պակաս հա՛յ մնացած են, որովհետեւ հաւատարիմ մնացած են ազգային եկեղեցիին։

Գացէ՛ք Մայր Աթոռ՝ Ս. Էջմիածին, գացէ՛ք մանաւանդ Երուսաղէմ և դուք պիտի տեսնէք որ ամենաթանկագին զգեստներ ու անօթներ մեր Կեսարացի հայրենակիցները նուիրած են այս Աթոռներուն։ Ասով ըսել կ՚ուզենք, որ եկեղեցին՝ Հայց. եկեղեցին նախախնամական մեծ դեր մը կատարած է Հայ ազգի պահպանման գործին մէջ։ Տեսէ՛ք, ուրեմն, սի՛րելիներ, կորսնցուցեր ենք մեր լեզուն մեր ընտիր գաղութներուն մէջ, կորսնցուցեր ենք մեր պետականութիւնը և նոյնիսկ մեր հայրենիքէն հեռու գտնուելով, հայ ենք մնացեր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ փրկարար դերին շնորհիւ (երկար ծափահարութիւններ)։

Պէտք է լաւ հասկնաք, մեր Հայաստանեայց Եկեղեցին է որ մեր լեզուն ու գրականութիւնը պարգեւած է մեզի։ Ան է տուած հայուն՝ հայերէն Ս. Գիրքը. Անոր կը պարտինք մեր դարաւոր ու փառաւոր մշակոյթը։

Ո՛չ Բողոքականութիւնը և ո՛չ ալ Հռոմէականութիւնը դաստիարակած են մեր ժողովուրդը տասնեօթը դարեր. այդ բանը ըրած

է Հայաստանեայց Եկեղեցին և մեր պատմութեան բոլոր մեծ մարդիկը մենք կը պարտինք Հայաստանեայց Եկեղեցւոյ շունչին, որ զանոնք հասցուցեր է։ Մենք պէտք է հպարտ ըլլանք Անոր զաւակները ըլլալնուս համար (բուռն ծափեր)։ Հայ բողոքականներն ու կաթոլիկները մեր ազգակիցներն են, մեր եղբայրներն են, բայց Հայաստանեայց Եկեղեցիի զաւակներու սիրտերը պէտք է բաբախեն մօր մայր, պատմական եւ դարաւոր Եկեղեցիի համար, որ Հայուն ամենամեծ ստեղծագործութիւնն է. ծագումով, զարգացումով եւ յարատեւութեամբ կապուած Հայ ժողովրդի կեանքին հետ։ Մենք հպարտ պէտք է զգանք ինքզինքնիս, որ այդ եկեղեցիին զաւակներն ենք (բուռն ծափեր)։

Հայց. Եկեղեցին մատակարարած է հոգեւոր փրկութիւնը լաւագոյն կերպով։ Ասով ըսել չենք ուզեր որ «Արտաքոյ Հայ Եկեղեցւոյ չիք փրկութիւն», ինչպէս որ կաթոլիկները կը հաւատեն Հռոմէական եկեղեցիին համար։ Այլ թէ Հայ Եկեղեցին ազգային տեսակէտով իր ունեցած բոլոր առաւելութիւններուն հետ, իր զաւակներուն կրնայ ցոյց տալ հոգեւոր փրկութեան ճամբան, Աւետարանի սկզբունքներուն համաձայն և մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի վարդապետութեան հետեւանքով։

Այսօրուան դասախօսութենէն պարզուեցաւ թէ՝ Հայց. Եկեղեցիէն հեռանալով, մեր գաղութներէն մի քանիները ընդ միշտ կորսուած են թէ՛ Հայաստանեայց Եկեղեցիի և թէ մեր ազգին համար։ Այդ տխուր երեւոյթին ամենահետաքրքրական օրինակներէն է Հին Նախիջեւանի հայութեան մէկ հատուածին պատմութիւնը, որը յատկապէս Դոմինիկեաններու քարոզութեան և Հռոմէական միսիոնարներու ջանքերով բաժնուեցաւ Հայաստանեայց Եկեղեցիէն և առանձին եպիսկոպոսութիւն կազմեց։ Արդիւնքն այն եղաւ, որ երբ նեղութեան օրերը եկան, պարսկական հարստահարութեանց ու հալածանքի և բռնութեանց հետեւանքով, անոնք թուլցան և անկարող եղան իրենց հայութիւնն ու հաւատքը պահելու. և աւա՜ղ, բոլորովին կորսուեցան մեզ համար։

Հին Նախիջեւանի շրջաններուն մէջ գիւղեր կան, որոնք ցայժմ դեռ իրենց հայկական դիմագիծը պահած են, հայ արտայայտութիւն ունին. մեզի հետ իրենք եւս գիտեն, որ իրենց նախնիքը հայ եղած են, սակայն կը մնան թրքացած իսլամներ։ Ահա Ունիթորական շարժումին հետեւանքներէն մէկը, Լատին միսիոնարներու և հայ լատինամոլներու աշխատութեամբ, նոյն իսկ բուն հայրենիքի մէջ, անոնք կորսուեցան մեզ համար։

Նոյն տխուր երեւոյթին կը հանդիպինք Լեհաստանի հայ գաղութին մէջ: Լաւ կազմակերպուած, բարգաւաճ և զօրաւոր գաղութ մը, ոչ միայն կրօնական, այլ և դատաստանական ազատութիւն ձեռք բերած էր, իրենց դատերը իրենք էին որ կը վարէին, բայց ափսոս որ չիք-Նիկոլ եպիսկոպոսի մը պատճառաւ, որ փառասիրութեամբ դաւաճանեց Հայ եկեղեցին, և մանաւանդ Յիսուսեան կարգի կրօնաւորներու ձեռքով յաջողեցաւ վերջ ի վերջոյ այս պատուական գաղութը բաժնել Հայ եկեղեցիէն: Անոնք եւս կորան թէ՛ Հայաստանեայց Եկեղեցիի և թէ ազգին համար: Մինչդեռ նոյն պայմաններուն մէջ աւելի փոքրաթիւ գաղութներ, ինչպէս Սուչովայի հայ գաղութը, պահելով մայրենի եկեղեցին, թէեւ հայ լեզուն և հայկական շատ մը մասնայատկութիւններ կորսնցուցին, սակայն մինչեւ այսօր ալ հայ են և Հայաստանեայց Եկեղեցիի զաւակ:

Երրորդ անգամ կը կրկնենք և կը խնդրենք, որ սխալ չհասկընաք, մենք չենք ուզեր վիրաւորել հայ բողոքականներն ու կաթոլիկները. ո՛չ մէկ խնդիր ունինք իրենց հետ, այլ՝ պատմական իրողութիւնները նկատի ունինք, և մեր հայրերու հաւատքով մեզ թողած թանկագին ժառանգութեան գիտակցութիւնը կ'ուզենք շեշտել: Ուստի մեր զաւակները կը յորդորենք, սիրե՛լ իրենց Մայր Եկեղեցին: Յարգեցէք դիմացինի համոզումը և եկեղեցին, բայց պէտք չէ շեղիք մեր Հայ եկեղեցիէն և հայ դաւանութենէն: Լաւ պէտք է հասկնանք, որ Հայ եկեղեցին է եղած մեր գոյութեան պահապանը. Նա մխիթարած է մեզ, հոգւով ծնած ու դաստիարակած է մեզ, տառապած և նահատակուած է մեր ժողովրդի հետ, և քամած՝ վշտի ու տառապանքի բաժակը՝ մինչեւ մրուրը:

Օրհնեալ լինիք ամենքդ. ամէն»:

Կիլիկիոյ Վեհ. Հայրապետին իր հօտին ուղղած այս իմաստալից պատգամը, պատգամն է քրիստոնէական վեհագոյն զգացումներու և հայրենասիրական ապրումներու: Հայրապետը իր հոտի պահպանութեան և հովուապետական գերագոյն դերին մէջն է: Մեծ յոյս ունիմ, որ ի սփիւռս աշխարհի ցրուած Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր զաւակները իրենց մտքին ու սրտին մէջ լաւագոյն տեղը կուտան այս Նուիրական պատգամին: (*)

ԲԱԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՀԱՍԿ. 1946, Մ[illegible]ս.

(*) Հասկանալի է, որ Տ. Բաբգէն վարդապետի սղագրած այս խօսքը, բառացի չէ. բայց պահուած է մտքերի շարայարութիւնն ու բովանդակութիւնը ընդհանուր առմամբ: Հարկաւոր համարեցինք դնել մեր քարոզների եւ բանախօսութիւնների շարքում, որպէսզի ընթերցողներին առաւել եւս պարզ լինի մեր մտայնութիւնը յարուցուած խնդրի մասին: Գ. Կ.

ԾԴ.

ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ԿԻԼԻԿԻՈՅ ԱԹՈՌՆԵՐԸ

Ա.

ՀԱՍԿ-ի նախընթաց համարի մէջ տպուեցաւ Ն. Սրբութիւն Տ. Տ. Գէորգ Ամենայն Հայոց Շնորհազարդ Կաթողիկոսի անդրանիկ կոնդակը (*)։ Վեհապետների գահակալական ճառերը, առաջին հրովարտակները, կոնդակներն ու գրութիւնները սովորաբար հանրային բնոյթ են կրում, մի տեսակ յայտարարներ իրենց լաւագոյն իղձերի և ծրագիրների, բնորոշող նրանց ուղղութեանը գործելակերպի։ Մի ամբողջ տարի անցաւ Ն. Սրբութեան ընտրութեան և օծման օրերից, մինչև անդրանիկ Կոնդակի ստացումը, այդ յապաղումը, որքան տեխնիքական պատճառներ ունեցած լինի, կամենում ենք և մի բնորոշող գիծ համարել Ն. Սրբութեան գործելակերպի։ Մի քիչ ուշ, բայց մտածուած, հիմնաւոր. ոչ արագ, բայց կատարեալ։ Ուշացաւ Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը, բայց նախապատրաստուեցաւ և կատարուեցաւ աւելի լաւ, քան մեր ակնկալութիւններն էին։

Այդպէս էլ ուշացաւ Կոնդակը, բայց եկաւ մեզ գեղարուեստական հանդերձանքով, և հմտալից, բազմաբովանդակ ձեւակերպութեամբ. ճակատը զարդարուած հայ մանրանկարչական արուեստի ոճով, խորանով և լուսանցքի զարդերով, ինչպէս մեր նախկին Հայրապետների սովորութիւնն էր. տպագրութիւնն էլ կապոյտ, երկնագոյն մելանով, մաքուր և ճաշակով, իսկ բովանդակութիւնը չափուած և ձեւուած, գիտակցական և կարգաւորեալ ծրագրով։

Բ.

Մեզ անհուն ուրախութիւն է պատճառում Կոնդակի ընդհանուր մտայնութիւնը, որ սիրոյ և միութեան գաղափարն է, և որ արտափայլում է ամեն պարբերութեան մէջ, բայց յատկապէս, սրտագին յարաբերութիւնը բոլոր Աթոռների հետ և ջանք այդ յարաբերութիւնը դարձնել աւելի սերտ, իրար լրացնող և դէպի նոյն նպատակն ուղղուած, որ Հայաստանեայց Եկեղեցու միանականութիւնն է, համերաշխութիւնը և բարեբար ազդեցութիւնը հօտի ամբողջութեան վրայ։

(*) ՀԱՍԿ, թիւ 6, 1946,

Ս. Հայրապետը անցած ժողովը համարում է իրաւամբ բացառիկ երեւոյթ մեր պատմութեան մէջ, իւր լրիւ կազմով և ներկայացուցչութեամբ բոլոր Աթոռների և եպիսկոպոսութիւնների հոգեւոր և աշխարհիկ պատգամաւորներով, չէշտելով, մանաւանդ, մեծ Աթոռների գահակալների անձամբ մասնակցութիւնը։

«Յայտնեմք զուրախութիւն ՄԵՐ և զգոհունակութիւն հոգեւոր եղբօր Մերում Տ. ԳԱՐԵԳԻՆԻ Շնորհազարդ Կաթողիկոսի ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, որ ընդ եկեղեցական և աշխարհական պատգամաւորօք իւրովք նպաստաւոր եղեւ յոյժ միաբանականութեան ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ և բարձր տրամադրութեան ժողովականաց և առ հասարակ յաջող վերջաւորութեան ժողովոյս ըստ ամենայն մասանց։ Զնոյն յայտնեմք և Ամենապատիւ Պատրիարքին ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. ԿԻՒՐԵՂԻ և Տեղապահի Պատրիարքութեան Կ. ՊՈԼՍՈՅ Տ. ԳԷՈՐԳԱՅ Արքեպիսկոպոսի Արսլանեան»։

Այս խօսքերը ընդունելով որպէս առհաւատչեայ եղբայրական սրտագին յարաբերութեան, պատասխանում ենք, թէ պարտականութիւն ենք համարում Մեր բոլոր ուժերը, գրիչը, խօսքը, փորձառութիւնն ու պաշտօնի հեղինակութիւնը ի սպաս դնել բոլորանուէր, ընդհանուր Հայաստանեայց Եկեղեցու փառքի, պայծառութեան, և բարոյական ազդեցութեան զօրացման համար։

Ընդունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի գերագահ դիրքը, կը կամենայինք, որ ըստ ամենայնի պահպանուէր նրանց պատշաճ յարաբերութիւնը ըստ պաշտօնի և կոչման, ինչպէս այդ գծուեցաւ Սահմանադրութեան մէջ։ Միաբանականութիւն չպէտք է շփոթել միապետութեան հետ և ոչ ընդհակառակը։ Միաբանականութիւնը կամենում ենք իրականացած տեսնել գիտակցական փոխադարձ ձգտումների միութեան մէջ, իրար զօրավիգ և նեցուկ լինելու և Աթոռների սերտ գործակցութեան մէջ, իւրաքանչիւրը իւր պարտաքի և իրաւունքի շրջանում։ Մենք իբրեւ Կիլիկիոյ Հայրապետական Աթոռի գահակալ պատրաստ ենք Մեր կարելին բերել, յաւերժացնելու աւելի սերտ, աւելի գիտակցական և մի և նոյն ժամանակ աւելի շրջահայեաց յարաբերութիւն Մ. Աթոռի հետ, առաջնորդուելով միշտ առաքեալի խօսքով, թէ «գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ»։ Կեանք բերող հոգին է եկեղեցու համար ամենից կարեւորը, որ պիտի զօրացնենք և յաւերժացնենք փոխադարձ համերաշխութեամբ և գործակցութեամբ։

Երուսաղէմի Պատրիարքութիւնը ժողովրդական բազմութեան տեսակէտով համեմատաբար սահմանափակ էր մինչեւ նա-

խընթաց պատերազմ, մինչեւ մեր գլխին եկած մեծ աղէտը, բայց իբրեւ հինաւուրց և պատմական Աթոռ Ս. Երկրի մէջ, ներկայացնում է նա Հայաստանեայց Եկեղեցին՝ միջազգային տարողութեամբ: Պատրիարքութիւնը իր միաբանութեամբ ո՛չ միայն մեր սեպհականութիւնների և իրաւունքների պաշտպանն է եղել, այլ և իւր բաժինն է բերել և պիտի բերէ մեր հայագիտական և եկեղեցական գրականութեան մէջ: Մեր երկու Աթոռների մերձաւորութիւնը տարածութեամբ, հնարաւորութիւն է տալիս, նաեւ բարոյական մերձաւորութեան ի շահ և ի բարգաւաճումն Հայաստանեայց ընդհանուր եկեղեցւոյ և Ս. Աթոռի հեղինակութեան: Պէտք է ի նկատի ունենալ, թէ ձեռքերը որքան էլ երկար լինին, ամեն տեղ հասնել չեն կարող:

Զմտաւնանք սրտի ճմլումով յիշել և Կ. Պոլսի պատրիարքութիւնը՝ իւր հաստ և գործունէութեան սեղմուած վիճակով:

Գ.

Վերջին տասնեակ տարիներում Աթոռների աւելի սերտ և համերաշխ գործակցութեան գաղափարը Էջմիածնում զբաղեցրել է մտքերը, և Կիլիկիոյ Աթոռի կողմից առանց պատասխանի չէ մնացել: Դորա հետեւանքն էր, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան կանոնագրութեան մէջ մտաւ և Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մասնակցութիւնը: Ուրախ ենք, որ այդ մեծ բաղձը Մեզ վիճակուեցաւ իրագործուած տեսնել, անձամբ մասնակցելով և նախագահելով ընտրական ժողովին:

Միասնականութեան և միութեան այդպիսի հասկացողութեամբ էր, որ առաջարկեցինք Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուան հետ յիշել և միւս աթոռակալների անունները, որ ժողովի կողմից միաձայնութեամբ ընդունուեցաւ: Սպասում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտօնական յայտարարութեան, չփոթութիւնների և բազմաձեւութեան այս երեւոյթը մէջտեղից վերացնելու:

Այս մտքով էր, որ Աթոռի Սսից Էջմիածին փոխադրելու հինգ հարիւրամեակը տօնախմբելու առաջարկին ընդառաջ գնացինք, աւելացնելով որ չէշտուի նաեւ Կիլիկիոյ և միւս Աթոռների կատարած դերը ազգապահպանութեան մէջ, որպէս զի այդ տօնախմբութիւնը որպէս հակադրութիւն չհասկացուի:

Այս մտքով էր, որ Մեր աղքատութեան մէջ, իբրեւ տեղահան եղած և իւր հարստութիւնից զրկուած հաստատութեան ներ-

կայացուցիչ, Մեր լուման ձգեցինք Մ. Աթոռի պահպանութեան գանձանակի մէջ, իբրեւ նուէրը Մեր Թեմերի, վերան աւելացնելով եկեղեցական պատգամաւորների ճանապարհածախսից մնացած գումարը, որի մասին առիթ կ'ունենանք ընդհանրութեան տեղեկացնելու։

Վերջին և նորագոյն ապացոյցը երկու Աթոռների համերաշխ գործակցութեան գալիս է Էջմիածնից՝ Տ. Տ. Գէորգ Կաթողիկոսի կողմից, առաջարկելով Մեզ՝ ձեռներէց լինել Հինգ հարիւրամեակի տարեդարձին նուիրուելիք Գիտական Ժողովածուի կազմութեան։ Չնայելով Մեր պարտաւորութիւններով ծանրաբեռնուած վիճակին, յանձն ենք առել սիրով, որպէսզի կրկին և կրկին շեշտենք երկու Աթոռների եղբայրական գործակցութիւնը։

Աստուած օրհնէ համերաշխութեան և փոխադարձ հասկացողութեան այս հոգին, որպէսզի մեր մեծ կործանումից յետոյ վերածնութեան և վերակազմութեան մղիչ ոյժ դառնայ այն՝ Եկեղեցու և Հայրենիքի համար։

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԱՍԿ, 1946, Յուլիս-Օգոստոս.

ԾԵ.

ՆԱՀԱՏԱԿԱՑ ՄԵԾԱՇՈՒՔ ՀԱՆԴԷՍԸ

ՍԻՆԷՄԱ ՌՕՔՍԻԻ ՄԷՋ

Նահատակաց փառաշուք հանդէսները կատարուեցան այս տարի թէ՛ Սինէմա Ռօքսիի և թէ Անթիլիասի մէջ, ժողովրդեան խուռն բազմութեան ներկայութեան, որոնցմէ շատեր դուրս մնացին, տեղւոյն անբաւարարութեան պատճառով։

Հայ համալսարանական ուսանողութիւնը և «Անի» գրական ամսաթերթը կազմակերպեցին Ապրիլ 24–ին Սինէմա Ռօքսիի հանդէսը, նախագահութեամբ Ն. Վեհափառութիւն Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսին։

Տիար Ս. Փիրէնեանի բացման խօսքէն ետքը, եղան ապրումով և յուզումով օծուն արտասանութիւններ, օրիորդներ Պօյաճեանի և Խաչատուրեանի կողմէ։ Օրուան բանախօսն էր Տիար Ս. Ապտալեան, որ գեղեցկօրէն բացատրեց Նահատակաց Տօնին այժմեան բերկրառիթ իմաստը։ Ապա Վեհ. Հայրապետը խօսեցաւ իր հոգեշունչ և թովիչ ճառերէն մէկը, որուն համառօտ ամփոփումը կուտանք ստորեւ։ Հանդէսը վերջացաւ ընթերցումով երկու հեռագիրներու, ուղղուած Խ. Միութեան և Միացեալ Ազգերու Ապահովութեան Խորհուրդի Քարտուղարութեան, որոնցմով կը պահանջուէր կցումը հայկական նահանգներու՝ Խորհ. Հայաստանի Հանրապետութեան։

Սիրելի՛ ժողովուրդ,

Մարդկային հոգու, ներքին աշխարհի ամենալաւ և անմիջական գործիքը լեզուն է, խօսքը։ Բայց կան ներքին այնպիսի ապրումներ և յուզումներ, տագնապներ և փոթորիկներ, վշտեր և տառապանքներ, որոնց արտայայտութեան համար խօսքն անզօր է։ Այդ ասել կարող ենք այն ահաւոր իրողութեան և ողբերգութեան համար, որ վիճակուեցաւ մեզ՝ նախընթաց պատերազմի ժամանակ, որի յիշատակը կատարում ենք այսօր։ Անզօր ենք զգում արտայայտելու և պատկերացնելու այն սոսկալի աղէտը, որ մեզ բաժին ընկաւ և չէ վիճակուել ո՛չ մի ազգի։

Կամենում ենք օրինակով պարզել մեր միտքը. 1914—15 թուականի աղէտաբեր օրերին Վասպուրականի, Ալաշկերտի և Վա-

նայ լճի հիւսիսային գաւառների հայ ժողովուրդն ստիպուած էր տեղահան լինել և գաղթել դէպի Էջմիածին և Արարատեան երկիրը. ականատես էինք այն աղէկտուր տեսարանին, որ կատարւում էին մեր շուրջը. իբրեւ Եղբայրական Օգնութեան Վարչութեան անդամ, ի պաշտօնէ շփման մէջ էինք բոլոր շրջանների գաղթականութեան հետ, հարկաւոր նիւթական և բժշկական օգնութիւնները կարգադրելու: Երասխի ափերից մինչեւ Էջմիածին, պողոտայի երկու կողմերը, վանքի ընդարձակ անտառի և ճեմարանի բակի և պարտէզի մէջ, պարիսպների տակ, փռուած էին մօտաւորապէս 150 հազար փախստականներ բաց երկնքի տակ, նախկին բնակավայրերի և հասարակութիւնների համեմատ խմբակցութիւններով:

Ճանապարհի յոգնածութիւնը, չարերը ոտքով և ձիւնապատ լեռներով անցած, սննդեան պակասութիւնը, համաճարակները, որպէս հետեւանք ստեղծուած պայմանների, իրենց աւերն էին կատարում ժողովրդի մէջ. խոլերան, դեզինտերին, ժանտատենդը իւրաքանչիւր օր խլում էին մեզանից մի քանի հարիւր հոգի, և մենք սայլերով հաւաքել էինք տալիս դիակները և լցնում փոսերի մէջ, որոնք փորւում էին յատուկ այդ նպատակի համար:

Տեսնելով այս սրտաճմլիկ երեւոյթները, միտք յղացանք նկարիչներ հրաւիրել, որպէս զի տեսնեն իրենց աչքերով այդ ամենը և գեղարուեստօրէն պատկերացնեն այն դժոխքը, որ վիճակուել էր մեր ժողովրդին՝ իբրեւ նշանակը մարդկային պատմութեան: Եկել էր, ի միջի այլոց և Մարտիրոս Սարեանը. հայ նկարչական արուեստի տաղանդաւոր ներկայացուցիչներից մէկը, բայց ահաւոր տեսարանների տպաւորութեան տակ հիւանդացաւ և չկարողացաւ դիմանալ և շարունակել գործը:

Եւ ի՞նչպէս կարելի էր դիմանալ այդ ծովածաւալ, սիրտ կեղեքող, մանաւանդ ճիրաններում գալարուող եղբայրների տեսարանների առաջ. տեսնել հազարաւոր երեխաներին, պատանիներին, կանանց և տղամարդկանց, պառաւներին և ծերերին, ոմանք արդէն մեռած, ոմանք տանջանքների մէջ կիսամեռ, կմախք դարձած, փռուած գետնի վրայ, լաց ու կոծի կամ օգնութեան կանչող աղաղակներով:

Տեղահան եղածների մէջ դեռ դրանք բաղդաւորներն էին: Կազմակերպուած էր եղբայրական օգնութիւն, հրաւիրուած էին և կամաւորապէս եկած բժիշկներ, սնունդ էր մատակարարւում հնարաւորութեան սահմանների մէջ, գոնէ, հաց ու ջուր հասցնելով ճանապարհի երկու կողմերին թափածների համար: Թէպէտ խուճապահար, ճանապարհին ենթարկուած նեղութիւնների՝ ձիւնապատ

լեռներից անցնելու ժամանակ, բայց ո՛չ թուրք, չերքէզ և քուրդ վայրենի և անգութ ժանտարմների մտրակների տակ, ո՛չ ենթակայ խուժանի յարձակման, յափշտակութեան, սպանութիւնների, աղջիկների և երիտասարդ կանանց առևանգման, երիտասարդների և այրերի խմբական գնդակահարութեան, ինչպէս կատարւում էր այդ տաճիկ կառավարութեան ենթակայ երկիրների մէջ։

Հարիւր հազարաւորներ տեղահան եղան կառավարութեան հրամանով, զրկուած տնից, տեղից, ստացուածքներից, շաբաթներով ճանապարհին իրենց մանր երեխաներով, շատերն առանց կօշիկների, հետիոտն, քաղցած, արևի կիզիչ ճառագայթների տակ, ենթակայ ամենայն տեսակ խժդժութեանց, որոնց նկարագրութիւնն իսկ փշաքաղում են մարդու մազերը... Քշւում էին Արաբիայի անապատները, զոհեր տալով բարբարոսների գնդակներին, հիւանդութիւնների, սովի..., որոնց դիակները կեր եղան վայրենի թռչուններին և գազաններին կամ փոշիացան անապատի աւազների մէջ։ Իսկ կենդանի մնացածները հիւծուած, ամենաթշուառ վիճակի և աղքատութեան մէջ, որ յետոյ հողմացրիւ եղան աշխարհի չորս կողմերը։

Ի՞նչ լեզու կարող է ամենադոյզն չափով պատկերաւորել պատմութեան այդ մեծ, անսահման մեծ ողբերգութիւնը, եղեռնը, որ կատարուեցաւ մեր գլխին։ Ի՞նչ լեզուով խօսենք, որ մեր ցաւը, մեր անյատակ վիշտը, բողոքը անարդարութեան դէմ, լսելի լինի այն ականջներին, որոնցից է կախուած արդարութեան կշիռը վերականգնել։ Մենք կրօնաւոր ենք, և քաղաքականութեամբ չէ, որ այստեղ զբաղւում ենք. այլ յանուն արդարութեան, յանուն տարապարտուց նահատակուած միլիոնաւոր մեր զոհերի, նրանց փոշիացած ոսկորների, մեր ձայնն ենք բարձրացնում, որ լսելի լինի, որտեղ պէտք է։

Մարդկային խիղճը չպէտք է տանէ, որ մի ամբողջ ազգ կարգաւորեալ կերպով դէպի մահ քշուի, և մնացորդները աշխարհի չորս կողմը հողմացրիւ լինին։

Մեր ձգտումն է խաղաղասէր և բարի դրացիներ լինել մեր շրջապատի համար. աշխատասէր, շինարար, և մեզ շնորհուած աստուածատուր տաղանդը գործադրել ստեղծագործ, հոգևոր և մշակութային կեանքի զարգացման համար։ Ոչ ոքի կ՚ուզենք վնասել և՛ ոչ ոք կը վնասուի, եթէ արդարութեան զգացումով մօտենալով խնդրին, մեր պատմական հայրենիքի հողերը վերադարձուին իրենց տէրերին, որ այժմ անմարդաբնակ կամ սակաւաբնակ մի երկիր է դարձած։

ՀԱՍԿ. 1946, Ապրիլ

ԾԶ.

ԱՊՐԻԼԻ ՔՍԱՆՉՈՐՍԸ

ԽՕՍՈՒԱԾ ՍԻՆԷՄԱ ՏԻՒՆԻԱՅԻ ՄԷՋ ԿԱԶՄՈՒԱԾ ՍԳԱՀԱՆԴԷՍԻ ԺԱՄԱՆԱԿ

Ա.

Պատմութիւնը շատ արհաւիրքներ, բարբարոսութիւններ եւ արիւնհեղութիւններ է տեսել, բայց այն, որ կատարուեցաւ տաճիկ պետութեան կողմից հայ ժողովրդի գլխին, Նախընթաց պատերազմի ժամանակ, վեր էր, քան մարդկային երեւակայութիւնը: Բարբարոսութեան եւ անգթութեան սոսկալի միջոցներով, պետական ոստիկանական եւ զինուորական ուժերով, ծրագրեալ կարգաւորութեամբ տեղահան եղաւ ամբողջ ժողովուրդը, հարիւր հազարներ մատնելով սրի, սովի եւ հիւանդութիւնների եւ բարբարոս հորդաների խոշտանգման, եւ յափշտակութեան: Մտաւորական դասը, հոգեւորականներ, գրողներ, արուեստագէտներ, հասարակական գործիչներ Պոլսից հանելով եւ զանազան ուղղութեամբ խմբերի բաժանելով, մահացնում են կեդրոնից տրուած կարգադրութեան համաձայն: Ժողովրդի մահից ճողոպրած եւ կենդանի մնացած մասերն էլ՝ հողմացրիւ եղան աշխարհի չորս կողմը, հայրենազուրկ, աղքատ եւ ծիւրուած վիճակում:

Բ.

Բայց մեր կորուստը միայն այն չէ, ինչ որ յիշուեցաւ: Ոչընչացան հայ ժողովուրդի անգնահատելի գանձերը, մեր խօսքը նիւթական գանձերի եւ հարստութեան մասին չէ, թէպէտ այդ մարզում էլ մեր կորուստը անսահման էր, այլ հոգեւոր ա՛յն գանձերի մասին, որ ո՛չ ցեցը եւ ո՛չ ուտիճը պիտի ոչնչացնէր, բայց ոչնչացրեց մոլեգնեալ Էնվէրների եւ Թալէաթների Թուրքական կառավարութիւնը՝ Վանդալների եւ Ատիլաների բարբարոսութիւնից առաւել աստիճաններով: Ոչնչացել են Անկիւրիոյ, Կեսարիոյ եւ Արմաշի ձեռագրական հազարաւոր հատորներից մեծ ժողովածուները կամ անհատների սեպհականութիւն եղած հարիւրաւոր ձեռագիրներից բաղկացած ժողովածուները: Մեր գիտեցածով Անկիւրիոյ ձեռագրերի թիւն էր 310, բայց շատ կարեւոր գեղարուեստական արժէքներով եւ բովանդակութեամբ, Արմաշի ձեռագրերի թիւն էր

223, որոնց ցուցակներն ունինք ձեռքի տակ, և այսպէս մեր շատ վանքերի. Տրդատ Եպիսկոպոս Պալեանի անձնական ժողովածուն աւելի քան 120 ձեռագիր, Վասպուրականի հազարաւոր ձեռագիրներից կարելի եղաւ փրկել միայն մօտաւորապէս 1350 հատը: Կարելի է մեր ունկնդիրներից ոմանք կը մտածեն, թէ ի՞նչ կապ ունին ձեռագիրները այսօրուայ յիշատակի հետ: Այդպէս չէ, սի՛րելիք, ամենամեծ կապը կայ նրանց մէջ: Այդ ձեռագիրների մէջ էր մարմնաւորուած հայ արուեստը, հայ մշակոյթը, հայ միտքը, դարերի ընթացքում հայի ստեղծագործութիւնները, հայ հոգին, որոնց նոյնպէս նահատակութեան և ոչնչացման մեծ բաժին հասաւ:

Ապա մեր ճարտարապետական կոթողնե՞րը, իրենց վիմական տարեգրութիւններով կամ արձանագրութիւններով, Աղթամարը, Անիի մայր եկեղեցին, Ապուղամրենց գողտրիկ Ս. Գրիգորը, Պահլաւունեաց Առաքելոց Նրբակերտ գաւիթը և այսպիսի տասնեակներով յուշարձաններ: Ամեն ազգ և ժողովուրդ ընդունա՞կ է անշունչ քարին կեանք տալ և լեզու, որ խօսէ հետդ, պատմէ անցեալը, յուզէ և բարձրացնէ հոգիդ դէպի վսեմն ու երկնայինը: Ծա՛նր, անդարմանելի հարուածներ ստացաւ հայ ժողովուրդի շինարարական հանճարն ու հոգին:

Նոյնը կարող ենք ասել և ազգագրական հայրենիքի և գաւառների կործանման մասին: Ինչպէս բոյսը, ծառը իր հողը ունի, որի մէջ խրուած արմատներով սնունդ և կեանք է ստանում, այնպէս էլ ամենայն ժողովուրդ իր հողն ու հայրենիքը, ուր նրա ազգագրական գանձերը՝ բանահիւսութիւնը, դիւցազներգութիւնը, աւանդավէպերը, բանաստեղծութիւնը, երգն ու երաժշտութիւնը և արուեստները զարգանալ և ուռճանալ կարող են: Արմատախիլ եղած ժողովուրդը կորցնում է և այդ գանձերը, որ հիմք են և աղբիւր ազգային արուեստի և ուրոյն ստեղծագործութեան զարգացման: Մուշի, Մոկաց, Վանի շրջանները, յատկապէս, հարուստ էին այդ կողմից. այդ գաւառների հետ էին կապուած մեր Սասունցի Դաւիթը, բազմատեսակ և հարուստ բանահիւսութիւնը. մեր կորուստը և դորա հետ զգացուած ցաւը աւելի մեծ է, մանաւանդ, որ լիովին նրանք չէին հաւաքուած և մատչելի դարձած բանասիրութեան:

Նրանց արժէքը ամենքիդ հասկանալի դարձնելու համար, յիշենք Կոմիտաս Վարդապետի գործը, որ հայ ժողովրդական երգերի հաւաքմամբ և ուսումնասիրութեամբ ազգային նոր երաժշտութեան հիմնադիրը դարձաւ: Սասունցի Դաւիթ ժողովրդական

դիւցանէրգութեան չուրջը ամբողջ գրականութիւն է ստեղծուել,
մեր բանաստեղծների կողմից նոր մշակութեան ենթարկուել, բո-
վանդակութեան համեմատ յատուկ նկարչութիւն ստեղծուել,
օպերայ և բալէտ գրուել։ Ոչնչացաւ, ուրեմն, և մեր ժողովրդի
աշգագրական հայրենիքի մի կարեւոր մասը։

Գ.

Ահա այսպէս մեծ էր մեր կորուստը։ Հայ ժողովուրդի գլխին
եկած հարուածները չատ և չատ աւելի ծանր, քան մարդկային
միտքն ու երեւակայութիւնը սահմանել կարող է։ Մտածողներ ե-
ղան և ամենից աւելի հարուածը ծրագրողներն ու իրագործողնե-
րը, թէ հայ ժողովրդին մահ բերին։ Բայց դարերի դժուարութիւն-
ների և նեղութիւնների մէջ կոփուած հայ հոգին անընկճելի մնաց,
ապրելու և ազատութեան տենչը անմար։
Ի՞նչ էր Վարդանանց նահատակութեան խորհուրդը․ հայրե-
նիքի և խղճի ազատութեան, արդար և սուրբ իրաւունքի պաշտ-
պանութիւնը։ Նոյնն է և այսօրուայ նահատակութեան խորհուրդը,
միայն զոհերի չատ աւելի մեծ չափով և գործադրուած միջոցները
չատ աւելի անողոք, անարդար և բարբարոսական, քան հին Սա-
սանեանները կատարեցին։ Արդար է մեր դատը, ամենից արդարը
բոլոր անտեսուած դատերի մէջ։ Պէտք է բաղխենք արդարութեան
փակ դռները, մինչեւ բացուին նրանք։ Մէկ միլիոն նահատակների
և նոյնչափ հողմացրիւ եղած հայութեան անունով պէտք է բարձ-
րացնենք մեր բողոքը, մինչեւ լսելի լինի մեր ձայնը ազգերի
բաղդը իրենց ձեռքին ունեցող զօրաւորներին։
Տաճկահայոց այս թշուառութեան համեմատ բաղդաւոր ե-
ղաւ ռուսական բաժնի Հայաստանը, թէեւ երկիցս ենթարկուեցաւ
թուրքերի արշաւանքներին և յափշտակուեցաւ նորա կարեւոր մի
մասը։ Բայց Աստուած խնայեց մեզ, ունինք մեր թանկագին հայ-
րենիքի հիւսիսային մի քանի նահանգները Ռ․ Հայաստանի նեղ-
կայ սահմաններով, ուր ծաղկում է նորաբողբոջ պետականութիւ-
նը, մտաւոր վերածնութեան ակնյայտնի ապացոյցներով, որ մեր
նոր գրականութիւնն է, գիտութիւնը, մշակոյթն ու արուեստը
ընդարձակ ծաւալով, և այնքան կազդուրուած է զգում իրեն մեր
նորաբողբոջ հայրենիքը, որ ծրագրել է հարիւր հազարաւոր
զաւակներին իւր ծոցն ընդունել, որչափ հնարաւորութիւն ունի։
Բայց անարդարութեան, կատարուած ոճիրների հատուցումը մնում
է բաց․ անմեղ Աբէլի արիւնը չպիտի դադարի բողոքել մինչեւ ար-
դարութեան վերջնական յաղթանակը։ Հայրենասիրական պարտք

է, զօտեպնդուած աննկուն կամքով, հաստատուն ժայռի նման, որ մեր հաւատքն է դէպի մեր դատի արդարութիւնը։

Դ.

Եթէ այստեղ հաւաքուել ենք մի երկու բանախօսութիւն, երգ ու նուագ լսելու միայն, ընդունայն է այդ, ժամանակի ի զուր կորուստ և յոգնութիւն։ Այս հանդէսը պիտի թելադրէ և մեր գիտակցութեան մէջ խոր հաստատէ, թէ մենք բարձրագոյն մի նպատակ ունինք, որ մեր բռնագրաւուած հայրենիքի ազատութիւնն է, մեր բաղձանքների լրումը։ Մեր նահատակները մեռան, որպէս զի մենք ապրել սովորենք։

Ոչ մի ժողովուրդի թշնամի լինել չենք կամենում. տաճիկներն էլ ժողովուրդ են, բայց պէտք է հասկանան, որ մենք եւս ապրելու իրաւունք ունինք։ Յաւիտենական թշնամութիւնից ոչ ոք կարող է օգտուել, և ո՛չ մեր երկու ազգերը։ Մեզնից խլուած նահանգները, գրեթէ, անմարդաբնակ են և աւերակ դարձած։ Այդ աւերակ և անապատ դարձած երկիրը, որ հազարաւոր տարիներ մեր հայրենիքն էր, հազարաւոր յիշատակների հետ կապուած, մենք մեր ջանասիրութեամբ և աշխատութեամբ այնտեղ հոգեւոր կեանքի, գիտութեան և արուեստի տաճարներ կը կանգնենք և դրախտ կը դարձնենք զայն։

Ահա ի՛նչ միտք և գաղափար է մեզ այստեղ հաւաքել։ Այսպիսի մտապատկերի և խոհութեան առաջ ոչ մի խտրականութիւն՝ կուսակցական կամ որ և է այլ հաշուով։ Մենք մի՛ ենք, մի՛ կամքով և հաւատով պիտի զօտեպնդուենք դէպի մեր ազգի և հայրենիքի արդար դատը և ապագան։ Հանրութեան մեծ խնդիրների առաջ պէտք է մեղմանան և չքանան փոքր հաշիւները։

Ա՛խ, մեր ժողովուրդը, աւելի ճիշտ նորա տարբեր մտայնութեան խաւերի ներկայացուցիչները Սփիւռքում ե՞րբ պիտի հասկանան հոգւով տառապող իրենց Հայրապետի համերաշխութեան, փոխադարձ հասկացողութեան կոչը։ Մինչեւ մենք իրար չհասկանանք, իրար ձեռք չմեկնենք լիովին, ազգի, եկեղեցու և հայրենիքի հետ կապուած ընդհանուր հարցերի մէջ, իրաւունք չունինք օտարներից սպասելու, որ մեզ հասկանան և լսեն։

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԱՍԿ. 1947, Մայիս.

ՎԵՐՋ

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՎՐԻՊԱԿՆԵՐ

ԷՋ	ՏՈՂ		ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
13	18	վերէն	սկզբուքներից	սկզբունքներից
20	3	»	ձեւերով	ծէսերով
44	16	»	զինուորներն	զինուորներ
46	22	»	Միջագէտքը	Միջագետքը
47	6	»	դպրութիւն նունէր	դպրութիւնն ունէր
58	31	»	մտածող ճանա-չողութեան	մտածուած գիտակցու-թեան
79	29	»	ուղղութեան	ազգութեան
92	1	»	տաղանք	տանջանք
92	8	»	մեքենականութիւն է	մեքենականութիւն չէ
96	9	»	առանձնական	առանձնացած
100	2	»	չէ լինել կարող	չէ կարող լինել
113	3	»	ուրացութիւն	ուրացութեան
114	11	»	արժանացան	արժանացած
155	3	»	նպաստումը	նպատակը
174	15	»	*Յօդ.ը վերջանում է,* «բայց այդ մասին մի ա՛յլ անգամ»։ Տարաբաղդաբար խոստումը կատարուած չէ դեռ, որով կլրանար ամբողջութիւնը, նմանելու կարողութեան արժէքը նաեւ հասակաւորների համար։	
192	3	»	վայելումների	վայելքների
193	16	»	կամիցիս	կամիջիք
231	3	»	անհատի	անհաւատի
232	2	»	ազատել	ազատուիլ
235	1	»	Առաջնորդուած	Առաջադրուած
270	25	»	գրականութունը	գրականութիւնը
271	31	»	սփիւռքը	սփիւռքի մէջ
294	36	»	*Die Batkunst*	*Die Baukunst*
302	29	»	պրոպագանդային	պրոպագանտայի

ՑԱՆԿ ՆԻՒԹԵՐԻ

ԷՋ

Յառաջաբան

1.— Անցաւորի Մէջ Յաւիտենականը եւ Մեքենականի մէջ Կենդանի Հոգին 9–11

2.— Շնորհաւոր Նոր Տարի 12–14

3.— Փրկչի Ծնունդը 15–21

4.— Ծննդեան Շրջաբերական Քարոզ 22–26

5.— Քրիստոսի Ներկայութիւնը մեր Մէջ 27–30

6.— Կեանքի Առը 31–34

7.— Գեղեցկից Գեղեցկագոյնը 35–39

8.— Կեանքի Ճանապարհը 40–43

9.— Ղեւոնդեանց եւ Վարդանանց Յիշատակը 44–48

10.— Ապաշխարութեան Քարոզը 49–52

11.— Սրտի Սրբութիւնը 53–55

12.— Կատարելութեան Ճանապարհը 56–66

13.— «Օրհնեցէք զԱստուած Հարցն Մերոց» 67–72

14.— Պարտքի Գիտակցութիւնը եւ Նորա Կատարումը 73–77

15.— «Մի՛ Երկնչիր, Բայց Միայն Հաւատա՛» (Թարգմանչաց Տօնի Առթիւ) 78–82

16.— Յիսուսի Լուսաւոր Անձնաւորութիւնը 83–87

17.— Կեանքի Բանալին 88–92

18.— Վշտի եւ Տառապանքի Դաստիարակչական Արժէքը Անհատների եւ Ազգերի Կեանքի մէջ 93–98

19.— Գիտութիւն եւ Եկեղեցի 99–105

20.— Դարձ Դէպի Լուսաւոր Կեանքը (Անառակի Կիւրակին) 106–110

21.— Մարդու Կոչումը Աշխարհիս Վրայ (Ըստ Աւետարանական Քարոզութեան) 111–114

22.— Աղօթքի Սրբարար Զօրութիւնը 115–119

		էջ
23.—	Կաթողիկոսարանի Լուսաւորիչ Անուան Տաճարի Ուխտի Օրը	120-124
24.—	Ս. Լուսաւորչի եւ Հայաստանեայց Ս. Եկեղեցի	125-137
25.—	Հայրենասիրութիւն եւ Քրիստոնէութիւն (Գալստեան Կիւրակի)	138-145
26.—	Մեր Հոգեւոր Հայրենիքը	146-152
27.—	Յարութեան Աւետիքը	153-155
28.—	Շրջաբերական Զատկի Առթիւ	156-161
29.—	Նահատակաց Տօն	162-167
30.—	Նմանելու Կարողութեան Մանկավարժական արժէքը Փոքրիկների Դաստիարակութեան մէջ (Ընտանեկան Շրջանում)	168-174
31.—	Քրիստոնէի Գերակայ Գաղափարը	175-178
32.—	Կրօնի Կենսատու Զօրութիւնը	179-182
33.—	Կրօնական Անձնաւորութիւնը	183-189
34.—	Առօրեայ Հացի Խնդիրը	190-194
25.—	Դէպի Լոյս եւ Կեանք	195-199
36.—	Հայոց Ազգային Եկեղեցին	200-205
37.—	Եկեղեցւոյ Կոչումը (Պատմական Լուսոյ մէջ Հարնակի հետեւողութեամբ)	206-217
38.—	Աշխատանքի Գաղափարը	218-227
39.—	Լուսաւորչի Կոչը	228-230
40.—	Փրկութեան Նաւը եւ Նաւապետը	231-234
41.—	Հայաստանեայց Եկեղեցու Դերն ու Արժէքը Քրիստոնէական Ընդհանուր Եկեղեցիների մէջ	235-244
42.—	Դէպի Վեր եւ Կատարեալը	245-251
43.—	Ազգահաւաքի Մեծ Գործը	252-254
44.—	Մեր Խղճերը Հայ Գրի ու Մամուլի Մասին	255-257
45.—	Մեր Խօսքը Օծման Առթիւ	258-259
46.--	Ազգային Եկեղեցական Ժողովը եւ Նորա Նշանակութիւնը	260-266
47.--	«Մարդ է, որ Գործէ Զերկիր»	267-271

էջ

48.— Մշակներ են Պէտք Մեզ 272–275
49.— Եկեղեցական Համայնքի Կազմակերպութիւնը Հին Շրջանում 276–282
50.— Եկեղեցական Համայնքի Կազմակերպութիւնը Նոր Շրջանում 283–288
51.— Մշակոյթի Յաւիտենական Արժէքը 289–298
52.— Պատասխան Վերապատուելի Կ. Պ. Ատանալեանի Հարցումներուն 299–306
53.— Վեհափառ Հայրապետի Պատգամը իր Ժողովրդին 307–311
54.— Էջմիածնի եւ Կիլիկիոյ Աթոռները 312–315
55.— Նահատակաց Մեծաշուք Հանդէսը (Սինեմա Ռօքսիի մէջ) 316–318
56.— Ապրիլի Քսանչորսը, Խօսուած Սինեմա Տիւնիայի մէջ Կազմուած Սգահանդէսի Ժամանակ 319–322

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ
ՎԱՃԱՌԵԼԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այստեղ կը նշանակուին այն աշխատութիւնները,
որ տպագրուած են արտասահմանի մէջ եւ մատչելի են

Ա.— **Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ Հայ Արուեստի եւ Մշակոյթի Պատմութեան,** Պրակ Ա.

1. **Վախտանգ որդի Ումեկայ:**
2. **Իգնատիոս մանրանկարիչ եւ Ծորոռկանց տոհմը:**
3. **Հաղբատի դպրոցի մի գլուխ գործոց** (Գեստէնի աւետարանը) Երուսաղէմ, 1935.

Բ.— **Հաւուց Թառի Ամենափրկիչը եւ նոյնանուն Յուշարձաններ հայ արուեստի մէջ, պատմա—հնագիտական ուսումնասիրութիւն,** Երուսաղէմ, 1937.

Գ.— **Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ Հայ Արուեստի եւ մշակոյթի Պատմութեան,** Պրակ Բ.

1. **Կոստանդին Ա. Կաթողիկոս:**
2. **Մի ձեռագիր աւետարան:**
3. **Դարձեալ Իգնատիոս Հոռոմոսցի մանրանկարչի մասին,** Նիւ-Եորք, 1943.

Դ.— **Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց Պատմութեան մէջ.** մասն Բ. **Հոգեւոր կեդրոններ եւ Գլաձորի բարձր դպրոցը Պռոշեանց իշխանութեան մէջ,** *պսակուած Երուսաղէմի «Սրբոց Թարգմանչաց-Դուրեան Գրական» մրցանակով,* Երուսաղէմ, 1942/4.

Ե.— **Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց Պատմութեան մէջ,** հատոր Գ., *պսակուած Երուսաղէմի «Թարգմանչաց—Դուրեան» մրցանակով:* Նիւ-Եորք, 1942/3.

Զ.— **Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ,** պրակ Գ.

1. **Պաղալանը եւ գմբէթաւորումը նախնական հայ տաճարների.**
2. **Գերեզմանական կոթողներ եւ նրանց հնագիտական արժէքը հայ արուեստի պատմ. համար:** Նիւ-Եորք 1944.

Է.— **Խորովիկ Թարգմանիչ եւ երկասիրութիւնք նորին,** Վաղարշապատ, 1903: Քիչ թւով մատչելի:

[5 n.]

3r

A II/80377

Գ Ի Ն

ՍՈՒՐԻԱ ԵՒ ԼԻԲԱՆԱՆ
5 լիր. ոսկի

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
3 տոլար

Կողքի ֆլիշէին գծագրութիւնը գործն է
ՏԻԱՐ ՄԱՐՏԻՐՈՍ ԱԼԹՈՒՆԵԱՆԻ։